

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՔՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

A
II
96530



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 941(479.25):327
ԳՄԴ 63.3(2Դ)+66.4
Հ 177

Գիրքը տպագրվում է պետական պատվերով

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

*Եվիրում եմ վաղամեռիկ մորս
անմոռաց հիշատակին*

Պատասխանատու խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ն. Ղազախեցյան

Հակոբյան Ա.Ս.

Հ 177 Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում/ Ա.Ս. Հակոբյան; Պատ. խմբ.՝ Վ. Ն. Ղազախեցյան.-Եր.: Գիտություն, 2010.– 339 էջ:

Մենագրության մեջ շարադրված է Մոսկվայի և Կարսի, ինչպես նաև Ալեքսանդրապոլի պայմանագրերի պատմությունը: Ներկայացված են համանուն կոնֆերանսների դիվանագիտական նախապատրաստությունը, ընթացքը և ստորագրված պայմանագրերը: Կատարված է պայմանագրերի հոդվածների պատմաքննաչափ ու համադրական վերլուծություն: Հատուկ ուշադրություն է դարձված հաշ-թուրքական տարածքային-սահմանային խնդիրներին: Հեղինակը փորձել է դիտարկել այդ պայմանագրերի օրինականության ու միջազգային պայմանագրային իրավունքին համապատասխան հարցերը և այլն:

Գիրքը հասցեագրվում է պատմաբաններին, միջազգայնագետներին, իրավաբաններին, քաղաքագետներին և ընդհանրապես Հայոց պատմությանը հետաքրքրվող ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 941(479.25):327
ԳՄԴ 63.3(2Դ)+66.4

ISBN 978-5-8080-0845-8

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010 թ.

Ներածություն

*«Դաշնագրերը հավիտենական չեն:
Հավերժական է ազգը, ժողովուրդը»*

Պատմագիտությունը քաղաքական գիտություն է և իր հիմքում ունի ոչ միայն պատմաճանաչողական, այլև գիտագործնական-կիրառական նշանակություն: Այն կոչված է նաև բացահայտելու անցյալի պատմական անարդարությունները, գնահատելու և դատապարտելու դրանք:

Հայոց պատմության համատեքստում այդպիսի անարդարության փաստեր են 1921 թ. կնքված, ավելի ճիշտ՝ բիրտ ուժով Հայաստանին պարտադրված Մոսկվայի՝ խորհրդա-թուրքական և Կարսի՝ թուրք-անդրկովկասյան պայմանագրերը, պայմանագրեր, որոնք ծանր հետևանքներ ունեցան և շարունակում են ունենալ հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Ռեսուրսային տեսակետից դրանք ներկայանում են իբրև մեկ ամբողջական հիմնախնդիր: Իրավահաջորդության և բովանդակության տեսակետից այդ պայմանագրերը միմյանց շատ նման են, հողվածների մեծ մասով՝ գրեթե նույնական:

Վերոնշյալ պայմանագրերը լավ հասկանալու համար հարկ ենք համարել առանձին գլխով նախ անդրադառնալ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագրին, թեև այն, ինչպես հայտնի է, չի վավերացվել և չի ունեցել իրավական որևէ ուժ: Սակայն ինչպիսին էլ որ եղած լինի, այն համարվում է պատմական փաստաթուղթ և անուղղակի կերպով ունեցել է որոշ անդրադարձ ու հետևանք Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վրա, էլ չենք խոսում, որ հիշյալ երեք պայմանագրերով գծված հայ-թուրքական սահմանը գրեթե նույնական է: Այդ է պատճառը, որ, Մոսկվայի և Կարսի պայմանագրերից զատ, անդրադարձել ենք նաև Ալեքսանդրապոլի պայմանագրին և փորձել ենք բոլոր երեք պայմանագրերը դիտարկել մեկ ամբողջության մեջ:

Սույն թեմայի բարձրացումը հույժ արդիական է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման,

Թուրքիայի պատասխանատվության և հատուցման պարտավորության գործընթացների և առհասարակ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման տեսակետից:

Հայտնի է, որ միմյանց շարունակությունը հանդիսացող այդ պայմանագրերի արդյունքներով Հայաստանը ներպարփակվեց ընդամենը 30 հազար քառ.կմ տարածքում: Խորհրդա-քեմալական մերձեցումը և համագործակցությունը նպաստեցին մեծախոստում Սևրի պայմանագրի ձախողմանը: Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ ու լուռ համաձայնությամբ և Արևմուտքի տերությունների քար անտարբերության պայմաններում 1920 թ. աշնանը քեմալական Թուրքիան ծանր պարտության մատնեց Հայաստանի Հանրապետությանը և բռնազավթեց հայկական տարածքների զգալի մասը: Դրան հետևեցին Ալեքսանդրապոլի, իսկ հետո՝ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը:

Ինչպես ասվեց, խնդրի վերհանումը և բազմակողմանի ուսումնասիրությունն ունեն ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական արդիական նշանակություն ու կարևորություն:

Խորհրդային համակարգում գտնվող Հայաստանը իր 70 տարիներին ի վիճակի չէր բարձրաձայնել այդ մասին: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունը՝ իբրև Առաջին և Երկրորդ հանրապետությունների իրավահաջորդ, իրավասու է չճանաչել 90 տարի առաջ ուժով հայ ժողովրդին պարտադրված այդ պայմանագրերը ու պահանջատեր լինել իր կողմված հողերին: Այդ պայմանագրերը չճանաչելու տեսակետից խոսքը վերաբերում է հատկապես Կարսի պայմանագրին, որովհետև Ալեքսանդրապոլի պայմանագիրը առհասարակ չի վավերացվել, իսկ Մոսկվայինը՝ Հայաստանը չի ստորագրել:

Հիշյալ պայմանագրերի արդյունքները և հետևանքները լավ հասկանալու համար մենագրության մեջ փորձ է արված ուսումնասիրել տարածաշրջանի աշխարհաքաղաքական կացությունը և Հայաստանը՝ մրցակցության ու շահերի բախման տիրույթում: Դրա համար հարկ է եղել կանգ առնել իրավիրվող կոնֆերանսների լիովնագիտական նախապատրաստությանը, բանակցությունների բուն ընթացքին, պայմանագրերի բովանդակությանը, արդյունքներին ու հետևանքներին: Փորձ է արված այդ երեք պայմանագրերը դիտարկել փոխադարձ կապի ու միասնության մեջ: Հարկ եղած դեպքում կատարվել է այդ պայմանագրերի համեմատական վեր-

լուծություն, տրվել է դրանց պատմաքաղաքական և իրավական գնահատականը: Առանձնահատուկ կանգ ենք առել հայ-թուրքական սահմանային խնդիրներին, համեմատել դրանք ըստ պայմանագրերի և փորձել գնահատել: Աշխատության մեջ խնդիր չի դրված քննել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի փոխադարձ սահմանային խնդիրները, որովհետև վերոհիշյալ պայմանագրերը չեն շոշափում այդ հարցերը: Անդրադարձ կա միայն Հայաստանի և Նախիջևանի սահմանին, ինչպես նաև Բաթումի խնդրին՝ Սուրմալուի հետ կապված:

Հայ-թուրքական պետական սահմանագիծը նկարագրելիս հիշյալ պայմանագրերի և կից հավելվածների բնօրինակներն ու պատճենները հնարավորինս համեմատել ու համադրել ենք իրար, որովհետև հայերեն կամ այլ լեզուներով թարգմանությունների ժամանակ թույլ են տրվել որոշ անճշտություններ ու տեղանունների աղավաղումներ: Այսպես, օրինակ, Ալեքսանդրապոլի պայմանագրի բնագիրը, որ ժամանակին Ալ. Խատիսյանը հանձնել է հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, պաշտոնապես չի հրապարակվել, չի կարելի վստահ ասել, թե Հայաստանի ազգային արխիվում կամ փաստաթղթերի ժողովածուներում առկա տարբերակներից որն է ավելի ճիշտը:

Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի պայմանագրերի շուրջ թե՛ խորհրդային պատմագիտության մեջ և թե՛ սփյուռքում ստեղծվել են հարուստ պատմագիտական և հուշագրական գրականություն, նաև փաստաթղթերի ժողովածուներ¹: Հիշյալ պայմանագրե-

¹ **Ключников Ю. и Сабанин А.**, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, вып. I, М., 1928, вып. 2, М., 1929, **Борьян Б.**, Армения, международная дипломатия и СССР, ч. I-II, М., 1928-1929, "Борьба за победу Советской власти в Грузии, документы и материалы (1917-1921 гг.)", Тбилиси, 1958, **Хармандарян С. В.**, Карсская конференция 1921 г. и ее предистория (Բանբեր Հայաստանի արխիվների, 1963, թիվ 3), **Кузнецова С. И.**, Установление советско-турецких отношений, М., 1961, **Багиров Ю. А.**, Из истории советско-турецких отношений в 1920-1922 гг., Баку, 1965, **Хейфец А. Н.**, Советская дипломатия и народы Востока (1921-1927), М., 1966, **Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925**, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Ե., 1960, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» (1828-1923 թթ.), խմբ. **Ջ. Կիրակոսյան**, Ե., 1972 (այսուհետ՝ «Հայաստանը...»), **Ալիխանյան Ս.**, խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազա-

րը հայ ժողովրդի ազգային շահերի տեսակետից այնքան աղա-
ղակող են, որ թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում տրվել են ոչ
միանշանակ, երբեմն հակասական մեկնաբանություններ ու գնա-
հատականներ: Այդ պայմանագրերի իրական պատմությունը առա-
վել շատ է աղավաղվել խորհրդահայ պատմագրության մեջ:

Պատմաբանի աշխատանքի մեթոդաբանությունը ճշմարտա-
ցիությունն ու անկողմնակալությունն են, իսկ կողմնորոշիչները՝
օբյեկտիվությունը, անաչառությունը, հավաստիությունը: Նյութը
շարադրելիս աշխատել ենք առաջնորդվել այդ չափանիշներով:
Պատմությունն, անշուշտ, աղերս ունի քաղաքականության հետ:
Պատմաբանի գլխավոր առաքելությունը, պատմական հավաստի
փաստերի վրա հենվելով, պատմական անցյալի ճշմարտության
վերհանումն է: Ընդունելի մեթոդ չէ փաստերի աղավաղումը և
խեղաթյուրումը, պատմական ճշմարտությունը շրջանցելը կամ
զանց առնելը: Իրոք, պատմագիտության միակ չափանիշը
ճշմարտությունն է:

Հասկանալի պատճառներով խորհրդային պատմագրությու-
նը հանդես է բերել միակողմանի, կանխակալ մոտեցում: Խորհրդ-
դային գաղափարական ամբողջատիրության պայմաններում
հնարավոր չէր խոսել ամբողջ ճշմարտության մասին: Մյուս կողմից՝
այս խնդրում ծայրահեղ գնահատականներ են հանդիպում նաև

տագրման գործում (1917-1921 թթ.), Ե., 1966, Արզումանյան Մ., Արիա-
վիրքից վերածնունդ, Ե., 1973, Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական
պայքարի պատմությունից, Ե., 1976, Մնացականյան Ա. Ն., Ընդդեմ
պատմության դաշնակցական նենգափոխության, Ե., 1976, Կիրակոսյան
Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1980, Եսայան
Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Ե., 1965, Ջոհ-
րաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբե-
րությունները (1920-1922թթ.), Ե., 1979, Տեր-Հակոբյան Հ. (Իրազեկ),
Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, Վրացյան Ս., Հայաստանի
Հանրապետություն, Բեյրութ, 1958, Ե., 1993, Խատիսյան Ալ., Հայաստանի
Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, Գանգրունի
Հ., Հայաստանը 1920-21 թթ. և միջազգային դիվանագիտությունը, Պեյրութ,
1986, Կարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ,
1947, Շահան, «Վերստին Յավելուած» Ալեքսանդրապոլի դաշնագրի,
Բոստոն, 1955, Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի,
Մոսկվայի և Կարսի), «Արարատ» մատենաշար թիվ 24 և 25, Բեյրութ, 1957,
Մալրոյան Զ., Երեք դաշնագրեր, Պեյրութ, 1979, Լազյան Գ., Հայաստան
և Հայ դատը, Ե., 1991, Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային
օրենքը, Բեյրութ, 1976 և ուրիշներ:

սփյուռքի պատմահուշագրական գրականության մեջ: Այդ տեսակետից գրեթե հակոտնյա են դաշնակցական և ոչ դաշնակցական հեղինակների դիրքորոշումները:

Այդուհանդերձ, արժանին մատուցելով այդ ուղղությամբ կատարված օգտակար աշխատանքին, միաժամանակ պետք է փաստել, որ մեզանում ոչ միշտ է ցուցաբերվել օբյեկտիվություն և գիտական անաչառություն: Այդ իսկ պատճառով խորհրդային և սփյուռքի հեղինակների հիշյալ աշխատությունները վերագնահատման կարիք ունեն, մանավանդ որ ներկայումս ի հայտ են եկել նոր նյութեր, գաղտնագերծվել արխիվային վավերագրեր, որոնք նոր լույս են սփռում այդ պայմանագրերի կնքման հանգամանքների, հայ-ռուս և ռուս-թուրքական հարաբերությունների բազում մութ ծալքերի, քաղաքական-դիվանագիտական պայքարի մանրամասների վրա: Ուստի հայ ժողովրդի պատմական ճակատագրում այնքան բախտորոշ և իրար կապակցված Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը կարոտ են նորովի և համալիր ուսումնասիրության:

Հիմնախնդրի հետազոտության ուղղությամբ, ինչ խոսք, մեզանում այլ վիճակ ստեղծվեց հետխորհրդային ժամանակաշրջանում: Վերջին երկու տասնամյակում հայեցակարգային նոր մոտեցումներով, օբյեկտիվ և անաչառ դիրքերից ուղղակի և անուղղակի կերպով խնդրո առարկա պայմանագրերին անդրադարձան մի շարք հեղինակներ: Լույս տեսան զգալի թվով մենագրություններ ու գիտական հոդվածներ, որոնք, անշուշտ, ներդրում են պատմագրության մեջ²: Առանձնահատուկ դրվատանքի է ար-

² Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, նույնի՝ Ողբերգության պահին («Գարուն», Ե., 1989, թիվ 4), Սարգսյան Ե., Դավադիր գործարք, Ե., 1995, Ձոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Ե., 2002, Սարգսյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Ե., 2002, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Ե., 1998, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), Ե., 1999, Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդում, Ե., 2003, Սիմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը (1920-1921), Ե., 2000, Саркисян Е. К., За кулисами, как родился Московский договор 1921 г., (Литературная Армения, Е., 1991, № 1), Казанджян Р., К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г. (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Ե.,

ժանի ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Բ. Հարությունյանի խմբագրությանը լույս տեսած հանրագիտարանային բովանդակությամբ Հայաստանի ազգային ատլասը, որի Բ հատորում գետեղված են քարտեզներ և պարզաբանիչ ծանոթագրություններ խնդրո առարկա պայմանագրերով գծված սահմանների վերաբերյալ³: Մենագրության մեջ, դարձյալ պրոֆ. Բ. Հարությունյանի հեղինակությամբ, տեղ են գտել երեք քարտեզ, որոնցում ընթերցողը կարող է ավելի հանգամանորեն հետևել Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով գծված տարածքային-սահմանային խնդիրներին:

Հիմնախնդիրը վեր հանելու համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերի վավերագրերը, բուն պայմանագրերն ու նրանց հավելվածները, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի կոնֆերանսների առանձին նիստերի արձանագրությունները, պատվիրակությունների հեռագրերը, ինչպես նաև փաստաթղթերի ժողովածուներ, տարատեսակ տպագիր սկզբնաղբյուրներ, հուշագրություններ, ժամանակաշրջանի պարբերական մամուլը և այլն⁴:

2001), Иголкин А., Московский договор с Турцией. взгляд из России через 77 лет. (ՊԲՀ, Ե., 2002, թիվ 1), Азатян Г., Судьбоносные договора, Е., 2000, Махмуриян Г. Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг., Е., 2002, «Գիտության զլորուս», 2001, թիվ 1: Քառյան Ս., Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1923 թթ., Ե., 2005, Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հողվածների ժողովածու), Ե., 2007, Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Ե., 2007, Ղազարյան Հ., Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Ե., 2010, Захаров В. А., Карс и Карсский договор 1921 года в истории Армении, М., 2010, Ասլանյան Ս., Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ («Լրաբեր», հաս. գիտ., Ե., 2005, թիվ 1), «Ազատամտություն», 14.X.2009 թ. և ուրիշներ:

³ Հայաստանի ազգային ատլաս, պատ. խմբ. Բ. Հարությունյան, հ. Բ, Ե., 2008, էջ 110-116:

⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 37, 113, 114, 200, 1022, 4033, Документы внешней политики СССР, т. 3, М., 1959, т. 4, М., 1960, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ղեկ.՝ Վլ. Ղազախեցյան, Ե., 2000, (այսուհետ՝ «Հայաստանի Հանրապետությունը (1918-1920թթ.)»), Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2, «Հունական արխիվային

Խնդրի հետազոտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ չկան գաղափարաքաղաքական նախկին կապանքները: Բացի այդ՝ գաղտնագերծվել են արխիվների փակ ֆոնդերը, լույս են տեսել փաստաթղթերի ու նյութերի մի շարք նոր ժողովածուներ, որոնք հնարավորություն են տալիս նորովի դիտարկելու հայ-ռուս և ռուս-թուրք հարաբերությունները ընդհանրապես և այդ պայմանագրերը՝ մասնավորապես:

Աշխատության համար առանձնապես բարձրարժեք սկզբնաղբյուրի դեր է ծառայել ճանաչված իրավաբան – միջազգայնագետ պրոֆ. Յու. Բարսեղովի կազմած բազմահատոր ժողովածուն⁵: Ժողովածուի հատորյակներում ներառված են նախկինում փակ և անծեռնմխելի համարվող այնպիսի ֆոնդեր, ինչպիսիք են ՌԿ(Բ)Կ կենտրոնի, Կովկասյան բյուրոյի, Վ. Լենինի, Ի. Ստալինի, Գ. Չիչերինի, Գ. Օրջոնիկիձեի, Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության արխիվի, Թուրքիայում ՌՍՖՆՀՅ ներկայացուցչության և այլ գաղտնագերծված ֆոնդերը, որոնք անգնահատելի հարուստ նյութ են մատակարարում հիմնախնդիրը նորովի վեր հանելու համար:

Օգտագործված են նախկին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կուսակցական կենտրոնական արխիվի (ներկայումս՝ Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվի (РГАСПИ) առանձին ֆոնդեր, միկրոժապավենների հավաքածուներ, խորհրդային ժամանակաշրջանի պատմությանը վերաբերող վերջին տարիներին լույս տեսած փաստաթղթերի և նյութերի ժողո-

փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին հանրապետության շրջանում 1918-1920 թթ.», Ե., 1998, Դ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբ. և կազմող Վլ. Ղազախեցյան, Ե., 1999, «Ձանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.)», կազմ. Վլ. Ղազախեցյան, Ե., 2008, Օրջոնիկիձե Գ. Կ., Ընտիր հողվածներ և ճառեր 1918-1937, Ե., 1950, Բեկզադյան Ալ., Նամակներ, հողվածներ, փաստաթղթեր, Ե., 1981, «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր), Ե., 2001, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 2008, թիվ 1:

⁵ Геноцид армян (документы и комментарий), сост. проф. Ю. Г. Барсегов, т.1, М., 2002, т. 2, ч. 1, М., 2003, т. 2, ч. 2, М., 2005.(այսուհետ՝ Геноцид армян (документы и комментарий)), Нагорный Карабах в международном праве и мировой политике, (документы и комментарий), составитель, проф. Ю. Г. Барсегов, т. 1, М., 2008.

վածուներ, մատենաշարեր և այլն, որոնք նորովի լույս են սփռում պատմագիտությանը հայտնի ու անհայտ շատ հարցերի վրա⁶:

Մենագրությունը պատրաստելիս ցուցաբերած օժանդակության համար շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի ազգային արխիվի տնօրեն , պ.գ. դ. Ա. Վիրաբյանին:

* * *

Հայաստանի ու հայ ժողովրդի համար 1920-1921 թվականները ռազմաքաղաքական և միջազգային դիվանագիտության տեսակետից ճակատագրական եղան: 1920 թ. գարնան-ամռան ընթացքում տեղի ունեցավ ռուս-թուրքական մերձեցում: Փաստորեն խորհրդային Ռուսաստանի լուռ համաձայնությամբ 1920 թ. աշնանը քենալական թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Հայաստանը ծանր պարտություն կրեց, և նրա տարածքները բաժանվեցին թուրքիայի և Ռուսաստանի միջև: Նախ՝ թուրքիան 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հայաստանին պարտադրեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը, սակայն, այդպես էլ չվավերացրեց ո՛չ Հայաստանը և ո՛չ էլ թուրքիան: Այնուհետև մի քանի ամիս անց՝ 1921 թ. մարտի 16-ին, Ռուսաստանը և թուրքիան, առանց Հայաստանի գիտության և մասնակցության, Մոսկվայում կնքեցին մի պայմանագիր, որը տարածքային-սահմանային առումով փաստորեն կրկնում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում խորհրդային Հայաստանի սլավոփրակությունը պարտադրված ստորագրեց մի պայմանագիր, որով, ըստ էության, վավերացվում և օրինականացվում էին Մոսկվայի պայմանագրի սկզբունքները: Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը պարտադրվեց խորտակվող Հայաստանի առաջին Հանրապետության պատվիրակությանը: Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը

⁶ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (այսուհետ՝ ՄԼԻ ԿԿԱ), Ֆ. 3, 64, 65, 85, ԱՄՆ-ի դեպարտամենտի փաստաթղթերը (միկրոֆիլմերի հավաքածու, № 1, ց.1, գ.761-767), գ. 86700, "Политбюро ЦК РКП(б)-ВКП(б). повестки дня заседаний", т. 1, 1919-1929, каталог, М., 2000, Ленин В. И., Неизвестные документы 1891-1922, М., 1999, ЦК РКП(б)-ВКП(б) и национальный вопрос, книга 1., 1918-1933гг., М., 2005 и др.

ճանաչեց Թուրքիայի տարածքային ձեռքբերումները Հայաստանի հաշվին՝ «Ազգային ուխտի» սահմաններով, իսկ Կարսի պայմանագրով Խորհրդային Հայաստանը՝ ուժի և կուսակցական կարգապահությունը պահպանելու պարտադրանքով ընդունեց Մոսկվայի, ասել է թե՛ Ալեքսանդրապոլի պայմանագրի սահմանները:

Անդրադառնալով այս երեք պայմանագրերի և դրանց շուրջ տեղի ունեցած դիվանագիտական պայքարի պատմագիտական լուսաբանմանը՝ այնուամենայնիվ, գրքի ներածական մասում հարկ ենք համարում խոսել պատմագրության մեջ թույլ տրված առանձին բացթողումների ու անճշտությունների մասին: Այդ հարցերին, արդեն անմիջական պատմական դեպքերի և իրադարձությունների հետ կապված, ավելի հանգամանալի անդրադարձ կլինի նաև իր տեղում:

1920-ական թվականներին Բ. Բորյանը առաջին համարձակ բոլշևիկ պատմագիրներից էր, որը սուր կերպով քննադատեց խորհրդային իշխանության վարած ոչ հայանպաստ քաղաքականությունը: Թույլ տված առանձին սխալների հետ մեկտեղ նա իրավացիորեն նշում է, որ Խորհրդային Ռուսաստանը քեմալական Թուրքիայի նկատմամբ ցուցաբերել է զիջողականություն և հայ ժողովրդի շահերը զոհաբերել համաշխարհային հեղափոխության շահերին՝ այդ ճանապարհին Թուրքիային տալով Արևելքի ազգային-ազատագրական շարժման գաղափարական առաջնորդի և կազմակերպական կենտրոնի դեր⁷: Ահա դրանով էր Բ. Բորյանը հիմնականում բացատրում Հայաստանի տարածքների զիջումը Թուրքիային⁸: Կնքված երեք պայմանագրերից նա առավել ծանր ու վնասակար էր համարում վերջինը՝ Կարսի պայմանագիրը: «Պատմության էջերում,- գրում է Բ. Բորյանը,- հազիվ թե գտնվի ավելի ծանր և ավելի աննպաստ հաշտություն, քան Կարսինն է»⁹: Հասկանալի է, որ հար և նման համարձակ «սխալների» համար հետագայում նա պետք է հատուցեր իր կյանքով:

Խորհրդային պատմագրության մեջ, չնայած հսկայական փաստական նյութ է կուտակված, սակայն, ցավոք, շատ են նաև փաստերի և իրադարձությունների աղավաղումները, որոնք,

⁷ Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, часть II, Москва-Ленинград, 1929, с. 164.

⁸ Борьян Б. А., նշվ. աշխ., էջ 285:

⁹ Борьян Б. А., նշվ. աշխ., էջ 163:

որպես կանոն, ունեցել են գաղափարաքաղաքական ենթատեքստ, հակախորհրդային—հակակոմունիստական ուժերի դեմ գաղափարախոսական պայքարի ռազմավարություն: Հասկանալի է, որ խորհրդրդահայ պատմագրության քննադատության գլխավոր թիրախը եղել են ՀՅԴ կուսակցությունը և նրա գործունեության հետ կապված պատմության հիմնահարցերը: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե, դրան հակառակ, սփյուռքի պատմագիր-հուշագիր հեղինակները աչքի են ընկել գիտական անաչառությամբ: Նրանք էլ երբեմն շրջանցել են իրենց կուսակցությունների անցյալին վերաբերող ոչ հաճելի փաստերը և փորձել գունագարդել դրանց պատմությունը:

Այդ իմաստով հայոց նորագույն շրջանի պատմության վիճելի և քաղաքական գնահատականի տեսակետից պատմագիտական բարդ հիմնահարցերից է Հայաստանի համար ճակատագրական նշանակություն ունեցող Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ուսումնասիրությունը:

Հայրենական պատմագիտության ուսումնասիրության թիրախներից է եղել նաև Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայտնի է, որ խորհրդահայ պատմագրության մեջ ամենածանր որակումներ են տրվել Ալեքսանդրապոլի պայմանագրին՝ ստորացուցիչ, նվաստացուցիչ, ստրկացուցիչ, հրեշավոր, դավաճանական, ոճրագործական և այլն¹⁰: Եվ, իրոք, այդ որակում-գնահատականները կարելի է հիմնականում տեղին ու արդարացված համարել: Սակայն միշտ չէ, որ կարելի է համաձայնվել խորհրդահայ պատմաբանների ու կուսակցական-պետական գործիչների մեկնաբանություններին ու գնահատականներին: Օրինակ, ՀՄԽԳ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը 1922 թ. հունվարի վերջին ՀԿԿ առաջին համագումարում կարդացած քաղաքական զեկուցման մեջ արտահայտել է այն միտքը, թե դաշնակների կողմից Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումը եղել է տակտիկական քայլ, որպեսզի խորհրդային

¹⁰ Լեո, Անցյալից, էջ 455, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Ե., 1967, էջ 111, Ալիխանյան Ս. Տ., Սովետական Ռուսաստանի դեբրը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921 թթ., Ե., 1966, էջ 252, Աղայան Ծ. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 796, Գալոյան Գ. Ա., Պատմության քառուղիներում, Ե., 1982, էջ 354, «Հայաստանը...», էջ 775, Օհանջանյան Բ. Ա., Դաշնակցությունն առանց դիմակի, Ե., 1980, էջ 154 և ուրիշներ:

Ռուսաստանը ներքաշեն քեմալականների հետ պատերազմի մեջ¹¹: Սակայն Լուկաշինի այս դատողությունն այնքան հիմնազուրկ ու մտացածին էր, որ հետագայում դրան տուրք տվողներ չեղան, և այն տեղ չգտավ անգամ խորհրդահայ պատմագրության մեջ: Որ Անգլիան կուզենար քեմալականներին ներքաշել Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ, հասկանալի էր, բայց մանկամտություն կլինի կարծել, թե հայկական մի քանի զավառի համար խորհրդային Ռուսաստանը կպատերազմեր այն ժամանակ իր «բնական դաշնակից» Թուրքիայի հետ՝ իր դեմ հանելով մուսուլմանական աշխարհը: Ընդհակառակը, խորհրդային կառավարությունը Չայաստանի մասով ալեքսանդրապոլատիպ մի պայմանագիր կնքել էր Բրեստ-Լիտովսկում 1918 թ. մարտի 3-ին և նմանատիպ ռուս-թուրքական մի պայմանագիր էլ նախաստորագրվեց Մոսկվայում 1920 թ. օգոստոսի 24-ին, որով Ռուսաստանը ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը», այսինքն՝ 40 տարուց ավելի Արևելյան Չայաստանի ու ապա Չայաստանի առաջին Չանրապետության մաս կազմող Կարսի և Արդահանի անցումը Թուրքիային¹²: Ինչ խոսք, Ալեքսանդրապոլի պայմանագիրը դյուրացրեց ու ճանապարհի հարթեց Մոսկվայի և նրա կրկնօրինակ Կարսի պայմանագրերի համար:

Քննադատության չի դիմանում խորհրդային շատ հեղինակների այն պնդումը, թե դաշնակցական կառավարության պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանի մերժման պատճառով էր, որ թուրքերը հրաժարվեցին Ալեքսանդրապոլի բանակցություններում խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Մդիվանու միջնորդությունից: Իրականում թուրքական պատվիրակության ղեկավար Ք. Կարաբեքիր փաշան է հրաժարվել Ռուսաստանի ներկայացուցչի միջնորդությունից՝ պատճառաբանելով, որ հայերն ընդունել են իրենց բոլոր պայմանները:

Ինչ վերաբերում է Ալ. Խատիսյանի՝ վարչապետ Ս. Կրացյանին ուղղված հեռագրին՝ Մդիվանու վնասակար գործունեության առնչությամբ, ապա այդ մասին խոսվում է նույնների 29-ին՝ այն բանից հետո, երբ Կարաբեքիրն արդեն հինգ օր առաջ մերժել էր

¹¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 1:

¹² Ջոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 141-145, Գալոյան Գ. Ա., Չայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 265-267:

Մղիվանու՝ որպես միջնորդի մասնակցությունը կոնֆերանսին, և որից հետո վերջինս Ալեքսանդրապոլում պարզապես զբաղված էր խորհրդային իշխանության քարոզչությամբ: Դրա համար էլ Խատիսյանը հեռագրում նշում է, որ Մղիվանին այստեղ գործում է բացառապես իբրև կուսակցական՝ Հայաստանը խորհրդայնացնելու նպատակով¹³: Ինչպես տեսնում ենք, այս խնդրում նույնպես անտեղի է խորհրդային պատմագիր հեղինակների մեղադրանքը, թե իբր դաշնակցական պատվիրակությունն է խոչընդոտել, որպեսզի խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը մասնակցի Ալեքսանդրապոլի բանակցություններին:

Անցած ժամանակաշրջանում, Ալեքսանդրապոլի պայմանագրին տրված ծանր որակումներից զատ, փաստական այնքան աղավաղումներ ու կամայական մեկնաբանություններ են արվել, որ այդ պայմանագրի հողվածների ընդհանուր թվի վերաբերյալ անզամ չի եղել միասնական կարծիք: Տարբեր ուսումնասիրողների մոտ այն տատանվել է 14-ից 18-ի սահմաններում: Պայմանագրի հողվածների ստույգ թիվը 18-ն է: Որոշ հեղինակների մոտ առանձին հողվածներ տարբեր պատճառներով շրջանցվել են, իսկ երբեմն էլ պատմագիտական գրականության մեջ արձանագրվել են փաստեր, երբ պայմանագրի նախնական տարբերակը (նախագիծը) ներկայացվել է իբրև բուն պայմանագիր: Դրա պատճառը հավանաբար այն է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ մի կողմ չի վավերացրել և պաշտոնապես չի հրատարակել:

Այս տեսակետից իրականությանը բնավ չի համապատասխանում բազմավաստակ պատմաբան Լեոյի «Անցյալից» աշխատության մեջ զետեղված Ալեքսանդրապոլի պայմանագրից քաղված հակահայկական հետևյալ ձևակերպումը. «Օսմանյան սահմանի մեջ հայ մեծամասնություն ունեցող որևէ հողամաս չկա»¹⁴: Սա թյուրիմացություն է, որովհետև բուն պայմանագրում նման միտք չկա: Լեոյի վերը նշված «քաղվածքը» ընդամենը թուրքական պատվիրակության ներկայացրած պայմանագրի նախագծի պարզ վերարտադրությունն է, որն արտատպվել է Կ. Պոլսի ռամկավարների «Ժողովրդի ձայն» թերթից: Բանակցությունների ժամանակ հայկական կողմին հաջողվել է հանել այդ կետը: Պայմանագրի ստորագրումից մեկ-երկու ամիս չանցած՝ արդեն ամենուրեք

¹³ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 57, թ. 1:

¹⁴ Լեո, Անցյալից, էջ 456:

շրջող բանբասանքները հերքելու նպատակով Ալ. Խատիսյանն այս մասին լրացուցիչ պարզաբանումներ է տվել Կ. Պոլսում լույս տեսնող «Վերջին լուր» թերթին: Այդ մասին նա գրում է նաև իր հուշերում¹⁵:

Խորհրդային պատմագրության և նույնիսկ հետխորհրդային մի շարք հեղինակների մոտ պահպանվում է այն կարծրատիպը, թե իբր Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազար քառ.կմ տարածք, որը հավասարվում էր Բաթումի պայմանագրով նախատեսված տարածքին¹⁶: Ասվածը դարձյալ չի համապատասխանում իրականությանը:

Վերջին տասնամյակում հայ պատմագրության մեջ առաջիններից մեկը պատմաբան-քարտեզագետ Բ. Հարությունյանը սահմանային ճշգրտումներով ցույց տվեց, որ տարածքային-սահմանային տեսակետից Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչնչով չէր զիջում Մոսկվայի, հետևապես և Կարսի պայմանագրերին¹⁷: Ավելին, ճանաչված քարտեզագետի դիտարկմամբ Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով գծված հայ-թուրքական պետական սահմանների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Մոսկվայի պայմանագրով Հայաստանի հյուսիսարևմտյան սահմանագիծը (Ադբաբայի՝ ներկայիս Ամասիայի ենթաշրջանի ուղղությամբ) զգալիորեն տեղափոխվել է արևելք, այսինքն՝ Հայաստանին անցնող տարածքով, և արդյունքում Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված ավելի քան 250 քառ.կմ եռանկյունի մի հատված, որը պետք է մնար Հայաստանին, անցել է Թուրքիային¹⁸:

Ալեքսանդրապոլի պայմանագրի գնահատման խնդրին, բնականաբար, անդրադարձել են սփյուռքի հեղինակները: Եթե ՀՀԳ գործիչները և պատմագիր հեղինակները (Ս. Վրացյան, Ալ. Խատիսյան, Հր. Տասնապետյան, Ռ. Փիրումյան և ուրիշներ) փորձել են հիմնավորել նման պայմանագրի կնքման պատմական անխու-

¹⁵ «Վերջին լուր», Կ. Պոլիս, 22 փետրվարի 1921 թ., Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 314:

¹⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ.7, էջ 111, Արզումանյան Մ.Վ., նշվ.աշխ., էջ 349, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Ե., 1990, էջ 83, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 376, «Ազատամտություն», 14.X.2009 թ. և ուրիշներ:

¹⁷ «Գիտության գլոբուս», 2001, թիվ 1, էջ 72:

¹⁸ Նույն տեղում:

սափելիությունը, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն ստորագրվել է՝ «հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանն սպառնացող մահացու վտանգից դրված»¹⁹, «սպառնալիքի և ճնշման տակ»²⁰, «իբրև հաղթող կողմից պարտվող կողմին բռնությամբ պարտադրված պայմանագիր»²¹ և այլն, սփյուռքի ոչ դաշնակցական որոշ հեղինակներ (մախկին դաշնակցական Շ. Նաթալին, Զ. Մսրրյանը, Մ. Ավետյանը և ուրիշներ) խորհրդային պատմաբաններից ոչ պակաս ծանր որակումներ են տվել՝ «հայրենադավ և մաքսանենգ պայմանագիր», «Չայոց պատմության ամենամվաստացուցիչ դաշնագիր», «գերագույն դավաճանություն» և այլն²²:

Չայրենական պատմագրության մեջ բավականաչափ անդրադարձ կա նաև Մոսկվայի պայմանագրի շուրջ, մանավանդ որ իր նշանակությամբ ու խաղացած դերով սա նշված երեք պայմանագրերից համարվում է գլխավորը, որովհետև Ալեքսանդրապոլինը ի սկզբանե իրավական ուժ չի ունեցել, իսկ Կարսինը, ըստ էության, համարվում է մոսկովյան պայմանագրի յուրատեսակ հավելվածը (կրկնօրինակը): Մոսկվայի պայմանագրին ևս տրվել են տարբեր, նույնիսկ հակադիր գնահատականներ: Եթե խորհրդային պատմագրությունը հիմնականում դրական կամ, համենայն դեպս, ըմբռնունով էր մոտենում ու գնահատում Մոսկվայի և դրա նմանակ Կարսի պայմանագրերին, ապա սփյուռքի հեղինակները, որպես կանոն, դատապարտել են հայ ժողովրդի թիկունքում կայացված այդ կողոպտիչ գործարքը: 1920-ական թվականների սկզբին հայ կոմունիստների առաջնորդ Սլ. Մյասնիկյանը գրում էր. «խորհրդային Չայաստանի վերաբերմունքը դեպի քեմալիստները պետք է լինի բարյացակամ»²³: Այստեղից էլ կանխավ պարզ է դառնում, թե ինչպիսին պետք է լինեն խորհրդահայ պատմագրության վերաբերմունքը քեմալականների հետ կնքված պայմանագրերին, որպեսզի «մեր թուրք բարեկամները չնեղանան»:

¹⁹ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 503-504:

²⁰ Փիրումյան Ռ., Չայաստանը ԳՅԴ-բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917-1921 թթ., Ե., 1997, էջ 295:

²¹ Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր). Բոստոն, 1943, էջ 110-111:

²² Նաթալի Շ., Երեք դաշնագրեր, Պեյրուս, 1957, էջ 3, 12, Մսրրյան Զ., նշվ. աշխ., էջ 82, Ավետյան Մ., Չայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920). հուշամատյան և գոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 231 և այլն:

²³ ՀԱԱ, ֆ. 4004, ց 1, գ. 104, թ. 4:

Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի հրավիրման կապակցությամբ խորհրդահայ պատմագրության մեջ տարածված է այն տեսակետը, որ դրա հրավիրման նախաձեռնողը եղել է խորհրդային կառավարությունը²⁴: Կոնֆերանսի նախաձեռնության դափնին տրվում էր խորհրդային կառավարությանը, որպեսզի ցույց տրվեր, որ, իբր, խորհրդային պետությունը մտահոգ է եղել հայ ժողովրդի ճակատագրով՝ Չայկական հարցի լուծմամբ: Խնդրով զբաղվող հետազոտողներից մեկը նշում է, որ. «1920 թ. դեկտեմբերի առաջին օրերին ռուսական դեկավարությունը հրավեր ուղարկեց քեմալականներին խորհրդա-թուրքական երկրորդ կոնֆերանս հրավիրելու՝ լուծելու տարածքային և ուրիշ հարցեր»²⁵: Այնինչ, իրականում ոչ թե ՌՍՖՍՀ կառավարությունն է հրավեր ուղարկել Թուրքիային՝ Մոսկվայում ռուս-թուրքական կոնֆերանս հրավիրելու վերաբերյալ, այլ 1920 թ. դեկտեմբերի 9-ին Անգորա ուղարկած համապատասխան հեռագիր-նոտայով համաձայնություն է տվել (ընդգծումները հեղինակինն է - Ա. Յ.) կոնֆերանս գումարելու մասին²⁶:

Կնշանակի՝ ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի հրավիրման նախաձեռնությունը գալիս է Թուրքիայից, ինչպես առաջինի դեպքում:

Եվ այս իմաստով անտեղի է խորհրդահայ շատ պատմաբանների այն պնդումը, թե իբր խորհրդային կողմն է նախաձեռնել Մոսկվայի կոնֆերանսը, որպեսզի այնտեղ վերանայվի ու չեղյալ հայտարարվի Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Գիշտ է նկատել է. Ջոհրաբյանը, որ Մոսկվայի բանակցություններում և պայմանագրում խոսք չկա Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարելու մասին²⁷: Անշուշտ, Չայաստանի հեղկոմը 1920 թ. դեկտեմբեր-1921 թ. հունվար ամիսներին Թուրքիայի կառավարությանն ուղղված նոտա-հայտագրերում նման հույս էր փայփայում²⁸: Սակայն դա չարդարացավ: Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման խնդիրը Մոսկվայի բանակցություններում ածանցյալ նշանակություն ուներ: Այս և այլ հարցերի մասին իր տեղում բացահայ-


²⁴ Արզումանյան Մ. Վ., Դարավոր գոյամարտ, Ե., 1989, էջ 550:

²⁵ Казанджян Р., "К вопросу об оценке...", с. 109.

²⁶ Документы внешней политики СССР, т. 3, М., 1959, с. 371.

²⁷ Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 248:

²⁸ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1157, թ. 1:



տումներ կարվեն ու պարզաբանումներ կտրվեն:

Խորհրդային պատմագրության մեջ տարածում գտած և մինչև անգամ մեր օրերում առանձին հեղինակների կողմից պաշտպանվող անարժեք (մտացածին) փաստարկ-հնարքներից մեկն այն է, երբ ուղղակի կապ են տեսնում 1921 թ. Հայաստանում փետրվարյան ապստամբության և Մոսկվայի բանակցություններին հայկական պատվիրակությանը մասնակցել չթույլատրելու միջև: Խորհրդային պատմաբան Ա. Խեյֆեցը գրում է, թե Մոսկվայի կոնֆերանսին պետք է մասնակցեր Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը, սակայն Երևանը գրավելուց հետո Ս. Վրացյանը հայտարարություն արեց, որ նա իրավունք չունի հանդես գալու Հայաստանի անունից²⁹: Հայ ժողովրդի պատմության ութհատորյակում ևս նշվում է, որ թուրքերը, օգտագործելով Վրացյանի դիմումը, հրաժարվում են բանակցություններ վարել Հայաստանի պատվիրակության հետ³⁰: Այս առնչությամբ խորհրդահայ մեկ ուրիշ պատմաբան Ա. Մնացականյանը պնդում է, թե իբր ռուս-թուրքական «Կոնֆերանսի հանձնաժողովը քննել և նախապատրաստել էր Հայաստանի սահմանների և գաղթած բնակչության վերադարձի բարենպաստ լուծման հարցը: Սակայն հենց կոնֆերանսի բացման օրը (ընդգծումը մերն է-Ա. Հ.) ստացվում է սև գույժ՝ «փրկության կոմիտեի» նախագահի հեռագիրը, որով հաղորդվում է, թե Հայաստանի հեղկոմը տապալվել է, և իշխանությունն անցել է «փրկության կոմիտեին», որը պաշտպանում է Ալեքսանդրապոլի դաշնագրի կետերը, և որ: Բեկզադյանը և Տեր-Գաբրիելյանը իրավունք չունեն մասնակցելու այդ կոնֆերանսին»³¹: Կեղծ է և իրականությանը չի համապատասխանում նաև գրող Ալ. Շիրվանզադեի պատմած այն դրվագը, թե 1922 թ. գարնանը Ռապալոյում Ջենովայի միջազգային կոնֆերանսի ժամանակ խորհրդային պատվիրակ Ալ. Բեկզադյանն իրեն պատմել է, որ. «Այսօր Ղարսն էլ իր շրջանով և Նախիջևանն ու Սուրմալուի գավառներն էլ կցված կլինեին Սովետական Հայաստանին, եթե տեղի չունենար դժբախտ դեպք: Երևակայեցեք, ճիշտ այն օրը և այն ժամին, երբ ես Չիչերինի մոտ էի և գրեթե ստացել էի նրա հավանությունը՝ Ղարսը և հիշյալ

²⁹ Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 94:

³⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 140:

³¹ Մնացականյան Ա. Ն., Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, էջ 71:

ճահանգները մեզ վերադարձնելու, կրկնում եմ, ճիշտ այդ վայրկյանին ստացվեց նախկին հանրապետության վարչապետ Ս. Վրացյանի չարաբախտ հեռագիրը», որ «Բեկզադյանը չունե իրավունք որևէ բանակցություն վարելու Մոսկվայի հետ»: Շիրվանզադեի պատմելով՝ այդ հեռագրի հետևանքով Չիչերինը վրդովվել է, ու իբր Բեկզադյանը ստիպված է եղել ձեռնունայն վերադառնալ Կովկաս³²: Ասվածը աղերս չունի պատմական իրադարձության հետ: Իրողությունն աղավաղված և սխալ է մեկնաբանված կամ Բեկզադյանի, կամ Շիրվանզադեի կողմից, ավելի հավանական է վերջինիս կողմից:

Սփյուռքի հեղինակներից Շ. Նաթալին, ծայնակցելով խորհրդահայ հեղինակներին, դարձյալ գրում է, որ իբր փետրվարյան ապստամբության և Վրացյանի հայտնի հեռագրի հետևանքով Չայաստանի պատվիրակության մասնակցությունը Մոսկվայի խորհրդաժողովին խափանվեց³³:

Մինչդեռ, իրականությունն այն է, որ Ս. Վրացյանի ռադիոգիր-հեռագիրն ուղարկվել է մարտի 12-ին (որոշ տվյալներով մարտի 14-ին),³⁴ երբ ռուս-թուրքական խորհրդաժողովն արդեն իր եզրափակիչ փուլում էր: Այնինչ հայ պատվիրակների մասնակցությունը կոնֆերանսին արգելված է եղել հենց սկզբից՝ փետրվարի 26-ից: Իսկ ինչ վերաբերում է Չայաստանի սահմանների խնդրի լուծման ոչ նպաստավոր ընթացքին, ապա պետք է ասել, որ դա սկզբունքորեն լուծված էր դեռ մինչև կոնֆերանսի բացումը՝ բարձր մակարդակի երկկողմ քաղաքական համաձայնության արդյունքում:

Խորհրդահայ պատմագրության մեջ առաջիններից մեկը՝ պրոֆ. Է. Ջոհրաբյանը, հենվելով պատմական փաստերի ժամանակագրական օբյեկտիվ մեկնաբանության վրա, ցույց է տվել, որ Ս. Վրացյանի՝ մարտի 12-ի ռադիոհայտարարությունը հետին թվով չէր կարող ազդել Չայաստանի պատվիրակության փետրվարի 26-ից Մոսկվայի բանակցություններին չմասնակցելու հանգամանքի վրա³⁵: Այս առնչությամբ պատմաբանը հակադարձ հարցադրում է անում. իսկ ինչու՞ մերժվեց Ադրբեջանի պատվիրակության մասնակցությունը³⁶:

³² Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1961, էջ 580:

³³ Նաթալի Շ., նշվ. աշխ., էջ 11:

³⁴ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 55:

³⁵ Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը ..., էջ 213-214:

³⁶ Նույն տեղում, էջ 212:

Ս. Վրացյանի՝ մարտի 12-ի հայտնի հեռագրի կապակցությամբ տեղին դիտարկում է անույն պրոֆ. Վլ. Ղազախեցյանը՝ նշելով, որ այդ օրերին Հայաստանի փրկության կոմիտեն (ՀՓԿ) անգամ տեղյակ չի եղել, որ Հայաստանի պատվիրակությանը թույլ չի տրվել մասնակցելու բանակցություններին³⁷: Բացի այդ, չկա որևէ փաստ, որ թուրքական կողմն օգտագործել է Ս. Վրացյանի սույն հեռագիրը՝ մերժելու հայկական պատվիրակության մասնակցությունը: Գիշտ է նկատել Վլ. Ղազախեցյանը, որ տակավին 1920 թ. դեկտեմբերի սկզբներին՝ խորհրդա-թուրքական կոնֆերանսի նախապատրաստական փուլում թուրքական կողմը՝ հանձին Ք. Կարաբեքիրի, բացառել էր Հայաստանի մասնակցությունը և Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայումը³⁸: Այս իմաստով սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե Մոսկվայի պայմանագրով չեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը³⁹: Իրողությունն այն է, որ Մոսկվայի պայմանագրով չեղյալ չի հայտարարվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ավելին, տարածքային-սահմանային մասով Մոսկվայի, ապա նաև Կարսի պայմանագրերը եկան վերահաստատելու այն: Այս կապակցությամբ Կ. Պոլսի «Վերջին լուր» թերթը, հաղորդագրություն տպելով թուրքական «Սաբահ» թերթից, նշում է, որ Մոսկվայի բանակցություններում Թուրքիայի պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալ բեյը հեռագրել է Անգորա, որ «Կոնֆերանսը ընդունել է Ալեքսանդրապոլի դաշնագիրը: Թուրքիայի սահմանը գծվում է 1920 թ. հունվարի 28-ի Կ. Պոլսի խորհրդարանի ընդունած «Ազգային ուխտի» համաձայն»⁴⁰: Է. Ջոհրաբյանը և Վլ. Ղազախեցյանը իրավացիորեն մերժում են խորհրդային պատմագիտական գրականության մեջ դեգերող այն կեղծ դատողությունը, թե իբր Մոսկվայի պայմանագրով չեղյալ համարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Մոսկվայի կոնֆերանսում ոչ մի խոսք չի բացվել Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման հարցի մասին⁴¹: Ալեքսանդրապոլի

³⁷ Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 59:

³⁸ Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 87:

³⁹ Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 117, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 458 և ուրիշներ:

⁴⁰ «Վերջին լուր», Կ. Պոլիս, 29 մարտի 1921 թ.:

⁴¹ Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը ..., էջ 248, Ղազախեցյան Վլ., նշվ. աշխ., էջ 99:

պայմանագիրը չեղյալ է համարվել միայն Կարսի պայմանագրով՝ հոդված 1-ով⁴²:

Նախկին պատմագիտական գրականության մեջ տեղ գտած աղաղակող կեղծիքներից մեկն էլ այն է, թե խորհրդա-թուրքական բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը իբր հայտարարել է, թե ինքը «Հայաստանի ներկայացուցիչ ճանաչում է ոչ թե Հեղկոմին, այլ «Փրկության կոմիտեի» ներկայացուցչին»⁴³: Իրականում թուրքերն իրենց մերժումը բացատրում էին ոչ թե Հայաստանում փետրվարյան իշխանափոխությամբ, այլ այն բանով, որ իրենք Անգորայի կառավարության կողմից լիազորված չեն հայերի հետ բանակցելու:

Ինչ վերաբերում է Հայաստանի պատվիրակության գործունեության վրա փետրվարյան ապստամբության խաղացած խանգարիչ դերին, ապա այդ պարագան, անշուշտ, որոշակի բարոյահոգեբանական դեր խաղացել է, բայց ոչ առաջնային (եական): Այդ մասին վկայում է հենց ինքը՝ Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը: Նա Բաքվում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Աթաբեկյանին 1921 թ. մարտի 18-ին ուղղված նամակում գրում էր, որ այդ հանգամանքը «որոշ անհարմար վիճակ ստեղծեց Հայաստանի պատվիրակության համար»⁴⁴: Մոսկվայի բանակցություններին չմասնակցած Ալ. Բեկզադյանի նամակի բովանդակությունից դժվար չէ հասկանալ, որ 1921 թ. փետրվարյան ապստամբությամբ խորհրդային իշխանության ժամանակավոր տապալման պարագան չէր գլխավորը, որ Հայաստանը և հայ պատվիրակությունը հաջողություն չունեցան:

Որպես հակափաստարկ՝ կարելի է ընթերցողի ուշադրությունը հրավիրել մեկ այլ համգամանքի վրա: Բանն այն է, որ ՀՓԿ իշխանությունը տարածվում էր միայն Հայաստանի մի մասի վրա: Այս իշխանության կողքին Հայաստանի տարածքում շարունակում էին գործել երկու հեղկոմներ. մեկը՝ Ղամարլու-Վեդիում՝ ի դեմս Ս. Կասյանի, մյուսը՝ Դիլիջան-Իջևանում՝ չեկիստ Գ. Աթաբեկյանի: Եվ ցանկության դեպքում կոնֆերանսը կարող էր ճանաչել խորհրդային Հայաստանի պատվիրակության իրավասությունը,

⁴² ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 13, ք. 106:

⁴³ Հարությունյան Շ. Ռ., Հայ ժողովրդի պատմություն (1917-1968), հ. 4, Ե., 1970, էջ 141:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, ք. 25, գ. 319, ք. 22:

հետևապես և թույլ տալ մասնակցելու խորհրդաժողովին⁴⁵: Սակայն կողմերը նման խնդրի քննարկման անհրաժեշտություն չեն զգացել, որովհետև հայկական պատվիրակության մասնակցությունը կոնֆերանսին ոչ միայն ցանկալի չէր, այլև՝ ավելորդ: Բայց պետք է ենթադրել, որ եթե անգամ Չայաստանի պատվիրակությանը թեկուզ թույլատրվեր մասնակցելու Մոսկվայի կոնֆերանսին, միևնույնն է, այդ մասնակցությունը գործնական նշանակություն չէր ունենա այնպես, ինչպես որ չունեցավ հետագայում՝ Կարսի բանակցությունների ժամանակ:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը նշված փաստերը, կարելի է համաձայնվել Ալ. Բեկզադյանի արտահայտած կարծիքին և եզրակացնել, որ 1921 թ. փետրվարյան ապստամբությունը և ՉՓԿ նախագահ Ս. Վրացյանի հեռագրերը որոշակի դեր խաղացել են ռուս-թուրքական բանակցություններում՝ ստեղծելով քաղաքական և բարոյահոգեբանական ոչ նպաստավոր մթնոլորտ Չայկական հարցի լուծման խնդրում:

Միանգամայն անհիմն է մինչ օրս հայ պատմագրության մեջ շրջանառվող այն պնդումը, թե Մոսկվայի բանակցություններում բուռն վեճեր են եղել Չայաստանի խնդրի շուրջ, և որ միայն թուրք պատվիրակների անզիջողականության հետևանքով հնարավոր չեղավ խնդրին հայանպաստ լուծում տալ: Նման պնդման համար հիմք է Գ. Չիչերինի ապրիլի 21-ի մամակը՝ հասցեագրված Մոսկվայում ՅՍԽՅ ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին՝ իբրև պատասխան Չայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանի կողմից ապրիլի 15-ին Գ. Չիչերինին ուղղված բողոք-հայտարարության: Չիչերինը, փորձելով արդարացնել ռուսական պատվիրակության քայլը՝ հայկական տարածքները թուրքերին հանձնելը, ինքն էլ ընկել է հակասության մեջ: Նա մի կողմից նշում է, որ սահմանային խնդրում կողմերի միջև ընթացել է երկար ու անողոք պայքար, իսկ մյուս կողմից՝ փաստում, որ դեռ նախապես՝ մինչև խորհրդաժողովի (կոնֆերանսի) սկսվելը, կուսակցության ԿԿ-ն, Զարթուրոն, բարձրագույն ղեկավար գործիչները սկզբունքային համաձայնության էին եկել թուրքերի հետ, որ իրենք ճանաչում են «Ազգային ուխտը», և որ Թուրքիան տարածքային կորուստներ չի ունենա: Այստեղից հարց է ծագում, որ եթե կոմունիստական կու-

⁴⁵ Չայոց պատմություն 1900-1939 թթ., Ե., 1993, էջ 202-203:

սակցության բարձրագույն ղեկավարությունը, այդ թվում՝ Վ. Լե-
նինը, Ի. Ստալինը, սկզբունքորեն ընդունել էին թուրքական «Ազ-
գային ուխտը», այսինքն՝ հայկական տարածքների կորուստը,
ապա էլ ինչ խոսք կարող է լինել կողմերի միջև բանակցային
անհաշտ պայքարի մասին: Գ. Չիչերինը անձամբ է խոստովանում,
որ Չայկական հարցում տեղի են ունեցել անդրկուլիսային բանակ-
ցություններ, որոնցում էլ որոշվել է Չայաստանի տարածքային-
սահմանային հարցերը: Չիչերինի վկայությամբ կոնֆերանսի քա-
ղաքական հանձնաժողովը սահմանային խնդրին անդրադարձել
է այն ժամանակ (1921 թ. մարտի 10-ին), երբ բուն բանակցու-
թյունները կողմերի միջև սկսվել էին համարյա երկու շաբաթ առաջ,
և այդ ընթացքում բոլոր սկզբունքային հարցերը (տարածքային-
սահմանային գիշումներ) արդեն լուծվել էին ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի համա-
պատասխան որոշումներով և ղեկավար ընկերների աջակցու-
թյամբ⁴⁶:

Ուսումնասիրության առարկա պայմանագրերի շուրջ ուշադ-
րության է արժանի պատմաբան Ռ. Ղազանջյանի կատարած աշխա-
տանքը՝ հաճախ չկիսելով նրա մոտեցումներն ու տեսակետները
շատ հարցերի վերաբերյալ: Այսպես, օրինակ, դժվար է համաձայն-
վել Ռ. Ղազանջյանի այն պնդմանը, թե Մոսկվայի պայմանագրով
Թուրքիան ստացավ ավելի քիչ տարածք, քան նախատեսված էր
«Ազգային ուխտով»⁴⁷: Իր տեղում կտեսնենք, որ Մոսկվայի պայմա-
նագրով Թուրքիան տարածքային որևէ կորուստ չի ունեցել: Այդու-
հանդերձ, անուրանալի է այն փաստը, որ հեղինակն իր բազմաթիվ
հրապարակումներով գիտական շրջանառության մեջ է դրել նախ-
կինում հանրությանն անհայտ, գաղտնագերծված զգալի թվով ար-
խիվային փաստաթղթեր: Մեր կարծիքով՝ վերջին տարիներին հե-
տազոտող Ռ. Ղազանջյանի կատարած պատմագիտական ուշա-
գրավ նորություններից է այն, որ արխիվային վավերագրերի հիման
վրա բացահայտեց, որ ռուս-թուրքական Մոսկվայի պայմանագիրը
ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին՝ անգլո-ռուսական առևտրա-
տնտեսական համաձայնագրի կնքման օրը, այլ, որոշակի նկատա-
ռումներով, երկու օր ուշ՝ մարտի 18-ին, բայց պայմանագրի վրա

⁴⁶ Саркисян Е., За кулисами, как родился Московский договор 1921 г.,
“Литературная Армения”, 1991, № 1, с. 82:

⁴⁷ Казанджян Р., К вопросу об оценке..., с. 115.

հետին թվով պաշտոնապես նշվել է մարտի 16-ը⁴⁸: Այդ մասին ևս իր տեղում կտրվի լրացուցիչ պարզաբանում:

Մարքս-լենինյան մենաշնորհի աշխարհայացքի, խորհրդային պատմագիտության մեթոդաբանության և կոմունիստական ամբողջատիրության պայմաններում հասկանալ կարելի է է. Ջոհրաբյանին, որը Մոսկվայի «եղբայրության և բարեկամության մասին» խորհրդա-թուրքական պայմանագիրը համարել է «սովետական դիվանագիտության խոշոր ներդրումը»⁴⁹: Ավելի ուշ արդեն, հետխորհրդային տարիներին է. Ջոհրաբյանը իրավացիորեն Մոսկվայի պայմանագիրը որակում է որպես գործարք⁵⁰: Այն գործարք են համարել ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, Ե. Սարգսյանը, Վլ. Ղազախեցյանը, Կ. Խաչատրյանը և ուրիշներ: Մոսկվայի պայմանագիրը գործարք էր համարվում երկու հանգամանքով. մեկ, որ Մոսկվան հայկական հողերի հաշվին տարածքային զիջումներ կատարեց քենալականներին, որպեսզի կանխեր նրանց հնարավոր անցումն Անտանտի կողմը և երկրորդ՝ Հայաստանի տարածքային-սահմանային հարցը լուծվում էր առանց նրա ներկայացուցիչների գիտության ու մասնակցության: Եվ այս իմաստով Մոսկվայի պայմանագիրը՝ իբրև նախատիպ, որոշ նմանություն ու ընդհանրություն ունի 1939 թ. օգոստոս-սեպտեմբերի խորհրդա-գերմանական գաղտնի պայմանագիր-արձանագրությունների հետ: Այսպիսով, առանց վարանելու կարելի է փաստել, որ Մոսկվայի պայմանագրով Հայաստանն անդամահատեցին ու իրար միջև բաժանեցին խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան:

Ինչ վերաբերում է Կարսի պայմանագրին, ապա պատմագիտական առումով առանձնահատուկ մոտեցումներ ու գնահատականներ չեն եղել, քանզի այն, ըստ էության, Մոսկվայի պայմանագրի հավելված-կրկնությունն էր: Քննել ու գնահատել Մոսկվայի պայմանագիրը, ըստ էության, նշանակում է գնահատել նաև Կարսի պայմանագիրը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ պատմագրության մեջ

⁴⁸ Казанджян Р., К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г., (ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1999, թիվ 1, էջ 175-179):

⁴⁹ Ջոհրաբյան է. Ա., Սովետական Ռուսաստանը ..., էջ 234:

⁵⁰ Ջոհրաբյան է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 358:

բավականաչափ անդրադարձ է եղել հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող Մոսկվայի և Կարսի, նաև Ալեքսանդրապոլի պայմանագրերին, ամարդար ու բռնի ուժով Հայաստանին պարտադրված պայմանագրեր, որոնց միջև կաներքին օրգանական կապ, և կարծես դրանք իրար շարունակություն լինեն: Այդ իմաստով դիպուկ է ասված Շահան Նաթալիի կողմից. «Հայ արիւնով գրուած երեք արարնոց ողբերգութիւն»⁵¹: Այդ պայմանագրերի լույս աշխարհ գալուց ի վեր անցած ժամանակաշրջանում հայ պատմագրության մեջ հավաքվել ու շրջանառվել է խնդրին առնչվող հսկայական փաստական նյութ: Սակայն խորհրդային և սփյուռքի պատմագիտական գրականության մեջ այդ պայմանագրերին տրվել են ոչ միանշանակ, երբեմն հակասական մեկնաբանություններ ու գնահատականներ: Հետխորհրդային պատմագրությունն աստիճանաբար ճշգրտում, վերագնահատում և հստակեցնում է Հայաստանի ու հայ ժողովրդի համար քաղաքական արդիական նշանակություն ունեցող այդ պայմանագրերի պատմության հարցերը: Արդ, պատմագիտական հին և ի հայտ եկած նոր նյութերի հիման վրա փորձ է արվում ամբողջացնել հիմնահարցի պատմությունը:

⁵¹ Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի), էջ 3:

Գլուխ առաջին

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՅԸ

1920 թ. գաղնամից Հայաստանի Հանրապետության միջազգային ու ներքին դրությունը կտրուկ բարդացավ: Կարմիր բանակը, պարտության մատնելով դեմիկիմյան կամավորական բանակին, մտավ Չյուսիսային Կովկաս, իսկ ապրիլի 28-ին գրեթե առանց որևէ կրակոցի խորհրդայնացվեց Ադրբեջանը: Հայաստանի բուլշևիկները, ոգևորված այդ իրադարձությունից, մայիսին ապստամբություն բարձրացրին՝ հույս ունենալով ստանալ կարմիր բանակի օգնությունը և խորհրդայնացնել Հայաստանը: Սակայն մի շարք հանգամանքների (ռուս-լեհական պատերազմը, Անտանտի կողմից Բաթումում նոր դեսանտ իջեցնելու վտանգը և այլն) թելադրանքով այդ օգնությունը չստացվեց, և Հայաստանի խորհրդայնացման հարցը հետաձգվեց: Բայց և այնպես հիմնականում Հայաստանի բանակում խմորված վաղաժամ ապստամբությունը (խռովությունը) տեղի ունեցավ: Թեև այն ճնշվեց Հայաստանի իշխանությունների կողմից, սակայն հեղափոխական քայքայիչ բացիլով վարակված բանակը բարոյահոգեբանական առումով զգալիորեն թուլացավ: Մայիսյան դեպքերը ցույց տվեցին, որ ՀՀ բանակը ընդունակ չէ պաշտպանելու հայոց անկախ պետականությունը, այն հուսալի հենարան չէ Հայաստանի կառավարությանը: Բանակում ձևավորվել էր այն մտայնությունը, որ նա պատրաստ է Հայաստանը խորհրդայնացնելու և Ռուսաստանին միացնելու դիմաց հրաժարվել անկախությունից: Այդ երևույթը ակներև երևաց 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի շրջանում:

1920 թ. գարնանից զուգահեռաբար տեղի էր ունենում Հայաստանի անկախությանը սպառնացող մահացու մեկ այլ գործընթաց: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Սուստաֆա Քեմալ փաշայի՝ ՌՍՖՆՀ կառավարության նախագահ Վ. Ի. Լենինին ուղղված բարեկամական կապեր հաստատելու մասին 1920 թ. ապրիլի 26-ի հայտնի նամակից հետո հունիսի սկզբին

դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Խորհրդրդային Ռուսաստանի և Անգորայի կառավարության միջև:

Ապրիլ-մայիս ամիսներից Խորհրդային Ռուսաստանի (ՌՍՖՍՀ) և քենալական Թուրքիայի (ԹԱՄԺ կառավարության) ռազմաքաղաքական շահերի համընկնման միջոցով սկսվեց մերձեցում և համագործակցություն նրանց միջև: Ստացվեց այնպես, որ պատմականորեն թշնամի այդ երկու երկրների շահերն համընկան, քանզի երկուսն էլ պայքարում էին Անտանտի (Համաձայնության) տերությունների դեմ, որոնց փոքր դաշնակիցն էր համարվում նաև Հայաստանի Հանրապետությունը: Քենալականները Ռուսաստանի օգնության (զենքի ու դրամի) կարիքն ունեին, որպեսզի թույլ չտային աշխարհամարտում պարտված Թուրքիայի տարածքային մասնատում: Նրանք պարտավորվեցին պաշտպանել Կ. Պոլսի մեջլիսի 1920 թ. հունվարի 28-ին ընդունած «Ազգային ուխտով» նախատեսված թուրքական սահմանները: Հիմք ընդունելով «Ազգային ուխտի» պահանջը՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը տակավին 1920 թ. հունիսին լիազորել էր կառավարությանը առաջին իսկ հնարավորության դեպքում գրավել «Ազգային ուխտով» ծրագրված Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերը¹: Խորհրդրդային Ռուսաստանն էլ իր հերթին պատրանք ուներ համաշխարհային հեղափոխությունը տարածել մուսուլմանական Արևելքի երկրներ, որոնց գլխավոր միջնաբերդը համարում էր Թուրքիան: Եվ, այդպիսով, կամա թե ակամա իբրև պետականություն դեռևս լիարժեքորեն չձևավորված ու չամրացած ՀՀ-ն հայտնվեց, Ս. Վրացյանի պատկերավոր արտահայտությամբ՝ «Ռուսական մուրճի և թուրքական սալի միջև»:

1920 թ. ամառվանից Խորհրդա-թուրքական հուլիս-օգոստոսյան (Գ. Չիչերին-Բեքիր Սամի բեյ) բանակցությունների արդյունքով Ռուսաստանը սկսեց բազմակողմանի (ոսկի, զենք-զինամթերքով, քաղաքական-դիվանագիտական) օգնություն ցույց տալ Թուրքիային²:

1920 թ. ամռանը առաջնային նշանակություն է ստանում ան-

¹ Սարգսյան Ե. Ղ., Սահակյան Ռ. Գ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Ե., 1963, էջ 45:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, ք. 333, գ. 602, ք. 31, Документы внешней политики СССР (այսուհետ՝ ДВП СССР), т. 3, М., 1959, с. 675, «Մշակ», 21 սեպտեմբերի 1920 թ., Багиров Ю. А., Из истории советско-турецких отношений в 1920-1922 гг., Баку, 1965, с. 40, 120 и др.:

միջական ցամաքային կապի հաստատումը Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև: Եվ այդպիսի կապող ուղի համարվեց Նախիջևանի երկրամասը: Բուլղարիայից Ռուսաստանը նպատակ ուներ իր բարեկամ քեմալական Թուրքիայի հետ կապվելու և դեպի Արևելք հեղափոխություն արտահանելու, իսկ քեմալականների նպատակն էր՝ այդ ցամաքային կապի միջոցով Ռուսաստանից ռազմաֆինանսական օգնություն ստանալով՝ լուծել իրենց «Ազգային ուխտով» ծրագրած խնդիրները:

* * *

Հայաստանի Հանրապետության գլխին կախված արտաքին քաղաքական նման վտանգները թելադրում էին մի կողմից ակտիվ արտաքին քաղաքականություն, հուսալի դաշնակիցների փնտրություն, իսկ մյուս կողմից՝ ներքին կյանքի կայունացում: Մայիսյան ապստամբության ճնշումից հետո հանրապետության ներքին կյանքի հաջորդ լուրջ խնդիրը դրսից ու ներսից հրահրվող թուրքաթարական խռովություններն էին:

1920 թ. հունիսին Ջանգիբասարի հնազանդեցումից հետո հայկական զորքը գրավեց Բեյուք-Վեդին, Շարուրի շրջանը, Գալի դռները, Շահթախթին և շարժվեց Նախիջևան՝ հասնելով նրա երկաթուղային կայարան³: ՀՀ համար ռազմավարական նշանակություն ունեցող Նախիջևանի մարզի միացումը Հայաստանի Հանրապետությանը կաթճես որևէ կասկած չէր հարուցում: Սակայն Դրոյի գլխավորած հայկական զորախմբի նահանջը Լեռնային Ղարաբաղից և իրար հետ կապ հաստատելու նպատակով կարմիր բանակի Ղարաբաղ-Սյունիքով մուտքը Նախիջևան ու այդ նույն ժամանակ Բայազետի թուրքական 3000-ոց (որոշ տվյալներով 8-9 հազար) զորաջոկատի մուտքը և Նախիջևանի-Օրդուբադի ու Ջուլֆայի ռազմակալումը ի չիք դարձրին Նախիջևանի մարզի միացումը Հայաստանի Հանրապետությանը⁴:

³ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բեյուք, 1958, էջ 416-418:

⁴ Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, отв. ред. В. Микаелян, Е., 1992, с. 525, Нагорный Карабах, т. I, М., 2008, с. 471, Захарян К., “Между молотом и наковальней”, к вопросу об установлении современных государственных границ в Закавказье и в Малой Азии (1917-1923 гг.), “Литературная Армения”, Е., 1990, № 1, с. 63.

Եթե Հայաստանը ի վիճակի չէր ռազմաքաղաքականապես տնօրինել Նախիջևանի երկրամասի ճակատագիրը, ապա, թերևս, ավելի նպատակահարմար էր, որ այդ երկրամասը ռազմակալվեր ռուսական զորքերի կողմից՝ իբրև վիճելի տարածք, քան թուրքական: «Հայաստանի Հանրապետությունը,– այս առնչությամբ գրում է Լ. Խուրշուդյանը,– հայտնվեց աքցանի մեջ: Մի կողմից առաջ էր շարժվում ռուսական բանակը, մյուս կողմից՝ թուրքականը: Այդ տարածքները (նաև Ղարաբաղը և Ջանգեզուրը-Ա. Հ.) կամ պետք է գրավեին ռուսները, կամ թուրքերը, կամ, էլ նրանք կիսեին իրար մեջ: Դիմադրել միաժամանակ և՛ Ռուսաստանին, և՛ Թուրքիային Հայաստանը չէր կարող: Ահա այդպիսի անելանելի պայմաններում Հայաստանի կառավարությունը գնաց այդ տարածքները ժամանակավորապես Ռուսաստանին հանձնելու ճանապարհով: Ռուսաստանից դեռ ինչ-որ չափով հույս կար հետ ստանալու այդ տարածքները, ինչը լիովին բացառվում էր դրանք Թուրքիայի կողմից գավթելու դեպքում»⁵: Հենց այդ մտայնությամբ էլ կայացվեց հայ-ռուսական՝ Թիֆլիսի օգոստոսի 10-ի համաձայնագիրը: Օգոստոսի 10-ի (Ջամալյան-Լեգրան) համաձայնագրի 2-րդ հոդվածով՝ ՀՀ զորքերը գրավում են Շահթախթի-Խոկ-Ազնաբերդ-Սուլթանբեկ և այնուհետև Կուկից հյուսիս և Բազարչայից արևմուտք ընկած գիծը⁶: Բացի այդ, համաձայնագրի հոդված 5-ով՝ երկաթգծի Շահթախթի-Ջուլֆա հատվածի շահագործման իրավունքը ժամանակավորապես հանձնվում է Հայաստանի երկաթուղային ճանապարհների վարչությանը⁷: Մնացած դեպքերում Նախիջևանը՝ իբրև վիճելի տարածք, ժամանակավորապես մնում էր ռազմակալված ՌԱՖԽՀ զորքերի կողմից:

Ամենևին թուրքերի սրտով չէր հայ-ռուսական 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրով Շահթախթի-Ջուլֆա երկաթգծի այդ հատվածի շահագործման հանձնումը Հայաստանի երկաթուղային վարչության տնօրինությանը⁸, որովհետև դա այն ուղին էր, որով Ռուսաստանը պետք է զենք և զինամթերք առաքեր Թուրքիա: Թուր-

⁵ Խուրշուդյան Լ.Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 101:

⁶ «Հայաստանի Հանրապետությունը (1918-1920 թթ.)», էջ 248, Нагорный Карабах, т. I, М., 2008, с. 471.

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 248–249:

քերն անչափ կարևորում էին Հայաստանի վրայով տրանզիտի հարցը առաջին հերթին Նախիջևանով՝ Ռուսաստանի հետ կապվելու, զենք ու զորք փոխադրելու նպատակով: Հենց այդ շահագրգռության թելադրանքով օգոստոս ամսին թուրքերը դիմեցին ռուսական իշխանություններին, որպեսզի համաձայնություն ստանան՝ գրավելու Սարիղամիշ-Շահթախթի գիծը, մեկուսացնելու Հայաստանը և անմիջական ցամաքային կապ հաստատելու կարմիր բանակի հետ⁹: Չի մերժվում թուրքերի դիմումը: Վ. Ի. Լենինի միջամտությամբ, Գ. Հիչերինի և Գ. Օրջոնիկիձեի համաձայնությամբ (Բ. Լեգրանի կամքին հակառակ) շուտով խախտվում է հայ-ռուսական՝ օգոստոսի 10-ի համաձայնագիրը, և ռուսական կողմը թույլ է տալիս թուրքերին գրավելու Սարիղամիշն ու Շահթախթին պայմանով, որ նրանք չանցնեն նշված գիծը¹⁰: Սակայն դա գործողության ազատություն տվեց քեմալականներին Հայաստանի վրա հարձակվելու համար: Սարիղամիշի նման ռազմավարական հենակետի գրավումը թուրքերի համար ճանապարհ էր բացում դեպի Կարս և Ալեքսանդրապոլ: Ճիշտ էր կռահում Հայաստանում խորհրդային Ռուսաստանի դիվ. ներկայացուցիչ Բորիս Լեգրանը, երբ արտգործօղով Գեորգի Հիչերինին ուղղված հոկտեմբերի 3-ի հեռագրում զգուշացնում էր, որ թուրքերը կանգ չեն առնի Սարիղամիշ-Շահթախթի գծի վրա¹¹: Հետագա դեպքերը հաստատեցին Բ. Լեգրանի կռահումը:

Գործնական որևէ արդյունք չտվեցին այդ նույն՝ 1920 թ. ամռանը Մոսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցությունները: Ռուսաստանի պահանջով դրանք ընդհատվեցին աշնանը Երևանում շարունակելու նպատակով:

Մյուս կողմից, թեև 1920 թ. օգոստոսին ստորագրվեց խոստումնաշատ Սևրի պայմանագիրը, սակայն դա գործնական ոչինչ չտվեց: Բանն այն է, որ Սևրի պայմանագիրը ստորագրած Արևմուտքի տերությունները իրենց շահերի թելադրանքով գնալով մեղմում են իրենց վերաբերմունքը զորեղացող քեմալականների նկատ-

⁹ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, М., 2003, с. 135.

¹⁰ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 11, ք. 68, 75, 86, Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 141, Ջոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 138-140, 145, 148, Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, էջ 27:

¹¹ Ջոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 220:

մամբ՝ փորձելով դրանց ուղղել Խորհրդային Ռուսաստանի դեմ:

Հայաստանի Հանրապետության քաղաքական ղեկավարությունը ստեղծված՝ աշխարհաքաղաքական նման բարդ իրավիճակում չկարողացավ ճիշտ կողմնորոշվել: Հավանաբար չէր էլ կարող, որովհետև ՀՀ-ն արդեն դատապարտված էր կործանման:

Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ ու լուռ համաձայնությամբ, հարևան Կրաստանի չեզոքության և Հայաստանի արևմուտյան «դաշնակիցների» քար անտարբերության պայմաններում 1920 թ. սեպտեմբերի վերջերին քեմալական շուրջ 50-հազարանոց զինուժը հարձակվեց Հայաստանի վրա: ՀՀ դեմ պատերազմ սկսելու համար հիմք հանդիսացավ Մ. Քեմալի սեպտեմբերի 20-ին արձակած հրամանը: Հայաստանը ընդամենը երկու ամիս կարողացավ դիմադրել: Հոկտեմբերի 30-ին առանց լուրջ մարտերի ընկավ լավ ամրացված Կարս քաղաք-ամրոցը, սրի քաշվեցին մոտ 6000 հայ և գերի ընկան մոտ 3000 զինվոր: Կարսի անկումը գործնականում կանխորոշեց պատերազմի ելքը: Նոյեմբերի 7-ին հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Արդյունքում Հայաստանը ծանր պարտություն կրեց իր դարավոր ախոյանից, կորցրեց իր տարածքների մի զգալի մասը և կանգնեց ռազմաքաղաքական խորը ճգնաժամի արջև:

Թուրք-հայկական պատերազմի ողջ ընթացքում Հայաստանի բյուրո-կառավարությունը հայտարարություններով, կոչերով ու բողոք-նոտաներով դիմեց աշխարհի պետություններին, Ազգերի լիգային, Անտանտի երկրներին, Ռուսաստանին, բայց մնաց անպատասխան: Դեռևս պատերազմի սկզբնափուլում՝ հոկտեմբերի 8-ին, Հայաստանի կառավարությունը դիմել էր աշխարհի պետություններին՝ «վճռական բողոք հայտնելով թուրք ազգայնականներու սև մտադրության դեմ և ջերմ կոչ ուղղելով օգնել Հայաստանին իր հայրենիքի պատվի, ազատության և անկախության համար»¹²: Սակայն աշխարհի երկրները անտարբեր գտնվեցին Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ: Հայաստանի ճակատագիրը տնօրինում էին Թուրքիան և Ռուսաստանը: Բնականաբար հաղթանակած Թուրքիան պետք է թելադրեր իր պայմանները, իսկ Ռուսաստանն էլ փորձում էր օգտվել այդ հաղթանակի

¹² Տեր-Հակոբյան Հ. (Իրազեկ), Սոսիկ անցյալից, Պեյրութ, 1956, էջ 80:

պտուղներից և խաղաղ խորհրդայնացնել Հայաստանը:

Ինչ վերաբերում է Արևմուտքի տերություններին ու մասնավորապես Մեծ Բրիտանիային, ապա նրանք Հայաստանի կառավարության բազմիցս արված ռազմական օգնության խնդրանքները թողեցին անպատասխան: Տվյալներ կան, որ թուրք-հայկական պատերազմի փուլում անգլիացիները (Ջ. Քերզոնը, Կ. Ստոքսը) ընդամենը առաջարկել էին հայկական և վրացական կողմերին ստեղծել հայ-վրացական ռազմական դաշինք¹³: Սակայն վրաց ղեկավարությունը ականջալուր չեղավ բրիտանացիների կոչին, որովհետև վրացական կողմը իր շահերի տեսակետից նախընտրեց պահպանել չեզոքություն՝ հույս ունենալով, որ թուրքերը չեն հարձակվի Վրաստանի վրա: Անգլիացիների հաշվարկներով հայ-վրացական ռազմական դաշինքը պետք է ծառայեր նաև բուլշևիկյան ներխուժմանը համատեղ դիմակայելու նպատակին:

Հոկտեմբերի կեսերին Երևանում վերսկսվեցին Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները: Բ. Լեգրանին հրահանգ էր տրված Երևանի բանակցություններում հանդես գալ (հայ-թուրքական հակամարտության մեջ) միջնորդի դերով, որի գիմը լինելու էր Հայաստանի խորհրդայնացումը: Խորհրդային կառավարության երկդիմությունը Հայաստանի խնդրում երևում է նրանում, որ մի կողմից իր ներկայացուցիչը բանակցում էր Հայաստանի հետ «բարեկամական» դաշնագիր կնքելու համար, իսկ մյուս կողմից՝ նա համակողմանի ռազմական ու ֆինանսական օգնություն էր ցույց տալիս Հայաստանի դեմ պատերազմող Թուրքիային¹⁴:

Միջանկյալ ձևով փաստենք, որ հոկտեմբերին Երևանում ընթացող բանակցությունների ժամանակ Հայաստանի պատվիրակության նախագահ Լ. Շանթը ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին մի առանձին գրությամբ տվել է հետևյալ պարզաբանումները Մոսկվայի բանակցությունների վերաբերյալ:

Հայաստանի կառավարության և պատվիրակության հասցեին ուղղված այն կշտամբանքը, թե նրանք հրաժարվել են անմիջական կապիտուլյացիայի և Քեմալ փաշայի կառավարության հետ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար, Լ. Շանթը պա-

¹³ Махмурия Г., Политика в Армении и Закавказье в 1919-1920 гг., Е., 2002, с. 235.

¹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, ք. 333:

տասխանել է, որ. «ՀՀ պատվիրակությունը, ընդառաջ գնալով ա. գ. ն. տեղակալ Լ. Մ. Կարախանի առաջարկին՝ բանակցություններ սկսելու Քեմալ փաշայի պատվիրակությունների հետ, որոնք այն ժամանակ գտնվում էին Մոսկվայում, ցանկություն ունենալով ճշտորեն պարզել թուրքերի վերաբերմունքը կոնկրետ վիճելի տարածքների շուրջ», սակայն թուրք պատվիրակները խուսափեցին ուղղակի պատասխանից՝ հայտարարելով, որ «իրենք լիազորություն չունեն» հայերի հետ բանակցելու¹⁵:

Ինչ վերաբերում է Անգորայի կառավարության կողմից հունիս ամսին Հայաստանի կառավարությանը ուղղված դիմումին, ապա հայկական կողմը պատրաստակամություն էր հայտնել սկսելու բանակցություններ վիճելի հարցերը խաղաղությամբ լուծելու համար: Սակայն հայտնի է, որ Հայաստանի այդ առաջարկին քեմալական կառավարությունը առաջադրել էր նախապայման՝ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի անվերապահ ճանաչումը¹⁶:

Բանակցությունների արդյունքում հոկտեմբերի 28-ին նախաստորագրվեց հայ-ռուսական հաշտության պայմանագիրը: Լեգրան-Շանթի ստորագրած եզրափակիչ արձանագրության համաձայն՝ մասնավորապես ճանաչվելու էր Հայաստանի անքակտելի իրավունքը Նախիջևանի և Ջանգեզուրի գավառների վրա, իսկ Թուրքիան Ռուսաստանի պահանջով իր զորքերը պետք է հետ քաշեր 1914 թ. նախկին ռուս-թուրքական պետական սահմանը¹⁷: Սակայն նախագծի պայմանները չարժանացան ՌԿ(Բ)Կ ԿԿ Կավբյուրոյի հավանությանը, և այն չունեցավ իրավական որևէ հետևանք:

Կարսի անկման հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, Հայաստանի կառավարությունը պաշտոնապես դիմեց Ռուսաստանին միջնորդության խնդրանքով՝ թուրքերի հարձակումը կանգնեցնելու և հաշտության պայմանագիր կնքելու համար¹⁸: Սակայն միջնորդության համար ՌՄՖԽՀ կառավարությունը պայմաններ դրեց և դրան պատասխանեց միայն նոյեմբերի 11-ին:

Կարսը գրավելով և Ախուրյան (Արփաչայ) գետին մոտենա-

¹⁵ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1136, թ. 1:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 2, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 314–315, Нагорный Карабах, т. I, М., 2008, с. 526.

¹⁸ Խուրշուդյան Լ.Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 230:

լով՝ քեմալականները գործնականում իրականացրին «Ազգային ուխտի» իրենց ծրագիրը: Դրանից հետո՝ նոյեմբերի 2-ին, Անգորան առաջինը առաջարկ ներկայացրեց՝ հաշտության նպատակով զինադադար կնքելու¹⁹: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 3-ին, թուրքերից անտեղյակ զինադադարի առաջարկ արեց նաև հայկական կողմը: Առաջարկը թուրքական հրամանատարությանը հանձնվեց նոյեմբերի 5-ին: Սովորաբար հակառակն է լինում. պարտվող կողմն է առաջինը զինադադար ու հաշտություն խնդրում:

Հարց է ծագում. ինչու՞ թուրքիան առաջինը զինադադարի առաջարկ արեց: Մեր կարծիքով՝ դրա պատճառն այն էր, որ, ինչպես ասվեց, Կարսի մարզի գրավումով թուրքիան գործնականում իրագործեց «Ազգային ուխտով» Հայաստանից խլվելիք իր տարածքային պահանջը: Արևելահայ մնացյալ գավառները պիտի բաժին հասնեին խորհրդային Ռուսաստանին: Դրա համար էլ ռազմական գործողությունների հետագա շարունակումը և նոր գավթունները կարող էին առաջ բերել խորհրդային կողմի դժգոհությունը, չնայած ապահովության համար թուրքերը ժամանակավորապես գրավեցին նաև Ալեքսանդրապոլի գավառը: Վերջինիս գրավումը պարզապես լծակ էր Հայաստանին ստիպելու լիակատար զինաթափ լինելու, ինչպես նաև դա միջոց էր գավառը լիակատար թալանելու և տեղի հայությանը կոտորելու համար²⁰:

Ինչևէ, նոյեմբերի 6-ին Հայաստանը ընդունեց Արևելյան ճակատում թուրքական զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի ներկայացրած զինադադարի պայմանները, և հայկական զորքի նահանջի ու ազգաբնակչության խուճապի պայմաններում նոյեմբերի 7-ին Ալեքսանդրապոլը հանձնվեց թուրքերին: Նույն օրը կողմերի միջև կայացվեց զինադադար հետևյալ պայմաններով. հայկական զորքը պետք է հետ քաշվեր Ախուրյան գետից 15 կմ դեպի արևելք, Ալեքսանդրապոլի կայարանը և բերդը դրվելու էին թուրքերի տրամադրության տակ և այլն:

Այս պայմանները իսկույն կատարվեցին, և ակնկալվում էր քիչ թե շատ տարեկի (պաստվավոր) հաշտություն կնքելու հնարավորություն: Սակայն մեկ օր անց՝ նոյեմբերի 8-ին, Անգորայի կառավարությունը, չբավարարվելով Ք. Կարաբեքիրի ներկայացրած

¹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 67:

²⁰ Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ (1920 թ.), «Դրոշակ», 2001, թիվ 2 (մարտ), էջ 153:

պայմաններով, պահանջեց նոր, ավելի մեծ զիջումներ, որով ՀՀ տարածքի կեսից ավելին անցնում էր թուրքերին: Բացի այդ, Հայաստանը պետք է թուրքերին հանձներ մեծ խմբաքանակով զենք, զինամթերք, փոխադրամիջոց (2000 հրացան, 60 զնդացիր, 12 հրանոթ, 4000 արկղ հրացանի փամփուշտ, 6000 հրանոթի ռումբ, 4000 ջորի, 2 շոգեքարշ, 50 վագոն և այլն)²¹: Սա նշանակում էր ոչ միայն տարածքային նոր կորուստ, այլև, ըստ էության, Հայաստանի զինաթափում ու անձնատվություն (կապիտուլյացիա): Բացի այդ, չէր բացառվում, որ քեմալականները, ստանալով Հայաստանի հանձնած զենքը, կարող էին այն կրկին օգտագործել հայության դեմ՝ նրան իսպառ բնաջնջելու նպատակով: Հասկանալի է, որ նման մտավախության պայմաններում նոյեմբերի 10-ին Հայաստանի կառավարությունը մերժեց նոյեմբերի 8-ի պայմանները և պնդեց նոյեմբերի 7-ի պայմանների վրա:

Նոյեմբերի 11-ին վերսկսվեցին ռազմական գործողությունները: Հայկական բանակը նոր անհաջողության մատնվեց: Թշնամին հասավ մինչև Արագածի փեշերը: Ստեղծված վիճակում Հայաստանի համար շատ հրատապ դարձավ միջնորդական դերակատարությունը: Սկզբում Ռուսաստանը լռություն էր պահպանում, անգամ նոյեմբերի 7-ի զինադադարից հետո՝ սպասելով Հայաստանի լիակատար պարտությանը: Խորհրդային ղեկավարությունը քաջ գիտակցում էր, որ Հայաստանի խորհրդայնացման ամենահեշտ ուղին թուրքական հարձակման միջոցով իրագործումն է: Թուրքիան հարձակվի, փույթ չէ, թե հայերի նոր կոտորածներ կլինեն, Ռուսաստանը հանդես կգա միջնորդի դերով և «կփրկի» հայերին ու Հայաստանը կործանումից՝ միջազգային հանրության շրջանում ստեղծելով դրական կարծիք (իմիջ)²²:

Սակայն Ռուսաստանի միջնորդ լինելու պատասխանը ուշանում էր: Հարկ է նշել, որ մինչև նոյեմբերի սկիզբը, այսինքն՝ թուրքական զորքի՝ մինչև Ախուրյան գետը հասնելը, ՌՍՖՍՀ կառավարությունը զործնականում ոչ մի անգամ քեմալականներից չպահանջեց Հայաստանի վրա հետագա հարձակման դադարեցում: Միակ հակազդեցությունը տեղի ունեցավ նոյեմբերի սկզբներին,

²¹ Տեր-Հակոբյան Հ., Հայաստանի վերջին աղետը, էջ 78, «Ժողովուրդ», 10 նոյեմբերի 1920 թ.:

²² Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 2, М., 2005, с 380.

երբ թուրքերն արդեն գրավել էին Ալեքսանդրապոլը: Խորհրդային կառավարությունը՝ հանձին Գ. Չիչերինի, նպատակահարմար գտավ ժամանակավորապես դադարեցնել զենքի առաքումը Թուրքիա²³: ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի, Վ. Լենինի, Ի. Ստալինի գաղտնագերծված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խորհրդային ղեկավարությունը զենքի մատակարարման ժամանակավոր (նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին) ընդհատումը քեմալականներին պայմանավորում էր ոչ միայն այն բանով, որ թուրքական զորքը խախտել էր կողմերի միջև պայմանավորված Սարի-ղամիշ-Շահթախթի գիծը, այլև ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն առավել մեծ կարևորություն էր տալիս «Քեմալի բանակում Խորհրդային ազիտացիայի և շարժման ուժեղացման հանգամանքին»²⁴: Այդ մասին նշվում էր նաև ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի 1920 թ. դեկտեմբերի 4-ի նախագծի լրացուցիչ հրահանգում (դիրեկտիվում):

Վերջապես նոյեմբերի 11-ին՝ թուրքերի հարձակումը վերսկսելու օրը, ստացվեց ՌՍՖՍՀ կառավարության համաձայնությունը՝ Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդ լինելու մասին: Այդ օրը Ռուսաստանի արտգործոժողկոմ Գ. Չիչերինը ռադիոգիր հղեց մի քանի ուղղություններով՝ ԹԱՍԺ կառավարության նախագահ Մ. Քեմալին, Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրին, Հայաստանի վարչապետ Հ. Օհանջանյանին (փաստաթղթում վարչապետի անունը սխալմամբ նշված է Ս. Վրացյան) և Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին: Ռադիոգրում մասնավորապես ասվում էր, որ «Նկատի առնելով Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդության մասին Հայաստանի կառավարության դիմումը և այդ հարցում Թուրքիայի ազգային կառավարության համաձայնությունը, Խորհրդային կառավարությունը տեղեկացնում է Ձեզ, որ իր վրա է վերցնում միջնորդությունը և այդ նպատակով ռազմական գործողությունների վայր է գործուղում իր լիազոր ներկայացուցիչ Բ. Մդիվանուն»²⁵: Այնուհետև հույս էր հայտնվում, որ թուրքերի վերսկսած ռազմական գործողությունները կդադարեցվեն:

Միջնորդ լինելու համար ռուսները առաջ քաշեցին հետևյալ երեք նախապայմանները՝ ա/ Հայաստանի տարածքով ապրանք-

²³ ՍԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց 2, գ. 11:

²⁴ Ленин В. И., Неизвестные документы 1891-1922, М., 1999, с. 404.

²⁵ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 325.

ների, զենքի ու զորքի, ազատ տարանցում (տրանզիտ), բ/ Անտանտից կապերի խզում և գ/ հրաժարում Սևրի պայմանագրից²⁶:

Նոյեմբերի 13-ին Ռուսաստանի միջնորդության մասին առաջարկը ստանալուց հետո՝ մի քանի օր անց թուրքերը կանգնեցրին ռազմական գործողությունները²⁷: Նոյեմբերի 15-ին Բաքվից դեպի Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին ուղղված հեռագրում (պատճեն՝ Գ. Չիչերինին) Ի. Ստալինը իրազեկում էր առաջնորդին, որ ինքը խորհուրդ է տվել Մոփվանուն՝ «դաշնակների պատճառով չգժտվել թուրքերի հետ»²⁸: Այնուհետև Ստալինը ավելացնում է. «Ես Մոփվանուն նաև խորհուրդ տվեցի ուղղակի հարց չդնել թուրքական զորամասերը հին (1914 թ.) սահմանին վերադարձնելու վերաբերյալ»²⁹:

Այն բանից հետո, երբ ռազմական գործողությունների արդյունքում հայկական բանակի պարտությունը դարձավ լիակատար, նոյեմբերի 16-ին Հայաստանի կառավարությունը զինադադար խնդրեց՝ ընդունելով թուրքերի առաջարկած նոյեմբերի 8-ի առավել ծանր պայմանները:

Հ. Օհանջանյանի կառավարությունը, տեսնելով, որ Մոսկվան օրավուր ձգձգում է Մոփվանու ժամանումը ռազմաճակատ և միջնորդական առաքելության իրագործումը, նոյեմբերի 16-ին որոշեց ընդունել թուրքերի՝ նոյեմբերի 8-ի զինադադարի պայմանները: Նոյեմբերի 18-ին Ալեքսանդրապոլում ստորագրվեց հայ-թուրքական երկրորդ զինադադարը: Այն ստորագրեցին Հայաստանի ներքգործնախարար Ս. Արարատյանը և թուրքական զորքերի հրամանատար Բ. Կարաբեքիրը:

Ձինադադարի ստորագրումով դադարեցվեցին ռազմական գործողությունները:

Թուրքերին թույլատրվեց գրավել Արագած-Ղրմզլու-Նալբանդ-Վորոնցովկա գիծը, իսկ հայկական կողմը զբաղեցնելու էր Սուրմալու-Արաքս կայարանը, Ջիարեթ-Արագած-Բոզիքենդ-Ռերմազ-Յալվանդուզ գյուղերը: Երկու գծերի միջակայքում ընկած

²⁶ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 223-224, 229-231.

²⁷ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 3, ց. 1, գ. 5211, թ. 1, միկրոժապավենների հավաքածու, թիվ 2, գ. 5, թ. 1:

²⁸ Միկրոժապավենների հավաքածու, թիվ 2, գ. 5, թ. 1:

²⁹ Նույն տեղում:

30 կմ լայնությամբ մի հողաշերտ դառնալու էր չեզոք գոտի: Ըստ զիննադադարի համաձայնագրի՝ 7 օր անց՝ նոյեմբերի 24-ի երեկոյան, Ալեքսանդրապոլում պիտի սկսվեին հաշտության բանակցությունները³⁰:

Երկրորդ զիննադադարի առնչությամբ Լ. Խուրշուդյանը գրում է. «Հայաստանի կառավարությունը երկրին սպառնացող աղետից խուսափելու համար չսպասելով Մոհիվանու Ալեքսանդրապոլ ժամանելուն, որոշեց թուրքերի հետ առանձին բանակցություններ սկսել³¹»: Նրա կարծիքով, եթե Հայաստանի կառավարությունը այդ քայլին չդիմեր, ապա մինչև Մոհիվանու Ալեքսանդրապոլ ժամանելը երկիրը կռազմակալվեր թուրքերի կողմից³²:

Նոյեմբերի 19-ին Բ. Լեգրանը և Բ. (Պ.) Մոհիվանին ժամանեցին Երևան: Լեգրանը մնաց տեղում՝ Հայաստանի կառավարության հետ բանակցելու խաղաղ խորհրդայնացման խնդրի շուրջ, իսկ Մոհիվանին պետք է մեկներ Արևելյան ռազմաճակատ՝ իբրև Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը թուրքերի մոտ: Նույն օրը տեղի ունեցան հայ-ռուսական բանակցություններ մի կողմից վարչապետ Հ. Օհանջանյանի և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի, իսկ մյուս կողմից՝ Բ. Լեգրանի և Բ. Մոհիվանիի միջև: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր ճշտել միմյանց դիրքորոշումները:

Ռուսական պատվիրակությունը իր երկրի միջնորդ լինելը և թուրքերի՝ մինչև 1914 թ. նախապատերազմյան սահմանները հետքաշելը պայմանավորում էր խորհրդային զորքերի Հայաստան մտցնելով և փաստորեն այն խորհրդայնացնելով³³: Իրականում Լեգրանը և Մոհիվանին Մոսկվայի և Բաքվի կողմից պաշտոնական հանձնարարություն չէին ստացել թուրքերի՝ մինչև 1914 թ. սահ-

³⁰ ՉԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 247, թ. 1, Ջոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 326:

³¹ Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 255:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 263-264: Որ խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը ուղղակի կապված էր Հայաստանի խորհրդայնացման հետ, երևում է նրանից, որ միջնորդ լինելու՝ Գ. Չիչերինի հայտարարության օրը՝ նոյեմբերի 11-ին, Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը հրահանգում է 11-րդ կարմիր բանակի հրամանատարին հարվածային ուժեր կենտրոնացնելու Ղազախում՝ Երևանի հնարավոր գրավման գործողություն իրականացնելու նպատակով (Տես Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1978, թիվ 1(50), էջ 61):

մանները հետ քաշելու խոստում տալու մասին, այլ դա պարզապես Լեգրանի անձնական նախաձեռնությունն էր՝ տնտղելու Հայաստանի ղեկավարության տրամադրությունները՝ հնարավորինս արագ Հայաստանը խորհրդայնացնելու ուղղությամբ: Լեգրանի և Մդիվանու հետ անհույս հանդիպումներից հետո Հ. Օհանջանյանի գլխավորած բյուրո-կառավարությունը հրաժարական տվեց:

Հիրավի, ՀՀ ռազմական պարտությունը թուրքիայից առաջ բերեց քաղաքական ճգնաժամ: Օհանջանյանի գլխավորած բյուրո-կառավարությունը շտապեց հեռանալ իշխանությունից: Թուրքերի հետ քիչ թե շատ տանելի հաշտություն կնքելու նպատակով կազմվեց նոր կառավարություն՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ: Հայկական կողմը պատրանք ուներ, թե Սևրի պայմանագրից հրաժարվելու դիմաց թուրքիան Հայաստանին որոշ զիջումներ կանի, և դրա արդյունքում կկարողանան կնքել քիչ թե շատ պատվավոր հաշտության պայմանագիր: Հայաստանի կառավարության քաղաքական դիրքորոշման վրա, ինչ խոսք, որոշ ազդեցություն էր գործում Անգլիայի կովկասյան լիազոր ներկայացուցիչ գնդ. Կ. Ստոքսը: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ընթացող հայ-ռուսական բանակցությունների վրա, անշուշտ, վերջինս բացասական դեր խաղաց:

Դեռևս զինադադարի փուլում, դաշնակից տերությունների (Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի) հնարավոր աջակցությունը ստանալու հույսով, նախկին վարչապետ Ալ. Խատիսյանը նոյեմբերի 19–21-ը եղավ Թիֆլիսում, դիմեց նրանց կառավարությունների ներկայացուցիչներին, սակայն գործնական որևէ աջակցություն չցուցաբերվեց³⁴: Անգլիայի ու Անտանտի քաղաքական շահերի տեսակետից նախընտրելի էր, որ Հայաստանը համաձայնության գար ու հաշտություն կնքեր թուրքիայի, քան խորհրդային Ռուսաստանի հետ³⁵: Սակայն հայության համակրանքը ռուսների կողմն էր: «Հայության մեծ մասը, - գրում էր Ս. Վրացյանը, - աչքերը հառած դեպի հյուսիս՝ փրկությունը Ռուսաստանից էր սպասում»³⁶: Այդ գի-

³⁴ Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, էջ 251-252:

³⁵ Ованнисян Р., Международные отношения Республики Армения 1918–1920 гг., Е., 2007, с. 790-791, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 2005, էջ 321:

³⁶ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 490:

տակցությունը արմատացել էր նրա մեջ դարերի փորձով:

Մղիվանու առաքելության նպատակն էր հասնել այն բանին, որ հայ-թուրքական բանակցությունները ընթանան Ռուսաստանի միջնորդությամբ և ավարտվեն իր համար ցանկալի արդյունքով:

Մյուս կողմից թուրքիան ջանում էր պատերազմում պարտված Հայաստանի հին կառավարության հետ շուտափույթ հաշտություն կնքել, որպեսզի խորհրդայնացող Հայաստանի նոր՝ խորհրդային իշխանություններին կանգնեցնեք արդեն կատարված փաստի առաջ:

Իր հեղթին Մոսկվան չէր ցանկանում դեպքերից առաջ ընկնել: Նա ուզում էր թուրքերի ահագնացող սպառնալիքով ստիպել Հայաստանի դաշնակցական կառավարությանը համաձայնություն տալ երկրի խաղաղ խորհրդայնացմանը:

Թուրքերի հետ հաշտության բանակցություններ վարելու և շուտափույթ հաշտություն կնքելու համար Օհանջանյանի կառավարությունն իր հրաժարականից առաջ ստեղծել էր պատվիրակություն հետևյալ կազմով. նախագահ՝ նախկին վարչապետ Ալ. Խատիսյան, անոամներ՝ ֆինանսների նախարար Ա. Գյուլխանդանյան, Կարսի նախկին նահանգապետ Ստ. Ղորղանյան, խորհրդականներ-պատգամավորներ՝ Վ. Մինախորյան և Լ. Ջառաֆյան, ինչպես նաև փորձագետներ, քարտուղարներ, թարգմանիչներ, ընդհանուր թվով 16 հոգի: Հայաստանի պատվիրակության Ալեքսանդրապոլ մեկնելու օրը՝ նոյեմբերի 24-ին, Երևանում ձևավորվեց նոր կառավարություն՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ:

Նոյեմբերի 24-ին տարբեր գնացքներով՝ սկզբում Բ. Մղիվանի, իսկ հետո Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությունները ժամանում են Ալեքսանդրապոլ: Առաջինը ժամը 11-ին Բ. Մղիվանին հանդիպում (զրույց) ունեցավ թուրքական պատվիրակության նախագահ Զ. Կարաբեքիրի հետ՝ իր միջնորդական ծառայությունը առաջարկելով: Սակայն վերջինս հայտնեց, որ Անգորայի կառավարությունը Ռուսաստանի միջնորդությունը համարում է ավելորդ՝ պատճառաբանելով, որ հայերը ընդունել են իրենց բոլոր պայմանները: Կարաբեքիրը միաժամանակ հայտարարեց, որ ինքը Անգորայից հրահանգ է ստացել բանակցություններ վարել ուղղակի հայերի հետ³⁷: Այդ նույն միտքն է հաստատում Ստ. Ղորղան-

³⁷ Խորշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 278, Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 255–256, ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 58, ց. 14, գ. 17, ք. 21:

յանը «Մշակ» թերթին հաղորդած տեղեկություններում³⁸:

Այստեղ հարկ կա պարզելու հայկական կողմի դիրքորոշումը Ռուսաստանի միջնորդության հարցում: Այդ դիրքորոշումը փոփոխություն է կրել: Հայաստանի կառավարությունը հայ-թուրքական զինադադարի առաջին շրջանում (նոյեմբերի 16–21-ը), հետևելով Անտանտի (Ստոքսի) ցուցումներին, հրաժարվեց Ռուսաստանի կողմից առաջարկված միջնորդությունը ընդունելուց և նախընտրեց թուրքերի հետ երկկողմ բանակցությունները: Բյուրո-կառավարության ընկալմամբ ընդունել Ռուսաստանի միջնորդությունը կնշանակեր Հայաստանի խորհրդայնացում և անկախության կորուստ: Դա երևում է զինադադարը ստորագրած Ս. Արարատյանի հայտարարությունից³⁹: Սակայն երբ նոյեմբերի 25-ին սկսվեցին հայ-թուրքական հաշտության բանակցությունները, հայկական կողմը դեմ չէր, որ Ռուսաստանի ներկայացուցիչը՝ իբրև միջնորդ, մասնակցեր հայ-թուրքական բանակցություններին: Բայց այս անգամ էլ, ինչպես արդեն ասվեց, թուրք պատվիրակության ղեկավարը մերժեց ռուսական կողմի միջնորդությունը բանակցություններում՝ պատճառաբանելով, որ հայերն ընդունել են իրենց բոլոր նախապայմանները: Ավելին, Խատիսյանը պնդում է Մոլիվանու մասնակցության վրա, սակայն ստանում է Կարաբեքիրի մերժումը: Այլ. Խատիսյանն իր հուշերում փաստում է, որ ինքը շատ ճիգեր թափեց, որ Ռուսաստանի ներկայացուցիչը մասնակցի բանակցություններին, բայց ապարդյուն, չի կարողացել փոխել թուրքերի վճռական դիրքը⁴⁰: Հայաստանի պատվիրակության ղեկավարը մտավախություն է հայտնում, որ բոլշևիկները իրեն չեն ների այս բանում: Դրանից հետո Կարաբեքիրը՝ իբրև գաղտնիք, պատասխանում է. «Դուք պետք է գիտնաք, պ. Խատիսյան, որ մենք նախապես համաձայնած ենք Մոսկվայի հետ՝ ստանալու Կարսի նահանգը, ավելին մեզ չեն տար, բայց եթե այժմ դուք չընդունեք մեր պայմանները՝ ես կը քալեմ ավելի առաջ, փույթ չէ, թե վաղը ստիպված ետ դառնամ»⁴¹: Այնուամենայնիվ դժվար է հավատալ Ք. Կարաբեքիրի այդ խոսքերի անկեղծությանն ու համոզվածությանը, որովհետև թուր-

³⁸ «Մշակ», 16 դեկտեմբերի 1920 թ. (թիվ 158):

³⁹ Ջոհրաբյան է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 326:

⁴⁰ Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, էջ 301:

⁴¹ «Ժողովրդի ծայն», Կ. Պոլիս, 24 փետրվարի 1921 թ.:

քերը մտավախություն ունեին, որ Ռուսաստանի միջնորդության պարագայում հնարավոր էր՝ դրվեր 1914 թ. նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանի պահանջը: Դրա համար էլ Թուրքիան դեմ էր Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությանը: Այս առնչությամբ ճիշտ է նկատում Ջ. Մսրրյանը, որ «Քեմալականները կը վախճային, որ ռուսները 1914-ի պետական սահմաններե մեկ-նեկով՝ հայոց նպաստավոր դիրք բռնեին»⁴²:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի հայ-թուրքական կոնֆերանսի նախօրյակին ստեղծվել էր ներքին և արտաքին հետևյալ քաղաքական կացութունը: Հայաստանը լիակատար պարտություն էր կրել: Կառավարությունը քաղաքական ճգնաժամի մեջ էր: Վիճակը չփրկեց բյուրո-կառավարության փոփոխությունը: Հասարակության մեջ և քաղաքական կուսակցություններում առաջացել էին քաղաքական խմորումներ, ուժեղացել էր խորհրդամետ կողմնորոշումը:

Անտանտի տերությունները, ըստ էության, լքել էին Հայաստանը և հայերին: Նոյեմբերի վերջերին Հայաստանում տիրող վիճակի մասին Կ. Պոլսում ԱՄՆ-ի Գերագույն կոմիսար Բրիստոլը նոյեմբերի 30-ին հեռագրով հետևյալն էր հաղորդում պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին. «Երևանից հենց նոր վերադարձած վստահելի աղբյուրից ստացա հետևյալ տեղեկությունը: Հայաստանի հետ ամեն ինչ վերջացած է: Հայկական զորքը Կարսում և Ալեքսանդրապոլում պարտություն կրեց, թեև թվով գերազանցում էր թուրքերին: Բոլշևիկներն էլ և թուրք ազգայնականների միջև գոյություն ունի համաձայնություն»⁴³: Հայաստանից հեռացան Անտանտի տերությունների լիազոր ներկայացուցիչները:

Հայաստանի քաղաքական շահերի համար ամենևին նպաստավոր չէին նաև 1920 թ. աշնանը Հայաստանի բնական դաշնակից համարվող Հունաստանում տիրող վիճակը: Նոյեմբերի կեսերին Հունաստանի խորհրդարանական ընտրությունների արդյունքով վարչապետ, հայ ժողովրդի բարեկամ է. Վենիզելոսը պարտվեց ընդդիմությանը, ինչը ձեռնտու էր Թուրքիային: Վարչապետի պաշտոնում Վենիզելոսին փոխարինեց Հունարիսը: Բացի այդ, հենց այդ օրերին ռազմապես ջախջախվեց ու ասպարեզից հեռացավ

⁴² Մսրրյան Ջ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Սոսկվայի և Կարսի դաշնագրերը 1920–1921 թթ), էջ 75:

⁴³ Геноцид армян (документы и комментарий), т. 1, М., 2002, с. 591.

նաև Հայաստանի դաշնակից Վրանգելը: Արտաքին այդ գործընթացները, ինչ խոսք, նպաստավոր քաղաքական ֆոն էին ստեղծում քեմալականների համար:

Իբրև սուբյեկտիվ գործոն՝ Ալեքսանդրապոլի բանակցություններում թուրքական պատվիրակությունը գլխավորում էր հայ ժողովրդի ռիսերիմ թշնամի Ք. Կարաբեքիրը, որն արդեն մեկ անգամ՝ 1918 թ. ամռանը, Մ. Վեհիբ փաշայի զորքերի կազմում մուտք էր գործել Հայաստան: Նա երկրորդ անգամ գլխավորեց թուրքական զորքերի Արևելյան ճակատի հրամանատարությունը և երկու ամսվա ընթացքում, իր իսկ խոսքերով ասած, ոչնչացրեց Հայաստանը⁴⁴: Ք. Կարաբեքիրը կատարում էր Մ. Քեմալի հանձնարարականը: Քեմալականների՝ Հայաստանի դեմ պատերազմ սանձազերծելու նպատակը ոչ թե երկիրը դաշնակցականների տիրապետությունից ազատագրելն էր, այլ «հայկական բանակի և հայկական պետության ոչնչացումը»⁴⁵:

Դեռ մինչ պատերազմի ավարտը (1-ի զինադադարի օրերին) Ք. Կարաբեքիրը Անգորայից հրահանգ էր ստացել, թե Հայաստանի հետ ինչպիսի պայմանագիր պետք է կնքել: ԹԱՄԺ կառավարության արտգործկոմիսարի պաշտոնակատար Ահմեդ Սուլիթարի փաշան նոյեմբերի 8-ին Ք. Կարաբեքիրին ուղղված գաղտնի գրությունում հրահանգում էր Հայաստանի հետ կնքվելիք առաջիկա հաշտության հետևյալ պայմանները. «...Մենք հաշտության սովորական պայմանագիր չպետք է կնքենք ու մեր զորքերը դուրս բերենք Հայաստանից: Հայերին խեղդամահ անելով՝ միաժամանակ մենք պետք է ջանանք չսրել հարաբերությունները Եվրոպայի հետ, որի դաշնակիցն է Հայաստանը, և այդպիսով պետք է հասնենք մեր նպատակներին: Այժմ մեզ պետք է նկրտենք վերջնականապես ոչնչացնել հայկական բանակը, բռնախլել հայերի զենքերը ու բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջական կապ հաստատել ադրբեջանական թուրքերի ու նրանց կառավարությունների հետ: Ահա այն հիմնական կետերը, որոնք պետք է դրվեին հաշտության պայմանագրի հիմքում»⁴⁶: Ա. Սուլիթարի սույն հրահանգը ոչ այլ

⁴⁴ Дадрян В., История армянского геноцида, Е., 2007, с. 468–469.

⁴⁵ Кемаль М., Путь новой Турции, т. 3, М., 1943, с. 314.

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 2, գ. 31, թ. 6, «Հայաստանի Հանրապետություն», 16 մարտի 1991 թ.:

ինչ էր, եթե ոչ Հայաստանի Հանրապետության խորտակում և հայության ոչնչացում:

Թուրքական դիվանագիտությանը բնորոշ էր մի կողմից աղաղակող երեսպաշտությունը, արտաքուստ կեղծ քաղաքավարությունը, իսկ մյուս կողմից՝ ներքուստ նենգությունն ու դաժանությունը: Այդ տեսակետից հատկանշական են Անգորայից ուղարկված նոյեմբերի 8-ի երկու ծածկագիր հեռագրերը: Դրանցից մեկում, ինչպես վերը նշվեց, հրահանգվում էր Կարաբեքիր փաշային լիովին ոչնչացնել Հայաստանը, իսկ մյուս՝ Հայաստանի կառավարությանը հասցեագրված հեռագրում խոսվում էր «անկեղծ բարեկանության», «հունանիզմի», Հայաստանին տնտեսական օգնություն ցույց տալու վերաբերյալ⁴⁷:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի խորհրդաժողովի նախօրյակին քննալականների համար ստեղծվել էր միջազգային նպաստավոր ռազմաքաղաքական ու դիվանագիտական միջավայր: Կասկած չէր հարուցում ռուս-թուրքական գործակցությունը: Անտանտի համար մեծ հարված էր Վրանգելի պարտությունը Ռուսաստանում: Նոյեմբեր ամսին Հունաստանի պառլամենտի ընտրություններում պարտություն կրեց ազգային թևը՝ վարչապետ Է. Վենիզելոսի գլխավորությամբ: Եվ վերջապես, ի հեճուկս Լորդ Քերզոնի և ՌԻ. Չերչիլի, Անգլիայի կառավարող շրջաններում ուժեղանում էր Ռուսաստանի հետ առևտրական կապերի հաստատման միտումը և այլն:

Ինչ վերաբերում է Հայաստանի ներքին և միջազգային դրությանը, ապա պետք է ասել, որ այն հայտնվել էր ռազմաքաղաքական խորը ճգնաժամի մեջ, իսկ միջազգային տեսակետից գործնականում լքված էր բոլոր պետությունների կողմից: Արտաքին ուժերից միակ շահագրգիռ կողմը Ռուսաստանն էր, որը խնդիր ուներ իր գործակից Թուրքիայի սպառնալիքով անարյուն խորհրդայնացնել Հայաստանի իրեն հասանելիք մասը և վերջին հաշվով կցել իրեն:

Հայ-թուրքական բանակցությունների առաջին պաշտոնական նիստը գումարվեց նոյեմբերի 25-ին: Կա նիստի արձանագրությունը՝ քարտուղարությամբ Գ. Խոջամիրյանի և Վ. Սերբեյանի: Նիստը վարում էր թուրքական պատվիրակության ղեկավար Ք. Կարաբեքիր փաշան, թուրքական պատվիրակության անդամներն էին

⁴⁷ Дадрян В., История армянского геноцида, Е., 2007, с. 494.

երգրունի նահանգապետ Չամիդ բեյը և երգրունից ԱՄԺ պատգամավոր Սուլեյման Նեջադի բեյը: Կոնֆերանսը նախագահող Ք. Կարաբեքիրը՝ որպես բանակցություններ սկսելու նախապայման, Չայաստանից պահանջեց պաշտոնապես հրաժարվել Սևրի պայմանագրից, առանց որի «Թուրքիան ոչ մի բանակցություն սկսել չի կարող»⁴⁸:

Չայկական պատվիրակությունը փորձեց խուսափել նման թեմայի քննարկումից, մինչև որ կորոշվեն տարածքային խնդիրները: Սակայն թուրքերը ռազմական գործողությունները վերսկսելու սպառնալիքով պնդեցին իրենց պայմանը: Նոյեմբերի 26-ին Չայաստանի կառավարությունը հայտարարություն ընդունեց Սևրի պայմանագրից հրաժարվելու վերաբերյալ⁴⁹: Չաջորդ օրը՝ նոյեմբերի 27-ին, երկրորդ նիստում հայկական պատվիրակությունը գրավոր ձևով ներկայացրեց Սևրի պայմանագրից հրաժարվելու մասին Չայաստանի կառավարության հայտարարության տեքստը⁵⁰:

Իր հերթին Ալ. Խատիսյանը կոնֆերանսի քննարկմանը ներկայացրեց հետևյալ հարցերը. 1. Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ք. Մդիվանու մասնակցության, 2. Ալեքսանդրապոլերևան հեռագրական կապ հաստատելու մասին, 3. Ղարաքիլիսայից դեպի Երևան երկաթուղով ապրանքներ փոխադրելու մասին և այլն⁵¹: Առաջին հարցի կապակցությամբ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարության պատվիրակությունը մերժեց հայերի առաջարկը՝ ՌՍՖՍՀ ներկայացուցչի՝ իբրև միջնորդ մասնակցելու մասին⁵²: Ք. Մդիվանուն չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին: Ք. Կարաբեքիրը պատասխանեց, որ «Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը Տաճկաստանի կառավարությունը անհրաժեշտ չի գտնում»⁵³: Բայց Մդիվանին ձեռքերը ծալած նստած չէր Ալեքսանդրապոլում: Փաստերը ցույց են տալիս, որ նա գաղտնի թե բացահայտ գործնականում ծառայում էր թուրքերին, իսկ մյուս կողմից ջանում արագացնելու Չայաստանի խորհրդայնացումը: Եվ պատահական չէր, որ Չայաստանի պատվիրակու-

⁴⁸ ՉԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, մաս 1-ին, ք. 47–48:

⁴⁹ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 674.

⁵⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 385.

⁵¹ Ձոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 97:

⁵² Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 384–385.

⁵³ ՉԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, մաս 1-ին, ք. 48:

թյան ղեկավար Ալ. Խատիսյանը նույնքերի 29-ին Ալեքսանդրապոլից հաղորդում էր Հայաստանի կառավարությանը, որ «Մոփվանու դերը այստեղ վնասակար է մեր շահերի համար: Նա գործում է բացառապես իբրև կուսակցական Հայաստանը խորհրդայնացնելու նպատակով»⁵⁴:

Երկրորդ հարցի՝ Ալեքսանդրապոլի և Երևանի միջև հեռագրական կապի ապահովման տեսակետից, չնայած թուրքերի կողմից հարուցվող բոլոր դժվարություններին, հաղորդումների վերահսկողությանը, այսուհանդերձ այսպես թե այնպես իրականացվում էր կապը: Դա անհրաժեշտ էր բանակցային գործընթացը հնարավորինս շուտ ավարտելու համար, ինչու՞մ ամենից ավելի շահագրգռված էին թուրքերը:

Ինչ վերաբերում է Ղարաքիլիսայից դեպի Երևան երկաթուղով բեռներ փոխադրելուն, ապա Ալեքսանդրապոլի գավառը ռազմակալած թուրքերը, որպես կանոն, թույլ չէին տալիս դրանց փոխադրում կամ էլ ենթարկվում էին բռնագրավման:

Բանակցությունների առանցքային խնդիրը սահմանային հարցն էր: Հայաստանի կառավարությունը պատվիրակությանը տվել էր հետևյալ հրահանգները. «Առավելագույնը պաշտպանել մինչև 1914 թ. սահմանները, ինչպես նաև արևմտահայ նահանգներից Վանը, Մուշը և այդ գծով մինչև Ռիզե նավահանգիստը: Եթե թուրքիան ընդառաջ չգնար այդ առաջարկին, նվազագույնը՝ կանգ առնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա»⁵⁵: Վերջինս քննարկման նյութ կարող էր դառնալ այն իմաստով, որ առկախ էին մնում Սուրմալուի, Նախիջևանի, Ջանգեզուր-Ղարաբաղի և այլ տարածքային հիմնախնդիրները և հնարավոր էր համարվում ինչ-որ նվազագույն արդյունք ակնկալել: Հայաստանի կառավարության մշակած նախագծով հանրապետության ընդհանուր տարածքը կազմում էր 100 հազ. քառ. կմ: Նախագծին կից գծվել էր համապատասխան սահմաններով քարտեզ և դրան կից հավելված՝ պարզաբանիչ

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 104, թ. 1:

⁵⁵ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 4 փետրվարի 1921 թ.: Պատվիրակության անդամ Ստ. Ղորղանյանի՝ «Մշակի» թղթակցին հայտնած տեղեկությամբ՝ հայերը թուրքերին ներկայացված քարտեզով Հայաստանի սահմանների մեջ էին ներառել Երևանի նահանգը, Կարսի մարզը, իսկ թուրքահայաստանից՝ Վանի վիլայեթը և Ալաշկերտի գավառը: Որևէ խոսք չկա Մուշի նահանգի և Ռիզեի նավահանգստի մասին («Մշակ», 23 դեկտեմբերի 1920թ., թիվ 164):

գրութեամբ, որում ասվում էր, որ Հայաստանը պիտի ընդունի մոտ 800 հազար տեղահանվածների⁵⁶:

Նոյեմբերի 28-ին Հայաստանի պատվիրակությունը հիշյալ առաջարկությունների փաթեթը հանձնեց թուրքական պատվիրակությանը: Ք. Կարաբեքիրը, ժանոթանալով սահմանների մասին հայերի առաջարկությանը, զարմանք հայտնեց:

Նոյեմբերի 29-ին նա սպառնալից տոնով մերժեց հայերի առաջարկած պայմանները քննարկելուց՝ հայտարարելով, որ նրանք լքված են բուլրի կողմից:⁵⁷

Հայերի առաջարկին հանդիպակաց՝ թուրքական պատվիրակության ղեկավարը ներկայացրեց թուրք-հայկական սահմանների իրենց նախագիծը և դրան կից հայ ժողովրդի ազգային ինքնությանը դիպչող մի հուշագիր: Թուրքերի ներկայացրած նախագծով հայ-թուրքական սահմանագիծը անցնելու էր Ախուրյան (Արփաչայ) և Արաքս գետերով մինչև Գայլի դրունք, այսինքն՝ Թուրքիային էին անցնելու Կարսի նահանգը, Սուրմալուի գավառը և Երևանի գավառից Արաքսի աջ ափին ընկած մի նեղ հողաշերտ՝ ընդամենը 20,7 հազ քառ.կմ: Ըստ թուրքերի պայմանների՝ Շարուրն ու Նախիջևանը անջատվում էին Հայաստանից և իբրև ինքնավար միավոր՝ դրվում Թուրքիայի հովանավորության ներքո: Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանագիծը անցնելու էր Գայլի դրունքով: Թուրքերն իրենց կողմից մեծահոգություն և առատաձեռնություն համարեցին այն, որ չեն թելադրում Բաթումի պայմանագրի սահմանները, ուստի հայերին են թողնում Ալեքսանդրապոլը և երկաթուղու գիծը դեպի Երևան:

Նոյեմբերի 30-ին Ք. Կարաբեքիրը վերջնագրի ձևով պահանջեց ընդունել սահմանների վերաբերյալ իրենց նախագիծը՝ խոստանալով ընթացս խմբագրական որոշ շտկումներ (ուղղումներ) կատարել: Թուրքերի վերջնագրային պահանջի մասին երեկոյան Ալ. Խատիսյանը իրազեկեց վարչապետ Ս. Վրացյանին:

Դեկտեմբերի 1-ի առավոտյան ժամը 11-ին բացվեց կոնֆերանսի երրորդ նիստը: Նիստում Կարաբեքիրը պնդեց պայմանագրի իրենց նախագծի անվերապահորեն ընդունումը: Հայկական կողմի խնդրանքով հարցի քննարկումը հետաձգվեց մինչև մյուս նիստը, որպեսզի այդ մասին հարցում արվի Հայաստանի կառավարությանը:

⁵⁶ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 385.

⁵⁷ Նույն տեղում:

2. ԵՐԵՎԱՆԻ 1920 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2(3)-Ի
ՀԱՅ-ՌՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ալեքսանդրապոլի բանակցությունների օրերին Հայաստանում և նրա սահմաններից դուրս՝ Բաքվում և Մոսկվայում, տենդագին նախապատրաստություն էր ընթանում Հայաստանի խորհրդրայնացման շուրջ: Բաքուն և Մոսկվան ուշիուշով հետևում էին Ալեքսանդրապոլի բանակցությունների ընթացքին: Նոյեմբերի 26-ին կամ 27-ին Գ. Զիչերինը հեռագրում է Բաքու՝ Գ. Օրջոնիկիձեին՝ տեղեկություններ պահանջելով Ալեքսանդրապոլի բանակցությունների ընթացքի, Մոփվանու մասնակցության խնդրի, հայթուրքական սահմանագծի վերաբերյալ և այլն⁵⁸: Նոյեմբերի 29-ին Գ. Օրջոնիկիձեն Մոփվանուց ստացավ հետևյալ բովանդակությամբ ռադիոգիրը. «Թուրքերը պնդում են, որ խորհրդային զորք մտցվի Հայաստան խորհրդային իշխանություն հաստատելու համար և խոստանում են, որ իրենց թիկունքը ապահով լինելու դեպքում զորքը կփոխադրեն Արևմուտք՝ Անտանտի դեմ: Վիճակը միանգամայն դառնում է պարզ և ոչ ռիսկային»⁵⁹: Նոյեմբերի 30-ին Վ. Լենինը և Ի. Ստալինը ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոյի հանձնարարությամբ ծածկագրով հեռագրում են Բաքու՝ Օրջոնիկիձեին, և նրա միջոցով էլ Կարս՝ Մոփվանուն, որ «Ժամանակը չէ՞ արդյոք խոսք բացել քեմալականների և Ռուսաստանի միջև ռազմական դաշինքի մասին: Թող թուրք կոմունիստները լայն քարոզչություն ծավալեն թուրք-ռուսական դաշինքի վերաբերյալ ընդդեմ Անտանտի»⁶⁰:

Մի կողմից Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ Հայկոմկուսն էր գործնական քայլեր ձեռնարկում Հայաստան կարմիր զորք մտցնելու, իսկ մյուս կողմից Հայաստանում ՌՍՖՍՀՄ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանն էր բանակցում Հայաստանի իշխանությունների հետ խաղաղ, քաղաքական համաձայնության ճանապարհով Հայաստանը խորհրդայնացնելու:

Մեր կարծիքով, 1920 թ. նոյեմբերի կեսերին հայ-թուրքական զինադադարի շրջանում Բյուրո-կառավարությունը հույս էր փայ-

⁵⁸ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 26, թ. 2:

⁵⁹ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 397.

⁶⁰ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 22, թ. 12:

փայլուն առանց Ռուսաստանի միջամտության թուրքիայի հետ քիչ թե շատ տանելի հաշտության պայմանագիր կնքելու, փրկելու իշխանությունը և Հայաստանի անկախությունը: Այդ առնչությամբ պատահական չպետք է համարել այդ օրերին «Հառաջ» պաշտոնաթերթի թուրքասիրական խմբագրականները⁶¹:

Պարզվում է, որ թուրքիայի և Ռուսաստանի հետ հարաբերություններ կառուցելու հարցում ՀՀԴ ղեկավար կազմում կար երկու հոսանք. դրանցից մեկը՝ Հ. Օհանջանյանի գլխավորությամբ, ըստ Լեգրանի՝ մերժում էր խորհրդային Ռուսաստանի աջակցությունը՝ մտավախություն ունենալով, որ դա կտանի Հայաստանի խորհրդրդայնացման և անկախության կորստի (վերացման): Այս հոսանքը միաժամանակ գտնում էր, որ Անտանտի նոր կուրսը քեմալականների հանդեպ կհանգեցնի նրան, որ Ռուսաստանը դուրս կմղվի Հարավային Կովկասից, և Հայաստանը կմնա թուրքիայի հետ դեմ դիմաց: Դրա համար էլ նրանք ծագում էին թեկուզ շատ մեծ զիջումներով ինքնուրույն հաշտություն կնքել թուրքերի հետ, հիմնել նոր կառավարություն՝ բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ստանալ թուրքերի վստահությունը, հաշտվել և խաղաղ ապրել Հայաստանի ուժեղ հարևանի՝ թուրքիայի հետ: Թուրքասեր այդ հոսանքը պարտություն կրեց: Մյուս հոսանքը, որի փաստական ղեկավարը Դրոն էր, իրեն համարում էր ռուսասեր, ցանկանում էր հենվել խորհրդային Ռուսաստանի օգնության վրա և չէր վախենում Հայաստանի ինքնիշխանության կորստից⁶²:

Դրոյի ռուսասեր հոսանքից գատ՝ ավելի վաղ ՀՀԴ շարքերում ստեղծվել էր, այսպես կոչված, «Զախ դաշնակցական ինտերնացիոնալիստների» մի խումբ, որը բացահայտ կանգնած էր խորհրդրդային Հայաստանի պլատֆորմի վրա: Այս խումբը ևս ուժ էր տալիս դրոյական թևին:

Ահա այսպիսին էին տրամադրությունները և մտայնությունները Հայաստանի ղեկավար քաղաքական շրջանակներում, երբ նոյեմբերի 30-ին ստացվեց Բ. Լեգրանի վերջնագիրը Հայաստանի խաղաղ խորհրդայնացման և մի քանի ժամ անց նաև Բ. Կարաբեքիրի վերջնագիրը թուրքիայի ներկայացրած նախագծի պայմանները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ:

⁶¹ «Հառաջ», 20 և 23 նոյեմբերի 1920 թ.:

⁶² Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 261.

ՀՀ հետագա ճակատագրի հարցը վերջնականորեն վճռելու համար նույնքերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը կառավարության շենքում տեղի ունեցավ խորհրդակցություն ՅՅԴ Բյուրոյի, կառավարության, ՅՅԴ Հայաստանի ԿԿ-ի, խորհրդարանի ՅՅԴ խմբակցության և մի քանի հանրաճանաչ գործիչների մասնակցությամբ⁶³: Խորհրդակցությունում պետք է Բ. Լեգրանի ներկայացրած վերջնագրին պատասխան տրվեր:

Ս. Վրացյանի, Դրոյի և Յ. Քաջազնունու ելույթներից հետո խորհրդակցության մասնակիցները հիմնականում հանգում են այն հետևության, որ վիճակն անհույս է:

Նույն օրը՝ նույնքերի 30-ի երեկոյան՝ խորհրդակցության ժամանակ, Ալեքսանդրապոլից հեռագիր ստացվեց, որ Թուրքիան՝ հանձին Ք. Կարաբեքիրի, վերջնագիր է տվել Հայաստանի պատվիրակությանը՝ 48 ժամվա ընթացքում հաշտության պայմանները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ: Այդ նշանակում էր, որ դեկտեմբերի 2-ի երեկոյան լրանալու էր վերջնագրի ժամկետը: Պետք է ասել, որ թուրքական վերջնագիրը մեծապես կանխորոշեց ու հստակեցրեց խորհրդակցության մասնակիցների դիրքորոշումը⁶⁴:

Մինչև այդ Հայաստանի կառավարությունը ձգձգում էր բանակցությունները Լեգրանի հետ՝ հույս ունենալով Ալեքսանդրապոլում քիչ թե շատ ընդունելի պայմանագիր կնքել թուրքերի հետ և փրկել Հայաստանը խորհրդայնացումից: Սակայն Կարաբեքիրի նույնքերի 30-ի վերջնագրի ծանր պայմանները ի չիք դարձրին թուրքերի հետ տանելի պայմանագիր կնքելու բոլոր հույսերը⁶⁵:

Իր հերթին թուրքերը ջանում էին ժամ առաջ հաշտության պայմանագիր կնքել պարտված դաշնակցական կառավարության պատվիրակության հետ⁶⁶: Նրանց քաղաքական հաշվարկն հետևյալն էր. մինչև Հայաստանը կխորհրդայնացվեր և կհաստատվեր նոր իշխանություն, նրանք պայմանագրի տեսքով կօրինականացնեին իրենց զավթումները և Հայիեղկոմին և նրա հովանավոր

⁶³ Վրացյան Ս., Հուշեր մոտիկ անցեալից («Հայրենիք», Բոստոն, 1923, թիվ 1 (նույնքեր), էջ 70, Տերտերյան Յ., Շանթի պատվիրակության գործունեությունը («Հայրենիք», Բոստոն, 1954, թիվ 5, էջ 10–11):

⁶⁴ Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), էջ 327:

⁶⁵ Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 306:

⁶⁶ Վրացյան Ս., Հուշեր մոտիկ անցեալից, «Հայրենիք», Բոստոն, 1923, թիվ 1, (նույնքեր), էջ 71:

Ռուսաստանին կղնեին արդեն կատարված փաստի առաջ: Իրականում այդպես էլ արվեց:

Հայտնի է, որ Ք. Կարաբեքիրը քաջատեղյակ էր Հայաստանի քաղաքական զարգացումներին: Տվյալներ կան այն մասին, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից առաջ Հայիեդկոմի նախագահ Ս. Կասյանը Դիլիջանից հեռագրել է Կարաբեքիրին՝ տեղեկացնելով Հայաստանի խորհրդայնացման մասին: Կարաբեքիրն էլ պատասխան հեռագրով շնորհավորել է Հայաստանի խորհրդայնացումը⁶⁷: Սակայն դա չի խանգարել Կարաբեքիրին, որ Խատիսյանին հարկադրի ստորագրելու այդ անհրավահավասար պայմանագիրը՝ քաջ գիտակցելով, որ վերջինս այլևս պայմանագիր ստորագրելու լիազորություն չունի:

Նոյեմբերի 30-ի պատմական նիստ-խորհրդակցությունում Դրոյի հոսանքը հաղթանակ տարավ և դեկտեմբերի 1-ին հրահանգվեց Խատիսյանին ընդունել թուրքերի վերջնագիրը և կնքել հաշտություն: Դրոն կարծում էր, որ այդ պայմանագիրը ժամանակավոր կլինի, որ կարմիր զորքերի՝ Հայաստան մուտք գործելուց հետո ինքը կանցնի այդ զորքի գլուխ և թուրքերին կքշի մինչև 1914 թ. սահմանը⁶⁸:

Ողջ գիշերը ընթացած այդ նիստում փաստորեն ընդունվում են երկու վերջնագիրն էլ: Մեր կարծիքով, եթե Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ Լեգրանի պահանջը ստեղծված պայմաններում չուներ այլընտրանք, ապա թուրքերի վերջնագիրը իրավադիվանագիտական փաստարկումներով կարելի էր ձգձգել (հետաձգել) և դրա ստորագրման պատասխանատվությունը փոխանցել արդեն խորհրդայնացող Հայաստանի կառավարությանը: Նման պարագայում շատ բան կարող էր փոխվել հոգուտ Հայաստանի, որովհետև Հայիեդկոմի թիկունքին կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը, իսկ վերջինս համարվում էր քենալական Թուրքիայի դաշնակիցը: Նման պարագայում Թուրքիան չէր համարձակվի ոտնձգել Հայաստանի դեմ:

1920 թ. դեկտեմբերի 1-ին վարչապետ Ս. Վրացյանը հեռագրում է Ալեքսանդրապոլ՝ պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանին. «Բյուրոն, ֆրակցիան, կառավարությունը որոշեցին

⁶⁷ Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ - բուլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917-1921 թթ., էջ 295:

⁶⁸ «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 239:

ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին: Դրել ենք որոշ պայմաններ, որ ճանաչվի Հայաստանի անկախությունը, հաշտություն կնքել տաճիկների հետ (ընդգծումը մերն է - Ա. Յ), թույլ չտալ քաղաքացիական կռիվ, մտցնել կառավարության մեջ մերոնցից»⁶⁹: Հեռագրում Ս. Վրացյանը չի որոշակիացնում, թե կոնկրետ ով պետք է հաշտություն կնքի թուրքերի հետ՝ Խատիսյա՞նը, թե՞ իշխանությունը ստանձնող Հայիեդկոմը: Կարելի է ենթադրել, որ իշխանությունից հեռացող դաշնակցական կառավարությունը նախատեսում էր, որ թուրքերի հետ հաշտությունը պետք է կնքեր խորհրդային կառավարությունը: Սակայն դեպքերի բերումով ստացվեց այնպես, որ պայմանագիրը ստորագրեց հին կառավարության պատվիրակությունը այն ժամանակ, երբ այդ կառավարությունն արդեն հրաժարական էր տվել, և Երևանի՝ դեկտեմբերի 2-ի համաձայնագրով իշխանությունը հանձնվել էր Հայիեդկոմին՝ ի դեմս գինվորական դիկտատոր՝ Դրոյի և կոմիսար Սիլինի, որոնք դեկտեմբերի 2-4-ը ժամանակավորապես իրականացրել են երկրի կառավարումը մինչև հեդկոմի ժամանելը Երեվան: Այն բանից հետո, երբ հայտնի են դառնում թուրքերի վերջնագրի ծանր պայմանները, Հայաստանի Հանրապետության կառավարությանը չէր մնում այլ բան, քան Բ. Լեգրանի հետ համաձայնագիր կնքել, հրաժարվել իշխանությունից և հեռանալ ասպարեզից:

* * *

Այդ օրերի ռեպերն ու իրադարձությունները զարգանում են հետևյալ կերպ: ՀՀ կառավարության դեկտեմբերի 1-ի որոշմամբ նախարարներ Դ. Կանայանը (Դրո) և Յ. Տերտերյանը լիազորվում են Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ կնքելու համապատասխան համաձայնագիր: Եվ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին՝ հինգշաբթի ժամը 12-ին մոտ, Երևանում ստորագրվեց (Լեգրան-Դրո) համաձայնագիրը, որով բովանդակ իշխանությունը հանձնվում էր Հայիեդկոմին և իրավապես ՀՀ-ը դադարում էր գոյություն ունենալուց:

Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը բաղկացած է ութ հոդվածներից (կետերից): Հարկ ենք համարում անդրադառնալ այն հոդվածներին, որոնք առնչվում են մեր թեմային: Համաձայ-

⁶⁹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 248, թ. 1:

նագրի առաջին հոդվածով «Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն» (ՀՍԽՀ): Այդ նշանակում է, որ սույն փաստաթղթով Հայաստանի Հանրապետությանը հաջորդելու էր գալիս Հայաստանի անկախ Խորհրդրդային հանրապետությունը: «Անկախ» բառի տեղ գտնելը հոդվածում, մեր կարծիքով, հայկական կողմի պնդումն էր և Բ. Լեգրանի զիջումը այդ հարցում: Սակայն հետագա դեպքերը և իրադարձությունները ցույց են տալիս, որ բովանդակության տեսակետից հազիվ թե Խորհրդային Հայաստանը կարելի էր համարել անկախ հանրապետություն, էլ չենք խոսում ԽՍՀՄ կազմավորումից հետո: Դա երևաց հետագայում հատկապես Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ:

2-րդ հոդվածը սահմանում էր. «Սինչև Հայաստանի Խորհուրդների համագումարի հրավիրումը կազմվում է ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե, որին կանցնի բովանդակ իշխանությունը Հայաստանում»: Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն՝ իբրև իշխանություն և կառավարություն փաստորեն պահպանվեց մինչև 1922 թ. հունվար, մինչև Հայաստանի Խորհուրդների առաջին համագումարը: Այդ նշանակում է, որ Հայիեղկոմը, իսկ 1921 թ. մայիսից նրան անվանափոխած Ժողկոմխորհը ներկայանում էր որպես հանրապետության բարձրագույն գործադիր և օրենսդիր մարմին:

Համաձայնագրում ՀՍԽՀ տարածքների ճանաչման առումով առավել հետաքրքրություն է ներկայացնում 3-րդ հոդվածը: Նրանում ասված է. «Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը ընդունում է, որ ՀՍԽՀ հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Էրիվանի (Երևանի - Ա. Գ.) նահանգն իր բոլոր գավառներով, Կարսի մարզի մի մասը, որը ռազմական տեսակետից կապահովի երկաթուղային գծի տիրապետությունը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուր գավառը և նույն նահանգի Ղազախ գավառի մի մասը, որի սահմանները որոշված էին Չգոստոսի 10-ի (Թիֆլիսի - Ա. Գ.) համաձայնագրով և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը»⁷⁰:

«Երևանի նահանգն իր բոլոր գավառներով» ձևակերպման

⁷⁰ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 383, Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 533:

տակ պետք է հասկանալ, որ համաձայնագրով ՀՍԽՅ մեջ մտնելու էին նաև Նախիջևանի և Սուրմալուի գավառները: Հայաստանին էր անցնելու նաև Ղազախի գավառի մի մասը այն գծով, որը մինչև հուլիսի 30-ի դրությամբ հսկվում էր ՀՀ զորքերի կողմից, ինչպես նաև Թիֆլիսի գավառի այն հատվածը, որը սեպտեմբերի 28-ի դրությամբ, այսինքն՝ մինչև ՀՀ վրա թուրքերի հարձակումը, գտնվում էր Հայաստանի տիրապետության տակ:

Համաձայնագրում արձանագրված տարածքային պահանջը հուսադրող էր, մանավանդ որ երկու օր առաջ՝ նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի հեղկոմի հրապարակած հռչակագրում (Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հետ կապված), մասնավորապես ասվում էր, որ «Ձանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքները համարվում են խորհրդային Հայաստանի անբաժան մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է լրիվ ինքնորոշվելու իրավունք»⁷¹: Երևանի համաձայնագիրը կարծես գալիս էր վերահաստատելու Ադրբեջանի հռչակագրում ամրագրված Ձանգեզուրը և Նախիջևանը խորհրդային Հայաստանի անբաժան մաս ճանաչելու հայ ժողովրդի անօտարելի պահանջը, նաև ի հավելումն դրան՝ Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալը:

Սակայն հետագա դեպքերը ցույց տվեցին, որ թե՛ Ադրբեջանի հռչակագրում և թե՛ Երևանի համաձայնագրի 3-րդ հոդվածում Հայաստանի ու հայ ժողովրդի օգտին տեղ գտած տարածքային նշագրումները ընդամենը հնարք էին Հայաստանի խորհրդայնացումը հեշտացնելու համար: Այդ կապակցությամբ տեղին է նկատում պատմաբան Կ. Խաչատրյանը, որ «խորհրդային իշխանությունները հետագայում գործնականում հետամուտ չեղան դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը»⁷²:

Երևանի համաձայնագրի 4-րդ, 5-րդ հոդվածները մեզ հետաքրքրող խնդրին էապես չեն առնչվում, ուստի հարկ չենք համարել դրանց բովանդակությունը ներկայացնել: 6-րդ հոդվածը նախատեսում էր կոալիցիոն կառավարության ստեղծում՝ կազմված 5 կոմունիստներից և 2 «ձախ» դաշնակցականներից: Նախատես-

⁷¹ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 377:

⁷² Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., էջ 50:

վում էր նրանում ընդգրկել կոմունիստներ Ս. Կասյանին (նախագահ), Ա. Մռավյանին, Ս. Տեր-Գաբրիելյանին, Ա. Բեկզադյանին, Ա. Նուրիջանյանին և «ձախ» դաշնակցականներ Դրոյին ու Յ. Տերտերյանին: Ընդ որում ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կոմբյուրոն էր որոշել Դրոյին և Տերտերյանին ընդգրկել Հայիեդկոմի կազմի մեջ: Սակայն Ս. Կասյանի պնդմամբ Կոմբյուրոյի այդ որոշումը չի կատարվում, և Դրոն ու Տերտերյանը չեն ընդգրկվում Հայիեդկոմի կազմում⁷³:

Համաձայնագրի 7-րդ հոդվածով «Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը միջոցներ է ձեռնարկում անմիջապես կենտրոնացնելու անհրաժեշտ ռազմական ուժեր ՀՍԽՅ անկախության պաշտպանության համար»⁷⁴: Ռուսաստանը պարտավորվում էր պաշտպանել Հայաստանի սահմանները, այդ թվում նաև Նախիջևանը և Ջանգեզուրը: Համաձայնագրով ՌՍՖՍՀ և ՀՍԽՅ դառնալու էին դաշնակից պետություններ, որն ինքնին երաշխիք պետք է լիներ Թուրքիայի ռազմական ոտնձգությունների դեմն առնելու համար:

Եվ վերջին՝ 8-րդ հոդվածով «Համաձայնագիրը ստորագրելու պահից ՀՀ կառավարությունը հեռացվում է իշխանությունից: Մինչև Հեդկոմի երևան ժամանելը ամբողջ իշխանությունը ժամանակավորապես անցնում է զինվորական հրամանատարությանը, որի գլուխ կանգնում է ընկ. Դրոն: ՌՍՖՍՀ կողմից Հայաստանի զինվորական հրամանատարությանը կից կոմիսար է նշանակվում ընկ. Սիլիհնը»⁷⁵:

Համաձայնագիրը կազմվել է երկու օրինակից, որոնց տակ ստորագրել են Խորհրդային Ռուսաստանի կողմից Բ. Լեզրանը, իսկ ՀՀ կողմից՝ Դրոն և Յ. Տերտերյանը: Համաձայնագրում չկան այլ նշումներ դրա վավերացման ժամկետի, ուժի մեջ մտնելու և այլ պայմանների մասին: Իրավիճակն այնպիսին էր, որ այն իր հոդվածների մեծ մասով ուժի մեջ պետք է մտներ ստորագրման իսկ պահից: Այդ մասին է փաստում 8-րդ հոդվածը, որով Դրոն անմիջապես ստանձնելու էր Հայաստանի գերագույն իշխանությունը մինչև Հայիեդկոմի ժամանումը երևան:

Համաձայնագրի ստորագրումից հետո՝ նույն օրը, ՀՀ կառա-

⁷³ Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 312–313, Խաչատրյան Կ., նշվ.աշխ., էջ 49:

⁷⁴ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 384:

⁷⁵ Նույն տեղում:

վարության անդամները՝ վարչապետ Ս. Վրացյանի գլխավորությամբ, ստորագրեցին իշխանությունից հրաժարվելու մասին ԱԿՏ: Նրանում ասվում էր. «Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը՝ ՀՀ կառավարությունը իր 1920 թ. դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց հրաժարվել իշխանությունից և հանձնել զինվորական ու քաղաքացիական բովանդակ իշխանությունը զորաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտոնում նշանակել ռազմական նախարար Դրոյին»⁷⁶: ՀՀ կառավարության ինքնալուծարման այս վերջին որոշումը բխում էր Երևանի համաձայնագրի ոգուց:

Մինչ այդ իշխանությունը բոլշևիկներին զիջելու որոշում էր կայացրել ՀՀԴ բյուրոն. «Հարկադրված երկու հակառակորդ կողմերի ճնշումից՝ բյուրոն հեռանում է Հայաստանից՝ թողնելով իր ներկայացուցիչը և հրահանգում է ընկերներին իրենց տեղական պայմանների համաձայն գործել և գաղտնի պահպանել կուսակցության գոյությունը, իսկ ընկերներին չի արգելում մտնել նոր իշխանության մեջ և աշխատել երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար»⁷⁷:

Իշխանության փոխանցումը կատարվեց խաղաղ ճանապարհով, որտեղ «ձախ դաշնակցական» Դրոն հանդիսացավ կապող օղակ հին և նոր իշխանությունների միջև: Նույն օրը՝ դեկտեմբերի 2-ի կեսօրին, Ս. Վրացյանը, իշխանությունը հանձնելով Դրոյին, ժամը 17⁵⁰ թոպեին հեռագրում է Թիֆլիս՝ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին հետևյալ բովանդակությամբ. «Հաշվի առնելով երկրում ստեղծված իրավիճակը՝ կառավարությունը որոշեց հրաժարվել իշխանությունից և քաղաքացիական ու ռազմական իշխանությունը հանձնել հրամանատար Դրոյին»⁷⁸: Բովանդակ իշխանությունը ժամանակավորապես՝ մինչև Հայիեդկոմի մայրաքաղաք հասնելը, անցնելու էր զինվորական հրամանատարության ձեռքը, որի գլուխ կանգնելու էր Դրոն:

Այսպիսով, իշխանության հանձնումը կատարվել է խաղաղ և

⁷⁶ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 384:

⁷⁷ Հ.Յ.Ղաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբ. և կազմող պրոֆ. Վ. Ն.Ղազախեցյան, Ե., 1999, էջ 9–10:

⁷⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 560, թ. 476:

կամավոր, քաղաքական երկու կողմերի միջև կայացրած համաձայնության հիման վրա: Իշխանափոխությունը տեղի է ունեցել համապատասխան իրավական ձևակերպումով: Դրանով ՀՀ-ը հաջորդեց խորհրդային Հայաստանը՝ Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունը (ՀՍԽՖՍՀ): Վերջինս դարձավ նախորդ հանրապետության իրավահաջորդը:

Բ. Լեգրանը դիվանագետի հմտությամբ հասավ իր նպատակին: Ուշագրավ է, որ ութ կետերից բաղկացած այդ համաձայնագրով Ռուսաստանը Հայաստանի անվիճելի մասեր էր ճանաչում Երևանի նահանգն ամբողջությամբ, Կարսի մարզի մի մասը, Ջանգեզուրի գավառը, Ղազախի գավառի մի մասը և Թիֆլիսի նահանգի մի հատվածը⁷⁹: Սակայն պարզվում է, որ Հայաստանին տրվելիք տարածքային այդ զիջումները Լեգրանի անձնական նախաձեռնությունն էր: Նման նախաձեռնությունն նա արդեն մեկ անգամ արել էր՝ հանձին հայ-ռուսական հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախագծի, որը, սակայն, նոյեմբերի սկզբին մերժվել էր Բաքվի և Մոսկվայի կողմից: Լեգրանի «առատաձեռնության» նպատակը խոստումներ տալու միջոցով Հայաստանի դյուրին և անարյուն խորհրդայնացումն էր: Եվ պետք է ասել, որ Լեգրանը փայլուն կերպով կատարեց իր առջև դրված խնդիրը: Հետաքրքիր է ընթերցողին տեղեկացնել, որ Բ. Լեգրանի հայասիրական որոշ կեցվածքը հիմք է տվել ադրբեջանցի պատմաբան Քյամալ Իմրանլիին Լեգրանին համարել «թքնիկ ծագումով հայ»⁸⁰: Մինչդեռ հայտնի է, որ Բ. Լեգրանը թքնիկ ծագմամբ հրեա էր, որը հայերին որոշ խոստումներով սիրաշահելու միջոցով կարողացավ անարյուն խորհրդայնացնել Հայաստանը:

Այդ նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին՝ երեկոյան ժամը 8-ին, բացվեց բանակցությունների վերջին՝ 4-րդ նիստը: Այստեղ հայկական կողմին հաջողվեց մասնակի փոփոխություններ մտցնել հօգուտ Հայաստանի: Մասնավորապես, Կարսի մարզի Աղբաբայի (այժմ Լճասիայի) շրջանի (գավառակի) մի մասը՝ մոտ 600 քառ.կմ տա-

⁷⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 560, ք. 476, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 383, Ալիխանյան Ս. Տ., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Ե., 1966, էջ 206, Գալոյան Գ. Ա., նշվ.աշխ., էջ 372–373:

⁸⁰ **Имранлы К.**, Создание Армянского государства на Кавказе (источки и последствия), М., 2006, с. 148.

րածք ներառվեց Հայաստանի սահմանների մեջ (անցավ Հայաստանին)⁸¹:

Հայկական կողմին հաջողվեց նաև Հայաստանի զորքի քանակը նախագծում նշված 1200-ից հասցնել 1500-ի: Երկար վիճաբանություններ եղան Անիի, Նախիջևանի և Սուրմալուի խնդիրների շուրջ, սակայն թուրքերը որևէ զիջման չգնացին:

Դրանից հետո՝ դեկտեմբերի 2 լույս 3-ի գիշերը՝ ժամը 2-ին, այսինքն՝ դեկտեմբերի 3-ին, Ալեքսանդրապոլի միջնաբերդում ստորագրվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Պատմագիտական գրականության մեջ ընդունված է պայմանագրի ստորագրման ամսաթիվը համարել դեկտեմբերի 2-ը: Իրականում պայմանագիրը ստորագրվել է դեկտեմբերի 3-ին: Բայց, քանի որ պայմանագրի բուն տեքստում, եղած փաստաթղթերում, ժողովածուներում և մենագրական ուսումնասիրություններում նշված են դեկտեմբերի 2-ը, ուստի մենք ևս չենք շեղվում այդ ընդունված կարգից, սակայն միաժամանակ փակագծերում ներառում ենք 3 ամսաթիվը՝ հասկացնելու համար, որ պայմանագիրը ստորագրվել է դեկտեմբերի 3-ին:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի հայ-թուրքական կոնֆերանսում գումարվել է ընդամենը չորս լիակազմ (պլենար) նիստ՝ նոյեմբերի 25-ին, 27-ին, դեկտեմբերի 1-ին և 2-ին: Մնացած օրերին կողմերի միջև տեղի են ունեցել ոչ պաշտոնական հանդիպումներ ու առանձնազրույցներ:

Հայ-թուրքական հաշտության պայմանագրի ստորագրման վերջնական հրահանգը դեկտեմբերի 2-ի երեկոյան ժամը 6-ին տվել է Հայաստանի ժամանակավոր դիկտատոր Դրոն⁸², համենայն դեպս, նա չի արգելել, որ այն ստորագրվի: Դեկտեմբերի 2-ի երեկոյան, Դրո-Խատիսյան հայտնի հեռախոսազրույցին հակակշիռ, ակադեմիկոս Գ. Գալոյանը անգլիական ֆորին օֆիսի մի աղբյուրից բերում է մեկ այլ փաստարկ այն մասին, որ դրանից մեկ օր

⁸¹ Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի), էջ 24, Սարգյան Զ., Երեք դաշնագրեր, էջ 82, 144:

⁸² Վերջինս 1920 թ. դեկտեմբերի 2-ին, ժամը 12-ին, Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով ժամանակավորապես, մինչև Հայիեդկոմի ժամանումը Երևան, ստանձնել էր Հայաստանի գերագույն իշխանությունը, իսկ Վրացյանի կաբինետը նույն օրը, ժամը 16-ի նոտերքին, մինչև Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը կստորագրվեր, արդեն հրաժարական էր տվել:

առաջ՝ դեկտեմբերի 1-ին, Դրոն հեռագրել է Ալեքսանդրապոլում գտնվող Հայաստանի պատվիրակությանը (Ալ. Խատիսյանին), որ «Հայաստանի Հեղկոմի կողմից Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակելուց հետո՝ դեկտեմբերի 1-ից սկսած, հին կառավարության կողմից նշանակված պատվիրակությունը ոչ մի իրավունք և իրավասություն չունի բանակցությունները թուրքերի հետ շարունակելու համար»⁸³: Երջանկահիշատակ ակադեմիկոսի մեծագրությունից բերված քաղվածքը մեզ կասկածելի է թվում այն հիմնավորմամբ, որ ՀՀ ռազմական նախարար Դրոյի իրավասության մեջ չէր մտնում պայմանագիր չստորագրելու հրահանգ տալ Հայաստանի պատվիրակությանը, մանավանդ որ այդ նույն օրը Ս. Վրացյանը հայտնում է կառավարության, ՀՀԴ բյուրոյի և խորհրդարանական խմբակցության համատեղ որոշման մասին՝ իշխանությունը բուլչևիկներին հանձնելու և թուրքերի հետ հաշտություն կնքելու (ընդգծումը մերն է - Ա. Հ) վերաբերյալ⁸⁴: Եվ այդ դեպքերից մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, Ալ. Խատիսյանը ստորագրում է պայմանագիրը:

Մինչ օրս սպառիչ պատասխան չի տրվել այն հարցին, թե Ալ. Խատիսյանը ինչու ստորագրեց պայմանագիրը և ի՞նչ հիմքեր կային դրանից հրաժարվելու:

Պայմանագրի ստորագրման հարցում Ալ. Խատիսյանի ցուցաբերած վարքագիծը, մեր կարծիքով, արդարացում չունի: Բազմահմուտ դիվանագետը և հավասարակշիռ պետական գործիչը, մեր կարծիքով, չցուցաբերեց դիվանագիտական ճկունություն, չկարողացավ կամ գուցե չուզեց օգտագործել քաղաքական նպաստավոր պահը, որ Հայաստանը արդեն խորհրդայնացել է և կուլ գնալով Ք. Կարաբեքիրի սպառնալիքին ու պարտադրանքին՝ ստորագրեց պայմանագիրը, թեկուզ և այն այլևս չուներ իրավական ուժ⁸⁵:

Չնայած դեկտեմբերի 1-ին նա Ս. Վրացյանի կառավարու-

⁸³ Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 379:

⁸⁴ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 381:

⁸⁵ Հայտնի է, որ Ք. Կարաբեքիրը սպառնում էր չստորագրելու դեպքում շարունակել ռազմական գործողությունները մինչև Երևան, մինչև իսկ սպառնում էր Ալեքսանդրապոլի ամրոցում հաշվեհարդար տեսնել հայ պատվիրակների հետ (տե՛ս «Վերջին լուր», Կ. Պոլիս, 22 փետրվարի 1921 թ.):

թյան անունից հրահանգ էր ստացել՝ ընդունել վերջնագիրը և ստորագրել պայմանագիրը, սակայն դեկտեմբերի 2-ի կեսօրից Երևանի համաձայնագրով հրաժարական էր տվել իրեն լիազորած կառավարությունը, հեռացել էր ասպարեզից, և Հայաստանը խորհրդայնացել էր: Դրա հիման վրա Խառիսյանը կարող էր անմիջապես, իբրև մասնավոր անձ, հայտարարություն անել, որ ինքը այլևս լիազորություն չունի շարունակելու բանակցությունները, առավել ևս ստորագրելու պայմանագիր, քանզի այն կառավարությունը, որ ներկայացնում է, այլևս գոյություն չունի: Պայմանագիրը ստորագրելու պարտավորությունը նա կարող էր հանգիստ խղճով թողնել խորհրդային կառավարությանը (Հայիեղկոմին):

Պայմանագրի ստորագրումից առաջ՝ դեկտեմբերի 2-ի երեկոյան Դրոյի հետ ունեցած հեռախոսակապի ժամանակ, Ալ. Խառիսյանը պետք է դներ ոչ թե պայմանագիրը ստորագրելու թե չստորագրելու հարցը, այլ առաջնորդվելով Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային-պետական շահերով՝ Դրոյին հասկացներ, որ իրեն հետ կանչեր Ալեքսանդրապոլից՝ իբրև լիազորություն չունեցող մասնավոր անձ, կամ պարզապես հայտարարություն աներ, որ Խառիսյանը իրավունք չունի պայմանագիր կնքելու: Բանն այն է, որ Հայաստանի խորհրդայնացմամբ քաղաքական իրադրությունը կտրուկ փոխվել էր ի վնաս թուրքերի: Ինչպես արդեն ասվեց, Ալ. Խառիսյանը կարող էր պայմանագիրը ստորագրելու պատասխանատվությունը թողնել խորհրդային նոր իշխանություններին: Սակայն նա չօգտագործեց այդ նպաստավոր հնարավորությունը և Դրոյի խորհրդով գնաց այդ պայմանագրի ստորագրման քայլին: Այս իմաստով մեղքի իր բւժիմն ունի նաև Դրոն:

Ինչ վերաբերում է Ս. Վրացյանի, Ալ. Խառիսյանի և մյուսների կողմից բերվող փաստարկին, թե հակառակ (չստորագրելու) դեպքում թուրքական զորքը կներխուժեր Հայաստանի խորքերը. «կը քայլեր ավելի առաջ»⁸⁶, ապա գտնում ենք, որ քեմալական զորքը չէր համարձակվի մտնել Ռուսաստանին հասանելիք տարածքը և լրացուցիչ լարվածություն ստեղծել իր դաշնակցի համար: Թուրքերը քաջ գիտեին, որ գործնականում նոյեմբերի 29-ից Հայաստանը խորհրդայնացման գործընթացի մեջ է, և իրենք առաջիններից մեկը շնորհավորեցին Հայաստանի խորհրդայնացումը:

⁸⁶ «Ժողովրդի ծայն», Կ. Պոլիս, 24 փետրվարի 1921 թ.:

Հագիվ թե թուրքերը շարունակեին հարձակումը Հայաստանի վրա և շարժվեին Երևան: Նոյեմբերի վերջին Մոֆվանին հեռագրով տեղյակ էր պահել Չիչերինին, որ Կարաբեքի փաշան առաջարկել է ռուսական զորքեր մտցնել Հայաստան, որպեսզի թուրքերն էլ իրենց զորքերը տեղափոխեն արևմտյան ռազմաճակատ⁸⁷: Այնպես որ հիմնավոր չէ այն պնդումը, որ եթե Խատիսյանը չստորագրեր Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապա թուրքերը մեկ-երկու օրում կգրավեին ամբողջ Հայաստանը և բնաջինջ կանեին տեղի ամբողջ հայությանը:

Մյուս կողմից՝ դժվար է ասել, թե ներքին ինչ մղում է ունեցել Խատիսյանը պայմանագիրը ստորագրելիս. միգուցե թուրքերի միջոցով իշխանությունը փրկելու ծագումը: Իհարկե, ՀՀԴ բյուրոն դեկտեմբերի 2-ին պաշտոնապես որոշում էր ընդունել իշխանությունից և քաղաքական ասպարեզից հեռանալու մասին և այդպես էլ արեց: Սակայն բյուրոյում և կուսակցության ղեկավար այլ մարմիններում կային գործիչներ (Հ. Օհանջանյան, Ս. Արարատյան, Ռ. Դարբինյան. Վ. Նավասարդյան, Ա. Հովհաննիսյան և ուրիշներ), ովքեր կտրականապես դեմ էին Հայաստանի խորհրդայնացմանը և պատրաստ էին թուրքերին մեծ զիջումների գնով փրկել իշխանությունը: Սակայն այդ խմբի բռնած դիրքը դեպքերի և իրադարձությունների օբյեկտիվ ընթացքով դատապարտված էր:

Պատմաբան Ե. Սարգսյանը կարծում է, որ դաշնակցականները ստորագրեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ ի սկզբանե հույսը դնելով այն բանի վրա, որ այն իրավական ուժ չի ունենա, քանի որ իրենց կառավարությունն արդեն հրաժարական էր տվել և իշխանությունը հանձնել բոլշևիկներին⁸⁸: Հնարավոր է, որ Խատիսյանն այնքան էլ մեծ կարևորություն չի տվել պայմանագրի ստորագրմանը՝ մտածելով, որ Հայաստանն արդեն խորհրդայնացել է, բոլշևիկներն ու քեմալականները լեզու կգտնեն իրար հետ, և Հայաստանի համար կկնքվի ավելի նպաստավոր պայմանագիր: Խատիսյանին այդ վստահությունը հավանաբար ներշնչել էր պայմանագրի ստորագրման նախօրյակին՝ դեկտեմբերի 2-ի երեկոյան, Խատիսյան-Դրո հայտնի հեռախոսազրույցի ժամանակ վեր-

⁸⁷ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 367:

⁸⁸ Саркисян Е., За кулисами, как родился Московский договор 1921 г., («Литературная Армения», Е., 1991, № 1, с. 79).

ջինիս արտահայտած հետևյալ միտքը. «Ես (Դրո-Ա. Յ.) հավատացած եմ և հույս ունեմ, որ Խորհրդային Չայաստանը կզտնի ընդհանուր լեզու Թուրքիայի հետ, մանավանդ որ մենք համոզվել ենք ճիշտ այնպես, ինչպես և Թուրքիան, որ հեղափոխական երկրների միակ բարեկամը հեղափոխական Ռուսիան է»⁸⁹: Դժվար է ասել, թե Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը ստորագրման ժամանակ ինչ է մտածել, սակայն խնդրի իրավաքաղաքական վերլուծության տեսակետից ակներև է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը իշխանափոխության այս փուլում իսկապես իրավական ուժ կարող էր ունենալ այն դեպքում, եթե իշխանության անցած Խորհրդային Չայաստանի կառավարությունը պաշտոնական հայտարարություն աներ, թե ինքը ճանաչում է նախորդ կառավարության կնքած պայմանագրերը, համաձայնագրերն ու պարտավորությունները, մի բան, որ տեղի չի ունեցել: Ինչ վերաբերում է հայկական պատվիրակության կողմից պայմանագիրը չստորագրելու հիմքերին, ապա, որպես հիմնավոր փաստարկ, Ալ. Խատիսյանը կարող էր համարձակ պաշտոնական հայտարարություն անել այն մասին, որ ինքը չի կարող կամ իրավունք չունի ստորագրել պայմանագիրը, քանի որ այն կառավարությունը, որ ինքն է ներկայացնում, այլևս գոյություն չունի: Իսկ այն առարկությունը, թե նման դեպքում կմեծանար պատերազմը վերսկսելու Կարաբեքիրի սպառնալիքը, ապա կարծում ենք, որ Թուրքիան չէր համարձակվի պատերազմել Խորհրդային Չայաստանի դեմ, որն, ըստ էության, կնշանակեր պատերազմել Խորհրդային Ռուսաստանի դեմ, մանավանդ որ Թուրքիան արդեն գրավել էր «Ազգային ուխտով» իրեն «հասանելիք» հայկական տարածքները: Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու փաստարկներից մեկն էլ այն կարող էր համարվել, որ հիմք ընդունելով դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական Երևանի համաձայնագրի 7-րդ կետն այն մասին, որ «Ռուսաստանի Խորհրդային կառավարությունն անհապաղ կձեռնարկի բոլոր միջոցները՝ զինված ուժեր կենտրոնացնելու, որը անհրաժեշտ կլինի պաշտպանելու ՉՍԽՉ անկախությունը»⁹⁰: Ալ. Խատիսյանը կարող էր հրաժարվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելուց՝ ամբողջ պատասխանատվությունը դնելով նորահռչակ Խորհրդային կառավարության վրա: Այս առնչու-

⁸⁹ Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 115:

⁹⁰ «Չայաստանի Չանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 384:

թյանը դժվար է համաձայնվել Ս. Վրացյանի այն դիտարկման հետ, որ եթե Խատիսյանը հրաժարվեր ստորագրելուց, ապա Արաքսի ափին կանգնած թուրքերը առաջ կշարժվեին և մինչև ռուս զորքերը հասնեին էջմիածին ու Երևան, հնարավոր էր, որ էլ հայ չմնար⁹¹: Կարծում ենք, որ 1920 թ. դեկտեմբերի սկզբի Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման փուլը քաղաքական իրադրության և ուժերի հարաբերակցության առումով չի կարելի նույնացնել 1918 թ. մայիս-հունիսյան դեպքերի հետ, որոնց արդյունքում կնքվեց Բաթումի հաշտությունը: Այն ժամանակ Բաթումի հաշտությունը այլընտրանք չուներ, որովհետև ռուսական զորքերը հայտնի պատճառներով հետ էին քաշվել Անդրկովկասից, իսկ 1920 թ. գարնանից (ապրիլից) Կարմիր բանակը գտնվում էր Անդրկովկասում, և դա զսպիչ գործոն էր թուրքերի համար:

Այսպիսով, ինչպիսին էլ որ լինեն բերված փաստարկներն ու արված դիտարկումները, իրողությունը այն է, որ Հայաստանի խորհրդայնացումը և դրան հաջորդած Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը արդեն կատարված փաստեր էին:

* * *

Ալեքսանդրապոլի պայմանագիրը բաղկացած էր 18 հոդվածներից: Պայմանագրի բնագիր տեքստը կազմվել է երկու լեզուներով՝ ֆրանսերեն և արաբատառ թուրքերեն: Ի դեպ, որ պայմանագրի բնագիրը, բոլոր փաստաթղթերը՝ երեք քարտեզներով, Ալ. Խատիսյանը դեկտեմբերի 5-ին Երևանում հանձնում է Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, Դրոյին և Սիլինին, չի հրապարակված պաշտոնապես⁹²: Ա. Խատիսյանի վկայությամբ պայմանագրի բնագիրը պահվում է Երևանում՝ խորհրդային կառավարության մոտ⁹³: Դրանք, ցավոք, ներկայումս Հայաստանի ազգային արխիվում չեն պահպանվել: Հայաստանի արխիվում կան պայմանագրի հայերեն և ռուսերեն լեզուներով թարգմանված պատճենները⁹⁴:

⁹¹ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 503–504:

⁹² Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ժազույնը և զարգացումը, էջ 313, Նաթալի Շ., Երեք դաշնագրեր, «Արարատ» մատենաշար, թիվ 24, Բեյրութ, 1957, էջ 9, Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 536:

⁹³ Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 314:

⁹⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թթ. 93–99, ֆ. 114, ց. 2, գ. 63, ք. 15–17:

Պայմանագրի մյուս թուրքերեն բնօրինակը պահպանվում է Անկարայի պատմության ինստիտուտի արխիվում: Շ. Նաթալին հայ-թուրքական սահմանագիծը և առհասարակ պայմանագիրը ներկայացնելիս օգտվել է լուսանկարված արաբատառ թուրքերեն բնագրի թարգմանությունից⁹⁵:

Ինչպես արդեն ասվեց, պայմանագիրը հայերեն բնագիր չի ունեցել և ընդհանրապես չի հրատարակվել: Այդ իսկ պատճառով նրա տեքստը հաճախ տեղիք է տվել տարընթերցումների: Պայմանագրի հոդվածների քանակը տատանվել է 14-ից մինչև 18 և այլն⁹⁶: Ընդ որում խախտվել է հոդվածների հերթականությունը և երբեմն էլ անհաջող թարգմանությունների հետևանքով աղճատվել բովանդակությունը:

Այս խառնաշփոթի ակունքը հավանաբար համարվում է պրոֆեսորներ Յու. Կյուչնիկովի և Ա. Սաբանինի 1929 թ. կազմած հայտնի ժողովածուն, որում տեղ է գտել նաև Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ ընդամենը 14 հոդվածով⁹⁷: Այդ պայմանագրի վավերագիրը նույնությամբ արտատպվել է «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի և նյութերի 1957 թ. ռուսերեն և 1960 թ. հայերեն ժողովածուներում: Սրանցից էլ հետագայում տարածում են գտել պայմանագրի հոդվածների ոչ լիարժեքությունը այլ ժողովածուներում ու մեծագրական աշխատություններում: Իրականում ժողովածու կազմողները կամ ուսումնասիրողները,

⁹⁵ Նաթալի Շ., Երեք դաշնագրեր, «Արարատ» մատենաշար, թիվ 24, Բեյրութ, 1957, էջ 8–9, Շահան, «Վերստին Յավելուած» Ալեքսանդրապոլի դաշնագրի, էջ 7, 16–17:

⁹⁶ Ключников Ю. В. и Сабанин А. В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, Ч. III, вып. 2, М., 1929, с. 71–73, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Ե., 1960, էջ 408–411, «Հայաստանը ...», էջ 683–687, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 391–394, Ս. Վրացյան, Հուշեր մոտիկ անցյալից, «Հայրենիք», 1923, (նոյեմբեր), թիվ 1, էջ 504–505, Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 536–537, Բառյան Ս., Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918–1923 թթ., Ե., 2005, էջ 213–217, Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, էջ 344–347, Азатян Г., Судьбоносные договора, Е., 2000, с. 81–82 и др..

⁹⁷ Ключников Ю. и Сабанин А. В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, Ч. 3, вып. 2, М., 1929, с. 71–73.

եթե փոքր-ինչ ուշադիր ու հետևողական լինեին, ապա Հայաստանի կենտրոնական արխիվի ֆոնդերում առնվազն կգտնեին այդ պայմանագրի հայերեն և ռուսերեն մեքենագիր պատճենները, որոնցում հոդվածների ընդհանուր թիվը 18-ն է⁹⁸:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդային շրջանի փաստաթղթերի ժողովածուների և մենագրությունների մեծագույն մասում բացակայել են պայմանագրի 7-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածները, որոնց վերաբերյալ իր տեղում կլինի անդրադարձ:

Կարելի է փաստել, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի հիմքում դրված է եղել հայ-թուրքական 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագիրը: Ղա երևում է երկու պայմանագրերի հոդվածների համեմատական վերլուծությունից: Ալեքսանդրապոլի պայմանագրի առանձին հոդվածներ ուղղակի կրկնում են Բաթումի պայմանագիրը: Սովորաբար միջպետական պայմանագրեր կնքելիս հաշվի են առնվում նախկինում միմյանց միջև կնքված պայմանագրի դրույթները: Ալեքսանդրապոլի պայմանագիրը թվով երկրորդն էր հայ-թուրքական միջպետական հարաբերություններում, թեև պետք է խոստովանել, որ թե՛ Բաթումի և թե՛ առավել ևս Ալեքսանդրապոլի պայմանագրերը հանգամանքների փոփոխմամբ ինչպես հարկն է չեն գործադրվել:

Պայմանագրի պրեամբուլայում (նախաբանում) նշվում էր, որ ներկա պատերազմին վերջ տալու և տևական հաշտություն կընքելու նպատակով Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը մյուս կողմից հաշտության բանակցությունների համար իրենց լիազորներ նշակեցին:

ԹԱՄԺ կառավարության կողմից՝ Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային, Էրզրումի գեներալ Նահանգապետ Համիդ Բեյին, Էրզրումի պատգամավոր Սուլեյման Նեջադի բեյին:

Հայաստանի կողմից՝ նախկին նախարար-նախագահ և պատգամավոր Ալեքսանդր Խատիսյանին, ֆինանսների նախկին նախարար և պատգամավոր Աբրահամ Գյուլխանդանյանին և ներքին գործերի նախարարի օգնական (տեղակալ) Ստեփան Ղորղանյանին:

⁹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93–99, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15–17 և այլն:

Երկու կողմի պատվիրակությունները, հավաքվելով Ալեքսանդրապոլում և իրենց պատշաճ ու օրինական ճանաչված լիազորագրերը փոխանակելուց հետո համաձայնվեցին հետևյալ կետերում⁹⁹:

Առաջաբանում ուշադրություն է գրավում մի քանի հանգամանք: Նախ թուրքական կողմը ներկայանում է որպես Ազգային մեծ ժողովի կառավարության պատվիրակություն, կառավարություն, որը ճանաչված չէր միջազգայնորեն: Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը թեև թե՛ փաստացի (de facto) և թե՛ իրավաբանորեն (de jure) հիմնականում ճանաչված էր աշխարհի պետությունների կողմից, սակայն պայմանագրի ստորագրման նախօրյակին հանրապետության կառավարությունը իրաժարական էր տվել ու հեռացել իշխանությունից, ուստի Ալեքսանդրապոլում գտնվող նրա պատվիրակության լիազորությունները ՀՀ անունից բանակցություններ վարելու ու պայմանագիր կնքելու վերաբերյալ իրավաբանորեն իրենց ուժը կորցրած պետք է համարել: Ստացվում է, որ միջազգային իրավունքի ու օրինականության տեսակետից երկու կողմից էլ այդ պայմանագիրը իրավական ու օրինական չի կարելի համարել:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 1-ին հոդվածը փաստում է, որ ավարտված է պատերազմը Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև: Շուրջ երկու ամիս տևած պատերազմն ավարտվեց Հայաստանի ծանր պարտությամբ, որն ինքնին ենթադրում էին պայմանագրի բովանդակությունը և Հայաստանի համար ծանր պայմանները:

Պայմանագրի 2-րդ և 3-րդ հոդվածները վերաբերում էին հայթուրքական տարածքային սահմանային խնդիրներին, որոնց մասին հատուկ անդրադարձ կլինի հաջորդ ենթագլխում:

4-րդ հոդվածը վերաբերում է Հայաստանի փաստացի գինաթափմանը: Հիմք ընդունելով այն, որ Հայաստանը «այսուհետ չդառնա իմպերիալիստական պետությունների գործիք», Թուրքիան պարտավորեցնում էր Հայաստանի կառավարությանը, որ բացի թեթև և երկրի կարգն ու անվտանգությունը պաշտպանելու համար բավարար քանակությամբ զենք ունեցող ժանդարմերիայից, սահմանների պաշտպանության համար ունենալ 1500

⁹⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93 և 97, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 391:

սվինով մի զորաբաժին, 8 լեռնային կամ դաշտային հրանոթ և 20 զնդացիր: Ընդ որում զինվորական ծառայությունը Հայաստանում պարտադիր չէր լինելու: Երկիրը արտաքին հարձակումից պաշտպանելու համար Հայաստանի կառավարությանը իրավունք էր վերապահվում կառուցել բերդեր (ամրություններ) և այնտեղ տեղադրել անհրաժեշտ քանակությամբ ծանր հրետանի, սակայն պայմանով, որ դրանցում չգործածվեն 15 սանտիմետրից ավելի տրամաչափի հեռահար արկեր¹⁰⁰:

Պայմանագրի 4-րդ հոդվածի տրամաբանական շարունակությունն է կազմում 5-րդը: Այսինքն՝ նախորդ հոդվածի պահանջները որպեսզի չմնան օդից կախված, Թուրքիան Հայաստանում ունենալու էր իր քաղաքական ներկայացուցիչը կամ դեսպանորդը, որը հաշտության կնքումից հետո հաստատվելու էր Երևանում և իր հայեցողությամբ կատարելու էր վերևում նշված պայմաններին համապատասխան տեսչություն և հետաքննություն: Պայմանագրի 4-րդ և էլի մի քանի այլ հոդվածների (կետերի) կենսագործմանը հետևելու նպատակով դեկտեմբերի 2-ին Երևանում թուրքական արևելյան բանակի զինվորական ներկայացուցիչ է նշանակվում կապիտան Բահաեդդինը¹⁰¹:

Պայմանագրի 5-րդ հոդվածով միաժամանակ սահմանվում էր, որ զինաթափված Հայաստանին Թուրքիան իր ծառայությունն էր առաջարկում՝ պարտավորվելով զինված օգնություն ցույց տալ Հայաստանին արտաքին և ներքին վտանգի պարագային և այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը դիմի նման խնդրանքով¹⁰²:

Համեմատության կարգով նշենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի 5-րդ հոդվածի այս հատվածը, ըստ էության, կրկնում է Բաթումի հայ-թուրքական պայմանագրի 4-րդ հոդվածը՝ այն է. «Օսմանյան կայսերական կառավարությունը պարտավորվում էր՝ զենքի ուժով օգնության հասնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը այն դեպքում, երբ վերջինս նրան կխնդրի այդ մասին՝ կարգը և հանգստությունը երկրում ապահովելու համար»¹⁰³:

¹⁰⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 97^բ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15^բ:

¹⁰¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 5, թ. 1:

¹⁰² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 57^բ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15^բ, նաև «Հայաստանը...», էջ 684–685:

¹⁰³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9, թ. 22:

Հարց է ծագում. Հայաստանին արտաքին ի՞նչ վտանգ կարող էր սպառնալ, որ հայկական կողմը դիմեր դրսի օգնությանը, այն էլ ոչ ավել, ոչ պակաս՝ Թուրքիային: Կարելի է ենթադրել, որ երկու կողմն էլ այդ վտանգը հավանաբար տեսնում էին Ռուսաստանից: Եթե Թուրքիան ցանկանում էր կասեցնել խորհրդային հաղթարշավը դեպի հարավ, որը հետագայում կարող էր սպառնալ նաև իրեն, ապա Հայաստանն էլ ուզում էր այսպես թե այնպես պահպանել իր անկախությունը: Պետք է նկատի ունենալ, որ հայ քաղաքական ղեկավար շրջաններում կար նման մտայնություն: Եվ այստեղ նրանց շահերը կարծես համընկնում էին: Սակայն պայմանագրի այս և հետագա հողվածների բովանդակությանը հետևելով՝ դժվար է ասել, թե նման դեպքում Հայաստանի իրական անկախությունից ինչ կմնար: Մյուս կողմից կարելի է ենթադրել, որ Թուրքիան պարզապես պարտադրեց «օգնություն» ցույց տալու պահանջը՝ անկախ նրանից, թե դա Խատիսյանի պատվիրակության սրտով էր, թե՝ ոչ, մանավանդ, որ այդ ժամանակ միջազգային հարաբերություններում գոյություն է ունեցել նման պրակտիկա: Այսպես, օրինակ, 1921 թ. փետրվարի 26-ին խորհրդային Ռուսաստանը Իրանի հետ կնքեց իր բովանդակությամբ, մեր կարծիքով, անիրավահավասար պայմանագիր: Ռուս-թուրքական կոնֆերանսի բացման օրը ստորագրված այդ պայմանագրի 6-րդ հոդվածը նախատեսում էր, որ եթե Իրանը ենթարկվի մի երրորդ ուժի (երկրի) կողմից ներխուժման, կամ նրա տարածքը ռազմական հենակետ դարձնի ՌԱՖԽՅ և նրա դաշնակից հանրապետությունների սահմաններին սպառնալիք ստեղծելու նպատակով, ապա Ռուսաստանի խորհրդային կառավարությունը նախազուլաացումից հետո իրավունք էր ստանում զորք մտցնել Իրանի տարածք¹⁰⁴:

Կնշանակի, որ եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիան կարող էր զորք մտցնել Հայաստան միայն վերջինիս կառավարության հրավերի դեպքում, իսկ ռուս-իրանական պայմանագրի դեպքում՝ անգամ առանց Իրանի կառավարության կամքը հարցնելու: Սակայն ասվածը ամենևին էլ չի մեղմում Ալեքսանդրապոլի պայմանագրի ծանրացուցիչ հանգամանքը: Էլ չենք խոսում, որ մի

¹⁰⁴ ДВП СССР, т. III, М., 1959. с. 538–539, ЗУУ, ф. 114, г. 2, д. 63, р. 15^б, Хейфец А. Н., Советская дипломатия и народы Востока (1921–1927), с.62, Ձոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստան և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922 թթ.), Ե. 1985, էջ 90:

բան է ռուսական զորքի հայտնվելը Իրան, ինչպիսին եղել էր նախկինում, այն կրկնվեց նաև Երկրորդ աշխարհամարտի տարիներին, և միանգամայն այլ բան թուրքական զորքի հայտնվելը Հայաստան, բնականաբար իր ողբերգական հետևանքներով, որի հարուստ փորձը հայտնի է ամենքին:

Առաջ անցնելով կարելի է փաստել, որ, այդուհանդերձ, հանգամանքների թելադրանքով չօրինականացված Ալեքսանդրապոլի պայմանագրի 5-րդ հոդվածից օգտվելու անհաջող փորձ կատարեց Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) նախագահ Ս. Վրացյանը: Հիմք ընդունելով Ալեքսանդրապոլի պայմանագրի պայմանները՝ նա 1921 թ. մարտի 18-ին դիմեց Թուրքիայի ԱՄԺ-ի կառավարության Արևելյան ռազմաճակատի հրամանատարության ներկայացուցիչ կապիտան Բ. Բահադդինին, որում բուլշևիկների դեմ մղվող պայքարում օգնություն էր հայցում Թուրքիայից՝ վերադարձնել հայ ռազմագերիներին, տալ որոշ պայմաններով զենք և ռազմամթերք, ինչպես նաև, եթե հնարավոր է «զինվորական օգնություն» (ընդգծումը մերն է - Ա. Հ): Միաժամանակ արտահայտվում էր հավատարմություն Ալեքսանդրապոլի պայմանագրի պայմաններին¹⁰⁵: Սակայն հայտնի է, որ Ս. Վրացյանի հուսահատական դիմումը այդպես էլ մնաց անպատասխան:

Պայմանագրի 6-րդ հոդվածը վերաբերում էր երկու դաշնադիր կողմերի փախստականների, գաղթականների խնդրի կարգավորմանը: Հոդվածն ամրագրում էր, որ պայմանավորվող կողմերը համաձայնվում են երկու կողմի փախստականների իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու շուրջ, բացառությամբ նրանց, ովքեր աշխարհամարտի տարիներին, ապաստանելով թշնամի բանակներում, կռվել են իրենց կառավարության դեմ կամ էլ մասնակցել են կոտորածներին¹⁰⁶:

Պետք է ասել, որ հոդվածով շահագրգռված են եղել երկու կողմն էլ: Հայկական կողմը շահագրգռված էր նրանով, որ դա հնարավորություն պետք է տար հարյուր հազարավոր բնավեր եղած արևմտահայ գաղթականներին վերադառնալու իրենց նախկին բնակության վայրերը, մանավանդ, որ հոդվածի վերջում ներառված էր մի ենթակետ, որով «դաշնագրող կողմերը պարտավորվում են հայրենիք վերադարձող փախստականներին տալ այն իրա-

¹⁰⁵ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 51, ֆ. 113, ց. 3, գ. 42, թ. 96:

¹⁰⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98, նաև «Հայաստանը ...», էջ 685:

վունքները, որ տրվում են առավել քաղաքակիրթ երկրների փոքրամասնություններին»¹⁰⁷: Թուրքական կողմին, կարծում ենք, առավել հետաքրքրել է արևմտահայ կամավորների ու հայդուկների հայրենիք վերադառնալ արգելելը, թեև մյուս կողմից քիչ չեն եղել նաև անդրկովկասյան թուրք-թաթարներ, ովքեր թուրքական կանոնավոր և հրոսակային խմբերի շարքերում կռվել են Ռուսաստանի ու Հայաստանի Հանրապետության դեմ և մասնակից եղել հայկական ջարդերին:

Հետագայում կտեսնենք, որ թուրքերը ոչ միայն որևէ պարտավորվածություն չվերցրին իրենց կողմից բռնազավթված հայկական տարածքներում հայերի ներգաղթի ու վերաբնակեցման համար, այլև նրանք այնպիսի անհանդուրժելի պայմաններ ստեղծեցին, որ այդ վայրերից հարկադրված արտագաղթեցին դեռևս ծալոված տեղացի հայ ընտանիքներ, անգամ այլ քրիստոնյաներ՝ ռուսներ, հույներ, ասորիներ:

Պայմանագրի 7-րդ հոդվածը դարձյալ վերաբերում էր երկու կողմի փախստականների (գաղթականների) խնդրին, այն 6-րդ հոդվածում նշված փախստականների վերադարձի համար ժամկետային սահմանափակում էր դնում մինչև մեկ տարի՝ սկսած պայմանագրի վավերացումից:

Եվ եթե վերոնշյալ գաղթականները մեկ տարվա ընթացքում չեն վերադառնա իրենց հայրենիք, ապա նրանք կգրկվեն այդ իրավունքից և դրանից հետո նրանց վերադարձի վերաբերյալ ցանկացած պահանջ այլևս անուշադրության կմատնվի¹⁰⁸: Ի դեպ, նշենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի 7-րդ հոդվածը դուրս է մնացել խորհրդային, մասամբ նաև հետխորհրդային ժամանակաշրջանի մի շարք փաստաթղթերի ժողովածուներից ու մեմագրական ուսումնասիրություններից: Այդ բացթողումը գալիս է «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», 1960 թ. փաստաթղթերի և նյութերի ժողովածուից: Հետագա հեղինակները, ինչպես հարկն է, չեն օգտվել Հայաստանի արխիվի համապատասխան ֆոնդերից և մեխանիկորեն կրկնել են հիշյալ ժողովածուում թույլ տրված բացթողումը:

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 58, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 392:

Հենվելով միջազգային իրավունքում ընդունված մարդկայնության սկզբունքների վրա՝ պայմանագրի հաջորդ՝ 8-րդ հոդվածով ԹԱՄԺ կառավարությունը հրաժարվում էր հայ-թուրքական ներկա պատերազմի հետ կապված ծախսերի հատուցումից: Պայմանավորվող երկու կողմերը հրաժարվում էին նաև աշխարհամարտի ժամանակ կրած վնասները հատուցելու ամեն տեսակ պահանջներից¹⁰⁹:

Հասկանալ կարելի է Թուրքիայի հրաժարումը 1-ին աշխարհամարտի տարիներին իր կրած վնասները Հայաստանից հատուցելու մասին պահանջներից: Եթե նկատի առնենք հայ ժողովրդի կրած վիթխարի (1.5 մլն) մարդկային զոհերը և հայկական պատվիրակության կողմից 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացրած արևմտահայության ավելի քան 14 մլրդ ֆրանկ անմիջական նյութական վնասները¹¹⁰, ապա պարզ կլինի, թե ով ումից պետք է պահանջեր կրած վնասների հատուցում: Հայերի ունեցած վնասը ոչ միայն տարածքային ու նյութական էր, այլև մարդկային, հոգևոր ու մշակութային: Ըստ 8-րդ հոդվածի՝ ստացվում է, որ Հայաստանի կառավարությունը հրաժարվում էր հայ ժողովրդին պատճառված վնասների հատուցումից:

Ինչ վերաբերում է նրան, որ թուրք-հայկական վերջին պատերազմի արդյունքում կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիան Հայաստանից ռազմատուգանք չպահանջեց, ապա կարելի է ասել, որ անուղղակի ձևով այն մի քանի անգամ ավելի թանկ հատուցվեց Ալեքսանդրապոլի գավառի վեցամսյա հիմնարար կողոպուտով՝ չխոսելով տասնյակ հազարավոր խաղաղ բնակչության կոտորածների մասին:

Պայմանագրի 9-րդ հոդվածը իրենից ներկայացնում էր, ըստ էության, ոչինչ չասող և ոչինչ չպարտավորեցնող դեկլարատիվ մի հայտարարություն, որով իբրև ԹԱՄԺ կառավարությունը հավաստիացնում էր իր անկեղծ ձգտումը օգնություն և աջակցություն ցույց տալու Հայաստանի կառավարությանը՝ նրա հեղինակության բարձրացման ու ամրապնդման գործում¹¹¹: Սակայն նախորդ և հետագա հոդվածներից այդպես էլ պարզ չի դառնում, թե կոնկրետ

¹⁰⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 16, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98:

¹¹⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, թ. 231:

¹¹¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 16, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98, «Հայաստան ...», էջ 685, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 392:

ինչպես պետք է դրսևորվեր այդ օգնությունն ու աջակցությունը: Ավելին, մի շարք հողվածների առկայությամբ գործնականում Հայաստանը զինաթափելով, այնտեղ զորք և ռազմական միջոցներ ձեռք առնելու արտոնություն ստանալով, երկրի հաղորդակցության ուղիները վերահսկելով և այլն՝ Թուրքիան Հայաստանը ուղղակի դնում էր իրենից կախման մեջ: Ուստի ավելորդ է խոսել Հայաստանի հեղինակության բարձրացման մասին: Եվ եթե պայմանագրի այդ հողվածում խոսք է գնում Թուրքիայի կողմից Հայաստանին օգնություն և աջակցություն ցույց տալու մասին, ապա դրա տակ կարելի է հասկանալ միայն Հայաստանի ներքին գործերին ռազմաքաղաքական միջամտությունը:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 10-րդ հողվածը վերաբերում էր Սևրի պայմանագրի չեղյալ համարելուն և Անտանտի իմպերիալիստական կառավարություններից Հայաստանի կապերի լիակատար խզմանը¹¹²: Ինչպես արդեն ասվել է, Ալեքսանդրապոլի բանակցությունների նախօրյակին թուրքերը Հայաստանի պատվիրակության առաջ նախապայման էին դրել հրաժարվել Սևրի պայմանագրից: Նոյեմբերի 26-ին Հայաստանի կառավարությունը պաշտոնապես հայտարարություն էր ընդունել Սևրի պայմանագրից հրաժարվելու վերաբերյալ: Հասկանալի է, որ թուրքերի համար առանցքային այդ պահանջը պետք է ամրագրվեր պայմանագրում: Դա բավարար չհամարելով՝ պայմանագրի այդ նույն հողվածով Թուրքիան պարտավորեցնում էր Հայաստանի կառավարությանը Եվրոպայից և Ամերիկայից հետ կանչել իր պատվիրակություններին, որպեսզի դրանք «այլևս չդառնան գործիք Անտանտի երկրների ձեռքում¹¹³»:

Հասկանալի է, որ պայմանագրի ստորագրումից առաջ արդեն իշխանությունից հեռացած Հայաստանի Հանրապետության կառավարությունը այլևս իրավական որևէ ուժ չուներ նման հրահանգ տալու:

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո ՀՍԽՍՀ հեղկոմը, կարծես ի կատարումն Ալեքսանդրապոլի պայմանագրի այդ պահանջի, դեկտեմբերի 6-ին ընդունեց դեկրետ, որով վերաց-

¹¹² «Հայաստանը ...», էջ 685, ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 392–393:

¹¹³ Հայաստանը ...», էջ 685, ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 392–393:

վում էին Հայաստանի նախկին կառավարության բոլոր դիվանագիտական ներկայացուցչություններն ու արտասահմանյան միսիաները: ՀՍԽՅ հռչակվելու պահից դրանք կորցնում էին իրենց լիազորությունները¹¹⁴: Բնականաբար խոսքը վերաբերում էր նաև Ա. Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակությանը: Մյուս կողմից նկատենք, որ եթե անգամ չլիներ Ալեքսանդրապոլի պայմանագիրը, միևնույնն է, կվերացվեին նախկին կառավարության բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները և արտասահմանյան առաքելությունները, որովհետև նման բնույթի օրենքների ընդունումը բխում էր խորհրդային իշխանության էությունից:

Թուրքերի պարտադրանքով 10-րդ հոդվածը Հայաստանի կառավարությանը պարտավորեցնում էր ևս մեկ այլ խնդրում, այն է՝ պետական կառավարման համակարգից հեռացնել այն բոլոր անձանց, ովքեր «հետապնդում են իմպերիալիստական նկրտումներ երկու երկրների միջև խաղաղությունը խաթարելու նպատակով»¹¹⁵:

Կարելի է ասել, որ այս խնդրում ևս նորահռչակ խորհրդային կառավարությունը անուղղակի կերպով ակամա կատարեց քեմալականների պահանջը: Հայաստանի խորհրդային կառավարությունը (Հայիեդկոմը), անտեսելով դեկտեմբերի 2-ի՝ Երևանի Լեգրան-Դրո համաձայնագիրը, պետական կառավարման համակարգի գրեթե բոլոր օղակներից ոչ միայն հեռացրեց բոլոր դաշնակցականներին, այլև անմիջապես ձերբակալել տվեց նախկին վարչապետ Հ. Օհանջանյանի Բյուրո-կառավարության անդամներին: Հենց այդ կաթինետի անդամներն էին համարվում առավել անհաշտ «իմպերիալիստական նկրտումներ» ունեցող անձինք: Այն, ինչը թուրքերի պարտադրանքով վիճակված չէր կատարելու արդեն իշխանությունից հեռացած Ս. Վրացյանի կաբինետին, դեպքերի բերումով արեց Հայիեդկոմը: Այնպես որ պայմանագրի այս կետի կատարման ուղղությամբ ևս թուրքերը պետք է գոհ մնային ու շնորհակալ լինեին խորհրդային Հայաստանի կառավարությանը:

Պայմանագրի 11-րդ հոդվածն ամբողջապես վերաբերում էր ՀՀ-ում ապրող մուսուլման բնակչության կրոնական իրավունք-

¹¹⁴ ՀՍԽՅ դեկրետների ու հրամանների ժողովածու, պրակ I, էջմիածին, 1921, էջ 7:

¹¹⁵ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 393, ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, ք. 16^բ:

ների և մշակութային զարգացման ապահովմանը: Հողվածը Հայաստանի կառավարությանը պարտավորեցնում էր ապահովել մահմեդական բնակչության իրավունքները հանրապետության տարածքում և նրանց կրոնական ու մշակութային զարգացման հնարավորությունները, ինչպես նաև արգելք չհանդիսանալ տեղական մուֆթիների ու գլխավոր մուֆթիի ընտրությանը¹¹⁶:

Տարօրինակ է, որ պայմանագրի այս հոդվածում խոսվում է ՀՀ-ում մուսուլման բնակչության կրոնական, համայնքային իրավունքների պետական մակարդակով պաշտպանության մասին, մինչդեռ փոխադարձաբար ոչ մի խոսք ու հիշեցում չկա օսմանյան պետությունում ավրոդ ազգային փոքրամասնություն համարվող հայերի ազգային-կրոնական իրավունքների պաշտպանվածության մասին: Սա մեկ անգամ ևս ցույց է տալիս պայմանագրի անիրավահավասար, միակողմանի և չհավասարակշռված լինելու փաստի մասին: Կարելի է վստահ ասել, որ Հայաստանի պատվիրակությունը, ըստ էության, մասնակից չի եղել պայմանագրի հոդվածների քննարկմանը և խմբագրմանը: Կարել է պնդել, որ թուրքական պատվիրակությունը հայ պատվիրակներին պարտադրել է նախապես իրենց կազմած պայմանագրի նախագիծը:

Նկատենք նաև, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի 11-րդ հոդվածը որոշակի նմանություն ունի Բաթումի հաշտության պայմանագրի 6-րդ հոդվածի հետ: Վերջինում դարձյալ միակողմանիորեն խոսվում էր ՀՀ-ում մահմեդականների կրոնը, քաղաքացիական իրավունքները և սովորույթները հարգելու, մահմեդական համայնքների, մզկիթների և այլ հաստատությունների շարժական ու անշարժ գույքի պահպանության, մուֆթիների անարգել ընտրության և այլնի վերաբերյալ¹¹⁷:

Պայմանագրի հաջորդ 12-րդ հոդվածը իր ծավալով ամենաընդարձակն էր: Այն վերաբերում էր հաղորդակցության, տարանցիկ բեռնափոխադրումների, մարդկանց մեկ երկրից մյուսն անցնելու և համանման այլ խնդիրների կարգավորմանը: Ի դեպ, Ալեքսանդրապոլի պայմանագրի այդ հոդվածն էլ բավականին ընդհանրություն ունի Բաթումի 8-րդ և 10-րդ հոդվածների հետ¹¹⁸:

¹¹⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 16^բ: «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 393:

¹¹⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9, թ. 3–4:

¹¹⁸ Նույն տեղում, թ. 5:

Պայմանավորվող կողմերը պարտավորվում էին դյուրություններ տալ երկաթուղիներով և այլ ճանապարհներով մարդկանց և ապրանքների անադճել ու անմաքս մեկ երկրից մյուսը տեղափոխելու համար: Մասնավորապես, Հայաստանի կառավարությունը պարտավորվում էր հրաժարվել տարանցիկ մաքսերի գանձումից այն բոլոր բեռներից, որոնք Թուրքիայից Հայաստանի վրայով փոխադրվելու էին Ադրբեջան, Պարսկաստան, Վրաստան և հակառակը: Դրա դիմաց ԹԱՄԺ կառավարությունը պարտավորվում էր Շարուր-Նախիջևան-Շահթախթի և Ջուլֆայի վրայով Հայաստանին տրամադրել ազատ տրանզիտ դեպի Պարսկաստան, մասնավորապես՝ Մակու¹¹⁹:

Հիշեցնենք, որ 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի հայ-ռուսական (Ջամալյան-Լեգրան) համաձայնագրով Հայաստանի տնօրինությանն էր հանձնվել Նախիջևանի երկաթգծի Շահթախթի-Ջուլֆա հատվածի շահագործման իրավունքը¹²⁰: Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից հետո էլ Հայաստանը փորձում էր շարունակել երկաթուղու այդ հատվածի շահագործումը, ինչը, սակայն, առաջ էր բերել Նախիջևանի թուրք-թաթարական իշխանությունների դժգոհությունն ու բողոքը:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 12-րդ հոդվածի վերջում ֆիքսվում էր նաև թուրքերի կողմից ներկայացված այն պահանջը, որ Թուրքիային տրվում էր Հայաստանի երկաթուղիներն ու ճանապարհները վերահսկելու իրավունք, որպեսզի պահպանվի սույն պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված Հայաստանի զենքի ներմուծման նորման, ինչպես նաև արգելվի Անտանտի երկրների կառավարությունների ներկայացուցիչների պաշտոնական և ոչ պաշտոնական մուտքը Հայաստան¹²¹:

Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրուցիչ պայմաններից մեկը 13-րդ հոդվածն է: Որպեսզի ընթերցողը լավ հասկանա նրա իմաստը, մեջ ենք բերում ամբողջությամբ. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը, չխախտելով ներկա պայմանագրով Հայաստանին վերապահված իրավունքները, իրավունք կունենա Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանա-

¹¹⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 16^բ:

¹²⁰ «Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.)», էջ 248:

¹²¹ ՀԱԱ., ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 98–99: «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 393:

կավորապես ձեռք առնել ռազմական միջոցներ»¹²²:

Այդ հողվածով Թուրքիան իրեն իրավունք էր վերապահում ռազմական միջոցառումներ իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում առանց նշելու որևէ պատճառ-նախադրյալի առկայություն, ինչը կարող էր հիմք ծառայել նրան այդպիսի քայլի դիմելու համար: Դա ՀՀ ինքնիշխանությունը (սուվերենիտետ) կոպիտ, չհիմնավորված կերպով խախտելու իրավունք տվող հողված է, որը հակասում էր անգամ այն ժամանակ միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին, և բոլորովին նշանակություն չունի հողվածում տեղ գտած այն ձևակերպումը, թե Թուրքիան նշված պայմանագրով Հայաստանին վերապահված իրավունքները չխախտելով է ձեռք բերում իր այդ իրավունքը: Հիշեցնենք, որ Սերբիան թույլ չտվեց (1914 թ.) Ավստրո-Հունգարիային իր տարածքում դատառոտիկանական գործողություններ իրականացնել, որովհետև միջազգային պայմանագրերում չպետք է տեղ գտնեին միջազգային իրավունքի սկզբունքները այդպես կոպտորեն խախտող պայմաններ:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 14-րդ հողվածը սահմանում էր. «Հայաստանի կառավարությունը չեղյալ է համարում այն բոլոր պայմանագրերը, որոնք կարող էին կնքվել և առնչվել Թուրքիային, ինչպես նաև այն բոլոր պայմանագրերը, որոնք կնքվել են ի վնաս Թուրքիայի շահերի»¹²³: Հողվածից կարելի է հասկանալ, որ խոսք է գնում նաև գաղտնի պայմանագրերի մասին:

Այստեղ կրկին աչք է ծակում կողմերի համար հողվածի միակողմանի լինելը: Առանձին՝ 10-րդ հողվածով Սևրի պայմանագիրը չեղյալ հայտարարելուց զատ թուրքական կողմը Հայաստանին պարտադրում էր անվավեր ճանաչել Թուրքիայի հետ առնչություն ունեցող և նրա շահերին վնասող բոլոր պայմանագրերը: Դժվար է ասել, թե ՀՀ կառավարությունը Թուրքիայի շահերին ուղղակի հակասող գաղտնի կամ ոչ գաղտնի պայմանագիր կնքած լինի, եթե նկատի չառնենք հույների, անգլիացի գեներալների կամ Դենիկիների հետ կայացրած մի քանի համաձայնությունները, որոնք վերաբերել են նախ Հայաստանի անվտանգության ապահովմանը՝ զենքի, պարենի և այլնի ձևով:

¹²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 99, «Հայաստանը ...», էջ 686, Շահան, «Վերստին Յավելուած» Ալեքսանդրապոլի դաշնագրի, էջ 23-25:

¹²³ «Հայաստանի Հանրապետությունը (1918-1920 թթ.)», էջ 393, «Հայաստանը ...», էջ 687:

Ինչ վերաբերում է քեմալական Թուրքիային, ապա պետք է փաստել, որ 1919-1920 թթ. նրա կնքած գաղտնի պայմանագրերը Ադրբեջանի ու Վրաստանի հետ իրենց սուր ծայրով ուղղված էին Հայաստանի դեմ: Թուրքիան պարտավորեցնում էր Հայաստանին չեղյալ համարել իր շահերին հակասող պայմանագրերը, մինչդեռ Հայաստանի ու հայ ժողովրդի գոյությանը սպառնացող, նրա կողմից կնքված գաղտնի պայմանագրերի մասին լռում է:

Եվ վերջապես կարծում ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրում առնվազն պետք է իր ուժը կորցրած համարել Բաթումի հայ-թուրքական պայմանագիրը, մանավանդ, որ նրա շատ հողվածներ որոշ խմբագրմամբ կրկնվում են այստեղ, թեև իրավական առունով ի սկզբանե այն ուժ չի ունեցել, որովհետև չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի խորհրդարանների կողմից:

Պայմանագրի հաջորդ՝ 15-րդ հոդվածը վերաբերում էր երկկողմ առևտրական հարաբերությունների վերականգնմանը և դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցիչների փոխանակմանը¹²⁴: Սույն հոդվածը կարելի է համարել Բաթումի պայմանագրի 7-րդ հոդվածի ավելի համառոտ, կոնկրետ ու հստակեցված տարբերակը¹²⁵: Հոդվածն իր բովանդակությամբ երկու կողմի համար էլ հավասարակշռված է, այլ հարց է, թե այն ինչպես գործադրվեց:

Նույնը կարելի է ասել Ալեքսանդրապոլի պայմանագրի 16-րդ հոդվածի մասին, որը իրենից ներկայացնում է Բաթումի պայմանագրի 8-րդ և 9-րդ հոդվածների առավել մշակված ու հստակեցված տարբերակը¹²⁶:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 16-րդ հոդվածում խոսվում էին փոստային, հեռագրական, հեռախոսային և հյուպատոսական կոնվենցիաների կնքման, պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո հարևան երկրների միջև երկաթուղային, փոստային և հեռագրական կապի վերասկսման մասին¹²⁷: Վերոնշյալ հոդվածն իր բովանդակությամբ կարելի է ասել, որ լիովին համապատասխանում է միջազգայնորեն ընդունված կանոններին՝ պատերազմի

¹²⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 99, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 393:

¹²⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9, թ. 4:

¹²⁶ Նույն տեղում, թ. 5:

¹²⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 99, ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 17:

ավարտից ու հաշտության կնքումից հետո միջպետական նորմալ կենսագործունեություն հաստատելու նպատակով:

Պայմանագրի նախավերջին՝ 17-րդ հոդվածը առնչվում էր պայմանագրով Հայաստանին մնալիք տարածքներից թուրքական զորքի տեղափոխման, ռազմագերիների և տեղահանված քաղաքացիների փոխանակության խնդիրներին: Սույն հոդվածը ընդհանրություն ունի Բաթումի պայմանագրի 13-րդ հոդվածի հետ, բայց ավելի որոշիականացված ու հայկական կողմին պարտադրված կերպով¹²⁸: Մասնավորապես, Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին թողնվելիք տարածքներից թուրքական զորքի պարպումը (հեռացումը) պայմանավորվում էր Հայաստանի կողմից սույն պայմանագրի կետերի գործադրմամբ: Այդ էր պատճառը, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ բավականին ժամանակ թուրքերը չէին հեռանում Հայաստանի ռազմակալած շրջաններից: Այդ վիճակը շարունակվեց մինչև 1921 թ. ապրիլ ամիսը, մինչև որ ՌՍՖՍՀ կառավարությունը կտրուկ պահանջեց, որ թուրքերը դատարկեն ռազմակալած Ալեքսանդրապոլի գավառը և հարակից մի քանի տարածքներ:

Եվ վերջապես, պայմանագրի վերջին՝ 18-րդ հոդվածը, որը, միջազգային պայմանագրային իրավունքի սկզբունքի համաձայն, վերաբերում է պայմանագրի վավերացման կարգին և տվյալ պետությունների կառավարությունների կողմից լիազորված մարդկանց ստորագրությանը: Պայմանագիրը, որը կազմված է եղել երկու օրինակից՝ ֆրանսերեն և թուրքերեն, 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը (պայմանագրի մեր ձեռքի տակ եղած հայերեն և ռուսերեն պատճեն-օրինակներում նշված է դեկտեմբերի 2) ստորագրել են երկու կողմի երեքական լիազորված անձինք, թեև, ինչպես արդեն քննել ենք, դժվար է ասել, թե Հայաստանի պատվիրակությունը պահպանել էր իր լիազորությունը: Հոդվածում ֆիքսված է, որ պայմանագիրը վավերացվում է մեկ ամսվա ընթացքում և վավերացված օրինակները պետք է փոխանակվեն Անգորայի մեջ¹²⁹: Առաջ գնալով՝ ասենք, որ այն չվավերացվեց ոչ մեկ ամսվա ընթացքում և ոչ էլ հետագա ամիսներին, որովհետև Հայաստանի

¹²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9, թ. 5:

¹²⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 99, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 17, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ)», էջ 394, Շահան, «Վերստին Յավելուած» Ալեքսանդրապոլի դաշնագրի, էջ 27:

Հանրապետության անկմամբ և Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՅ) հռչակմամբ արմատապես փոխվեց քաղաքական իրադրությունը: Այժմ արդեն Խորհրդային Հայաստանի կառավարությունը (Հայիեդկոմը) ամենևին էլ պարտավորված չէր ո՛չ ճանաչելու, ո՛չ վավերացնելու և ո՛չ էլ գործադրելու նախկին՝ դաշնակցական կառավարության պատվիրակության ստորագրած Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Նա մտորում էր Ռուսաստանի օգնությամբ Թուրքիայի հետ նոր պայմանագիր կնքելու մասին:

Անշուշտ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ միայն իրավահավասար չէր, այլև Հայաստանի համար ստորացուցիչ էր ու նվաստացնող: Բայց մյուս կողմից այն պարտադրվեց Հայաստանին պատերազմի արդյունքում կրած ծանր պարտության հետևանքով: Պայմանագրի մի շարք հոդվածներ չեն տեղավորվում միջազգային իրավունքի նույնիսկ այն ժամանակվա գոյություն ունեցող սկզբունքներում ու նորմերում:

Պայմանագրի հոդվածների ճնշող մեծամասնությունը կազմված է միակողմանիորեն և մի կողմին միայն պարտադրում է պայմանների կատարում: Պայմանագրի մի շարք հոդվածներ էլ նախատեսում էին Հայաստանի զինաթափում և հարկ եղած դեպքում թուրքական զորքերի մուտք Հայաստան: Սա ինքնին նշանակում է պետության ինքնիշխանության (սուվերենության) կորուստ: Պայմանագրի լիարժեք գործադրման դեպքում կարելի է ասել, որ Հայաստանը քաղաքական կախման մեջ էր դրվում Թուրքիայից:

Շատ ավելի աղաղակող էր պայմանագրով որոշված հայ-թուրքական սահմանային խնդիրը, որի մասին, ինչպես արդեն ասվել է, կխոսվի հաջորդ ենթագլխում:

3. ՀԱՅ-ԹՈՒՐԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ԸՍՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Հայաստանի պարտությունը պատերազմում ինքնըստինքյան նշանակում էր առաջին հերթին տարածքային կորուստ, առավել ևս, եթե պարտված կողմը բանակցությունների ժամանակ չի կարողանում դրսևորել ամհրաժեշտ դիվանագիտական ճկունություն:

Ինչպես արդեն ասվել է, պայմանագրի 2-րդ և 3-րդ հոդվածները վերաբերում էին հայ-թուրքական տարածքային-սահմանային հարցերին:

ՀՀ և ԹԱՄԸ կառավարությունների պատվիրակությունների կողմից ստորագրված Ալեքսանդրապոլի պայմանագրով որոշվում էր ՀՀ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը: Սակայն քանի որ ստորագրման պահից Հայաստանը արդեն խորհրդայնացել էր, ուստի ինքնաբերաբար այդ սահմանը դարձավ ՀՍԽՂԹուրքիայի սահման: Բայց, դրա հետ մեկտեղ, քանի որ ստորագրված պայմանագիրը այդպես էլ ոչ մի կողմ չի վավերացրել ու ճանաչել, ուստի պայմանագրով նշագծված սահմանը գործնականում չի գծվել և չի ունեցել որևէ իրավական ուժ ՀՍԽՂ համար: Այդուհանդերձ, որպես պատմական փաստաթուղթ, հարկ ենք համարում անդրադառնալ հայ-թուրքական սահմանային խնդրին, որովհետև Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված սահմանը մեծ ընդհանրություն ունի հետագայում կնքված Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի և Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրերով ու դրանց հավելվածներով գծված հայ-թուրքական սահմանագծին:

Հայաստանի ազգային արխիվում պահվող Ալեքսանդրապոլի պայմանագրի հայերեն և ռուսերեն տարբերակների 2-րդ հոդվածով հայ-թուրքական սահմանագծի նշումը սկսվում էր հարավից (ի տարբերություն Բաթումի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, որոնց ժամանակ սահմանագիծը սկսվում էր հյուսիսից), այն տեղից, ուր Ստորին կամ Ներքին Ղարասու (Սև ջուր) գետը թափվում է Արաքսի մեջ, որտեղից Արաքս և Ախուրյան գետերի հունով ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում Թիխնիս (Տիխնիս) գյուղի հյուսիսարևմտյան մասով, հետո՝ Մեծ Ղմլու կամ Կմլի գյուղից արևմուտք, Ղըզըլ-դաշից (Կարմրաքար) դարձյալ արևմուտք

մինչև Մեծ Աղբաբա (Մեծ Եղնասար) լեռը¹³⁰:

Ինչպես տեսնում ենք, հայ-թուրքական սահմանագիծը չի հասցված մինչև հայ-վրացական սահման, որը համարվում է Ուչ Թափալար (Եռակատար) լեռը, այլ այն հասցվել է մինչև Մեծ Աղբաբա լեռը: Այս առնչությամբ ճիշտ է նկատել պատմաբան-քարտեզագետ Բ. Հարությունյանը, որ դրա պատճառն այն էր, որ թուրք-հայկական պատերազմի փուլում վրացական զորքը, անշուշտ, թուրքական կողմի համաձայնությամբ ռազմակալել էր Արդահանի գավառի Գյուլի և Չըլդըրի տեղամասերը: Ուստի Ալեքսանդրապոլի պայմանագրում Մեծ Աղբաբա լեռնագագաթից մինչև Ուչ Թափալար լեռը ընկած հատվածը գոնե առժամանակ, թուրքերի կողմից դիտվում էր որպես հայ-վրացական սահմանագիծ¹³¹:

Պայմանագրի 2-րդ հոդվածում նշված հայ-թուրքական սահմանագծի համառոտ նկարագրությունից երևում է, որ Ախուրյան գետից մինչև Մեծ Աղբաբա լեռը ընկած հատվածում սահմանագիծը անցել է Թիխնիս, Մեծ Ղմլու և Ղըզըլ-դաշ գյուղերից դեպի հյուսիս-արևմուտք կամ արևմուտք գծով: Կնշանակի, որ հիշյալ գյուղերը մնալու էին Հայաստանի սահմաններում: Իհարկե, Շորագյալի տեղամասի Թիխնիսը և Ղմլուն եղել են երկուական գյուղեր՝ Մեծ և Փոքր անվանումներով: Քարտեզագետ Բ. Հարությունյանի տեղադրմամբ Ախուրյանի աջ ափին գտնվող հայաբնակ Մեծ Թիխնիսը անցել է Թուրքիային, իսկ ձախափնյա մուսուլմանաբնակը՝ Հայաստանին: Նույն կերպ, դեպի հյուսիս-արևմուտք ընկած Մուրադ-չայ և Ղմլու գետերի ջրբաժանում գտնվող Մեծ Ղմլու գյուղը թողնվում է Հայաստանին, իսկ Փոքր Ղմլուն՝ Թուրքիային¹³²: Ինչ վերաբերում է Ղըզըլ-դաշ գյուղին, ապա այն գրեթե անփոփոխ (հետագա երկու՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով ևս) թողնվել է Հայաստանին:

Ըստ Շահան Նաթալիի՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի թուրքերեն տարբերակից արված թարգմանության տվյալների՝ 2-րդ հոդվածով և հարակից քարտեզով հայ-թուրքական սահմանը դարձյալ սկսվում էր հարավից՝ Արաքս թափվող Ներքին Ղարասուի

¹³⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93, ֆ. 114, ց. 2, գ. 13, թ. 100, գ. 63, թ. 15, «Հայաստանը ...», էջ 684:

¹³¹ Հարությունյան Բ., Երկու ճշգրտում (տես Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Ե., 2001, էջ 72):

¹³² Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 72:

(Աև ջուր) գետաբերանից (խառնվելու տեղից), այնուհետև Արաքս և Արփաչայ գետերի հունով ձգվում է հյուսիս՝ մինչև Գեղաչ, այնտեղից էլ Կավախանի (Գարահանի) կիրճով (ծորով), Արևելյան Թիխնիս, Արևելյան Ղմլու և Ղըզըլ-դաշ գյուղերով մինչև Մեծ (Բեռյուք) Աղբաբա լեռը¹³³: Սահմանը գծվել է 1 դույմը 5 վերստ մասշտաբով 1908 թ. քարտեզի վրա:

Բերված սահմանագծի երկու տարբերակների համեմատություները ցույց է տալիս, որ թեև սահմանային կետերի անվանումների միջև կա որոշ տարբերություն, սակայն սահմանագիծն, ըստ էության, անցնում է նույն վայրերով և հիմնականում համընկնում: Ընդհանուր հաշվով Հայաստանի Հանրապետությունից Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Սուրմալուի գավառն անցնում էր ամբողջությամբ, իսկ Կարսի մարզը՝ աննշան սահմանային խմբագրմամբ:

Ինչպես արդեն ասվել է, Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ հայկական պատվիրակությանը հաջողվեց Հայաստանի սահմանի մեջ ներառել Աղբաբայի (Ամասիայի) գավառակից 600 քառ.կմ եռանկյունի մի տարածք: Նախկինում այդ եռանկյունի հողակտորը շուրջ 40 տարի գտնվել է Կարսի մարզի Կարսի օկրուգի վարչատարածքում: Հայաստանի Հանրապետությանը անցած այդ ենթաշրջանի գյուղերի թիվը անցնում էր 20-ից: Վարչական կենտրոնն էր Ամասիա ավանը:

Այդ հողակտորի՝ միացման նախադրյալները հետևյալն էին: Նախ այդ եռանկյունի տարածքը ընկած է Ախուրյան գետի վերին հոսանքի շրջանում և գետով սահմանագծման կարիք չկար: Բացի այդ՝ կառավարչական, ռազմավարական և տնտեսական կապի տեսակետից այդ հողահատվածը ավելի կապված էր Ալեքսանդրապոլի գավառի հետ:

Ինչպես հայտնի է, 1920 թ. մայիսի 25-ին ՀՀ նոր վարչական բաժանումով, երբ ստեղծվեցին 4 նահանգներ, ռազմավարչական տեսակետից նպատակահարմար գտնվեց Ալեքսանդրապոլի գավառի հյուսիսարևմտյան մասում գտնվող և Կարսի նահանգի մեջ մտնող այդ եռանկյունի տարածքը միացնել Շիրակի նահանգին: Այդ հողակտորը հարավից սկսվում էր այն կետից, ուր իրար

¹³³ Նաթալի Շ., Երեք դաշնագրեր, Արարատ մատենաշար, թիվ 24, Բեյրութ, 1957, էջ 15, Շահան, «Վերստին Յավելուած» Ալեքսանդրապոլի դաշնագրի, Բոստոն, 1955, էջ 13:

են միանում (միախառնվում) Կարսչայ և Արփաչայ (Ախուրյան) գետերը և այդտեղից եռանկյունաձև ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք մի կողմով մինչև Ախալքալաքի սահմանը, իսկ մյուսում՝ Չըլդըր լճի հարավային ափը՝ կազմելով (սուրանկյուն) եռանկյունի¹³⁴: Տարածքային այդ փոփոխությունը արվել էր Ալեքսանդրապոլի ինքնապաշտպանության նպատակով: Վարչատնտեսական առումով Աղբաբայի գավառակը կապված էր Շիրակի նահանգի հետ: Ուստի Ալեքսանդրապոլի հաշտության բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը ի վերջո համաձայնվեց հայերի առաջարկած սահմանային այս մասնակի փոփոխությանը (ուղղմանը): Չնայած Ալեքսանդրապոլի պայմանագրով այդ եռանկյունի տարածքը ևս Ալեքսանդրապոլի գավառի հետ միասին զինակալվեց թուրքերի կողմից, սակայն պայմանագրով և գծված սահմանով այն համարվում էր Հայաստանի սահմանների մեջ մտնող տարածք:

Ասվածին հավելենք նաև այն հանգամանքը, որ էթնիկ առումով այդ տարածքի վրա բնակվելիս են եղել պարսկահպատակ մահմեդականներ: 1920 թ. ապրիլին հայ-իրանական բանակցությունների արդյունքով Աղբաբայի շրջանի 16 գյուղերի պարսկահպատակ բնակիչներ (մոտ 9000 մարդ) որոշ դժվարություններով գաղթեցվեցին Պարսկաստան¹³⁵: Այդ նշանակում է, որ թուրքական կողմը չէր կարող տեղի մահմեդականներին պաշտպանելու պատրվակով նշված հողատարածքը Հայաստանին չզիջելու պատճառաբանություններ անել:

2-րդ հողվածը նախատեսում էր կողմերի միջև վերջնական սահմանագծումն անցկացնել տեղում՝ հայ-թուրքական խառը հանձնաժողովի միջոցով պայմանագիրը ստորագրելուց երկու շաբաթ հետո¹³⁶: Սակայն առաջ անցնելով ասենք, որ քաղաքական իրադրությունը և հանգամանքները այնպես էին փոփոխված, որ պայմանագրի ստորագրումից հետո սահմանագծման նման հանձնաժողով չստեղծվեց: Նորահռչակ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ամենևին էլ մտադիր չէր դաշնակցականների

¹³⁴ Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), Ե., 1998, էջ 313:

¹³⁵ Զոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920–1922 թթ.), էջ 45:

¹³⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15, ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 28, թ. 5, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ)», էջ 391:

ստորագրած պայմանագրին իրավական ուժ տալ և այն գործադրել:

Պայմանագրի 2-րդ հոդվածի 2-րդ հատվածը վերաբերում էր Հայաստանի և Նախիջևանի երկրամասի (նկատի էին առնվում Նախիջևանի, Շարուրի և Շահթախթի շրջանների) միջև անցկացվելիք սահմանագծի նկարագրությանը: Խնդիրն այն է, որ նույն հոդվածով Նախիջևանի մարզը ժամանակավորապես անցնում էր Թուրքիայի հովանավորության տակ: Ուստի անհրաժեշտ էր համարվել սահմանազատում կատարել Հայաստանի և Նախիջևանի միջև:

Հոդվածում ասվում է՝ «Սահմանը Շարուր-Նախիջևանի և Շահթախթի շրջաններում անցնում է Կուլքի-դաղից (10282), նրանից հարավ գտնվող 8272 բարձունքով, Քամասա (Կամասար) (8160) լեռով դեպի Ղուրդ-Ղուլաղ գյուղը, որտեղից՝ Սայաթ կամ Սահաթ լեռը (7868), այնուհետև 3680 կետից Արփաչայով (նկատի ունի Արփա գետը - Ա. Հ.) 3080, Քյոմուրլու լեռը 6930, Սարայ-բուլաղ (8711), այնտեղից դեպի Արարատ կայարանը, որտեղից էլ՝ մինչև այն կետը, ուր Ղարասու գետը թափվում էր Արաքսի մեջ¹³⁷:

Ինչպես տեսնում ենք, հարավ-արևելքում սահմանը Հայաստանի և ժամանակավորապես Թուրքիայի հովանավորության տակ անցած Նախիջևանի երկրամասի միջև սկսվում էր հյուսիսից՝ Կուլքի դաղ լեռից: Փաստորեն Ջանգեզուրի և Նախիջևանի միջև սահմանագիծ չի նշված: Այս կապակցությամբ դարձյալ ճիշտ է նկատում Բ. Հարությունյանը, որ Կուլքից հարավ և արևելք ընկած հողերը թուրքերը դիտում էին որպես թուրք-ադրբեջանական տարածք, ուստի ավելորդ են համարել այստեղ Հայաստանի հետ սահմանագիծ անցկացնել¹³⁸:

Պայմանագրի նույն հոդվածով ամրագրվում էր, որ Հայաստանի իրավասությունից դուրս գտնվող Նախիջևանի, Շարուրի և Շահթախթի շրջաններում, ուր հետագայում հանրաքվեի միջոցով կհաստատվեր հատուկ վարչություն, Հայաստանը պարտավորվում էր չմիջամտել այդ վարչակարգին, ինչպիսի ձև էլ որ այն ընդուներ:

¹³⁷ Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 93, ֆ. 114, ց. 2, գ. 63, ք. 15, «Հայաստանը...», էջ 684, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ)», էջ 391, տես նաև Հայաստանի ազգային ատլաս, Ե., 2008, էջ 110, Շահան, «Վերստին Յավելուած» Ալեքսանդրապոլի դաշնագրի, էջ 13:

¹³⁸ Հարությունյան Բ., Երկու ճշգրտում (Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, էջ 73):

Այդ շրջանները, ինչպես ասվեց, ժամանակավորապես պետք է մնային Թուրքիայի պաշտպանության տակ¹³⁹: Բերված սահմանագծի նկարագրությունից դժվար չէ նկատել, որ թուրք-հայկական պատերազմի արդյունքով թուրքական զորքը ռազմակալել էր Նախիջևանի երկրամասը (Շարուր-Շահթախթի-Նախիջևան) նաև Դարալագյազից (Եղեգնաձոր) հարավային մի հատված և Երիվանի (Երևանի) գավառի հարավարևելյան եռանկյունի մի հատված՝ ընկած Արարատ կայարանից մինչև Գայլի դրունք (Արագոդայան) կոչված վայրը: Արագոդայան-Արարատ կայարանների միջև ընկած հատվածը հայտարարվել էր չեզոք գոտի: Ք. Կարաբեքիրի նոյեմբերի 29-ի գրություններից մեկի համաձայն՝ թուրքական զորքը չէր անցնելու Սուլթան բեկ-խաչիկ-Գաբակ դաղ բլուրը և Արագոդայան կայարանը¹⁴⁰: Հետագայում՝ սահմանագծումից հետո, երիվանի գավառի այդ հատվածը և Շարուրի մի մասը անցավ Հայաստանին:

Հարկ է փաստել, որ չնայած Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրով Նախիջևանը՝ իբրև հայադրբեջանական վիճելի տարածք, անցնում էր ռուսական կարմիր բանակի ժամանակավոր հսկողության տակ, սակայն Խորհրդային Ռուսաստանը գործնականում անտարբեր գտնվեց նաև Նախիջևանի հարցում: Նախիջևանը նրան հետաքրքրում էր միայն որպես տրանզիտ Թուրքիայի հետ կապվելու համար: Այդ էր պատճառը, որ 1920 թ. օգոստոսին համաձայնվեց, որ թուրքերը գրավեն Սարիղամիշ-Շահթախթի գիծը, այսինքն՝ ճանապարհ՝ մտնելու Նախիջևան: Լեգրանը Գ. Օրջոնիկիձեին ուղղված նոյեմբերի 28-ի ռադիոգրում տեղեկացնում էր, որ թուրքերը հայկական հրամանատարությունից պահանջել են զորքերը հետ քաշել Շահթախթի կայարանին հարող շրջանից և Շարուրի գավառի հարավարևելյան մասից¹⁴¹: Այս առնչությամբ Լեգրանը քննադատում էր Բ. Մդիվանու կրավորական կեցվածքը. «Նա գտնվում է թուրքերի պլանների ազդեցության տակ»¹⁴²: Ճիշտ էր նկատում Լեգրանը, որ «Թուրքերը Նախիջևանը ազատում են իրենց համար»¹⁴³: Գտնում ենք, որ Ռու-

¹³⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 93, ֆ. 114, ց. 2, գ. 13, ք. 100, «Հայաստանը», էջ 684, «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ)», էջ 391:

¹⁴⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 636, ք. 94:

¹⁴¹ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 263.

¹⁴² Նույն տեղում, էջ 263:

¹⁴³ Նույն տեղում, էջ 267:

սաստանը՝ իբրև այդ տարածքի անվտանգության երաշխավոր, չպետք է թույլ տար թուրքական զորքի մուտքը Նախիջևանի մարզ: Կարծում ենք՝ Ալեքսանդրապոլի բանակցություններում նվազագույնը չպետք է քննարկվեր Նախիջևանի հիմնախնդիրը, որովհետև, ինչպես արդեն ասվեց, հայ-ռուսական համաձայնագրով այն գտնվում էր Ռուսաստանի հսկողության ներքո, իսկ եթե այդ խնդիրը քննարկվելու էր, ապա դրան պետք է մասնակցեր նաև Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Սդիվանին: Ցավոք, իրավաքաղաքական այս մանրամասնություններն անտեսվել են կոնֆերանսում:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 3-րդ հոդվածը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությունից Թուրքիային անցնող տարածքներում հանրաքվե անցկացնելու խնդրին: Հոդվածն ամրագրում էր. «Թուրքիայի ԱՄԺ կառավարությունը 2-րդ հոդվածում մատնանշված նախկին և ներկա սահմանների միջև ընկած շրջաններում, որոնք ներկա պայմանագրով զիջվում են Թուրքիային և վերջինիս հետ ունեն պատմական, էթնիկական և իրավական անվիճելի կապ, Թուրքիայի կառավարությունը իրավունք է վերապահում անցկացնելու հանրաքվե, եթե Հայաստանի Հանրապետությունը կցանկանա այդպիսին կատարել սույն պայմանագրի վավերացումից հետո երեք տարվա ընթացքում: Հանրաքվեի ձևը պիտի որոշի խառը հանձնաժողովը»¹⁴⁴:

Պայմանագրի «2-րդ հոդվածով մատնանշված նախկին ու ներկա սահմանների միջև ընկած շրջաններ» ասելով՝ նկատի էին առնվում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Հիշեցնենք, որ Սուրմալուն բնավ չէր մտնում թուրքական «Ազգային ուխտի» պահանջում: Այն, հակառակ 3-րդ հոդվածի պնդումներին, պատմական և իրավական տեսակետից ոչ միայն վիճելի էր, այլև առհասարակ որևէ կապ ու առնչություն չի ունեցել օսմանյան Թուրքիայի հետ, որովհետև պատմականորեն և իրավաբանորեն Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանից անցել էր ռուսական տիրապետության տակ, Իսկ Ռուսական կայսրության փլուզումից հետո մտել Հայաստանի Հանրապետության կազմում:

Բայց և այնպես դեռևս բանակցությունների ժամանակ և հայ-թուրքական սահմանի վերաբերյալ թուրքերի ներկայացրած նախագծով թուրքական պատվիրակությունը պահանջ էր դրել Կարսի

¹⁴⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 93:

մարզը և Սուրմալուի գավառը (ընդամենը 20,7 հազար քառ.կմ տարածքով) Թուրքիային անցնելու մասին: Եվ դա «հիմնավորվում էր» իբրև այդ շրջանների «Թուրքիայի հետ անվիճելի պատմական, էթնիկական և իրավաբանական կապերով»¹⁴⁵: Չարմանալ կարելի է, թե Սուրմալուի գավառը Թուրքիայի հետ պատմական և իրավական ինչ կապերի մասին կարող է խոսք լինել, երբ այդ գավառը երբևէ չի գտնվել Օսմանյան կայսրության կազմում: Հավանաբար այդ էր պատճառը, որ Սուրմալուն չէր մտնում թուրքական «Ազգային ուխտով» նախատեսված տարածքային պահանջի մեջ, որովհետև արևմուտք է տարածքային պահանջ ներկայացնել մի երկրամասի նկատմամբ, ինչին երբևէ չես տիրել: Նման ձևակերպման տեղ գտնելը պայմանագրում, անշուշտ, մնում է պայմանագիրը ստորագրած հայ պատվիրակության խղճին:

Թուրքերն իրենց իրավունքը Սուրմալուի խնդրում «հիմնավորեցին» միայն նրանով, որ «իրենց հրավիրել են տեղի մահմեդականները՝ իբր պաշտպանելու նրանց հայերի բռնություններից»¹⁴⁶: 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ, չնայած Դրոյի գլխավորած զինուժի՝ Սուրմալուի ճակատի հաջող պաշտպանության, այնուամենայնիվ, թուրքերը զորք մտցրին Սուրմալու և գրավեցին Արաքսի աջ ափը:

Պայմանագրի 3-րդ հոդվածի կապակցությամբ հարկ է կանգ առնել ևս մի հանգամանքի վրա: Դեռևս բանակցային փուլում թուրքերի ներկայացրած պայմանագրի նախագծի 3-րդ հոդվածում տեղ էր գտել մի միտք, որում արձանագրվում էր, որ իբր «Օսմանյան կայսրության սահմանների մեջ գոյություն չի ունեցել մի հողամաս, ուր հայերը մեծամասնություն կազմեն...»¹⁴⁷: Այս առնչությամբ Ալ. Խատիսյանը իր հուշերում պատմում է, որ Ալեքսանդրապոլի դաշնագրի թուրքերեն խմբագրության մեջ տեղ էր գտել «հատուկ կետ մը երրորդ հոդվածի տակ»¹⁴⁸: Այդ հոդվածի վերաբերյալ տարընթերցումներ էին տեղ գտել Թիֆլիսի և Կ. Պոլսի լրագրերի մեջ: Թուրքական պատվիրակությունը պայմանագրի նախագծի երրորդ

¹⁴⁵ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 385.

¹⁴⁶ Սարգսյան Ե. Ղ., Սահակյան Ռ. Գ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, էջ 45:

¹⁴⁷ «Վերջին լուր», Կ. Պոլիս, 22 փետրվարի 1921 թ.:

¹⁴⁸ Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, էջ 314:

հողվածում մտցրել էր հետևյալ կետը. «Ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական, նաև ամբողջ աշխարհի վիճակագրությունը և բոլոր տվյալները ցույց են տալիս, որ ամբողջ թուրքական կայսրության մեջ չկա ոչ մի կտոր հողամաս, ուր հայ բնակչությունը կազմեր մեծամասնություն»¹⁴⁹:

Այնուհետև Խատիսյանը շարունակում է, որ իրենց պատվիրակությունը, զգալով ու տեսնելով, որ այդ կետի միջոցով թուրքերը իրենց համար իրավական ապացույց են ուզում ստեղծել արևմտահայության պահանջների անհիմն լինելու մասին, իրենք վճռականապես հայտարարում են, որ եթե այդ կետը պայմանագրից դուրս չհանվի, ապա պայմանագիրը չի ստորագրվի իրենց կողմից: Թուրքերը, տեսնելով հայերի վճռականությունն այս հարցում, հանում են այդ կետը¹⁵⁰: Այնպես որ ստորագրված պայմանագրում նման կետ չկա: Սակայն այդ հողվածի կապակցությամբ թուրքական, ապա նաև հայկական մամուլում տեղ էին գտել տարընթերցումներ, պայմանագրի առանձին հողվածների միտումնավոր աղավաղումներ: Մասնավորապես թուրքական «Սաբահ» թերթը տպագրել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ պահպանելով թուրքական նախագծում տեղ գտած այդ կետը: Հետագայում էլ «Սաբահ» թերթից այն արտատպվել է թուրքական մյուս, նաև հայկական թերթերում: Ցավոք, այդ թյուրիմացությանը տուրք է տվել նաև Լեոյի նման անվանի պատմաբանը¹⁵¹: Չի բացառվում, որ պայմանագրի թուրքերեն բնագիրը փոփոխված, աղավաղված լինի, որովհետև, ինչպես նշում է Շահան Նաթալին, իր գրքի հրատարակիչների՝ Թուրքիայի արտոգործնախարարության արխիվում լուսանկարած պայմանագրի 1–8 հողվածները եղել են մեքենագիր, իսկ 9–18-ը՝ ձեռագիր¹⁵²:

1921 թ. փետրվարին Կ. Պոլսում եղած ժամանակ Ալ. Խատիսյանը տվել է բանավոր և գրավոր պարզաբանումներ ու ներկայացրել իրական ճշմարտությունը այդ կետի վերաբերյալ¹⁵³, մի խնդիր, որը դաշնակցության դեմ մղվող ինֆորմացիոն պատերազմում

¹⁴⁹ Նույն տեղում:

¹⁵⁰ Նույն տեղում:

¹⁵¹ Լեո, Անցյալից, էջ 456:

¹⁵² Շահան, «Վերստին Յավելուած» Ալեքսանդրապոլի պայմանագրի, Բոստոն, 1955, էջ 9:

¹⁵³ Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 334:

շահարկվում է մինչև օրս:

Ինչ վերաբերում է Կարսի մարզի և Սուրմալուի գավառի էթնիկական կազմին, ապա պետք է նշել, որ 1918 թ. թուրքական առաջին արշավանքից հետո ժողովրդագրական պատկերը կտրուկ փոխվել էր հօգուտ մուսուլմանների: Ստացվել էր այնպես, որ 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ Կարսի մարզից, Սուրմալուի և Արդվինի գավառներից հարկադրված հեռացել էին 170 հազարից ավելի տեղացի հայեր, էլ չենք խոսում Հայոց մեծ եղեռնից հետո ժամանակավորապես այնտեղ հաստատված տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականների մասին¹⁵⁴:

1918 թ. գարնանը ստեղծված ժողովրդագրական նպաստավոր իրավիճակում, Բրեստ-Լիտովսկի պայմանագրին համապատասխան, թուրք իշխանությունները Կարսի մարզում անցկացրին, այսպես կոչված, հանրաքվե՝ ցույց տալու համար, որ այնտեղ գերակշիռ կազմով ապրում է մուսուլմանական ազգաբնակչություն:

Արդեն Հայաստանի Հանրապետության շրջանում թեև փախստական հայերին հնարավորություն տրվեց վերադառնալ ու հաստատվել իրենց հայրենի բնակության վայրերում, և դրա շնորհիվ նկատելիորեն բարելավվեց հայ էթնիկ տարրի ժողովրդագրական պատկերը, սակայն 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի արդյունքով այդ շրջանները կրկին բռնազավթվեցին թուրքերի կողմից և գործնականում Սուրմալուն, Կարսը նաև Արդվինը դատարկվեցին հայությունից:

Վեքսանդրապոլի պայմանագրի դեպքում ևս թուրքերը, «բարի կամք դրսևորելով», Կարսի մարզը և Սուրմալուի գավառը հայտարարեցին «վիճելի»: Այդ տարածքների վերջնական ճակատագիրը որոշելու համար Հայաստանի ցանկության դեպքում պայմանագրի վավերացումից հետո մինչև երեք տարվա ընթացքում Թուրքիային անցած տարածքներում Հայաստանը իրավունք ուներ հայտարարել ազատ հանրաքվե (պլեբիսցիտ):

Հանրաքվեի անցկացման ձևը պիտի որոշեր երկու կողմից ստեղծված հայ-թուրքական խառը հանձնաժողովը¹⁵⁵:

¹⁵⁴ Արարատյան Ս., ճշմարտություններ Կովկասի մասին, Պուրքեշ, 1941, էջ 15, ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, ք. 24, գ. 134, ք. 18:

¹⁵⁵ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 28, ք. 5, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, ք. 66, Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 504, Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Ե., 2007, էջ 206:

Կարսի մարզում և Սուրմալուում հանրաքվեի անցկացմանը թուրքերը զնացին նրա համար, որովհետև թուրքական «Ազգային ուխտի» 2-րդ հոդվածում ասվում էր, որ «Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակներում սույն ուխտը ստորագրած պառլամենտի անդամները հնարավոր են համարում անհրաժեշտության դեպքում երկրորդ (1-ը համարվում էր 1918 թ. գարնանը- Ա. Յ) ազատ պլեբիսցիտի (հանրաքվեի) անցկացումը»¹⁵⁶:

Այստեղ Սուրմալուի մասին խոսք չկա, որովհետև այն չէր մտնում «Ազգային ուխտի» տարածքային պահանջների մեջ: Գավառը բռնազավթելուց հետո միայն նպատակահարմար գտան այնտեղ նույնպես անցկացնել հանրաքվե:

Ինչպես արդեն վերևում ասվեց, 1920 թ. աշնանը Կարսի մարզն ու Սուրմալուում այնպես էր դատարկվել հայ տարրից, որ այնտեղ հանրաքվեի անցկացումը կասկածանքի նշույլ իսկ չէր առաջացնի հոգուտ Թուրքիայի: Ուստի թուրք իշխանությունները պատրաստ էին այդ ձևական քայլի կատարմանը: Նույնիսկ ավելորդ է խոսել այդ տարածքների վիճելի լինելու մասին: Չնայած պայմանագրի 3-րդ հոդվածը Կարսի նահանգի և Սուրմալուի գավառի մինչև երեք տարի վիճելի համարելու իրավական հիմք տալիս էր, սակայն դրանց փաստական վիճակն այնպիսին էր, որ Չայաստանի իշխանությունները անհնաստ ու ավելորդ համարեցին նման հանրաքվեի անցկացումը այդ շրջաններում, մանավանդ որ այդ ընթացքում նախապատրաստվում էին Մոսկվայի և ապա Կարսի կոնֆերանսները: Եթե անգամ Խորհրդային Չայաստանի կառավարությունը թեկուզ ձևական ցանկություն հայտներ հանրաքվեի անցկացման վերաբերյալ, ապա հանդուժած ենք, որ Մոսկվան թույլ չէր տա այդ բանը:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի պայմանագրով Չայաստանի Չանրապետությունից Թուրքիային էին անցնում Կարսի մարզը ոչ ամբողջությամբ՝ 17250 քառ.կմ և Սուրմալուի գավառը մոտ 3450 քառ.կմ, ընդամենը 20,7 հազար քառ.կմ տարածք, իսկ Նախիջևանի, Շարուրի և Շահթախթիի շրջանները, ինչպես արդեն նշվել է,

¹⁵⁶ Ключников Ю. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 3, вып. II, М., 1929, с. 1.

ժամանակավիճակներում դրվում էին Թուրքիայի հովանավորության տակ¹⁵⁷:

Եթե Ալեքսանդրապոլի պայմանագիրը համեմատության մեջ ենք դնում Բաթումիի հետ, ապա կարելի է նկատել տարածքային հետևյալ փոփոխությունը: Բաթումի հաշտության պայմանագրով արևելահայ տարածքներից Թուրքիային էին անցնում Կարսը, Կաղզվանը, Արդահանը, Ախալքալաքը, Սուրմալուն, Նախիջևանը ամբողջությամբ, իսկ Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի, Շարուր-Ղարալագյազի գավառները՝ հիմնականում կամ մասնակիորեն: Եթե նկատի առնենք, որ հայ-թուրքական Բաթումի պայմանագրով Թուրքիան Արևելյան Հայաստանից (չհաշված Ախալքալաքը) խլում է 28 հազար քառ.վերստ տարածք, ապա Ալեքսանդրապոլի պայմանագրով (Բաթումիի համեմատ) Հայաստանին էր զիջվում 7,3 հազար քառ.կմ տարածք: Ղրանք Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի, Շարուր-Ղարալագյազի գավառների՝ թուրքերի կողմից զավթված հատվածներն էին:

Բաթումի պայմանագրով զծված հայ-թուրքական սահմանագծի մեջ քիչ թե շատ խորամուխ լինելով՝ դժվար չէ նկատել, որ այն անբնական ու արհեստական սահման էր և անվտանգության տեսակետից անչափ խոցելի, մի բան, որ համեմատաբար չի կարելի ասել Ալեքսանդրապոլի պայմանագրով նախագծված սահմանի մասին: Անկասկած, շատ ավելի ապահով և ընդունելի կլիներ, եթե հայ-թուրքական սահմանագիծն անցներ Հայկական պարով և Մեծ ու Փոքր Մասիսներով, ինչպիսին ավանդաբար գոյություն է ունեցել մի քանի դար շարունակ՝ սկսած թուրք-պարսկական Ամասիայի 1555 թ. հաշտության պայմանագրից:

Մյուս կողմից, թե որքան տարածք էր մնում Խորհրդային Հայաստանին 1920 թ. դեկտեմբերի իրավիճակով, դժվար է պատասխանել, որովհետև դեռևս լուծված չէր Լոռվա չեզոք գոտու խնդիրը, Ալեքսանդրապոլի գավառի՝ թուրքերից դատարկումը կապվում էր Հայաստանի զինաթափման և պայմանագրի մի քանի այլ կետերի կատարման հետ: Բացի այդ՝ դեռևս չէին լուծված նաև Սյունիքի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրները: Վերջնականորեն չէր

¹⁵⁷ Մսրոյան Ջ., Հայկական հարցի մասին, Պեյրուք, 1978, էջ 11, Մսրոյան Ջ., Երեք դաշնագրեր, էջ 145, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 385.

լուծված նաև Նախիջևանի մարզի ճակատագրի հարցը, նույնը վերաբերում է նաև Ջավախքին: Եվ այս իմաստով դժվար է համաձայնվել ակադեմիկոս Գ. Գալոյանի արտահայտած այն մտքին, թե Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազ քառ.կմ տարածք¹⁵⁸: Տարածքային սահմանային խնդրի քիչ թե շատ հետևողական ու արդարացի լուծման դեպքում կարծում ենք, որ ՀՍԽՅ տարածքը կարող էր հասնել առնվազն 40 հազար քառ.կմ-ի:

¹⁵⁸ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923 թթ.), էջ 376:

4. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Այսպիսով, ստորագրվեց ծանրագույն մի պայմանագիր, որը պարտադրվեց արտաքին բիրտ ուժով: Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է քենալական Թուրքիայի սանձազերծած բռնազավթիչ պատերազմի արդյունքում, մի պատերազմ, որն ուղեկցվել է արևելահայության պլանավորված ցեղասպանությամբ: Միայն այս հանգամանքը, անկախ մեր կողմից հետազայում բերվող փաստարկների ու հիմնավորումների, բավական է, որ պայմանագրային իրավունքի մասին միջազգային կոնվենցիայով այդ պայմանագիրը ճանաչվի անվավեր: Ավելին, պատասխանատվության պետք է կանչվեր պատերազմ սանձազերծող և ցեղասպանություն իրականացնող կողմը: Այն պարտադրվեց ոչ միայն պատերազմի արդյունքով, այլև նույնիսկ հայ պատվիրակության նկատմամբ հաշվեհարդարի սպառնալիքով:

Ալեքսանդրապոլի պայմանագրի արդյունքի համար, անշուշտ, պատասխանատվության բաժին է կրում Յայաստանի Յանրապետության կառավարությունը, որը ռազմաքաղաքական առումով չկարողացավ կազմակերպել հանրապետության պաշտպանությունը արտաքին ներխուժումից: Արդյունքում Յայաստանը ծանր պարտություն կրեց, և կնքվեց նման պայմանագիր:

Ինչ խոսք, ստորագրվածը շատ ծանր ու կողոպտիչ, քաղաքականապես անիրավահավասար պայմանագիր էր, որը հետևանք էր ամենից առաջ թուրք-հայկական պատերազմում Յայաստանի կրած ծանր պարտության: Անժխտելի է, որ պայմանագրում կան Յայաստանի պետական սուվերենությունը վտանգող և ռազմուժը զինաթափող հոդվածներ:

Հասկանալի է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը մեծ գոհունակությամբ ընդունվեց Թուրքիայում: Բանն այն է, որ նրանք ձեռք էին բերում ոչ միայն արևելահայ զգալի տարածքներ, այլև Յայաստանը ռազմապես զինաթափվում էր և քաղաքականապես փաստորեն դրվում էր Թուրքիայից կախման մեջ: Պատահական չէ, որ պայմանագրի ստորագրումից հետո Մ. Քենալը, հանդես գալով ԹԱՄԺ-ում, հայտարարեց. «Պարոններ, Գյում-

րիի դաշնագիրը առաջին դաշնագիրն է, որ ստորագրել է ազգային կառավարությունը»¹⁵⁹;

Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագիրը «նոր», դեռևս միջազգայնորեն չճանաչված քեմալական թուրքիայի կառավարության առաջին միջազգային պայմանագիրն էր, որ իր բովանդակությամբ և շատ կողմերով կրկնում էր Բաթումի պայմանագիրը:

Պատմության հեգնանքով այնպես ստացվեց, որ Բաթումի պայմանագրով օսմանյան թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագիրը քեմալական թուրքիայի առաջին միջազգային պայմանագիրն էր, որով Հայաստանը փաստորեն առաջինը ճանաչեց նոր թուրքիային:

Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը միջազգային իրավական նորմերին համապատասխանության տեսակետից դիտարկելիս դժվար չէ տեսնել, որ այն ի սկզբանե չի ունեցել միջազգային ու միջպետական իրավական որևէ ուժ, հետևապես և կատարման պարտադիր բնույթ: Պայմանագրի ստորագրման պահին կողմերն ունեցել են միջազգային-իրավական հետևյալ կարգավիճակը: Պայմանագրի ստորագրման նախօրյակին ՀՀ կառավարությունը հրաժարական էր տվել, հետևապես հայկական պատվիրակությունը իրավական առումով կորցրել էր պետական պաշտոնական պատվիրակության իրավասության ուժը: Սակայն այստեղ կամի նրբություն և պետք է որոշ վերապահություն անել: Բանն այն է, որ Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Հայաստանի արդեն նախկին կառավարության հրաժարականով նրա իրավասությունները ժամանակավորապես անցել էին Դրոյի ձեռքը, մինչև որ Հայհեղկոմը՝ իբրև նոր կառավարություն, կժամաներ Երևան: Պայմանագիրը ստորագրելուց առաջ Ալ. Խատիսյանը հեռախոսային կապի մեջ է եղել Դրոյի հետ: Վերջինս էլ չի առարկել, որ ստորագրվի պայմանագիրը: Դրոյին կարելի էր համարել Հայաստանի նախկին կառավարության և Հայհեղկոմի միջև մի քանի օրով՝ մինչև դեկտեմբերի 4-ը, կապի ու իրավահաջորդի գործառույթի իրականացնողը: Կնշանակի՝ Խատիսյանը, այդուհանդերձ, որոշ լիազորություն վերստացել է:

Ինչ վերաբերում է ԹԱՍԺ պատվիրակությանը, ապա պետք է

¹⁵⁹ Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, էջ 347:

ասել, որ այն ի սկզբանե միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն չի ունեցել, որովհետև այն ներկայացնող կառավարությունը միջազգայնորեն ճանաչված չէր, ԱՄժ կառավարությունը համարվում էր ապստամբ ու անօրինական, միջազգայնորեն չճանաչված որևէ պետության կողմից: Այդ ժամանակ Թուրքիայի միակ օրինական իշխանությունը համարվում էր Կ. Պոլսի սուլթանական կառավարությունը: Այստեղից հետևում է, որ եթե հայկական պատվիրակության իրավական կարգավիճակը ինչ-որ կերպ կարելի էր ընկալել, ապա Անգորայի պատվիրակությանը՝ միանգամայն անօրինական: Կնշանակի՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չէր կարող լինել միջազգային իրավունքի աղբյուր և առաջացնել պարտավորություններ և իրավունքներ որևէ պետության համար:

Մյուս կողմից Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրավական ուժ չուներ նաև այն առումով, որ, ինչպես նշված է բուն պայմանագրի վերջին 18-րդ հոդվածում, այն պետք է վավերացվեր (հաստատվեր) մեկ ամսվա ընթացքում Չայաստանի և Թուրքիայի կողմից, մի բան, որը չի արվել: Բանն այն է, որ Չայաստանի խորհրդայնացմամբ այն այլևս խորհրդարան չուներ: Պայմանագիրը չի վավերացրել նաև ԹԱՄժ-ը: Նշանակում է, որ երկու հիմնական պատճառներով. մեկ՝ պայմանագիրը ստորագրող Ալ. Խատիսյանի լիազորություն չունենալու, քանի որ նրան լիազորություն տվող կառավարությունը մինչ այդ արդեն հրաժարական էր տվել, էլ չենք փաստում, որ ԹԱՄժ կառավարության անունից հանդես եկող թուրքական պատվիրակությունը ևս միջազգային իրավունքի տեսակետից միջազգային պայմանագիր ստորագրելու իրավասություն չուներ, որովհետև ԱՄժ (Անգորայի) կառավարությունը համարվում էր միջազգայնորեն չճանաչված և, երկրորդ, այդ պայմանագիրը չի վավերացվել ո՛չ նախատեսված մեկ ամսվա ընթացքում, ո՛չ էլ հետագայում, ուստի իր ստորագրման իսկ պահից այն չի ունեցել որևէ իրավական ու կիրառական (պարտադիր) ուժ¹⁶⁰:

Որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը միջազգային-իրավական ուժ չունեցող փաստաթուղթ է, դեռ ժամանակին փաստել է ՌՍՖՍՀ արտգործօժողկոմ Գ. Չիչերինը: Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին 1921 թ. ապրիլի 8-ին հղած նոտամյում մասնավորապես ասում էր. «Ես ինձ թույլ եմ տալիս Ձեզ հիշեցնել, որ

¹⁶⁰ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 17, «Երկիր», Երևան, 15 դեկտեմբերի 2000 թ.:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է դաշնակցական կառավարության կողմից այն պահին, երբ արդեն հռչակված էր Չայաստանի խորհրդային կառավարությունը, և որ դա վավերացված չէ, թեպետև, ըստ այդ պայմանագրի տեքստի, դրա գործողության մեջ դնելու պայմանը հանդիսանում է վավերացումը մեկ ամսում»¹⁶¹:

Հենց միայն այն փաստը, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն իր ստորագրման իսկ պահից իրավական ուժ չի ունեցել և չի վավերացվել կողմերի օրենսդիր մարմինների կողմից, ինքնին ապացուցում է այդ պայմանագրի անվավեր լինելու մասին: Եվ դա բավական էր, որ Չայիեղկոնը պաշտոնապես չճանաչեր այդ պայմանագիրը: Սակայն ամենայն հավանականությամբ նա համարձակություն չի ունեցել ինքնուրույն կերպով նման հայտարարություն անելու: Դրա համար նա նախ պետք է ստանար Մոսկվայի համաձայնությունը, իսկ վերջինիս համար խորհրդա-թուրքական ռազմավարական շահերի տեսակետից դա անթույլատրելի էր: Իսկ եթե Չայիեղկոնը ինքնազուլուխ նման քայլի դիմեր ու Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ համարելու մասին հայտարարություն աներ, ապա դա կդիտվեր կուսակցական կարգապահության կոպիտ խախտում՝ պատժի անխուսափելի հետևանքներով: Բայց և այնպես խորհրդային Չայաստանի կառավարությունը 1920թ. դեկտեմբերին և 1921 թ. հունվարին Թուրքիայի կառավարությանն ուղղված նոտա-հուշագրերում մեղմ տոնով քանիցս վիճարկել է Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականությունը՝ «որպես ուժի միջոցով պարտադրված ու ժողովուրդների ինքնորոշումը ոտնահարող պայմանագիր»¹⁶². և առաջարկել անմիջապես բանակցություններ սկսել ու կնքել նոր բովանդակությամբ արդարացի պայմանագիր: Իսկ պատասխան նոտաներում ԹԱՄԺ կառավարությունը փորձել էր ամեն կերպ հիմնավորել Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականությունը և արդարացիությունը¹⁶³:

Ալեքսանդրապոլի պայմանագրի ընդունման, թերևս միակ, պատմաքաղաքական հիմքն այն էր, որ Չայաստանը պարտվել էր Թուրքիային, և հաղթողի իրավունքով, ուժի սպառնալիքով նրան պարտադրվել էր նման ծանր պայմանագիր: Մնացած բոլոր հատ-

¹⁶¹ Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, էջ 350:

¹⁶² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 376.

¹⁶³ Նույն տեղում, էջ 366:

կանհիշներով, ինչպես արդեն ասվեց, կան բավարար ու անվիճելի հիմքեր ի սկզբանե այն իրավական ուժ չունեցող և անվավեր ճանաչելու: Ալեքսանդրապոլի պայմանագիրն իրավական չճանաչելու կռվաններից մեկը հետևյալն է. հայ-թուրքական հաշտության բանակցություններից շաբաթներ առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 2-ին, բյուրո-կառավարությունը, կանխազգալով Հայաստանի մոտալուտ պարտությունը և թուրքերի կողմից Հայաստանին ուժի միջոցով պայմանագիր պարտադրելը, նամակ է ուղարկում ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանին, որ «երկիրը շրջապատված է թուրք և բուլշևիկ թշնամիներով, ուստի կառավարությունը կարող է ստիպված լինել ծանր պայմանագիր ստորագրել: Հետևաբար պատվիրակության և մեր դաշնակիցներին է մնում չընդունել մեր ստորագրելիք այդ ծանր պայմանները»¹⁶⁴: Դրանով Հայաստանի կառավարությունը հրահանգում էր Եվրոպայի իր ներկայացուցչին, որ նրա միջոցով եվրոպական պետությունները չճանաչեն ուժով պարտադրվելիք այդ պայմանագիրը, և մերժվի նրա օրինական և պարտադիր լինելը:

Փաստենք, որ Լոնդոնի 1921 թ. փետրվար-մարտյան խորհրդրդաժողովի ժամանակ՝ ավելի ստույգ փետրվարի 26-ի նիստում, ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը, պատասխանելով Անգլիայի արտգործնախարար Լորդ Քերզոնի այն պնդմանը, թե Ալեքսանդրապոլում հաշտություն է կնքվել Մ. Քեմալի և Հայաստանի միջև, վկայակոչեց այն հրահանգը, որը ստացել էր իր կառավարությունից Կարսի անկումից անմիջապես հետո, որ «պայմանագիրը պարտադրվել է ուժով և կտրականապես մերժվում է հայերի կողմից»¹⁶⁵: Հայաստանի կառավարությունը ժամանակին նման բողոք էր ուղղել նաև Ազգերի լիգային¹⁶⁶: Ա. Ահարոնյանը հարց բարձրացրեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ հայտարարելու՝ որպես բռնության տակ ստորագրված: Դրա հիման վրա Լոնդոնի միջազգային խորհրդաժողովը չեղյալ համարեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը¹⁶⁷:

¹⁶⁴ Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր), էջ 111–112, նաև «Հայաստանը ...», էջ 701:

¹⁶⁵ Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 110–112:

¹⁶⁶ Махмуриян Г., Лига Наций, Армянский вопрос и Республика Армения, Е., 1999, с. 123.

¹⁶⁷ Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 390, Լազյան Գ., Հայաստան և Հայ Դատը, Ե., 1991, էջ 301, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 383.

Եթե խնդիրը քննենք այն ժամանակվա միջազգային իրավա-
հարաբերությունների տեսանկյունից, ապա Ալեքսանդրապոլի
պայմանագիրը դարձյալ համարվում է անվավեր: Օրինակ, հայտնի
է, որ նորաստեղծ Ազգերի լիգայի 1919 թ. ընդունած կանոնա-
դրության 20-րդ հոդվածն արգելում էր ուժ կամ ուժի կիրառման
սպառնալիքի միջոցով պայմանագրի պարտադրումը¹⁶⁸: Այդ նույն
նորմն է ամրագրված ՄԱԿ-ի կանոնադրությունում և Միջազգային
պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի
23-ի կոնվենցիայում: Հոդված 52-ում ասված է. «Պայմանագիրը
համարվում է առոչինչ, եթե կնքված է ուժի սպառնալիքի կամ այն
կիրառելու մրջոցով ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված մի-
ջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ»¹⁶⁹: Կնշանակի՝
Ալեքսանդրապոլի պայմանագիրը եղել է ուժով պարտադրված և
միջազգային պայմանագրային իրավունքի տեսակետից անընդու-
նելի ու անվավեր: Միաժամանակ պայմանագիրը ստորագրած
կողմերը չեն ունեցել համապատասխան իրավասություն. մի դեպ-
քում պայմանագիրը ստորագրած ԹԱՄԺ կառավարությունը միջազ-
գայնորեն չէր ճանաչված, օրինական չէր, ուստի և նրա պատվի-
րակության ստորագրած պայմանագիրը չէր կարող օրինական ուժ
ունենալ, իսկ մյուս կողմից էլ միջազգայնորեն փաստորեն ճանաչ-
ված Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը պայմա-
նագրի ստորագրման պահին այլևս իրավասու չէր այն ստորա-
գրելու, որովհետև այն կառավարությունը, որ նա ներկայացնում
էր մինչ պայմանագրի ստորագրումը, արդեն հրաժարական էր
տվել: Եվ վերջապես, ինչպես արդեն քանիցս փաստվել է, ստո-
րագրված պայմանագիրը չի վավերացվել երկու երկրների կողմից
ո՛չ պայմանագրում նշված ժամկետում և ո՛չ էլ առհասարակ
հետագայում:

Հանրագումարի բերելով վերը նշված փաստարկներն ու
պնդումները՝ կարելի է հետևեցնել, որ Ալեքսանդրապոլի պայմա-
նագրի ստորագրումից առաջ և հետո հայկական կողմը ժամա-

¹⁶⁸ Ասլանյան Ա., Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վեր-
լուծության փորձ (ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների,
2005, թիվ 1, էջ 180):

¹⁶⁹ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, Ե., 2001, էջ
6, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ.
մայիսի 23-ի կոնվենցիա, մաս 5, բաժին 2:

ճակին տեղյակ է պահել միջազգային հանրությանը, բողոքել է տերություններին, որ Հայաստանին ուժի ու սպառնալիքի միջոցով է պարտադրվել այդ պայմանագիրը, ուստի այն պետք է չեղյալ հայտարարվի: Եթե խնդիրը դիտարկում ենք ժամանակակից պայմանագրային իրավունքին համապատասխան, ապա նրա վրա չի կարող տարածվել վաղեմության ժամկետի (եստոպելի) սկզբունքը¹⁷⁰: Ալեքսանդրապոլի պայմանագիրը, անկախ նրա իրավական (անվավեր ու ժամանակավրեպ լինելու) հիմքից, անշուշտ, ազդեցություն ունեցել է հայ-ռուս-թուրքական հարաբերությունների և առաջին հերթին Մոսկվայի ու փաստորեն նրա նմանակ Կարսի պայմանագրերի վրա:

¹⁷⁰ Հակոբյան Ա., Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավական գնահատականը (1920–1921 թթ.), (ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2007, թիվ 2, էջ 22):

Գլուխ երկրորդ

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. ՄՈՍԿՎԱՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1920 թ. աշնանը խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի շահերն ու հարաբերությունները ավելի ու ավելի մերձենալու և սերտանալու միտումներ էին ցուցաբերում: Խորհրդային Ռուսաստանը հաջողությամբ ներթափանցել էր Անդրկովկաս: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո օրակարգում դրվում է Հայաստանի խորհրդայնացումը: Այս գործում մեծ դերակատարություն էր ստանձնելու քեմալական Թուրքիան:

Մյուս կողմից՝ գեներալ Պ. Վրանգելի ոչ խորհրդային պետական կազմավորման պարտությունից ու կազմալուծումից հետո գործնականում քաղաքացիական պատերազմն ավարտվեց բուլշևիկների հաղթանակով: Գնալով ՌՍՖՍՀ քաղաքական դիրքերն ու միջազգային հեղինակությունը ամրապնդվում էր, թեև նա շարունակում էր մնալ միջազգայնորեն դեռևս չճանաչված:

Ռազմաքաղաքական հաջողությունը ուղեկցում էր նաև Թուրքիային: Քեմալականները հաղթական պատերազմ մղելով՝ ծանր պարտության մատնեցին Հայաստանի Հանրապետությանը: Նրանց ռազմական գործերը հաջող էին ընթանում նաև Արևմտյան ճակատում՝ հույների դեմ: 1920 թ. նոյեմբերի 14-ի Հունաստանի պառլամենտական ընտրություններում հաղթանակ էր տարել խաղաղասիրական թևը¹: Անտանտի տերությունները, այդ թվում նաև Անգլիան, սկսել էին աստիճանաբար մեղմել իրենց կոշտ դիրքը Թուրքիայի

¹ Հիրավի պատահական մի դիպված շրջադարձ կատարեց Հունաստանի քաղաքական կյանքում: Կապիկի կծելուց մահացավ Հունաստանի երիտասարդ թագավոր Ալեքսանդրը: Գահն անցավ վարչապետ է. Վենիզելոսի քաղաքական հակառակորդ ռոյալիստ (միապետական) Կոստանտինին: Տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հույն ազգայնապետական մեծագույն գործիչ, հայ ժողովրդի բարեկամ Վենիզելոսը պարտվում է իր հակառակորդներին և հեռանում իշխանությունից: Դրանից հետո Հունաստանի արտաքին քաղաքականության մեջ կատարվում է փոփոխություն, որը բացասաբար է անդրադառնում նաև Հայաստանի վրա (տե՛ս *Джордж Л. Д., Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с.455*).

հանդեպ: Բայց և միաժամանակ նրանք առիթը բաց չէին թողնում, որպեսզի Թուրքիային ուղղեն Ռուսաստանի դեմ: Դրան հասնելու համար Անտանտը պատրաստ էր հրաժարվելու Սևրի պայմանագրից:

Իր հերթին Ռուսաստանը պատրաստ էր որոշակի զիջումների գնալ թուրքերին, որպեսզի նրանք չնետվեն Անտանտի գիրկը: Դրա հետ մեկտեղ քեմալականներին խիստ անհրաժեշտ էր Ռուսաստանի ֆինանսական և ռազմական օգնությունը, որպեսզի բարեհաջող ավարտի հասցնեն իրենց «ազատագրական» պատերազմները և պաշտպանեն 1920 թ. հունվարի 28-ի թուրքական «Ազգային ուխտով» նախատեսված տարածքային պահանջները:

Այն բանից հետո, երբ թուրքական Արևելյան ռամաճակատի գործը, խախտելով ռուս-թուրքական օգոստոսյան պայմանավորվածությունը Սարիղամիշ-Շահթախթի գիծը չանցնելու վերաբերյալ, 1920 թ. հոկտեմբերի 30-ին գրավեց Կարսը, նոյեմբերի սկզբին մոտեցավ Ախուրյանին ու գրավեց նաև Ալեքսանդրապոլը, նոյեմբերի 7-ին Ռուսաստանի խորհրդային կառավարությունը հատուկ հրահանգով ժամանակավորապես դադարեցրեց զենքի և այլ տեսակի օգնությունը թուրքերին²: Այդ իսկ պատճառով Անգորայի քեմալական կառավարությունը, զգալով ռուսների բազմաբնույթ օգնության կարիքը հատկապես Արևմտյան ռազմաճակատում հույների դեմ ռազմական ակտիվ գործողություններ ծավալելու համար, նոյեմբերի կեսերին Մ. Քեմալը առաջինը դիմեց ՌՍՖՍՀ կառավարությանը՝ 1920 թ. ամռանը Մոսկվայում ընդհատված խորհրդա-քեմալական բանակցությունները վերսկսելու և երկկողմ հարաբերությունները բարեկամական, իրավապայմանագրային հիմունքների վրա դնելու համար: «Խորհրդային Ռուսաստանի ռազմական օգնությունը Թուրքիային և Անդրկովկասի խորհրդայնացումը քեմալականներին մղեց Ռուսաստանի հետ բարեկամական հաշտություն կնքելու անհրաժեշտությանը»³:

Ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի (խորհրդաժողովի) բանակցային գործընթացի նախապատրաստության սկիզբը դրվեց այն բանից հետո, երբ ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն 1920 թ. նոյեմբերի 27-ի նիստում (թիվ 66 արձանագրություն), Կովկասյան գործերի

² ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց.2, գ.11:

³ “Новейшая история стран Азии и Африки. XX век”, ч. 1, 1900–1945 гг. М., 2003, с.206.

մասին Ի. Ստալինի զեկուցման հիման վրա իր համաձայնությունը տվեց Ս. Քենալի առաջարկությանը՝ Մոսկվայում ռուս-թուրքական բանակցությունները վերսկսելու և օգոստոսի 24-ի նախագծի ոգով բարեկամական պայմանագիր կնքելու վերաբերյալ⁴:

Ս. Քենալը Ռուսաստանի արտգործօժողկոմ Գ. Չիչերինին հասցեագրած նոյեմբերի 29-ի հեռագրում փոխադարձ շնորհակալություն է հայտնում իմպերիալիզմի դեմ երկու երկրների համատեղ պայքարի համար և վստահություն հայտնում դաշինքը սերտացնելու անհրաժեշտության կապակցությամբ⁵:

Կովկասյան գործերում ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի լիազոր և պատասխանատու Ի. Ստալինը դեկտեմբերի 1-ին Գ. Օրջոնիկիձեի միջոցով (Բաքվում) Բ. Մդիվանուն հանձնելու համար հայտնում է, որ ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն որոշել է կնքել ռուս-թուրքական պայմանագիր: Հեռագրում ասվում է. «Մենք (նկատի ունի ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն – Ա. Յ.) որոշեցինք համաձայնվել հաշտության պայմանագրի կնքմանը, հանձնաժողով (նկատի ունի՝ պատվիրակություն - Ա. Յ.) կուղարկենք, Չիչերինից կստանաս համապատասխան նոտա: Հարկավոր է թուրքերին հետ պահել Բաթումի վրա հարձակվելուց»⁶ :

Նույն օրը՝ դեկտեմբերի 1-ին, Գ. Չիչերինը հեռագրում է Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեին: Վերջինս էլ դեկտեմբերի 3-ին Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանի միջոցով (Երևանով) Բ. Մդիվանուն փոխանցում է Գ. Չիչերինի դեկտեմբերի 1-ի հետևյալ բովանդակությամբ հեռագիր-հանձնարարականը. «Հանձնարարում ենք Մդիվանուն պատասխանել թուրքերին, որ մենք այստեղից (Մոսկվայից – Ա. Յ.) ուղարկում ենք հանձնաժողով (պատվիրակություն - Ա. Յ.) նրանց հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ բանակցություններ վարելու համար և խնդրում ենք պարզել, թե ե՞րբ կմեկնի այդ նպատակի համար նշանակված թուրքական

⁴ “Политбюро ЦК РКП (б) – ВКП(б). повестки дня заседаний”, т. I, 1919–1929, каталог, М., 2000, с. 85, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923 թթ.), էջ 404:

⁵ Ключников Ю. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III вып. I. М., 1928, с. 27–28.

⁶ «Հայաստանի Հանրապետությունը (1918-1920 թթ.)», էջ 382, Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч.1, с. 281.

հանձնաժողովը (պատվիրակությունը -Ա. Յ.), ովքե՞ր են նրա կազմում և ի՞նչ վայր են առաջարկում բանակցությունների համար: Մոտակա օրերին կհաղորդենք, թե ովքեր են նշանակվելու մեր հանձնաժողովի կազմում»⁷: Գ. Չիչերինը միաժամանակ Մդիվանուց ցանկանում էր իմանալ, թե թուրքական կառավարությունը ստացել է արդյոք իր և Բեքիր Սամիի կողմից մշակված 1920 թ. օգոստոսի 24-ի պայմանագրի նախագիծը, որը Անգորա է ուղարկվել թուրք պատվիրակության անդամ Յուսուֆ Քեմալ բեյի միջոցով ⁸: Չիչերինի հեռագրից նաև պարզ է դառնում, որ ռուս-թուրքական բանակցությունների հիմքում դրվելու էր օգոստոսի 24-ին Բեքիր Սամիի հետ նախաստորագրած պայմանագրի նախագիծը, որն այն ժամանակ տարածքային-սահմանային որոշ տարածայնությունների պատճառով չէր հաջողվել վերջնական համաձայնության բերել:

Արդեն դեկտեմբերի 9-ին Գ. Չիչերինը Մոսկվայից հեռագրում էր Բաքու՝ Օրջոնիկիձեին, Ալեքսանդրապոլ՝ Մդիվանուն ու Կարաբեքիրի միջոցով՝ Անգորայի կառավարությանը հետևյալ բովանդակությամբ. «Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ստացավ թուրքական կառավարության առաջարկությունը Մոսկվայի կոնֆերանսի վերաբերյալ և ուրախությամբ ողջունում է այդ նախաձեռնությունը»⁹: ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմատի 1921 թ. տարեկան հաշվետվության մեջ դարձյալ կարդում ենք. «1920 թ. դեկտեմբերի 9-ին ա. գ. ժողկոմը հաղորդում է Անգորա, որ ուրախությամբ ընդունվել է Թուրքիայի կառավարության առաջարկը Մոսկվայում կոնֆերանս հրավիրելու նստին»¹⁰:

Այստեղից կարելի է անել 3 հետևություն. ա/ռուս-թուրքական կոնֆերանսի հրավիրման նախաձեռնությունը գալիս է թուրքական կողմից, բ/առաջիկայում հրավիրվելիք ռուս-թուրքական կոնֆերանսի հիմքում դրվելու էր ռուս-թուրքական՝ Մոսկվայի օգոստոսի 24-ի նախաստորագրված պայմանագիրը և գ/նոր հրավիրվելիք ռուս-թուրքական կոնֆերանսը որևէ կապ չէր ունենալու Ալեք-

⁷ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 364, Геноцид армян, (документы и комментарий) т. 2, ч.1, с. 299, УЛԻ ԿԿԱ, ֆ. 85, ց.14, գ. 26, ք. 6, «Հայաստանը ...», էջ 462:

⁸ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 281.

⁹ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1164, ք.1, ДВП СССР, т. 3, М., 1959, с. 371.

¹⁰ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 570.

սանդրապոլի պայմանագրի հետ: Այսինքն՝ անկախ այն բանից, թե Ալեքսանդրապոլի պայմանագիրը կկնքվեր թե ոչ, միևնույնն է, արդեն նույնքերի վերջին և դեկտեմբերի սկզբին կողմերի միջև պայմանավորվածություն է ստեղծվում ռուս-թուրքական կոնֆերանս հրավիրելու վերաբերյալ: Խորհրդային պատմաբան Ա. Խեյֆեցը ևս փաստում է, որ արդեն դեկտեմբերի սկզբին սկզբունքորեն համաձայնեցվեց Մոսկվայում խորհրդա-թուրքական կոնֆերանս հրավիրելու հարցը՝ մշակելու և ստորագրելու քաղաքական պայմանագիր¹¹: Կնշանակի՝ ռուս-թուրքական կոնֆերանսը ուղղակի նպատակ չի ունեցել վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Կոնֆերանս հրավիրելու առաջարկ անելով՝ քեմալականների նպատակը նախ Անտանտի դեմ խորհրդա-թուրքական համատեղ գործողությունների պլանի հաստատումն էր՝ Ռուսաստանի օգնությամբ Սևրի պայմանագրի վերացումը և ապա անդրկովկասյան հանրապետությունների հետ քաղաքական հարաբերությունների կարգավորումը:

Կասկած չկա, որ քեմալականները առաջինը նախաձեռնեցին Ռուսաստանի հետ բանակցելու և պայմանագիր կնքելու քայլը, որպեսզի իրավապայմանագրային հիմքերի վրա դնեն Ռուսաստանից ստացվելիք բազմատեսակ օգնությունը: Հրավիրվելիք կոնֆերանսը խնդիր ուներ ճշգրտելու ոչ միայն թուրք-անդրկովկասյան սահմանը, այլև դրանից ոչ պակաս կարևոր Ռուսաստանից ստանալու զենք, ոսկի, քաղաքական-դիվանագիտական աջակցություն՝ դիմակայելու Անտանտին ու հունական ճակատին, կանխելու Թուրքիայի որևէ մասնատում:

Քեմալականների՝ ռուսների հետ լեզու գտնելու և համաձայնության գալու ցանկությունը պայմանավորված էր նաև թուրքերի հանդեպ Անգլիայի կոշտ դիրքերով: Դա երևում է Գ. Չիչերինի՝ Վրաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ա. Շեյնմանին դեկտեմբերի 10-ին հասցեագրված հեռագրից, որում մասնավորապես ասվում է. «Անգլիան մերժում է պահանջվող զիջումները, և քեմալականների մեջ վերստին ուժեղանում է խորհրդային կողմնորոշումը»¹²: Ահա այս և այլ հանգամանքներով էր պայմանավորված

¹¹ Хейфец А.Н., Советская дипломатия и народы Востока (1921-1927), М., 1966, с. 83.

¹² ДВП СССР, т .3, М., 1959, с. 374, նաև «Հայաստանը», էջ 465:

ռուս-թուրքական կոնֆերանսի հրավիրման քեմալականների նախաձեռնությունը:

Մյուս կողմից, ինչպես ասվեց, խորհրդային կողմը ընդառաջ գնաց թուրքերի առաջարկին, որպեսզի կանխվի Թուրքիայի հնարավոր անցումը Անտանտի կողմը, ինչպես նաև թույլ չտրվի թուրքերի հետագա հարձակումը Բաթումի վրա: Այդ մասին է վկայում Ի. Ստալինի դեկտեմբերի 1-ին արդեն հիշատակված հեռագիրը:

Կոնֆերանսի նախապատրաստական փուլի հետ սերտ առնչություն ունեն նաև Վրաստանի խորհրդայնացման հեռանկարը, ինչպես նաև դրա հետ կապված Վրաստանի վրա թուրքերի հարձակման և Անդրկովկաս Անտանտի ռազմական միջամտության սպառնալիքները:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Մոսկվան օրակարգ բարձրացրեց նաև Վրաստանի խորհրդայնացման հարցը ոչ ավել, ոչ պակաս Հայաստանի խորհրդայնացման տարբերակով: Սկսած 1920 թ. նոյեմբերի վերջերից՝ ՌՍՖՍՀ կառավարությունը Վրաստանի խորհրդայնացումը հեշտացնելու ակնկալիքով աշխատում էր այժմ էլ թուրքերին հրահրել Վրաստանի դեմ: Ի. Ստալինը, նոյեմբերի 28-ին պատասխանելով Օրջոնիկիձեի նախորդ օրը ուղարկած հեռագրին, հասկացնում էր, որ թուրքերին «պետք է հրահրել Վրաստանի դեմ»¹³: «Իմ կարծիքով, եզրակացնում էր Ստալինը, լավագույն կոմբինացիան Թուրքիայի հաջող պատերազմն է Վրաստանի դեմ, ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա միջամտելու որպես միջնորդ և փրկարար»¹⁴: Թուրքերն ակնկալում էին Վրաստանի խորհրդայնացմանն օժանդակելու դիմաց ստանալ Բաթումը, ինչպես որ Հայաստանը ծնկի բերելու համար ստացան Կարսը: 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերին Թուրքիան բացահայտ հավակնություն ցուցաբերեց Բաթումի նկատմամբ, քանի որ այն մտնում էր թուրքական «Ազգային ուխտի» շրջանակում: Սկզբում խորհրդային ղեկավարությունը կարծես տոն էր տալիս թուրքերի ագրեսիվ նկրտումներին՝ իբրև թե դիմակայելու Անտանտի հնարավոր ներխուժմանը Անդրկովկաս:

¹³ Խուրշուդյան Լ. Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 278:

¹⁴ Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 345:

Անդրկովկասի փաստացի ղեկավար Գ. Օրջոնիկիձեն և Վրաստանում ՌՍՖՍՀ մշտական ներկայացուցիչ Ա. Շեյնմանը Գ. Չիչերինին ուղղված նոյեմբերի 2-ի հեռագրում հայտնում էին, որ թուրքերի հետ բանակցությունների համար նախապայմաններից մեկը պիտի համարել այն, որ «Վրաստանի վրա հարձակման պահը պետք է որոշի Ռուսաստանը»¹⁵: Սակայն Մոսկվան այդ խնդրում մտավախություն ուներ: Խորհրդային ղեկավարությունը անհանգրստացած էր Բաթումի համար: Կեղծ լուրեր էին տարածվում, որ Անտանտը պլան է մշակում Բաթումը գրավելու համար: Այդ լուրերի հնարավոր աղբյուրներից մեկը թուրքերն էին, որոնք աշխատում էին հիմնավորել Բաթումը գրավելու իրենց մտադրությունը: Նոյեմբերի կեսերից Բաթումը գրավելու լուրջ սպառնալիք էր ստեղծվել քենալականների կողմից¹⁶:

Այդ առնչությամբ Վ. Լենինը և Ի. Ստալինը ղեկտեմբերի 2-ին հեռագիր են ուղարկում Բ. Մդիվանուն՝ առաջարկելով թույլ չտալ (կասեցնել) թուրքերի առաջխաղացումը դեպի Բաթում: Այդ մասին թուրքերին համապատասխան նոտա է տալիս Գ. Չիչերինը¹⁷: Բայց դա չխանգարեց, որ թուրքերը իրագործեն իրենց մտադրությունները: Շուտով թուրքերը օկուպացրին Արդահանի վրացական մասը և Արդվինը: Ավելի ուշ՝ 1921 թ. մարտին, թուրքական մի զորաջոկատ մտավ Բաթում:

1920 թ. ղեկտեմբերի 31-ին Ի. Ստալինը քաղբյուրոյի անունից Գ. Օրջոնիկիձեի միջոցով հեռագրում էր Բ. Մդիվանուն. «Հարկավոր է կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը Բաթում: ... Առայժմ նրանց վստահել չի կարելի: Նրանք մեծ խորամանկներ են»¹⁸:

Ավելի ուշ Թուրքիայի արտգործոժողկոմ Ահմեդ Մուխթարը Ազգային մեծ ժողովում հայտարարեց, որ վրաց մենշևիկյան կառավարության համաձայնությամբ է իրենց զորքը մտել Բաթում՝ հավանաբար կանխելու խորհրդային կարգերի հաստատումը երկրամասում: Թուրքական հրամանատարությունը միաժամանակ զորքեր է մտցնում Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններ¹⁹: Ինչ վերաբերում է Անտանտի զորքերի դեսանտ իջեցնելու և Անդրկովկասում

¹⁵ Геноцид амрян (документы и комментарий), т. 2, ч.1, с. 259.

¹⁶ "Известия", М., 19 ноября 1920 г.

¹⁷ УЛԻ ԿԿԱ, ֆ. 85, ց.13, գ.151, ք. 1-2:

¹⁸ УЛԻ ԿԿԱ, ֆ. 85, ց.14, գ. 22, ք.1:

¹⁹ Չոհրաբյան է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 226:

ռազմական գործողությունների մասին վտանգին, ապա դրանք, իրոք, անհիմն լուրեր էին, որոնք տարածվում էին նաև, ըստ ամենայնի, թուրքական քարոզչամեքենայի կողմից:

Ինչպես տեսնում ենք, ռուս-թուրքական կոնֆերանսի նախապատրաստության փուլում խորհրդային կառավարությունը որոշ քաղաքական անհարթություններ ուներ թուրքերի հետ վրաստանի հարցում: Բնականաբար ավելի բարդ պետք է լինեին ռուս-թուրքական հարաբերությունները Հայաստանի խնդրում, մանավանդ եթե նկատի ունենանք, որ թուրքերը բռնազավթել էին Հայաստանի տարածքների մեծագույն մասը:

* * *

Այս համայնապատկերի վրա հարկ է պարզել Հայաստանի նոր իշխանությունների վերաբերմունքն ու ակնկալիքը ռուս-թուրքական հարաբերություններից: Հայիեդկոնը գտնում էր, որ Հայաստանի խորհրդայնացմամբ որակապես նոր փուլ են թևակոխել հայ-թուրքական հարաբերությունները, և հույս էր տածում, որ Խորհրդային Ռուսաստանի օժանդակությամբ հնարավոր կլինի բարեկամաբար լուծել անցյալից կուտակված հայ-թուրքական բազում կնճռոտ խնդիրները, այդ թվում տարածքային-սահմանային հարցերը: Հայիեդկոնը մասնավորապես հույս էր տածում, որ ՌՍՖՍՀ կառավարությունը կաջակցի Հայաստանին հայ-թուրքական սահմանային խնդրում, որ Ռուսաստանը ճնշում կգործադրի իր դաշնակցի վրա, որպեսզի նա տարածքային որոշ զիջումներ անի Հայաստանի օգտին, մանավանդ որ հայ-ռուսական՝ հոկտեմբերի 28-ին նախաստորագրված եզրափակիչ որոշման արձանագրությամբ ՌՍՖՍՀ կառավարությունը պարտավորվում էր հասնել նրան, որպեսզի ԹԱՄԺ կառավարության զորքերը հետ քաշվեն ռուս-թուրքական նախկին՝ 1914 թ. սահմանը²⁰:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի խորհրդայնացման մասին հայտնի հռչակագրում Հայիեդկոնը միամտորեն հավատ էր տածում, թե իբր Խորհրդային Ադրբեջանը և «իմպերիալիզմի լծից ազատագրվող ժողովրդական Տաճկաստանը» եղբայրական ձեռք կմեկնեն Հայաստանին, և արդարությամբ կլուծվեն առկա տարածքային-սահմանային և այլ վիճելի հարցերը. «Մենք հա-

²⁰ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 315. Нагорный Карабах, док. и ком., т. I, М., 2008, с. 526.

մոզված ենք նաև, - ասված է Հայիեդկոմի ղեկավարացիայում,- որ ոչ թե հաղթողի սուրն է թելադրելու Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի միջև կայանալիք հաշտության պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի և աշխատավորական Տաճկաստանի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունը և համաձայնությունը»²¹:

Հայաստանի պաշտոնական Խորհրդայնացման և Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման հաջորդ օրը՝ դեկտեմբերի 3-ին, Բ. Լեգրանը Երևանից հեռախոսազրույց է ունեցել Բաքու՝ Գ. Օրջոնիկիձեի հետ: Ձրույցի ժամանակ շոշափվել է Ալեքսանդրապոլի պայմանագրի խնդիրը: Լեգրանը տեղեկացնում է, որ «Երեկ հին կառավարության պատվիրակությունը, երբ Հայաստանում տեղի ունեցավ հեղաշրջում, ստորագրեց ժանր և աննպաստ պայմանագիր: Ես հարցում արեցի Մդիվանուց: Նա հաղորդեց, որ թուրքերը հասկանում են, որ հեղաշրջման դեպքում պայմանագիրը կորցնում է իր ուժը, և պետք է կնքվի նորը»²²: Գ. Օրջոնիկիձեն իր հերթին Բ. Լեգրանին փոխանցում է, որ Մոսկվան համաձայն է թուրքերի հետ կնքելու պայմանագիր, և քաղաքական մեծ արդյունք կտար, եթե թուրքերը չեղյալ հայտարարեին դաշնակների հետ կնքած պայմանագիրը և բանակցություններ սկսեին Հայաստանի նոր կառավարության հետ՝ մեր մասնակցությամբ²³: Այսինքն՝ Օրջոնիկիձեի կարծիքով՝ Հայաստանը և Թուրքիան պետք է ինքնուրույն բանակցություններ վարեին Ռուսաստանի մասնակցությամբ և նոր պայմանագիր կնքեին: Այստեղ դեռևս խոսք չի գնում ռուս-թուրքական բանակցություններին Հայաստանի մասնակցության մասին: Դա է նաև հաստատում Հայաստանի արտագործող կոմ Ալ. Բեկզադյանի ղեկտեմբերի 10-ի նոտան քննալական կառավարությանը²⁴:

Ասվածը հաստատվում է նաև Մդիվանու մի գրությունից՝ գրված Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո: Նա վստահեցնում էր, որ Հայաստանի Խորհրդայնա-

²¹ «Հայաստանի Հանրապետությունը (1918–1920 թթ.)», էջ 369, Կասյան Ա., Հոդվածներ, Ե., 1967, էջ 180-181, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ղեկավարության և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1960, էջ 405:

²² Генцид армян (документы и комментарий), т. 2, ч.1, с. 282.

²³ Նույն տեղում, էջ 283:

²⁴ «Հայաստանը ...», էջ 465-467:

ցունից հետո թուրքերը գտնում են, որ իրադրությունը փոխվել է և, իբր, կլինեն հայ-թուրքական նոր բանակցություններ²⁵:

Դեկտեմբերի 4-ին Հայաստանի հեղկոմի (կառավարության) նախագահ Ս. Կասյանը հեռագրում է Քյազիմ Կարաբեքիրին, որով, տեղեկացնելով Հայաստանի խորհրդայնացման մասին, առաջարկում է հաշտության բանակցություններ սկսել. «Մոտիկ ապագայում, - ասվում էր Կասյանի հեռագրում, - կիրավիրվի կոնֆերանս, որտեղ խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ միասին քննության կառնվեն ընդհանրապես կովկասյան խնդիրները»²⁶:

Ս. Կասյանը և Բ. Լեգրանը դեկտեմբերի 5-ին հեռագրում են Ալեքսանդրապոլ Բ. Մդիվանուն. «Պնդեցե՞ք Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարման և Հայհեղկոմի պատվիրական հետ նոր բանակցություններ սկսելու անհրաժեշտության վրա»²⁷: Սակայն շուտով պարզվում է, որ հայ-թուրքական նոր կոնֆերանս հրավիրելու խորհրդային կողմի նախաձեռնությունը ընդամենը խաբկանք էր, որը իսկույն մերժվեց թուրքերի կողմից: Հարկ է ընդգծել, որ խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ևս ցանկանում էր վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, սակայն մեր կարծիքով, ոչ թե հայ-թուրքական սահմանները հոգուտ Հայաստանի փոխելու (թերևս, որոշ վերապահություն պետք է անել Չիչերինի և Լեգրանի մոտեցումներում) նպատակով, այլ այն իմաստով, որ Թուրքիան Հայաստանի ներքին գործերին ռազմաիրավական միջամտության հիմքեր չունենա, ինչպիսին որ արձանագրված են Ալեքսանդրապոլի պայմանագրի առանձին հոդվածներում: Ինչպես արդեն նշվել է, Հայաստանին պարտադրված Ալեքսանդրապոլի պայմանագրի մի շարք հոդվածներ, (3, 4, 5, 10,13) քաղաքական առումով, իրոք, Հայաստանի համար նսեմացուցիչ էին, որովհետև դրանք սպառնում էին երկրի պետական ինքնիշխանությանը: Քաղաքական առումով Ալեքսանդրապոլի պայմանագիրը Հայաստանը գործնականում դնում էր կախման մեջ Թուրքիայից: Մինչդեռ խորհրդային Ռուսաստանը նպատակ ուներ Հայաստանը դուրս բերել Թուրքիայի ազդեցության ոլորտից և ներառել իր ենթակայության տիրույթ:

²⁵ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 282, 296.

²⁶ ՀԱԱ, ֆ. Կ. 1022, ց. 4, գ. 72, թ. 2:

²⁷ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1157, թ. 1:

Հայ-թուրքական կոնֆերանսի հրավիրման հարցում թուրքերի գլխավոր առարկությունն այն էր, որ իրենք չեն վստահում Հայաստանի նոր իշխանություններին, հայ կոմունիստներին, որ իբր խորհրդային իշխանությունը Հայաստանում մակերեսային է և այլն:

Գ. Օրջոնիկիձեն դեկտեմբերի 4-ին բարձրագույն ղեկավարությանը (Վ. Լենին, Ի. Ստալին, Գ. Չիչերին) հեռախոսով անուղղակի ձևով հասկացնում էր, որ թուրքերը ամենևին չէին վստահում հայ կոմունիստներին և կտրականապես դեմ են Դրոյի և Տերտերյանի հեղկոմի կազմի մեջ մտցնելուն²⁸: Զ. Կարաբեքիրը, առարկելով Բ. Մդիվանուն, անհնար էր համարում հայ-թուրքական պայմանագրի վերանայումը՝ դա պատճառաբանելով, ա/Հայաստանում խորհրդային իշխանությանը չվստահելով, որովհետև կառավարության մեջ է գտնվում թուրքերի համար այնպիսի ատելի դեմք, ինչպիսին Դրոն է և Բ/ թուրք ժողովրդի կրած զոհերով²⁹ :

Հայ կոմունիստներին չվստահելու թուրքերի կեղծ փաստարկը բավական էր, որ նրանք հրաժարվեին Հայաստանի հետ առանձին բանակցելուց:

ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի և Կովկասյան ռազմաճակատի ՌԻԽ անդամ Գ. Օրջոնիկիձեն դեկտեմբերի 6-ին հեռագրում է Հայ-հեղկոմի նախագահ Ս. Կասյանին և անդամ Ա. Նուրիջանյանին, որպեսզի պարզի, թե նրանք դիմել են արդյոք թուրքերին հաշտության առաջարկությամբ և ինչ պատասխան են ստացել³⁰: Հայաստանի հեղկոմը նման առաջարկ արել էր դեկտեմբերի 4-ին Զ. Կարաբեքիրին ուղղված Ս. Կասյանի ողջույնի հեռագրում, իսկ փոքր ավելի ուշ՝ դեկտեմբերի 10-ին, պաշտոնապես նման առաջարկով դիմում է արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը: Նկատի ունենալով, որ Զ. Կարաբեքիրը համառորեն խուսափում էր խորհրդային Հայաստանի կառավարության հետ նոր հաշտության բանակցություններ վարելու առաջարկից ու միաժամանակ հայտարարում, որ Հայկական հարցը ենթակա է լուծման Մոսկվայում՝ ռուս-թուրքական կոնֆերանսում՝ հայ կոմունիստների նվազագույն մասնակցությամբ: Բ. Լեգրանը դեկտեմբերի 6-ի կեսօրին հեռագրում է Գ. Չիչերինին, որպեսզի վերջինս իր հեղինակությամբ դիմի Անգորայի կառավարությանը՝ անհապաղ հայ-թուրքական

²⁸ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч.1, с. 282, 296.

²⁹ Նույն տեղում, էջ 301:

³⁰ Նույն տեղում, էջ 306:

կոնֆերանս հրավիրելու խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ³¹:

ՌՍՖՍՀ արտգործոժողկոմ Գ. Չիչերինը ՌԿ(ք)Կ ԿԿ ուղղված դեկտեմբերի 6-ի նամակում շարադրում էր այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեր խորհրդային կողմը Թուրքիայի հետ բանակցությունների ժամանակ: Մասնավորապես նա պնդում էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը պետք է որոշվի հայ-թուրքական խառը հանձնաժողովի միջոցով՝ Ռուսաստանի մասնակցությամբ: Ընդ որում՝ տարածքային սահմանազատման հիմքում պետք է դրվեր ազգագրական (էթնիկ) սկզբունքը³²:

Գ. Չիչերինը դեկտեմբերի 5-ին նամակ է գրել հիվանդությունից նոր ապաքինված Շ. Էլիավային՝ հայ-թուրքական սահմանային խնդրի շուրջ որոշ պարզաբանումներ անելով: Չիչերինը, հիշեցնելով Բեքիր Սամիի հետ 1920 թ. օգոստոսին մշակված պայմանագրի նախագիծը, նշում է, որ իրենք համաձայնության չեկան թուրքական սահմանագծի հարցում, քանի որ «նրանք պահանջում էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանագիծը, որը և համապատասխանում էր նրանց «Ազգային ուխտի» պահանջին»: «Սակայն այն ժամանակ, - շարունակում էր Գ. Չիչերինը, - մենք պահանջում էինք, որ թուրքերը սկզբունքորեն ճանաչեն Թուրքահայաստանի թեկուզ մի որոշ մասի (Վանի, Բիթլիսի, Մուշի) անկախությունը, որը բավարար կլիներ թուրքահայ բնակչության ապրելու համար»³³: Մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ Գ. Չիչերինը առաջարկել է, որ Վանը, Բիթլիսը և Մուշը միացվեն Հայաստանին, մի առաջարկություն, որը Անգորայում ՌՍՖՍՀ ներկայացուցչության քարտուղար Ն.Ուլամալի վկայությամբ բուռն դժգոհությամբ է ընդունվել ԹԱՄԺ-ում³⁴:

Կարելի է ենթադրել, որ խորհրդա-թուրքական մոսկովյան 1-ին բանակցությունների շրջանում Չիչերինը դնում էր արևմտահայ այդ երեք նահանգների անկախության (ընդօժ. հեղինակի) հարցը, որի պատճառով էլ օգոստոսի 24-ին նախաստորագրված պայմանագրի նախագիծը հետագա ընթացք (զարգացում) չստա-

³¹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 307.

³² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 306, ч. 2, с. 414.

³³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 305.

³⁴ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 413.

ցավ: Իսկ ավելի ուշ՝ դեկտեմբեր ամսին Գ. Չիչերինը պահանջ էր դնում, որ Վանը, Բիթլիսը և Մուշը միացվեն (ընդգ. հեղինակի) արդեն Խորհրդային Հայաստանին:

Հարկ է նշել, որ Խորհրդա-թուրքական երկրորդ կոնֆերանսի նախապատրաստության այս փուլում Հայկական հարցում Գ. Չիչերինը ցուցաբերել է հայանպաստ մոտեցում: Դա երևում է դեկտեմբերի առաջին օրերին՝ 3-ին և 6-ին, ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին ուղղված նամակներից, նաև՝ Գ. Օրջոնիկիձեի, Բ. Մդիվանու, Բ. Լեզրանի, Ն. Ուլամալի հետ ունեցած ինտենսիվ նամակագրական կապերից: Պարզվում է, որ նա եռանդուն ջանքեր է թափել շուտափույթ հայ-թուրքական (Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ) կամ ռուս-թուրքական (հայերի մասնակցությամբ) կոնֆերանս հրավիրելու և օգոստոսի 24-ի պայմանագրի նախագծի ոգով կարգավորելու առաջին հերթին հայ-թուրքական հարաբերությունները: Սակայն թուրքական կողմի զանազան պատճառաբանություններով, որ Հայաստանի հետ արդեն կնքված է պայմանագիր, որ իրենք չեն վստահում հայ կոմունիստներին և այլն, խնդրի լուծումը ձգձգվեց:

Այդ մասին մեկ ավելորդ անգամ փաստում է դարձյալ Անգորայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչության 1-ին քարտուղար Ն. Ուլամալի դեկտեմբերի 7-ի հեռագիրը՝ ուղղված արտգործոժողկոմ Գ. Չիչերինին: Ուլամալը տեղեկացնում է, որ ԹԱՄԺ կառավարության արտգործոժողկոմ Ա. Մուխթարի հետ ունեցած շփումներից ստացել է այն տպավորությունը, որ թուրքերը անվստահությամբ են վերաբերում Խորհրդային Հայաստանին, չեն մեղմում իրենց վերաբերմունքը Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի հանդեպ, չեն ուզում զորքերը հետ քաշել մինչև Արփաչայ (Ախուրյան), պահանջում են հայկական զորքը զինաթափել՝ հասցնելով մեկուկես հազարի և այլն³⁵: Սակայն այս առարկությունները թուրքերն (Զ. Կարաբեքիրը, Ա. Մուխթարը) անում էին ոչ թե պաշտոնապես, այլ մասնավոր զրույցների կարգով:

Այսպիսով, մինչև դեկտեմբերի առաջին շաբաթը Հայկական հարցի լուծման կտրապակցությամբ Խորհրդային կողմը պնդում էր հայ-թուրքական մոր կոնֆերանսի հրավիրման՝ Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ, սակայն թուրքերը, իբրև

³⁵ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 309.

առարկություն մեջտեղ բերելով Ալեքսանդրապոլի պայմանագրի արդեն կատարված փաստը, ինչպես նաև հայ կոմունիստներին չվստահելու պատճառաբանությունը, հնարավոր էին համարում Չայաստանի խնդրի քննարկումը ռուս-թուրքական կոնֆերանսում հայ կոմունիստների նվազագույն մասնակցությամբ: Բայց քիչ ուշ կտեսնենք, որ թուրքերն առհասարակ մերժում են հայերի որևէ մասնակցություն հրավիրվելիք ռուս-թուրքական կոնֆերանսին:

Խորհրդա-թուրքական կոնֆերանսի նախապատրաստության առաջին գործնական քայլը կարելի է համարել 1920 թ. դեկտեմբերի 8-ը, երբ որոշակիացվեց կոնֆերանսի ձևաչափը և տեղը, այսինքն՝ լինելու է Խորհրդա-թուրքական, իսկ վայրը՝ Մոսկվան:

Այդ օրը Գ. Չիչերինը հեռագրում է Բաբու՝ Գ. Օրջոնիկիձեին և Ալեքսանդրապոլ՝ Բ. Մդիվանուն՝ տեղեկացնելով, որ «Խորհրդային կառավարությունը ստացել է թուրքական կառավարության առաջարկը Մոսկվայի կոնֆերանսի մասին՝ Չայաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի մասնակցությամբ լուծելու Չայաստանի և Թուրքիայի միջև եղած տարածքային հարցերը»³⁶: Գ. Չիչերինը գտնում էր, որ կոնֆերանսին պետք է մասնակցի նաև Ադրբեջանի պատվիրակությունը: Այդ նպատակով հրավերներ են ուղարկվել Չայաստանի և Ադրբեջանի կառավարություններին, իսկ թուրքական պատվիրակության համար ճանապարհը բաց է³⁷: Նույն օրը երեկոյան, Գ. Չիչերինին ուղղված պատասխան գրությամբ, Գ. Օրջոնիկիձեն առարկում է Չիչերինի այն արտահայտությանը, թե իբր թուրքերը առաջարկություն են արել հրավիրել կոնֆերանս՝ լուծելու Չայկական հարցը: «Որքան ինձ հայտնի է, - նշում է Օրջոնիկիձեն, - թուրքերը նման առաջարկություն չեն արել: Եղել է միայն Կարաբեքիրի առաջարկությունը՝ հայ կոմունիստների նվազագույն մասնակցությամբ, կնքելու պայմանագիր մեր և Թուրքիայի միջև»³⁸:

Այնուհետև Օրջոնիկիձեն պարզաբանում է, որ խոսքը ոչ թե նոր հաշտություն կնքելու, այլ Խատիսյանի կնքած Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը վերանայելու մասին է: Ըստ

³⁶ ՍԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 52, թ. 1, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 312-313 (հեռագրի երկրորդ մասը Գ. Չիչերինի ենթադրությունն է):

³⁷ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 313.

³⁸ Նույն տեղում:

Օրջոնիկիծեի՝ թուրքերը շատ քիչ են վստահում հայ կոմունիստներին, մանավանդ որ մինչև այժմ կառավարության կազմում է այնպիսի մի «օդիոզ» դեմք, ինչպիսին Դրոն է, որին թուրքերը համարում են իրենց արյունախում թշնամին: Օրջոնիկիծեի կարծիքով՝ թուրքերի իսկական մտադրությունը Հայաստանի բաժանումն է Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

Օրջոնիկիծեի նկարագրությամբ թուրքերը ցանկանում են Ռուսաստանի հետ կոնֆերանս հրավիրել Մոսկվայում, և սկզբում ենթադրվում էր, որ պատվիրակությունը կգլխավորի Բ. Կարաբեքիրը, որը վայելում է մեծ ժողովրդականություն թուրքերի մեջ: Կարաբեքիրը խնդրում է, որ հանվի Թուրքիային հատկացվող զենքի բեռնման արգելքը, որին Ռուսաստանը հավանություն է տալիս: Օրջոնիկիծեի կարծիքով՝ թուրքերը մեծ հույսեր են կապում Մոսկվայի կոնֆերանսի հետ: Այդ կոնֆերանսին պետք է մասնակցի նաև Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը՝ որպես լիիրավ անդամ: Թուրքերի գլխավոր նպատակը ռազմական դաշինքն է Անտանտի դեմ³⁹:

Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը ևս հաստատում է Օրջոնիկիծեի տեղեկությունը ռուս-թուրքական կոնֆերանս հրավիրելու հարցում: Նույն՝ դեկտեմբերի 8-ի երեկոյան նա հեռագրում է Մոսկվա Գ. Չիչերինին, որ «թուրքերը չեն ցանկանում պայմանագիր կնքել Հայաստանի կոմունիստական կառավարության հետ և գտնում են, որ խնդիրը կլուծվի Մոսկվայում Թուրքիայի և Ռուսաստանի բանակցություններում՝ հայ կոմունիստների նվազագույն մասնակցությամբ»⁴⁰:

Դեկտեմբերի 3-ին արդեն կոնկրետ տեղեկատվությամբ Ալեքսանդրապոլից Բաբու՝ Օրջոնիկիծեին և Մոսկվա՝ Չիչերինին հեռագրում էր Բ. Մդիվանին: Նա հայտնում էր, որ Անգորայի կառավարությունը նշանակել է պատվիրակություն, որը պետք է կնքի պայմանագիր Խորհրդային Ռուսաստանի հետ: Պատվիրակության կազմում ընդգրկվել են Յուսուֆ Քեմալը (պետական տնտեսության կոմիսար), Ռիզա Նուր բեյը (մամուլի կոմիսար) և Ալի Ֆուադ փաշան (Մոսկվայում Թուրքիայի նորանշանակ դեսպան), կան նաև խորհրդականներ՝ Սաֆաթ բեյ և Սեիֆ բեյ (զինվորական կցորդ): Այնուհետև Մդիվանին տեղեկացնում է, որ թուրքական պատվիրա-

³⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч.1, с. 311.

⁴⁰ Նույն տեղում, էջ 310:

կությունը Անգորայից կմեկնի դեկտեմբերի 11-ին: Բացի այդ՝ նա հայտնում է, որ Անգորայի կառավարությունը խնդրում է ճշտել կոնֆերանսի հրավիրման վայրը: «Անգորայի կառավարությունը առաջարկում է կոնֆերանսում քննարկել և կնքել Անդրկովկասի հետ կապված բոլոր գործերի քաղաքական կարգավորման պայմանագիր և մշակել Ամտանտի դեմ համատեղ գործողությունների ռազմական դաշինքի պլան»⁴¹:

ՌՍՖԽՅ կառավարության անունից Գ. Չիչերինը Արևելյան ռազմաճակատում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Ք. Կարաբեքիրի միջոցով դեկտեմբերի 9-ին պատասխան նոտա է հղում Անգորայի կառավարությանը: «Ռուսական խորհրդային կառավարությունը,- ասված է նոտայում,- ստանալով թուրքական կառավարության առաջարկությունը Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մոսկվայում կոնֆերանս հրավիրելու մասին՝ ուրախությամբ ողջունում է այդ նախաձեռնությունը և միաժամանակ անհրաժեշտ գտնում Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությունը այդ կոնֆերանսին, քանի որ այդ պետությունների և Թուրքիայի ու Ռուսաստանի միջև առկա են լուծման ենթակա տարածքային և այլ հարցեր»⁴²:

Լյնուհետև Գ. Չիչերինը թուրքական կողմին տեղյակ է պահում, որ կոնֆերանսին մասնակցելու համար խորհրդային կառավարությունը հրավեր է ուղարկում Ադրբեջանի և Հայաստանի խորհրդային կառավարություններին: Գ. Չիչերինը նշանակալի երևույթ էր համարում չորս պետությունների այդ կոնֆերանսը, որը «կունենա կարևոր հետևանք Արևելքի ազատագրման համար»⁴³:

ՌՍՖԽՅ կառավարությունը, գիտակցելով, որ հատկապես հայ-թուրքական սահմանի հարցի լուծումը առանց խորհրդային Հայաստանի մասնակցության կհամարվի միջազգային իրավունքի տարրական նորմերի խախտում, ուստի հրավիրեց Հայաստանի կառավարությանը մասնակցելու կոնֆերանսին: Խորհրդային ղեկավարության հաշվարկով Հայաստանի պատվիրակության մասնակցությունը կոնֆերանսին հակազդող քայլ կլիներ ոչ միայն Սևրի, այլև Ալեքսանդրապոլի պայմանագրին: Խորհրդային ղեկա-

⁴¹ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1161, ք. 1, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 312.

⁴² ДВП СССР, т. 3, М., 1959, с. 371, Геноцид армян, т. 2, ч. 1, с. 570, «Հայաստանը...», էջ 463-464:

⁴³ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1164, ք. 1:

վարությունը քաղաքական հավասարակշռությունը պահպանելու համար չէր կարող հրավեր չուղարկել Խորհրդային Ադրբեջանին: Եվ դրանց մասին Գ. Չիչերինը տեղյակ պահեց Թուրքիային⁴⁴:

Գ. Չիչերինի՝ Անգորայի կառավարությանը ուղղված ղեկ-տեմբերի 9-ի նոտայի հաջորդ օրը՝ ղեկտեմբերի 10-ին, ինչպես արդեն ասվել է, հետևեց Չայաստանի արտագործժողովում Ալ. Բեկզադյանի նոտան Անգորա՝ ԹԱՄԺ կառավարության արտագործժողովում Ահմեդ Մուխթարին: Չիչերինի նոտայի բովանդակությունից անտեղյակ Բեկզադյանը մասնավորապես հույս էր հայտնում, որ «Խորհրդային իշխանությունը սպասում է, որ դուք հանդիսավոր կերպով չեղյալ կհամարեք դաշնակների ստորագրած հաշտությունը և, նպատակ ունենալով մոտ ապագայում երկու ժողովուրդների միջև նոր հարաբերություններ հաստատել և հնարավորություն տալ երկու ժողովուրդներին խաղաղ աշխատանք սկսելու, առաջարկում է, Չայաստանի հեղափոխական հեղաշրջումից առաջացած նոր պայմաններին համապատասխան, շուտով կոնֆերանս հրավիրել»⁴⁵: Անգամ որպես ապագա բանակցությունների համար վայր Բեկզադյանը առաջարկում էր Երևանը, Բաքուն կամ Ալեքսանդրապոլը: Սակայն ղեկտեմբերի 19-ի և 25-ի պատասխան նոտաներով Ա. Մուխթարը նախ ուրախությամբ ողջունում էր դաշնակների իշխանության տապալումը և Խորհրդային կարգերի հաստատումը Չայաստանում, սակայն դեռևս մակերեսային էր համարում դաշնակների իշխանության փոփոխումը կոմունիստականով: Այնուհետև պատասխանելով Ալ. Բեկզադյանի նոտային՝ գտնում էր, որ «իրենք մտադիր չեն Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայել», որ հնարավոր է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար ելնել Ալեքսանդրապոլի պայմանագրից: Միաժամանակ պատրաստակամություն էր հայտնում այդ հարցը քննության առնել առաջիկայում Ռուսաստանի հետ հրավիրվող կոնֆերանսում⁴⁶:

⁴⁴ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 372, 391.

⁴⁵ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Չայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), էջ 423, Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Ե., 1981, էջ 105, ДВП СССР, т. 4, М., 1960, с. 711.

⁴⁶ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 711, Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, էջ 114, ՅԱԱ, ֆ.114, ց.1, գ. 6, ք.18, ֆ.1022, ց. 3, գ. 288, ք.1:

Այս կապակցությամբ իրականությանը չի համապատասխանում խորհրդային հեղինակների, այդ թվում Վ. Հարությունյանի այն պնդումը, թե Ս. Կասյանի գլխավորած կառավարությունը չեղյալ հայտարարեց հայադավ այդ դաշնագիրը: Պաշտոնապես նման բան չի եղել: Մի բան է ցանկությունը, բոլորովին այլ՝ իրականությունը⁴⁷: Հայինդկոնը ի զորու չէր առանց Մոսկվայի գիտության ու համաձայնության Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ հայտարարելու:

Այսպիսով, Անգորայի կառավարությունը մերժեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայելու Հայաստանի առաջարկը և պատրաստ էր Հայաստանին վերաբերող հարցին անդրադառնալ ռուս-թուրքական կոնֆերանսում: Թիֆլիսում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ գնդապետ Ստոքսը դեկտեմբերի 24-ին ծածկագրով հաղորդում էր Լոնդոն, որ «Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը առաջարկեց Ալեքսանդրապոլի դաշնագիրը չեղյալ հայտարարել, սակայն թուրքերը մերժեցին»⁴⁸:

* * *

Կոնֆերանսի նախապատրաստման այս փուլում թուրքերի համար որոշ բարդություններ էին ծագել, որի համար էլ ձգձգվում էր թուրք պատվիրակության մեկնումը: Թուրքերը ցանկանում էին պարզել երկու խնդիր. ա/ Հայաստանին հնարավոր զիջումներ անելու վարկածը և բ/ ռուս-անգլիական բանակցությունների ենթատեքստը:

Թուրքերի մոտ կասկած կար, թե Ռուսաստանը կարող է տարածքային որոշակի պահանջներ ներկայացնել Թուրքիային: Դրա համար հիմք էին համարում, օրինակ, Գ. Չիչերինի տարբեր առիթներով ներկայացրած առաջարկները: Մասնավորապես ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյին ուղղված դեկտեմբերի 3-ի նամակում Գ. Չիչերինը առաջարկում էր թուրքերի հետ կնքվելիք պայմանագրում երաշխավորել Հայաստանի անկախությունը այնպիսի սահմաններով, որոնցում ներառվի Թուրքահայաստանի որոշ մասը⁴⁹: Այնուհետև ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին ուղղված մեկ այլ՝ դեկտեմբերի 6-ի նա-

⁴⁷ Հարությունյան Վ. Ա., Սարգիս Կասյան, Ե., 1965, էջ 29:

⁴⁸ Ոգուն չապավինելու արդյունքը (Գ. արք. Հովսեփյանցի հուշագրությունը և փաստաթղթեր), Ե., 2002, էջ 59:

⁴⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 413.

մակում նա պնդում էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները պետք է որոշվեն խառը հանձնաժողովի միջոցով՝ ՌՍՖՍՀ մասնակցությամբ՝ ներառելով Թուրքահայաստանի որոշ մասը⁵⁰:

Այս կապակցությամբ ԹԱՄԺ կառավարության արտգործոժոկոն Ա. Մուխթարը ղեկտեմբերի 15-ին Գ. Չիչերինին ուղղված նոտայով ցանկանում էր իմանալ, թե Մոսկվան ինչպիսի դիրք է գրավելու Հայկական հարցի վերաբերյալ: «Սեզ լուրեր են հասնում, որ դուք ցանկանում եք մեր մեջ եղած դաշինքը վերացնել և Հայաստանին վերադարձնել թուրք բնակչությամբ հողամասերը»⁵¹: Եվ այդ հիմնավոր լուրերից մեկը ստացել էր Թուրքիայի արտգործոժոկոն Բեքիր Սամի բեյի կողմից: Վերջինս 1920 թ. ամառային բանակցություններից հետո էլ բավականին երկար մնացել էր Ռուսաստանում և Մոսկվայից մեկնել էր նոյեմբերի 19-ին⁵²:

Բեքիր Սամի հայտնած տեղեկություններով ինքը Գ. Չիչերինի հետ ունեցած հանդիպումների ժամանակ վերջինս թուրքերից պահանջել էր Վանի և Մուշի մարզերի հաշվին ընդարձակել Հայաստանի սահմանները, ինչը զարմանք ու տարակուսանք է առաջացրել թուրք ղեկավարների շրջանում⁵³: Երբ թուրքական պատվիրակության արտակարգ ներկայացուցիչը Մոսկվայից վերադարձավ Անգորա և Ազգային ժողովում զեկուցեց, որ Ռուսաստանը Թուրքիայի հետ համաձայնության պայման է համարում Վանի և Բիթլիսի զիջումը Հայաստանին, այդ ժամանակ քուրդ պատգամավորները տեղից ղղավեցին. «Հանձնե՛ք, բայց թող հայերը փորձեն գան ու վերցնեն»⁵⁴:

ԹԱՄԺ կառավարության արտգործոժոկոն Ահմեդ Մուխթարը Անգորայից Գ. Չիչերինին ուղղված ղեկտեմբերի 27-ի նոտայում պահանջում էր այդ խնդրի պարզաբանում և առաջացած հակասության վերացում: Այլապես նա անօգուտ էր համարում կոնֆերասի հրավիրումը: Ավելին, Ա. Մուխթարը դիվանագիտական շանտաժի լեզվով սպառնում էր, որ հակառակ դեպքում թուրք ժողովուրդը կարող է կողմնորոշվել (շրջվել) դեպի Արևմուտք⁵⁵: Քեմա-

⁵⁰ Նույն տեղում, էջ 414:

⁵¹ ՀԱԱ. ֆ.1022, ց. 4, գ. 72, ք. 24–25:

⁵² ДВП СССР, т. 4, М., 1960, с. 658:

⁵³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 341–342.

⁵⁴ Նույն տեղում, էջ 413:

⁵⁵ Նույն տեղում, էջ 342:

լականները համաձայն չէին անգամ 1914թ. ռուս-թուրքական նախկին սահմանագծին, էլ ինչ խոսք կարող էլ լիներ Վանի և Մուշի վերադարձի մասին:

Միաժամանակ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը անհանգստացած էր նաև ամիսներ շարունակ Լոնդոնում ընթացող ռուս-անգլիական բանակցություններից: ԹԱՄԺ արտգործկոմիսարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարը Գ. Չիչերինին հասցեագրված դեկտեմբերի 6-ի նամակ-նոտայում նախ ցանկանում էր պարզել, թե ինչ նպատակով է Ռուսաստանը բանակցություններ վարում Անգլիայի հետ: Գ. Չիչերինը դեկտեմբերի 19-ի պատասխան նոտայում պարզաբանում է, որ իրենց պատգամավորությունը Լոնդոնում արդեն 8 ամիս է բանակցություններ է վարում առևտրական համաձայնություն կնքելու նպատակով⁵⁶:

Իր հերթին Գ. Չիչերինը խորհուրդ է տալիս Ա. Մուխթարին, որ «թուրքական կառավարությունը չպետք է հետ վանի Անտանտի կառավարությունների որևէ առաջարկություն, ինչը կարող է վերջ տալ յոթնամյա պատերազմներին և անցնել խաղաղ կյանքի»⁵⁷: Այսինքն՝ Չիչերինը հասկացնում էր, որ թուրքերը ևս կարող են անկաշկանդ բանակցություններ վարել Անտանտի երկրների հետ և կնքել շահավետ պայմանագիր: Ավելին, չբավարարվելով Գ. Չիչերինի և Բ. Մոլոտովի գրավոր հավաստիացումներով, թուրքերի կասկածները փարատելու և վստահություն ներշնչելու համար Ի. Ստալինը գրությամբ դիմում է ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրո՝ քեմալականների զենքի մատակարարումը վերսկսելու վերաբերյալ: Ինչպես հայտնի է, այն ընդհատվել էր նոյեմբերի սկզբին՝ այն բանից հետո, երբ թուրքական զորքը գրավել էր Կարսն ու Ալեքսանդրապոլը: Հիմնվելով Վրաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ա. Շեյնմանի և Թուրքիայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Մոլոտովի հաղորդագրությունների վրա՝ Ի. Ստալինը հայտնում է, որ «զենքի մատակարարման ընդհատումը ջղաձգություն է առաջացրել քեմալականների շրջանում և, որպեսզի չփչացնենք մեր հարաբերությունները նրանց հետ և ուժեղացնենք քեմալական ծախսի դիրքերը, անհրաժեշտ է արագացնել Թուրքիա ուղարկվող զենքի բարձունը Նովոռոսիյսկ շոգենավ և այդ մասին Մոլոտովի միջոցով հա-

⁵⁶ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 391–392, ЗУА, ф. 1022, г. 3, қ. 325, р. 1-5:

⁵⁷ ЗУА, ф. 1022, г. 3, қ. 325, р. 6:

ղորդել թուրքերին»⁵⁸: Պետք է փաստել, որ, ի տարբերություն Ի. Ստալինի, Գ. Չիչերինը թուրքերին ցույց տրվելիք ռազմական և ֆինանսական օգնությունը պայմանավորում էր նրանց՝ Չայաստանից հեռացմամբ և արևմտահայ որոշ տարածքների վերադարձով⁵⁹: Սակայն դժվար չէ տեսնել, որ Չիչերինի հայանպաստ մոտեցումները ըմբռնում ու աջակցություն չէին գտնում Քաղբյուրոյում:

Ղեկտեմբերի կեսերից կոնֆերանսի հրավիրման ձգձգման պատճառներից մեկն էլ այն էր, որ թուրքերը համառորեն պնդում էին կոնֆերանսը ոչ թե Մոսկվայում, այլ Բաքվում հրավիրելուն: ՌԱՖԽՅ արտգործժողովոմի տեղակալ Լ. Կարախանի ենթադրությամբ թուրքերի շրջանում տարածայնություն կար. Անգորան հակված էր Մոսկվային, իսկ Ք. Կարաբեքիրը, որն, ի դեպ, մեծ ժողովրդականություն էր վայելում թուրքերի շրջանում, պնդում էր Բաքվի վրա⁶⁰: Կոնֆերանսի հրավիրման վայրը վերջնականորեն ճշտելու համար անգամ նախատեսված էր Բ. Շահթախթինսկուն ուղարկել Թուրքիա ⁶¹:

Գ. Չիչերինը ԹԱՄԺ ա.գ.կ. պաշտոնակատար Ա. Մուխթարին հասցեագրված ղեկտեմբերի 19-ի նոտայով հավաստիացնում էր, որ Երևանի և Նովոռոսիյսկի միջոցով կապի բոլոր միջոցները կապահովեն կոնֆերանսը Մոսկվայում անցկացնելու համար⁶²:

Կոնֆերանսը Բաքվի փոխարեն Մոսկվայում հրավիրելու նպատակահարմարությունը Գ. Չիչերինը պատճառաբանում էր նրանով, որ ինքը նշանակվել է ՌԱՖԽՅ պատվիրակության նախագահ և անձամբ անհնարին էր համարում բացակայությունը Մոսկվայից՝ կապված արտաքին գերատեսչության աշխատանքի հետ: Ա. Մուխթարին ուղղված սույն հեռագրում Գ. Չիչերինը բացառիկ կարևորություն էր տալիս քառակողմ այդ կոնֆերանսին⁶³:

Արդեն ղեկտեմբերի 28-ին Գ. Չիչերինը հեռագրով ողջունում էր Ա. Մուխթարին՝ պատվիրակության նշանակման և կոնֆերանսը Մոսկվայում հրավիրելու վերաբերյալ: 1921 թ. հունվարի 13-ին Ա. Մուխթարը պատասխան հեռագրով ողջունում է թուրքական

⁵⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 317.

⁵⁹ Սույն տեղում, էջ 259-260:

⁶⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 337.

⁶¹ Սույն տեղում:

⁶² ДВП СССР, т. 3, М., 1959, с. 391-392.

⁶³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 339.

պատվիրակությանը Մոսկվա մեկնելու կապակցությամբ⁶⁴:

Ինչ վերաբերվում է Հայաստանի պատվիրակության ժամանմանը, ապա Ալ. Բեկզադյանը դեկտեմբերի 29-ին դիմում է Մոսկվա՝ Գ. Չիչերինին՝ ճշտելու թուրքերի հետ գումարվելիք խորհրդա-ժողովի (կոնֆերանսի) տեղը և ժամանակը⁶⁵: Գ. Չիչերինը դեկտեմբերի 31-ին Շ. Էլիավայի միջոցով տեղեկացնում է Ալ. Բեկզադյանին, որ Հայաստանը հրավիրված է մասնակցելու Մոսկվայի կոնֆերանսին, և Հայաստանի կառավարությունը թող առանց հապաղելու ուղարկի իր պատվիրակությունը: Նույնը առաջարկվել էր նաև Ադրբեջանին⁶⁶:

Որքան էլ որ Ռուսաստանի կառավարությունը թուրքական կողմին ծանուցում էր քառակողմ կոնֆերանսի վերաբերյալ, բայց հենց թուրք պատվիրակությունը Մոսկվա հասավ, իսկույն առաջ քաշեց երկկողմ՝ ռուս-թուրքական կոնֆերանսի պայմանը՝ պատճառաբանելով, որ իբր իրենք լիազորված չեն Հայաստանի հետ բանակցելու:

Խորհրդա-թուրքական բանակցությունների պատրաստության գործընթացի վրա անուղղակի ազդեցություն էր թողնում Հայաստանի խնդիրը: Ինչպես ասվեց, քաղաքական շահարկումներ անելով՝ քեմալական ղեկավարությունը հայտարարում էր, թե իրենք չեն վստահում հայ բուլշևիկներին և առհասարակ խորհրդային կարգերին Հայաստանում: Եվ դրա համար իբրև ապացույց դարձյալ բերվում էր Հայաստանի կարմիր բանակի հրամանատար (սպարապետ) Դրոյի օրինակը, ինչպես նաև նախկին բանակի սպայության առկայությունը: Դրոյի և մյուս դաշնակցականների (Յ. Քաջազնունի, Յ. Տերտերյան և այլոք) խորհրդային իշխանության մարմիններից հեռացման կտրական պահանջ էին դնում ոչ միայն թուրքերը, այլ թուրքերի անմիջական ազդեցության տակ գտնվող Ալեքսանդրապոլի հեղկոմը: Տեղի հեղկոմի դեկտեմբերի 23-ի ընդունած բանաձևում կարդում ենք. «Դրոյի և մյուս դաշնակ հրամանատարների առկայությունը վարկաբեկում է մեր կուսակցությունը և իշխանությունը, ինչպես բանվորագյուղացիական զանգվածների, այնպես էլ թուրք ասկյարների աչքում»⁶⁷: Նույն

⁶⁴ Նույն տեղում, էջ 571:

⁶⁵ ՀԱԱ, ֆ.114, ց. 2 Ե, գ. 18, ք. 21:

⁶⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 338.

⁶⁷ ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 19, ք. 3:

հեղկոմի մեկ այլ գրության մեջ կարդում ենք. «Խմբապետների տեղը ոչ թե կարմիր բանակի հրամանատարության մեջ է, այլ արտակարգ հանձնաժողովի նկուղը»⁶⁸:

Թուրքերի վստահությունը շահելու նպատակով 1921 թ. հունվարի 10-ին կեղծ պատրվակով Ռուսաստան արքայազն սպարապետ Դրոն՝ իր մերձավոր 15 սպաների հետ⁶⁹: Այնուհետև դրան հաջորդեց նախկին սպաների զանգվածային արքայազն Զոնվարին Ռուսաստան արքայազնին ԶԶ նախկին բանակի 1200-ից ավելի սպաներ ու զինծառայողներ, այդ թվում՝ զորավարներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը, Զ. Զախվերդյանը, Կ. Ղամազյանը, Շելկովնիկյանը և ուրիշներ⁷⁰:

ԶԶ նախկին բանակի սպաների՝ դեպի Ռուսաստան արքայազնի հարցը առաջինը բարձրացրել է ՌՍՖՍՀ ռազմահեղափոխական խորհրդի նախագահ, ռազմական գործերի ժողկոմ Լև Տրոցկին 1920 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին: Նման պահանջն ուներ երկու նպատակ. ա/որպեսզի ամրապնդվի Հայաստանի կարմիր բանակի միջուկը և բ/որպեսզի թուրքերի մոտ կասկած չլինի Հայաստանի կարմիր բանակի նկատմամբ, թե այն կազմված է դաշնակցական սպաներից⁷¹: Թուրքերը առավել չափով անհանգստանում էին Դրոյից, որը Հայաստանի կարմիր բանակի սպարապետն էր: Այս կապակցությամբ թուրքերի պահանջով Մոսկվան (Գ. Չիչերինը) և Բաքուն (Գ. Օրջոնիկիձեն) հրահանգում են Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին, որ Դրոյին անհապաղ հեռացնեն բանակի հրամանատարի պաշտոնից և սրա փոխարեն առաջադրեն Գային⁷²:

Դրոյի և նախկին սպաների արքայազնի գործում, անշուշտ, սադրիչ դեր էր խաղում Թուրքիան: Զ. Կարաբեքիրը, Մ. Սուխթարը և այլք հայտարարում էին, որ քանի դեռ Հայաստանի կարմիր բանակից չեն հեռացվել դաշնակ Դրոն և նախկին սպաները, Թուրքիան չի վստահի Հայաստանի խորհրդային իշխանությանը: Իսկ 1921 թ. հունվարի 15-ին ՌՍՖՍՀ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը Հայկոմկուսի ԿԿ-ին ուղղված նամա-

⁶⁸ Առյուծ տեղում, Թ. 9:

⁶⁹ «Վերջին լուր», Կ. Պոլիս, 7 մարտի 1921 թ.:

⁷⁰ Տասնապետյան Զ., Զ.Յ. Ղազնակցությունը իր կազմությունն մինչև ժընդհանուր ժողովը (1890–1924), Աթենք, 1998, էջ 144:

⁷¹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 337.

⁷² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 338.

կով զգուշացնում էր. «Քանի դեռ խորհրդա-թուրքական կոնֆե-
րանսը չի սկսվել, թուրքերի վստահությունը շահելու նպատակով
անհրաժեշտ է հրաժարվել Դրոյի և մյուս դաշնակցականների
ծառայությունից: Եթե անգամ նրանք անկեղծորեն աշխատում են
մեզ հետ»⁷³: Միչև Ս. Տեր-Գաբրիելյանի նամակ-հեռագիրը կու-
ղարկվեր, Դրոն արդեն (հունվարի 10-ին) արտաքսվել էր Չայաս-
տանից:

1921թ. հունվարի 25-ին Ադրկոմկուսի Բաքվի քաղաքային
կոնֆերանսում Գ. Օրջոնիկիձեն, անդրադառնալով հայ-թուր-
քական հարաբերությունների խնդրին, հայտնում էր, որ «Թուր-
քիան մեծագույն անվստահությամբ է վերաբերվում Չայաստանի
խորհրդային իշխանությանը»⁷⁴: Եվ դրա գլխավոր պատճառը
համարում էին Դրոյի և մյուս դաշնակցականների գտնվելը իշխա-
նության մարմիններում: Նման պատրվակով թուրքերը դիտա-
վորյալ փակում էին երկաթուղային հաղորդակցությունը և այլն:

Այստեղից դժվար չէ հետևեցնել, որ քենալական Թուրքիան
ուղղակի և անուղղակի կերպով միջամտում էր Չայաստանի ներ-
քին գործերին, խոչընդոտում հանրապետության քաղաքական
կյանքի կարգավորմանը:

Նման սադրանքներով թուրքերը նպատակ էին հետապնդում
թույլ չտալ հայերի հնարավոր մասնակցությունը կոնֆերանսին,
իսկ մյուս կողմից Դրոյին և նախկին սպաներին Չայաստանից աք-
սորելով՝ իրենց համար Արևելյան ռազմաճակատում ապահովու-
թյան երաշխիք ստեղծել և իրենց ռազմուժը փոխադրել Արևմուտք՝
հույների դեմ:

Չետաքրքիր է, որ Երևանից Բաքվի վրայով Մոսկվա մեկնելու
ճանապարհին խորհրդային ղեկավարությունը 1921թ. հունվարի
երկրորդ կեսին փորձել է օգտագործել Դրոյի ազդեցությունը, որ-
պեսզի նամակագրության միջոցով նա համոզի Գ. Նժդեհին և
Զանգեզուրի ապստամբ գյուղացիությանը զենքը ցած դնեն, և Սյու-
նիքը հայտարարվի խորհրդային: Դժվար է ասել սեփական համոզ-
մունքով, թե Մոսկվա-Բաքվի պարտադրանքով է Դրոն գրել այդ
նամակները, որոնցից մեկում մասնավորապես ասվում էր. «Ռու-
սաստանի միջոցով միայն հայ ժողովուրդը կարող է լուծել իր
հողային հարցերը: Շուտով Մոսկվայում տեղի կունենա կոնֆե-

⁷³ ՉԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 16, ք. 69, ֆ. 4049, ց. 1, գ. 7, ք. 4:

⁷⁴ ՉԱԱ, ֆ. 4005, ց. 1, գ. 27, ք. 25:

րանս, որտեղ Ռուսաստանի, Թուրքիայի և Հայաստանի մասնակցությամբ կլուծվի երկրի սահմանների խնդիրը»⁷⁵: Կնշանակի, որ Դրոն ևս որոշակի հույսեր էր կապում Մոսկվայի կոնֆերանսի հետ:

1921 թ. հունվարին Դրոյին և հին սպաներին աքսորելուց զատ՝ Ադրբեջանին և քենալականներին դուր գալու համար Հայհեղկոմի անդամ և միաժամանակ Հայաստանի արդարադատության կոմիսար է նշանակվում Մ. Քենալի գործակալ Սուլեյման Նուրին՝ այդ պաշտոնում փոխարինելով Ս. Բաղդատյանին⁷⁶:

Թուրքերի դիվանագիտական աճպարարություններում աչք էր ծակում հետևյալ հակասությունը: Մի կողմից քենալականները բողոք և դժգոհություններ էին հայտնում, որ իբր Հայաստանում խորհրդային իշխանությունը մակերեսային է, որ այնտեղ դեռևս շարունակում են նստած մնալ իրենց համար ատելի մարդիկ՝ դաշնակցականներ, իսկ մյուս կողմից՝ այդ նույն թուրք կառավարող շրջաններն իրենց գործակալների միջոցով լուրեր էին տարածում, թե, իբր, քենալականները զաղտնի բանակցություններ են վարում իշխանությունից հեռացված դաշնակցականների հետ, նրանց կրկին իշխանության հետ բերելու⁷⁷: Կարծում ենք անհեթեթություն պետք է համարել, թե քենալականները կուզենային Հայաստանի ղեկին տեսնել Դաշնակցություն կուսակցությանը: Իրական քաղաքականության մեջ տարածաշրջանի քաղաքական ուժերից թուրքերի համար ամենաատելի և մերժելի քաղաքական կուսակցությունը Դաշնակցությունն էր: Դաշնակցությունը ատելի էր նաև բոլշևիկների համար: «Ե՛վ թուրքերի համար, և՛ բոլշևիկների համար,- գրում է ռուս պատմաբան Ա. Իգոլկինը,- «դաշնակ» բառը հնչում էր որպես սարսափելի, մահաւցու թշնամու հոմանիշ: Թուրքերի համար դա հասկանալի էր, այլ կերպ չէր կարող լինել»⁷⁸: Կարելի է ասել, որ այդպես է նաև ներկայումս: Իսկ ո՞րն էր տարածվող այդ կեղծ լուրերի նպատակը. այն է՝ ստիպելու խորհրդային ղեկավարությանը Հայաստանի հարցում գնալ առավելագույն զիջումների: Ցավոք, նման լուրերը, անշուշտ, թողնում էին իրենց բացասական հետևանքները:

⁷⁵ Սիմոնյան Ա., Ձանագուրդի գոյամարտը (1920–1921 թթ.), էջ 388:

⁷⁶ Վրազյան Ա., Հուլիսի մոտիկ անցյալից, «Հայրենիք», Բոստոն, 1924, թիվ 3 (հունվար), էջ 83:

⁷⁷ Գալոյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 414–415:

⁷⁸ Иголкин А., Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет. (ՊԲՀ, Ե., 2002, թիվ 1, էջ 16) :

Կոնֆերանսի նախապատրաստության փուլում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կապող օղակի դեր էր կատարում Բ. Մդիվանին, ով հունվարի սկզբին Ալեքսանդրապոլից տեղափոխվեց Կարս, իսկ ամսվա վերջին անցավ Անգորա: Նա հավատարմորեն կատարում էր Մոսկվայի հրահանգները և Մոսկվա փոխանցում թուրքերի առաջարկները:

Բ. Մդիվանին՝ իբրև ՌՍՖՍՀ ներկայացուցիչ, Կարսում հանդիպումներ է ունենում Կարաբեքիրի, Ալի Ֆուադի, Յու. Քենալի և Ռիզա Նուր բեյի հետ: Այդ հանդիպումների ժամանակ Մդիվանին որոշ պարզաբանումներ է տալիս Ալի Ֆուադին, թե ինչ հանգամանքների հիման վրա է Չիչերինը բարձրացրել Վանը և Մուշը Հայաստանին վերադարձնելու խնդիրը: Նախ՝ Չիչերինը այդ հարցը բարձրացրել է դեռևս Բեքիր Սամիի հետ ունեցած ոչ պաշտոնական գրույցների ժամանակ և դրա նպատակը Մդիվանու պատկերացմամբ «Անգլիային ու եվրոպական պրոլետարիատին հանգստացնելն է», որ իբր հորհրդային Ռուսաստանը մտահոգ է հայկական հողերի հարցով: Մդիվանին վստահեցնում էր թուրք պատվիրակներին, որ Մոսկվայի կոնֆերանսում նման հարց չի բարձրացվի, և որ նրա աշխատանքներին կխառնվի ազգությունների գործերի կոմիսար Ի. Ստալինը⁷⁹:

Մդիվանու թուրքամետ մտտեցումներում ուղենշային պետք է համարել Կարսից նրա հունվարի 8-ի հեռագիրը՝ ուղղված Գ. Չիչերինին, Ի. Ստալինին և Շ. Էլիավային: Նա կտրուկ պահանջ է դնում, որ քենալականների հետ դաշինք կնքելու համար պետք է տարածքային զիջումներ անել Հայաստանի հաշվին: Մդիվանին, հավատարմորեն արտահայտելով թուրքերի բաղձանքները, Հայկական հարցում սխալ էր համարում Բ. Լեգրանի կնքած Երևանի պայմանագիրը, որով Նախիջևանը, Ջանգեզուրը և Ղարաբաղը միացվում էին Հայաստանին, իսկ մյուս կողմից՝ Գ. Չիչերինի կողմից Բեքիր Սամի բեյին ներկայացրած պահանջը՝ Վանը, Բիթլիսը և Մուշը Հայաստանին հանձնելու վերաբերյալ: Մդիվանին գտնում էր, որ հորհրդային Ռուսաստանի նման հայանպաստ դիրքորոշումը մեծապես վնասում է Անտանտի դեմ ուղղված ռուս-թուրքական դաշինքին⁸⁰: Եվ որպեսզի առաջիկա գումարվելիք կոնֆերանսում իրական ու գործնական արդյունքների հասնեն, Մդիվանին

⁷⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 358.

⁸⁰ Նույն տեղում, էջ 346–347:

հասկացնում էր՝ «ոչ մի դեպքում չպահանջել թուրքական մարզեր Չայաստանի համար, որին թուրքերը երբեք չեն համաձայնվի»⁸¹:

Մդիվանին խելամիտ քայլ չէր համարում Վանը և Մուշը պահանջելը: Նա անհասկանալի էր համարում Մոսկվայի վերաբերմունքը Չայկական հարցում, որ «Կորբան և Իլլիչը պաշտոնական հեռագիր են ուղարկում ինձ, թե չի կարելի թուրքերի հետ վիճել Կարսի համար, իսկ Չիչերինը, պարզվում է, պահանջել է Վանը և Մուշը, որի մասին ես իմանում եմ միայն Ահմեդ Մուխթարի պատասխան նոտայից: Նման քաղաքականությամբ մենք հեռու չենք գնա»⁸²: Մդիվանու կարծիքն այն էր, որ միանշանակ պետք է պաշտպանել թուրքերի մոտեցումը: Ավելին, նա պաշտպանում էր Վ. Լենինի և Ի. Ստալինի առաջարկը (գաղափարը) Թուրքիայի հետ ռազմական դաշինք կնքելու վերաբերյալ:

Արևելյան ճակատի հրամանատար Բ. Կարաբեքիրը հունվարի 14-ին նամակ է ուղղել Բ. Մդիվանուն, որպեսզի իմանա Վ. Լենինից և Ի. Ստալինից ստացած «Թուրքիայի հետ ռազմական դաշինք կնքելու վերաբերյալ», շտապ ծածկագիր հեռագրի բովանդակության մասին: Կարաբեքիրի նամակից պարզվում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման հաջորդ օրը՝ դեկտեմբերի 3-ին, նա զրույց է ունեցել Մդիվանու հետ: Վերջինս էլ պատմել է Լենինից և Ստալինից ստացած ծածկագիր շտապ հաղորդման (դեպեշ) բովանդակության մասին: Նրանում Լենինը և Ստալինը ցանկություն էին հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանը ուզում է Թուրքիայի հետ քաղաքական և ռազմական դաշինք կնքել, մի բան, որին դեմ է եղել Գ. Չիչերինը: Կարաբեքիրը հայտնում է, որ ինքն այդ մասին բառացի հայտնել է ԱՄԺ կառավարության արտգործոժողկոմատին, և որ իրենց պատվիրակությունը պատրաստ է մեկնել Մոսկվա՝ պայմանագիր կնքելու համար⁸³:

Բ. Կարաբեքիրին ուղղված պատասխան նամակում Բ. Մդիվանին իսկապես հաստատում է դեկտեմբերի 3-ին Ալեքսանդրապոլում իրենց ունեցած զրույցի բովանդակությունը, որի համար հիմք է ծառայել Լենինի և Ստալինի ստորագրությամբ ուղարկված հեռագիրը:

Նկատի առնելով, որ Խորհրդային կառավարությունը

⁸¹ Նույն տեղում, էջ 347:

⁸² Նույն տեղում, էջ 357:

⁸³ Նույն տեղում, էջ 351:

զրկված էր ԹԱՄԺ կառավարության հետ կապի հնարավորությունից և տեղյակ չէր երկու երկրների միջև քաղաքական և անգամ ռազմական դաշինք կնքելու թուրքական կողմի որոշումների մասին, ուստի Մոսկվանին ուզում էր տեղեկանալ այն պայմաններին, որոնք հնարավոր կլինի դնել բանակցությունների հիմքում: Նա ուզում էր Կարաբեքիրից իմանալ այդ պայմանները, որպեսզի դրանք հաղորդեր իր կառավարությանը: Վավերագիր նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թուրք պատվիրակության Մոսկվա մեկնելու ձգձգման գլխավոր խոչընդոտը այդուհանդերձ եղել է Գ. Զիչերինի ժամանակին ներկայացրած առաջարկը՝ Վանը, Բիթլիսը և Մուշը Հայաստանին վերադարձնելու վերաբերյալ:

Ալի Ֆուադն իր հուշերում պատմում է, որ Մոսկվայի առաջին բանակցությունների ժամանակ (1920 թ. հուլիս-օգոստոս) Զիչերինը առաջարկել է, որ Վանի և Բիթլիսի մարզերը հանձնվեն Հայաստանին՝ Թուրքիային ցույց տրվող օգնությունը պայմանավորելով այդ որոշումով: Սակայն Բեքիր Սամին առարկել է՝ ասելով, որ նման կանոնության հարց կարող է լուծել միայն Ազգային մեծ ժողովը: Եվ մինչ Բեքիր Սամիի տեղակալ Յու. Քեմալը կվերադառնար Թուրքիա, և Ազգային մեծ ժողովում լուսմներ կսկսվեին, թուրքերը հաղթում են Հայաստանին, իսկ Ռուսաստանը պարտվում է Լեհաստանին: Դրանք փոխեցին իրադրությունը, և Ալի Ֆուադի կարծիքով հաջողվեց անցկացնել իրենց պայմանները և ստանալ Ռուսաստանի աջակցությունը⁸⁴:

Կոնֆերանսի նախապատրաստման փուլում Գ. Զիչերինի կողմից Վանի, Մուշի, Բիթլիսի հարցի բարձրացումը քեմալականների մոտ ոչ միայն դժգոհության ալիք էր բարձրացրել, այլև նրանք հայտարարություններ էին արել, որ նման դեպքում Թուրքիան ստիպված կլինի մերժեցման ուղիներ փնտրել Անտանտի հետ: Ստացվում է, որ թուրքերը վստահ էին, որ արևմտահայ նահանգները Անտանտը չէր վերադարձնելու Հայաստանին, չնայած որ ամիսներ առաջ ստորագրվել էր Սևրի պայմանագիրը, և անգամ գծվել էր հայ-թուրքական սահմանը: Համենայն դեպս, թուրքերի այս երկակի խաղերը և քաղաքական շանտաժները դարձյալ հարկադրում էին խորհրդային ղեկավարությանը գնալու նոր զիջումների՝ ի վնաս Հայաստանին:

⁸⁴ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 421-422.

Թուրքերի հայտարարությունների կապակցությամբ Օրջոնիկիձեն պնդում էր, որ եթե անգամ քենալական կառավարությունը անցնի Անտանտի կողմը, ապա այդ դեպքում ևս պետք է տարածքներ զիջել թուրքերին, որովհետև «Արևելյան Անատոլիայի բնակչությունը» Ռուսաստանի կողմը կլինի⁸⁵: Գ. Չիչերինին ուղղված հունվարի 14-ի հեռագրում Գ. Օրջոնիկիձեն առաջարկում էր կատարել թուրքերի նախապայմանը, այն է՝ Մոսկվայի կոնֆերանսի օրակարգից հանել հայկական Վան, Մուշ և Բիթլիս մարզերի հարցի քննարկումը: «Թուրքական պատվիրակությունը,- հայտնում էր Գ. Օրջոնիկիձեն,- լրիվ կազմով արդեն մեկ շաբաթից ավելի է գտնվում է Կարսում: Նրանց մեկնումը ձգձգվում է՝ սպասելով Մուխթարի նոտայի Ձեր պատասխանին՝ հայկական մարզերի (Վանի, Մուշի, Բիթլիսի) հարցի շուրջ: Թուրքերը կտրականապես հրաժարվում են այդ հարցը քննարկման դնել: Եվ որպեսզի հարաբերությունները ավելի պարզ դարձնել՝ անհրաժեշտ է պատասխանել թուրքերի նոտային և հանել այդ հարցը: Մինչև կոնֆերանսը թուրքերը Ալեքսանդրապոլից չեն հեռանա: Հարկավոր է նրանց զրկել կոնֆերանսի աշխատանքները ձգձգելու հնարավորությունից: Թուրքական դեսպանությունը (թվով 45 մարդ) օրերս Կարսից կուղևորվի Մոսկվա»⁸⁶:

1920 թ. դեկտեմբերի 14-ին Անգորայից մեկնած թուրքական պատվիրակությունը մեկ ամիս անց՝ հունվարի 15-ին, հասավ Կարս և նախնական բանակցություններ վարեց ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Մդիվանու հետ⁸⁷: Հունվարի 20-ին Կարսում թուրքերի հետ բանակցությունների ավարտից հետո Մդիվանին Օրջոնիկիձեին ուղղված վրացերեն լեզվով նամակում մտահոգություն է հայտնում, որ Մոսկվայում Հայաստանի և Թուրքիայի խնդրում առկա են հակադիր տեսակետներ՝ եթե «Ստալինը և Լենինը ինձ հուշում են,- գրում է նա,- որ Կարսի համար թուրքերի հետ վիճել չի կարելի, ապա Չիչերինը, պարզվում է, պահանջել է Վանը և Մուշը»⁸⁸: Այս հարցում Մդիվանուն է ձայնակցում Գ. Օրջոնիկիձեն: Նա Վ. Լենինին, նաև Ի. Ստալինին ուղղված փետրվարի 9-ի ծածկագիր նամակում, Մդիվանու հետ համախորհուրդ, կտրականապես դեմ

⁸⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 421.

⁸⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 352.

⁸⁷ Արզումանյան Ս. Վ., Դարավոր գոյամարտ, էջ 550-551:

⁸⁸ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 469.

է արտահայտվում Չիչերինի պահանջին՝ Վանը, Մուշը, Բիթլիսը
Չայաստանին վերադարձնելու մասին: Օրջոնիկիձեի կարծիքով,
Անատոլիայի թրքության շրջանում դա առաջ է բերել հակառու-
սական տրամադրություններ, և որ, իբր, քեմալականները ուղիներ
են փնտրում Կ. Պոլսի միջոցով մերձենալու Անտանտին⁸⁹: Օրջո-
նիկիձեն, անշուշտ, գույները խտացնում էր և վիճակը չափա-
զանցնում:

Չիչերինի կողմից թուրքերին ներկայացված հիշյալ տարած-
քային պահանջի մասին հայտնի է դառնում նաև Ի. Ստալինին,
որը շտապում է իր մտահոգությունները կիսել Վ. Լենինի հետ: Նա
փետրվարի 12-ին Վ. Լենինին ուղղված ձեռագիր նամակ է գրել՝
անվայելուչ արտահայտություն թույլ տալով Գ. Չիչերինի հասցեին.
«Ընկ. Լենին,- գրում էր Ի. Ստալինը,- ես միայն երեկ տեղեկացա,
որ Չիչերինը իսկապես ինչ-որ ժամանակ հիմար և պրովոկացիոն
(սադրիչ) պահանջ է ներկայացրել թուրքերին՝ այդ թուրքական
գերակշիռ մեծամասնությամբ բնակեցված Վան, Մուշ և Բիթլիս
մարզերը մաքրելու մասին: Դա հայկական իմպերիալիստական
պահանջ է և չի կարող լինել մեր պահանջը: Չարկավոր է արգելել
Չիչերինին թուրքերին նոտա ուղարկել՝ ազգայնականորեն տրա-
մադրված հայերի թելադրանքով»⁹⁰: Ի. Ստալինի այդ կոպիտ դիտո-
դությունը, ըստ ամենայնի, արժանացել է Վ. Ի. Լենինի հավանու-
թյանը: Մոփվանին և Օրջոնիկիձեն կարողացան հասնել նրան, որ
որևէ կերպ խոսք չբացվի արևմտահայ մարզերի պահանջի մասին:
Չիչերինի մոտեցումն այդ հարցում մերժվեց ոչ միայն թուրք պատ-
վիրակների, այլև խորհրդային պետության բարձրագույն ղեկավա-
րության՝ Վ. Լենինի, Ի. Ստալինի և մյուսների կողմից:

Ավելի վաղ ԹԱՄԺ կառավարության արտգործօղկոմի պաշ-
տոնակատար Ահմեդ Մուխթարը, նախապես ցանկանալով պարզել
խորհրդային Ռուսաստանի տրամադրությունը Չայաստանին հնա-
րավոր տարածքային զիջումներ պահանջելու խնդրում, թուրքա-
կան կողմը՝ հանձին ՌՍՖՍՀ-ում նորանշանակ դեսպան Ալի Ֆուադ
փաշայի, Անգորայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Մոփվա-
նուց պաշտոնապես ստացել էր հավաստիացում, որ «խոսք չի կա-

⁸⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 373. -
⁹⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 374. ՍԼԻ ԿԿԱ, ֆ.
3, ց. 1, отд. крс 52, № 14, ք. 2, ԽԱՅԱՏՐՅԱՆ Կ., Չայ-ռուսական հարաբերու-
թյունները 1920-1922թթ., էջ 121-122:

րող լինել Թուրքիայի կողմից Հայաստանին տարածքային զիջումների մասին»⁹¹: Մոխվանու այդ հաստատումը բավարարում է թուրքերին: Այդ կապակցությամբ Ահմեդ Մուխթարը հունվարի 30-ին շնորհակալական նոտա հղեց Գ. Չիչերինին՝ Մոսկվայի կոնֆերանսում Հայաստանի օգտին տարածքային զիջումներ չանելու վերաբերյալ: Ա. Մուխթարը հայտնում է, որ ստացել են Չիչերինի երկու շտապ հաղորդագրությունները (դեպեշները), ինչպես նաև ծանոթացել են Մոխվանու նամակին՝ հասցեագրված Ալի Ֆուադ փաշային: Ուստի շտապում էր տեղյակ պահել, որ Բ. Մոխվանու պաշտոնական հավաստիացումը, որ «Խոսք չի կարող լինել Թուրքիայի կողմից Հայաստանին տարածքային զիջումների մասին, մեզ լրովին բավարարում է»⁹²: Այս նոտայով Ա. Մուխթարը նաև հույս էր հայտնում Մոսկվայում դաշինք կնքելու, որի հիմքում դնում էր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և արևմտյան իմպերիալիզմի դեմ պայքարը⁹³:

Դրանից հետո այլևս որևէ խոչընդոտ չտեսնելով ռուս-թուրքական հարաբերություններում՝ Ահմեդ Մուխթարը հրահանգում է թուրք պատվիրակությանը դուրս գալ Կարսից և առանց հապաղելու ժամանել Մոսկվա: Ամերիկյան պետդեսպարտամենտը 1921 թ. հունվարի 29-ին Թուրքիայից ստացված հավաստի հեռագրերից մեկով տեղեկացվում է, որ թուրք ազգայնականները բանակցություններ են վարում Խորհրդային Ռուսաստանի հետ՝ դաշինք կնքելու ընդդեմ դաշնակիցների⁹⁴: Այդպիսով, մինչ Մոսկվա հասնելը և բանակցություններ սկսելը թուրք պատվիրակությունը վստահ էր, որ Ռուսաստանը Հայաստանի օգտին տարածքային զիջումներ չի պահանջի:

Մյուս կողմից հարց է ծագում՝ Մոսկվա մեկնող քենալական կառավարության պատվիրակությունը միջազգային իրավական ինչ հիմք ուներ բանակցություններ վարելու Ռուսաստանի հետ, թեև վերջինս էլ հարկ եղած միջազգային ճանաչում դեռևս չէր ստացել:

Հարկ է նշել, որ 1921 թ. փետրվարի սկզբին սուլթանական հատուկ դեկրետով ճանաչվեց Ազգային մեծ ժողովը՝ իր ամբողջ

⁹¹ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 469.

⁹² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 362.

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ Վաշինգտոնի ազգային արխիվի նյութեր, միկրոֆիլմերի հավաքածու 1, 3Ա-6, ց.1, գ. 761-767, թիվ 1, ց.1, գ. 86700:

իշխանությանը⁹⁵: Սուլթանի նման քայլը պայմանավորված էր նրանով, որ անհրաժեշտ էր ինչ-որ կերպ իրավական ուժ տալ առաջիկայում Լոնդոնում և Մոսկվայում գումարվելիք խորհրդաժողովներին մասնակցող Ազգային մեծ ժողովի կառավարության պատվիրակությունների կարգավիճակին ու գործունեությանը: Այս կապակցությամբ հանդիպակաց հարց է ծագում՝ եթե սուլթանը ճանաչում է Անգորայի իշխանությունը (կառավարությունը), ապա Կ. Պոլսի իր կառավարությունն ի՞նչ է: Ստացվում է, որ սուլթանը ճանաչում է Թուրքիայում երկիշխանության փաստը: Կարծում ենք, որ ԹԱՄԺ կառավարության Մոսկվա և Լոնդոն գործուղած պատվիրակությունները իրավական համապատասխան ուժ կունենային բանակցություններ վարելու, եթե Կ. Պոլսի սուլթանական կառավարությունը, ճանաչելով ԱՄԺ կառավարությանը, ինքը իշխանությունը կամավոր հանձներ վերջինին և հրաժարական տար:

* * *

Մոսկվայի կոնֆերանսին մասնակցելու համար նախապատրաստվում էր նաև Հայաստանը: Ղեռ ղեկտեմբերի կեսին Հայհեղկոմի անդամներ Ա. Մռավյանը և Ս. Տեր-Գաբրիելյանը զգալի ջանքեր են թափել Մոսկվայում Հայկական հարցի հայանպաստ լուծման գործում: Նրանք հանդիպումներ են ունեցել Վ. Լենինի, Լ. Տրոցկու, Գ.Զիչերիցի, Լ. Կարախանի հետ: Կրեմլում Վ. Ի. Լենինի հետ 1920թ. դեկտեմբերի 13-ին ունեցած հանդիպումից Ա. Մռավյանը ստացել էր այն տպավորությունը, որ Ռուսաստանը մտադիր չէր հանուն Հայաստանի հարաբերությունները փչացնել Թուրքիայի հետ, որ ըստ Լենինի՝ «Ռուսաստանը ներկա պահին չի ուզում և չի կարող կռվել Կարսի համար, որը համարվում է թուրքական քաղաք»⁹⁶: Ա. Մռավյանը պատմում է, որ «Երբ մենք նշեցինք հայ ժողովրդի աղետալի վիճակի մասին, Լենինից ստացանք հետևյալ պատասխանը.

-Ձեր դժվարությունն այն է, որ համաշխարհային հեղափոխության ֆրոնտներից մեկը անցնում է Հայաստանի վրայով: Մենք հարկադրված ենք հայ աշխատավորության շահերը ժամանակավորապես զոհաբերել հանուն համաշխարհային հեղափոխության

⁹⁵ Известия, Москва, 11 февраля 1921 г.

⁹⁶ Геноцид армяи, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 336.

շահերի: Նույն ճակատագիրն են բաժանել Էստոնիան, Լատվիան և Լիտվան»⁹⁷: Խորհրդային պետության առաջնորդը հասկացնում էր, որ Հայաստանը հայտնվել է համաշխարհային հեղափոխության մայրուղու վրա, և հայերից սպասվում է նոր զոհաբերություն: Ցավոք, հայ բոլշևիկներից ոմանք տարված էին համաշխարհային հեղափոխության այդ սին մարմաջով: «Մեր նպատակը,- կարդում ենք Հայաստանի արտոգործնախարարության մի հայտագրում,- պետք է լինի հեղափոխական գաղափարների տարածումը Արևելքի ճնշված աշխատավոր ժողովուրդների մեջ և ստեղծել արևելյան ժողովուրդների նոր դաշնություն, որը Անդրկովկասյան Ֆեդերացիայի հետ միասին պետք է ծուլվի Խորհրդային Ռուսաստանին: Հայաստանը պետք է դառնա Ռուսաստանի արևելյան քաղաքականության մեջ միջնորդ»⁹⁸:

Բայց միաժամանակ կային հայ կոմունիստներ, ովքեր մտահոգ էին Հայկական հարցում, Հայաստանի տարածքային-սահմանային խնդիրներում: Դրանց թվին պետք է դասել Ս. Տեր-Գաբրիելյանին, Ալ. Բեկզադյանին, Ա. Մռավյանին և ուրիշների: ՌՍՖՍՀ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը Մոսկվայից Հայկոմկուսի ԿԿ ուղղված 1921թ. հունվարի 15-ի նամակում լավատեսորեն համոզումնք էր հայտնում, թե Նախիջևանը և Կարսը թողնվելու են Հայաստանին: Դրա համար նա խնդրում էր շտապ նյութեր ուղարկել Կարսի մարզի ազգագրական վիճակի վերաբերյալ, որ ինքը զրույցներ է անցկացնում Իլլիչի, Կրեստինսկու, Ստալինի հետ⁹⁹: Սակայն Տեր-Գաբրիելյանի լավատեսությունը բավարար հիմք չուներ: Նա միաժամանակ զգուշացնում էր, որ «քանի դեռ կոնֆերանսը չի կայացել, անհրաժեշտ է հանրապետության ներսում մաքրվել զգվելի դաշնակցական Դրոյից և մյուսներից»¹⁰⁰: Հաջորդ օրը՝ հունվարի 16-ին, Երևան՝ Ս. Կասյանին հասցեագրված հեռագրում Ս. Տեր-Գաբրիելյանը շեշտում էր, որ «Ստալինի պահանջով կարճ ժամանակամիջոցում պատմաաշխարհագրական և ազգագրական բնույթի նյութեր ուղարկել Կարսի մարզի և Ալեք-

⁹⁷ Մռավյան Ա., Հողվածներ և ճառեր, Ե., 1961, էջ 222, “Нагорный Карабах” (док и ком.), т. 1, М., 2008, с. 607, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с.337.

⁹⁸ ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ.13, թ.10:

⁹⁹ ՀԱԱ, ֆ. 4049, ց.1, գ.7, թ.3:

¹⁰⁰ ՀԱԱ, ֆ. 4049, ց.1, գ.7, թ. 4:

սանդրապուլի գավառի վերաբերյալ»¹⁰¹: Ա. Տեր-Գաբրիելյանի հանձնարարականի համաձայն՝ մեծ քանակությամբ նյութեր, վիճակագրական տվյալներ, քարտեզներ են պատրաստվում պատվիրակության համար: Հունվարի կեսերին կազմվում է Հայաստանի պատվիրակությունը, որը գլխավորում է արտգործոժողկոմ Ալ. Բեկզադյանը: Պատվիրակության կազմում ընդգրկվում են Ա. Կարինյանը և Ա. Տեր-Գաբրիելյանը, ինչպես նաև մեկ տասնյակի հասնող քարտուղար, խորհրդականներ, սպասարկող անձնակազմ¹⁰²: Հունվարի 18-ին Ալ. Բեկզադյանի գլխավորած 12 հոգուց կազմված պատվիրակությունը մեկնում է Երևանից՝ իր հետ տանելով հայկական կողմի մշակած տարածքային ու սահմանային չափավոր առաջարկությունների չորս տարբերակ՝ համապատասխան հիմնավորումներով ու քարտեզներով: Պատվիրակության հետ Թիֆլիս է մեկնում նաև Բ. Լեզրանը¹⁰³: Մոսկվա մեկնելու օրը՝ հունվարի 18-ին, Ալ. Բեկզադյանը հեռագրում է Բաքու՝ Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Աթաբեկյանին. «Հայտնիր Սահակին, որ ինձ հետ բերում են ամբողջական նյութերը»¹⁰⁴: Դրանք քիչ թե շատ հայանպաստ չորս տարբերակներ էին, համապատասխան հիմնավորումներով ու քարտեզներով: Սակայն, ցավոք, կոնֆերանսում դրանք ուշադրության չարժանացան: Այդ մասին խոսք կլինի իր տեղում:

Մոսկվա մեկնած հայկական պատվիրակությունը համոզված էր, որ Մոսկվայի կոնֆերանսը հայ-թուրքական տարածքային հարցերը քննարկելիս հիմք չի ընդունի Ալեքսանդրապուլի պայմանագիրը¹⁰⁵:

Արդեն փետրվարի 4-ին Ալ. Բեկզադյանը հեռագրում է Երևան՝ արտգործոժողկոմի տեղակալ Ա. Մռավյանին, որ հաջորդ օրը իրենք կհասնեն Մոսկվա¹⁰⁶: Հայկական պատվիրակության մեկնումը Մոսկվա որոշ հույսեր էր առաջացրել նաև արևմտահայ

¹⁰¹ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 319, թ. 1:

¹⁰² Պատվիրակության մեջ ընդգրկված էին՝ Վ. Մուրադյան (քարտուղար), Գ. Տեր-Օհանյան, Պ. Բեկզադյան, Ա. Տեր-Սկրտչյան, Ա. Չալխուշյան, Դ.Միխայլով, Զ. Ստատինա (ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 9):

¹⁰³ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2 Կ, գ. 36, թ. 33:

¹⁰⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 14:

¹⁰⁵ Սարգարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918–1921 թթ., էջ 212:

¹⁰⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 70, թ. 4, 18:

շրջանակներում: Հայաստանի արտգործօրդկոմի տեղակալ Ա. Մռավյանը փետրվարի 13-ին Երևանից Բաքվի միջոցով հեռագրում է Մոսկվա՝ Ալ. Բեկզադյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին, որ «մեզ պաշտպանող արևմտահայերը լուրջ կերպով քննարկում են թուրքահայ հարցը Մոսկվայի խորհրդաժողովում բարձրացնելու վերաբերյալ»¹⁰⁷: Մռավյանը ցանկանում էր ճշտել Մոսկվայի վերաբերմունքը Հայկական հարցում և այն կոնֆերանսում բարձրացնելու հնարավորությունը: Հայաստանում հասունացող խռովության կապակցությամբ փետրվարի 14-ին Մռավյանը մեկնեց Բաքու¹⁰⁸:

Փետրվարի 18-ին (որոշ տվյալներով 19-ին), թուրքական պատվիրակությունը գնացքով ժամանեց Մոսկվա: Այդ նույն գնացքով Մոսկվա ժամանեցին նաև Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները: Գալուն պես թուրք պատվիրակությունը դեմ արտահայտվեց խորհրդային Հայաստանի (նաև Ադրբեջանի) պատվիրակության մասնակցությանը կոնֆերանսի աշխատանքներին, ինչպես նաև տարածքային խնդիրների քննարկմանը¹⁰⁹: Հետագայում կոնֆերանսի մարտի 12-ի նիստի արձանագրությունից պարզվում է, որ, իրոք, թուրքական պատվիրակության պահանջով է մերժվել Հայաստանի մասնակցությունը: Դա երևում է նաև Ալ. Բեկզադյանի՝ Ադրբեջանում Հայաստանի ներկայացուցիչ Ս. Աթաբեկյանին ուղղված մարտի 18-ի հայտնի նամակից: Բեկզադյանը իր այս պաշտոնական գրության մեջ փաստում է, որ Հայաստանի պատվիրակության կոնֆեռանսին մասնակցության հարցում թուրքերը ոչ պաշտոնապես հայտարարեցին, որ «իրենք ցանկություն չունեն խոսել հայերի հետ»¹¹⁰:

Իհարկե, խորհրդային կողմը դեկտեմբեր ամսին թուրքերին տեղյակ էր պահել, որ կոնֆերանսին կմասնակցի Հայաստանը, նաև Ադրբեջանը, սակայն թուրքերից չէր ստացել համաձայնություն: Իսկ երբ թուրքական պատվիրակությունը ժամանեց Մոսկվա և հայտարարեց, որ ինքը լիազորված չէ Հայաստանի հետ բանակցելու, խորհրդային կողմը, այդ թվում՝ Հայաստանի պատվիրակությունը, կանգնեցին փաստի առաջ: Չկան տվյալներ, թե Ռու-

¹⁰⁷ ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 18, թ. 58:

¹⁰⁸ «Կոմունիստ», Երևան, 15 փետրվարի 1921թ.:

¹⁰⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 423.

¹¹⁰ ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 68, թ. 25:

սաստանի կառավարությունը ինչպես է արձագանքել թուրքերի այդ պնդմանը: Կարելի է ենթադրել, որ առանց լուրջ դիմադրության ընդունել է թուրքերի այդ մերժումը: Դեռ կոնֆերանսը չբացված՝ Գ. Չիչերինը հայ պատվիրակներին հաղորդում է, որ նրանք չեն կարող մասնակցել կոնֆերանսի աշխատանքներին: Այսինքն՝ գումարվելիք կոնֆերանսը քառակողմի փոխարեն լինելու է երկկողմ՝ ռուս-թուրքական:

Այսպիսով՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարության հրավերը բավարար ուժ չի ունենում, որպեսզի Հայաստանի պատվիրակությանը թույլատրվի մասնակցելու կոնֆերանսին, քանզի դրան դեմ է կանգնում թուրքական կողմը: Կարելի է հասկանալ թուրքերի մերժողականությունը, քանի որ հայ պատվիրակության ներկայությունը գլխացավանք ու անհանգստություն կարող էր առաջացնել նրանց համար հատկապես տարածքային-սահմանային խնդիրների քննարկումների ժամանակ: Նրանք կարող էին հանգիստ հայտարարել, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով թուրք-հայկական վիճելի բոլոր խնդիրները կարգավորվել են, և հայերի հետ նոր բանակցությունների անհրաժեշտություն այլևս չեն տեսնում:

Մնում էր, որ Հայաստանի շահերի պաշտպանությունն իր վրա վերցնեի Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունը: Գ. Չիչերինը խոստանում է հայկական պատվիրակությանը կուրսի մեջ պահել կոնֆերանսում Հայաստանին առնչվող հարցերին և նույնիսկ հատուկ հանձնաժողով ստեղծել՝ մշակելու Հայաստանին վերաբերող խնդիրները: Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, դրանք սոսկ խոստումներ էին:

Մինչ բուն կոնֆերանսի աշխատանքներին անցնելը անհրաժեշտ է նաև պարզել, թե ինչպիսի հասարակական-քաղաքական մթնոլորտ էր ստեղծվել Սոսկվայում՝ Հայաստանի և Հայկական հարցի շուրջ:

Անշուշտ, նպաստավոր չէին երևանից ստացվող լուրերը, որ ապստամբության միջոցով տապալվել էր Խորհրդային իշխանությունը և Հայաստանի մեծ մասում իշխանությունն իր ձեռքն էր վերցրել Ս. Վրացյանի գլխավորած Հայրենիքի փրկության կոմիտեն (ՀՓԿ): Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը, բնականաբար, թշնամանքով ընդունեց պետական հեղաշրջումը Հայաստանում: Դրան հակառակ՝ Թուրքիայի համար ցանկալի էր Հայաստանում

տանի քաղաքական անկայունությունը, խառնակ իրավիճակը և հակառուսական ուղղվածությունը: Սակայն այս առնչությամբ մենք համաձայն չենք Կ. Սարգսյանի արտահայտած այն մտքին, թե քեմալականները ջանում էին, որ «Մոսկվայի կոնֆերանսից առաջ Հայաստանում հեղաշրջում կատարվի, և իշխանությունը կրկին անցնի դաշնակցությանը»¹¹¹, որպեսզի «Հայաստանը գրկվի Մոսկվայի կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից»¹¹²: Չենք կարծում, թե քեմալականները կուզենային Հայաստանում իշխանությունը կրկին անցնել իրենց համար ատելի դաշնակցականների ձեռքը միայն հանուն նրա, որ այդ հիման վրա Հայաստանը գրկվեր Մոսկվայի կոնֆերանսին մասնակցելու իրավունքից այն դեպքում, երբ առանց Հայաստանի հեղաշրջման խնդիրը մեջտեղ բերելու նա արդեն գրկվել էր կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից: Որքան մեզ հայտնի է կոնֆերանսի նյութերից, թուրքերը ոչ մի անգամ չեն ակնարկել, մատնանշել դաշնակցների փետրվարյան հեղաշրջման մասին՝ կոշտացնելու համար իրենց պահանջները: Անգամ Ս. Վրացյանի մարտի 12-ի հայտնի հայտարարության կապակցությամբ թուրքերը որևէ կերպ չեն արձագանքել: Չկա փաստ, որ թուրքական կողմը օգտագործել է Ս. Վրացյանի այդ հեռագիրը մերժելու համար հայկական պատվիրակության մասնակցությունը: Իրականում Հայաստանի պատվիրակությանը առնվազն երկու շաբաթ առաջ արգելված էր մասնակցել կոնֆերանսին, մինչ կհետևեր Ս. Վրացյանի հեռագիրը: Այս կապակցությամբ Վլ. Ղազախեցյանը իրավացիորեն նկատել է. «Թուրքիան Հայաստանի մասնակցության մասին դրական վերաբերմունք չի ունեցել նաև մինչև փետրվարյան ապստամբությունը»¹¹³:

Խորհրդա-թուրքական կոնֆերանսի նախապատրաստությունը ընթանում էր Թուրքիայի համար օրավուր լավացող միջազգային և ռազմաքաղաքական նպաստավոր իրադրության պայմաններում: 1921 թ. հունվարի 10-ին Ինենյու գյուղի մոտ հունական և թուրքական զորքերի միջև տեղի ունեցած առաջին խոշոր ռազմական բախման արդյունքում կասեցվեց հույների հետագա հարձակումը: 1921 թ. հունվար-փետրվարին քեմալականները

¹¹¹ Սարգսյան Կ., նշվ. աշխ., էջ 211:

¹¹² Նույն տեղում, էջ 213:

¹¹³ Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940թթ., էջ 59-60:՝

ռազմական հաջողություններ արձանագրեցին Ջմյուռնիայի և Հալեպի ուղղություններով¹¹⁴: Մարտի վերջին (31-ին) տեղի ունեցած Ինենյուլի երկրորդ ճակատամարտում թուրքերը նոր հաղթանակ տարան հույների նկատմամբ: Թուրքական բանակի հունվարյան հաղթանակը Ինենյուլի մոտ հասկացնել տվեց տերություններին, որ Անգորայի կառավարությունը լուրջ ուժ է և հարկավոր է հաշվի նստել նրա հետ: Այստեղից էլ խնդիր ծագեց հրավիրել նոր կոնֆերանս և վերանայել Սևրի պայմանագիրը: 1921 թ. հունվարին Փարիզում գումարված Անտանտի տերությունների խորհրդաժողովը որոշեց նոր խորհրդաժողով գումարել Լոնդոնում. փաստորեն վերանայել Սևրի պայմանագիրը և Թուրքիայի հետ հաշտության նոր դաշնագիր մշակել: Սակայն Անտանտը միասնական չէր: Սևրի դաշնագիրը ստորագրած դաշնակից երկրներից առաջինը Ֆրանսիան էր, որ հարց բարձրացրեց վերանայել այդ պայմանագիրը հօգուտ Թուրքիայի: Նույն կերպ փետրվարի կեսերին հաղորդագրություններ լույս տեսան, որոնցում ասվում էր, որ Իտալիայի քաղաքական շրջանները պատրաստ են վերանայել Սևրի պայմանագիրը Քեմալ փաշայի օգտին¹¹⁵: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Անտանտի երկրների կառավարությունները մրցակցում էին իրար հետ, թե ով առաջինը կհաշտվի Քեմալի հետ: Ահա այս հանգամանքը նկատի ուներ Հովի. Քաջագնունին, երբ գրում էր, որ դեռ չէր չորացել Սևրի պայմանագրի ստորագրությունների թանաքը, «սկսվեց մեր դաշնակիցների սիրային խաղերը միլիակականների հետ»¹¹⁶: Վերը ասվածը հիմք հանդիսացավ, որ շուտով Մոսկվայի կոնֆերանսին գրեթե զուգահեռ գումարվի նաև Լոնդոնի կոնֆերանսը, որին պետք է հրավիրվեին նաև քեմալականները:

Սևրի պայմանագրի վերանայման նպատակով Լոնդոնի կոնֆերանսի հրավիրման մյուս դրդիչ հանգամանքը ռուս-թուրքական մերձեցումն ու համագործակցությունն էր: Գիշտ էր նկատում խորհրդային “Известия” պաշտոնաթերթի թղթակիցը, որ ռուս-թուրքական բարեկամությունն ու դաշինքը ստիպում է եվրոպական տերություններին գիջումների գնալու Թուրքիայի հետ ու վերանայելու

¹¹⁴ “Известия”, 13 февраля 1921г.

¹¹⁵ Նույն տեղում:

¹¹⁶ Քաջագնունի Հ., Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Պուլքրեշտ, 1923, էջ 62:

Արի դաշնագիրը: Յենց դրանում էր կայանում Լոնդոնի խորհրդա-
ժողովի իմաստն ու նպատակը¹¹⁷:

Դրա համար էլ քենալականները համարձակ էին դիվանագի-
տական իրենց երկակի խաղերում, մի կողմից՝ Ռուսաստանի, իսկ
մյուս կողմից՝ Անտանտի տերությունների հետ: Եթե անհրաժեշտ
էր լինում, նրանք դառնում էին ռուսասեր, Արևմուտքի իմպերիա-
լիստների դեմ պայքարող ուժ և անգամ կոմունիստ, իսկ հարկ եղած
դեպքում՝ ընդգծված հակակոմունիստ:

Ուշագրավ է, որ քենալականները, բանակցությունների գնա-
լով Ռուսաստանի հետ, ամենևին չէին խորշում հետապնդելու ու
հալածելու թուրքիայի տարածքում բույն դրած կոմունիստներին:
1921 թ. հունվարին Տրապիզոնում խեղդամահ արվեցին և ծովը
նետվեցին թուրքիայի կոմկուսի 15 ղեկավար գործիչներ, այդ
թվում՝ թուրք կոմունիստների առաջնորդ Մուստաֆա Սուբխին,
ինչպես նաև Իսմայիլ Խակկին, Կազիմա Ալին և ուրիշները¹¹⁸: Թուր-
քերն ամենից ավելի անհանգստացած էին կոմունիստների ագի-
տացիայից ու գործողություններից Անատոլիայում: Մոսկվայի
բանակցությունների փուլում Գ. Չիչերինը զգուշացնում էր Բ. Մդի-
վանուն այդ հարցում լինել զգույշ ու չափավոր¹¹⁹: Կնշանակի՝ քե-
նալականների հակակոմունիստական գործողությունները որևէ
խոչընդոտ չէին կարող հանդիսանալ Մոսկվայի կոնֆերանսում
թուրքանպաստ լուծումների համար:

Մոսկվայի կոնֆերանսի հրավիրման նախօրեին Չայկական
հարցում իրենց բացառական դերն են խաղացել Ադրբեջանի հեղ-
կոմի նախագահ Ն. Նարյմանովի՝ փետրվարի 16-ի և 21-ի հայտնի
նամակները՝ ուղղված Վ. Ի. Լենինին: «Թանկագին Վլադիմիր Իլ-
յիչ,- գրում էր փետրվարի 16-ի նամակում,- Մոսկվա է գալիս թուր-
քական պատվիրակությունը մեր ներկայացուցիչ Բ. Շահթախթին-
սկու հետ: Նրանց համար ամենանրբանկատ հարցը դա հայկա-
կանն է: Նրանք ասացին, որ Չայկական հարցը կյանքի և մահվան
հարց է: Եվ եթե Մոսկվան Չայկական հարցի պատճառով անգորա-
ցիներին հետ վանի իրենից, ապա նրանք հուսահատված կարող

¹¹⁷ "Известия", 3 марта 1921 г.

¹¹⁸ Хейфец А. Н., Ըշվ. աշխ., էջ 87:

¹¹⁹ "Голос Армении", 26 апреля 2001 г., № 43, с. 6, Хейфец А. Н., Ըշվ. աշխ., էջ
87:

են նետովել Անտանտի գիրկը»¹²⁰: «Ես պետք է զգուշացնեմ Ձեզ,- գրում էր նամակի վերջում,- որ Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը: Նա չափից ավելի է հրապուրված Հայկական հարցով և հաշվի չի առնում, որ հենց այդ հարցի պատճառով կարող է տեղի ունենալ անգորացիների հետ կապերի խզում: ... Եվ եթե ուզում ենք Ադրբեջանը պահել մեզ հետ, մենք պետք է, ինչ էլ որ լինի, անգորացիների հետ կնքենք ամուր դաշինք»¹²¹:

Մի քանի օր անց՝ փետրվարի 21-ին, Ն. Նարիմանովը կրկին նամակ է հղում Վ. Ի. Լենինին՝ կրկին հորդորելով, որպեսզի թուրքական պատվիրակության հետ բանակցություններում Հայկական հարցը դեր չխաղա՝ հիշեցնելով, որ Հայաստանում տապալվել է խորհրդային իշխանությունը¹²²: Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Բ. Շահթախթինսկին ևս, ձայնակցելով իր անմիջական ղեկավար Նարիմանովին, այդ օրերին դարձյալ կոչ էր անում Մոսկվայի բանակցությունների օրակարգից հանել Հայկական հարցը, թույլ չտալ Նախիջևանի միացումը Հայաստանին¹²³: Նարիմանովը ևս կտրական էր Նախիջևանի հարցում: Նա զգուշացնում էր, որ եթե Նախիջևանի հարցը չլուծվի Ադրբեջանի օգտին, ապա չեն բացառվի պանիսլամիզմի ուժեղացումը և հակախորհրդային ելույթները (ապստամբությունները) Ադրբեջանում: Այսինքն՝ ռուս-թուրքական կոնֆերանսի նախօրյակին Նարիմանովը պահանջում էր հարցը լուծել Ադրբեջանի օգտին¹²⁴: Ի դեպ, Նարիմանովը կարողացավ համանման քաղաքական շանտաժի հնարքով Լեռնային Ղարաբաղի հարցը ևս 1921 թ. ամռանը լուծել Ադրբեջանի օգտին:

Այս կապակցությամբ տեղին է հետևեցնել, որ Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ վարվող հայատյաց մեծապետական զավթողական քաղաքականության հարցում էական տարբերություն չպետք է տեսնել սուլթան Աբդուլ Համիդ II-ի, երիտթուրք պարագլուխների և միլլի (ազգայնական) քեմալականների միջև: Նույն կերպ որևէ տարբերություն չկար նաև մուսավաթականների

¹²⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 378, «Գարուն», 1989, թիվ 4, էջ 50-51:

¹²¹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 379.

¹²² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 387.

¹²³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 390.

¹²⁴ Սիմոնյան Հր., Նախիջևանի խնդիրը Մոսկվայի պայմանագրում (Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր) Ե., 2001, էջ 10:

և Ն. Նարինանովի տիպի ադրբեջանական ազգային-կոմունիստների միջև, մի բան, որ չի կարելի ասել դաշնակցականների և հայ կոմունիստների մասին: Օրինակ, հայ կոմունիստներից Հայկական հարցում ոչ հայանպաստ վարքագիծ է ցուցաբերել Անաստաս Միկոյանը: Նա գտնում էր, որ պետք է պայքարել հայկական բուրժուազիայի իմպերիալիստական իղծերի դեմ, որը «նպատակ ունի զավթել Թուրքիայի մեծ մասը»: Եվ սա Ա. Միկոյանի ոչ ազգանպաստ եզակի դիրքորոշումը չէր: Նա այն փոքրաթիվ գործիչներից էր, ով դեմ է արտահատվել 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» հայտնի դեկրետին՝ այն համարելով «խոշոր սխալ» և տուրք «հայկական շովինիզմին»¹²⁵:

Թուրք պատվիրակությանը Մոսկվա գալուց հետո էլ դեռևս անհանգստացնում էր Գ. Չիչերինի քիչ թե շատ հայանպաստ դիրքորոշումը Հայկական հարցում: Դրա համար նրանց հարկավոր էր կոնֆերանսի բացումից առաջ նախապես պարզել Վ. Ի. Լենինի և Ի. Ստալինի մտտեցումներն այդ հարցում:

Փետրվարի 22-ի լույս 23-ի գիշերը թուրք պատվիրակները հանդիպում են Ի. Ստալինի հետ: Մոսկվայում Թուրքիայի դեսպան գեներալ Ալի Ֆուադը (Ջեբեսոյը) իր հուշերում պատմում է, որ փետրվարի 23-ի գիշերը Ի. Ստալինի հետ ունեցած հանդիպման ժամանակ թուրք պատվիրակության այն հարցին, թե կոնֆերանսում շոշափվելու է արդյոք Հայկական հարցը, Ստալինը, փարատելով թուրքերի մտավախությունն ու կասկածները, պատասխանել է. «Դուք, ինքներդ եք լիովին լուծել Հայաստանի հարցը: Եթե դեռ լուծվելիք ինչ-որ բան է մնացել, դա ինքներդ վճռեք, բայց վերջնական ժամկետի մասին մեզ տեղյակ պահեք»¹²⁶: Ալի Ֆուադի վկայությամբ «Ստալինը միանշանակ վստահություն ներշնչեց մեզ»: Այդ նույն փաստը հաստատում է նաև թուրք պատվիրակության ղեկավար Յու. Քեմալ բեյը¹²⁷: Ստալինի հետ հանդիպումից հետո թուրքերը մեծ բավարարվածությամբ հեռացել են: Ալի Ֆուադի կարծիքով, եթե կոնֆերանսի նախօրյակին և ընթացքում չլիներ Ստալինի միջամտությունը, ապա ամենայն հավանակա-

¹²⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 1, с. 37–38.

¹²⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 422, т. 2, ч. 2, с. 409.

¹²⁷ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 409.

նությամբ կոնֆերանսը կերկարածովեր, և մնան արդյունքի չէին հասնի:

Կոնֆերանսի բացման նախօրյակին թուրք պատվիրակները հանդիպում են ունեցել նաև ՌՍՖՍՀ արտգործոժողկոմ Գ. Չիչերինի հետ, ով նույնպես ակնարկել է, որ Չայաստանի վերաբերյալ թեման կարելի է փակված համարել¹²⁸: Այդ նշանակում է, որ կուսակցության բարձրագույն ղեկավարության հարկադրանքով Չիչերինը նույնպես հետ է կանգնում նախկինում արված իր պնդումներից, այն է՝ թուրքերից պահանջել Վանի, Բիթլիսի, Մուշի շրջանները և 1920թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Չայաստանից զավթած տարածքները¹²⁹:

Ռուս-թուրքական կոնֆերանսի բացման օրը՝ փետրվարի 26-ին, Վ. Ի. Լենինը անձամբ ընդունել է թուրք պատվիրակներին և տվել համապատասխան երաշխիքներ¹³⁰: Այնուհետև Գ. Չիչերինի վկայությամբ՝ նա ամեն երեկո տեղեկանում էր բանակցությունների ընթացքի ու արդյունքների մասին¹³¹: «Սեզ համար,- նշում էր Գ. Չիչերինը,- բարեկամության գիծը քենալական թուրքերի հետ ոչ թե կոնյունկտուրա է, այլ սկզբունքային ուղեգիծ: Դա Վլադիմիր Իլյիչի գիծն է»¹³²:

Ի. Ստալինից և Վ. Լենինից հետ չէր մնում նաև կոմունիստական մամուլի հակահայկական քարոզչությունը: Խորհրդա-թուրքական կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման փուլում Ի. Ստալինի գլխավորած Ազգությունների գործերի ժողկոմատի աշխատակից, Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողությունների խորհրդի անդամ, հակահայկական քարոզչության ոչ անհայտ ներկայացուցիչ Ա. Սկաչկոն պաշտպանում և զարգացնում էր թուրքամետ այն դիրքորոշումը, որ հանուն Արևելքում հեղափոխության հաղթանակի անթույլատրելի է Վանի ու Բիթլիսի նահանգների զիջումը Չայաստանին, քանզի, ըստ նրա, Թուրքիան կհեռանա ՌՍՖՍՀ-ից և կնետվի Անտանտի գիրկը և դրանով կվճարի համաշխարհային հեղափոխության գործին: Նույն կերպ Ա.

¹²⁸ Գալոյան Գ. Ա., Չայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 441:

¹²⁹ Լազյան Գ., Չայաստան և Չայ դատը, էջ 243:

¹³⁰ В. И. Ленин и Советская внешняя политика, М., 1969, с. 116.

¹³¹ Чичерин Г., Статьи и речи, М., 1961, с. 283.

¹³² Глебов А., Линия дружбы, рассказы о Турции, М., 1960, с. 21.

Սկաչկոն գտնում էր, որ Հայաստանը պետք է հրաժարվի Կարսից և Արդահանից: Մի խոսքով, Հայաստանը պետք է զնա տարածքային մեծ զոհողությունների, քանզի Թուրքիան վճռական դեր է խաղում Արևելքում իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում¹³³:

Ավելի վաղ Հայաստանի ռուսալեզու «Коммунист» պաշտոնաթերթն իր առաջնորդողում զետեղել էր կենտրոնական իշխանությունների կողմից հրահանգավորված հետևյալ պահանջը, որ Հայաստանի աշխատավորները չեն հավակնելու Թուրքիայի աշխատավորներով բնակեցված տարածքներին, և Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը Մոսկվայի կոնֆերանսում պետք է պաշտպանի այդ տեսակետը¹³⁴:

Այդպիսով, Ա. Սկաչկոն և կոմունիստական մյուս քարոզիչները հանրային համապատասխան ֆոն էին ստեղծում Թուրքիայի տարածքային զիջումներ անելու խնդրում: Կարելի է ասել, որ կոնֆերանսի բացման նախօրեին ստեղծվել էին բոլոր անհրաժեշտ պայմանները այն թուրքանպաստ ուղիով տանելու համար: Դրան հակառակ՝ Հայաստանի համար թե՛ արտաքին և թե՛ ներքին չափումներով բարենպաստ քաղաքական մթնոլորտ չէր նշմարվում:

¹³³ «Жизнь национальностей», 4 марта 1921, г., Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 385.

¹³⁴ «Коммунист», 5 января 1921 г.

2. ՄՈՍԿՎԱՅԻ ՌՈՒՄ-ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՎ 1921 Թ.
ՄԱՐՏԻ 16-Ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում բացվեց ռուս-թուրքական կոնֆերանսը (խորհրդածողովը): Խորհրդածողովում ՌԱՖԽՅ ներկայացնում էին արտագործող կոմ Գեորգի Չիչերինը (պատվիրակության ղեկավար) և ՌԱՖԽՅ Կենտգործկոմի անդամ Ջելլալեդդին Կորքմասովը: Նախօրյակին Անգորայի գաղտնի խնդրանքով արտագործող կոմի տեղակալ, հայազգի Լև (Լևոն) Կարախանը հեռացվեց բանակցային գործընթացներից և նրա փոխարեն ընդգրկվեց ժամանակին Իթբիհատի հետ համագործակցած, ծնունդով դաղստանցի Ջ. Կորքմասովը¹³⁵:

Ինչպես արդեն ասվել է, թուրքական պատվիրակությունը ներկայացնում էին նախարարներ Յուսուֆ Քեմալ բեյը (ղեկավար), Ռիզա Նուր բեյը և ՌԱՖԽՅ-ում Թուրքիայի լիազոր-դեսպան Ալի Ֆուադ փաշան (անդամներ):

Կոնֆերանսի բացման ժամանակ փոխադարձ ելույթներով հանդես եկան պատվիրակությունների ղեկավարներ Գ. Չիչերինը և Յու. Քեմալ բեյը: Բացման խոսքում Գ. Չիչերինը Մոսկվայի կոնֆերանսը համարում էր ուղենշային Արևելքի պատմության մեջ: Նա գովասանքի խոսքեր ուղղեց իր ազատության համար իմպերիալիզմի դեմ հերոսական պայքար մղող, Ռուսաստանի բնական դաշնակից թուրք ժողովրդին ու զինվորին¹³⁶: Չիչերինից հետո պատասխան խոսք ասաց Յու. Քեմալ բեյը: Նա անսահման շնորհակալություն և փոխադարձ գովեստի խոսքեր ուղղեց ռուս ժողովրդին ու կարմիր բանակին¹³⁷:

Յու. Քեմալի ելույթից հետո Գ. Չիչերինը առաջարկեց բանակցությունների հիմքում դնել 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրված ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը՝ միաժամանակ հաշվի առնելով անցած յոթ ամիսների իրողություններն ու փոփոխությունները, պայմանագիրը լրացնելով նոր բովանդակությամբ: Թուրքական կողմը համաձայնվեց դրան՝ հավելելով. «Անցյալ տարի մշակվեց պայմանագրի նախագիծ, այժմ այդ պետք է լայնացնել և դարձնել ավելի ամուր»¹³⁸:

¹³⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 423.

¹³⁶ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 683-684.

¹³⁷ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 685.

¹³⁸ «Կոմունիստ», Երևան, 9 ապրիլի 1921 թ.:

Որոշվեց հիմնել երեք հանձնաժողով՝ քաղաքական, իրավա-
կան և խմբագրական¹³⁹:

Այսպիսով, բացվեց խորհրդաժողովը, որն ընթանում էր
առանց Հայաստանի պատվիրակության մասնակցության, թեև այն-
տեղ շոշափվում էին հայ ժողովրդի կենսական շահերը:

Կոնֆերանսի բացմանը հաջորդող օրերին պարզվում է, որ
ընդհատվել է ոչ թե պաշտոնական նիստերի գումարումը, այլ տեղի
են ունեցել ոչ պաշտոնական հանդիպումներ, քննարկումներ և
գրույցներ: Նիստերի ընդհատման խնդրում որոշակի դեր են խա-
ղացել Վրաստանում և Հայաստանում զարգացող աննպաստ դեպ-
քերը: Խորհրդային կողմը մտավախություն ուներ, որ Արդահանի
և Արդվինի գրավումից հետո թուրքերը կձգտեն գրավել նաև Բա-
թումը: Բացի այդ՝ կասկածելի էր թվում թուրքերի վերաբերմունքը
Հայաստանում կատարված փետրվարյան հեղաշրջման նկատ-
մամբ: Դրանց մասին փետրվարի 24-ին հեռագրով զգուշացրել էր
Բ. Մդիվանին¹⁴⁰:

Այդ կասկածները ստուգելու նպատակով Գ. Չիչերինը
փետրվարի 27-ին նոտա էր ուղղել դեսպան Ալի Ֆուադին՝ պար-
զելու, թե կա արդյոք համաձայնություն թուրքական զորքերի, վրա-
ցիների և դաշնակների միջև: Հաջորդ օրը՝ փետրվարի 28-ին, պա-
տասխան նոտայով Ալի Ֆուադը հավաստիացնում էր Գ. Չիչերինին,
որ չկա նման որևէ համաձայնագիր՝ խոստանալով իր կառավարու-
թյունից լրացուցիչ տեղեկություն ստանալու դեպքում իսկույն
իրազեկել¹⁴¹:

Կոնֆերանսի արձանագրության նյութերի ուսումնասիրու-
թյունը ցույց է տալիս, որ Գ. Չիչերինը թուրքական կողմին կշտամ-
բանքի մի քանի խոսքեր է ուղղել, մասնավորապես այն հարցում,
որ, օրինակ, Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ
թուրքերը մերժել են Ռուսաստանի միջնորդությունը, կամ թե մինչև
տվյալ պահը շարունակում են օկուպացված մնալ հայկական որոշ
տարածքներ:

Առաջին դիտողության վերաբերյալ Յու. Քենալը տվել է այն
բացատրությունը, որ իրենք կարծում էին, թե ռուսական կառավա-

¹³⁹ Хейфец А. Н., Եզվ. աշխ., էջ 110:

¹⁴⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 398.

¹⁴¹ Նույն տեղում, էջ 402–403:

րութիւնը իրենցից ամբողջական նահանգներ կպահանջի, իսկ երկրորդ դիտողութեան դեպքում՝ Թուրքիան պատրաստ էր ազատել այդ շրջանները պայմանով, որ կատարվեն Ալեքսանդրապոլի պայմանագրի մի քանի կետերը¹⁴²:

Բանակցութիւնների բնույթն ու ձևաչափը որոշելիս կողմերը պայմանավորվում են, որ առանձին որոշումներ պետք է մնան գաղտնի, մասնավորապես ռազմա-ֆինանսական օգնութեան վերաբերյալ, իսկ մյուսները պետք է ներառվեն պայմանագրի տեքստում¹⁴³: Գ. Չիչերինը դեռ 1920 թ. դեկտեմբերի 6-ին Ռկ(բ)Կ ԿԿ-ին ուղղված նամակում զգուշացնում էր, որ խորհրդա-թուրքական պայմանագրում չպետք է արտացոլում գտնի իրենց կողմից ցուցաբերվող օգնութիւնը Թուրքիային, որպեսզի դա հակազդեցութիւն չառաջացնի Անտանտի ու հատկապես Անգլիայի կողմից¹⁴⁴:

Որոշված չէր նաև պայմանագրի բնույթը: Գ. Չիչերինը Վ. Ի. Լենինին հասցեագրված փետրվարի 22-ի նամակում դժգոհութիւն էր հայտնում այն բանից, որ առանց իր և արտգործժողովոմատի գիտութեան Վ. Լենինը և Ի. Ստալինը ծածկագրեր են ուղարկել Մոսկվանում: Վերջինս էլ նամակագրութիւն է ունեցել Զ. Կարաբեքիրի հետ: Այդ ծածկագիր-նամակներից պարզվում է, որ խորհրդրդային կողմը Բ. Մոսկվանու միջոցով պաշտոնապես թուրքերին քաղաքական և ռազմական դաշինք կնքելու առաջարկութիւն է արել, ինչի մասին Գ. Չիչերինը տեղյակ չի եղել: Նա թուրքերի հետ «դաշինքը» անհամատեղելի էր համարում Անգլիայի հետ նախապատրաստվող համաձայնագրին¹⁴⁵:

Գ. Չիչերինը հայտնում էր, որ Մոսկվա ժամանած թուրք պատվիրակներն ասում են, թե իրենք լիազորված են Ռուսաստանի հետ կնքելու քաղաքական և ռազմական դաշինք՝ հենվելով հենց Մոսկվանում ուղղված Լենինի և Ստալինի ծածկագրերի վրա: Չիչերինը անթույլատրելի էր համարում ռուս-թուրքական դաշինքի կնքումը, այլապես անգլո-թուրքական պատերազմի դեպքում Ռուսաստանը ստիպված պետք է պատերազմ հայտարարեր Անգլիային: Եվ այս կապակցութեամբ Չիչերինը գրում է, որ ինքը բազմաթիվ ժամերով զրույցներ է ունեցել թուրք պատվիրակների հետ՝ համո-

¹⁴² Նույն տեղում, էջ 394:

¹⁴³ Նույն տեղում, էջ 396:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 306:

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 391:

գելու նրանց, որ ռուս-թուրքական պայմանագիրը իր ձևով և բովանդակությամբ լինի բարեկամական-եղբայրական, բայց ոչ ռազմաքաղաքական դաշինք¹⁴⁶:

Իրոք, փետրվարի վերջին և մարտի առաջին օրերին որոշակի լարվածություն կար խորհրդա-թուրքական հարաբերություններում: Դա երևում է նաև Գ. Չիչերինի՝ Ռկ(բ)Կ ԿԿ քարտուղար Ն. Կրեստինսկուն ուղղված մարտի 1-ի նամակից: Թուրք պատվիրակությունը պնդում էր «Ազգային ուխտի» վրա՝ թուրքական համարելով Կարսը, Արդահանը և Բաթումը: Բացի այդ՝ թուրքերը պահանջում էին Ալեքսանդրապոլի պայմանագրի մի քանի կետերի կատարում¹⁴⁷:

Նկատի առնելով Արևելքում Թուրքիայի առանցքային դերը դիվանագիտական աշխատանքում՝ Գ. Չիչերինը գտնում էր, որ Անգորայից պետք է հետ կանչել քարտուղար Ուպմալին և լիազոր ներկայացուցիչ Մդիվանուն և այնտեղ դեսպան ուղարկել այնպիսի հեղինակություն, ինչպիսին Մ. Լիտվինովն է¹⁴⁸:

Կոնֆերանսի արձանագրությունների և այլ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փետրվարի 26-ին՝ նրա բացումից հետո մինչև մարտի 9-ը ներառյալ, պաշտոնական նիստեր չեն գումարվել, այլ կողմերի միջև տեղի են ունեցել ոչ պաշտոնական հանդիպումներ, զրույցներ, հարցումներ, նամակագրություններ՝ ամենատարբեր հարցերի շուրջ: Մինչ լիազումար նիստերի գումարումը քննարկումներ են եղել թուրքական «Ազգային ուխտի» սկզբունքորեն ճանաչման, տարածքային-սահմանային հարցերի, Բաթումի, Նախիջևանի և այլ խնդիրների հստակեցման շուրջ: Ընդ որում՝ Գ. Չիչերինի խոստովանությամբ կողմերի միջև տեղի են ունեցել անդրկուլիսային բանակցություններ և, ըստ էության, կայացել է գործարք: Գ. Չիչերինի վկայությամբ քաղաքական հանձնաժողովի լիազումար նիստերը սկսել են աշխատել այն ժամանակ (սկսած մարտի 10-ից), երբ պաշտոնական բանակցությունները կողմերի միջև արդեն սկսվել էին երկու շաբաթ առաջ, և այդ ընթացքում տարածքային-սահմանային բոլոր զիջումների հարցերը արդեն վճռվել էին Ռկ(բ)Կ ԿԿ համապատասխան որոշումներով և

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 392:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 406–407:

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 407:

երկրի ղեկավար ընկերների աջակցությամբ¹⁴⁹:

Պլենար (լիագումար) նիստեր չգումարելու օրերին թուրքական պատվիրակությունը հասցրեց բանակցել Մոսկվա ժամանած Աֆղանստանի պատվիրակության հետ և մարտի 1-ին կնքել դաշնակցային (փոխադարձ օգնության) պայմանագիր¹⁵⁰: Մինչ այդ՝ փետրվարի 28-ին, աֆղան պատվիրակները բարեկամության պայմանագիր էին կնքել Ռուսաստանի հետ, իսկ ռուս-թուրքական կոնֆերանսի բացման օրը ստորագրվեց ռուս-իրանական, կարելի է ասել, ոչ իրավահավասար բարեկամության պայմանագիր: Հայտնի է, որ Խորհրդային Ռուսաստանը որոշակի նկրտումներ ուներ Իրանի հանդեպ: Կարմիր բանակի զորամասեր էին մտել Հյուսիսային Իրանի (Գիլյան, Ղազվին, Էնզելի) երկրամաս՝ խորհրդայնացնելու հեռանկարով: Ռեշտում հիմնվել էր, այսպես կոչված, հեղափոխական կառավարություն՝ Միրզա Քուչուկ-խանի գլխավորությամբ: Նրա մոտ ՌՍՖՍՀ ներկայացուցիչ էր նշանակվել բոլշևիկ Բ. Մոխիվանին: Սակայն Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը, տեսնելով, որ բավարար հող չունի Իրանում խորհրդային կարգեր հաստատելու համար, նպատակահարմար գտավ դադարեցնել քաղաքացիական պատերազմների իրահրումը Հյուսիսային Իրանում և դրա փոխարեն Իրանի հետ կնքել բարեկամության պայմանագիր՝ իր զորքերի դուրս բերումը Իրանից պայմանավորելով միաժամանակ անգլիական զորքերի դուրս բերմամբ¹⁵¹: Այնուամենայնիվ, Ռուսաստանի կնքած պայմանագրերի այդ շքերթը ինքնին վկայում էր Արևելքի երկրներում Խորհրդային Ռուսաստանի միջազգային հեղինակության աճի մասին:

Ինչպես արդեն ասվել է, Մոսկվայի կոնֆերանսին (փետրվարի վերջերին և մարտի սկզբներին) գրեթե զուգահեռ ընթանում էր Լոնդոնի խորհրդածողովը (փետրվարի 21-ից մարտի 14-ը) մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Բելգիայի, Հունաստանի, իսկ մյուս կողմից՝ պարտված Գերմանիայի և Թուրքիայի ներկայացուցիչների միջև: Թուրքիան ներկայանում

¹⁴⁹ Саркисян Е. К., За кулисами, как родился Московский договор 1921 г., ("Литературная Армения", Е., 1991, № 1, с. 82).

¹⁵⁰ Ключников Ю. и Сабанин А., նշվ. աշխ., մաս 3, թող. II, Մ., 1929, էջ 79–80:

¹⁵¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 194, Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 59–61, Չոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920–1922 թթ.), էջ 124–125:

էր միացյալ պատվիրակությամբ: Կ. Պոլսի սուլթանական կառավարության (վարչապետ Թեֆիկ փաշա) աջակցությամբ Անգորայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը (վարչապետ Ֆեվզի փաշա) հասավ այն բանին, որ հնարավորություն ստացավ համատեղ մասնակցելու Լոնդոնի խորհրդաժողովին, չնայած Անգորայի կառավարությունը չուներ միջազգային-իրավական ճանաչում: Թուրքիայի գերնպատակը Սևրի պայմանագրի վերանայումն էր և վերջին հաշվով ի չիք դարձնելը: ԱՄԺ կառավարության պատվիրակությունը գլխավորում էր արտգործժողկոմ Բեքիր Սամի բեյը: Հատկանշական է, որ Լոնդոնում բանակցությունների էր ուղարկվել նախարար Բ. Սամին, իսկ Մոսկվայում միայն նրա տեղակալը՝ Յու. Քեմալը: Դա նշանակում էր, որ Անգորան ավելի մեծ նշանակություն էր տալիս Լոնդոնի կոնֆերանսին, քան Մոսկվայի: Ս. Քեմալը լիազույս էր, որ Լոնդոնի կոնֆերանսում կվերանայվի կամ առնվազն կմեղմացվի Սևրի պայմանագիրը: Խորհրդաժողովի նպատակներից էր հնարավորինս մեղմել Սևրի պայմանագրի խիստ դրույթները, իսկ վերջնապատակը՝ հասնել դրա վերացմանը: Ուշագրավ էր, որ Լոնդոնի կոնֆերանսում թուրքական երկու պատվիրակությունները գործում էին համախորհուրդ: Քեմալականների միաժամանակյա բանակցությունները Լոնդոնում անգլիացիների հետ նպատակ էին հետապնդում. խաղարկելով Անտանտի հետ մերժեմալու քարտը՝ Ռուսաստանից քաղաքական նոր դիվիդենտներ կորզել: Բանն այն է, որ այդ նույն Լոնդոնում Ռուսաստանի լիազորներկայացուցիչ Լ. Կրասինը ամիսներ շարունակ բանակցում էր անգլիացիների հետ առևտրատնտեսական պայմանագիր կնքելու նպատակով:

Ինչպես Մոսկվայի կոնֆերանսի, այնպես էլ Լոնդոնի կոնֆերանսի պարագայում հանգամանքները Հայաստանի համար շատ աննպաստ էին: Սևրի պայմանագրի ստորագրումից ի վեր Հայաստանը պարտվել էր Թուրքիայի հետ անհավասար պատերազմում: Կնքվել էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Հայաստանը խորհրդայնացել էր և այլև:

Այդ իրադարձություններից հետո կարելի է ասել, որ Անտանտի տերությունները գործնականում կորցրին հետաքրքրությունը Հայաստանի ու Հայկական հարցի նկատմամբ¹⁵²:

¹⁵² Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ (1920թ.), «Դրոշակ», Ե., 2001, թիվ 2 (մարտ), էջ 155:

Հատկանշական է, որ դեռ 1920 թ. դեկտեմբերի կեսերին, երբ ԱՄՆ-ի նախագահը հարցում էր անում Անգլիայի վարչապետին, թե կոնկրետ ինչ պայմաններով ինքը պետք է հանդես գա հայերի և Քեմալի միջև, Լյորդ Ջորջը պատասխանել էր, որ «այլևս ավելորդ ու անօգուտ է այդ միջնորդությունը»¹⁵³: Ակներև է, որ Հայաստանի «դաշնակիցները» ձեռքերը լվանում էին Հայաստանից ու Հայկական հարցից, որովհետև Հայաստանի՝ թուրքերի կողմից չզավթած մասում հայտնվել էր նրա հին տերը՝ Ռուսաստանը, իսկ նոր փոփոխված պայմաններում Անտանտի տերությունների կողմից Հայկական հարցը կրկին բարձրացնելը նպատակահարմար չէր, որովհետև նրանք այժմ փորձում էին, քեմալականներին շահագրգռելով, ուղղել Ռուսաստանի դեմ, որը իրատեսական չէր:

Արդեն 1921 թ. հունվարի կեսերից Անտանտի տերությունները Հայկական հարցի ձևաչափը (ֆորմատը), Սևրի պահանագրի հետ միասին փոխեցին: Այժմ արդեն նրանք սկսեցին դնել Սևրի պայմանագրի վերանայման հարցը, որն էլ դարձավ Լոնդոնի փետրվար-մարտյան կոնֆերանսի քննարկման օրակարգային հարց:

Կոնֆերանսում Սևրի պայմանագրով խոստացված միացյալ և անկախ Հայաստանի պահանջին փոխարինելու էր գալիս «Ազգային տան» գաղափարը: Սակայն թուրքական պատվիրակությունները մերժեցին նաև այդ առաջարկը, Անտանտի տերություններն էլ անտարբեր գտնվեցին Հայկական հարցում:

Ակներև է, որ Հայաստանը Արևմուտքի տերություններին պետք էր բոլշևիզմի դեմ պայքարելու համար: Այն բանից հետո, երբ նրանք հանդվեցին, որ Հայաստանը ոչ միայն ի վիճակի չէ պայքարելու բոլշևիզմի դեմ և անգամ սեփական ուժերով ընդունակ չէ պաշտպանելու իր սահմանները խորհրդա-քեմալական ներխուժումից, գործնականում կորցրին հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ:

Թուրքիայի հետ Սևրի պայմանագիրը ստորագրած դաշնակից պետություններից առաջինը այն վերանայելու առաջարկ արեց Ֆրանսիան: Անգլիայի վարչապետ Լ. Ջորջն իր հուշերում գրում է, որ ֆրանսիական կառավարությունը անգլիականի հետևում բանակցություններ էր վարում Քեմալի հետ գաղտնի պայմանագիր կնքելու համար¹⁵⁴: Լոնդոնի կոնֆերանսի ընթացքում Բեքիր Սամի

¹⁵³ Геноцид армян. (документы и комментарий), т. 1, с. 626.

¹⁵⁴ Джордж Л., Права о мирных договорах, т. 2, М., 1957, с 459.

բեյը գաղտնի բանակցություններ վարեց Ֆրանսիայի պատվիրակ Ա. Բրիանի հետ, և կոնֆերանսից դուրս մարտի 11-ին կնքվեց գաղտնի համաձայնագիր: Ըստ այդ համաձայնագրի՝ զինաթափ էին արվում Կիլիկիայի քրիստոնյա զինախմբերը, և ամբողջ երկրամասը հանձնվում էր թուրքիային: Բացի այդ, չեղյալ էր համարվում «Հայկական օջախի» պահանջը¹⁵⁵: Բ. Սամին բանակցություններ վարեց նաև Իտալիայի հետ՝ անգլիացիներից գաղտնի՝ խոստանալով նրան արտոնություններ՝ թուրքիայից զորքերը դուրս բերելու դիմաց: Բեքիր Սամի բեյը գաղտնի բանակցության փորձեր է արել նաև Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջի հետ: Ընդ որում՝ Բ. Սամիի բոլոր բանակցությունները կրել են ընդգծված հակախորհրդային ուղղվածություն: Խորհրդային պատմաբան Ս. Խարմանդարյանը վկայում է, որ թուրքիայի արտգործո՞ղկոմ Բ. Սամի բեյը Անգլիայի վարչապետ Լ. Ջորջին գաղտնի առաջարկ էր արել համատեղ հանդես գալ Խորհրդային Ռուսաստանի դեմ և գրավել Անդրկովկասը մինչև Բաքու¹⁵⁶: Ավելին, խորհրդային մեկ այլ պատմաբան՝ Ա. Խեյֆեցը գտնում է, որ Բ. Սամին Լ. Ջորջին առաջարկել է համատեղ ուժերով Ռուսաստանից կտրել ամբողջ Կովկասը՝ Կուբան-Ղաղստանից մինչև Վրաստան-Հայաստան- Ադրբեջան և ստեղծել Կովկասյան դաշնություն՝ իբրև բուֆեր բոլշևիկների և թուրքիայի միջև¹⁵⁷: Այս նույն առնչությամբ Լ. Կրասինը Լոնդոնից հեռագրում էր Սոսկվա Անտանտի և թուրքիայի՝ դեպի Կովկաս նոր հարձակման հակախորհրդային պլանների մասին¹⁵⁸: Ի հավելումն ասվածի՝ այդ օրերին ֆրանսիական մի լրագրին («Պտի Պարիզիեն») տրված հարցազրույցում Բ. Սամի բեյը խորը գոհունակություն էր օրհանում ֆրանսա-լեհա-ռումինական այն համաձայնագրի կնքման առնչությամբ, որն ուղղված էր հենց ՌՍՖՍՀ դեմ: Բնականաբար, այդ լուրը մեծ անհանգստություն ու աղմուկ առաջացրեց Սոսկվայում: Գ. Չիչերինը թուրքական կողմից բացատրություն պահանջեց¹⁵⁹: ՌՍՖՍՀ արտգործգերատեսչության

¹⁵⁵ Ղորղանյան Գ., Հայաստանի Հանրապետությունը և պետությունները («Վեմ», Փարիզ, 1934, թիվ 2, էջ 63), Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923 թթ.), էջ 436–437:

¹⁵⁶ Хармандарян С. В., Карсская конференция 1921 г. и ее предистория, («Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, թիվ 3, էջ 187):

¹⁵⁷ Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 89:

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹ Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, էջ 364, նաև ДВП СССР, т. 3, с. 589.

ղեկավարը հարց էր տալիս, թե ում է ներկայացնում Բեքիր Սամի բեյը՝ Կ.Պոլսի¹⁶⁰, թե՞ Անգորային¹⁶⁰: Բ. Սամին բազմադեմ դիվանագիտական խաղեր ու քաղաքական առևտուր էր անում Լոնդոնում Ֆրանսիայի, Իտալիայի, նաև Անգլիայի հետ, որպեսզի Մոսկվայից ավելի մեծ փայաբաժին պոկի, իհարկե, Չայաստանի հաշվին: Իսկ Մոսկվան էլ Մ. Քեմալին Անտանտից հեռու պահելու համար Մոսկվայի բանակցություններում գնում էր ավելի մեծ զիջումների՝ փաստորեն Չայաստանի շահերի զոհաբերության:

Անգլիայի վարչապետ Լ. Ջորջը Բ. Սամիի հետ ունեցած գրույցի բովանդակությունը դարձրեց հասարակայնության սեփականություն: Այդ գրույցն այնքան բացահայտ հակախորհրդային էր, որ խորհրդային կառավարության բողոքի նոտայից հետո ԹԱՄԺ ստիպված Բ. Սամիի հրաժարականի պահանջ դրեց: Քիչ ավելի ուշ՝ մայիսի 8-ին, Բ. Սամի բեյը հրաժարական տվեց արտգործ-ժողկոմի պաշտոնից¹⁶¹: Վիճակը փրկելու համար ԹԱՄԺ կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ այդ բոլորը եղել է Բ. Սամի բեյի անձնական նախաձեռնությունը: Բացի այդ՝ Ազգային մեծ ժողովը հրաժարվեց վավերացնել Ֆրանսիայի և Իտալիայի հետ կնքած համաձայնագրերը: Բայց դա չխանգարեց նրան, որ մի քանի ամիս անց Թուրքիան նույնաբնույթ նոր պայմանագրեր կնքի Ֆրանսիայի, իսկ հետո՝ Իտալիայի հետ:

Այդուհանդերձ, Բեքիր Սամի բեյի այդ երկակի դիվանագիտական խաղերը, անշուշտ, քաղաքական դիվիդենտներ բերեցին Թուրքիային: Մի կողմից Անտանտի հետ հաշտվելու և համագործակցելու դիրք ընդունելով և օգտագործելով դրանց միջև եղած հակասությունները՝ Թուրքիան՝ հանձին Սամիի, կարողացավ խարխլել Սևրի պայմանագրի հիմքերը, իսկ մյուս կողմից՝ Բ. Սամիի դիվանագիտական մանևրը Ռուսաստանից սառելու և դեպի Արևմուտք կողմնորոշվելու վերաբերյալ, անշուշտ, հարկադրեցին խորհրդային կառավարությանը Մոսկվայի բանակցություններում ավելի մեծ զիջումների գնալ հօգուտ Թուրքիայի:

Չարկ է նշել, որ ռուս-թուրքական մոսկովյան կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման ընթացքում թուրքական

¹⁶⁰ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 589.

¹⁶¹ Բեքիր Սամի բեյի հրաժարականից հետո ժամանակավորապես արտգործկոմիսար նշանակվեց Ֆեվզի փաշան, իսկ փոքր ավելի ուշ՝ հուլիսի 1-ից, Յու. Քեմալը:

քարոզչության և դրան տուրք տվող խորհրդային դիվանագետներ Բ. Մդիվանու, Բ. Շահթախթինսկու և մյուսների ծավալած երկակի քաղաքական խաղերից մեկն էլ այն էր, որ իբր քեմալական քաղաքական ղեկավար շրջանակներում սկզբունքային տարածանություններ կան Ռուսաստանի հետ դիրքորոշման հարցում: Մի հոսանքը (Մ. Քեմալ, Յու. Քեմալ, Ա. Մուխթար և այլք) իբրև հակված էր Ռուսաստանի հետ բարեկամության և դաշինքի, իսկ մյուսը (Բ. Սամի, Հուսեյին Ռեուֆ բեյ և այլք)՝ դեպի Արևմուտք: Իրականում դա ընդամենը թուրք դիվանագիտությանը բնորոշ քաղաքական խաղ էր՝ Ռուսաստան-Արևմուտք երկրներանքի պատրանք ստեղծելու, նպատակը՝ որքան հնարավոր է Ռուսաստանից ավելի մեծ զիջումներ և օգուտներ կորզելու: Այդ մասին են վկայում բազմաթիվ փաստաթղթեր՝ նոտաներ, հեռագրեր, որոնք զետեղված են պրոֆ. Յու. Բարսեղովի արժեքավոր ժողովածուում¹⁶²: Ինչ խոսք, Լոնդոնում ընթացող այդ բանակցությունները պետք է բացասաբար անդրադառնային Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի աշխատանքների վրա:

Ռուսների հետ բանակցություններ վարելիս թուրքերի համար սկզբունքային նշանակություն ուներ «Ազգային ուխտի» ճանաչումը, որից էլ կբխեր տարածքային-սահմանային խնդիրների լուծումը: Ինչպես հայտնի է, 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի սուլթանական միջլիսը ընդունեց թուրքական «Ազգային ուխտը», որը հռչակում էր Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, և դրա տակ հասկացվում էր 1877 թ. ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանը, այսինքն՝ Թուրքիայի անբաժան մաս էին հայտարարվում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև ամբողջ Կարսի և Բաթումի մարզերը:

Տակավին ռուս-թուրքական առաջին (1920 թ. հուլիս-օգոստոս) կոնֆերանսի արդյունքով օգոստոսի 24-ին նախաստորագրված խորհրդա-քեմալական պայմանագրի նախագծով ՌՍՖՍՀ սկզբունքորեն ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը»¹⁶³: Այդ նախագծի հիմնադրույթները դրվեցին Մոսկվայի խորհրդածողովի հիմքում: Խորհրդային պատվիրակությունը ի սկզբանե հայտա-

¹⁶² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 405–406, 418, 424 и др.

¹⁶³ Ձոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 142, Պալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923 թթ.), էջ 265–268:

րարեց, որ ինքը պատրաստ է ճանաչել «Ազգային ուխտը», սակայն պահանջում է սահմանային որոշ ճշտումներ մտցնել, մասնավորապես Բաթումի խնդրում: Խորհրդային կողմը պահանջ դրեց, որ Բաթումն իր շրջակայքով և նրան սպասարկող խճուղին և երկաթուղին պատկանեն Վրաց. ՍԽՅ-ին¹⁶⁴: Փետրվարի վերջերին, երբ Վրաստանը խորհրդայնացավ, այժմ արդեն ավելորդ ու անգամ վտանգավոր էր թուրքերի առկայությունը Բաթումում: Դրա համար խնդիր դրվեց զորքը դուրս բերել քաղաքից և շրջակայքից: Հետո կտեսնենք, որ այդ ուղղումը ավելի շուտ վերածվեց տարածքային փոխանակության: «Ազգային ուխտի» մաս կազմող Բաթումն իր շրջակայքով անցավ խորհրդային Վրաստանին, իսկ դրա փոխարեն «Ազգային ուխտի» տարածքային շրջանակից դուրս և երբեք օսմանյան Թուրքիայի կազմի մեջ չմտած Սուրմալուի գավառը՝ Հայոց խորհրդանիշ Մասիս լեռով, հանձնվեց Թուրքիային: Այսինքն՝ հայկական Սուրմալուի գավառի հաշվին Վրաստանը փոխհատուցում ստացավ Բաթումը: Տարածքային առումով Բաթումի մարզի ընդամենը 6254 քառ. վերստ տարածքի ուղիղ կեսը անցնում էր Վրաստանին, դրա դիմաց Թուրքիան ստանում էր Սուրմալուի գավառը՝ 3174 քառ. վերստ տարածքով¹⁶⁵: Այս փոխատեղությունը խորհրդային կողմը հիմնավորում էր նրանով, որ Բաթումը Անդրկովկասի խոշորագույն նավահանգիստն է՝ ծովային դարպասը, և կենսական նշանակություն ունի երկրամասի համար:

Այսպիսով, խորհրդաժողովում Գ. Չիչերինի և Յու. Քեմալի փոխադարձ համաձայնությամբ որոշվեց բանակցությունների համար հիմք ընդունել «Ազգային ուխտը» և օգոստոսի 24-ի նախաստորագրված ռուս-թուրքական բարեկամության պայմանագրի նախագիծը, որոնք այստեղ պետք է ավելի խորացվեին ու կոնկրետացվեին:

Եթե թուրքական «Ազգային ուխտը» ի սկզբանե ճանաչվում էր իբրև հիմք սահմանների ճշտման հարցում, ապա ինքնին պարզ

¹⁶⁴ Хейфец А. Н., ցվ. աշխ., էջ 110, Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը ..., էջ 227, նույնի՝ Տարածքային-սահմանային հարցերը ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում (1921 թ. փետրվար-մարտ), «Լրաբեր» հաս. գիտ., 1989, թիվ 2, էջ 9, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923թթ.), էջ 443:

¹⁶⁵ Завриев Д., К новейшей истории северо-восточных вилаетов Турции, Тбилиси, 1947, с. 69-70.

եր դառնում, որ Թուրքիան տարածքային որևէ զիջում չէր անելու, իսկ խորհրդային կողմն էլ չէր պնդելու «ուխտի» սահմաններից դուրս որևէ պահանջ:

Թուրքերը, բավարար չհամարելով ռուսների կողմից «Ազգային ուխտի» սկզբունքների ընդունումը, սկսեցին դիմել նաև ուժային գործողությունների: Մարտի 1-ին թուրքական բանակը օկուպացրեց Արդահանն ու Արդվիհնը: Այս կապակցությամբ մարտի 2-ին Գ. Չիչերինը նոտա ուղղեց դեսպան Ալի Ֆուադին որոշակի պարզաբանում ստանալու համար: Հաջորդ օրը Ալի Ֆուադը պատասխանեց, որ դա թուրքական «Ազգային ուխտին» համապատասխան քայլ է, և բացի այդ՝ այդ տարածքների գրավումով փաստորեն թուրքական բանակը նյութական օժանդակություն է ցույց տալիս վրացական բանվորներին մենջևիկյան կառավարության դեմ մղվող պայքարում¹⁶⁶: Այստեղ ուշագրավ է Ջեբեստյի պատասխանի երկրորդ մասը: Քեմալականներն արդեն հմտացել էին, հեղափոխական կեղծ լոզունգներ շահարկելով, բռնել կոմունիստական առաջնորդների թույլ տեղից և պոկել ցանկալի տարածքներ:

Արդվիհի գրավումից հետո թուրքերի հաջորդ քայլը պետք է լիներ Բաթումի գրավումը: Սակայ Բաթումի խնդրում խորհրդային ղեկավարությունը կտրական դիրք գրավեց:

ՌՍՖՍՀ պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինը Անգորայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Մդիվանուն ուղղված մարտի 4-ի ծածկագիրը հեռագրում հայտնում էր, որ «Այժմ թուրքերի հետ ընթանում է առևտուր: Սենք տալիս ենք Կարսը և Արդահանը, բայց ոչ մի դեպքում չենք կարող զիջել Բաթումը և պահանջում ենք նրանց գորքերի հետ քաշում 20-վերստանոց առանցքով Ալեքսանդրապոլի երկաթուղուց արևմուտք և Արաքսից հարավ: Բաթումը կլինի Վրաստանին, Ալեքսանդրապոլը և Երևանը՝ Հայաստանին, իսկ Նախիջևանը անմիջապես կախման մեջ կլինի Ռուսաստանից»¹⁶⁷: Ջարմանալ կարելի է Չիչերինի բերած համեմատության վրա՝ Բաթում-Երևան: Այսինքն՝ Բաթումն ու Երևանը պատկանելիության տեսակետից հայտնվում են միևնույն հարթության վրա: Նա վստահեցնում է, որ Երևանը կմնա Հայաստանին: Սա էլ է ձեռք-

¹⁶⁶ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 556.

¹⁶⁷ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 411, “Голос Армении”, 26 апреля 2001 г., № 43, с. 6.

բերում: Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա դեռ մինչ կոնֆերանսի բացումը խորհրդային պատվիրակությունը, նույնիսկ Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Բ. Շահթախթինսկին գտնում էին, որ Նախիջևանի երկրամասը պետք է դուրս բերել Թուրքիայի խնամակալությունից և դարձնել որպես Խորհրդային Ռուսաստանի հովանավորությամբ ինքնակառավարվող մարզ մինչև հետագայում խնդրի վերջնական լուծումը¹⁶⁸: Սակայն այդպես չեղավ: Բանակցությունների ժամանակ խորհրդային կողմը չկարողացավ անցկացնել անգամ այդ տարբերակը և ի վերջո համաձայնվեց թուրքերի ներկայացրած պահանջին, որն էլ արտացոլվեց պայմանագրի 3-րդ հոդվածում:

Հաջորդ օրը՝ մարտի 5-ին, դարձյալ Մոփվանուն ուղղված շտապ հեռագրում (դեպեշ) Չիչերինը տեղեկացնում է, որ «սահմանագծի խնդրում թուրքերի հետ տարածայնություն կա: Թուրքերը մասնավորապես պահանջում են, որ սահմանն անցնի Արփաչայ և Արաքս գետերով, իսկ սահմանային ամրությունները (блокпостов) գտնվեն 5 վերստանոց հեռավորության վրա: Մենք պնդում ենք, որ այդ ամրությունները հեռացվեն 20 և 25 վերստանոց առանցքով (շերտով) Արփաչայ և Արաքս գետերի ամբողջ երկարությամբ՝ ապահովելու համար երկաթուղու անվտանգությունը: Թուրքերը անչափ համառում են»¹⁶⁹:

Գ. Չիչերինի ցանակ-հեռագրերից դժվար չէ նկատել, որ կողմերի միջև ծագած տարածայնությունը ոչ թե Հայաստանին ինչոր տարածք զիջելու շուրջ էր, այլ ընդամենը Ախուրյան-Արաքս գետերի հունով անցնող հայ-թուրքական սահմանի երկարությամբ թուրքական զորքի և ամրությունների տեղակայման հարցը՝ 5°, թե՞ 20 վերստանոց հեռավորության վրա, Ալեքսանդրապոլ-Արարատ երկաթուղու անվտանգության ապահովումը սահմանախախտ քրդերի և այլ ավազակային խմբերի հարձակումներից: Հետագայում կտեսնենք, որ այս հարցն էլ է լուծվում թուրքերի օգտին:

Մարտի առաջին տասնօրյակում ռուս-թուրքական ոչ պաշտոնական քննարկումների հիմնական առևտրի առարկան էր հայկական տարածքների զիջման հաշվին հասնել նրան, որ Բաթումը չանցնի թուրքերին:

Ի. Ստալինը Չիչերինին հասցեագրած մարտի 6-ի պաշտո-

¹⁶⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 390.

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 411, 416:

նական նամակ-գրությունում մատնանշում էր տարածքային այն հնարավոր զիջումները, որ ինքը տարբեր առիթներով արել է թուրք պատվիրակներին.

1. Բաթումի օկրուգի մեծ մասն անցնում է ՌՍՖՍՀ-ին (ոչ թե Վրաստանին-Ա.Յ), իսկ Արդվինը և Արդանուշը՝ Թուրքիային:

2. Կարսի մարզը Արդահանով անցնում է Թուրքիային, և սահմանագիծը մոտավորապես լինելու է Կարսի մարզի և Թիֆլիսի նահանգի հին սահմանը:

3. Ալեքսանդրապոլը դատարկվելու է թուրքերից, և Ալեքսանդրապոլ-Ղամարլու երկաթուղու ամբողջ երկարությամբ (զօից արևմուտք) ապահովվելու է 20 վերստ խորությամբ առանցք ՌՍՖՍՀ օգտին:

4. Նախիջևանի հարցի շուրջ վերջին խոսքը տրվելու է Ադրբեջանի ներկայացուցչին¹⁷⁰:

Կարելի է ասել, որ Ի. Ստալինի այս հրահանգը դառնում է ռուսական պատվիրակության համար գործողությունների ու հնարավոր զիջումների ուղեցույց:

Բաթումի հարցում կողմերը գալիս են համաձայնության, որ այն անցնի Ռուսաստանին: Այս կապակցությամբ Ալի Ֆուադն իր հուշերում գրում էր, որ «Բաթում քաղաքն ու նավահանգիստը կովկասցիներին զիջելու դիմաց մենք պահանջեցինք, որ մեր սահմանագիծը երկարաձգվի Կարսից դեպի արևելք՝ մինչև Արփաչայ-Արաքսի հունը: Այսպիսով, մենք ապահովում էինք մեր անվտանգությունը և միաժամանակ ձեռք բերում մի զգալի կտոր տարածք: Պայմանագրով այդ տարածքը ստանալուց հետո միայն վերջին պահին զիջեցինք Բաթումը և ընդ որում արտաքուստ ցույց էինք տալիս, թե մենք կովկասցիներին զիջումների ենք գնում»¹⁷¹: Ստալինի ներկայացրած պահանջի՝ Ալեքսանդրապոլ-Ղամարլու երկաթուղու ամբողջ երկարությամբ դեպի Արևմուտք 20 վերստ խորությամբ թուրքերից դատարկվելու մասին վարկածը չի իրականացվում, որովհետև այստեղ, ըստ էության, առևտուր (փոխանակություն) է կատարվում Բաթում քաղաքի ու նավահանգստի հետ: Դրա պատասխանը, ինչպես տեսանք վերևում, տվել է Ալի Ֆուադը:

Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա ինչպես ասվեց, Ի. Ստալինը մարտի 6-ի նամակում ցուցում էր տալիս Գ. Չիչերինին,

¹⁷⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 419.

¹⁷¹ Նույն տեղում, էջ 418:

որ այդ խնդրում վերջին խոսքը տրվելու էր Ադրբեջանի ներկայացուցչին¹⁷²: Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Բ. Շահթախթինսկին թուրք պատվիրակության խնդրանքով մարտի 7-ին դիմում է Գ. Չիչերինին Ի. Ստալինի հետ հանդիպում կազմակերպելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ եթե Հայաստանի պատվիրակությունը լիովին մեկուսացած է եղել պաշտոնական և ոչ պաշտոնական բանակցություններից ու գրույց-հանդիպումներից, ապա Ադրբեջանի ներկայացուցիչ Բ. Շահթախթինսկին ակտիվ հարաբերությունների մեջ է եղել թուրք պատվիրակության և կապող օղակի դեր է կատարել թուրքերի և Ռուսաստանի միջև: «Այսօր ես երկարատև գրույց ունեցա թուրքերի հետ, – գրում էր Բ. Շահթախթինսկին Գ. Չիչերինին հասցեագրված մարտի 7-ի նամակում: - Նրանց այժմ քիչ է հետաքրքրում Նախիջևանի շրջանի և Բաթումի մասին հարցերը, քանի որ նրանք համոզվել են, որ այդ օկրուգների վերաբերյալ բոլոր վեճերը անօգուտ են: ... Նրանք խնդրել են ինձ, որ ընկ. Ստալինից համաձայնություն ստանամ՝ իրենց երեք ժամ հատկացնելու, որպեսզի հնարավորություն ունենան նրա հետ քննելու համաձայնագրի բոլոր կետերը»¹⁷³:

Նույն օրը՝ մարտի 7-ին, Բ. Շահթախթինսկու խնդրանքին ընթացք տալով, Գ. Չիչերինը նամակ է ուղղում Ստալինին՝ թուրք պատվիրակությանը ընդունելու առաջարկով: Չիչերինը գրում է, որ «Թեև դուք կլանված եք կուսակցական համագումարով (խոսքը ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի մասին է-Ա.Յ.), բայց և այնպես շատ ցանկալի կլիներ ընդունել նրանց և քննել համաձայնագրի բոլոր կետերը»¹⁷⁴: Գ. Չիչերինը ևս նշում է, որ թուրք պատվիրակները, արդյունքի չհասնելով Նախիջևանի և Բաթումի շուրջ, այժմ մեծ կարևորություն են տալիս երկաթուղային գծից 20 վերստ խորությամբ սահմանը հետ քաշելու խնդրին՝ դրա մեջ տեսնելով Կարսի ռազմական նշանակությունը չեզոքացնելու վտանգ:

Ինչ վերաբերում է Արաքսի հովտին, ապա Չիչերինը Ստալինի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ Սուրմալու գավառի հարավային մասի մերձակա լեռներում ապրում են քրդեր, ովքեր իրենց կենցաղով ավազակներ են: Ըստ Չիչերինի՝ եթե

¹⁷² Нагорный Карабах, (док. и ком.), т. 1, М., 2008, с. 619.

¹⁷³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 419–420.

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 420:

սահմանը անցնի Արաքսով, ապա Արարատյան հովտի բնակչու-
թյունը մշտապես կենթարկվի կողոպուտի»¹⁷⁵:

Անհանգստացած Բաթունի խնդրի կարգավորման ձգձգու-
մից՝ մարտի 9-ին Վ. Ի. Լենինը նամակով դիմում է Գ. Չիչերինին,
որպեսզի «Մի կես ժամով ընդհատվի կոնֆերանսը իր հետ
գրուցելու համար: Իսկ այդ ընթացքում Ի. Ստալինը անկեղծ կխոսի
թուրքական պատվիրակության հետ՝ պարզելու գործը և այսօր իսկ
այն հասցնելու ավարտին»¹⁷⁶:

Ըստ ամենայնի՝ հանդիպումները կայացել են և ի վերջո
(մարտի 9-ին որոշ տվյալներով՝ 10-ին) կողմերը գալիս են համա-
ձայնության՝ խորհրդա-թուրքական ամբողջ սահմանի վերա-
բերյալ:

Մարտի 9-ին Գ. Չիչերինը ՌԿ(ք)Կ ԿԿ-ին ուղղված նամակում
մասնավորապես հայտնում է, որ թուրքական պատվիրակությունը
այսօր վերջնականորեն (ընդգ.- հեղինակին է) համաձայնվեց
Թուրքիայի հյուսիսարևելյան հետևյալ սահմանին. «Սև ծովից սահ-
մանը սկսվում է Սարպ բնակավայրից և անցնում հարավ-արևելք
մինչև Խեղիսմտա լեռը, իսկ այդտեղից դեպի արևելք՝ Շավչեթի
լեռնաշղթան: Այնուհետև անցնում է Արդվինի գավառի հյուսիսային
սահմանագծով մինչև Արդահանի գավառի սահմանը՝ կոնկրետ
Կվեխիսիբելիի լեռնանցք, հետո՝ Արդահանի գավառի հյուսի-
սային սահմանով: Ալեքսանդրապոլից դեպի արևմուտք ընկած
սահմանը խորհրդային հանրապետություններին է թողնում մի
անկյուն Արփա լճով (ինչպես որ կա Ալեքսանդրապոլի պայմանա-
գրում), ընդ որում սահմանագիծը անցնելու էր Աղբաբայի և Ղըզըլ-
դաշի լեռներից արևմուտք: Թուրքիան ճանաչել է այդ սահմանը
Ալեքսանդրապոլի պայմանագրով: Այնուհետև սահմանն անցնում
է Արփաչայ և Արաքս գետերով: Սակայն այն տեղանքում, որտեղ
Արփաչայը շատ է մոտենում երկաթուղուն, թուրքերը պարտա-
վորվում են իրենց գործերը պահել սահմանից առնվազը 8 կմ
հեռավորության վրա: Նախիջևանը հայտարարվում է ինքնավար
մարզ՝ Ադրբեջանի հովանավորության ներքո»¹⁷⁷: Ներկայացված

¹⁷⁵ Նույն տեղում:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 424:

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 426, Нагорный Карабах, т. 1, М., 2008, с. 619, Казанджан
Р., К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г.
(Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Ե., 2001, էջ
114):

սահմանային տարբերակով «Ազգային ուխտից» անճան շեղում պետք է համարել այն, որ Հայաստանին էր մնում նախկին Կարսի մարզի Աղբաբայի գավառակի եռանկյունածև մի հատված՝ Աղբաբայի և Ղըզըլ-դաշի լեռներով:

Մարտի 10-ին (հինգշաբթի օրը) երեկոյան գումարվեց քաղաքական հանձնաժողովի նիստը: Նիստը նախագահել է Յու. Քեմալ բեյը՝ մասնակցությամբ Գ. Չիչերինի, Ջ. Կորքմասովի, Ռիզա Նուրբեյի, Ալի Ֆուադ փաշայի:

Նիստի օրակարգում է եղել սահմանների մասին հարցը: Ռուսական պատվիրակությունը հայտարարում է, որ մի կողմից նա համաձայն է ճանաչելու թուրքական «Ազգային ուխտը», իսկ մյուս կողմից՝ պահանջում է սահմանների որոշակի ուղղումներ: Խորհրդային պատվիրակությունը գտնում էր, որ Բաթումը Կովկասի եզակի ծովային դարպասն է: Անհրաժեշտ է, որ նշված նավահանգիստը և նրան սպասարկող երկաթուղային և խճուղային ճանապարհները պատկանեն խորհրդային հանրապետություններին՝ տվյալ դեպքում Վրաստանի Խորհրդային Հանրապետությանը:

Բաթումի հարցում առավելագույն զիջումը, որին կարող է համաձայնվել ռուսական պատվիրակությունը, այն է, որ սահմանագիծը անցնի մոտավորապես հետևյալ կերպ. «Սարպ (Սև ծովի ափին), Խեղիս մթա լեռը, Շավշեթի լեռնաշղթա, նախկին վարչական սահմանով մինչև Արդահանի օկրուգ՝ Այնուհետև Հայաստանին է թողնվում Աղբաբայի և Ղըզըլ-դաշի լեռները, ինչպես նաև այն բոլոր տարածքները, որոնք միացվել են Հայաստանին Ալեքսանդրապոլի պայմանագրով: Ռուսական կառավարությունը չի պնդի, որ սահմանագիծը անցնի Արփաշայից արևելք (պետք է լինի արևմուտք - Ա.Յ.) և Արաքսից հարավ: Սակայն ռազմական տեսակետից Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթուղին պաշտպանելու անհրաժեշտությունը, ինչպես նաև քրդերի և այլ ավազակախմբերի հնարավոր հարձակումների դեմն առնելու համար ռուսական կառավարությունը ստիպված է խնդրելու Թուրքիային, որ նա իր վրա պարտավորություն վերցնի սահմանից որոշակի հեռավորության վրա զորք չպահի և ամրություններ (блокпостов) չկառուցի, որի առանցքի լայնությունը չպետք է գերազանցի 8 վերստը, և որը կարող է կրճատվել այն վայրերում, ուր գետը հեռանում է երկաթու-

* Արդվինի գավառը և Բաթումի մարզի հարավային մասը մնում էին Թուրքիային:

ղուց¹⁷⁸»։ Ահա այդպիսին են եղել Ռուսաստանի կառավարության ընդհանուր պայմանները, որի դեպքում նա համաձայն կլինի կնքել պայմանագիր Թուրքիայի հետ նրա հյուսիսարևելյան սահմանների վերաբերյալ։ Սահմանագծի մանրամասները ավելի հստակ կորոշեն երկու կողմի ռազմական փորձագետները։ Ձևակերպվածը արտացոլում գտավ պայմանագրի նախագծի 1-ին հոդվածում։ Թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ ինքը ընդունում է այդ սահմանը, հավասարապես նաև 8 վերստ (երկու հրացանազարկ հեռավորությամբ) զորքեր չտեղակայելու և պաշտպանական ամրություններ չկառուցելու վերաբերյալ¹⁷⁹։

Բաթումի հարցում թուրք պատվիրակությունը համաձայնվեց այն թողնել Վրաստանի հովանավորության ներքո հետևյալ պայմանով. ա/բնակչության լայն ինքնավարություն, բ/մահմեդականների կրոնի, մշակույթի և հողից ազատ օգտագործման իրավունքների ճանաչում և գ/Թուրքիայի հետ ապրանքների ազատ առևտուր, նավահանգստից անվճար օգտագործման իրավունք և այլ արտոնություններ¹⁸⁰։ Ռուսական պատվիրակությունը սկզբունքորեն ընդունեց այդ պայմանները։ Մնացած մանրամասները պետք է որոշվեին Վրաստանի կառավարության հետ։

Հայաստանի սահմանների մասին հարցը քննարկելիս թուրքական պատվիրակությունը գտավ, որ 8 վեստանոց առանցքի ընդունումը մեծ գիջում է իրենց կողմից, քանի որ այն ներկայացնում է երկու հրացանազարկ հեռավորություն։ Սակայն նրանք, այդ հեռավորությունը կիրառելի համարելով Արփաչայի շրջանի համար, նպատակահարմար չէին գտնում Արաքսի շրջանի համար՝ պատճառաբանելով, որ Արաքս գետը բնական պատնեշ է քրդերի հարձակումների վտանգի դեմ և բացի այդ՝ 80–100 կմ ձգվող այդ հատվածի պաշտպանությունը անհրաժեշտության դեպքում կոժվարանա, եթե այդ գոտում թուրքական զորք չտեղակայվի։ Թուրքական կողմը Արաքսի շրջանի համար թույլատրելի համարեց 4 վերստանոց առանցքը, եթե ռուսական կողմը կպնդի դրա անհրաժեշտությունը¹⁸¹։

¹⁷⁸ ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 21, ք. 64, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 426–427.

¹⁷⁹ ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 21, ք. 60–61:

¹⁸⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 427.

¹⁸¹ Նույն տեղում, էջ 428:

Հայկական սահմանի երկարությամբ թուրքական զորքեր չպահելու հարցում վերջնական որոշում չկայացվեց: Այդ հարցերի մանրամասն քննարկումը և առաջարկությունների մշակումը որոշվեց հանձնել ռազմական փորձագետներին¹⁸²:

Մոսկվայի կոնֆերանսի քաղաքական հարցերով հանձնաժողովի մարտի 10-ի նիստում քննարկվեց նաև Նախիջևանի կարգավիճակի և սահմանների հարցը: Թուրքական պատվիրակությունը գտնում էր, որ տեղի բնակչությունն է կանչել (հրավիրել) թուրքական զորքերին, և այն ներկայումս գտնվում է Թուրքիայի հովանավորության տակ:

Ռուսական պատվիրակությունը առաջարկեց ամրագրել, որ Նախիջևանը անցնում է Ադրբեջանի հովանավորության ներքո: Եթե հավատանք թուրք պատմաբան Թևֆիկ Բիյիքլիօղլիին, ապա երևում է, որ խորհրդային պատվիրակությունն է առաջարկել, որ Ադրբեջանի հովանավորության տակ ստեղծվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը¹⁸³: Իբրև խնդրի լուծում՝ թուրքական կողմը համաձայնվեց այդ հովանավորությունը զիջելու Ադրբեջանին՝ պայմանով, որ հետագայում այն չփոխանցվի մի երրորդ պետության: Մուսուլմանների հովանավորի դերում հանդես եկող թուրքական պատվիրակությունն իր կողմից նվիրատվություն էր համարում Նախիջևանը Ադրբեջանին զիջելը: Սակայն ռուսական պատվիրակությունը առարկեց այն մասով, որ չի կարող ընդունել թուրքերի այն ձևակերպումը, թե «Թուրքիան զիջում է հովանավորության իր իրավունքը» նախ այն պատճառով, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի վավերացվել և երկրորդ, թե «Նախիջևանի բնակչությունն է կանչել թուրքական զորքին»: դա նույնպես իրավաբանական արժանահավատության բնույթ չունի, որպեսզի հիմք ծառայի նման հովանավորության համար:

Իր հերթին թուրքական կողմը զգուշացրեց, որ եթե այդ տարածքում մահմեդականների կոտորած լինի, ապա թուրքական զորքերին դժվար կլինի պահպանել չեզոքությունը¹⁸⁴: Եվ սա ասում էր մի երկրի պատվիրակություն, որի հին ու նոր կառավարության

¹⁸² Նույն տեղում, էջ 433, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 445:

¹⁸³ «Երեկոյան Երևան», 9 հունիսի 1988 թ.:

¹⁸⁴ ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 21, թ. 60, Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր), Ե., 2001, էջ 51:

գործունեության արդյունքով 1915–1916 թթ. ընթացքում իրակա-
նացվել էր 1.5 մլն. արևմտահայերի եղեռն, իսկ 1918–1920 թթ.
ընթացքում կոտորվել էր ավելի քան 200 հազար արևելահայ: Նա-
խիջևանում մուսուլմանների կոտորածի վերաբերյալ թուրքերի
հայտարարությանը ռուսական պատվիրակությունը հակադարձեց
ոչ մուսուլման բնակչության կոտորածի մասին Կարսում¹⁸⁵:

Ի վերջո կողմերը համաձայնվում են հետևյալ ձևակերպ-
մանը, որ «Նախիջևանը հանձնվում է Ադրբեջանի խնամակալու-
թյանը պայմանով, որ Ադրբեջանը այդ հովանավորությունը չի զիջի
երրորդ պետության»¹⁸⁶: Կողմերը սկզբունքորեն համաձայնվում
են այդ մասին առանձին կետով ամրագրել պայմանագրի 3-րդ հոդ-
վածում: Արձանագրվեց, որ պայմանագրի այդ հոդվածի որևէ խախ-
տում կհամարվի ամբողջ պայմանագրի խախտում: Դրա համար էլ
անհրաժեշտ չհամարվեց հատուկ երաշխիքների մասին որոշում
կայացնել: Նախիջևանի սահմանի ճշգրտման հարցը ևս որոշվեց
հանձնարարել ռազմական փորձագետներին:

Հարկ է նկատել, որ Նախիջևանի խնդրում խորհրդային
պատվիրակությունը առանձնապես կարևորություն չէր տալիս, թե
այն ում կազմում կլինի՝ Ադրբեջանի^o, թե՞ Հայաստանի: Այստեղ
արդեն ավելորդ էր հիշել Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի
30-ի մեծախոստում հռչակագրի մասին:

Ինչպես հայտնի է, Ալեքսանդրապոլի պայմանագրի 2-րդ հոդ-
վածի 2-րդ մասը սահմանում էր, որ Նախիջևանի, Շարուրի և Շահ-
թախթիի շրջանները ժամանակավորապես անցնելու էին
Թուրքիայի հովանավորության ներքո, մինև որ վերջնականորեն
կորոշվի նրա կարգավիճակը: Հայաստանը պարտավորվում էր չմի-
ջամտել այնտեղ հաստատվող վարչակարգի ձևավորմանը:

Ասվածը ցույց է տալիս, որ պայմանագրով վերոհիշյալ երեք
շրջանները անվերապահ չէին անցնում Թուրքիայի իրավասության
տակ: Մոսկվայի բանակցությունների ժամանակ, եթե խորհրդային
պատվիրակությունը բավարար ցանկություն և հետևողականու-
թյուն դրսևորեր, ապա հնարավոր էր Նախիջևանի երկրամասի
խնդրին միանգամայն այլ՝ հայանպաստ լուծում տալ: Գտնում ենք,
որ թուրքերը բավարարի հիմքեր չունեին պնդելու այդ խնդրում (տե-
ղի բնակչության հրավերը իրավական հիմք չէր), որովհետև Արևել-

¹⁸⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 429.

¹⁸⁶ Նույն տեղում:

յան Հայաստանի օրգանական մասը կազմող Նախիջևանի երկրամասը չէր համարվում թուրքական «Ազգային ուխտի» բաղկացուցիչ մաս, ինչպես որ դրա բաղկացուցիչ մաս չէր կազմում Սուրմալուի գավառը, որը ևս թեթև ձեռքով բռնությամբ խլվեց Հայաստանից:

Ստացվեց այնպես, որ խորհրդային կողմը ինքն առաջինը առաջարկեց, որ Նախիջևանի հովանավորությունը հանձնվի Ադրբեջանին: Թուրքերը անմիջապես համաձայնություն հայտնեցին այդ հովանավորությունը զիջել Ադրբեջանին պայմանով, որ Ադրբեջանը պարտավորվի այն չհանձնել մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին¹⁸⁷:

Նկատի առնելով թուրքերի և ադրբեջանցիների էթնիկ եղբայրակցությունը և առաջինի հեռագնա ծրագրերը՝ կարծում ենք, որ Ռուսաստանի ռազմավարական շահերի տեսակետից ավելի նպատակահարմար էր միջանցիկ պատուհան հանդիսացող Նախիջևանի միացումը Հայաստանին: Միակ տարածքը Նախիջևանն էր, որ սահմանային շփում ուներ Թուրքիայի հետ: Նախիջևանի՝ Հայաստանի կազմում լինելը մի տեսակ պատմեչի դեր կարող էր կատարել Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Խնդիրն այն է, որ Ադրբեջանն ու Թուրքիան իրարից որքան հիմնապես բաժանված լինեն և նրանց արանքում Հայաստանը որքան մեծ և հզոր լինի, այնքան ավելի լավ Ռուսաստանի, նաև Իրանի համար: Ինքնին հասկանալի է, որ Թուրքիայի սահմանակցությունը Ադրբեջանին կարող էր առաջ բերել քաղաքական գրգռումներ և պանթուրքական նկրտումներ: Սակայն, ցավոք, այն ժամանակ բոլշևիկ առաջնորդները միանգամայն այլ կերպ էին մտածում: Նրանք, տարված լինելով մուսուլմանական Արևելքում համաշխարհային հեղափոխության տարածման կեղծ պատրանքներով, ընդհակառակը, ջանում էին սահմանային անմիջական կապ ստեղծել Ադրբեջանի ու Թուրքիայի և այնտեղից էլ մուսուլմանական մյուս երկրների հետ: Այդ էր քաղաքական պատճառը, որ խորհրդային պատվիրակությունը շահագրգռություն հանդես չբերեց, որ Նախիջևանի երկրամասը Հայաստանի մաս կազմեր:

Պայմանագրի ձևաչափի հարցում կողմերը համաձայնվեցին, որ սահմանների մասին հանգամանալի նկարագիր տրվի առանձին ակտով (հավելվածով), որը կուճենա պայմանագրին հավասա-

¹⁸⁷ ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 21, թ. 60:

րագոր իրավաբանական ուժ, իսկ բուն պայմանագիրը կբովանդակի հիմնական դրույթները:

Քաղաքական հանձնաժողովի՝ մարտի 10-ի նիստի ժամանակ ռուսական պատվիրակությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ ինքնիշխանության հարցի մասին: Նրանում նշվում էր, որ Անդրկովկասյան հանրապետությունների սահմանների որոշումով Թուրքիան պետք է ճանաչի հիշյալ հանրապետությունների լիիրավ ինքնիշխանությունը իրենց պետության սահմաններում: Խորհրդային պատվիրակությունը թուրքական կողմին հասկացնել է տալիս, որ Ռուսաստանը թույլ չի տա ոտնձգություններ այդ հանրապետությունների ինքնիշխանության նկատմամբ: Բացի դրանից, ռուսական պատվիրակությունը հայտարարեց՝ նկատի առնելով, որ պայմանագրում հատկապես շոշափվում են անդրկովկասյան երկու հանրապետությունների՝ Հայաստանի և Վրաստանի անմիջական շահերը, ուստի նրանց ինքնիշխանությունը պաշտպանելու համար Ռուսաստանը չի առարկի, որ համապատասխան պայմանագրեր կնքվեն մի կողմից՝ Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի միջև: Սակայն ռուսական կողմը անթույլատրելի էր համարում կնքվելիք պայմանագրերում տվյալ հանրապետությունների զինված ուժերի սահմանափակումը, վերահսկողությունը նրանց զինուժի հանդեպ, միջամտությունը նրանց ներքին գործերին և այլն¹⁸⁸: Այստեղ նկատի էր առնվում Ալեքսանդրապոլի անհրավահավասար ու անվավեր պայմանագիրը: Եվ եթե թուրքական կառավարությունը խորհրդային հանրապետությունների հետ բանակցությունների ժամանակ ստիպի գնալու նման սահմանափակման, ապա ՌՍՖՍՀ այդպիսի գործողությունը կհամարի նաև իր դեմ ուղղված: Թուրքական պատվիրակությունը համաձայնվեց դրանց, և ձևակերպում ստացավ պայմանագրի նախագծի 15-րդ հոդվածը:

Դրանից հետո կոնֆերանսը ձեռնամուխ եղավ պայմանագրի հոդվածական ընթերցմանը, և յուրաքանչյուր պատվիրակություն առաջարկեց իր ուղղումներն ու լրացումները:

Այսպես, օրինակ, թուրքական պատվիրակությունը առաջարկեց պայմանագրի պրեամբուլայում «ժողովուրդների բարեկամություն» բառակապակցություններից հետո ավելացնել «և եղբայ-

¹⁸⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, ք. 44–45, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 429.

րություն» արտահայտությունը:

1-ին հոդվածի կապակցությամբ ռուսական պատվիրակությունն առաջարկեց. «Ռուսական կառավարության կողմից թուրքական հիմնական «Ազգային ուխտը» ճանաչելու հետ միասին» անել վերապահում՝ հավելելով «սահմանների որոշ ուղղում» բառակապակցությունը¹⁸⁹: Նախագծի մի քանի հոդվածներում ևս կատարվեցին խմբագրական և այլ բնույթի շտկումներ:

Նիստում թուրքական պատվիրակությունը Ռուսաստանից օգնություն ստանալու մասին հարց բարձրացրեց: Այդ մասին իմանում ենք Գ. Չիչերինի՝ Ի. Ստալինին ուղղված մարտի 10-ի նամակից: Թուրքերը Ռուսաստանից օգնության կարգով զենք և ոսկի ստանալու առաջարկություն էին ներկայացրել: Ընդ որում նրանք պահանջել են 150 մլն ռուբլի (ոսկով) օգնություն¹⁹⁰: Ինչպես արդեն գիտենք, խորհրդային կողմը պայման էր դրել, որ ինչպիսի օգնություն էլ ցույց տրվի Թուրքիային, այն չպետք է արտացոլում գտներ պայմանագրում, որպեսզի Անգլիայում կասկածներ չառաջացնի ու չվտանգի ռուս-անգլիական համաձայնագրի կնքումը:

Քաղաքական հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակվեց մարտի 12-ին (չաբաթ օրը): Նիստը փակվեց ուշ գիշեր՝ ժամը 24-ին:

Նիստի ավարտից հետո Գ. Չիչերինը նամակ է գրում նաև Վ. Ի. Լենինին: Չիչերինը գտնում էր, որ պետք է արագացնել թուրքերի հետ պայմանագրի ստորագրումը: Նիստից հետո ծանոթացնելու նպատակով նա քաղբյուրոյի անդամներին է բաժանել պայմանագրի, ինչպես նաև անցյալ տարվա (1920թ. օգոստոսի 24-ի), այնպես էլ նոր առաջարկություններով վերամշակված տարբերակները՝ տեղ-տեղ ոչ վերջնական ձևակերպումներով: Չիչերինը այդ նախագծերից օրինակներ ուղարկել էր նաև Լեժավային և Կուրսկուն: Չիչերինը խնդրում էր քաղբյուրոյի անդամներին անհապաղ ուղարկել իրենց դիտողություններն ու նկատառումները, որպեսզի մարտի 12-ի նիստի ժամանակ իր ձեռքի տակ ունենար դրանք: Նա հույս էր հայտնում, որ մարտի 12-ին կհամաձայնեցնեն պայմանագրի վերջնական տեքստը¹⁹¹:

Կոնֆերանսի քաղաքական հանձնաժողովի առաջին և երկ-

¹⁸⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 430.

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 433:

¹⁹¹ Նույն տեղում, էջ 437:

րորդ նիստերի միջակայքում խորհրդային կողմի համար տեղի է ունենում անակնկալ իրադարձություն: Մարտի 11-ին թուրքական զորամասերը մտան Բաթում՝ իբրև «Ազգային ուխտով» նախատեսված մարզը Թուրքիային կցելու մտադրությամբ¹⁹²: Եվ դա այն դեպքում, երբ քաղաքական հանձնաժողովի մարտի 10-ի նիստում կողմերը սկզբունքային համաձայնության էին եկել, որ Բաթում քաղաքը նավահանգստով անցնում է Վրաստանին, անգամ որոշվել էր նախնական սահմանագիծը՝ սկսած ծովափնյա Սարպ բնակավայրից: Թուրքական դիվանագիտությանը բնորոշ էր հետևյալ վարքագիծը. ինչքան ամրապնդում էին իրենց ռազմաքաղաքական դիրքերը, նույնքան կոշտացնում իրենց մոտեցումներն ու պահանջները: Սակայն խորհրդային Ռուսաստանի կառավարությունը այս պարագայում հակազդեց թուրքերի գործողություններին՝ անչափ կարևորելով Բաթում քաղաքի ու նավահանգստի ռազմավարական և առևտրատնտեսական նշանակությունը: Թուրքերը Բաթումում մնացին ընդամենը մեկ շաբաթ: Պայմանագրի ստորագրման հաջորդ օրը Ի. Ստալինը հեռագրում է Գ. Օրջոնիկիձեին, որ անհրաժեշտ է ուժեղ հարվածով թուրքերին դուրս քշել Բաթումից: Այդ նախաձեռնությունը իր վրա վերցրեց Կովկասյան ճակատի հրամանատարությունը¹⁹³: Մարտի 18-ին 11-րդ կարմիր բանակի առաջապահ զորամասերը մտան Բաթում, և թուրքերը հեռացան քաղաքից: Ի դեպ, այդ նույն օրը մենշևիկների կառավարությունը (50-ից ավել մարդ) իտալական շոգենավով, կառավարության փողերն չառած, անցան արտասահման¹⁹⁴:

Քաղաքական հանձնաժողովի առաջին նիստի արդյունքների վերաբերյալ Գ. Չիչերինը մարտի 12-ին շտապ հեռագրում է Անգորա Բ. Մդիվանուն: Նա տելեկացնում է, որ սահմանային խնդրում կողմերը եկել են հետևյալ փոխհամաձայնության: Սահմանագիծը անցնելու է Բաթումից 10 վերստ հարավ՝ Վրաստանին թողնելով Բաթումը և Ախալցխա տանող խճուղին՝ իր պաշտպանական առանցքով: Դրա փոխարեն Թուրքիային էր անցնում Բաթումի մարզի հարավային մասը, Արդվինի, Արդահանի և Կարսի օկրուգները, այնուհետև սահմանն անցնում է ըստ Ալեքսանդրապոլի պայմա-

¹⁹² “Борьба за победу Советской власти в Грузии”, документы и материалы, (1917–1921 гг.), Тбилиси, 1958, с. 702–703.

¹⁹³ Геноцид армян. (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 468.

¹⁹⁴ “Борьба за победу...”, с. 708.

նագրի: Սակայն այնտեղ, ուր Արփաչայը մոտենում է երկաթուղուն, սահմանն ունի 8 վերստանոց անվտանգության գոտի առանց ամրությունների: Նախիջևանը անցնում է Ադրբեջանի հովանավորության ներքո¹⁹⁵:

Գ. Չիչերինը տեղեկացնում է նաև, որ նիստի ժամանակ թուրքերը պահանջում են գրավոր համաձայնությունն օգնության կարգով իրենց դրան և զենք տալու վերաբերյալ. «Բայց մենք հրաժարվում ենք գրավոր պարտավորությունից՝ տալով միայն բանավոր խոստում: Դրա համար էլ պայմանագրի կնքումը ձգձգվում է»¹⁹⁶: Կնշանակի, որ մարտի 10-ի նիստում սահմանային խնդիրները սկզբունքորեն համաձայնեցվել էին, և պայմանագրի կնքման ձգձգման հիմնական պատճառը եղել է Ռուսաստանից ռազմաֆինանսական օգնություն ստանալու խնդիրը:

Մարտի 12-ին՝ երեկոյան ժամը 9:45-ին, բացվեց ռուս-թուրքական կոնֆերանսի քաղաքական հանձնաժողովի 2-րդ նիստը: Բացի պատվիրակության հինգ անդամներից, մասնակցում էին ռուսական ռազմական փորձագետներ Սամոյլովը և Բոբրիշչևը, իսկ թուրքականից՝ Սեյֆի բեյը և Սաֆետ բեյը: Նիստը նախագահում էր Գ. Չիչերինը:

Կոնֆերանսը քննության է առնում մարտի 10-ի նիստի արձանագրությունը: Ռուսական և թուրքական պատվիրակությունները հայտնում են մի շարք դիտողություններ ու նկատառումներ, որոնք պետք է ներառվեին նիստի արձանագրության մեջ¹⁹⁷:

1-ին հոդվածի վերաբերյալ ռուսական պատվիրակությունը հայտարարեց, որ սահմանագծի հանգամանալի որոշումը կիրականացնեն ռազմական փորձագետները, որը արտացոլում կգտնի իրենց կազմած արձանագրությունում և քարտեզում:

4-րդ հոդվածի վերաբերյալ Գ. Չիչերինի կողմից նախորդ նիստում արված հայտարարությունը, թե քրդերը սպառնալիք են ներկայացնում խորհրդային հանրապետություններին, առաջ էր բերել թուրք պատվիրակության դժգոհությունը: Վերջինս հայտարարեց, թե քրդերը թուրքերի հետ միասին պայքարում են անգլիական իմպերիալիզմի դեմ: Ուստի իրենք չեն կարող համաձայնվել ռուսական պատվիրակության այդ դիտողությանը:

¹⁹⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 445.

¹⁹⁶ Նույն տեղում:

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 438:

5-րդ հողվածի վերաբերյալ թուրք պատվիրակությունը դարձյալ անհամաձայնություն հայտնեց ռուսական պատվիրակության այն հայտարարությանը, որ Կարսի ոչ մուսուլման բնակչությունը ենթարկվել է կոտորածի: Նրանք անամոթաբար հայտարարեցին, թե իրենց հայտնի չէ նման ոչ մի դեպք այն պարագայում, որ հանրահայտ է 1920 թ. Կարսի մեծ աղետը՝ 6000-ից ավելի հայերի դաժան կոտորածը:

Ռուսների հայտարարությանը իբրև հակափաստարկ թուրքերը հայտարարեցին, որ 1918 թ. հունվարին, երբ իբրև անգլիացիների բանսարկությամբ տապալվեց Կարսի թուրքական խորհուրդը (շուրան) այնտեղ մուտք գործեց Յովսեփյանի զորքը, և 120 մահմեդական սպանվեց, իսկ 1920 թ. հունվարին իբր Կարսի մարզում ոչնչացվել է մահմեդական 253 գյուղ և 14620 բնակիչ¹⁹⁸:

6-րդ հողվածի կապակցությամբ խորհրդային պատվիրակությունը դարձյալ պնդում է, որ չի առարկի, որ Թուրքիան պայմանագիր կնքի Անդրկովկասյան հանրապետությունների հետ, սակայն անթույլատրելի է համարում նրանց ինքնիշխանությունը սահմանափակող զինված ուժեր պահելու և թուրքիայի կողմից դրանք վերահսկելու թուրքական պահանջը, մանավանդ որ այդ հանրապետությունները չեն մասնակցում կոնֆերանսին¹⁹⁹: Դրանով ռուսական կողմը ի չիք է դարձնում Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված Հայաստանի զինաթափման պահանջը:

Ռուսական պատվիրակությունը պահանջ դրեց, որ անդրկովկասյան անկախ հանրապետությունների ինքնիշխանությունը սահմանափակող որևէ անցանկալի հողված պայմանագրում տեղ չգտնի: Ռուսական կողմը նպատակահարմար էր գտնում այդ հանրապետությունների պատվիրակություններին հրավիրել ավելի ընդարձակ կոնֆերանսի, ինչը ժամանակին առաջարկել էր ռուսական պատվիրակությունը, սակայն մերժվել էր թուրքական պատվիրակության կողմից՝ պատճառաբանելով լիազորությունների բացակայությունը²⁰⁰:

Այնուհետև կոնֆերանսը ձեռնամուխ եղավ ռազմական փորձագետների հաշվետվության քննարկմանը: Անդրադարձ եղավ

¹⁹⁸ Նույն տեղում, 439:

¹⁹⁹ ՀԱԱ, Ֆ.113, ց. 3, գ. 21, թ. 59, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 440.

²⁰⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 441.

Նախիջևանի խնդրին: Հայաստանի և Նախիջևանի գավառի սահմանի հարցում ռուսական պատվիրակությունը առարկեց, որ թուրք ռազմական փորձագետների որոշած գիծը գերազանցում է Ադրբեջանի պահանջները: Թուրք ռազմական փորձագետները Նախիջևանի մարզին էին միացրել ոչ միայն Շարուր-Դարալագյազի գավառը, այլև Երևանի գավառի մի մասը ընդհուպ մինչև Արարատ կայարանը: Մինչդեռ Նախիջևանի ժայռագույն սահմանը պետք էր համարել Գայլի դրունքը: Ադրբեջանը երբեք՝ անգամ մուսավաթականների օրոք, հավակնություն չի ունեցել իր հովանավորության տակ առնելու Երևանի գավառի ինչ-որ մաս և մշտապես իր ժայռագույն սահմանն է համարել Գայլի դրունքը:

Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինը հարցը պարզաբանում էր հետևյալ կերպ : Երբ կոնֆերանսում (3-րդ հոդվածով), որոշվեց, որ Նախիջևանը անցնում է Ադրբեջանի հովանու տակ, թուրքերը Նախիջևանի մարզի սահմանը որոշեցին Ալեքսանդրապոլի պայմանագրով. այն է՝ մարզի մեջ ներառել Երևանի գավառի հարավային եռանկյունի հողակտորը: Գ. Չիչերինի պարզաբանմամբ. «Սահմանների մասին զինվորական հատուկ հանձնաժողովի մեր փորձագետների անփութության հետևանքով և առանց մեր գիտության ընդունվել էր թուրքերի առաջարկած տարբերակը: Այդ իսկ պատճառով, երբ հարցը կրկին փոխադրվեց խորհրդաժողով, միակ բանը, որ մենք կարողացանք անել, այն է, որ բողոքեցինք սահմանագիծը հարավային եռանկյունի հողակտորի ուղղությամբ անցկացնելու վերաբերյալ: Եվ ի վերջո, շարունակում է Գ. Չիչերինը, - հասանք նրան, որ Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի խառը հանձնաժողովը վերջնականորեն կճշտի այդ տեղամասի սահմանը»²⁰¹:

Ռուսական պատվիրակությունը գտավ, որ Հայաստանի և Նախիջևանի միջև եղած սահմանը պետք է համարել ժամանակավոր, մինչև որ Հայաստանը և Ադրբեջանը տեղում կճշտեն և կսահմանագատեն սահմանագիծը: Ռուսական պատվիրակությունը նշեց, որ երբ հետագայում Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանային որոշ ուղղումներ արվեն, ապա դա չպետք է դիտվի որպես Նախիջևանի հանդեպ Ադրբեջանի հովանավորության պարտավորության խախտում²⁰²:

²⁰¹ Нагорный Карабах, (док. и ком.), т. 1, М., 2008, с. 623.

²⁰² Казанджян Р., К вопросу об..., с. 116.

Թուրք պատվիրակության առաջարկով որոշվեց Շարուր-Դարալագյազի գավառը ներառել Նախիջևանի տարածքի մեջ պայմանով, որ Երևանի գավառի վիճելի տեղամասի սահմանը, որը սկսում է «Քենուրլու-դադից (6930)–Սարայ–Բուլաղ (8071) լեռով դեպի Արարատ կայարանը, կորոշի և կվավերացնի հայ, ադրբեջանական և թուրքական խառը հանձնաժողովը»²⁰³:

Որոշվեց, որ ռազմական փորձագետների արձանագրությունը կստորագրվի պայմանագրի հետ միաժամանակ երկու պատվիրակությունների կողմից:

Մարտի 12-ի նիստում ռուսական կողմը կոնֆերանսի քննարկմանն էր ներկայացրել 15 հոդվածով պայմանագրի նախագծի իրենց տարբերակը: Նախագծի 1-ի հոդվածով թուրքական «Ազգային ուխտը» դրվում էր ռուս-թուրքական հարաբերությունների հիմքում: Ռուսական նախագծով ներկայացված սահմանագիծը, ըստ էության, չէր տարբերվում մարտի 10-ի նիստում քննարկված տարբերակից: Սահման էր ճանաչվում մոտավորապես «Սարայ-խեդիս մթա, Շավշեթ լեռների ջրբաժանը, Կաննիդաղ լեռները, Արդահանի և Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանը, այնուհետև Արփաչայ և Արաքս գետերի հունը մինչև Ն. Ղարասուի թափման տեղը՝ գետաբերանը»:

Ռուսական նախագծի 2-րդ հոդվածում նշվում էր, որ Բաթում քաղաքն ու նավահանգիստը 1-ին հոդվածով նշված սահմանից հյուսիս անցնում է Վրաստանի իրավասության տակ: Նախիջևանի վերաբերյալ 3-րդ հոդվածը ձևակերպված է նույն կերպ և այլն²⁰⁴: Սակայն թուրքերի խնդրանքով ռուսական պատվիրակության ներկայացրած պայմանագրի նախագծի քննարկումը հետաձգվեց մինչև հաջորդ նիստ: Հերթական նիստը նշանակվեց մարտի 14-ին (երկուշաբթի օրը)՝ ժամը 19:00: Մարտի 12-ի նիստը փակվեց ժամը 10:15:

Մարտի 14-ին՝ երեկոյան ժամը 21-ին, բացվեց քաղաքական հանձնաժողովի 3-րդ նիստը՝ նախագահությամբ Յու. Քենալի: Կոնֆերանսը քննարկում է նախորդ՝ մարտի 12-ի նիստի արձանագրությունը և ձեռնամուխ լինում պայմանագրի առանձին հոդվածների խմբագրմանը:

²⁰³ Нагорный Карабах, (док. и ком.), т. 1, М., 2008, с. 620, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 442.

²⁰⁴ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 443–444.

Պայմանագրի նախագծի առաջին հոդվածում մասնավորապես ընդունվեց թուրքերի ներկայացրած հետևյալ ձևակերպումը. «Սույն պայմանագրում Թուրքիա հասկացության տակ հասկացվում են այն տարածքները, որոնք մտցված են 1920 թ. (1336) հունվարի 28-ի թուրքական «Ազգային ուխտի» մեջ»²⁰⁵: Այսինքն՝ պայմանագիրը վերահաստատում է թուրքերի համար շատ կարևոր «Ազգային ուխտի» պահանջը:

Թուրքերի առաջարկությամբ խմբագրական որոշ շտկման է ենթարկվում նաև 6-րդ հոդվածի՝ երկաթուղու անվտանգությանը վերաբերող հատվածը: Թուրքերը պարտավորվում են երկաթուղու երկարությամբ ձգվող առանցքում ամրություններ չկառուցել: Եթե խորհրդային կողմը մեծ կարևորություն էր տալիս երկաթուղու անվտանգ ու անխափան աշխատանքին, ապա թուրքականը՝ Կարսի շուրջը ամրությունների կառուցմանը և պաշտպանությանը²⁰⁶:

Թուրքական պատվիրակությունը, ուսումնասիրելով ռուսական պատվիրակության ներկայացրած 15-հոդվածանոց նախագիծը, ներկայացնում է իր հականախագիծը: Քննակումների ընթացքում համադրվում են երկու նախագծերը, կատարվում խմբագրական ու ռժական որոշ փոփոխություններ:

Հաջորդ նիստը նշանակվում է մարտի 16-ին (չորեքշաբթի)՝ ժամը 19-ին: Մարտի 14-ի նիստը ավարտվում է ուշ գիշեր՝ 0 ժամին:

Նիստից հետո Գ. Չիչերինը Բ. Մդիվանուն ուղղված ճեպագրում տեղեկացնում էր. «Պայմանագիրը գրեթե պատրաստ է: Շատ ժամանակ խլեց սահմանների որոշումը: Այժմ գլխավոր փորձաքարն այն է, որ թուրքերը պահանջում են գրավոր պարտավորություն՝ իրենց փողով և զենքով օգնելու համար: Մենք միայն բանավոր խոստում ենք տալիս»²⁰⁷: Հաջորդ օրը՝ մարտի 15-ին, Գ. Չիչերինը Ի. Ստալինին հասցեագրած նամակով հայտնում է, որ պայմանագիրը գրեթե պատրաստ է ստորագրման, սակայն թուրք պատվիրակությունը ձգձգում է՝ պահանջելով, որ մենք գրավոր պարտավորություն ստանձնենք՝ նրանց ոսկով և զենքով օգնելու վերաբերյալ»²⁰⁸:

Մարտի 16-ին՝ կեսօրին, գումարվում է քաղաքական հանձ-

²⁰⁵ Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 451:

²⁰⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 447.

²⁰⁷ Նույն տեղում, էջ 452:

²⁰⁸ Նույն տեղում, էջ 453:

նաժողովի 4-րդ՝ վերջին նիստը՝ մասնակցությամբ պատվիրակությունների անդամների և ռազմական փորձագետների: Նիստը նախագահել է Գ. Չիչերինը:

Աննշան փոփոխություններով ընդունվում է մարտի 14-ի նիստի արձանագրությունը: Շարունակվում է պայմանագրի հողվածական քննարկումը, մասնավորապես դիտարկվում են 8-րդ և 12-րդ հողվածները, կատարվում ոճական շտկումներ²⁰⁹:

Թուրքական պատվիրակությունը վավերացված պայմանագրերի փոխանակման վայր է առաջարկում Կարսը:

Պայմանագիրը կազմված էր երկու օրինակից: Պայմանագրի հողվածների համարակալման և տեխնիկական աշխատանքներում ներգրավվում են ռուսական կողմից՝ միջազգայնագետ պրոֆ. Ա. Սաբանինը, իսկ թուրքականից՝ Ռիզա Նուր բեյը²¹⁰:

Քաղաքական հանձնաժողովի նիստը փակվում է ժամը 20-ին: Երկու ժամ անց՝ ժամը 22⁰⁰-ին, բացվում է կոնֆերանսի լիազումար նիստը՝ նախագահությամբ Յու. Քեմալի: Պատվիրակությունները ծանոթանում են քաղաքական հանձնաժողովի աշխատանքներին, հավանություն են տալիս դրանց և ամբողջությամբ ընդունում պայմանագրի տեքստը:

Այնուհետև տեղի է ունենում լիազորությունների փոխանակում, և պատվիրակության անդամները սահմանված կարգով ձեռնամուխ են լինում պայմանագրի, հավելվածների և քարտեզների ստորագրմանը:

Ստորագրման արարողությունների ավարտից հետո Գ. Չիչերինը և Յու. Քեմալը բեյը շնորհավորանքի ու շնորհակալության խոսքեր են փոխանակում: Նիստը ավարտվել է ժամը 23⁰⁰-ին²¹¹: Համենայն դեպս այդպես է նշված կոնֆերանսի մարտի 16-ի լիազումար նիստի ֆրանսերեն լեզվով արձանագրության տեքստում (տե՛ս ՌԱՔԱ, ֆ. 04, ց. 33, թղթ. 232, գ. 52998, թ. 85), որը ռուսերեն թարգմանությամբ զետեղված է պրոֆ. Յու. Բարսեղովի կազմած ժողովածուում²¹²:

* * *

Վերջին տարիներին գաղտնագերծված այլ արխիվային

²⁰⁹ Նույն տեղում, էջ 455:

²¹⁰ Նույն տեղում, էջ 456–458:

²¹¹ Նույն տեղում, էջ 458:

²¹² Նույն տեղում:

վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, ինչպես որ նշված է պայմանագրում և այլ ժողովածուներում, այլ իրականում երկու օր ուշ՝ մարտի 18-ին: Ինչո՞վ բացատրել միջազգային դիվանագիտության մեջ հազվադեպ պատահող նման կեղծիքը:

Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրման ամսաթվի փոփոխությունը ուղղակի կապ ունի այդ նույն օրերին Լոնդոնում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրված առևտրական համաձայնագրի հետ:

Հայտնի է, որ ռուս-անգլիական տևական (տասնամյա) բանակցություններից հետո վերջապես 1921 թ. մարտի 16-ին Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լ. Կրասինի և Մեծ Բրիտանիայի առևտրի նախարար Ռ. Ջոռնի միջև ստորագրվեց առևտրական համաձայնագիր, որն ուներ նաև քաղաքական ենթատեքստ:

Բանն այն է, որ կողմերը պայմանավորվում էին ձեռնպահ մնալ միմյանց հանդեպ թշնամական գործողություններից: Ռուսաստանը պարտավորվում էր հակաբրիտանական որևէ քարոզչություն չվարել Յնդկաստանում, Աֆղանստանում, Իրանում և Մերձավոր Արևելքում: Նույն կերպ Մեծ Բրիտանիան պարտավորվում էր հակառուսական քարոզչություն չտանել նախկին Ռուսական կայսրության երկրներում²¹³: Քաղաքական երկկողմանի պարտավորություն ներկայացնող այդ պահանջը ներառվեց ռուս-անգլիական առևտրական համաձայնագրի պրեամբուլայում²¹⁴: Այդ պայմանի ընդունումը նշանակում էր, որ Մեծ Բրիտանիան չէր կարող որևէ ձևով միջամտել կամ օգնություն ցույց տալ Կովկասի վտարանդի կառավարություններին: Համաձայնագրի կնքումը միաժամանակ նշանակում էր, որ Անգլիան դե ֆակտո (փաստացի) ճանաչում է ՌՍՖՍՀ-ին:

Սակայն բոլշևիկների հետ համաձայնագրի կնքման հարցում լիբերալ վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի դեմ հանդես եկան պահպանողական նախարարներ Ու. Չերչիլը և Դ. Քերզոնը: Վերջիններս Ռուսաստանի հետ համաձայնագիր կնքելու համար դնում էին մի քանի նախապայման: Դրանցից մեկն էլ համարում էին այն, որ Ռուսաստանը վերանայի իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ

²¹³ "Известия", Москва, 22 марта 1921 г.

²¹⁴ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 608.

և վերջինիս օգտին Թուրքիայից տարածքային որոշ զիջումներ պահանջի:

Եվ որպեսզի անգլիացիներին մոլորության մեջ գցեն, իրականում Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է մարտի 18-ին, բայց փաստաթղթի վրա նշված է մարտի 16-ը: Տակտիկական այդ հնարքի նպատակն այն է, որ անգլիական կառավարությանը ցույց տան, թե հայերի համար ոչ նպաստավոր խորհրդա-թուրքական պայմանագիրը ստորագրվել է անգլո-խորհրդային համաձայնագրից առաջ, և որ, իբր, ռուսները տեղյակ չեն եղել այդ համաձայնագրի բովանդակությանը: Պարզվում է, որ ռուս-թուրքական պայմանագրի ստորագրմանը համառել են նաև թուրքերը:

Վ. Ի. Լենինին հասցեագրված Գ. Չիչերինի՝ մարտի 17-ի նամակից տեղեկանում ենք, որ դեռևս ստորագրված չէ պայմանագիրը: Չիչերինը հայտնում է, որ երկար բանավեճից հետո թուրքերը համաձայն են ստորագրել պայմանագիրը հետևյալ պայմանով. որ մենք պետք է գրավոր խոստում տանք, որ մի քանի տարի շարունակ տարեկան 10 մլն ռուբլի տանք իբրև երկրի տնտեսության վերականգնման համար, որպեսզի Անգլիան այն չդիտի իբրև թշնամական ակտ՝ իր դեմ ուղղված:

Ըստ Չիչերինի՝ «Ամեն ինչ պատրաստ է ստորագրման համար: Պայմանագիրը կստորագրենք վաղը (18-ի) երեկոյան: Սակայն մինչ ստորագրելը նրանք պետք է ինձանից ստանան գրավոր թուղթ՝ տարեկան 10 մլն հատկացնելու վերաբերյալ: Ես կողմնակից եմ նման թուղթ տալուն: Այս գումարը երաշխիք է, որ Բաթումը կվերադարձվի մեզ: Ինձ հաբկավոր է այսօր՝ մինչև երեկոյան ժամը 6-ը, ստանամ պատասխանը, որպեսզի հասցնեմ թուղթ գրել, և չուշացնենք ստորագրումը: Պայմանագիրը կթվագրվի 16-ի ամսաթվով, երբ մենք դեռ չգիտեինք Անգլիայի հետ Լ. Կրասինի ստորագրած պայմանագրի մասին»²¹⁵: Մարտի 18-ին ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղբյուրոն լսում է Գ. Չիչերինի նամակի մասին հարցը և որոշում համաձայնվել նրա կարծիքին²¹⁶:

Գ. Չիչերինը Լոնդոն՝ Լ. Կրասինին հասցեագրած գաղտնի հեռագրում տալիս էր հետևյալ հրահանգը, որ. «Եթե անգլիացի-

²¹⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 465–466, т. 2, ч. 2, с. 428.

²¹⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 467.

ները դժգոհություն հայտնեն մոսկովյան պայմանագրի վերաբերյալ, ապա դուք բացատրություն կտաք, որ պայմանագիրը ստորագրվել է համաձայնագրի ստորագրման օրը, և որ, իբր Մոսկվան չէր սպասում, թե անգլո-խորհրդային բանակցությունները այդքան շուտ կավարտվեն, և որ Մոսկվայի պայմանագրի գլխավոր բովանդակությունը տարածքային սահմանագծումն է, ինչը կապ չունի մեր և Անգլիայի համաձայնագրի հետ: Անգլիան չի կարող մեզանից պահանջել, որ մենք հետ վերցնենք Կարսը և Արդահանը Թուրքիային զիջելու պահանջը, հակառակ դեպքում պատերազմ սկսենք Թուրքիայի դեմ»²¹⁷: Հայտնի է, որ Լոնդոնի (1921թ. փետրվար-մարտ) կոնֆերանսում Անգլիայի արտոգործնախարար լորդ Դ. Քերզոնը Անգորայի կառավարության պատվիրակ Բեքիր Սամի բեյին փետրվարի 26-ին առաջարկել էր, որ Թուրքիան համաձայնվի Հայաստանին հանձնել հայկական մի քանի տարածք, մասնավորապես Կարսի և Արդահանի մերձակա մի քանի շրջան²¹⁸: Լորդ Քերզոնի այդ պահանջը կարծես առարկության չէր հանդիպել Բեքիր Սամիի կողմից:

Իր հերթին այդ նույն օրերին ընթացող ռուս-անգլիական լոնդոնյան բանակցությունների ժամանակ անգլիական կողմը ռուսներին առաջարկել էր թուրքերից պահանջել Կարսը և Արդահանը Հայաստանին հանձնելու նպատակով: Բայց քանի որ ՌՍՖՍՀ կառավարությունը սկզբունքորեն ընդունել էր թուրքական «Ազգային ուխտը» և չէր կարող թուրքերին տարածքային պահանջ ներկայացնել, ռուսի մնում էր դիվանագիտական աճպարարության միջոցով խուսափել նման պարտավորությունից:

Որ ռուս-թուրքական Մոսկվայի պայմանագիրը մինչև մարտի 18-ը ստորագրված չի եղել, երևում է նաև կոնֆերանսին չմասնակցած Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանի՝ նույն օրը Միք. Աթաբեկյանին հասցեագրված նամակից: Այդ նամակում նա ոչ միայն պայմանագրի ստորագրման մասին որևէ հիշեցում չի անում, այլև առանձնապես լավատեսություն չի հայտնում, թե այն առաջիկայում կստորագրվի²¹⁹:

Ինչպես տեսնում ենք, Մոսկվայի պայմանագրի ստորագրման հետաձգման պատճառը երկուսն էին. մեկը ռուսներից օգնություն

²¹⁷ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 428.

²¹⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 1, с. 644.

²¹⁹ ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 68, ք. 26:

ստանալու վերաբերյալ գրավոր համաձայնություն ստանալն էր, իսկ մյուսը անգլիացիներին մոլորության մեջ գցելու նպատակով մարտի 18-ին ստորագրված պայմանագիրը թվագրել մարտի 16՝ ցույց տալու համար, թե իբր այն ստորագրվել է Լոնդոնի անգլո-ռուսական համաձայնագրի հետ գրեթե միաժամանակ, և Մոսկվան իբր տեղյակ չի եղել այդ համաձայնագրի բովանդակությանը, որպեսզի Կարսը և Արդահանը Հայաստանի օգտին վերադարձնելու պահանջ ներկայացներ:

Այստեղից էլ դժվար չէ հետևեցնել, որ Մոսկվան և Անգորան անգամ պայմանագրի ստորագրման ամսաթիվն են կեղծել, որպեսզի արտաքին հնարավոր ճնշմամբ թույլ չտրվի Հայաստանի տարածքային-սահմանային խնդրի հայանպաստ որևէ լուծում:

Մոսկվայի պայմանագրի՝ մարտի 18-ին ստորագրման փաստի մասին անուղղակի ձևով վկայում է նաև այն իրողությունը, որ պայմանագրի ստորագրումից հետո՝ հաջորդ օրը՝ մարտի 19-ին, թուրքական զորքը հեռացավ Բաթումից, և նրա փոխարեն քաղաք մտան խորհրդային զորքերը²²⁰:

Հայ պատմագրության մեջ առաջին անգամ պատմաբան Ռ. Ղազանջյանը պարզել է, որ Մոսկվայի խորհրդա-թուրքական պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, այլ երկու օր ուշ՝ մարտի 18-ին, ու հետին թվով նշվել մարտի 16-ը²²¹: Միջազգայնագետ Յու. Բարսեղովը ևս հաստատում է, որ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, այլ որոշ քաղաքական-տակտիկական նկատառումներով՝ մարտի 18-ից ուշ²²²: Ի դեպ, Մոսկվայի պայմանագրի փաստացի ստորագրման օրը՝ մարտի 18-ին, խորհրդային պետությունը վերջնական հաշտություն կնքեց նաև Լեհաստանի հետ²²³:

Սակայն ինչ էլ որ եղած լինի, դրանից պայմանագրի էությունը չի փոխվել:

²²⁰ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 657.

²²¹ Казанджян Р., К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г. («Լրաբեր» հաս. գիտ. ՀՀ ԳԱԱ, Ե., 1999, թիվ 1, էջ 175-179):

²²² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 427.

²²³ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 618-642.

3. ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պայմանագիրը բաղկացած է պրեամբուլայից, 16 հոդվածներից և մեկ հավելվածից՝ երեք 1 (A), 1 (B), 1 (C) մասերով: Թե՛ Հայաստանի Ազգային արխիվում և թե՛ փաստաթղթերի ժողովածուներում ու մենագրական ուսումնասիրություններում գիտական շրջանառության մեջ է եղել պայմանագրի ռուսերեն տարբերակը²²⁴: Հարկ ենք համարում կանգ առնել պայմանագրի այն հոդվածներին, որոնք առնչվում են Հայաստանին և տարածաշրջանին:

Պրեամբուլայում բարձրակոչ կերպով հայտարարվում էր, որ ՌՍՖՍՀ և ԹԱՄԺ կառավարությունները, «Բաժանելով ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքները, նշելով իրենց միջև գոյություն ունեցող համերաշխությունը իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում, ինչպես նաև այն իրողությունը, որ երկու ժողովուրդներից մեկի համար ստեղծված ամեն տեսակ դժվարություն վատթարացնում է մյուսի դրությունը և ամբողջովին խանդավառված միմյանց միջև մշտական սրտագին փոխհարաբերությունների և երկու կողմերի փոխադարձ շահերի վրա հիմնված անխազելի անկեղծ բարեկամություն հաստատելու ցանկությամբ, որոշեցին կնքել բարեկամության և եղբայրության պայմանագիր»²²⁵:

Հարկ է նշել, որ կողմերի միջև անկեղծ բարեկամության և եղբայրության, փոխադարձ շահերի ու վստահության վրա հիմնված պայմանագիր կնքելու վերաբերյալ ներածական այդ ձևակերպման նախածեռնությունը, ինչպես արդեն ասվել է, գալիս էր թուրքական կողմից, որովհետև Թուրքիան ավելի մեծ չափով Ռուսաստանի համակողմանի օգնության կարիքն ուներ, քան հակառակը: Եվ բացի այդ, փորձը ցույց է տալիս, որ թուրքական դիվանագիտությունը բանակցությունների, դիվանագիտական նոտաների կամ պայմանագրերի ձևակերպումների ժամանակ ցուցաբերում էր արտաքուստ նրբանկատություն ու բարեհամբուրություն,

²²⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 32–40, ֆ. 114, ց. 2, գ. 132, ք. 9–17, ДВП СССР, т. 3, М., 1959, с. 597–604, «Հայաստանը ...», էջ 499–507, Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, էջ 377–383:

²²⁵ «Հայաստանը ...», էջ 499:

իսկ խորքում (ներքուստ) թաքնված էր կեղծավորությունն ու նենգամտությունը: Այդ բանում կարելի է համոզվել հենց սույն՝ Մոսկվայի պայմանագրի օրինակով, որովհետև այն բարեկամության և եղբայրության նպատակ չէր հետապնդում, այլ կառուցված էր կողմերի կոնկրետ շահերի ու հաշվարկների վրա: Իրականում խորհրդա-քեմալական բարեկամությունը կեղծ էր ու շինծու: Դա ակններև դարձավ պայմանագրի ստորագրումից մեկ-երկու տարի անց:

Պրեամբուլայում ոչ մի խոսք կամ ակնարկ իսկ չկա անդրկովկասյան հանրապետությունների վերաբերյալ, թեև պայմանագրի հոդվածների մեծ մասում շոշափվում էին այդ հանրապետությունների տարածքային-սահմանային, տնտեսական ու իրավաքաղաքական շահերը:

Պայմանագրի գլխավոր հոդվածներից է առաջինը, որն իր մեջ բովանդակում էր երեք բաղադրիչ-հատված: Հոդվածի առաջին հատվածով պայմանավորվող կողմերը համաձայնվում են չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային ակտ, որն ուղղված է կողմերից մեկի դեմ և չի ճանաչվել վերջինիս կողմից: Հոդվածում հատուկ շեշտվում էր, որ ՌՍՖՍՀ կառավարությունը համաձայնվում է չճանաչել Թուրքիային վերաբերող և ԹԱՄԺ-ի կառավարության կողմից չճանաչված որևէ պայմանագիր կամ միջազգային ակտ²²⁶: Եթե ռուս-թուրքական 1920 թ. օգոստոսի 24-ի պայմանագրի նախագծի 1-ին հոդվածը համեմատում ենք սույն պայմանագրի 1-ին հոդվածին, ապա ակներև է դառնում, որ վերջինս առաջինի ընդամենը վերախմբագրված տարբերակն է²²⁷: Դժվար չէ նաև նկատել, որ պայմանագրի այդ հոդվածը առաջին հերթին ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ:

Այսպիսով, Մոսկվայի պայմանագրով խորհրդային Ռուսաստանի կառավարությունը առաջիններից մեկը պաշտոնապես չճանաչված էր համարում Սևրի դաշնագիրը և՛ Հայաստանին վերաբերող մասով, և՛ ընդհանրապես: Սևրի դաշնագիրը ընդունելի չէր Ռուսաստանի համար ոչ միայն և ոչ այնքան Հայկական հարցի, որքան նեղուցների և Սև ծովի կարգավիճակի ու ռեժիմի տեսակետից:

²²⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 11, «Հայաստանը ...», էջ 500:

²²⁷ Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923 թթ.), էջ 267:

Սույն հոդվածի 2-րդ պարբերությունում ամրագրվում էր, որ «Թուրքիա» հասկացության տակ ճանաչվում էին Կ. Պոլսի օսմանյան խորհրդարանի կողմից մշակված և հռչակված 1920 (1336) թվականի հունվարի՝ 28-ի թուրքական «Ազգային ուխտի» մեջ մտնող տարածքները²²⁸:

Ինչպես արդեն ասվել է, խորհրդածողովի նախօրյակին արդեն սկզբունքորեն որոշվել էր թուրք-անդրկովկասյան սահմանագիծը թուրքական պատվիրակության՝ Վ. Ի. Լենինի, Ի. Վ. Ստալինի հետ ունեցած հանդիպումների ժամանակ: Այդ է հաստատում Գ. Չիչերինի՝ Մոսկվայում ՉՍԽՅ ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին 1921 թ. ապրիլի 21-ին հասցեագրված նամակը: Նա հայտնում էր, որ հայ-թուրքական սահմանային հարցերը լուծվել են ոչ թե բանակցությունների ընթացքում, այլ դրանից դուրս, կուսակցության բարձրագույն ղեկավար մարմիններում, թուրքերի հետ ունեցած հանդիպումների, այսինքն՝ անդրկուլիսյան բանակցությունների ժամանակ²²⁹: Կնշանակի՝ տարածքային-սահմանային խնդրում նախապես կայացվել է սկզբունքային համաձայնություն, որով խորհրդային կողմը ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը»: Այստեղից էլ հետևում է, թե ինչպիսին պետք է լիներ թուրք-անդրկովկասյան սահմանը, իհարկե, թույլատրելի համարելով սահմանային որոշ փոխատեղություններ ու խմբագրումներ, որոնց մասին հետագայում խոսք կլինի:

Պայմանագրի 1-ին հոդվածի 3-րդ հատվածը ընդհանուր կերպով տալիս էր Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը, որի մանրամասն նկարագրությունը տրված է պայմանագրին կից 1 (A) և 1 (B) հավելվածներում: Տարօրինակ է, որ չկա որևէ ակնարկ սահմանի վրաց-թուրքական կամ հայ-թուրքական ձևով անվանելու վերաբերյալ. չէ՞ որ այդ ժամանակ Չայաստանը և Վրաստանը, թեկուզ խորհրդային, բայց ճանաչվում էին ինքնիշխան պետություններ, և ներկայացվող սահմանը ուղղակի վերաբերում էր մի կողմից Թուրքիային, իսկ մյուս կողմից՝ Չայաստանին ու Վրաստանին: Սակայն հոդվածի այդ մասի տրամաբանությունից կարելի է հասկանալ, որ դրանով մեծ հաշվով գծվում էր ռուս-թուրքական սահմանը, թեև հոդվածում «Ռուսաստան» անունը չի նշվում:

²²⁸ ՉՍՍ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 11, «Չայաստանը ...», էջ 500:

²²⁹ Саркисян Е., За кулисами, как родился Московский договор 1921 г. «Литературная Армения», 1991, №1, с. 82.

Մեջ ենք բերում հողվածի թուրք-անդրկովկասյան սահմանագծին վերաբերող հատվածն ամբողջությամբ. «Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը որոշվում է այն գծով, որն, սկսվելով Սև ծովի ափին գտնվող Սարպ գյուղից, անցնում է Խեղիս նթա սարի վրայով, հետո Շավչեթ և Կաննի դաղ սարերի ջրբաժան գծով, այնուհետև ձգվում Արդահանի և Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանագծով՝ Արփաչայ և Արաքս գետերի հնահունով՝ մինչև Ներքին Ղարասուի գետաբերանը»²³⁰:

Պայմանագրի հավելված 1 (A)-ով տրված է Հայաստան-Թուրքիա սահմանագծի հանգամանալի նկարագրությունը: Հյուսիսից՝ հայ-թուրքական սահմանագծի սկիզբը համարվում է Ուչ Թափալար (Եռակատար) (9783) լեռը, որովհետև դրանով է անցնում Վրաստանի, Հայաստանի և Թուրքիայի (Արդահանի նախկին գավառ) միջև սահմանային բաժանարար գիծը: Մոսկվայի պայմանագրի հավելվածներից մեկի տարբերակում, նկարագրելով սահմանագիծը, նշվում է, որ Ուչ Թափալար (9783) լեռով ավարտվում է Վրաստանի հետ սահմանը և սկսվում է Հայաստանինը²³¹:

Այդպիսով, ըստ Մոսկվայի պայմանագրի հավելված 1 (A)-ի, հայ-թուրքական սահմանը սկիզբ էր առնում Ուչ Թափալար լեռից, անցնում Թայա-Կալա (9716) լեռով, 9065 ոտնաչափ գագաթով, ուր հեռանում է Արդահանի օկրուգի նախկին սահմանից և անցնում Մեծ Աղբաբա (9973)–8828-7602 ոտնաչափ լեռներով, այնուհետև անցնում Իբիշ գյուղից դեպի արևելք ընկած տեղանքով, հասնում 7518 բարձունքին և հետո Ղըզըլ- դաշ լեռանը (7439), Նոր-Ղըզըլ դաշ գյուղին և այդտեղից հետևելով այդ գյուղի միջով հոսող գետի ընթացքին՝ մինչև նրա թեքվելը Ղարամահմեդ գյուղից արևմուտք, դուրս է գալիս Ջամբուշու կամ Ջամուշլու-չայ գետը (ընկած Դելավեր, Մեծ Դնլու և Թիխնիս գյուղերից դեպի արևելք): Այնուհետև սահմանագիծը շարունակվում է Վարդանլու և Բաշ-Շուրագյալ գյուղերով՝ հետևելով վերոնշյալ Ջամուշլու-չայ գետի ընթացքին՝ Ղալալի կամ Քալալի գյուղից դեպի հյուսիս հասնում է Արփաչայ գե-

²³⁰ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 11, «Հայաստանը ...», էջ 500 (Սահմանագծի մանրամասն նկարագրությունը և դրան վերաբերող հարցերը պարզաբանված են 1 (A) և 1 (B) հավելվածներում: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 164–165, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 15–17):

²³¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 164, (Վրաց-թուրքական սահմանագծի նկարագրությունը հարկ չենք համարել տալ):

տին, այնտեղից էլ՝ Արփաչայի հնահունով հասնում Արաքս գետին, որտեղից էլ Արաքսի հնահունով մինչև այն տեղը, ուր նրա մեջ թափվում է Ներքին Ղարասուն²³²:

Սահմանագիծը որոշված է ըստ ռուսական Գլխավոր շտաբի քարտեզի՝ մասշտաբը 1/210000, 1 դույմը 5 վերստ հարաբերությամբ:

Հարկ ենք համարում մեջ բերել հայ-թուրքական սահմանագծի հավելված 1-ին մեկ այլ տարբերակ, որը պայմանագրի թուրքերեն օրինակից վերցրել է իրավագետ Շ. Թորիկյանը: Ըստ այդ տարբերակի՝ սահմանագծի հայ-թուրքական հատվածը անցնում է Մեծ Աղբաբա լեռով, Իբիշ գյուղից արևելք, Ղըզըլ-դաշ լեռով և համանուն գյուղով, այնուհետև Ղարամահմեդից սահմանն անցնում է դեպի արևմուտք՝ հասնելով Ջամուշլու-չայ գետը, Դելավեր, Մեծ Ղմլու և Թիխնիս գյուղերից արևելք, հետո Վարդանլու և Բաշ-Շուրագյալ գյուղերի վրայով, Քալալիից հյուսիս հասնում է Արփաչայ գետին և վերջինիս հնահունով մինչև Ներքին Ղարասուն²³³:

Պայմանագրի ռուսերեն և թուրքերեն հավելվածների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև նույնպես, ըստ էության, տարբերություն չկա:

Պայմանագրի 1-ին հոդվածի հավելված 1 (B)-ում խոսվում էր հայ-թուրքական սահմանի երկարությամբ պաշտպանական ամրությունները ըստ գոտիների (Արփաչայի և Արաքսի) հետ տանելու Թուրքիայի կառավարության պարտավորության մասին:

Հաշվի առնելով, որ Արփաչայի և Արաքսի հնահուները հանդիսանում են սահմանագիծ Հայաստանի և Թուրքիայի միջև, ուստի ԹԱՄԺ-ի կառավարությունը պարտավորվում է պաշտպանական ամրությունների (բլոկհաուզների) գիծը հետ տանել այնպես, որպեսզի այդ գիծը Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղուց, Արփաչայ գետի հատվածում, գտնվի 8 վերստ հեռավորության վրա, իսկ Արաքսի հատվածում վերոհիշյալ երկաթուղուց 4 վերստ հեռավորության վրա²³⁴:

Այնուհետև 1 (B) հավելվածի 1-ին՝ Արփաչայի գոտի և 2-րդ՝ Արաքսի գոտի պարագրաֆներում նշված են այն գյուղերն ու բնա-

²³² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 164, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 15–16, «Հայաստանը...», էջ 504–505:

²³³ Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 275–276:

²³⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 16–17, «Հայաստանը...», էջ 506:

կան սահմանները, որոնցից արևելք Թուրքիան պարտավորվում է պաշտպանական ամրություններ չկառուցել և դրանցում չպահել կանոնավոր զորքեր: Սակայն վերոնշյալ գոտիներում Թուրքիային տրվում էր զորք ունենալու իրավունք, որոնք անհրաժեշտ կլինեն կարգի պահպանության, անվտանգության և վարչական կարիքների համար²³⁵:

Ինչպես արդեն գիտենք, սահմանների անվտանգության այդ խնդիրների շուրջ կոնֆերանսում եղել էին լայն քննարկումներ և կայացվել համապատասխան որոշումներ:

Եվ վերջապես հավելված 1 (C) վերաբերում էր Նախիջևանի տարածքին և սահմանագծին:

Հավելվածում ներկայացված է հետևյալ սահմանագիծը՝ Արարատ կայարանը, Սարայ-Բուլաղ լեռը (8071), Քյոնուրլու-դաղ (6839), (6930), 3080, Սայաթ-դաղ (7868) լեռները, Ղուրդ-ղուլաղ կամ (Քյուրդ-գուլաղ) գյուղը, Գամեսուր կամ Կամասար լեռը (8166), 8022 բարձունքը, Կուքի-դաղ (10282) լեռը և այնուհետև Նախիջևանի գավառի արևելյան նախկին վարչական սահմանագիծը²³⁶:

Նախիջևանի երկրամասի քաղաքական ճակատագրի խնդիրը տրված է պայմանագրի 3-րդ հոդվածում:

Հարկ է նշել, որ պայմանագրի հավելվածի բոլոր երեք մասերում դրված են երկու կողմի պատվիրակությունների բոլոր հինգ անդամների՝ Գ. Զիչերինի, Ջ. Կորքմասուվի, Յու. Քենալի, Ռ. Նուրի և Ա. Ֆուադի ստորագրությունները:

* * *

Այժմ տեսնենք, թե ինչ ընդհանրություն կար և որքանով էր հաշվի առնվել Հայաստանի պատվիրակության ներկայացրած տարբերակները Մոսկվայի կոնֆերանսում հայ-թուրքական սահմանի վերաբերյալ:

Ինչպես արդեն ասվել է, փետրվարի երկրորդ կեսին Մոսկվա հասնելուն պես, հայկական պատվիրակությունը Ռուսաստանի արտգործոժողկոմատ է ներկայացնում փաստաթղթերի, քարտեզների, փաստագրական այլ նյութերի մեծ փաթեթ՝ «Հայկական պատվիրակության 1921 թ. փետրվարի 2-ի տեղեկատու զեկուցումը ռուս-թուրքական կոնֆերանսի համար» վերտառությամբ:

²³⁵ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 17, «Հայաստանը ...», էջ 506–507:

²³⁶ Նույն տեղում, էջ 507:

Սակայն առաջ անցնելով փաստենք, որ հայկական պատվիրակության զեկուցագիրը ռուս-թուրքական կոնֆերանսին չներկայացվեց: Այդ փաստաթղթերը շուրջ երկու ամիս գտնվել են ՌՍՖՍՀ արտգործո՞ղկոմատում՝ Լ. Կարախանի մոտ և ապրիլի կեսերին վերադարձվել Ալ. Բեկզադյանին²³⁷:

Հայաստանի պատվիրակության տեղեկատվական զեկուցումը ուղղված էր Վ. Լենինին, Ի. Ստալինին, Գ. Չիչերինին՝ Մոսկվայի բանակցությունների կապակցությամբ:

Փաստաթղթում ներկայացվում էր ՀՀ տարածքն ընդգրկող գավառներում բնակչության կազմը՝ ըստ Կովկասյան տարեցույցի 1917 թ. տվյալների. ամբողջ բնակչությունը 1.926403 մարդ, որից 1.052497 կամ 54, 6 տոկոսը հայ, 514400 կամ 26,7 թաթար, 78696 կամ 4,1 տոկոսը քուրդ, 57761 կամ 2,9 տոկոսը եզդի և 223049 կամ 11, 5 տոկոսը ռուս, հույն, թուրք և այլն²³⁸:

Ձեկուցագրում հիմնավորվում էր Հայաստանի Հանրապետության տարածքը խորհրդային Հայաստանին միավորելու պատմա-աշխարհագրական, էթնիկական, տնտեսական և քաղաքական անհրաժեշտությունը: Ձեկուցագրին կից եղել են նաև քարտեզներ, որոնցում նշված են հայ-թուրքական սահմանի չորս հնարավոր տարբերակները՝ սկսած առավելագույնը Հայաստանի մեջ ներառելով Սուրմալուն և Կարսի մարզի հիմնական մասը և նվազագույնը՝ 4-րդ տարբերակը, մինչև Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված սահմանները, այն է՝ Արաքս և Արփաչայ գծով մինչև Մեծ Աղբաբա ու Ղըզըլ-դաշ լեռները, Մեծ Ղմլու և Թիխնիս գյուղերը²³⁹:

Մոսկվայի կոնֆերանսում ներկայացվելիք հայ-թուրքական սահմանի հնարավոր տարբերակները մշակելիս հայկական կողմը ներառել էր Երևանի դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ կետը, որով ՌՍՖՍՀ-ը ՀՍՄՀ անվիճելի տարածք էր համարում Երևանի նահանգի հետ միասին նաև Կարսի մարզի մի մասը, մասնավորապես այն հատվածը, որը պետք է ապահովեր երկաթուղու Ջաջուռ-Արաքս կայարանների անխափան աշխատանքը²⁴⁰:

²³⁷ Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 120:

²³⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 4:

²³⁹ Նույն տեղում, թ. 14–15:

²⁴⁰ «Հայաստանի Հանրապետությունը (1918-1920թթ.)», էջ 383–384:

ՀՍԽՅ պատվիրակության ներկայացրած 1-ին տարբերակով նախատեսվում էր հայ-թուրքական սահմանագիծը անցկացնել Արփաչայ և Արաքս գետերից դեպի արևմուտք ընկած Ալաջայի բարձունքներով՝ հասցնելով ընդհուպ մինչև Կարսի ամրոցի արտաքին ամրությունները: Նման տարբերակ առաջարկելով՝ հայկական կողմը գտնում էր, որ Հայաստանի սահմանագծի մեջ պետք է մտնե՞ր Արևմտյան Շիրակի (Շորագյալի) դաշտը, որը բաղկացած էր զուտ հայկական գյուղերից և պատմամշակութային հուշարձաններից: Այդ տարածքի անցումը Հայաստանին հիմնավորվում էր նաև նրանով, որ դրանով Ջաջուռ-Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղագիծը կպաշտպանվե՞ր քուրդ-թաթարական հարձակումներից: Եվ վերջապես նման սահմանագծի անցկացումը հայկական կողմի պատկերացմամբ, էապես կթուլացներ Կարսի մարտական (ռազմավարական) նշանակությունը²⁴¹:

Ըստ 1-ին տարբերակի՝ սահմանագիծը սկսվելու էր Մահալիստ (Մագլիստ) լեռների Օթաբզան գագաթից, այնուհետև՝ Խիչայիրի-Քյոսա դաղի, Թոփուզի-Էրդաղի-Ղալաչի-Քոչաբորկի-Ուչ Թափալարի-Կաբախի-Թափայի-Ալաջայի-Չիարեթի-Յըզլուջի և Ղըզըլ-Մահարայի լեռնագագաթներով հասնում Արաքս գետը: Կտրելով Արաքս գետը՝ Սուրմալուի գավառով հասնում մինչև Թոնդուրեկի (Թոնդրակ) բարձունքները, որտեղից էլ սահմանագիծը ձգվելու էր Ագրի-դաղի (Հայկական պար) լեռնաշղթայով (ռուս-թուրք պարսկական նախկին սահմանով), Մեծ ու Փոքր Մասիսներով մինչև Արաքս գետի ափը՝ Ռեհանլու գյուղի մոտ²⁴²:

Ինչպես տեսնում ենք, այս տարբերակով Հայաստանին էր վերադարձվում Սուրմալուի գավառը և Կարսի մարզի մի հատվածը: Ընդ որում, Հայկական պար լեռնաշղթան ունենալու էր ռազմավարական կարևոր նշանակություն և հուսալիորեն պաշտպանելու էր Հայաստանի հարավային սահմանը:

2-րդ տարբերակով հայ-թուրքական սահմանագիծը անցնում էր Վարթանիս-Ուրթա գյուղերով, այնուհետև Չըլդըր լճի արևմըտյան ափով-Գյուլ-Չիարեթ-Իգնազար գյուղերով, Թուրքայ գյուղի հյուսիսային մասով դեպի Քոչավարկ գյուղը և այնուհետև 1-ին տարբերակի սահմանագծով²⁴³:

²⁴¹ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 65, թ. 19:

²⁴² Նույն տեղում:

²⁴³ Նույն տեղում, թ. 20:

2-րդ տարբերակը նախատեսում էր Արդահանի օկրուգի որոշ հատվածի միացումը Հայաստանին:

3-րդ տարբերակով՝ հայ-թուրքական սահմանագիծը սկսվում էր Քափանակ գյուղից Խոզապին լճով Ախալքալաքի գավառի սահմանով մինչև Ուչ Թափալար սարը (վերջինս նախկինում հանդիսացել է Թիֆլիսի նահանգի, Արդահանի և Կարսի օկրուգների հատման վայրը), այնուհետև Մեծ և Փոքր Աղբաբայի լեռնագագաթներով-Մեծ Չայիր-Գյուլ-Ալիմաթ-Կարաիլ-Ղըզըլ Թափա լեռնագագաթներով Ալաջա լեռը և այնուհետև՝ 1-ին տարբերակի սահմանագիծը²⁴⁴:

4-րդ տարբերակը հիմնականում համապատասխանում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի այն սահմանագծին, որով Հայաստանին էր զիջվում Ալեքսանդրապոլից և Արփաչայ գետից արևմուտք ընկած հատվածը մինչև Մեծ Աղբաբա-Ղըզըլ-դաշ լեռները-Մեծ Ղմլու և Թիխնիս գյուղերը²⁴⁵:

Ինչպես նկատում ենք, երեք տարբերակներում միանշանակ Հայաստանի տարածքի մեջ է ներառված Սուրմալուի գավառը: Դրա համար հիմք է ծառայել այն, որ այդ գավառը երբեք չի եղել օսմանյան Թուրքիայի կազմում և առավել ևս այն նշված չէ թուրքական «Ազգային ուխտում»: Իսկ այն տարբերակներում, որտեղ Հայաստանի կազմում է ներառված Արևմտյան Շիրակը, ապա այստեղ հաշվի է առնված դաշտի էթնիկ ու պատմամշակութային առումով զուտ հայկական լինելու փաստը: Սակայն, ինչպես արդեն ասվել է, Հայաստանի պատվիրակության ներկայացրած տարբերակները ոչ մի քննության էլ չենթարկվեցին: Հայկական պատվիրակության քարտուղար Վ. Սուրադյանը Վ. Ի. Լենինին էր ներկայացրել հայկական առաջարկների փաթեթը, որին վերջինիս ծանոթանալու մասին տեղեկություններ չունենք:

Այսպիսով, Հայաստանի պատվիրակությանը ոչ միայն չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին, այլև նրա ներկայացրած չորս տարբերակները անգամ ուշադրության չարժանացան:

* * *

Եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով նախագծված հայ-թուրքական սահմանագիծը համեմատում ենք Մոսկվայի պայմա-

²⁴⁴ Նույն տեղում:

²⁴⁵ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 65, թ. 20:

նագրով ու համապատասխան հավելվածով նկարագրված սահմանագծին, ապա կարելի է ասել, որ դրանց միջև էական տարբերություն չկա:

Եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով սահմանագիծը սկսվում էր հարավից և անցում՝ հյուսիս-արևմուտք, ապա Մոսկվայի պայմանագրով, ընդհակառակը, հյուսիսից հարավ, որովհետև նախ տրված է թուրք-վրացական սահմանի նկարագրությունը և հետո՝ հայ-թուրքականը:

Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրում հայ-թուրքական գծված սահմանները իրար համեմատելիս կարելի է նկատել, որ եթե առաջինի դեպքում սահմանը անցել է Թիխնիս, Մեծ Ղմլու և Ղըզըլ-դաշ գյուղերից դեպի արևմուտք, այսինքն՝ հիշյալ բնակավայրերը իրենց շրջակա տարածքներով ներառվել են Չայաստանի կազմի մեջ, ապա Մոսկվայի պայմանագրով, ընդհակառակը, հայ-թուրքական սահմանագիծը անցել է այդ գյուղերից արևելք, այսինքն՝ դրանք թողնվել են Թուրքիայի կազմում: Քարտեզագետ Բ. Չարությունյանի մոտավոր հաշվումներով Մոսկվայի պայմանագրով, Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ Թուրքիային է անցել 250 քառ.կմ տարածք²⁴⁶: Եթե նկատի առնենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Չայաստանին էր անցնում Կարսի մարզի հյուսիսարևելյան շրջանից 600 քառ.կմ տարածք, իսկ Մոսկվայի պայմանագրով շուրջ 250 քառ.կմ հողատարածք խորհրդային կողմի անփութության և անհետևողականության հետևանքով կրկին զիջվում է Թուրքիային. այդ նշանակում է՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ Մոսկվայի պայմանագրով Կարսի մարզից Չայաստանին թողնվում էր ընդամենը 350 քառ. կմ, որն էլ կազմում է ներկայիս Ամասիայի ենթաշրջանը²⁴⁷:

Պայմանագրի 2-րդ հոդվածը վերաբերում էր կոնֆերանսում, թերևս, ամենասուր վեճի առարկա դարձած Բաթումի խնդրին: Այն լուծվեց հիմնականում Վրաստանի օգտին, չնայած թուրքական «Ազգային ուխտով» Բաթումի մարզը մտնում էր թուրքական պահանջների ցանկում: Պայմանագրով Բաթում քաղաքն իր նավա-

²⁴⁶ Չարությունյան Բ., Երկու ճշգրտում (Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Ե., 2001, էջ 78):

²⁴⁷ Այդ մասին քարտեզագրական սահմանագծման պատկերներով տե՛ս Չայաստանի ազգային ատլաս, հ. Բ., Ե., 2008, էջ 210–215:

հանգստով և հարակից տարածքով ճանաչվում էր Վրաստանի մաս պայմանով, ինչպես տեղի բնակչությանը տրվում է լայն ինքնավարություն, իսկ Թուրքիային նավահանգստից օգտվելու և ապրանքների ազատ տրանզիտի իրավունք²⁴⁸:

Վրաց-թուրքական սահմանագիծը Բաթումի հատվածում անցնում էր քաղաքից 10 կմ հարավով՝ սկիզբ առնելով Սարա ծովափնյա գյուղից և շարունակում այն սահմանագծով, որ նկարագրված է պայմանագրի 1-ին հոդվածի հավելված 1 (A)-ում²⁴⁹:

Սահմանագիծը ցույց է տալիս, որ Վրաստանին էր անցնում Բաթումի նախկին մարզի հյուսիսային հատվածը, իսկ հարավային մասը Արդվինի գավառով թողնվում էր Թուրքիային:

Հարց է ծագում. այդ ինչպես պատահեց, որ թուրքերը, այնուամենայնիվ, գնացին «Ազգային ուխտը» խախտող զիջման: Դա պետք է բացատրել երեք հանգամանքով. 1-ին՝ խորհրդային կողմի կտրուկ պահանջով՝ Բաթումի նավահանգիստն Անդրկովկասի համար իբրև առանցքային նշանակություն ունեցող կոմունիկացիոն ուղի: 2-րդ՝ Բաթումն ու շրջակա տարածքն հանձնելով՝ թուրքերը տարածքային կորուստ չէին ունենալու, որովհետև դա փոխհատուցվելու էր Սուրմալուի գավառով, որը չէր մտնում թուրքական «Ազգային ուխտի» պահանջների ցանկում և իր ավելի քան 3 հազար քառ.կմ տարածքով այնքան էր, որքան որ Բաթումի մարզի Վրաստանին անցած հատվածը: Այսինքն՝ ստացվում է, որ Վրաստանի օգտին Թուրքիայի տարածքային կորուստը փոխհատուցվում էր հայկական տարածքների՝ Սուրմալուի հաշվին՝ առասպելական մասիսներով, Կողբով ու իգդիրներով: Եվ վերջապես, 3-րդ. այն հնարավոր զիջումը, որ Թուրքիան կարող էր անել Վրաստանին, այդպիսին երբեք չէր անի Հայաստանին ու հայ ժողովրդին: Դրա պատճառները խորն են ու բազմաշերտ:

Եթե Մոսկվայի պայմանագրի 2-րդ հոդվածը ամբողջապես վերաբերում էր Բաթումի խնդրին, ապա 3-րդ հոդվածը՝ Նախիջևանի մարզի կարգավիճակի և սահմանագծի հարցերի կարգավորմանը:

3-րդ հոդվածը սահմանում էր. «Նախիջևանի մարզը սույն պայմանագրի 1 (C) հավելվածում նշված սահմաններում կկազմի ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալության ներքո պայ-

²⁴⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 11, ֆ. 1022, ց. 8, գ. 281, թ. 1:

²⁴⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 15–16, «Հայաստանը ...», էջ 504–505:

մանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»²⁵⁰: Չնայած Նախիջևանի մարզը 1920 թ. աշնանից օկուպացված էր Թուրքիայի կողմից, սակայն պայմանագրում չի ասված, թե իր ժամանակավոր պաշտպանության տակ գտնվող Նախիջևանի մարզը Թուրքիան հանձնում է Ադրբեջանի հովանավորությանը, այլ երկու կողմերն են հավասար իրավունքներով նման վճիռ կայացրել: Սակայն պարբերության վերջամասում ակներև է թուրքերի կողմից թելադրված իմպերատիվ պահանջը, որ Ադրբեջանը այդ խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության: Երրորդ պետություն ասելով, անշուշտ, նկատի էր առնվում Հայաստանը:

Պայմանագրի 1 (C) հավելվածը տալիս էր Խորհրդային Հայաստանի և Նախիջևանի երկրամասի միջև սահմանային հետևյալ նկարագրությունը. «Արարատ կայարանը—Սարայ—բուլաղ լեռը (8071) — Քյոնուրլու-դաղ (6839), (6930)—3080-Սայաթ-դաղ (7868) — Ղուրդ-ղուլաղ գյուղը— Գամեսուր (Կամասար)—դաղ (8166)—8022 բարձունքը—Կուքի-դաղ (10282) և Նախիջևանի նախկին գավառի արևելյան վարչական սահմանագիծը»²⁵¹:

Այնուհետև նկատի ունենալով, որ նշված սահմանագծով Երևանի նախկին գավառի եռանկյունի մի տարածք հայտնվել է Նախիջևանի սահմանագծի մեջ, ուստի 3-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսվում էր Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակություններից կազմված հանձնաժողովի միջոցով շտկել այդ անճշտությունը: Այն է՝ «Նախիջևանի տարածքում եռանկյունի կազմող գոտու՝ արևելքում Արաքսի հնահունի—Ղաղնա (3829)—Վելի—դաղ (4121)—Բագարզիք (6587), Քյոնուրլու-դաղ (6930) լեռների վրայով անցնող գծի միջև պարփակված տարածքի սահմանագիծը, որն սկսվում է Քյոնուրլու-դաղ (6930) սարից, հետո անցնում է Սարայ-բուլաղ սարի (8071) վրայով դեպի Արարատ կայարանը և վերջանում է Ղարասուի և Արաքսի տրամախաչման տեղում»²⁵²:

Սուսկվայի պայմանագրով Նախիջևանի հանձնումը Ադրբեջանին Հայաստանի համար տարածքային շոշափելի կորուստ

²⁵⁰ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12, «Հայաստանը ...», էջ 501:

²⁵¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 17, «Հայաստանը ...», էջ 507, Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ., էջ 116:

²⁵² ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12, «Հայաստանը...», էջ 501, Նաթալի Շ., Երեք դաշնագրեր, էջ 38:

լինելուց բացի, վնասակար էր նաև ռազմավարական տեսակետից: Դրանով փաստորեն Հայաստանի թիկունքում՝ Արաքսի ձախ ափին, ստեղծվում էր թշնամական մի հենակետ, որը կապող օղակ էր դառնում Թուրքիայի և Ադրբեջանի միջև և պոտենցիալ սպառնալիք ստեղծում Ջանգեզուրի ու Արցախի համար:

Հարկ է փաստել, որ թուրքերի «Ազգային ուխտից» շեղում էր ոչ միայն Սուրմալուն, այլև Նախիջևանի մարզը՝ ի վնաս Հայաստանի, հօգուտ՝ Թուրքիա-Ադրբեջանի: Պայմանագրի 3-րդ հոդվածով թուրքերը, Նախիջևանի հովանավորությունը հանձնելով Ադրբեջանին, 1921 թ. ապրիլին իրենց զորքերը դուրս բերեցին Նախիջևանի մարզից:

Այսպիսով, Մոսկվայի պայմանագրի առաջին երեք հոդվածներով և հավելված 1 (A, B, C)-ով որոշվում էր թուրք-անդրկովկասյան սահմանագիծը, այդ թվում՝ հստակեցվում Բաթումի ու Նախիջևանի կարգավիճակները և սահմանագիծը համապատասխանաբար Վրաստանի ու Թուրքիայի և Հայաստանի ու Նախիջևանի մարզի միջև:

Այդ հոդվածախմբի սկզբունքային ձևակերպումներից էին թուրքական «Ազգային ուխտի» պաշտոնական ճանաչումը Ռուսաստանի կողմից, ինչպես նաև չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային ակտ, եթե պայմանավորվող կողմերից մեկը մյուսին փորձել է ուժով պարտադրել (տե՛ս հոդված 1-ին)²⁵³:

* * *

Մոսկվայի պայմանագրի 4-ից մինչև 14-րդ հոդվածները ուղղակիորեն վերաբերում էին ՌՍՖՍՀ և Թուրքիայի միջպետական փոխհարաբերությունների կարգավորմանը:

4-րդ հոդվածում երկու պայմանավորվող կողմերը հավաստում էին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի, այդ ժողովուրդների ազատության և անկախության իրավունքի ճանաչումը: Սակայն ի հակակշիռ խորհրդային պետության՝ Արևելքի երկրներում հեղափոխության արտահանման ձգտումների՝ հոդվածն ամրագրում էր, որ այդ ժողովուրդներն իրենք են ընտրում իրենց կառավարման ձևը²⁵⁴: Հարկ է նկատել, որ այս հոդվածն ինչ-որ չափով հակասում էր ռուս-անգլիական Լոնդոնի

²⁵³ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 33, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 10-11:

²⁵⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 35, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12:

1921 թ. մարտի 16-ի առևտրական համաձայնագրի երկկողմ քաղաքական այն պարտավորությանը, որ ՌՍՖՍՀ պարտավորվում էր Անգլիայի գաղութներում հակաանգլիական քարոզչություն չվարել, որի դիմաց Անգլիան էլ պարտավորվում էր ոչ մի օգնություն ցույց չտալ ռուսական նախկին կայսրության տարածքներում կազմավորված պետություններին²⁵⁵: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում էր նաև Հայաստանին: Այդ նշանակում է՝ զուր էին հայկական պատվիրակությունների թափած ջանքերը և հույսերը Լոնդոնի ու Լոզանի խորհրդաժողովներում, Ազգերի լիգայում և այլուր, թե Անգլիան կօգնի հայերին և սատար կկանգնի Հայկական հարցին:

Մոսկվայի պայմանագրի 5-րդ հոդվածը բացառապես վերաբերում էր Սև ծովի և նեղուցների կարգավիճակի խնդրին: Սույն հոդվածը տառացիորեն կրկնում էր ռուս-թուրքական 1920 թ. օգոստոսի 24-ի նախաստորագրված պայմանագրի նախագծի 6-րդ հոդվածը²⁵⁶: Ինչպես հայտնի է, նեղուցների միջազգային ստատուսի հարցը կարգավորվեց Լոզանի 1923 թ. հուլիսի 24-ի պայմանագրով:

Մարտի 16-ի պայմանագրի 6-րդ հոդվածով, որը դարձյալ բառացիորեն կրկնում էր 1920 թ. օգոստոսի 24-ի նախաստորագրած պայմանագրի 2-րդ հոդվածը, երկու պայմանավորվող կողմերի համար չեղյալ և ուժը կորցրած էին համարվում մինչև միջև մինչ այդ կնքված և իրենց շահերին չհամապատասխանող բոլոր պայմանագրերը²⁵⁷: Այստեղ ամենից առաջ խոսքը վերաբերում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ուժը կորցնելուն, նվաստացուցիչ մի պայմանագիր, որը բոլշևիկյան կառավարությունը, սուր տարածայնությունների պայմաններում վավերացրել էր, սակայն ավելի ուշ՝ 1-ին աշխարհամարտի ավարտին չեղյալ հայտարարել: Մյուս կողմից դժվար չէ տեսնել, որ ճանաչել թուրքական «Ազգային ուխտը», հավասարազոր էր Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածին, այսինքն՝ հայկական տարածքների կորստի ճանաչմանը²⁵⁸:

²⁵⁵ Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, էջ 377:

²⁵⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները(1917-1923թթ.), էջ 268:

²⁵⁷ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12, Գալոյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 267:

²⁵⁸ Ավետիսյան Հ. Ա., Հայկական հարցը 1918., Ե., 1997, էջ 101:

Այնուհետև Մոսկվայի պայմանագրի հաջորդ հոդվածներով ՌՍՖՍՀ կառավարությունը պարտավորվում էր հրաժարվել ցարական կառավարության օրոք Թուրքիայի վրա դրված կապիտուլյացիաների ռեժիմով նախատեսված հարկա-մաքսային արտոնություններից, այլ անհրավահավասար միջազգային ակտերից:

Հոդվածների մի խումբ էլ՝ 9-ից 14-ը, վերաբերում էին երկկողմ հաղորդակցության ապահովման, մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումների, մուտքի և ելքի, երկու կողմերի քաղաքացիների ընտանեկան իրավունքի, իրենց ունեցվածքի ազատ վաճառքի, երկկողմ զինվորական և քաղաքացիական գերիների վերադարձի, հյուպատոսական կոնվենցիա և միջպետական հարաբերությունները կարգավորող այլ անհրաժեշտ համաձայնագրերի կնքման խնդիրներին²⁵⁹:

Նշված հոդվածախմբերում Հայաստանին ու հայերին առընչվող հարցերից էր այն, որ 13-րդ հոդվածն արտոնում էր երկու կողմի տարածքներում գտնվող զինվորական և քաղաքացիական գերիների վերադարձը:

Թուրքական կողմի համար սահմանվում էր, որ Ռուսաստանը պարտավորվում էր իր հաշվին հայրենիք վերադարձնել մինչև Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը Ռուսաստանում գտնվող բոլոր զինվորական և քաղաքացիական գերի թուրքերին: Թուրքիան էլ նման պարտավորություն էր ստանձնում ռուս զինվորական և քաղաքացիական գերիների վերաբերմամբ²⁶⁰: Հավանաբար ռուս զինվորական և քաղաքացիական գերիներ հասկացության տակ պետք է հասկանալ նաև տասնյակ հազարավոր հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց:

Մոսկվայի ռուս-թուրքական մարտի 16-ի պայմանագրի 1-ից մինչև 14-րդ հոդվածների բովանդակային համեմատությունը ռուս-թուրքական օգոստոսի 24-ի նախաստորագրված պայմանագրի 8-հոդվածանոց նախագծի հետ ցույց է տալիս, որ վերջինս դրված է եղել մարտի 16-ի պայմանագրի հիմքում, առանձին հոդվածներ պարզապես նույնական են և կրկնում են իրար, տեղ-տեղ էլ որոշ հոդվածներ ավելի զարգացում են գտել, հավելվել են կամ

²⁵⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 36–37, ֆ. 114, ց. 2, գ. 132, ք. 13–15, «Հայաստանը...», էջ 502–504:

²⁶⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 37, ֆ. 114, ց. 2, գ. 132, ք. 14:

վերախմբագրվել²⁶¹: Այս երկու փաստաթղթերի միակ էական տարբերությունն այն է, որ օգոստոսի 24-ի նախաստորագրված նախագծում, չհաշված թուրքական «Ազգային ուխտի» ճանաչման հանգամանքը, ոչ մի խոսք չկա տարածքային-սահմանային հարցերի մասին, մինչդեռ Մոսկվայի մարտի 16-ի պայմանագրի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածները, էլ չենք խոսում երեք (A, B, C) մասից բաղկացած հավելվածի մասին, հանգամանորեն ներկայացված են թուրք-անդրկովկասյան սահմանները, այդ թվում՝ Բաթումի և Նախիջևանի խնդիրները: Հենց տարածքային-սահմանային խնդիրների շուրջ կողմերի լեզու չգտնելու պատճառով էր, որ 1920 թ. օգոստոսի 24-ի նախագիծը չվերածվեց պայմանագրի:

Իրավական պարտադրանքի տեսակետից Մոսկվայի պայմանագրի առավել հիշարժան հոդվածներից էր 15-րդը: Այն մեջ ենք բերում ամբողջությամբ. «Ռուսաստանը պարտավորվում է անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ ձեռնարկել քայլեր, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր կերպով ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն վերաբերվում են իրենց»²⁶²:

Հոդվածը պարտավորեցնում էր Ռուսաստանի կառավարությանը, որպեսզի նա համոզի միջազգային իրավունքով անկախ, սակայն գործնականում խորհրդային Ռուսաստանին ենթակա Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետություններին՝ Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին, Թուրքիայի հետ կնքելու պայմանագիր, որում պարտադիր կերպով (ընդգծումը մերն է - Ա. Հ.) ճանաչվեն Մոսկվայի պայմանագրի իրենց առնչվող հոդվածները: Միաժամանակ հասկացվում էր, որ կնքվելիք թուրք-անդրկովկասյան պայմանագրում անթույլատրելի է Մոսկվայի պայմանագրի պահանջներից շեղում: Մոսկվայի պայմանագրի առաջին երեք հոդվածներն ու 1-ին հոդվածի 1 (A) 1 (B) 1 (C) հավելվածներն անմիջականորեն վերաբերում էին անդրկովկասյան հանրապետությունների կենսական՝ տարածքային-սահմանային խնդիրներին: Մնացած հոդվածների առանձին դրույթներ անուղ-

²⁶¹ Այդ իմաստով անտեղի է այն պնդումը, թե, իբր, օգոստոսի 24-ի նախաստորագրված պայմանագրի «նախագիծը այդպես էլ պայմանագրի չվերածվեց» (տե՛ս Գալոյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 404):

²⁶² ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 15, «Հայաստանը ...», էջ 504:

ղակի կերպով են առնչվում անդրկովկասյան հանրապետությունների խնդիրներին: Ընդ որում, եթե 2-րդ հոդվածով Վրաստանը, հանձին Բաթումի մարզի, տարածք էր ստանում, 3-րդ հոդվածով Ադրբեջանը նույնպես ստանում էր տարածք՝ Նախիջևանի մարզը, մինչդեռ Հայաստանը 1-ին հոդվածով կորցնում էր 20 հազար քառ. կմ-ից ավելի տարածքով երկու երկրամաս՝ Կարսի մարզը և Սուրմալուի գավառը:

Եթե Վրաստանն ու Ադրբեջանը ուրախանալու առիթ ունեին, ապա Հայաստանը՝ միայն մտահոգության, կորստի ու ցավի: Այդ իսկ պատճառով էլ 15-րդ հոդվածի և հետագայում դրա տրամաբանական շարունակությունը կազմող Կարսի պայմանագրի օրինականության հարցը ամենից ավելի մտահոգում է Հայաստանին ու հայ ժողովրդին:

Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի նպատակն էր կնքված պայմանագիրը ինչ-որ կերպ միջազգային պայմանագրերի չափանիշներին համապատասխանեցնելը, օրինական բնույթ տալը:

Երկու պայմանավորվող կողմերը՝ ՌՍՖՍՀ կառավարությունը և ԹԱՍԺ կառավարությունը, լավ էլ հասկանում էին, որ իրենք՝ իբրև միջազգայնորեն դեռևս չճանաչված կառավարություններ, պայմանագիր են կնքում և վճռում մեկ այլ՝ երրորդ պետության՝ տվյալ դեպքում Հայաստանի կենսական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են տրածքային-սահմանային, ընդ որում, առանց վերջինիս Մոսկվա հրավիրված պատվիրակության գիտության ու մասնակցության:

Սա 20-րդ դարի միջազգային հարաբերությունների պատմության մեջ արձանագրված եզակի դեպքերից է: Բանն այն է, որ նման գործարք են կնքում միջազգայնորեն չճանաչված երկու երկրների կառավարություններ:

Եվ, վերջապես, Մոսկվայի պայմանագրի վերջին՝ 16-րդ հոդվածում, ինչպես սովորաբար ընդունված է, խոսվում էր սույն պայմանագրի հնարավորինս շուտ վավերացման և վավերագրերի Կարսում փոխանակման մասին: Պայմանագրի վավերացումը երկու կողմից տեղի ունեցավ 1921 թ. հուլիսին, իսկ վավերագրերի փոխանակումը՝ նույն օրվանի սեպտեմբերին²⁶³:

Ահա՛, նման աղետալի արդյունքով մարտի 22-ին Հայաստանի

²⁶³ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 38:

12 հոգուց բաղկացած պատվիրակությունը, «ցուցաբերելով իսկական պրոլետարական ինտերնացիոնալիզմ», ձեռնունայն վերադարձավ տուն: Հավելենք, որ ՌՄՖԽՅ արտգործժողկոմատի քարտուղարությունը Հայաստանի վեց պատվիրակներին նվիրատվության կարգով բաժանեց մեկական ֆրենչի կտոր (օտրեզ), սպիտակեղեն և կոշիկ²⁶⁴: Ահա և սա եղավ հայ պատվիրակության միակ «ձեռքբերումը»:

1921 թ. մայիսի 19-ին ՀԿԿ ԿԿ-ի պլենումը, լսելով արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի հաղորդումը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն տվեց պատվիրակության քաղաքական գծին²⁶⁵:

Հարց է ծագում, Մոսկվայի պայմանագրով որքա՞ն տարածք կորցրեց Հայաստանը, և դրա փոխարեն որքա՞ն ստացան Թուրքիան և Ադրբեջանը: Հաշվարկները ցույց են տալիս, որ Թուրքիան Հայաստանից ստացավ ավելի մեծ տարածք, քան նախատեսված էր «Ազգային ուխտով»:

1920-ական թվականների սկզբի խորհրդային կենտրոնական վիճակագրական վարչության տվյալներով Մոսկվայի պայմանագրով Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազար քառ.կմ տարածք, որից 19,915 քառ.կմ խլեց Թուրքիան (Կարսի մարզը և Սուրմալուի գավառը), մնացած 5,5 հազար քառ.կմ կազմող Նախիջևանի մարզը և Շադուրը Թուրքիայի պահանջով հանձնվեց Ադրբեջանին²⁶⁶:

Սփյուռքահայ հեղինակ Ջավեն Մսրրյանի հայտնած տվյալներով Թուրքիային անցած Կարսի մարզը և Սուրմալուի գավառը կազմել են 20700 քառ.կմ տարածք, իսկ Շարուր-Նախիջևանը՝ 5,5 հազար քառ.կմ²⁶⁷: Վերջինս Թուրքիայի պահանջով հանձնվեց Ադրբեջանին²⁶⁸:

²⁶⁴ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 85, ք. 11:

²⁶⁵ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, ք. 4:

²⁶⁶ Бюллетень центрального статистического управления, 1921, № 55, с. 10, «Литературная Армения», Е., 1990, №1, с. 80–81, Սարգսյան Ե. Ղ., Քենակականների 1920–1921 թթ. արշավանքն Անդրկովկաս («Լրաբեր» հաս. գիտ.), 1992, թիվ 1, էջ 32–33:

²⁶⁷ Մսրրյան Ջ., Հայկական հարցի մասին, էջ 11:

²⁶⁸ Մսրրյան Ջ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը 1920–1921 թթ.), էջ 144–145:

Այսպիսով, Մոսկվայի պայմանագրով Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազար քառ.կմ բնիկ տարածք: Չեղյալ համարվեց 1914 թ. ռուս-թուրքական սահմանը, և նոր սահմանագծով Կարսի մարզը և Սուրմալուի գավառը հայտնվեցին Թուրքիայի տիրույթի շրջանակներում: Ստացվեց այնպես, որ Մոսկվայի պայմանագրով Հայաստանի հարևան երեք երկրները շահեցին: Թուրքիան լրացուցիչ ստացավ 20 հազար քառ.կմ՝ Կարսը, Արդահանը և Սուրմալուն (չհաշված Արդվինի գավառը և Բաթումի մարզի հարավային մասը), Ադրբեջանը՝ Նախիջևանի մարզը՝ 5,5 հազար քառ.կմ, իսկ Վրաստանը՝ Բաթումի մարզի հյուսիսային հատվածը՝ 3 հազար քառ.կմ: Մինչդեռ Հայաստանը միայն տարածքներ կորցրեց: «Մոսկովյան անօրինական ու անբարո մեքենայությունների հետևանքով, - գրում է պատմաբան Ե. Սարգսյանը, - արնաթաթախ և մահամերձ Հայաստանը զրկվեց մոտ 24 հազար քառ.կմ բնիկ տարածքից»²⁶⁹:

Վերը ասվածից ծագում է մեկ այլ հարց. ինչու՞ խորհրդային պետությունը Հայաստանի տարածքների հաշվին նման մեծ զիջումներ կատարեց Թուրքիային: Դրա գլխավոր պատճառը պետք է փնտրել խորհրդային պետության արևելյան քաղաքականության մեջ: Այդ քաղաքականության իմաստն այն էր, որ խորհրդային կառավարությունը Թուրքիան համարում էր Արևելքում համաշխարհային հեղափոխության միջնաբերդ՝ իբրև Արևելքի երկրներում ազգային-ազատագրական շարժման կազմակերպման ու տարածման կենտրոն: Ուստի համաշխարհային հեղափոխության այդ մեծ առաքելությունը իրագործելու համար անհրաժեշտ էր խրախուսել, շահագրգռել թուրքերին տարածքային զիջումներով, ոսկով, զենք-զինամթերքներով և այլն: Թուրքիային արվող տարածքային զիջումները, ցավոք, կատարվեցին հիմնականում Հայաստանի ու հայ ժողովրդի կենսական շահերի հաշվին, որովհետև Թուրքիայի նպատակը հայկական պետականության խորտակումն էր, նրա տարածքների բզկտումը ու յուրացումը:

Այստեղից կարելի է հետևեցնել, որ խորհրդային Ռուսաստանի կառավարությունը որոշակի նպատակադրված հակահայ քաղաքականության միտում չի ունեցել, պարզապես այդ մեծ քաղաքականության ճանապարհի խաչմերուկում հայտնվեց Հայաստանը, ուստի նա պետք է գնար պահանջված զոհողությունների ու մեծ կորուստների:

²⁶⁹ Սարգսյան Ե. Ղ., նշվ. աշխ, էջ 32–33: Կ

4. ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Մոսկվայի բանակցությունների և պայմանագրի վերաբերյալ առաջիններից մեկը իր ստացած տպավորությունների մասին է խոսել և գնահատական տվել կոնֆերանսին չմասնակցած Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը: Նա Բաքվում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Մ. Աթաբեկյանին ուղղված մարտի 18-ի իր հայտնի նամակներից մեկում պատմում է Հայաստանի պատվիրակության համար ստեղծված անելի վիճակի և իրենց անելիքների մասին: Բեկզադյանը փաստում է, որ Հայաստանի պատվիրակության անորոշ կարգավիճակի վրա, անշուշտ, ազդել են մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ Ս. Վրացյանի ավանտյուրան (հակախորհրդային փետրվարյան ապստամբությունը Հայաստանում), ՌՍՖՍՀ ներքին քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր դրությունը և այլն²⁷⁰: Սակայն Բեկզադյանը այս աննպաստ հանգամանքներից ոչ մեկը չի բացարձակապես անցրել և դարձրել հիմնապատճառ հայկական պատվիրակության կոնֆերանսին չմասնակցելու համար: Ինչպես արդեն ասվել է, Հայաստանի պատվիրակության մասնակցությունը կոնֆերանսին ի սկզբանե մերժվել էր թուրքերի պահանջով, որ «իրենք Անգորայի կառավարության կողմից լիազորված չեն հայերի հետ բանակցելու»²⁷¹, որ «իրենք ցանկություն չունեն հայերի հետ խոսելու»²⁷²: Ալ. Բեկզադյանը նամակում հայտնում էր, որ փետրվարյան հեղաշրջումը երևանում «որոշ անհարմարություններ մտցրեց Հայաստանի պատվիրակության դրության մեջ»²⁷³:

Այժմ պարզեմք, թե իրականում ՅՓԿ նախագահ Ս. Վրացյանի նամակ-հեռագիրը որքանով են ազդել Հայաստանի պատվիրակության կոնֆերանսին չմասնակցելու և առհասարակ բանակցային գործընթացի վրա: Մեր ունեցած տվյալներով՝ Ս. Վրացյանը մարտի 10-ին հեռագիր է ուղղել Գ. Հիչերինին և Գ. Օրջոնիկիձեին, որով առաջարկում էր, որ Խորհրդային Ռուսաստանը ճանաչի ազատ, անկախ Հայաստանը, և բարեկամական հարաբերություն-

²⁷⁰ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, ք. 25:

²⁷¹ «Երկիր», Երևան, 16 մարտի 2001 թ.:

²⁷² ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, ք. 25:

²⁷³ Նույն տեղում:

ներ հաստատվեն միմյանց միջև²⁷⁴:

Այնուհետև, Ս. Վրացյանը՝ իբրև Հայաստանի արտոգործնախարար, մարտի 12-ին հեռագրել է Մոսկվա՝ Գ. Չիչերինին՝ հայտարարելով, որ Մոսկվայի բանակցություններում Բեկզադյանի հանդես գալը իրավական ուժ չունի²⁷⁵: Այս հեռագիրը ուղարկվել է այն ժամանակ, երբ հայկական պատվիրակությանը առնվազը 15 օր առաջ արգելված է եղել կոնֆերանսին մասնակցելու: Սակայն դա Ս. Վրացյանին չի փրկում բարոյական և քաղաքական պատասխանատվությունից:

Մարտի 14-ին ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանը ռադիոգրով դարձյալ նուտա է հղում Մոսկվա՝ Գ. Չիչերինին, որով բողոքում է Հայաստանի անունից հանդես եկող նախկին արտոգործնախարար Բեկզադյանի ինքնազուխ հանդես գալու դեմ՝ նրա կողմից կնքված պայմանագրերը համարելով ոչ պարտադիր և իրավական ուժ չունեցող²⁷⁶: Մեկ օր անց՝ մարտի 15-ին, Հայաստանի արտոգործնախարարությունը դիմում է հղում Անգորա՝ ԹԱՄԺ կառավարության արտոգործող կոմսատ, որով առաջարկվում էր բարեկամական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ՝ դրա համար հիմք ունենալով Ալեքսանդրապոլի պայմանագիրը²⁷⁷: Մարտի 18-ին Հայաստանի կառավարության նախագահ Ս. Վրացյանը նամակով դիմում է ԹԱՄԺ կառավարության Արևելյան ճակատի հրամանատարության ներկայացուցիչ կապիտան Ք. Բահաեդդինին, որից բուլշևիկների դեմ մղվող պայքարում օգնություն էր հայցում Թուրքիայից՝ վերադարձնել հայ ռազմագերիներին, տալ զենք և ռազմամթերք, ինչպես նաև՝ ռազմական օգնություն: Միաժամանակ արտահայտվում էր հավատարմություն Ալեքսանդրապոլի պայմանագրի պայմաններին²⁷⁸:

Անշուշտ, դատապարտելի է ՀՓԿ և նրա պաշտոնաթերթի ապավինած թուրքամետ քաղաքական կողմնորոշումը: Օրինակ, «Ազատ Հայաստանի մարտի 20-ի խմբագրականը հիշեցնում է ՀՀԴ կենտրոնական օրգան «Հառաջի»՝ 1920 թ. նոյեմբերի 20-ի և 23-ի երկու հայտնի թուրքահաճ խմբագրականները²⁷⁹:

²⁷⁴ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 434.

²⁷⁵ «Փետրվարի 18», Փրակա, 1927, էջ 70–71:

²⁷⁶ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, ք. 55:

²⁷⁷ Նույն տեղում, ք. 65:

²⁷⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 42, ք. 96, ֆ. 37, ց. 1, գ. 9, ք. 51:

²⁷⁹ «Ազատ Հայաստան», Երևան, 20 մարտի 1921 թ.:

Կարծում ենք, որ որքան էլ դաժան ու ատելի լինեին բուլչակ-ների թալանն ու ավերածությունները, և որքան էլ փորձենք դիվանագիտական քայլ որակենք ՀՓԿ դիմում-մամակները՝ ուղղված թուրքերին, այդուհանդերձ, պատմաքաղաքական ու բարոյական առումներով որևէ արդարացում չունեն թուրքական կողմնորոշման ապավինելու փորձը, առավել ևս՝ հավատարմությունը Ալեքսանդրապոլի պայմանագրին:

Այսպիսով, եթե փետրվարյան հակախորհրդային ապստամբությունը և Ս. Վրացյանի հեռագրերը իրավական ու գործնական առումով ազդեցություն չեն ունեցել Մոսկվայի բանակցությունների վրա, ապա բարոյահոգեբանական առումով, անշուշտ, ազդեցություն ունեցել է՝ Հայաստանի համար ոչ բարենպաստ քաղաքական մթնոլորտ ստեղծելու տեսակետից: Եթե գնահատելու լինենք փետրվարյան ապստամբության թողած ազդեցությունը Մոսկվայի ռուս-թուրքական և այդ նույն օրերին Լոնդոնում ընթացող Անտանտի երկրների կոնֆերանսների վրա, ապա կարելի է վստահաբար ասել, որ խորհրդային կարգերի տապալումը Հայաստանում ունեցել է այնքան բացասական հետևանք մոսկովյան ռուս-թուրքական բանակցային գործընթացի վրա, որքան՝ դրական ազդեցություն Լոնդոնի կոնֆերանսի վրա, դրական այնքանով, որ դա հիմք է տվել Քերզոնին՝ թուրքերից պահանջելու տարածքային որոշ զիջումներ Հայաստանի օգտին: Իրականում դեպքերի ընթացքը և արդյունքները ցույց են տալիս, որ երկու դեպքում էլ այն գործնական ազդեցություն չի ունեցել:

Ինչ վերաբերում է Հայաստանի պատվիրակության մասնակցության խնդրին, ապա վավերագիր նյութերը վկայում են, որ ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի հեռագիրը Մոսկվա՝ Բեկզադյանի մասնակցությունը կոնֆերանսին անօրինական լինելու մասին տրվել է շատ ավելի ուշ՝ մարտի 12-ին, քան նրան չի թույլատրվել մասնակցել բանակցությունների հենց սկզբից՝ փետրվարի 26-ից: Ս. Վրացյանը, երբ հեռագիրը ուղարկելիս է եղել, նա անգամ տեղյակ չի եղել, որ հայկական պատվիրակությանը դրանից կես ամիս առաջ արգելված է եղել մասնակցելու կոնֆերանսին: Մյուս կողմից պետք է ենթադրել, որ եթե Հայաստանի պատվիրակությանը պաշտոնական կարգավիճակով թեկուզ թույլատրվեր մասնակցելու Մոսկվայի կոնֆերանսին, միևնույն է, այդ մասնակցությունը գործնական նշանակություն չէր կարող ունենալ այնպես, ինչպես չու-

նեցավ հետագայում Կարսի պայմանագրի ժամանակ:

Հայաստանի պատվիրակությունը, ըստ էության, մեկուսացված է եղել կոնֆերանսում ընթացող բանակցային գործընթացներից և չի ստացել տեղեկատվություն, չնայած Գ. Չիչերինը խոստացել էր հայկական պատվիրակությանը պահել կուրսի մեջ Հայաստանին վերաբերող բոլոր խնդիրներում և նույնիսկ ստեղծել հատուկ հանձնաժողով քննելու համար Հայաստանին առնչվող հարցերը: Ալ. Բեկզադյանը մարտի 18-ի իր հայտնի նամակում նշում է, որ խորհրդաժողովի աշխատանքների մասին հայ պատվիրակները որոշ տեղեկություն էին ստանում ՌՍՖԽՅ արտգործնախարարության զինվորական փորձագետ Ա. Բորբիշչևից, և իրենք մասնավոր կարգով պարբերաբար նյութեր էին մատակարարում հայ-թուրքական սահմանի հնարավոր տարբերակների վերաբերյալ²⁸⁰:

Հայ պատվիրակները և հայազգի պետական գործիչները Մոսկվայի պայմանագրի բովանդակության մասին տեղեկացան միայն նրա կնքումից հետո, այսինքն՝ տեղի էր ունեցել «нострфак-тым»: Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասն այնքան դաժան ու աղաղակող էր, որ Հայաստանի ղեկավարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ իր անհամաձայնությունը հայտնելով պայմանագրին, բայց և գիտակցելով, որ դա գործնական որևէ նշանակություն չի ունենա: Ալ. Բեկզադյանը Մոսկվայից երևան Հայհեղկոմին հղած ապրիլի 11-ի հեռագրով հայտնում էր. «Մեր պատվիրակությանը կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից զրկելու և Թուրքիայի հետ կնքած պայմանագրում Հայաստանի համար պարունակած ծանր պայմանների կապակցությամբ մենք հայտարարել ենք բողոք, որն, իհարկե, գործնական նշանակություն չի ունեցել»²⁸¹:

Հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը, ծանոթանալով Մոսկվայի պայմանագրի տեքստին և կոնֆերանսի մարտի 10, 12, 14 և 16-ի նիստերի արձանագրություններին (պարզվում է, որ փետրվարի 26-ի բացումից հետո մինչև մարտի 9-ը ներառյալ պաշտոնական նիստ չի գումարվել-Ա.Յ.), ապրիլի 15-ին պատվիրակության անունից արել է բողոք-հայտարարություն՝ խո-

²⁸⁰ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25:

²⁸¹ Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (զիտաժողովի նյութեր), Ե., 2001, էջ 13:

որ ցավով ու վրդովմունքով նշելով, որ ռուսական պատվիրակությունը առանց որևէ դիմադրության «թեթև ձեռքով» թուրքերին է զիջել Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածքներ՝ Կարսը, Արդահանը, Արդվինը և Սուրմալուն²⁸²:

Հայկական պատվիրակությունը բողոք էր հայտնում, որ հորհրդային Հայաստանի պատվիրակությանը ոչ միայն չթույլատրվեց խորհրդաժողովի աշխատանքներին մասնակցելու, այլև անգամ հարկ չհամարվեց լսելու հայկական կողմի կարծիքը (ինչպես դա արվել է Լոնդոնի կոնֆերանսում)՝ Հայաստանին անմիջականորեն առնչվող հարցերի քննարկման կապակցությամբ²⁸³:

«Ամենից առաջ,- գրում էր Ալ. Բեկզադյանը ապրիլի 15-ի իր բողոք-նամակում,- աչք են ծակում այն խոշոր տարածքային զիջումները Թուրքիային, որ արել է ռուսական պատվիրակությունը հորհրդային Հայաստանի հաշվին», և որ «ՌՍՖՍՀ ներկայացուցիչները գրեթե ոչ մի փորձ չեն արել պաշտպանելու երիտասարդ և փոքրիկ հորհրդային Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածքները»²⁸⁴:

Ինչ վերաբերում է բանակցությունների ընթացքում տարածքային-սահմանային խնդրում Գ. Չիչերինի ակնարկած բուռն քննարկումներին՝ «ամենադաժան երկարատև պայքարին», ապա դա, մեր կարծիքով, Չիչերինի դիվանագիտական հմարքն է պայմանագրի ստորագրումից հետո հայերին (Բեկզադյանի բողոքին ի պատասխան) հանգստացնելու համար, որ իբր սահմանային հարցերը լուծվել են կատաղի բանավեճերով, քայլ առ քայլ, փոխզիջումներով: Սակայն իրականում Հայաստանի առնչությամբ մնան բան չի եղել:

Իր հերթին Ալ. Բեկզադյանը գնահատական է տալիս Մոսկվայի պայմանագրով գծված սահմանի վտանգավորությանը հայ ժողովրդի համար: Նա իրավացիորեն գտնում էր, որ այս նոր սահմաններով Հայաստանի պաշտպանունակությունը հասցվում է գրեթե զրոյի: Կարսին, Արդահանին, Հայկական պարին, Իզդիրին տիրելը Թուրքիային տալիս է ռազմավարական առավելություն: Հայաստանի երկու գլխավոր կենտրոններ համարվող Երևանը և Ալեքսանդրապոլը դառնում են սահմանային քաղաքներ: Թուր-

²⁸² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 494–498.

²⁸³ “Голос Армении” 15 марта 2001 г.

²⁸⁴ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 494.

քիայի հետ պատերազմի դեպքում այդ քաղաքների պաշտպանությունը անհնարին էր լինելու²⁸⁵։ Ալ. Բեկզադյանի մի քանի էջանոց այդ բողոք-հայտարարությունը ներծծված է հայ ժողովրդի ազգային շահերի պաշտպանության մղումով և ռուսական պատվիրակության անհոգ վերաբերմունքի խոր քննադատությամբ։ Կարծում ենք, որ միայն այդ բողոք-հայտարարությունը բավական էր, որ մեկ ամիս անց Ալ. Բեկզադյանը ազատվեր իր զբաղեցրած պաշտոնից, իսկ 1930-ական թվականներին ենթարկվեր ստալինյան բռնաճնշումների։

Ի պատասխան Ալ. Բեկզադյանի ապրիլի 15-ին արված բողոք-հայտարարությանը՝ Գ. Չիչերինը ապրիլի 21-ին պատասխան նամակ է հասցեագրել ՌՍՖՍՀ կառավարությունում Հայաստանի ներկայացուցիչ, հայկական պատվիրակության անդամ Ս. Տեր-Գաբրիելյանին՝ փորձելով արդարացնել ռուսական պատվիրակության գոծողությունները։

Նախ Չիչերինի նամակից կարելի է հետևեցնել, որ մինչև քաղաքական հարցերի հանձնաժողովի 1-ին նիստը՝ մարտի 10-ը, այսինքն՝ շուրջ երկու շաբաթ, պաշտոնական նիստեր չեն գումարվել և արձանագրություններ չեն կազմվել, այլ կողմերի միջև ընթացել են գործնական բանակցություն-քննարկումներ, Չիչերինի վկայությամբ «շատ բուռն և կատաղի պայքար, իսկ սահմանային կամ այլ բնույթի զիջումներ կատարվել են ոչ թե իր, այլ ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի հրահանգով ու համապատասխան որոշումով (ընդգծումը հեղինակինն է)»։ Մյուս կողմից՝ Գ. Չիչերինը մեղադրում է հայկական պատվիրակությանը պասիվության (անգործության) համար, որն իր հետ կապի մեջ չի եղել²⁸⁶։ Կարծում ենք, որ Չիչերինի կշտամբանքը տեղին չէ, որովհետև հայկական պատվիրակությունը որոշակի կապեր հաստատել էր սահմանային հանձնաժողովի անդամ Բորիշչևի հետ և Չիչերինի ցանկության

²⁸⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 463. Ի դեպ, փաստենք, որ ԱՄՆ-ում հավատարմագրված արդեն տապալված մենչևիկյան Վրաստանի ներկայացուցչությունը ապրիլի 12-ին նոտա է հրապարակում, որով բողոքում էր ռուսական կառավարության դեմ մարտի 16-ի պայմանագրով Արդվինը, Արդահանը և Օլթին Անգորային տալու մասին։ Հայտնի է, որ Վրաստանն էլ էր հավակնում Արդահանին և Օլթիին։ (ՀԱԱ, ԱՄՆ-ի դեպարտամենտի փասթաթղթերը (1910-1929 թթ.), միկրոֆիլմերի հավաքածու, թիվ 1, ց. 1, գ. 761-762)։

²⁸⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 498-499.

դեպքում նույն հաջողությամբ կարող էր շփումներ ունենալ նաև իր հետ: Այս կապակցությամբ միանգամայն տեղին ու դիպուկ է ակադեմիկոս Գ. Գալոյանի գնահատականը Գ. Չիչերինի ցուցաբերած վարքագծի և ինքնաարդարացման փորձի վերաբերյալ. «Չիչերինը զգացել է պատմության առջև իր պատասխանատվության չափը այն անարդարությունների համար, որոնք պայմանագրով ամրագրվել են և դատապարտելի են: Նա ավելի շուտ ինքնահանգստացման, քան ճշմարտության բացահայտման համար է փորձել ինքնաարդարացման դիմել»²⁸⁷: Մյուս կողմից էլ քննադատության է արժանի նաև Չայաստանի պատվիրակության կրավորական դիրքը: Երկու դեպքում էլ թե՛ Բեկզադյանի և թե՛ Չիչերինի փոխադարձ մեղադրանքները իրար հասցեին ուշացած էին:

Զբավարարվելով Ս. Տեր-Գաբրիելյանին ուղղված նամակով՝ Գ. Չիչերինը ապրիլի 22-ին նույնաբնույթ ինքնաարդարացման նամակ է հասցեագրում Չայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին: Այս նամակում նույնպես Չիչերինը պարզաբանումներ է տալիս, թե մինչև քաղաքական հանձնաժողովի 1-ին նիստը պատվիրակությունները ինչու էին զբաղված: Ըստ Չիչերինի՝ մինչև մարտի 10-ը՝ նախորդ երկու շաբաթներին, կողմերի միջև ընթացել են ինտենսիվ քննարկումներ(դեբատներ) ու, ըստ էության, առևտուր, որոնք կրել են ոչ ֆորմալ (ոչ պաշտոնական) բնույթ: Եվ միայն այն բանից հետո, երբ կողմերը պայմանավորվեցին հիմնական հարցերի (տարածքների, սահմանների) շուրջ, դրանից հետո միայն սկսվեցին քաղաքական հանձնաժողովի աշխատանքները²⁸⁸:

Գ. Չիչերինի դիտարկմամբ կոնֆերանսի գլխավոր խնդիրը թուրք-անդրկովկասյան տարածքային-սահմանային գատման հարցն էր: Ըստ Չիչերինի՝ կոնֆերանսի սկզբում ստեղծվել էր շատ վտանգավոր վիճակ և երկար ժամանակ թվում էր, թե կողմերի միջև ինչ-որ խզում տեղի կունենա: Եվ որպեսզի այդ խզումը չլինի, ռուսական կողմը գնաց ծանր զոհաբերության՝ Թուրքիային զիջելով Կարսը և Արդահանը: «Դրանք ոչ միայն սովորական տարածքային զիջում էին, գրում էր Չիչերինը,- այլ ունեին կարևոր ռազմապաշտպանական նշանակություն Կովկասի համար:

²⁸⁷ Գալոյան Գ. Ա., Չայաստանը և մեծ տերությունները (1917-1923թթ.), էջ 458:

²⁸⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 500.

Վճռական պահին մենք գնացինք նման զիջման՝ վախենալով նաև այն հանգամանքից, որ Լոնդոնի կոնֆերանսի ժամանակ քեմալականները կարող էին շրջվել դեպի Անտանտը»²⁸⁹: Միաժամանակ Չիչերիլը հպարտությամբ էր նշում, որ իրենք ձեռք են բերել Բաթումը՝ Վրաստանի և Նախիջևանը՝ Ադրբեջանի համար²⁹⁰:

Որքան կարելի է դատել Գ. Չիչերիլի ելույթներից և կոնֆերանսի նյութերից, ռուսական պատվիրակությունը բավարար հետևողականություն չի ցուցաբերել հայկական տարածքների պահանջատիրության տեսակետից, հավանաբար չէր էլ կարող, քանզի ՌԿ(ք)Կ ԿԿ-ը և Քաղբյուրոն սկզբունքորեն որոշել էին, որ Թուրքիային պետք է զիջումներ արվեն «Ազգային ուխտի» շրջանակներում: Խորհրդային պատվիրակությունը անգամ ի վիճակի չէղավ պաշտպանելու հայ-թուրքական սահմանագիծը երկաթուղուց 20-25 վերստ խորությամբ անցկացնելու իր իսկ առաջարկած պահանջը՝ երկաթուղու անվտանգ երթևեկության նպատակով: Սակայն վերջին պահին, դարձյալ տարածքների առևտրի ճանապարհով այդ առանցքը պակասեցվում է՝ հասցվելով Ախուրյանի գոտում մինչև 8, իսկ Արաքսի գոտում 4 վերստ խորության:

Բուլշևիկյան կուսակցության առաջնորդները և խորհրդային կառավարության ղեկավարները արդեն կանխավ որոշել էին իրենց ռազմավարական ուղեգիծը՝ հայկական տարածքների հաշվին սիրաշահել «Արևելքի հեղափոխության միջնաբերդ Թուրքիային»: Մոսկվայի պայմանագրով խորհրդային կառավարությունը կրկին իր հավատարմությունը արտահայտեց ուղիղ երեք տարի առաջ կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Չայաստանին առնչվող պայմաններին: Մյուս կողմից այս պայմանագրով ՌՍՖՍՀ իրավաբանորեն հրաժարվեց 1917թ. դեկտեմբերի 29-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին» դեկրետից, թեև արդեն մեկ անգամ Բրեստի պայմանագրով նա հրաժարվել էր արևմտահայ նահանգներից:

ՌՍՖՍՀ արտգործօժոկոմատի խորհուրդների համառուսաստանյան 9-րդ համագումարում տրված տարեկան հաշվետվության մեջ հետևյալ ամփոփիչ գնահատականն է տրվել Մոսկվայի պայմանագրին. «Մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը ամրապնդեց բարեկամական հարաբերությունները երկու երկրների

²⁸⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 470.

²⁹⁰ Նույն տեղում:

միջև, ճանաչեց 1920 թ. հունվարի 28-ի թուրքական Ազգային ակտի ուժը, Թուրքիային թողեց Կարսը, Արդահանը և Արդվինը, Բաթումին տվեց ինքնավարություն Վրաստանի կազմում, և Նախիջևանը հանձնվեց Ադրբեջանի հովանավորությանը»²⁹¹: Նույն պայմանագրի վերաբերյալ Ռուսաստանի արտգործօժողկոմատը տվել է հետևյալ ձևակերպումը. «Մենք ամբողջովին և անվերապահ կերպով ճանաչեցինք թուրք ժողովրդի Ազգային ուխտը»: «Մոսկվայի պայմանագիրը, - գրում է Կ. Սարդարյանը, - ճշտեց այն հարաբերությունները, որ արդեն կյանքը հաստատել էր երկու շարժումների (նկատի ունի՝ բոլշևիկյան և քեմալական - Ա.Ղ.) միջև»²⁹²:

Փաստերը ռամոզում են, որ ՌՍՖՆՅՐ կառավարությունը Մոսկվայի բանակցությունների արդյունքով ամենևին էլ մտադիր չէր Հայաստանի տարածքային-սահմանային խնդիրներին քիչ թե շատ հայանպաստ լուծում տալ: ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղբյուրոն և ՌՍՖՆՅՐ կառավարությունը ոչ հայանպաստ կեցվածք ցուցաբերեցին ոչ միայն հայ-թուրքական սահմանային խնդրում, այլև Լեռնային Ղարաբաղի հարցում, որը խորհրդային պետության համար, փաստորեն, ներքին խնդիր էր:

Հիշեցնենք, որ, երբ 1921թ. հուլիսի 5-ին Լեռնային Ղարաբաղը միացվեց Ադրբեջանին, այդ ժամանակ չկային ոչ դաշնակցականների փետրվարյան ապստամբության վտանգը, ոչ Վրացյանի սադրիչ հեռագրերը, ոչ Կրոնշդատի խռովությունը, Վրաստանը արդեն խորհրդայնացել էր, իսկ երկիրն էլ անցում էր կատարել հեռանկար խոստացող ՆԷՊ-ին: Բայց այս անգամ էլ կուսակցության ղեկավար մարմինները Ղարաբաղի հարցը լուծեցին Ադրբեջանի օգտին՝ պատմական, էթնիկական հատկանիշները զոհաբերելով, այսպես կոչված, տնտեսական գործոնին: Այստեղ նախապատվությունը տրվեց Ադրբեջանին, քանզի վերջինիս նավթի գործոնի և մուսուլմանական Արևելքի հետ կապվելու տեսակետից Մոսկվայի համար ավելի մեծ արժեք ուներ, քան աղքատիկ Հայաստանը: Տեղին է նշել, որ Թուրքիային ու Ադրբեջանին արված նվիրատվությունների գործում քիչ ծառայություններ չեն մատուցել նաև հայ առաջնորդներ, բոլշևիկներ, ովքեր ամենից շատ էին տարված համաշխարհային հեղափոխության սին գաղափարներով:

²⁹¹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 571.

²⁹² Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., էջ 121:

Խորհրդային Ռուսաստանի թողվածությամբ մոսկովյան բանակցությունները քեմալականների համար այնքան նպաստավոր դասավորվեցին, որ նրանք անգամ գերակատարեցին «Ազգային ուխտով» նախատեսված տարածքային պլանը և լրացուցիչ կերպով բռնազավթեցին և մինչև օրս էլ տիրում են Սուրմալուի գավառին, աստվածաշնչյան մի երկրամաս, որը երբևէ չէր եղել Օսմանյան կայսրության կազմում: Խորհրդային կողմի ցանկությամբ «Ազգային ուխտից» որոշ ուղղում-սրբագրում կատարվեց այն հաշվով, որ Սուրմալուի գավառը Թուրքիային հանձնելու դիմաց Վրաստանը ստացավ Բաթումն իր շրջակա տարածքով: Անգամ թուրք պատմաբան Թևիկ Բիլիբլիօղլին է վկայում, որ «Բաթումի փոխարեն մեզ առաջարկվեց Սուրմալուի գավառը»²⁹³:

Տարածքային կորուստների առումով Մոսկվայի պայմանագիրը ավելի վնասակար եղավ, քան անգամ Բրեստ-Լիտովսկինը: Բանն այն է, որ վերջինում խոսք չէր գնում Սուրմալուի գավառի մասին: Մինչդեռ Մոսկվայի պայմանագրով Սուրմալուն տրվում էր Թուրքիային, կարծես նրա համար, որպեսզի Բաթումի շրջանն էլ անցնի Վրաստանին:

Մոսկվայի պայմանագիրը անընդունելի էր հայ ժողովրդի համար նաև այն տեսակետից, որ Շարուր-Նախիջևանը, որի պատկանելիության մասին Բրեստի պայմանագրում հիշատակություն չկար, ապա Մոսկվայինում Թուրքիայի պարտադրանքով այն անցավ Ադրբեջանի հովանավորության ներքո:

Մոսկվայի՝ ռուս-թուրքական պայմանագիրը Սևրի պայմանագրի հակաքայլն էր: Խորհրդային Ռուսաստանը առաջին երկիրն էր, որ Մոսկվայի պայմանագրով բացահայտ կերպով դեմ դուրս եկավ Թուրքիային ուժով պարտադրված, Ալ. Մյասնիկյանի բնորոշմամբ «Այդ երկրորդ ասիական վերսալի՝ Սևրի պայմանագրին»²⁹⁴: Դրանով Մոսկվան քաղաքական և դիվանագիտական մեծ աջակցություն ցույց տվեց Անգորային:

Մոսկվայի պայմանագրի միջազգային քաղաքական հայավնաս հետևանքներից մեկը եղավ այն, որ այդ պայմանագիրը ավելի հեշտացրեց Անտանտի տերությունների գործը Սևրի պայմանագիրը վերանայելու ուղղությամբ: Ժամանակակից ռուս հեղինակ Ա. Իգոլկինի գնահատմամբ Մոսկվայի պայմանագիրը վնասել է ոչ

²⁹³ «Երեկոյան Երևան», 9 հունիսի 1988 թ.:

²⁹⁴ Մյասնիկյան Ալ., Երկեր, հինգ հատորով, հ. 5, Ե., 2007, էջ 413:

միայն հայ ժողովրդի ու Հայաստանի, այլև ռուս ժողովրդի ու Ռուսաստանի պետական շահերին²⁹⁵: Մոսկվայի պայմանագրի կնքումը թուրքերի համար ունեցավ ռազմաքաղաքական այն նշանակությունը, որ ապահովեց Թուրքիայի թիկունքը Արևելքում և հնարավորություն ընձեռեց այնտեղ տեղակայված թուրքական զորքին տեղափոխել արևմուտք և ապահովել նրա վերջնական հաղթանակը Յունաստանի նկատմամբ: 1921 թ. մարտի վերջին Կ.Պոլսի «Վերջին լուր» թերթը հայտնում է, որ Անգորայի կառավարության ռազմական կոմիսար Ֆեվզի փաշան հեռագիր է ուղարկել Զ. Կարաբեքիր փաշային, որով խնդրում էր մի զորաբաժին առանձնացնել Կովկասյան ճակատից և ուղարկել Պրուսայի (Բուրսա) ճակատ: Ֆեվզի փաշան իր պահանջը հիմնավորում էր նրանով, որ Մոսկվայի հետ հաշտության պայմանագրի կնքումից հետո Արևելյան ճակատում այլևս որևէ վտանգ չկա: Իսկ հունական թերթի մի աղբյուր հաղորդում էր, որ Կարաբեքիրի բանակի մեծ մասը՝ 40 հազար զինվոր, փոխադրվել է Եսկիչեհիր²⁹⁶: Այս համատեքստում ավելորդ է խոսել ռազմաֆինանսական այն հսկայածավալ օգնության մասին, ինչը Մոսկվայի կոնֆերանսում Գ. Հիչերինի կողմից տրված գրավոր պարտավորվածությամբ Ռուսաստանը ցուցաբերեց Թուրքիային²⁹⁷: «Մոսկվայի պայմանագրով, - գրում էր Անգորայում Ռուսաստանի դեսպան Ս. Արալովն իր հուշերում, - մեր կողմից Կարսի մարզի հանձնումը Թուրքիային բարոյապես բարձրացրեց թուրք ժողովրդի ոգին, նրան հանգստություն ներշնչեց իր արևելյան սահմանների համար և վստահություն այն մասին, որ Խորհրդային Ռուսաստանը հեղափոխական Թուրքիայի բարի հարևանն է ու անկեղծ բարեկամը»²⁹⁸:

* * *

Տալով Մոսկվայի պայմանագրի միջազգային իրավական գնահատականը՝ կարելի է փաստել հետևյալ հանգամանքները: Եթե խնդիրը դիտարկում ենք միջազգային իրավունքի տեսանկյուն

²⁹⁵ Иголкин А., Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет (ՊԲՀ, Ե., 2002, թիվ 1, էջ 3 և 24):

²⁹⁶ «Վերջին լուր», Կ.Պոլիս, 30 մարտի 1921 թ., 1 ապրիլի 1921 թ.:

²⁹⁷ Այդ մասին հանգամանորեն տես ДВП СССР, т. 3, М., 1959, с. 675, т. 4, М., 1960, с. 145–146, Всемирная история, АН СССР, т. 8, М., 1961, с. 454, Զոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը ..., էջ 319:

²⁹⁸ Аралов С. И., Воспоминания советского дипломата 1922-1923, М., 1960, с. 213.

նից, ապա ակնհայտ է դառնում, որ Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի ու նորմերի կոպիտ խախտումներով:

Ամենից առաջ Մոսկվայի պայմանագրում զավեշտն այն է, որ Ռուսաստանը և Թուրքիան պայմանագիր են կնքում սահմանների վերաբերյալ՝ իրականում իրար հետ չունենալով տարածքային ոչ մի մետր շփում: Բանն այն է, որ անդրկովկասյան հանրապետությունները, եթե անգամ լիիրավ ինքնիշխան պետություններ չէին համարվում, համենայն դեպս պայմանագրի ստորագրման պահին Անդրկովկասը ՌՍՖՍՀ տարածք չէր հանդիսանում:

Երկրների ու ժողովուրդների պատմության մեջ քիչ կարելի է հանդիպել այնպիսի անարդարության ու խայտառակության, ինչպիսին տեղի ունեցավ 1921թ. մարտի 16 (18)-ին Մոսկվայի չարաբաստիկ ռուս-թուրքական պայմանագրով:

Իրողությունն այն է, որ միջազգայնորեն փաստորեն չճանաչված երկու պետություն՝ խորհրդային և քենալական կառավարությունների ներկայացուցիչները կնքել են պայմանագիր (դաշնագիր) և որոշել մեկ այլ՝ երրորդ պետության՝ Հայաստանի սահմանները առանց վերջինիս գիտության ու մասնակցության:

Բանն այն է, որ Երևանի (Լեզրան-Դրո) 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով խաղաղ ճանապարհով խորհրդայնացած Հայաստանը դիտվում էր անկախ պետություն, մանավանդ, որ նա հանդիսանում էր միջազգայնորեն (դե ֆակտո և դե յուրե) ճանաչված Հայաստանի Հանրապետության իրավահաջորդը:

Հավելենք նաև, որ 1921 թ. գարնանը խորհրդային Ռուսաստանը տակավին ռազմաքաղաքական դաշինք (պայմանագիր) չէր կնքել Հայաստանի հետ, թեև նման պայմանագրերում ամրագրվում էր, որ ճանաչվում էին պայմանավորվող կողմերի ինքնիշխանությունը և անկախությունը: Ի դեպ, 1920 թ. սեպտեմբերի 30-ին ռազմաքաղաքական նման պայմանագիր կնքել էին ՌՍՖՍՀ և Ադրբեջանի, իսկ 1921 թ. մայիսին՝ Վրաստանի, բայց դեռ ոչ ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի միջև: Ուստի Ռուսաստանը տակավին իրավասու չէր պաշտպանել Հայաստանի շահերը միջազգային խորհրդածողովներում: Թեև Ռուսաստանի օրինակով Հայաստանում էլ էր հաստատվել կոմունիստական վարչակարգ, սակայն 1921 թ. մարտ ամսվա դրությամբ ՌՍՀ պայմանագրային ոչ մի պարտավորվածությամբ կապված չի եղել խորհրդային Ռուսաստանի հետ: Եվ

վերջինս չի ունեցել իրավական որևէ հիմք տնօրինելու Հայաստանի տարածքները և որոշելու նրա պետական սահմանները²⁹⁹:

Իրողությունը մնում է այն, որ Խորհրդային Հայաստանի՝ որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտի. պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել բանակցություններին այն դեպքում, երբ քննության էին ենթարկվում նրա համար կենսական նշանակություն ունեցող տարածքային-սահմանային հարցեր: Որքան էլ զավեշտալի է, Հայաստանի պատվիրակությանը անգամ չի թույլատրվել ներկա լինել պայմանագրի ստորագրման արարողությանը, ինչին սովորաբար ներկա են գտնվում անգամ լրագրողներ, հասարակայնության ներկայացուցիչներ: Ավելին, պարզվում է, որ Հայաստանի պատվիրակությունը անգամ տեղյակ չի եղել, թե երբ է ստորագրվել պայմանագիրը:

Կարելի է վստահաբար ասել, որ, եթե Հայաստանի պատվիրակությանը թեկուզ թույլատրվեր մասնակցելու Մոսկվայի կոնֆերանսին, միևնույնն է, այդ մասնակցությունը գործնական նշանակություն չէր ունենա այնպես, ինչպես չունեցավ հետագայում Կարսի բանակցությունների ժամանակ, որովհետև Խորհրդային կառավարությունը արդեն կանխավ որոշել էր իր ռազմավարական ուղեգիծը՝ հայկական տարածքների հաշվին սիրաշահել «Արևելքի հեղափոխության միջնաբերդ Թուրքիային»:

Հայաստանը բնավ չէր լիազորել (ընդգծումը հեղինակինն է) Ռուսաստանին, որ նա Խորհրդա-թուրքական բանակցությունների ժամանակ հանդես գար նաև Հայաստանի (հայ ժողովրդի) անունից և կնքեր նրա կենսական շահերին անմիջապես առնչվող պայմանագիր: Նման փաստաթուղթ գոյություն չունի այն պարզ պատճառով, որովհետև Հայաստանը իր պատվիրակությունն էր գործուղել Մոսկվա՝ ներկայացնելու և պաշտպանելու իր սեփական շահերն ու պահանջները:

Միջազգային դիվանագիտության պատմության մեջ եզակի են այն դեպքերը, երբ բանակցող երկու պետություններ քննարկում և համատեղ վճիռներ են կայացնում մեկ այլ անկախ՝ երրորդ պետության տարածքային-սահմանային խնդիրների վերաբերյալ առանց վերջինիս գիտության ու մասնակցության: Ընդ որում, միջազգային այդ (Մոսկվայի) պայմանագրի որոշումները երրորդ կողմին՝ տվյալ դեպքում Հայաստանին, պարտադրվեցին մի քանի

²⁹⁹ Саркисян Е., "За кулисами...", с. 81.

ամիս անց, մեկ այլ՝ Կարսի պայմանագրով՝ անվերապահ ճանաչելու և կատարելու հրամայականով³⁰⁰:

Այս ամենից նախ կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանի (էլ չենք ասում՝ Թուրքիայի) համար քաղաքական արժեք չի ունեցել Հայաստանի՝ որպես պետական սուբյեկտի գործոնը: Հերթական անգամ ապացուցվեց, որ բոլշևիկների հռչակած ազգերի ազատ ինքնորոշման պահանջը ընդամենը խաբկանք էր, ճնշված ազգերին հրապուրող կոմունիստական քարոզչություն: Այնպես, ինչպես «Թուրքահայաստանի ինքնորոշման մասին» Վ. Լենինի հռչակած դեկրետին շուտով հաջորդեց Բրեստի ստորագուցիչ պայմանագիրը, կարծես նույն պատմության հեզնանքով Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախությունը ճանաչած Երևանի համաձայնագրին պիտի հաջորդեր Բրեստից վատթարը՝ Մոսկվայի պայմանագիրը, որովհետև Բրեստի պայմանագրում գոնե խոսք չկար Սուրմալուի և Նախիջևանի մասին:

Այսպիսով, միջազգային իրավական տեսակետից Մոսկվայի պայմանագիրը Հայաստանին վերաբերող մասով հակասում է միջազգային պայմանագրային իրավունքի ընդունված հիմնական նորմերին, այն է՝ անտեսված են Հայաստանի՝ որպես պետական սուբյեկտի բանակցություններին մասնակցելու, նրա կամքը ազատ արտահայտելու կամ գոնե նրա կարծիքը հարցնելու պայմանները, որովհետև սա մի խորհրդածողով էր, որտեղ անմիջականորեն շոշափվում էին Հայաստանի կենսական շահերը՝ տարածքային-սահմանային խնդիրները:

Այս առնչությամբ միջազգայնագետ Յու. Բարսեղովի կարծիքով՝ միջազգային իրավական առումով Մոսկվայի պայմանագրում խախտված են միջազգային պայմանագրով ընդունված հիմնարար պայմանները՝ 1/սուբյեկտներին վերաբերող պայմանը, 2/կողմերի ազատ կամք արտահայտելու պայմանը և 3/օբյեկտի իրավաչափության պայմանը և պայմանագրի նպատակը³⁰¹:

Միջազգային պայմանագրի իրավաբանորեն ուժի մեջ լինելը ենթադրում է հետևյալ պայմանների պարտադիր լինելը. կողմերի առկայությունը, միջազգային իրավասուբյեկտությունը, այդ սուբյեկտների իրավաչափ համաձայնությունը, իրավասու օբյեկտը և

³⁰⁰ Տե՛ս Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը (ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 38):

³⁰¹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 432.

պայմանագրի նպատակը³⁰²: Եթե այս պայմաններից որևէ մեկը բացակայում է, ապա պայմանագիրը չի կարող իրավական ուժ ունենալ:

Միջազգային պայմանագրային իրավունքի նորմերից է այն, որ միջազգային պայմանագիր կնքելու համար պետք է մասնակցություն ունենան այն սուբյեկտները, որոնք անմիջականորեն շահագրգռված են պայմանագրի խնդրում: Այս տեսակետից Մոսկվայի պայմանագիրը բոլորովին անտեսում էր հայ ժողովրդի օրինական շահերն ու անվիժելի իրավունքները, որովհետև այն կնքվել է առանց Հայաստանի մասնակցության ու համաձայնության: Ավելին, ինչպես արդեն ասվեց, Մոսկվայի պայմանագիրը ստորագրած կողմերը, ըստ էության, համարվել են միջազգայնորեն չճանաչված: Այդ իմաստով խախտվել են միջազգային իրավունքի հետևյալ հավերժ սկզբունքները (извечных максимах). «ոչ ոք չի կարող տալ այն, ինչ չունի» և «ոչ ոք չի կարող տալ ավելի մեծ իրավունք, եթե ինքը դա չունի»³⁰³: Հետևաբար ՌՍՖՍՀ և ԹԱՄԺ կառավարությունները Մոսկվայի պայմանագրի ստորագրման պահին չեն ճանաչվել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, ուստի և չունեին միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն: Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 53-րդ հոդվածում ասված է. «Պայմանագիրն անվավեր է, եթե կնքվելու պահին հակասել է միջազգային հանրային իրավունքի անբեկանելի հիմնադրույթին»³⁰⁴:

Մյուս կողմից, տարածքների գրավման և յուրացման հարցում միջազգային պայմանագրերի իրավունքում ընդունված է վաղեմության ժամկետի՝ էստոպելի սկզբունքը (ինստիտուտը): Այդ մասին է վկայում միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 45-րդ հոդվածը: Այնտեղ նշվում է, որ վաղեմության ժամկետի պահանջը գործում է, և տվյալ պայմանագիրը վավերական է այն դեպքում, երբ պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելյայն համաձայնվել է կատարված փաստին³⁰⁵: Իսկ երբ տուժող կողմն ինչ-որ ձևով ար-

³⁰² Նույն տեղում:

³⁰³ Նույն տեղում, էջ 433:

³⁰⁴ «Ազգ», Երևան, 16 մարտի 2007 թ.:

³⁰⁵ Ասլանյան Ս., Վաղեմության ժամկետի կամ էստոպելի կիրառման անթույլատրելիությունը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի առնչությամբ («Վասն արդարության», 2003, թիվ 47-48, էջ 68):

տահայտում է իր դժգոհությունը հայտարարությունների, նոտաների, բողոքների և այլնի միջոցով, ապա վաղեմության ժամկետը դադարում է գործելուց: Հակառակ դեպքում կնշանակի, որ տուժող կողմը լռելյայն ընդունել է կատարված տարածքային փոփոխությունը:

Թեև օրենքը հետադարձ ուժ չի ունենում, սակայն պատմաքաղաքական եղելությունների պարզաբանման տեսակետից հետաքրքրական են հետևյալ հանգամանքները: Նախ, Հայաստանի պատվիրակությունը Մոսկվայի պայմանագրի բովանդակությանը տեղեկացել է միայն նրա կնքումից հետո, այսինքն՝ կատարվածից հետո (պոստֆակտում): Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասն այնքան դաժան ու աղաղակող էր, որ Հայաստանի ղեկավարությունը ստիպված հանդես է եկել հայտարարությամբ՝ իր անհամաձայնությունն արտահայտելով պայմանագրի վերաբերյալ, թեև համոզված լինելով, որ դա գործնական նշանակություն չի ունենա:

Վաղեմության ժամկետի սկզբունքը կոնկրետացնելով Մոսկվայի պայմանագրի պարագայում՝ տեսնում ենք, որ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Հայաստանի կառավարությունը բողոք է ներկայացրել Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության է լուծել Հայաստանի տարածքների հարցը: Մասնավորապես կարելի է հիշատակել Հայաստանի արտգործկոմ, պատվիրակության ղեկավար Ա. Բեկզադյանի 1921 թ. ապրիլի 15-ի հայտարարությունը՝ ուղղված Ռուսաստանի արտգործոժողկոմ և պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինին: Մայիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Ա. Բեկզադյանի հաշվետվությունը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, այնուամենայնիվ, հավանություն է տվել պատվիրակության քաղաքական գծին³⁰⁶:

³⁰⁶ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 4: Ի դեպ, նշենք, որ Մոսկվայի պայմանագրի առնչությամբ բողոք է հայտնել նաև արդեն տապալված Վրաստանի Հանրապետության դեսպանությունը ԱՄՆ-ում: 1921 թ. ապրիլի 12-ին հիշյալ դեսպանությունը նոտայով բողոքում է մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Արդվինը, Արդահանը և Օլթին ռուսական կառավարության կողմից Անգորային տալու վերաբերյալ (տե՛ս ԱՄՆ-ի դեսպարտամենտի փաստաթղթերը (1910-1929 թթ.), միկրոֆիլմերի հավաքածու, N 1, ց. 1, գ. 761-767): Գաղտնիք չէ, որ Վրաստանը հավակնում էր Կարսի մարզի առանձին շրջաններին՝ Արդահանին և Օլթին: Դա ակներև դարձավ նաև 1945թ. Պոտսդամի խորհրդաժողովի ժամանակ:

իրավագետ Ս. Ասլանյանը Հայաստանի կառավարության ժամանակին արված բողոքը ծանրակշիռ փաստարկ է համարում Մոսկվայի, հետևապես և ավելի ուշ կնքված Կարսի պայմանագրերի նկատմամբ վաղեմության ժամկետի սկզբունքը չկիրառելու համար³⁰⁷: Նա համոզմունք է հայտնում, որ էստոպելի սկզբունքը անթույլատրելի է կիրառել Մոսկվայի պայմանագրի առնչությամբ՝ հետևյալ հիմնավորումներով, ա) կնքվել է ուժի կիրառման հետևանքով, բ) շահագրգիռ կողմին անտեսելով, գ) հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքին հակասելով, դ) պետությունների սուվերենության և անկախության սկզբունքները ոտնահարելով և այլն³⁰⁸:

Ինչպես տեսնում ենք, խնդրահարույց է մնում Մոսկվայի պայմանագրի վավերականության հարցը: Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունների միջև կնքված պայմանագրերի օրինականության համար վճռորոշ է միջազգային իրավունքին համապատասխանելը: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ³⁰⁹:

Այս տեսակետից կրկին փաստենք, որ 1921 թ. դրությամբ ՌՍՖՍՀ համարվում էր միջազգայնորեն գրեթե չճանաչված պետություն, հետևաբար չէր հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ: Ուստի ընդունված է ասել, որ նրա կառավարությունը չուներ միջազգային որևէ պայմանագիր կնքելու իրավասություն: Ֆորմալ իրավական տեսակետից դա ճիշտ է: Սակայն փաստական-գործնական տեսակետից կարելի է տեսնել, որ ՌՍՖՍՀ կառավարությունը, սկսած 1918 թ. մարտի 3-ի Բրեստի պայմանագրից մինչև 1921 թ. փետրվար-մարտ ամիսները, արդեն հասցրել էր կնքել մեկ տասնյակից ավելի միջազգային բնույթի պայմանագրեր ու համաձայնագրեր ճանաչված ու չճանաչված բազմաթիվ պետությունների հետ: Այստեղ խնդիրն այն է, որ եթե այս կամ այն երկրի քաղաքական ու տնտեսական շահը թելադրում է, ապա նա կարող է պայմանագիր կնքել՝ նույնիսկ լայրնորություն չտալով տվյալ պետության միջուկայնորեն չճանաչված լինելու հանգամանքին: Օրինակ,

³⁰⁷ Ասլանյան Ս., նշվ. աշխ., էջ 69:

³⁰⁸ Նույն տեղում, էջ 69-70:

³⁰⁹ Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հողվածների ժողովածու), էջ 17-18:

միջազգային գերտերություն համարվող Մեծ Բրիտանիան տասը ամիս բանակցելուց հետո 1921 թ. մարտի 16-ին առևտրական համաձայնագիր կնքեց ՌՍՖՍՀ հետ՝ և դրանով իսկ փաստացի (de facto) ճանաչելով Ռուսաստանի կառավարությանը: Այնպես որ բերված կռվանով կարելի է վիճարկել, մանավանդ որ Առաջին աշխարհամարտից հետո փլուզվել էին չորս կայսրություններ, աշխարհի քաղաքական քարտեզի վերածննամբ առաջացել էին տակավին չճանաչված մի քանի տասնյակ նոր պետություններ:

Ինչպես արդեն ասվեց, նույն կերպ չճանաչված էր ԹԱՄԺ կառավարությունը, որը իրավասու չէր պայմանագիր կնքելու Թուրքիայի անունից: Ավելին, ԹԱՄԺ կառավարությունը համարվում էր ապստամբ ու անօրինական, իսկ նրա նախագահ Մ. Բենալ փաշան՝ իբրև փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ. թուրքական ռազմական դատարանը 1920 թ. գարնանը նրա նկատմամբ կայացրել էր մահապատժի դատավճիռ: Բայց դա չխանգարեց Ռուսաստանին, հետո նաև Արևմուտքի տերություններին համաձայնության գալ և պայմանագրեր կնքել տակավին չճանաչված այդ կառավարության հետ:

Այսպիսով, երկու տակավին միջազգայնորեն չճանաչված պետություն՝ ՌՍՖՍՀ և քեմալական Թուրքիան, պայմանագիր են կնքել և որոշել մեկ այլ՝ երրորդ պետության՝ Հայաստանի տարածքն ու սահմանները առանց նրա գիտության ու մասնակցության: Կնշանակի, որ ի սկզբանե այն անօրինական ու անվավեր էր և չի կարող պարտավորություն պարունակել ներկայիս Հայաստանի Հանրապետության համար, առավել ևս որոշել հայ-թուրքական պետական սահմանը:

Գլուխ երրորդ

ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. ԹՈՒՐԶ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մոսկվայի պայմանագրին իրավական ուժ տալու, միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցնելու նպատակով ձևակերպվեց 15-րդ հոդվածը, որը պարտավորեցնում էր Ռուսաստանին քայլեր ձեռնարկելու, որպեսզի անդրկովկասյան հանրապետությունները իրավաբանորեն ճանաչեն Մոսկվայի պայմանագրի սահմաններն ու պայմանները (հոդվածները): Դրա համար անհրաժեշտ էր նույնաբնույթ պայմանագիր կնքել Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև: Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո Յու. Քենալը հայտարարեց, որ «Անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագրի կնքման հարցը մեծամասամբ իրենից ներկայացնում է սովորական ձևականություն, քանզի Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը պարտավորվում էր իր բոլոր ուժերն ու ազդեցությունը գործադրել Անդրկովկասի հանրապետությունների վրա Թուրքիայի հետ պայմանագիր կնքելու համար»¹:

Նախատեսվում էր, որ առանց հապաղելու թուրք-անդրկովկասյան կոնֆերանս կիրավիրվի և համապատասխան պայմանագիր կկնքվի նրանց միջև:

Մոսկվայում կողմերը պայմանավորվել էին, որ թուրքական պատվիրակությունը հայրենիք վերադառնալու ճանապարհին Մոսկվայի պայմանագրի ոգով համապատասխան պայմանագրեր կկնքի անդրկովկասյան հանրապետությունների հետ: Նման պայմանագրի կնքումը թելադրված էր այն հանգամանքով, որ Հայաստանը և Անդրկովկասի մյուս երկու հանրապետությունները, թեկուզ ձևականորեն, անկախ համարվող պետություններ էին: Ուստի Մոսկվայի պայմանագրով զծված թուրք-անդրկովկասյան սահմանը կամա թե ակամա պետք է իրավաբանորեն համաձայնեցվեր ու վավերացում ստանար նաև այդ սահմանների անմիջական

¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 69:

իրավատերերի՝ Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների կողմից:

Մոսկվայի պայմանագրի ստորագրումից մի քանի օր անց՝ մարտի 24-ին, Գ. Չիչերինը նամակով դիմում է ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին հետևյալ բովանդակությամբ. «Օրերս թուրքական պատվիրակությունը Թիֆլիսով մեկնելու է տուն: Այնտեղ պետք է պայմանագրեր ստորագրվեն անդրկովկասյան հանրապետությունների հետ: Մոսկվայի պայմանագիրը բավարար հիմք է, որի հիման վրա Թուրքիան պետք է հատուկ պայմանագրեր կնքի Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հետ: Այստեղ՝ Մոսկվայում, թուրքական պատվիրակությունը կտրականապես մերժեց մեր առաջարկը կովկասյան պատվիրակությունների հետ ընդհանուր կոնֆերանս գումարելու և այդ հանրապետությունների հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ակնհայտ է, որ թուրքերը ցանկանում են Թիֆլիսում՝ մեր անմիջական ազդեցությունից դուրս, հասնելու լրացուցիչ արդյունքների, ինչ-որ բան պոկելու (կորզելու)»²: Չիչերինը կարծում էր, որ թուրք պատվիրակների Թիֆլիս հասնելուն պես այնտեղ թուրք-անդրկովկասյան բանակցություններ կսկսվեն: Դրա համար նա ԿԿ-ին առաջարկում էր Թիֆլիս ուղարկել կովկասյան գործերին քաջատեղյակ ներկայացուցիչ, որը կմվիրվի այդ աշխատանքների: Նա այդպիսի թեկնածու էր համարում Բ. Լեգրանին կամ Լ. Ստարկին³:

ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոն ապրիլի 3-ին թիվ 8 նիստում (անցկացված հեռախոսային քվեարկությամբ) հավանություն տվեց և հաստատեց Գ. Չիչերինի առաջարկությունը, որպեսզի «Կովկասյան խորհրդային հանրապետությունները նախապես ՌՍՖՍՀ կառավարության հավանությանը պետք է արժանացնեն այն պայմանագրերը, որոնք նրանք պետք է ստորագրեն Թուրքիայի հետ»:⁴

Այդ որոշումից մեկ օր առաջ՝ ապրիլի 2-ին, ՀՍԽՍՀ արտգործ-ժողկոմ Ալ. Բեկզադյանը Գ. Չիչերինի գիտությամբ (հանձնարարությամբ) Մոսկվայից հեռագիր է ուղարկում Բաքու՝ Ադրբեջանի արտգործժողկոմ Մ. Յուսեյնովին, Բաքվում՝ Հայաստանի լիազոր

² Геноцид армян, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 475.

³ Նույն տեղում, էջ 476:

⁴ Политбюро ЦК РКП(б)-ВКП(б). Повестки дня заседаний, каталог, т. 1, 1919–1929, М., 2000, с. 93, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 482.

ներկայացուցիչ Միք. Աթաբեկյանին, Թիֆլիս՝ Վրաստանի արտգործոժողկոմ Մ. Օրախելաշվիլուն, պատճենը՝ Դ. Շահվերդյանին: Հեռագրում Բեկզադյանը այն միտքն է հայտնում, որ առաջիկայում Թուրքիայի հետ նախապատրաստվելիք խորհրդաժողովում անհրաժեշտ է, որ Անդրկովկասի երեք հանրապետությունները «նախապես պայմանավորվեն և մշակեն ընդհանուր ուղեգիծ»⁵: Հասկանալի պատճառներով Բեկզադյանը ցանկալի է համարում, որ այդ նախառեծնությունը իր վրա վերցնի Վրաստանը կամ Ադրբեջանը:

Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո թուրքական պատվիրակությունը անցավ Կովկաս: Ծրագրվում էր՝ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, ապրիլի կեսերին պետք է պայմանագիր կնքվեր անդրկովկասյան հանրապետությունների հետ: Նման պայմանագրի կնքումը անհրաժեշտ էր ոչ միայն և ոչ այնքան նրա համար, որ Անդրկովկասի հանրապետությունները դիտվում էին անկախ կամ ինքնուրույն պետություններ, այլ որ Թուրքիայի հետ գծված նոր սահմանը կամա թե ականա պետք է մի նոր պայմանագրով իրավաբանորեն համաձայնեցվեր ու վավերացվեր նաև այդ սահմանների անմիջական կողմերի՝ Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների կողմից:

Սակայն գալով Անդրկովկաս (Բաքու և Թիֆլիս)՝ Յու. Քեմալ բեյը հայտարարեց, որ ինքը լիազորություն չունի Հայաստանի հետ նոր պայմանագիր կնքելու: Նա նկատի ուներ Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Անդրկովկասյան մյուս երկու հանրապետությունները, Մոսկվայի հանձնարարականով համերաշխություն ցուցաբերելով, հայտարարեցին, որ եթե նման պայմանագիր չի կնքվելու Հայաստանի հետ, ապա իրենք համաձայն չեն պայմանագիր կնքել Թուրքիայի հետ: Մյուս կողմից թուրք դիվանագետները պնդում էին, որ քանի դեռ Հայաստանի հետ չի կնքվել նոր պայմանագիր, Ալեքսանդրապոլիքը մնում է ուժի մեջ: Խոսքը վերաբերում է մի պայմանագրի, որը չի ճանաչվել ու վավերացվել անգամ իր՝ Թուրքիայի կողմից⁶:

Մոսկվայից Բաքու և Թիֆլիս ժամանած թուրք պատվիրակ-

⁵ Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Ե., 1981, էջ 121-122, Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 134:

⁶ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 706.

ները մտքերի փոխանակություն ունեցան Գ. Օրջոնիկիձեի և Մ. Յուսեյնովի հետ՝ ցանկություն հատնելով կնքելու անջատ (առանձին) պայմանագրեր յուրաքանչյուր հանրապետության հետ, իսկ խորհրդային կողմն էլ պնդեց մեկ միասնական պայմանագրի պահանջը: Եվ դրանից հետո կոնֆերանսի հրավիրման հարցը սկսեց ձգձգվել:

Թուրքերի մարտավարությունն այն էր, որ առանձին բանակցությունների միջոցով կովկասյան հանրապետություններից ինչ-որ բան կորզել, եթե, իհարկե, կորզելու բան մնացել էր: Եվ որպեսզի այդ թույլ չտալ, անհրաժեշտ էր, որ կովկասյան խորհրդային հանրապետությունները հանդես գան միասնաբար, Մոսկվայի հետ լիովին կապի մեջ ու համախորհուրդ:

Բեկզադյանը ապրիլի 6-ին հեռագրում էր Թիֆլիս Վրաստանում ՅՍԽՅ լիազոր ներկայացուցիչ Դ. Շահվերդյանին: Նրանում մասնավորապես ասվում էր, որ Թուրքիան «կամենում է առանձին-առանձին պայմանավորվել երեք հանրապետություններից յուրաքանչյուրի հետ և մեր վզին նոր ծանր պայմաններ փաթաթել: Այդ բանը պետք է թույլ չտալ ինչ գնով էլ լինի»⁷:

Չիչերինը ծիշտ էր կռահել, որ թուրքերի հետ բանակցությունների ժամանակ հնարավոր էր Ադրբեջանի կողմից «անցանկալի թեքում» դեպի Թուրքիա: Դրա համար էլ նա անհրաժեշտ էր գտնում, որ անդրկովկասյան հանրապետությունների՝ Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերը նախապես արժանանան ՌՍՖՍՀ կառավարության հավանությանը⁸:

Գ. Չիչերինը ապրիլի 4-ին հեռագրում է Թիֆլիս՝ Գ. Օրջոնիկիձեին՝ զգուշացնելով, որ անթույլատրելի է Յայաստանի և Ադրբեջանի առանձին բանակցությունները քեմալականների հետ: Ըստ Չիչերինի ցուցումների՝ նոր կնքվելիք պայմանագրով պետք է չեղյալ համարվեն Թուրքիայի հետ կնքված նախորդ բոլոր պայմանագրերը: Դա հատկապես վերաբերում էր Ալեքսանդրապոլի պայմանագրին: Նոր պայմանագրում անթույլատրելի էր այնպիսի կետ, որը կխախտեր կովկասյան հանրապետությունների ինքնիշխանությունը: Չիչերինը գտնում էր, որ նոր պայմանագրում կարելի էր մտցնել համաներման մասին հոդված, բռնագաղթվածների վերադարձ և այլն: Ադրբեջանի մասով պայմանագրի հիմքում

⁷ Բեկզադյան Ա., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, էջ 123:

⁸ Геноцид армян, (документы и комментарий); т. 2, ч. 2, с. 478–479.

պետք է դրվեր Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածը: Չպետք է թույլ տրվեր, որ Թուրքիան հանդես գար Ադրբեջանի հովանավորի դերում: Ինչ վերաբերում էր հայ-թուրքական սահմանին, ապա Գ. Չիչերինի հրահանգով դրա համար պետք է հինք հանդիսանար Մոսկվայի պայմանագիրը՝ իր լրացուցիչ արձանագրությամբ⁹:

Թուրք-անդրկովկասյան հարաբերություններում Գ. Չիչերինին ամենից ավելի անհանգստացնում էին թուրք-ադրբեջանական առանձնահատուկ հարաբերությունները: Եվ պատահական չէ, որ Օրջոնիկիձեին ուղղված ապրիլի 4-ի հեռագրից բացի, ապրիլի 12-ին նա նույնաբնույթ հեռագիր է ուղղում Ադրբեջանի արտգործկոմիսար Մ. Յուսեյնովին՝ հրահանգելով, որ անթույլատրելի է Թուրքիայի միջամտությունը կովկասյան հանրապետությունների ներքին գործերին: Չիչերինը դարձյալ շեշտում էր, որ Թուրքիայի հետ ապագա պայմանագրում կամ պայմանագրերում ոչ մի դեպքում չպետք է սահմանափակվի կովկասյան հանրապետությունների ինքնիշխանությունը: Նման ինքնիշխանության սահմանափակման արտահայտություն էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Թուրքերը մտադիր էին անջատ պայմանագիր կնքել Ադրբեջանի հետ: Դժվար չէ կռահել, թե դա ինչպիսի պայմանագիր էր լինելու: Ի դեպ, Մոսկվայից վերադարձող թուրքական պատվիրակությունը Բ. Շահթախթինսկու հետ մշակել էր թուրք-ադրբեջանական պայմանագրի մի նախագիծ, որով Թուրքիան պարտավորվում էր պաշտպանել և անգամ զինված օգնություն ցույց տալ Ադրբեջանին¹⁰: Բաքվում թուրքական պատվիրակությունը փորձեց անջատ բանակցություններ սկսել Ադրբեջանի հետ: Սակայն Մոսկվան թույլ չտվեց¹¹:

Նախիջևանի խնդրում Գ. Չիչերինը խորհուրդ էր տալիս, որ Հայաստանը և Ադրբեջանը լինեն համախորհուրդ և երևանի գավառի հարավում գոյացած եռանկյունի հողակտորի հարցը լուծել Հայաստանի օգտին: Հիշեցնենք, որ երբ Մոսկվայի կոնֆերանսում վեճ ծագեց այդ տեղամասի շուրջ, որոշվեց, որ Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի զինվորական հատուկ հանձնաժողովները համատեղ վերջնականորեն կճշտեն այդ տեղաւնքի սահմանը:

⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 483–484.

¹⁰ Նույն տեղում, էջ 492:

¹¹ Мадатов Г. А., Победа советской власти в Нахичевани и образование Нахичеванской АССР, Баку, 1968, с. 109.

Պետք է նկատի առնել, որ Նախիջևանի առավելագույն սահմանը Գայլի դրուճքն է, և այդ եռանկյունի հողակտորը ընկած է Գայլի դրուճքի սահմաններից դուրս, այսինքն՝ այն ձևով, ինչպես Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ ներկայացրել էր Շահթախթինսկին: Գ. Չիչերինը հրահանգում էր, որ հայ-ադրբեջանական կողմերը այս խնդիրը նախապես համաձայնեցնեն, հետո նոր քննարկեն թուրքերի հետ¹²:

1921 թ. ապրիլի սկզբներին Ռուսաստանի և Թուրքիայի միջև որոշակի լարվածություն էր առաջացել ոչ միայն թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրման ձևաչափի, այլև Ալեքսանդրապոլի գավառի՝ թուրքերից դատարկման խնդրի շուրջ:

Քանի դեռ փետրվարյան ապստամբությունը չէր հնազանդեցվել, խորհրդային ղեկավարությունը չէր կարևորում Ալեքսանդրապոլի դատարկումը թուրքերից: Մոսկվայի պայմանագրի ստորագրումից և ապրիլի 2-ին կարմիր զորքերի Երևան մտնելուց հետո օրակարգ բարձրացվեց Ալեքսանդրապոլ քաղաքն ու գավառը թուրքական զորքերից դատարկելու վճռական պահանջը:

Կարմիր բանակի կողմից Երևանը գրավելուց անմիջապես հետո Գ. Չիչերինը շտապ հեռագրում է Անգորա՝ Բ. Մդիվանուն. «Երևանը մաքրված է դաշնակներից: Հարկավոր է թուրքերից պահանջել, որ անհապաղ դատարկեն Ալեքսանդրապոլը և առհասարակ հայկական բոլոր տարածքները՝ Մոսկվայի պայմանագրի սահմանագծին համապատասխան»¹³:

Թուրքական կողմը շարունակում էր պնդել Ալեքսանդրապոլի պայմանագրի մի շարք հողվածների կատարման վրա¹⁴: Մասնավորապես Ալեքսանդրապոլի գավառի դատարկումը և հայ ռազմագերիների վերադարձը Թուրքիան պայմանավորում էր պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված Հայաստանի փաստական զինաթափման և այն Թուրքիային հանձնելու հարցի հետ¹⁵: Թուրքերի այդ պահանջի կատարումը նշանակում էր անտեսել արդեն ստորագրված Մոսկվայի պայմանագիրը, որում խոսք չկար ո՛չ Ալեքսանդրապոլի ժամանակավոր օկուպացիան շարունակելու և ո՛չ էլ, ցավոք, այն անհապաղ դատարկելու վերաբերյալ:

¹² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 492.

¹³ Նույն տեղում, էջ 484:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 113, ք. 102:

¹⁵ Аралов С. И., Воспоминания советского дипломата 1922–1923, М., 1960, с. 32.

Գ. Օրջոնիկիժենն ապրիլի 6-ին Թիֆլիսից հեռագրում է Մոսկվա՝ Գ. Չիչերինին՝ տեղեկացնելով, որ Կարաբեքիրը ծոճոնում է Ալեքսանդրապոլի գավառի դատարկման հարցը: Օրջոնիկիժենի հեռագրի բովանդակությունից պարզվում է, որ Կարաբեքիրը մտադիր էր հեռանալ Ալեքսանդրապոլից միայն Յայաստանի հետ պայմանագրի կնքումից հետո: Այդ իսկ պատճառով Օրջոնիկիժենն անհրաժեշտ էր համարում կտրուկ պահանջել թուրքերից հեռանալ Ալեքսանդրապոլից¹⁶: Յաջորդ օրը՝ ապրիլի 7-ին, Չիչերինը հեռագրում է Օրջոնիկիժենին՝ Կարաբեքիրի վարքագիծը որակելով խուլիգանություն: Չիչերինի պահանջով թուրք դեսպան Ալի Ֆուադը խոստանում է անհապաղ դատարկել Ալեքսանդրապոլը¹⁷:

ԹԱՄԺ կառավարության արտգործկոմիսար Ահմեդ Մուխթարը ապրիլի 14-ին պատասխան հեռագրով պաշտոնական Մոսկվային հավաստիացնում է, որ Բ. Կարաբեքիրին տրված է հանձնարարական մեկ շաբաթվա ընթացքում՝ սկսած ապրիլի 15-ից, լիովին էվակուացվելու դեպի այն սահմանը, որը որոշվել է Մոսկվայի պայմանագրով¹⁸: Եվ այդպես էլ արվում է: Ապրիլի 22-ին Ալեքսանդրապոլի գավառը լիակատար ազատագրվում է թուրքական ներկայությունից:

Բայց մինչ այդ, թուրքական ռազմակալման շուրջ 6 ամիսների ընթացքում գավառում կատարվել էին սարսափելի իրադարձություններ՝ կոտորած, կողոպուտ, բռնաբարություններ:

Թուրքական օկուպացիայի վեց ամիսներին Ալեքսանդրապոլի գավառում ոչնչացվել է 140 հայկական գյուղ¹⁹: Առաջին գավառամասի 34 գյուղերից անվնաս էր մնացել միայն 4-ը²⁰: Միայն Ալեքսանդրապոլի 4-րդ գավառամասի 35 գյուղերից թուրքերը տարել էին շուրջ 1 մլն փութ հացահատիկ և մոտ 50 հազար խոշոր եղջերավոր անասուն: Ընդհանուր հաշվով գավառից տարվել էր 300 հազար խոշոր և մանր եղջերավոր անասուն²¹:

Բռնագրավվել կամ կողոպտվել էին բոլոր պահեստները, գինանոցները, Ալեքսանդրապոլի դեպոյի զույքը և սարքավորումները, անգամ Բ. Մոխվաճու ծառայողական վագոնը, խանութները,

¹⁶ Геноцид армян, т. 2, ч. 1, с. 485.

¹⁷ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 50.

¹⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 493–494.

¹⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, ք. 7, ց. 2с, գ. 33, ք. 73:

²⁰ Նույն տեղում, գ. 225, ք. 11:

²¹ Նույն տեղում, ք. 12:

բնակարանները, կահ-կարասիք, աթոռներ, մահճակալներ, վեր-
մակներ, հայելիներ, սպասք: Մի խոսքով, այն ամենը, ինչը հնարա-
վոր էր տեղափոխել կամ իրենից որևէ արժեք էր ներկայացնում²²:

ՀՍԽՅ արտգործոժողկոմ Ա. Մռավյանը մայիսի 29-ին Բաքվում
Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Դովլաթյանին
ուղղված հեռագրում հետևյալ տեղեկություններն է հայտնում Ալեք-
սանդրապոլի գավառում թուրքերի գազանությունների մասին.
«Կառավարական հանձնաժողովը հայտնաբերեց հետևյալը.
Աղբուլադի և Ջաջուռի շրջաններում հաշվվում է 12050 դիակ, որի
80 տոկոսը 5–12 տարեկան երեխաներ են: Ալեքսանդրապոլի
հանձնաժողովի հավաքած տեղեկություններով թուրքերը մորթել
են 60 հազար մարդ, որից 30 հազարը տղամարդ, 15 հազարը կին,
5 հազարը՝ երեխա, 10 հազարը՝ աղջիկ, վիրավորվել է տարբեր
հասակի 38 հազար մարդ, գերության քշվել 18 հազար տղամարդ,
բռնաբարվել 30 հազար կին և 20 հազար աղջիկ»²³: Ահա՛, այսպիսին
էր թուրք զինվորականության վեցամսյա գործունեության պատ-
կերը:

Թուրքերի նման վարքագիծը ստիպում էր խորհրդային կող-
մին լինել ավելի զգոն և պահանջկոտ կոնֆերանսի վայրը, ձևաչա-
փը և այլ հարցեր որոշելիս: Այս փուլում գլխավոր խոչընդոտը
մնում էր թուրքերի հետ առանձին (անջատ), թե մեկ միասնական
պայմանագիր կնքելը: Թուրքերը պնդում էին առանձին պայմանա-
գրեր կնքել: Խորհրդային դիվանագետները կռահում էին թուրքերի
նման առաջարկի ենթատեքստը: Խնդիրն այն էր, որ միանշանակ
չէր թուրքերի վերաբերմունքը անդրկովկասյան հանրապետու-
թյունների հետ, և նրանք նպատակ էին հետապնդում սեպարատ և
տարբերակված պայմանագրերի միջոցով իրենց պայմանները
պարտադրել նրանց ու առաջին հերթին Հայաստանին²⁴: Դրա հա-
մար էլ խորհրդային կողմը Մոսկվայի ուղղորդմամբ պնդում էր
միասնական պայմանագրի վրա: Աղբբեջանի արտգործոժողկոմ Մ.
Հուսեյնովը ապրիլի 20-ին հեռագրում է Թիֆլիս՝ Օրջոնիկիձեին,
նաև Մոսկվա՝ Չիչերինին հետևյալ տեղեկություններով. «Այսօր
ես և Շահթախթինսկին զրուցեցինք թուրքերի հետ (Յու. Քեմալի

²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, ք. 25:

²³ ՀԱԱ, ֆ. 4010, ց. 1, գ. 29, ք. 1:

²⁴ Хейфец А. Н., Советская дипломатия и народы Востока (1921–1927), с. 161

գլխ.), որոնք, պարզվում է, մեզանից շատ դժգոհ մնացին այն բանի համար, որ մենք առաջարկեցինք խոսել միայն թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի մասին: Մտքերի փոխանակությունից հետո թուրքերը համաձայնվեցին նման կոնֆերանսի պայմաններին, սակայն որպեսզի համատեղ մշակված պայմանագիրը ստորագրվի յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին: Մենք դրան համաձայնվեցինք»²⁵: Սակայն Մոսկվան չի համաձայնվում վերջին ձևակերպմանը և պնդում է միասնական պայմանագրի վրա: Կոնֆերանսի հրավիրման վայրի հարցում թուրքերը առաջարկում են նման վայր նշանակել Կարսը՝ պատճառաբանելով, որ այդտեղից հեշտ կլինի կապվել Անգորայի հետ: Յուսեյնովը նպատակահարմար էր գտնում համաձայնվել թուրքերի առաջարկին՝ կոնֆերանսը Կարսում հրավիրելու վերաբերյալ²⁶:

Յայրենիք վերադարձող թուրքական պատվիրակությունը ադրբեջանցի դիվանագետների հետ հանդիպումներից հետո ապրիլի վերջերին ուղևորվում է Թիֆլիս, այնտեղից էլ՝ Ալեքսանդրապոլով դեպի Կարս: Թուրքական պատվիրակությունը նպատակահարմար էր գտել այդ հարցերի շուրջ խորհրդակցել իր կառավարության հետ²⁷:

Միասնական պայմանագրի կնքումը նպատակ ուներ ոչ միայն ապահովելու Յայաստանը Թուրքիայի հետ անջատ պայմանագրի անցանկալի հետևանքներից, այլև, ըստ Գ. Օրջոնիկիձեի, Թուրքիայի հետ միասնական պայմանագրի կնքումը կունենար նաև քաղաքական այն իմաստը, որ «Յայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը հանդես էին գալու որպես միասնական ամբողջություն, որպես միասնական եղբայրական ռեսպուբլիկա»²⁸: Եվ դա դիտվում էր կարևոր քայլ ԽՍՀՄ կազմավորման ճանապարհին:

1921 թ. մայիսի 7-ին Բաքվում հրավիրվեց անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդակցություն՝ Մ. Օրախելաշվիլու նախագահությամբ: Յայաստանից մասնակցում էր ՅՍԽՅ կառավարության ներկայացուցիչ Ալ. Բեկզադանը: Խորհրդակցությանը մասնակցել են Ռուսաստանի ներկայացուցիչներ Բ. Լեգրանը և Գ. Օրջոնիկիձեն:

²⁵ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 13, գ. 149, թ. 3:

²⁶ ՅԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 178:

²⁷ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 176.

²⁸ Օրջոնիկիձե Գ. Կ., Ընտիր հողվածներ և ճառեր 1918–1937, Ե., 1950, էջ 109–110:

խորհրդակցությունը քննության առավ կոնֆերանսին անդրկովկասյան հանրապետությունների հանդես գալու ձևի, անցկացման վայրի ու ժամկետի, ինչպես նաև անցկացման սկզբունքների օրակարգային հարցերը:

Առաջին հարցի վերաբերյալ խորհրդակցությունը որոշեց, որ «Թուրքիայի հետ նախապատրաստվող առաջիկա կոնֆերանսում Անդրկովկասի երեք հանրապետությունները պետք է հանդես գան որպես մեկ միասնական կողմ»²⁹: Իսկ կոնֆերանսի հրավիրման վայրի հարցում խորհրդակցությունը ցանկալի համարեց այն հրավիրել Բաքվում կամ Թիֆլիսում, բայց և չառարկեց, որ այն հրավիրվի Կարսում³⁰:

Բաքվի խորհրդակցությունը գտավ, որ բանակցությունների հիմքում պետք է դրվի Մոսկվայի պայմանագիրը: Ադրբեջանի ներկայացուցիչ Մ. Յուսեյնովը հայտարարեց, որ «Մոսկվայի պայմանագրով, ըստ էության, լուծված են բոլոր խոշոր խնդիրները և միայն մնում են մանր-մունր վեճեր»³¹: Նույն միտքը հաստատեց Մ. Օրախելաշվիլին: Բացի այդ, հաշվի առնելով, որ առաջիկա կոնֆերանսում քննարկվելիք ամենաբարդ հարցը Չայաստանի և Թուրքիայի միջև պայմանագրային հարաբերությունների խնդիրն էր, ուստի խորհրդակցությունը անհրաժեշտ գտավ կոնֆերանսում առաջին հերթին քննարկել հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը, ապա հետո՝ Վրաստանի և Ադրբեջանի հարցերը³²:

Քանի որ թուրք-անդրկովկասյան կոնֆերանսը պետք է քններ նաև Նախիջևանի հյուսիսարևմտյան սահմանների հարցը, խորհրդակցությունը Չայաստանի և Ադրբեջանի արտգործոժողկոմատի ներկայացուցիչներ Բեկզադյանին և Շահթախթինսկուն հանձնարարեց անմիջապես տեղում ուսումնասիրել և ներկայացնել համապատասխան առաջարկներ³³: Այդ հարցի կապակցությամբ Բաքվի խորհրդակցությունը որոշեց. «Մոսկվայի պայմանագիրը լրացնելու և փոփոխելու իմաստով՝ պայմանագրի 3-րդ հոդվածի կապակցությամբ թույլատրելի համարել ճշգրտելու Չայաստանի և Նախիջևանի սահմանը հատուկ (Չայաստանի, Ադրբեջանի

²⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 71:

³⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 67–68, 71:

³¹ Նույն տեղում, թ. 69:

³² Նույն տեղում, թ. 72:

³³ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 221, Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը ..., էջ 254:

և Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված) հանձնաժողովի կողմից»³⁴: Սահմանազծման հիմքում պետք է դրվեր ազգագրական սկզբունքը, ինչպես նաև տեղացի բնակչության կարծիքը:

Վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի՝ Ադրբեջանի արտագործող կոմ Ս. Յուսեյնովին ուղղված մայիսի 27-ի գրությունից պարզ է դառնում, որ պետական-կուսակցական կենտրոնական մարմինների հանձնարարականով Բաքվի խորհրդակցությունում պայմանավորվածություն էր ստեղծվել, որ Չայաստանը և Ադրբեջանը պետք է մշակեին այդ հանրապետությունների՝ Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերի նախագծեր: Սակայն հավանաբար Թուրքիայի գիտությամբ Ադրբեջանն այդ խնդրում ցուցաբերել է անտարբերություն³⁵: Ադրբեջանը կոնֆերանսին նախապատրաստվելիս ավելի շատ առաջնորդվում էր Անգորայի հրահանգներով, քան թե՝ Մոսկվայի: Արխիվային վավերագրերը հաստատում են, որ 1921 թ. գարնան-ամռան ամիսների ընթացքում Անգորայի և Բաքվի միջև եղել է գաղտնի հեռագրական կապ³⁶:

Հարկ է նկատել, որ կոնֆերանսի նախապատրաստական առաջին փուլում (մինչև հունիս) դրա հրավիրմամբ շահագրգռված էր խորհրդային կողմը, իսկ թուրքականը՝ անընդհատ ձգձգում էր կոնֆերանսի հրավիրումը և կարծես կորցրել էր հետաքրքրությունը: «Սեզ զարմացնում է, – գրում էր Լեգրանը մայիսի երկրորդ կեսին, – որ թուրքերը հեռանալու օրվանից պահպանում են լիակատար լռություն և կարծես կորցրել են կենդանի հետաքրքրությունը կովկասյան հանրապետությունների հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու հանդեպ»³⁷: Լեգրանը ցանկանում էր Ս. Յուսեյնովի միջոցով պարզել դրա պատճառը:

Գ. Չիչերինը հունիսի 6-ի իր նոտայում, պատասխանելով Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադի հունիսի 3-ի նոտային, հիշեցնում էր, որ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի պահանջը մնում է

³⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 72:

³⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 220: Ինչ վերաբերում է Չայաստանին, ապա Չայաստանի ազգային արխիվի 113 ֆոնդում պահվում է հայ-թուրքական պայմանագրի 14 հոդվածներից բաղկացած ռուսերեն մի նախագիծ, որի բովանդակությունը ամբողջապես բխում է Մոսկվայի պայմանագրից (տե՛ս ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 151, 156, գ. 23, թ. 35–36):

³⁶ Նույն տեղում, գ. 11, թ. 179:

³⁷ Նույն տեղում, թ. 220:

չկատարված, բայց ոչ ամենևին Ռուսաստանի կամ անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների մեղքով, այլ միայն այն պատճառով, որ թուրքական պատվիրակությունը մեկնել է Թիֆլիսից, որպեսզի կարճ ժամանակով ուղիղ կապի մեջ մտնի իր կառավարության հետ, սակայն մինչև տվյալ օրը չի վերադարձել Թիֆլիս: Այդ իսկ պատճառով անհնարին է դարձել պայմանագրի կնքումը Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև³⁸: Ինչպես արդեն ասվել է, պաշտոնական Մոսկվան կարծում էր, թե արագորեն կկնքվի թուրք-անդրկովկասյան պայմանագիրը: Սակայն այն ձգձգվեց շուրջ 7 ամիս և ոչ ամենևին խորհրդային կողմի մեղքով: Ավելին, Մոսկվայի պայմանագիրը դեռ չվավերացված՝ թուրքական իշխանությունները, ոտնահարելով Մոսկվայի պայմանագրի 10-րդ և 12-րդ հոդվածների պահանջները, սկսել էին ուժով բռնագրավել Կարսի մարզում բնակվող մոլդկանների և մյուս քրիստոնյաների (մաս հայերի, եթե, իհարկե, մնացել էին) շարժական և անշարժ ունեցվածքը և ուժով նրանց սահմանից դուրս արտաքսել³⁹: Թուրքական իշխանությունները քրիստոնյա բնակչությունից ստորագրություններ էին հավաքում թուրքական քաղաքացիություն ընդունելու կամ հակառակ դեպքում անհապաղ արտագաղթելու պահանջով: Դրա հետևանքով հազարավոր գաղթականներ անցան Անդրկովկասի սահմանները⁴⁰:

Նույնատիպ գործողություններ էին կատարվում Արդվինի գավառի հայ, ռուս և քրիստոնյա մյուս ազգաբնակչության նկատմամբ: Թուրքական իշխանությունները նախ տղամարդկանց զորահավաք հայտարարեցին, այնուհետև նրանք, ովքեր կխուսափեին զորակոչից, կորցնում էին թուրքահպատակությունը և ենթակա էին արտաքսման Արդվինի գավառից և առհասարակ Թուրքիայից: Դրան հետևեցին գայմազամի (գավառապետի) հովանավորությունից օգտվող զանազան ավազակախմբերի կողմից խաղաղ քրիստոնյա բնակչության ունեցվածքի կողոպուտը, բռնությունները, սպանությունները: Այս մարդկանց մի մասին է միայն հաջողվում մի կերպ անցնել Բաթում⁴¹:

Մայիս-հունիս ամիսներին խորհրդային պետության ղեկա-

³⁸ ДВП СССР, т. 4, М., 1960, с.169.

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ ՉԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, ք. 220-221:

⁴¹ ՉԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, ք. 218-219:

վար շրջանակներում քեմալականներին չվստահելու թույլ ծայներ էին լսվում, որոնք, սակայն, մնում էին անարժագանք: Կարելի է վստահ ասել, որ Չիչեքինը և Լեգրանը կոնկրետ Հայաստանի օրինակով լիովին հասկանում էին քեմալականների կեղծ հեղափոխականությունը և «Արևմուտք» - «Ռուսաստան» երկակի խաղը: Այս առնչությամբ ուշադրության է արժանի Աբխազիայի հեղկոմի նախագահի տեղակալ Նեստոր Լակոբայի 1921 թ. մայիսի 8-ի զեկուցագիրը: Վերջինս, հետախուզական նպատակներով մի քանի ամիս լինելով Թուրքիայում և ուսումնասիրելով երկրի հասարակական-քաղաքական վիճակը, հանգել էր հետևյալ եզրակացության. «Իմ կարծիքով, պետք է արմատապես վերանայել մեր արևելյան քաղաքականությունը և մեր հարաբերությունները Թուրքիայի հանդեպ... Մեր նյութական, գաղափարական և բարոյական աջակցությունը քեմալականներին ակնհայտ շահագործվում է վերջիններիս կողմից իրենց կեղտոտ, նեղ ազգային նպատակների համար»⁴²: Նույն կերպ քեմալականների բազմադեմ խաղերը նկատում էր նաև Բեռլինում ՌՍՖՍՀ լիազոր դեսպան Ա. Իոֆֆեն. «Քեմալը, անկասկած, խաղում է մի քանի ճակատներում, - մասնավորապես գրում էր նա ԿԿ-ի քարտուղար Վ. Մոլոտովին և Գ. Չիչեքինին հասցեագրված նամակում»⁴³: Բայց այս բացահայտումները ամենևին էլ չէին խանգարում քեմալականներին, որպեսզի բարեկամություն խաղան Ռուսաստանի հետ: Մայիսի 15-ին կառավարության նախագահ Մ. Քեմալը, հանդես գալով Ազգային մեծ ժողովում, հայտարարեց, որ պարտված երկրներից իրենք միակն են, որ աշխարհամարտից փաստորեն դուրս եկան հաղթանակով: «Սևրի դաշնագիրը այլևս գոյություն չունի: Այսօր Արևելքի մեջ ուժեղ ու ազնիվ բարեկամներ ունենք: Եվ այս ամենի համար պարտական ենք ռուս սովետական հանրապետության հետ հաստատած բարեկամական և եղբայրական հարաբերություններին»⁴⁴:

Մ. Քեմալի այդ խոսքերը արժեք չունեին նաև թուրք-անդրկովկասյան կոնֆերանս հրավիրելու և միմյանց միջև հարաբերությունները կարգավորելու տեսակետից: Թուրքերը կարծես կորցրել էին հետաքրքրությունը հրավիրվելիք կոնֆերանսի նկատմամբ: Դա հավանաբար պետք է բացատրել Թուրքիայի՝ Անտանտի

⁴² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 502.

⁴³ Նույն տեղում, էջ 519:

⁴⁴ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 26 մայիսի 1921 թ.:

հետ տարվող գաղտնի ու բացահայտ բանակցություններով, որոնք սկսվել էին 1921 թ. փետրվարից Բեքիր Սամիի կողմից Լոնդոնի կոնֆերանսում: Պատահական չէ, որ տևական ժամանակ թուրքական մեջլիսը ձգձգում էր անգամ իր համար այդքան շահավետ Մոսկվայի պայմանագրի վավերացումը, որպեսզի Անտանտի տերությունների հետ ավելի մեծ սակարկությունների գնա: Ի դեպ, ՌՍՖՍՀ Կենտգործկոմը Մոսկվայի պայմանագիրը վավերացրեց ստորագրումից անմիջապես հետո՝ 1921 թ. մարտի 20-ին, մինչդեռ Թուրքիայի ԱՄԺ-ն այն հաստատեց ստորագրումից ավելի քան չորս ամիս անց՝ հուլիսի 22-ին՝ 201 կողմ, 5 դեմ և մեկ ձեռնպահ ձայններով: Այս հանգամանքը ևս ցույց է տալիս, թե իրականում ով էր ձգձգում կոնֆերանսի հրավիրումը: Վավերագրերի փոխանակումը տեղի ունեցավ Կարսի մեջ 1921 թ. սեպտեմբերի 22-ին՝ Կարսի խորհրդաժողովից 4 օր առաջ⁴⁵:

Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի նախապատրաստական փուլում չի կարելի ասել, թե բոլորովին անգործության էին մատնվել Կովկասի նախկին հանրապետությունների իշխանությունների վտարանդի ներկայացուցիչները: Հայտնի է, որ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի տապալված կառավարությունների ներկայացուցիչները, ազգամիջյան հակասությունները և քաղաքական հաճախ տարամերժ կողմնորոշումները կարծես մի կողմ դրած, Արևմուտքի տերությունների հովանավորությամբ Փարիզում 1921 թ. առաջին կեսին փորձեր արեցին համատեղ բանակցություններ վարել և կովկասյան հանրապետությունների դաշինք ստեղծել: Այդ դաշինքի նպատակը առաջին հերթին միասնական ճակատով բուլշևիզմի դեմ պայքարելն էր և դրա արդյունքում իրենց ազգային-պետական իրավունքների վերականգնելը:

Վերոնշյալ չորս հանրապետությունների՝ Հայաստանի (Ա. Ահարոնյան, Ալ. Խատիսյան), Վրաստանի (Ն. Չխեիձե, Ա. Չխենկելի, Ն. Ռամիշվիլի, Ե. Գեգեչկորի), Ադրբեջանի (Ա. Թոփչիբաշև, Ա. Շեյխ-ուլ-Իսլամով) և Հյուսիսային Կովկասի (Ա. Չերմոն) ներկայացուցիչները համատեղ բանակցում էին միասնական ռազմա-

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 23, Մսըրյան Զ., Հայկական հարցի մասին, էջ 162:

վարություն մշակելու և, այսպես կոչված, կովկասյան ժողովուրդների դաշինք ստեղծելու համար: Դժվար չէ տեսնել, որ Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային-քաղաքական շահերը դժվար համատեղելի էին մյուս երեք երկրների շահերին: Բայց և այնպես հայ պատվիրակները ջանում էին բարձրացնել Հայկական հարցը: 1921 թ. մայիսի 8-ի նիստի (նախագահել է Ա. Թովֆիբաշևը) քննարկումների ժամանակ Ա. Ահարոնյանը հարց է բարձրացնում, որպեսզի խնդրի մեջ ներառվի նաև Թուրքիայի կողմից զավթված հայկական հողերի հարցը, այսինքն՝ քննության առնվեն ոչ միայն ռուս-անդրկովկասյան, այլև հայ-թուրքական հարցերը⁴⁶:

Ուշադրության են արժանի կովկասյան չորս հանրապետությունների ներկայացուցիչների միջև նիստերի ժամանակ ընթացած քննարկումները: Հայկական կողմը պնդել է, որ կովկասյան հանրապետությունների կոնֆեդերատիվ դաշինք կլինի այն դեպքում, եթե լուծվի Հայկական հարցը: Ի դեպ, Ա. Ահարոնյանի այդ պահանջը պաշտպանել է Ե. Գեգեչկորին: Հայկական կողմից հանդես է եկել նաև Ալ. Խատիսյանը: Նա ևս պնդել է, որ ապագա դաշինքի համար թուրքերի և դաշնակիցների կողմից նախ պետք է իրական երաշխիքներ ստեղծվեն Հայկական հարցի լուծման համար, հակառակ դեպքում հայերը բուլշևիկների դեմ հանդես չեն գա⁴⁷:

Վրաստանի ներկայացուցիչ Նոյ Ռամիշվիլին իր ելույթում փորձել է հուսադրել հայերին, որ կովկասյան հանրապետությունները հայտարարել են 1914 թ. սահմանների վերականգնման մասին: Այդ նշանակում էր, որ Կարսի մարզը մնալու էր հայերին: Ըստ Ռամիշվիլու՝ մնում էր Հայկական հարցը, այսինքն՝ Թուրքիայի հետ սահմանագծման խնդիրը: Ա. Ահարոնյանը իր հերթին գտնում էր, որ կովկասյան կոնֆեդերացիայի ստեղծման առաջին քայլը կլինեն այն, որ նախ «Թուրքիան դատարկեր Կարսը, այլապես Հայաստանի մտնելը այդ միության մեջ կլինի անհիմաստ»⁴⁸:

Կովկասի նախկին չորս հանրապետությունների ներկայացուցիչների մայիսի 30-ի նիստը նախագահել է Ալ. Խատիսյանը: Այդ նիստի նպատակը նշված չորս հանրապետությունների անու-

⁴⁶ Арутюнян А., Из истории проектов “Кавказского дома” (տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2009, թիվ 1, էջ 59):

⁴⁷ Նույն տեղում, էջ 61:

⁴⁸ Նույն տեղում, էջ 64:

Միջ ընդհանուր հռչակագրի տեքստի մշակումն ու ստորագրումն էր: Համատեղ ռազմապաշտպանական և քաղաքական դաշինքի ստեղծման ճանապարհին գլխավոր խոչընդոտը դարձյալ համարվել է Հայկական հարցը, այսինքն՝ Թուրքահայաստանի մասին հարցը: Հարկ է նշել, որ Կովկասի մյուս երեք հանրապետությունների ներկայացուցիչներն ընթրնումով են մոտեցել այդ հարցին և համաձայնագրի կետերը մշակելիս փորձել են ինչ-որ ձևով լուծումներ գտնել: Մասնավորապես Կովկասյան Միությունը նպատակ էր դնում բոլոր միջոցներով նպաստել Հայկական հարցի արդարացի լուծմանը, այսինքն՝ բավարարել Հայաստանի պահանջը նախկին Թուրքահայաստանի տարածքի նկատմամբ: Ռոշվում է ստեղծել Կովկասի Անկախ Հանրապետությունների Միություն (ԿԱՀՄ), իբրև գործադիր մարմին՝ Կովկասի հանրապետությունների ներկայացուցիչների խորհուրդ: Խորհրդի մեջ մտնելու էին՝ Ա. Չխենկելին, Ա. Թոփչիբաշևը, Ա. Չերմուկը և Ա. Ահարոնյանը: Հիշյալ խորհրդին էլ հանձնարարվում է պատրաստել համապատասխան հռչակագրի (դեկլարացիայի) տեքստը, որը և հրապարակվում է հունիսի 10-ին:

Փարիզի հռչակագիրը բաղկացած էր 10-ը կետերից, որոնցից առավել հետաքրքրություն են ներկայացնում 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ կետերը:

5. Կովկասի հանրապետությունները կնքում են ռազմապաշտպանական դաշինք արտաքին ոտնձգություններից պաշտպանվելու նպատակով:

6. Առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդման նպատակով Կովկասի հանրապետությունները ստեղծում են միասնական մաքսային միություն:

7. Կովկասի հանրապետությունները ցանկանում են բարիդրացիական հարաբերություններ հաստատել անմիջական հարևաններ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի հետ: Մեծ կարևորություն են տալիս Թուրքիայի հետ հարաբերությունների ամրապնդմանը՝ նկատի առնելով, որ Թուրքիան պետք է ճանաչի Կովկասի 1914 թ. սահմանը, ինչպես նաև լուծում տա մինչև օրս ձգձգվող Հայկական հարցին՝ սահմանագծելով Թուրքիայի և Հայաստանի սահմանը, որին հասնելու համար պատրաստ են ջանքեր թափել Կովկասի հանրապետությունները:

9. Հայտարարվում է, որ Ռուսաստանի և Թուրքիայի կողմից

1919 թ., 1920 թ. և 1921 թ. Կովկասի հանրապետություններից զավթված տարածքները համարվում են միջազգային իրավունքի աղաղակող խախտում և ենթակա են վերադարձման նրանց օրինական տերերին:

10. Դրա հետ մեկտեղ կովկասյան հանրապետությունների ներկայացուցիչները հայտարարում են, որ բոլոր այն պայմանագրերը և համաձայնագրերը, որոնք կնքվել են հարևան տերությունների հետ՝ ի վնաս իրենց շահերին, զուրկ են որևէ օրինական ուժից և ենթակա չեն ճանաչման: (Ստորագրել են՝ Ա. Ահարոնյան, Ա. Թոփչիբաշև, Ա. Չերմոև, Ա. Հիսենկելի)⁴⁹:

Ամփոփելով Կովկասի նախկին չորս հանրապետությունների ներկայացուցիչների փարիզյան քննարկումները և դրանց արդյունքում հրապարակած հռչակագիրը Կովկասի հանրապետությունների դաշինք ստեղծելու մասին՝ միանշանակ դժվար է ասել, թե դա որևէ էական ազդեցություն թողած լինի Ռուսաստանի և Թուրքիայի կողմից այդ հանրապետությունների հանդեպ վարվող քաղաքականության վրա: Հռչակագրի այն մասը, որը վերաբերում է Կովկասի՝ Ռուսաստանից անջատմանը և «Կովկասյան տան» ստեղծմանը, բխում էր Թուրքիայի շահերից և հակոտնյա էր Ռուսաստանի շահերին, իսկ համաձայնագրի այն կետերը (7-րդ, 9-րդ), որոնք շոշափում էին Հայկական հարցը և հայ-թուրքական սահմանային խնդիրը, դա արդեն հակոտնյա էր Թուրքիայի շահերին:

Թեև այդ հռչակագիրը որևէ իրավական ուժ և ազդեցություն չի ունեցել, բայց և այնպես համարվում է պատմական փաստաթուղթ: Մեր կարծիքով, այն որևէ ազդեցություն չի ունեցել նաև թուրք-անդրկովկասյան նախապատրաստվող կոնֆերանսի վրա:

Ի տարբերություն Փարիզի 1921 թ. հունիսի 10-ի անպտուղ հռչակագրի՝ նույն թվականի ամռանը (հունիս-հուլիս) Թուրքիայի կառավարող շրջանակներում որոշ անհանգստություն էին առաջացրել ՀՅԴ արտասահմանի պատասխանատու մարմնի և ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոյի ներկայացուցիչների միջև Ռիգայում ընթացող բանակցությունները, որոնց արդյունքով, ինչպես հայտնի է, հու-

⁴⁹ Арутюнян А., նշվ. աշխ., էջ 79–80:

լիսի 14-ին նախաստորագրված փաստաթղթերով (համաձայնագրով) խորհրդային կողմը (ՌԿ(բ)Կ ԿԿ-ը) որոշակի պարտավորություն էր վերցնում իր վրա՝ լուծելու Հայկական հարցը «բավարար հողային տարածքով և ելքով դեպի ծով»՝ ազդելով Թուրքիայի վրա⁵⁰:

Ռիզայի ՀՅԴ - ՌԿ(բ)Կ բանակցային գործընթացի սկիզբը դրվեց այն բանից հետո, երբ 1921 թ. մայիսի 26-ին Բեռլինից Մոսկվա՝ նամակով ՌԿ(բ)Կ ԿԿ դիմեց ՀՅԴ Արտասահմանի պատասխանատու մարմնի ներկայացուցիչ Վահան Փափազյանը՝ առաջարկելով բանակցություններ սկսել երկու կուսակցությունների միջև, միմյանց փոխհարաբերությունները ճշտելու, Հայաստանի անկախությունը պահպանելու, Ձանգեզուրի խնդիրը խաղաղ կարգավորելու շուրջ և այլն⁵¹: Ընդ որում ցանկալի էր համարվում խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությունը բանակցություններին:

Երկու կողմից բանակցություններ վարելու շարժառիթներից էր նաև այն, որ Անտանտի երկրների՝ Լոնդոնի (1921 թ. փետրվար-մարտ) խորհրդածողովից հետո առաջին պլան էին մղվել թուրքական և դրա հետ կապված հայկական Ազգային օջախի հարցը: Խորհրդային կողմի նպատակն էր, դաշնակցականների հետ բանակցություններ վարելով, ձախողել այդ պլանները: Սփյուռքահայ հեղինակ Գ. Լազյանը ՀՅԴ-ՌԿ(բ)Կ բանակցությունների խնդրում հանդգնումք է հայտնում, որ խորհրդային իշխանության նպատակն էր ստուգել Դաշնակցության դիրքերը Թուրքիայի նկատմամբ և վերջիններիս միջև լարվածության հնարավոր թուլացումը արտասահմանում⁵²: Բացի այդ, ինչպես արդեն ասվեց, խորհրդային կառավարությունը ցանկանում էր այդ բանակցությունների միջոցով դյուրացնել Ձանգեզուրի խորհրդայնացումը:

ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն իր հունիսի 8 (10)-ի նիստում լսում է «Դաշնակցականների հետ բանակցությունների մասին» հարցը և որոշում բանակցությունների անցկացման վայր նշանակել Լատ-

⁵⁰ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 36, տե՛ս նաև Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., էջ 104:

⁵¹ Սիմոնյան Ա., Ձանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Ե., 2000, էջ 544–545, Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., էջ 100:

⁵² Լազյան Գ., Հայաստան և Հայ դատը, էջ 311:

վիայի մայրաքաղաք Ռիգան⁵³: Ջարմանալի չէր, որ ՀՅԴ հետ բանակցություններ վարելու գաղափարին դեմ արտահայտվեցին ՀՍԽՂ կառավարությունը և ՀԿ(Բ)Կ ԿԿ-ը: Մոսկվայում խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը 1921թ. հունիսի 15-ին հետևյալ բովանդակությամբ ծածկագիր հեռագիր է ուղարկում Երևան՝ Հայաստանի ղեկավարությանը (Ալ. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին, Ա. Մռավյանին): Նա տեղեկացնում էր, որ Բեռլինում գտնվող դաշնակցականների Արտասահմանի պատասխանատու մարմինը առաջարկել է ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին բանակցելու Հայաստանի խնդրի շուրջ: Ս. Տեր-Գաբրիելյանը անթույլատրելի էր համարում բանակցությունները դաշնակցականների հետ⁵⁴: Ի պատասխան Ս. Տեր-Գաբրիելյանի հունիսի 15-ի հեռագրի՝ հունիսի 22-ին Մոսկվա՝ Ս. Տեր-Գաբրիելյանին և ՌԿ(Բ)Կ ԿԿ ուղղված հեռագրում Հայաստանի ժողովուրդի նախագահ Ալ. Մյասնիկյանը ոչ միայն անթույլատրելի էր համարում Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունը բանակցություններին, այլև գտնում, որ հարկավոր է անպատասխան թողնել մայիսի 26-ի Վ. Փափազյանի դիմումը, և որ «Ջանգեզուրի հարցն այսուհետ կլուծվի պատերազմով»⁵⁵:

ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոն հունիսի 25-ին դարձյալ լսում է ՀՅԴ հետ բանակցությունների մասին հարցը և որոշում «ուժի մեջ թողնել նախորդ որոշումը»⁵⁶: խորհրդային կողմը կազմեց պատվիրակություն, որը գլխավորում էր Բեռլինում Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Իոֆֆեն, անդամներն էին Ս. Տեր-Գաբրիելյանը և Վ. Տեր-Վահանյանը⁵⁷: ՀՅԴ Արտասահմանի պատասխանատու մարմնի կողմից լիազորված էին Ա. Ջամայանը (Իսահակյան), Վ. Նավասարդյանը և Վ. Փափազյանը (կոմս)⁵⁸:

Այն օրերին, երբ կարմիր բանակը կռիվներով մուտք գործեց Ջանգեզուր, և լուծվեց երկրամասի խորհրդայնացման հարցը՝

⁵³ Политбюро ЦК РКП(б) – ВП(б), Повестки дня заседаний. каталог, т. I, 1919 – 1929, М., 2000, с.106-107.

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 4010, ց. 1, գ. 3, ք. 1:

⁵⁵ Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող և խմբագիր Վլ. Դազախեցյան, Ե., 1999, էջ 63-64, տե՛ս նաև Խաչատրյան Կ., նշվ աշխ., էջ100:

⁵⁶ Геноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 509.

⁵⁷ Նույն տեղում, էջ 506:

⁵⁸ Լազյան Գ., Հայաստան և հայ դատը, էջ 310:

ՀՅԴ ՊՄ-ն Վ. Փափազյանի, Ա. Ջամալյանի և Վ. Նավասարդյանի ստորագրությամբ հուլիսի 13-ին Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Ա. Իոֆֆեի միջոցով ուշացած հեռագիր է ուղարկում ՌԿ(Բ)Կ ԿԿ՝ կոչ անելով վերջ տալ անիմաստ արյունահեղությանը և երաշխավորել հայ ժողովրդի անվտանգությունն ու ինքնիշխանությունը⁵⁹:

Հաջորդ օրը՝ հուլիսի 14-ին, ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի պատվիրակությունը՝ հանձնին Ա. Իոֆֆեի, պատասխանում է, որ ՌՍՖՍՀ կառավարությունը երաշխավորում է Հայաստանի անկախությունը և ինքնուրույնությունը, ինչպես նաև ուժի սահմաններում հնարավորինս ազդելու թուրքիայի վրա, որպեսզի թուրքահայաստանի տարածքները միացվեն Ռուսահայաստանին⁶⁰:

Ռիգայի բանակցությունները ուղղակիորեն շոշափում էին թուրքիայի շահերը, սակայն առայժմ չի հաջողվել պարզել, թե արդյոք 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի համաձայն, ռուսական կողմը բանակցությունների մասին տեղյակ է պահել թուրքերին: Քանզի եթե տեղյակ չի պահել, ուրեմն դա պայմանագրի խախտում էր: Սակայն չպետք է անտեսել, որ Ռիգայում բանակցել են կուսակցական մարմինները և ոչ թե կառավարությունները:

Ինչևէ, մեկ շաբաթ տևած միջկուսակցական բանակցությունների արդյունքում, որոշ խմբագրումներից հետո՝ 1921 թ. հուլիսի 14-ին, Ռիգայի խորհրդային դեսպանատան մեջ նախաստորագրվեց հայկական կողմի համար բավականին նպաստավոր համաձայնագիր՝ ըստ որի.

ա) ՌԿ(Բ)Կ-ն ճանաչում էր Հայաստանի անկախությունը և պարտավորվում էր ներազդել ՌՍՖՍՀ կառավարության վրա, Հայաստանի հետ հարաբերությունները կառուցելիս առաջնորդվել վերջինիս ինքնիշխանությունը ճանաչելու սկզբունքով:

բ) ՌԿ(Բ)Կ-ն ընդունում էր, որ Հայկական հարցը կարելի է համարել լուծված, երբ Հայաստանի տարածքները կմիավորվեն:

գ) ՌԿ(Բ)Կ-ն չի առարկի Հայկական հարցի լուծումից հետո Հայաստանի ապախորհրդայնացմանը:

դ) ՀՅԴ-ն իր հերթին գտնում էր, որ երբ լուծվի Հայկական հարցը, Հայաստանը կընտրի ռուսական կողմնորոշում և այլն⁶¹:

⁵⁹ Геноцид армян. (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 514-515.

⁶⁰ Նույն տեղում, էջ 516:

⁶¹ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 194, ք. 1:

Համաձայնագրի ստորագրման օրը՝ հուլիսի 14-ին, խորհրդրդային դիվանագետ Ա. Իոֆֆեն ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի քարտուղար Վ. Մոլոտովին և արտգործոժողկոմ Գ. Չիչերինին հասցեագրած ընդարձակ նամակում քաղաքական որոշ հիմնավորումներ էր տալիս Յ. Յ. Դաշնակցություն կուսակցության հետ նախաստորագրված համաձայնագրին: Իոֆֆեն նշում էր, որ ստանձնելով Յ.Յ. Դաշնակցության հետ բանակցություններ վարելու առաջարկությունը՝ ԿԿ-ի կողմից չի ստացել ոչ կարգադրություն և ոչ էլ որևէ հրահանգ: Նմանապես իրենց հետ որևէ հրահանգ չէին բերել պատվիրակներ Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը⁶²:

Այս փաստը ինքնին վկայում է, որ այս բանակցությունները իրականում լուրջ նպատակ չէին հետապնդում, այլ սոսկ տակտիկական միջոց էին՝ ժամանակ շահելու և ինչ-որ խոստումներ տալով Չանգեզուրի խորհրդայնացումը հեշտացնելու համար:

Մյուս կողմից՝ Ա. Իոֆֆեն նամակում ընդգծում էր, որ Ռուսաստանի նման համաձայնագրի կնքումը հայերի հետ կունենա քարոզչական մեծ նշանակություն: Նա շեշտում էր, որ հարկավոր է լավ դաս տալ Մ. Քեմալին՝ ցույց տալու համար, որ իրենց թիկունքում քաղաքականություն վարելը անթույլատրելի է⁶³: Նամակին անձամբ ծանոթացել էր Վ. Լ. Լենինը և բնագիր տեքստի վրա կատարել նշումներ՝ ընդգծումներ, անհամաձայնության հարցական և բացականչական նշաններ⁶⁴:

Ա. Իոֆֆեի նամակը ստանալուց հետո Գ. Չիչերինը 1921 թ. հուլիսի 16-ին գրությամբ դիմում է ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրո, որպեսզի Ռիգայում նախաստորագրված համաձայնագիրը անհապաղ մերժվի, քանզի այն հակասում էր Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրին: Տեսնելով, որ հարցի քննարկումը Քաղբյուրոյում ձգձգվում է՝ Գ. Չիչերինը հուլիսի 24-ին նամակով դիմում է Վ. Մոլոտովին՝ հարցնելով, թե ինչու է ուշանում Քաղբյուրոյի համապատասխան արձագանքը: Չիչերինը գտնում էր, որ, եթե ԿԿ-ը չդատապարտի այդ համաձայնագիրը, ապա դա խոշոր հարված կլինի Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը և լրջորեն կբարդացնի ռուս-թուրքական հարաբերությունները: Ավելին, Գ. Չիչե-

⁶² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 516-517.

⁶³ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 27, տե՛ս նաև Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 104:

⁶⁴ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 516-521.

րինը հասկանալի պատճառներով անթույլատրելի էր համարում այդ համաձայնագրի նախագծի որևէ օրինակի հայտնվելը «դաշնակների» ձեռքում⁶⁵:

Գ. Չիչերինի ահազանգից հետո չի ուշանում ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի որոշումը: Քաղբյուրոն անդամների հեռախոսային հարցման միջոցով Վ. Մուլտովի քարտուղարությամբ 1921 թ. հուլիսի 26-ին որոշում է կայացնում. «Վճռականորեն մերժել ընկ. Իոֆֆեի՝ դաշնակների հետ Ռիգայում ստորագրած համաձայնագրի նախագիծը»⁶⁶: Մի քանի օր անց՝ 1921թ. հուլիսի 30-ին, ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի նախագահությունը, արձագանքելով իր վերադասի՝ ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի որոշմանը, խնդրում էր «դադարեցնել ամեն տեսակ բանակցություններ դաշնակցության հետ»⁶⁷: Բայց այդ խնդրանքն արդեն ավելորդ էր, որովհետև Քաղբյուրոն արդեն մերժել էր Իոֆֆեի ստորագրած Ռիգայի համաձայնագիրը:

Սակայն Ա. Իոֆֆեն, Գ. Չիչերինից ստանալով Քաղբյուրոյի որոշումը, 1921 թ. հուլիսի 28-ին պատասխանում է, որ ինքը այլևս չի կարող վերացնել նախաստորագրված համաձայնագրի «հետքերը», որովհետև այդ «թղթից» դաշնակցականների մոտ այսպես թե այնպես կհայտնվի⁶⁸: Միաժամանակ նա դժգոհություն էր հայտնում խորհրդային պետության վարած արևելյան քաղաքականությունից, որտեղ, ըստ Ա. Իոֆֆեի, կարևորություն չի տրվում ճնշված ազգերի, տվյալ դեպքում՝ հայերի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը⁶⁹:

Ծանոթանալով Ա. Իոֆֆեի մամակին՝ Գ. Չիչերինը իր հերթին 1921 թ. հուլիսի 31-ին մամակով բողոքում է Վ. Ի. Լենինին՝ արևելյան հարցերում Ա. Իոֆֆեի «պարզունակ (նախվ), զուևազարդող և ռոմանտիկ հայացքների համար»⁷⁰:

Որպեսզի Ռիգայի կոնֆերանսի արդյունքում նախաստորագրված ոչ թրքանպաստ նախագծի մասին դաշնակցականների կողմից ինֆորմացիայի հնարավոր արտահոսքի դեպքում մեղմվեն թուրքերի բացասական արձագանքի հետևանքները, Գ. Չիչերինը

⁶⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 521.

⁶⁶ Նույն տեղում, էջ 522:

⁶⁷ Յ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ.խմբագիր և կազմող Վլ. Դազախեցյան, էջ 66:

⁶⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 522-523:

⁶⁹ Նույն տեղում, էջ 523-524:

⁷⁰ Նույն տեղում, էջ 525:

իր հերթին 1921 թ. օգոստոսի 3-ի նամակով խնդրում էր Վ. Ի. Լենինին, որ իրենք առաջինը արձագանքեն այդ միջադեպի մասին: Նա գտնում էր, որ դա Իոֆֆեի անձնական նախաձեռնությամբ արված սխալմունք է, որը ընդհանուր ոչինչ չունի խորհրդային պետության արտաքին քաղաքականության հետ⁷¹: Վ. Ի. Լենինը 1921 թ. օգոստոսի 5-ին հեռախոսով իր համաձայնությունն է տալիս Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին տեղյակ պահելուն⁷²: Թուրքերի կասկածները փարատվում են: Իրականում թուրքերի անհանգստության համար որևէ հիմք չկար, որովհետև Ռիզայի բանակցությունները ընդամենը քաղաքական-դիվանագիտական խաղ էին բուլշևիկների կողմից Ջանգեզուրի՝ «համակովկասյան հակահեղափոխական որջի» խորհրդայնացումը հեշտացնելու համար: Յենց այդպես էլ եղավ: Պատահական չէ, որ երբ հուլիսի 16-ին՝ ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի քարտուղար Ս. Լուկաշինը հեռագրում է Մոսկվա «Ջանգեզուրի լիկվիդացիայի» մասին, Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Իոֆֆեի՝ հուլիսի 14-ին Ռիզայում նախաստորագրված համաձայնագիրը դրանից ընդամենը տասն օր անց՝ հուլիսի 26-ին, ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոն չեղյալ համարեց: Հատկանշական է, որ այդ համաձայնագրի վավերացմանը արգելք են հանդիսացել նաև Բաքվի հայ կոմունիստները⁷³ :

Ռիզայի բանակցությունները ուսանելի են պատմական դասերի առումով: Բուլշևիկ առաջնորդները, բանակցությունների պատրանք ստեղծելով, մի կողմից նպատակ էին հետապնդում հեշտությամբ լուծել Ջանգեզուրի խորհրդայնացման հարցը, իսկ մյուս կողմից՝ հասկացնել քենալականներին, որ չձգձգեն թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրումը:

Ինչ վերաբերում է խորհրդային Հայաստանի ղեկավարությանը, ապա պետք է ասել, որ թե՛ Ղարաբաղի և թե՛ տարածքային-սահմանային մյուս խնդիրներում հանդես չբերեց վճռականություն և հետևողականություն: Խորհրդային Հայաստանի ղեկավարության թշնամանքն ու անհանդուրժողականությունը այնքան մեծ էր Հ.Յ. Դաշնակցության հանդեպ, որ և՛ Ա. Մյասնիկյանը, և՛ Ս. Լուկաշինը, և՛ Ա. Մռավյանը, խոսքերը մեկ արած, անթույլատրելի էին

⁷¹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 526:

⁷² Նույն տեղում, էջ 527:

⁷³ Տասնապետյան Հ., Հ. Յ. Դաշնակցությունը իր կազմություննե մինչև ժ. ընդհ. ժողովը (1890-1924), Աթենք, 1988, էջ 162:

համարում Ռիգայի բանակցությունները՝ չկռահելով, որ դա ընդամենը Կենտրոնի կողմից դիվանագիտական խաղ էր:

Պատմաքաղաքական դեպքերի և վավերագիր նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի կապ կա նաև Ջանգեզուրի ապստամբության ճնշման ու Լեռնային Ղարաբաղի հարցը Ադրբեջանի օգտին լուծելու միջև: Ժամանակային առումով դրանք ընթացել են գրեթե միաժամանակ:

Հայտնի է, որ Գ. Նժդեհի գլխավորած Լեռնահայաստանի ազատագրական պայքարի գործնական նպատակների մեջ էր մտնում ոչ միայն Ջանգեզուրի, այլ նաև Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին միացնելը: Դեռ 1921 թ. մայիսի կեսերին Սիսիանի շրջանի Ղալաջուղ գյուղում Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի պատվիրակությունների միջև ընթացող բանակցություններում Նժդեհը զենքը ցած դնելու կարևոր պայման էր համարել Ղարաբաղի՝ Հայաստանի կազմում լինելը (Ջանգեզուրի միացումը արդեն կասկած չէր հարուցում)⁷⁴:

Ակներև է, որ Լեռնահայաստանը խաղաղ խորհրդայնացնելու նպատակով ձեռնարկված Ռիգայի բանակցություններին շատ նման սցենարով ընթացավ նաև ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի պլենումի հունիսի 3-ի՝ «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու մասին» և Հայաստանի կառավարության՝ 1921 թ հունիսի 12-ի «Լեռնային Ղարաբաղը այսուհետ ՌՍԽՅ անբաժան մաս» հայտարարելու մասին հայտարարություն-որոշումների վերանայման գործընթացը⁷⁵: Քանի դեռ Լեռնահայաստանի դիմադրությունը հաջողությամբ շարունակվում էր, ՌԿ(Բ)Կ ղեկավարությանը թվում էր, թե տրամադիր է Լեռնային Ղարաբաղի հարցը Հայաստանի օգտին լուծել: Բայց հենց որ հունիսի վերջին և հուլիսի սկզբին կարմիր բանակը սկսեց արագորեն հնազանդեցնել Գ. Նժդեհի գլխավորած պայքարը և խորհրդայնացնել Ջանգեզուրը, բուլշևիկ ղեկավարության դիրքորոշումը Ղարաբաղի պատկանելիության խընդրում փոխվում է հօգուտ Ադրբեջանի:

Մինչդեռ, Խորհրդային Հայաստանի քաղաքական ղեկավարությունը՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ, այդ խնդրում ցուցաբերեց անհեռատեսություն՝ գտնելով, որ կարմիր բանակը

⁷⁴ «Ջանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.)», կազմ. Վլ. Ղազախեցյան, Ե., 2008, էջ 10:

⁷⁵ Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 146:

պետք է ռազմական գործողությունների միջոցով անհապաղ լուծի Ձանգեզուրի հարցը⁷⁶: Այնինչ Ձանգեզուրի գրավման և խորհրդայնացման հարցի ձգձգումը կարող էր ծառայել իբրև լծակ և՛ Ռիզայի բանակցությունների ժամանակ, և՛ Լեռնային Ղարաբաղի խնդրում հայանպաստ արդյունքների և լուծումների հասնելու համար:

Սակայն Ռիզայի բանակցությունները, անկախ իրենց արդյունքից, այնուամենայնիվ, անհանգստություն առաջացրին քեմալականների շրջանում և որոշակի դեր խաղացին թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրումն արագացնելու և 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի ոգով կարսում անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագիր կնքելու գործում:

Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրման գործում, անշուշտ, առավել մեծ խթան հանդիսացավ հունական վտանգի ուժեղացումը 1921 թ. ամռանը: Հունիսի վերջերից հունական զորքերը անցան վճռական հարձակման: Թուրքերը հետ քաշվեցին Սակարիա գետի մյուս ափը: Այդժամ արդեն քեմալականները շահագրգռություն հանդես բերեցին կոնֆերանսի հրավիրումը արագացնելու վերաբերյալ⁷⁷:

1921 թ. հունիսի 14-ին Մոսկվայում Թուրքիայի դեսպանը իր պետության անունից պատրաստակամություն հայտնեց Անդրկովկասի հանրապետությունների հետ ընդհանուր պայմանագիր կնքելու վերաբերյալ⁷⁸: Ինչպես ասվեց, դա պայմանավորված էր մի կողմից հունական վտանգով, որի զորքերը շարժվում էին դեպի Անգորա, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանից օգնություն ստանալու ակնկալիքով:

Անտանտի տերությունների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա) դիվանագիտական շրջանակները փորձում էին Հունաստանին հաշտեցնել Թուրքիայի հետ, որպեսզի վերջինս Ռուսաստանից օգնության և կախվածության որևէ կարիք չունենա: Սակայն հունական կառավարությունը մերժում է դաշնակիցների առաջարկը և սկսում նոր հարձակման նախապատրաստություն: Միայն դրա-

⁷⁶ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 17:

⁷⁷ Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., էջ 135:

⁷⁸ Багиров Ю. А., նշվ. աշխ., էջ 67:

նից հետո քենալականները սկսեցին կարևորություն տալ թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին⁷⁹:

Այս առնչությամբ անհիմն պետք է համարել թուրք պատմագրության մեջ տարածում գտած այն պնդումը, թե խորհրդային կառավարությունը ձգձգում է Կարսի պայմանագրի կնքումը և որ դրան ձեռնամուխ եղավ միայն Սակարիայի ճակատամարտում թուրքերի տարած հաղթանակից հետո⁸⁰: Այնինչ փաստերը ցույց են տալիս, որ կոնֆերանսի ձգձգման գլխավոր խոչընդոտը թուրքական կողմն էր:

Անգորայի կառավարությունում նորանշանակ արտգործոժողկոմ Յու. Քենալ բեյը հուլիսի 1-ին հեռագրով հրավեր է ուղարկում «եղբայրական Ադրբեջանի Հանրապետությանը»՝ կոնֆերանսի համար պատվիրակություն նշանակելու: Միաժամանակ պատճառաբանելով իր նախարար նշանակվելու և բազմազբաղ լինելու հանգամանքը՝ նա խնդրում է Ադրբեջանի արտգործոժողկոմ Մ. Հուսեյնովի համաձայնությունը կոնֆերանսի հրավիրման վայրը Կարսից տեղափոխել Անգորա: Նույն կերպ Յու. Քենալը Մ. Հուսեյնովի միջոցով փորձում էր համոզել նաև Հայաստանին՝ իր պատվիրակներն ուղարկել Անգորա⁸¹:

Ի պատասխան Յու. Քենալի հուլիսի 1-ի հեռագրի՝ Ադրբեջանի արտգործկոմիսար Մ. Հուսեյնովը հուլիսի 21-ի պատասխան հեռագրում լիովին համաձայնություն է տալիս թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի շուտափույթ հրավիրմանը և պատվիրակությունների նշանակմանը: Ինչ վերաբերում էր կոնֆերանսը Անգորայում հրավիրելու առաջարկին՝ Մ. Հուսեյնովը դիվանագիտորեն ու տակտով ժխտողական պատասխան է տալիս⁸²: Ինքնին հասկանալի է, որ նման պատասխանի դիրեկտիվը գալիս էր Մոսկվայից:

Անգորայում ՌՄՖԽՅ լիազոր ներկայացուցիչ Ս. Նացարենուսին հասցեագրված հուլիսի 8-ի նամակով Գ. Չիչերինը հասկացնել էր տալիս, որ խորհրդային կողմի համար նպատակահարմար չէ կոնֆերանսի գումարումը Անգորայում⁸³: Խորհրդային կողմը

⁷⁹ Ձոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 256:

⁸⁰ Хармандарян С. В., Карсская конференция 1921 г. и ее предистория («Բանբեր Հայաստանի արխիվների, 1963, թիվ 3, էջ 178–179):

⁸¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 178–179, ДВП СССР, т. 4, М., 1960, с. 228, Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 228.

⁸² ДВП СССР, т. 4, М., 1960, с. 227.

⁸³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 511–512.

պնդում էր, որ կոնֆերանսը հրավիրվի Կարսում: Կարսը Յու.Քեմալի համար ցանկալի չէր ոչ միայն նրա համար, որ նա չէր կարող բացակայել մայրաքաղաքից, այլև հավանաբար նաև այն պատճառով, որ նա Կարսում ինչ-որ «դավադրություն» էր տեսնում: Այդ մասին նկատել էր Անգորայում ՌՍՖՍՀ ղեսպանատան աշխատակից Բ. Պիսկունովը, ով թուրք ղեկավարության հետ ունեցած զրույցներից ստացել էր այն տպավորությունը, որ թուրքերի մոտ մի տեսակ կասկածանք կար, որ իբր խորհրդային կողմը համառորեն պնդում է կոնֆերանսը Կարսում անցկացնել, որպեսզի «խլի Կարսի մարզը և հանձնի Հայաստանին»⁸⁴: Սակայն վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ նման կասկածի նշույլ իսկ չկար: Դա թուրք քաղաքական շրջանակների դիվանագիտական աճապարարության հնարքներից էր, որպեսզի կոնֆերանսը անցկացվեր Անգորայում, որտեղ ավելի մեծ կլիներ ճնշումը խորհրդային կողմի վրա:

ԹԱՍԺ կառավարության արտգործկոմիսար Յու. Քեմալ բեյը Անգորայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Նացարենուսի⁸⁵ միջոցով հուլիսի 12-ին Գ. Չիչերինին փոխանցված նոտայում արժարժում էր առաջիկա կոնֆերանսի հրավիրման մի քանի հարցեր: Այստեղ դարձյալ խոսք է բացվում առանձին, թե միասնական պայմանագրեր կնքելու ձևաչափի շուրջ: Բանն այն է, որ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը հստակ չէր նշում, թե ինչպիսի պայմանագիր պետք է կնքվեր՝ միասնական թե յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին-առանձին: Իհարկե, այն ժամանակ (փետրվար-մարտին) հավանաբար հասկացվում էր առանձին, որովհետև դրանք դիտվում էին անկախ պետություններ, այդ թվում Վրաստանը, որը դեռ նոր էր խորհրդայնացել: Դրանից հետո՝ անցած մի քանի ամիսներին, Ռուսաստանի և անդրկովկասյան հանրապետությունների, մյուս կողմից՝ հենց անդրկովկասյան հանրապետությունների միջև տեղի էին ունենում տնտեսական, քաղաքական, ռազմական և այլ բնույթի ինտեգրացիոն գործընթացներ և անդրկովկասյան հանրապետությունները արդեն ներկայանում էին որպես մեկ ամբողջական սուբյեկտ, ուստի խորհրդային կողմի համար այլևս ընդունելի չէր առանձին, անջատ պայմանագրի կնքումը:

⁸⁴ Նույն տեղում, էջ 532:

⁸⁵ Նա այդ պաշտոնում էր նշանակվել 1921 թ. մայիսի 5-ին (ДВП СССР, т. 4, М., 1960, с.660.):

Այս նոտայով Յու. Քեմալը, մատնանշելով իր զբաղվածութունը, դարձյալ փորձում էր համոզել խորհրդային կողմին կոնֆերասի նշանակման վայր դարձնել Անգորան⁸⁶:

Ի պատասխան Գ. Չիչերինի հուլիսի 8-ի նամակի՝ Ս. Նացարենուսը հուլիսի 14-ի իր զեկուցագրում իրազեկում և մի շարք պարզաբանումներ է տալիս թուրքերի կողմից կոնֆերանսը ձգձգելու, նրա ձևաչափի, հրավիրման վայրի, Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության և այլ հարցերի վերաբերյալ:

Ռուսական դիվանագետը հայտնում է, որ դեռ հուլիսի սկզբին (3-ին) Յու. Քեմալը կոնֆերանսին մասնակցելու հրավեր է արել Վրաստանին, Ադրբեջանին և վերջինիս միջոցով՝ Հայաստանին: Հայաստանին անմիջական հրավեր չի ուղարկվել այն հիման վրա, որ նա՝ որպես Թուրքիայի և Հայաստանի նախկին կառավարությունների միջև կնքված Ալեքսանդրապոլի պայմանագիրը մերժած երկիր, պետք է ինքը առաջինը ցանկություն հայտնի նորից պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել Թուրքիայի հետ⁸⁷:

Նացարենուսը հայտնում է, որ «Կոնֆերանսը կլինի ընդհանուր, սակայն թե պայմանագիրը ինչպիսին կլինի՝ միասնական թե առանձին, որոշակի հետևության չեն եկել և կարելի է ենթադրել, որ պայմանագրերը կկնքվեն յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին, ինչը մեր սրտով չէ»⁸⁸:

Կոնֆերանսի անցկացման վայրի հարցում թուրքերը շարունակում էին պնդել Անգորայի վրա: Նացարենուսը հույս էր հայտնում, որ ինքը կկարողանա Յու. Քեմալից և նրա կառավարությունից համաձայնություն ստանալ, որպեսզի կոնֆերանսը տեղափոխվի Կարս⁸⁹: Ինչ վերաբերում է կոնֆերանսին Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության խնդրին, ապա այն լուծվում է դրականապես: Թուրքական կողմը՝ հանձին նորանշանակ արտգործո՞ղկոմ Յու. Քեմալ բեյի, շահագրգռություն հանդես բերեց խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությանը կոնֆերանսին: Դրա իրավական հիմքն ուներ խորհրդային կողմը՝ հանձին Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի: Թուրքական կողմի համար ցանկալի էր Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը, որ-

⁸⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 512.

⁸⁷ Նույն տեղում, էջ 513:

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Նույն տեղում, էջ 514:

պեսզի բանակցությունների ժամանակ բացառվեր Մոսկվայի պայմանագրի սկզբունքներից հնարավոր որևէ շեղում կամ թյուրիմացություն:

Դեռևս հունիսին թուրքերին ուղղված մի շարք գրություններում Գ. Չիչերինը փարատում էր թուրքերի մտավախությունը, թե հնարավոր է, որ Անդրկովկասի հանրապետությունները չհամաձայնվեն Մոսկվայի պայմանագրով իրենց վերաբերող պայմաններին⁹⁰: Ստանալով Ռուսաստանի արտգործօղկոմատի հավաստիացումները՝ քեմալական կառավարության արտգործօղկոմ Յու. Քեմալը հուլիսի 1-ին հայտնում է Գ. Չիչերինին, որ Թուրքիայի կառավարությունը պատրաստ է կոնֆերանսին, և «երջանիկ կլինի», եթե դրան մասնակցի նաև Ռուսաստանի պատվիրակությունը, որպեսզի կանխվի Անդրկովկասի հանրապետությունների (հատկապես Չայաստանի) հնարավոր առարկությունները կնքվելիք պայմանագրի կետերի շուրջ⁹¹: Այս առնչությամբ, մեր կարծիքով, հիմնավոր չէ խորհրդային պատմաբան Ա. Խեյֆեցի այն պնդումը, թե թուրքերը ավելորդ էին համարում ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությունը խորհրդածողովին⁹²: Եթե մի կողմ թողնենք թուրքական դիվանագիտական լեզվին բնորոշ «երջանիկ» լինելու մասին սեքսեթանքները, ապա տրամաբանությունը հուշում է, որ Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը երաշխիք էր Մոսկվայի պայմանագրի սկզբունքները առանց գլխացավանքի նոր պայմանագրում անցկացնելու համար:

Անգորայի կառավարությունը, համաձայնություն տալով կոնֆերանսին Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությանը, միևնույն ժամանակ ցանկություն հայտնեց, որ այդ ներկայացուցիչը չլինի, թուրքերի կարծիքով, հայերին համակրող Լեգրանը, այլ մեկ ուրիշը: Ս. Նացարենուսը հուլիսի 8-ի իր նամակում ակնարկում էր, որ Ս. Քեմալը և Յու. Քեմալը ցանկանում են տեսնել իր թեկնածությունը⁹³: Թուրքերի համար Բ. Լեգրանը անցանկալի և հայասերի համարում ուներ հավանաբար այն պատճառով, որ փաստորեն նրա նախածեռնությամբ Չայաստանի հետ նախաստորագրվել

⁹⁰ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 170, 177.

⁹¹ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 170, 177, Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 136:

⁹² Хейфец А. Н., Советская дипломатия и народы Востока (1921–1927), с. 161.

⁹³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 513.

էր 1920 թ. հոկտեմբերի 28-ի բավականին հայանպաստ պայմանագիրը, ինչը, սակայն, Բաքուն և Մոսկվան հավանության չարժանացրին: Թուրքերի սրտով չէր նաև Լեզրանի ստորագրած Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը: Երկու դեպքում էլ Ռուսաստանը պարտավորվում էր վերականգնել նախապատերազմյան 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: Թուրքերը տեղյակ էին այդ փաստաթղթերի բավանդակությանը, ուստի Բ. Լեզրանը նրանց համար ցանկալի անձ չէր: -

Այս առնչությամբ տեղին է նկատել Կ. Խաչատրյանը, որ տրամաբանական կլիներ, եթե կոնֆերանսին ՌՍՖՍՀՆ ներկայացուցիչ նշանակվեր կովկասյան գործերին քաջատեղյակ Բորիս Լեզրանը, որը ի պաշտոնե նաև Անդրկովկասի հանրապետություններում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչն էր⁹⁴: Օգոստոսի 8-ի գրությամբ Գ. Չիչերինը համաձայնություն է տալիս թուրքական առաջարկին՝ Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության վերաբերյալ: Չիչերինը նպատակահարմար էր գտնում կոնֆերանսին ռուս ներկայացուցչի մասնակցությունը խորհրդակցական ձայնի իրավունքով: Այստեղ նկատի էր առնվում այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքվելու էր ոչ թե Ռուսաստանի, այլ Անդրկովկասի երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև: Մնում էր համապատասխան թեկնածուի առաջադրումը և նշանակումը: Խորհրդային կառավարությունը հաշվի առավ թուրքերի ցանկությունը Բ. Լեզրանին չնշանակելու հարցում: Տարօրինակն ու զավեշտալին այն է, որ խորհրդային ղեկավարությունը կարծես դարձել էր Թուրքիայի կամակատարը: Նա ոչ միայն զանգվածային գիջումներ էր կատարում թուրքերին, այլև անգամ պատվիրակություն նշանակելիս հաշվի էր առնում նրանց ցանկությունը:

Այդպես արվեց Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ, երբ հայազգի Լ. Կարախանը հանվեց պատվիրակության կազմից, իսկ հայկական պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցելու կոնֆերանսին: Նմանատիպ քայլ կատարվեց նաև այս անգամ: Շատ թե քիչ հայամետ դիրքորոշում ունեցող Բ. Լեզրանի փոխարեն թուրք-անդրկովկասյան բանակցություններում ՌՍՖՍՀՆ ներկայացուցիչ նշանակվեց Լատվիայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ (դեսպան), Գ. Չիչերինի բնորոշմամբ Վ. Ի. Լենինի վստահ-

⁹⁴ Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 137:

ված անձ, Յակով Գանեցկին (Ֆյուրստենբերգը)⁹⁵: Ի դեպ, կարելի էր հասկանալ անձնապես վիրավորված Լեգրանին, ով սեպտեմբերի սկզբներին դիմում ներկայացրեց իրեն ազատելու զբաղեցրած պետական պաշտոնից:

Քանի որ կոնֆերանսը հրավիրվելու էր Թուրքիայում, ուստի հրավիրող կողմը թուրքական կառավարությունն էր: Օգոստոսի երկրորդ կեսին Ռուսաստանն իր համաձայնությունն է տալիս մասնակցելու Կարսի կոնֆերանսին: Թուրքիայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Նացարենուսը ԱՄԺ կառավարության արտոգործող կոմ Յու. Քենալին ուղղված օգոստոսի 20-ի նոտայում Ռուսաստանի կառավարության անունից գոհունակությամբ ընդունում է առաջիկա կոնֆերանսին մասնակցելու համար ուղարկված հրավերը: Սակայն մերժում է կոնֆերանսը Անգորայում հրավիրելու առաջարկը: Դրա փոխարեն ցանկություն էր հայտնվում կոնֆերանսը Կարսում հրավիրել, քաղաք, որ առաջինը հենց թուրքերն էին առաջարկել⁹⁶:

Անգորան խորհրդային կողմի համար ցանկալի չէր ոչ միայն վատ կապի, կտրվածության ու պատերազմական թատերաբեմին շատ մոտ լինելու, այլև, մեր կարծիքով, նաև քաղաքական-հոգեբանական տեսակետից, որովհետև թուրքական մայրաքաղաքում իրենց դիրքորոշումներում հայ և վրաց պատվիրակները այնքան էլ ազատ չէին զգա, չենք բացառում նաև ուժային ու հոգեբանական ճնշումները, ինչպիսին, օրինակ, եղավ Ալեքսանդրապոլի կոնֆերանսում:

Ի վերջո, օգոստոսի 26-ին համաձայնություն է կայացվում կոնֆերանսը անցկացնել Կարսում⁹⁷: Այն բանից հետո, երբ վերջնականորեն ճշտվում է կոնֆերանսի հրավիրման վայրը՝ Կարսը, դրանից հետո թուրքական պատվիրակության նախագահ է նշանակվում Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան, որի շտաբի նստավայրը հենց Կարսն էր: Նախատեսվում էր կոնֆերանսը հրավիրել սեպտեմբերի վերջին:

⁹⁵ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 290, Генотид армян, т. 2, ч. 1, с. 531, Ключников Ю. и Сабанин А., Еջվ. աշխ., մաս 3, թողարկում I, М., 1928, էջ 45—46: Յա. Գանեցկին դիվանագիտության ասպարեզում նորեկ չէր: Նա Ա. Իոֆֆեի հետ միասին 1920 թ. օգոստոսի 11-ին Ռիզայում հաշտության պայմանագիր էր ստորագրել Լատվիայի հետ:

⁹⁶ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 287.

⁹⁷ Генотид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 571—572.

Կոնֆերանսին մասնակցելու Յու. Քեմալի պաշտոնական հրավերը ստացան Վրաստանը և Ադրբեջանը: ՎՍԽՅ արտգործկոմիսար Ա. Սվանիձեն ԹԱՄԺ կառավարության արտգործկոմիսար Յու. Քեմալին ուղղված հուլիսի 31-ի նոտայում խորին գոհունակությամբ ընդունում է Թուրքիայի հրավերը⁹⁸: Նույնպիսի գոհունակությամբ հրավերը ընդունում է նաև Ադրբեջանը: Փոքր- ինչ այլ երվիճակը Հայաստանի հետ կապված: Հայաստանի հրավերի հարցում թուրքերը պահանջում էին, որ հայերը պետք է պաշտոնապես ցանկություն հայտնեն կոնֆերանսին մասնակցելու համար, քանի որ մինչ այդ քեմալականների հետ կնքվել էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Թուրքերի կողմից արհեստականորեն ստեղծված իրավական այդ անհարմարությունը հարթելու նպատակով Գ. Չիչերինը դիմում է Հայաստանի կառավարությանը, որպեսզի վերջինս էլ դիմի Յու. Քեմալին՝ ցանկություն հայտնի մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին⁹⁹:

Գ. Չիչերինի ուղերձին (դիմումին) հետևում է Հայաստանի արտգործկոմիսար Ա. Մռավյանի օգոստոսի 24-ի նոտան՝ ուղղված Յու. Քեմալին: Նրանում մասնավորապես ասվում է, որ «Հայաստանի և Թուրքիայի միջև փախհարաբերությունները պայմանագրային հիմունքներով վերջնականորեն կարգավորելու նպատակով Խորհրդային Հայաստանը ցանկություն է հայտնում մասնակցելու մոտակա ապագայում հրավիրվելիք թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին՝ ՌՍՖՍՀ ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորհրդային Հայաստանի կառավարությունը հույս ունի, որ ԹԱՄԺ կառավարությունը կտա իր համաձայնությունը և չի զլանա այդ մասին տեղյակ պահել»¹⁰⁰:

Ա. Մռավյանի նոտայի պատասխանը ուղարկվում է օգոստոսի 30-ին: Անգորայի կառավարության արտգործկոմիսարը գոհունակությամբ ընդունում է Հայաստանի առաջարկությունը, որպեսզի Կարսի կոնֆերանսում վերջնականորեն կարգավորվեն հայ-թուրքական հարաբերությունները Մոսկվայի պայմանագրի պայմաններին համապատասխան: Յու. Քեմալը Ա. Մռավյանին տեղեկացնում է, որ Կարսի կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը

⁹⁸ ДВП СССР, т. 3, М., 1960, с. 249.

⁹⁹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 528–529.

¹⁰⁰ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 292.

կզխավորի Արևելյան ճակատի հրամանատար, պատգամավոր Ք. Կարաբեքիր փաշան: Այս նշանակումը կարծես հիշեցնել էր տալիս Ալեքսանդրապոլի կոնֆերանսի պատմությունը: Յու. Քենալը կոնֆերանսի հրավիրման ժամկետ էր առաջարկում սեպտեմբերի վերջին շաբաթը և ցանկանում էր ստանալ համաձայնություն, ինչպես նաև հայկական պատվիրակության կազմի մասին տեղեկություններ¹⁰¹:

Թուրքերի համաձայնությունից հետո մնում էր հանձնաժողովների ձևավորումը: Անդրկովկասյան պատվիրակությունները ներկայացնում էին՝ Հայաստանը՝ արտգործժողկոմ Ա. Մռավյանը և ներքին գործերի ժողկոմ Պ. Մակինցյանը, Վրաստանը՝ ռազմածովային գործերի ժողկոմ Շ. Էլիավան և արտգործ. և ֆինանսների ժողկոմ Ալ. Սվանիձեն, Ադրբեջանը՝ բանգյուղտեսչության ժողկոմ Բ. Շահթախթինսկին և ՌՍՖՍՀ ներկայացուցիչ՝ Յա. Գանեցկին: Թուրքական պատվիրակության նախագահին էր Արևելյան ճակատի հրամանատար, ԱՄԺ պատգամավոր Ք. Կարաբեքիր փաշան, անդամներ՝ ԱՄԺ պատգամավոր Վելի բեյը, հանրային աշխատանքների նախարարի նախկին տեղակալ Մուխթար բեյը և Ադրբեջանում Թուրքիայի լիազոր-ներկայացուցիչ Մեմդուհ Շևքեթ բեյը¹⁰²:

ՀԿ(Բ)Կ ԿԿ-ը 1921 թ. օգոստոսի 26-ի նիստում հանձնարարում է Մռավյանին նախապատրաստվել կոնֆերանսին: Կենտկոմը և կառավարությունը պատրաստեցին պահանջների մի փաստաթուղթ՝ «հուշագիր, հարցեր» խորագրով՝ Կարսի կոնֆերանսում քննարկելու համար: Նրանում ներառված էին քաղաքական, տնտեսական, առևտրական, վնասների հատուցման վերաբերյալ հարցեր և այլն:

Փաստաթղթի քաղաքական բաժինը վերաբերում է հայ-թուրքական սահմանագծին: Առաջարկվում էր որոշ ռւղղում կատարել հետևյալ շրջաններում. 1. Սուրմալուի գավառում, 2. Նախիջևանի մարզում և 3. Արփաչայի չեզոք գոտում¹⁰³: Հուշագրում առաջարկվում էր Սուրմալու գավառի Կողբի աղահանքերի շրջանը ներառել Հայաստանի սահմաններ մեջ:

¹⁰¹ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 293, ЗУА, ф. 113, г. 3, к. 11, л. 227:

¹⁰² ЗУА, ф. 113, г. 3, к. 11, л. 227, գ. 56, л. 68–69:

¹⁰³ Ախուրյանի չեզոք գոտում սահմանային որոշ ուղղում կատարել հավանաբար նկատի էր առնվում նաև պատմական Աճիի ավերակները և դրան հարող մի շարք գյուղեր ՀՍԽՄ մեջ ներառելը: Սակայն հուշագրում Աճիի անունը կոնկրետ չի հիշատակված:

Այնուհետև հուշագիրը առաջարկում էր կամ Նախիջևանի երկրամասի հովանավորությունը հանձնել Հայաստանին, կամ էլ անցկացնել նոր սահմանագիծ: Քյանդի-Խոկ-Ազնաբերդ-Սուլթան բեկ, այնուհետև ուղիղ գծով մինչև Քյուքի-դաղ (կամ Կուքի) լեռը¹⁰⁴: Ներկայացված սույն սահմանագծով Շարուրի դաշտը մինչև Շահ-թախթի և այնտեղից էլ հյուսիս մինչև Կուքի լեռը անցնելու էր Հայաստանին¹⁰⁵:

Փաստաթղթում հիմնավորվում էր, որ Նախիջևանի երկրամասից առանձին ինքնավար միավորի ստեղծումը Մոսկվայի պայմանագրի սահմաններով Հայաստանին զրկում էր 1-ին՝ Երևանը Դարալագյազի և Ջանգեզուրի հետ կապող միակ հարմար ճանապարհից, այն է՝ Բաշ Նորաշեն-Արփա-Քեշիշքենդ ճանապարհը, 2-րդ՝ Հայաստանը կորցնում է բամբակի և աղի հարուստ շրջանները և 3-րդ՝ կտրվում էր անմիջական կապը Պարսկաստանի հետ:

Արփաշայի չեզոք գոտու վերաբերյալ հուշագրով առաջարկվում էր այնտեղ մտցնել հայ-թուրքական խառը կառավարչություն:

Հուշագրի տնտեսական բլոկը վերաբերում էր տնտեսական նշանակության մի շարք ոլորտներից օգտվելու խնդրին: Նկատի առնելով, որ Մոսկվայի պայմանագրով Կարսի մարզի և Սուրմալուի գավառի կորուստը Հայաստանին զրկում է տնտեսական շատ ռեսուրսներից, ուստի հուշագրով առաջարկվում էր, Թուրքիային որոշակի տոկոսավճար հատկացնելով, Հայաստանին տրվի այդ երկրամասերի տնտեսական շահագործման հնարավորություն. ա/Օլթիի ածխահանքերի, բ/Կողբի աղի և Կաղզվանի մկնդեղի հանքերի, գ/Սարիղամիշի անտառանյութի, դ/Կարսի խոտհարքների և արտավայրերի, եթե, այնուամենայնիվ, դրանք մնան Թուրքիայի սահմաններում:

Հուշագրի առևտրական առաջարկների բաժնում առաջարկվում էր առավել նպաստավոր պայմանների ստեղծում՝ ապրանքների անմաքս փոխադրման և առևտրական գործունեության համար: Հուշագրում խոսվում էին նաև գաղթականների անարգել վերաբնակման, նրանց անձի և գույքի անձեռնմխելիության և հումանիտար այլ հարցերի մասին:

Վերջում Հայաստանի կրած վնասների մասին հավելված

¹⁰⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 167, գ. 23, թ. 97:

¹⁰⁵ Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ., էջ 114–116:

բաժնում տվյալներ էին բերվում Ալեքսանդրապոլի գավառում թուրքերի գործած գազանությունների ու կողոպուտի վերաբերյալ, ինչի մասին արդեն խոսվել է: Հուշագրում հարց էր բարձրացվում Ալեքսանրապոլի դեպոյի հափշտակված գույքի վերադարձման մասին և այլն¹⁰⁶: Հետագայում կտեսնենք, որ Հայաստանի կառավարության ներկայացրած հուշագրի և ոչ մի առաջարկ չընդունվեց:

Կոնֆերանսի նախապատրաստության եզրափակիչ փուլի համար սկզբունքային նշանակություն ունեցան ՌԿ(Բ)Կ ԿԿ Կավբյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3–4-ի պլենումի որոշում-հրահանգները: Պլենումը, լսելով Կարսի կոնֆերանսի մասին հարցը, որոշում է.

1. Բանակցություններ վարել՝ խստորեն մնալով Սոսկվայի պայմանագրի շրջանակներում:

2. Ցուցադրել կովկասյան հանրապետությունների համերաշխությունը Անգորայի հետ՝ Անտանտի դեմ մղվող պայքարում:

3. Բանակցությունների ընթացում բարձրացնել արոտավայրերից, Կաղզվանի շրջանի աղահանքերից օգտվելու, ինչպես նաև Ծորոխի շրջանի պղնձահանքերի կոնցեսիոն շահագործման մասին հարցերը:

4. Ոչ մի դեպքում չթույլատրել կովկասյան որևէ հանրապետության մեկուսացված ելույթ: Բոլոր հարցերում պետք է լինել միակամ¹⁰⁷:

Կավբյուրոյի սույն որոշումը կանխորոշում էր բանակցությունների բնույթը, ընթացքը և հարցերի շրջանակները: Ինչպես նկատում ենք, բարձրացվելիք հարցերը ընդհանուր բնույթի էին և զուտ տնտեսական, սահմանային որևէ պահանջ չէր ներկայացնում և Հայաստանի օգտին որևէ հարց չէր ներառում: Հրահանգում որևէ խոսք չկար ոչ Անիի, ոչ էլ Կողբի մասին: Պլենումը պարզապես հրահանգում էր կոնֆերանսի ժամանակ ցուցադրել պրոլետարական համերաշխություն բարեկամ թուրքերի հետ:

Սեպտեմբերի 4-ին, ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի կովկասյան բյուրոյի պլենար նիստի ավարտից հետո ՀՍԽՀ կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանը ուղիղ գծով Ա. Մռավյանին և Ս. Լուկաշինին տեղեկացնում է Կավբյուրոյի այդ որոշման մասին և առաջարկում իս-

¹⁰⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, ք. 167, գ. 83, ք. 97–100:

¹⁰⁷ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 47 ք. 14, ֆ. 113, ց. 3, գ. 11, ք. 17, «Խորհրդային Հայաստան», 16 հոկտեմբերի 1921 թ.:

կույն կազմել պատվիրակություն և ուղարկել Թիֆլիս¹⁰⁸: Կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության հրահանգով բնականաբար, անկախ իրենց կամքից, բարյացակամ վերաբերմունք պետք է ցույց տային նաև Հայաստանի իշխանությունները և հայ բուլշևիկ առաջնորդները: «Խորհրդային Հայաստանի վերաբերմունքը դեպի քեմալիստները, - գրում էր Ալ. Մյասնիկյանը, - պետք է լինի բարյացակամ»¹⁰⁹:

Սեպտեմբերի 19-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ Ա. Մռավյանին և Պ. Մակինցյանին տրվում է համապատասխան լիազորությամբ մանդատ՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի և կառավարության միջև կայանալիք կոնֆերանսի համար պատվիրակ նշանակելու և ՅՍԽՅ կառավարության անունից ստորագրելու բարեկամության և խաղաղության պայմանագրեր և կոնվենցիաներ¹¹⁰:

Այդպիսով, Հայաստանի և Անդրկովկասի մյուս հանրապետությունների պատվիրակությունները ժամանակին պատրաստ էին ուղևորվելու Կարս:

Մնում է պարզել, թե ինչպիսին էր միջազգային դրությունը կոնֆերանսի հրավիրման նախօրյակին: Հայտնի է, որ հուլիսի կեսերին Անգորային մահացու սպառնալիք էր պատել: Օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 13-ը Անգորայի մատույցներում տեղի ունեցավ Սակարիայի խռչողափայլ ճակատամարտը: Թուրքերը կատարյալ հաղթանակ տարան հույների նկատմամբ: Չլիներ Ռուսաստանի համակողմանի օգնությունը, ըստ ամենայնի, չէր լինի Սակարիայի հաղթանակը, ուստի և չէր լինի թուրքական պետությունը ներկայիս սահմաններով: Խորհրդային Ռուսաստանը ուժ տվեց Թուրքիային ընդդեմ Հունաստանի և նաև Հայաստանի: Խորհրդային կառավարությունը՝ հանձին Գ. Չիչերինի, նաև Գ. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը և այլ պետական գործիչներ հեռագրական շնորհավորանքներ հղեցին Մ. Քեմալին և թուրք ժողովրդին հույն «զավթիչների» դեմ մղված պայքարում տարած փայլուն հաղթանակի առթիվ¹¹¹:

¹⁰⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 31, ք. 33:

¹⁰⁹ ՀԱԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 104, ք. 4:

¹¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, ք. 260:

¹¹¹ Багиров Ю. А., Из истории советско-турецких отношений в 1920 – 1922 гг., Баку, 1965, с. 69.

Իրենց հերթին, Անտանտի երկրները նպաստեցին նրան, որ թուրքերն իրենց զինված ուժերը դուրս բերեն Կիլիկիայից, Սիրիայից, Հայկական լեռնաշխարհից և կենտրոնացնեն Հունական ճակատի վրա: Արդյունքում հույները ջախջախիչ պարտություն կրեցին: Արևմտյան ճակատում թուրքերի տարած հաղթանակը ռազմաքաղաքական ու դիվանագիտական նպաստավոր հող ստեղծեց Կարսի կոնֆերանսում թուրքերի անզիջող կեցվածքի համար:

Մյուս կողմից, Կարսի կոնֆերանսի նախօրյակին ժնևում բացվեց Ազգերի լիգայի 2-րդ համաժողովը (ասամբլեան): Թվում էր, թե Կարսի կոնֆերանսից առաջ սա թուրքերին ինչ-որ չափով անհանգստացնող գործոն կլինի: Նստաշրջանը, լսելով 6-րդ կոմիտեի զեկուցումը Հայկական հարցի վերաբերյալ և վերահաստատելով Լոնդոնի (1921 թ. փետրվար-մարտ) կոնֆերանսի որոշումը հայերի՝ Ազգային օջախ ստեղծելու գաղափարի մասին, սեպտեմբերի 21-ին միաձայն ընդունեց հետևյալ որոշում-բանաձևը. «Ասամբլեան կոչ է անում Ա. Լ. Խորհրդին Սևրի պայմանագրի վերանայման ընթացքում համոզել գլխավոր դաշնակից տերություններին այդ պայմանագրում նախատեսել այնպիսի դրույթի անհրաժեշտություն, որը կերաշխավորի Հայաստանի ապագան, մասնավորապես, թուրքական կառավարումից լիովին անկախ հայերի Ազգային օջախի ստեղծում»¹¹²:

Վստահ կարելի է ասել, որ Ազգերի լիգայի կամ դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի ընդունած այս կամ այն հայանպաստ որոշումը որևէ ազդեցություն չի թողել Կարսի կոնֆերանսի ընթացքի և արդյունքների վրա: Կարսի կոնֆերանսի ընթացքում Թուրքիան նմանօրինակ ոչ մի որոշում հաշվի չառավ և գնաց կոնֆերանսի՝ անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագիր կնքելու բացառապես Մոսկվայի պայմանագրի ոգով ու սկզբունքներով:

Կոնֆերանսի բացման նախօրեին՝ 1921 թ. սեպտեմբերի 22-ին, հրանոթային համազարկերի, հրավառության և «Ինտերնացիոնալի» մեղեդիների ներքո Կարսում տեղի ունեցավ Մոսկվայի պայմանագրի վավերագրերի հանդիսավոր փոխանակու-

¹¹² Ключников Ю. и Сабанин А., *Նշվ. աշխ.*, մաս 3, թող II, Մ., 1929, , с. 102–103, Геноцид армян (документы и комментарий), т. 1, М., 2002, с. 635–636, т. 2, ч. 1, с. 537, Կաթարով Գ., Հայաստանը և Հայկական հարցը պատերազմից առաջ և հետո, Ե., 1995, էջ 52:

թյուն՝ Բ. Կարաբեքիրի և ՌՍՖՍՀ Կենտգործկոմի անդամ Բ. Կուզնեցովի միջև¹¹³:

Այդ նույն օրը Անգորան ստանում է Գ. Չիչերինի շնորհավորական հեռագիրը Սակարիայի ճակատամարտում թուրքերի տարած հաղթանակի կապակցությամբ¹¹⁴: Այսինքն՝ կոնֆերանսը բացվում էր ռազմաքաղաքական այնպիսի պայմաններում, երբ թուրքերը խոշոր հաղթանակ էին տարել Ղունաստանի՝ ասել է թե՛ «միջազգային իմպերիալիզմի դեմ»:

Այսպիսով, թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի նախապատրաստական փուլը տևեց շուրջ 7 ամիս: Այդ ձգձգման գլխավոր պատճառը թուրքական կողմն էր, որ սակարկություններ էր անում կոնֆերանսի սկզբունքների, ձևաչափի, վայրի, իսկ մյուս կողմից սպասում էր միջազգային առավել նպաստավոր պահի: Այդպիսի պահը համարվեց 1921 թ. սեպտեմբերի վերջը և հոկտեմբերի սկիզբը, երբ թուրքերը հույների դեմ վճռական գոտեմարտում տարել էին հաղթանակ: Յենց այդ ժամանակ էլ գումարվեց Կարսի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսը:

¹¹³ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 537.

¹¹⁴ ДВП СССР, т. 4, М., 1960, с.370.

2. ԿԱՐՍԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՎ 1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի բացումից ուղիղ յոթ ամիս անց՝ 1921 թ. սեպտեմբերի 26-ին, սահմանամերձ Կարս բերդաքաղաքում հանդիսավորությամբ բացվեց թուրք-անդրկովկասյան կոնֆերանսը, կոնֆերանս, որը նպատակ ուներ Մոսկվայի պայմանագրի ոգով ու սկզբունքներով պայմանագիր կնքել Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև:

Կոնֆերանսը բացեց թուրքական պատվիրակության ղեկավար Ք. Կարաբեքիր փաշան: Կոնֆերանսի բացման ժամանակ հայտարարությամբ հանդես եկան ՌՍՖՍՀ ներկայացուցիչ, գործնականում Անդրկովկասի միացյալ պատվիրակության ղեկավար Յա. Գանեցկին և ՀՍՄՀ պատվիրակության նախագահ Ա. Մռավյանը: Առաջինը խոսք տրվեց Յա. Գանեցկուն: Նա Ռուսաստանի կառավարության և ռուս ժողովրդի անունից շնորհավորեց «փառապանօ հերոսական թուրք ժողովրդին» ինպերիալիզմի դեմ մղվող պայքարում ձեռք բերած հաղթանակների համար՝ թուրք ժողովրդի պայքարը միաժամանակ համարելով Ռուսաստանի ժողովուրդների պայքար: Ելույթի վերջում Գանեցկին հույս (վստահություն) էր հայտնում, որ կոնֆերանսի առջև դրված խնդիրները կլուծվեն արագ և համերաշխ, լոյալ և արդարացի, որովհետև որանց սկզբունքները արդեն լուծված են¹¹⁵:

Այնուհետև Անդրկովկասի երեք հանրապետությունների անունից ողջույնի խոսք ասաց Ա. Մռավյանը՝ ընդգծելու համար երեք հանրապետությունների միասնությունը: Նա հայտարարեց, որ իրենք կոնֆերանսի են եկել բարեկամական զգացումով. «Մեզ այսօր հուզում են ոչ թե բուրժուազայնական կառավարություններից ժառանգությունն թողած վիճելի, անիծված, չլուծված հարցերը, այլ հիացմունքը թուրք աշխատավոր զանգվածների հանդեպ, որը հերոսական պայքար է մղում իր հայրենիքի ազատության համար»¹¹⁶: Մռավյանը վստահություն էր հայտնում, որ այս կոնֆերանսում չեն լինի ո՛չ հաղթողներ և ո՛չ էլ պարտվողներ, և որ այն

¹¹⁵ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 371–372.

¹¹⁶ ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 21, ք. 148:

ամուր հիմքեր կատեղծի երկու կողմի ժողովուրդների բարեկամության և եղբայրության համար¹¹⁷:

Ի դեպ, Ա. Մռավյանի խոսքից ոչ պակաս բարեկամական նրբերանգներ էր պարունակում հաջորդ օրը՝ սեպտեմբերի 27-ին, «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում լույս տեսած Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանի հոդվածը: Նրա պատկերմամբ Կարսի կոնֆերանսից Հայաստանի համար հիմնական սպասելիքներն են. «Հայաստանի անկախության և ինքնուրույնության ամրապնդումը (եթե, իհարկե, կար այդպիսին- Ա. Յ.), հայ աշխատավորության խաղաղ պայմանների և բարեկեցության ապահովումը»: Հանրապետության ղեկավարը գտնում էր, որ պետք է սատար լինել քեմալական թուրքիային «մեր ամենակատաղի թշնամու՝ Անտանտայի դեմ մղվող պայքարում»¹¹⁸: Ասվածից դժվար չէ կռահել, որ Մռավյանի ողջույնի խոսքը կոնֆերանսի բացման ժամանակ նախապես կազմվել և անցել էր համապատասխան գրաքննության մաղով:

Ամփոփիչ խոսքով վերջինը հանդես եկավ Ք. Կարաբեքիրը: Նա իր ելույթում դատապարտեց այն հեղինակներին, ովքեր ուժով ու սպառնալիքներով փորձում էին թուրք ժողովրդին պարտադրել Սևրի պայմանագիրը: Թուրք ժողովուրդը ընդդիմացավ Արևմուտքին, և այդ պայքարում նրան եղբայրական օգնության ձեռք մեկնեց Խորհրդային Ռուսաստանը՝ ազատագրելու Արևելքը Արևմուտքի բռնատիրությունից: Կարաբեքիրն իր խոսքն ավարտեց նրանով, որ «Մոսկվայում դրված բարեկամության հիմքը այս կոնֆերանսում ավելի կամրապնդվի, և դրանով Արևելքում հավերժական եղբայրության ժամանակաշրջան կբացվի»¹¹⁹:

Կոնֆերանսը ունեցել է վեց լիակազմ (պլենար) նիստ. առաջինը՝ սեպտեմբերի 26-ին, վերջինը՝ հոկտեմբերի 13-ին և ինը ոչ պաշտոնական նիստ: Առաջին նիստում Ք. Կարաբեքիրի առաջարկով որոշվում է նիստերի արձանագրությունները կատարել ֆրանսերենով, այնուհետև դրանք թարգմանել թուրքերեն, ռուսերեն, հայերեն և վրացերեն¹²⁰: Առաջին լիակազմ նիստում ստեղծվեց երկու հանձնաժողով՝ տնտեսական և սահմանային: Անդրկով-

¹¹⁷ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 373.

¹¹⁸ Մյասնիկյան Ալ., Երկեր (հինգ հատորով), հ. 5, Ե., 2007, էջ 341–342:

¹¹⁹ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 373–374.

¹²⁰ «Խորհրդային Հայաստան», 19 հոկտեմբերի 1921 թ.:

կասի պատվիրակները (Բ. Շահթախթինսկին, Ա. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Շ. Էլիավան և Ա. Սվանիձեն) մասնակից են եղել տնտեսական հանձնաժողովի նիստերին, որոնցում քննարկվում էին առևտրատնտեսական բնույթի հարցեր¹²¹:

Կոնֆերանսի նիստերի արձանագրությունների, հեռագրերի, նամակագրությունների և այլ գրագրությունների նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնական գործող դեմքերը եղել են Բ. Կարաբեքիրը և Յա. Գանեցկին: Ինչպես արդեն ասվել է, Յա. Գանեցկու առաքելության նպատակն էր. ա/հանձին Խորհրդային Ռուսաստանի՝ դիվանագիտական աջակցություն ցույց տալ Անդրկովկասի խորհրդային հանրապետություններին և բ/հետևել Մոսկվայի պայմանագրի սկզբունքների պահպանմանը¹²²: Նա գործնականում Անդրկովկասի միացյալ պատվիրակության ղեկավարն էր:

Կոնֆերանսի առաջին նիստում քննարկվեց ապագա պայմանագրի ձևաչափի, այսինքն՝ թուրքերի հետ միասնական թե առանձին պայմանագիր կնքելու սկզբունքի մասին հարցը: Նիստը նախագահող Բ. Կարաբեքիր փաշան թուրքական պատվիրակության անունից հայտարարեց, որ իրենք լիազորված են պայմանագիր կնքել յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին՝ հրաժարվելով հունիսի 14-ի իրենց իսկ նախկինում արված հայտարարությունից ընդհանուր պայմանագիր կնքելու վերաբերյալ¹²³:

Թուրքական կողմը շահագրգռված էր առանձին-առանձին պայմանագրեր կնքել, որպեսզի այդ հանրապետություններից յուրաքանչյուրի հանդեպ տարբերակված մոտեցմամբ իր կամքը թելադրեր: Թուրքերը նույնիսկ ավելորդ էին համարում ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությունը կոնֆերանսին¹²⁴, որպեսզի առկա խնդիրները ճակատ առ ճակատ հեշտությամբ լուծեն իրենց օգտին:

Խորհրդային կողմը փաստարկեց, որ իրենք չեն կարող առանձին պայմանագրեր կնքել, քանի որ խորհրդային հանրապետությունները սերտորեն կապված են իրար հետ ռազմաքաղաքական և տնտեսական կապերով:

Կարծում ենք, որ խորհրդային կողմը պնդում էր կնքել միասնական պայմանագիր՝ ոչ այնքան վախենալով թուրքական նոր

¹²¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 21–22:

¹²² «Խորհրդային Հայաստան», 16 հոկտեմբերի 1921 թ.:

¹²³ Багиров Ю. А., նշվ. աշխ., էջ 70:

¹²⁴ Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 161.

պահանջներից ու պարտադրանքներից (քանզի ամեն ինչ արդեն վճռվել էր Մոսկվայի պայմանագրով), որքան այն բանի համար, որ այդ հարցն ուներ ավելի շատ քաղաքական-քարոզչական ենթատեքստ՝ ցույց տալու միջազգային հանրությանը, որ անդրկովկասյան հանրապետությունները տնտեսական և քաղաքական սերտ կապի մեջ են, և նախապատրաստվում է խՍՀՄ կազմավորումը:

Խորհրդային կողմի փաստարկումներից հետո թուրքերը հայտարարեցին, որ իրենք հարցում կանեն Անգորա և միաժամանակ խորհուրդ տվեցին, որ Անդրկովկասի պատվիրակությունները նույնպես համապատասխան դիմում անեն Անգորա՝ արտ.գործ.կոմիսար Յու. Քեմալին՝ հիմնավորելու համար մեկ միասնական պայմանագիր կնքելու նպատակահարմարությունը: Թեև Անգորան համաձայնվում է կնքել մեկ ընդհանուր պայմանագիր, սակայն պայմանով, որ հողվածները խմբավորված լինեն ոչ թե ըստ հարցերի, այլ ըստ հանրապետությունների¹²⁵: Ինքնին հասկանալի է, թե սա ինչ էր նշանակում և թե ում դեմ էր ուղղված պայմանագրի հողվածներն ըստ հանրապետությունների խմբավորելը:

Այս կապակցությամբ Ա. Մռավյանը Հայաստանի ժողկոմ-խորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին ուղղված հոկտեմբերի 1-ի գաղտնի հեռագրում իրազեկում էր, որ սկզբում թուրքերը պնդում էին Անդրկովկասի հանրապետությունների հետ անջատ պայմանագիր կնքել, իսկ այժմ նրանք համաձայնվում են պայմանագրի այն ձևաչափին, որ սկզբում լինեն երեք հանրապետություններին վերաբերող ընդհանուր հողվածներ, իսկ հետո պայմանագիրը տրոհել ըստ հանրապետությունների առանձին հողվածների: Ըստ Մռավյանի՝ անդրկովկասյան պատվիրակությունները պատճառաբանեցին, որ անդրկովկասյան հանրապետությունները ստեղծել են քաղաքական և տնտեսական դաշինք և գնում են Միության ստեղծման: Թուրք-անդրկովկասյան միասնական պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար Ա. Մռավյանը, Ա. Սվանիձեն և Բ. Շահթախթինսկին համապատասխան պարզաբանող հեռագրեր են ուղարկում Անգորա՝ Յու. Քեմալին¹²⁶: Յա. Գանեցկու տեղեկացմամբ ի վերջո Անգորայի կառավարության

¹²⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 88:

¹²⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, ք. 54:

թույլտվությամբ սեպտեմբերի 29-ին թուրքական պատվիրակությունը համաձայնվեց, որ կնքվի մեկ ընդհանուր պայմանագիր այն հաշվով, որ նրա հոդվածները խմբավորված լինեն ոչ թե ըստ հարցերի, այլ ըստ հանրապետությունների¹²⁷: Յա. Գանեցկին Գ. Չիչե-րինին ուղղված սեպտեմբերի 30-ի հեռագիր-գեկուցագրում հայտնում է, որ թուրքերը այժմ համաձայն են ընդհանուր պայմանագիր ստորագրելուն, սակայն պայմանով, որ նրա դրույթները շարադրվեն ոչ թե ըստ հարցերի, այլ ըստ հանրապետությունների: «Երեկ՝ 29-ին, – մանրամասնում է Յա. Գանեցկին, – միստ չկայացավ: Մենք պատրաստում ենք հոդվածները և թարգմանում դրանք: Այսօր՝ 30-ի առավոտյան, դրանք փոխանցեցինք թուրքերին: Պայմանագրի մեր նախագիծը ընդհանուր է՝ կառուցված ոչ թե ըստ հանրապետությունների, այլ հարցերի հաջորդականության: Թուրքերը սկզբում հրաժարվեցին միասնական պայմանագիր կնքել: Մեր պարզաբանումներից հետո, որ անդրկովկասյան հանրապետությունների միջև գոյություն ունի քաղաքական և տնտեսական դաշինք, նրանք հարցում արեցին Անգորա և դրա արդյունքով հրաժարվեցին առանձին պայմանագրեր կնքելու պահանջից: Այժմ թեև համաձայն են կնքելու մեկ ընդհանուր պայմանագիր, սակայն պայմանով, որ հոդվածները կազմված լինեն ոչ թե ըստ հարցերի, այլ ըստ հանրապետությունների»¹²⁸:

Սակայն խորհրդային կողմը չի համաձայնվում նաև այդ ձևաչափին: Թուրքերը երկար խորհրդակցելուց հետո որոշեցին երկրորդ անգամ հարցում անել Անգորա: Միաժամանակ նրանք խորհուրդ տվեցին, որ խորհրդային հանրապետությունները դիվանագիտական համապատասխան դիմում անեն Անգորա՝ Յու. Քեմալին, որ իրենք ցանկանում են մեկ միասնական պայմանագիր կնքել: Չուտ ֆորմալ առումով թուրքերը ճիշտ էին վարվում, որովհետև նրանք Անդրկովկասի երեք հանրապետությունները դիտում էին իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ համարվող անկախ պետություններ: Տրամաբանությունն այն է, որ եթե, իրոք, անդրկովկասյան հանրապետությունները անկախ պետական միավորներ են, հետևաբար կնքվելիք պայմանագրերը յուրաքանչյուրի հետ պետք է լիներ առանձին՝ անկախ նրանից, թե դրանով թուրքերը ինչ նպատակներ էին հետապնդում:

¹²⁷ Նույն տեղում, գ. 21, թ. 88:

¹²⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 542.

Անդրկովկասյան պատվիրակությունների հիմնավորումները և դիմումները Անգորա բավարար չհամարելով՝ ՌՍՖՍՀ արտգործոդկոմ Գ. Չիչերինը հոկտեմբերի 3-ին թուրք-անդրկովկասյան միասնական պայմանագիր կնքելու հիմնավորմամբ համապատասխան նոտա ուղղեց Յու. Քեմալին՝ փաստելով, որ ՌՍՖՍՀ դաշնակից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները գտնվում են իրար հետ սերտ քաղաքական և տնտեսական դաշինքի մեջ¹²⁹:

Ի վերջո թուրքական կողմը, փաստարկներ չունենալով, ընկրկեց և համաձայնվեց միասնական պայմանագրի գաղափարին¹³⁰:

Կոնֆերանսում քննարկվելիք կենտրոնական հարցը սահմանների ճշգրտման խնդիրն էր: Թուրք-անդրկովկասյան սահմանների հարցում որոշվեց սկզբունքորեն ընդունել Մոսկվայի պայմանագրի տեքստը անշան փոփոխություններով: Ընդ որում՝ որոշվեց մեկ հոդվածի մեջ ներառել բոլոր երեք հանրապետությունների սահմանները, որը թվով 4-րդ հոդվածն էր:

Կոնֆերանսի սեպտեմբերի 26-ի առաջին իսկ պլենար նիստում խորհրդային կողմը թուրքական պատվիրակությանը ներկայացրեց սահմանային և տնտեսական բնույթի մասնակի առաջարկների հուշագիր: Հաջորդ՝ սեպտեմբերի 27-ի նիստում, ընդունվում են Ք. Կարաբեքիրի հետևյալ երկու առաջարկները. ա/Մոսկվայի պայմանագրի սկզբունքների անփոփոխ ընդունումը և բ/ստեղծել սահմանային հարցերը ճշտող միացյալ հանձնաժողով¹³¹: Հասկանալի է, որ Մոսկվայի պայմանագրի սկզբունքների անփոփոխ ընդունումը նշանակում էր, որ ի սկզբանե նվազագույնի էր հասցվելու սահմանային ճշգրտումների հնարավորությունը: Դա միաժամանակ նշանակում էր, որ պայմանագրի հոդվածների քննարկումը շատ կողմերով դառնում էր ձևական:

Բայց և այնպես կոնֆերանսի սեպտեմբերի 27-28-ի լիագումար նիստերի նախնական քննարկումների արդյունքով պարզվում է, որ սահմանային մի քանի տեղամասեր համարվում են վիճելի: Դրանք էին՝ թուրք-վրացական սահմանագծում՝ 1. Սարպ գյուղը, 2. սահմանը Սաբաուր գյուղի շրջանում 3. Քավթառեթի գյուղը,

¹²⁹ ДВП СССР, т. 4, М., 1960, с. 392.

¹³⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 88, Багиров Ю. А., նշվ. աշխ., էջ 71:

¹³¹ «Խորհրդային Հայաստան», 19 հոկտեմբերի 1921 թ.:

իսկ հայ-թուրքական սահմանագծում՝ 1. Նոր Ղըզըլ-դաշ և Վարդան-լու գյուղերը, 2. Անին և Կողբը¹³²:

Հարկ է նշել, որ կոնֆերանսի երկրորդ՝ սեպտեմբերի 27-ի նիստում Անդրկովկասի պատվիրակության փաստական ղեկավար Յա. Գանեցկին առաջարկի կարգով քննարկման ներկայացրեց հայկական հուշագրի և ՌԿ(Բ)Կ ԿԿ Կապբյուրոյի սեպտեմբերի 3-ի պլենումի հրահանգի մի քանի պահանջ-առաջարկներ, մասնավորապես Կողբի, Անիի և ճորոխի շրջանի պղնձահանքերի հարցերը: Յա. Գանեցկին սեպտեմբերի 27-ին Գ. Չիչերինին ուղղված հեռագրում տեղեկացնում էր, որ թուրքերը գտնում են, որ սահմանային բոլոր գյուղերը, այդ թվում՝ Սարպ գյուղը պետք է պատկանեին իրենց: Ապա Գանեցկին շարունակում է, որ «Անիի խնդրում հարցում է արվել թուրք կառավարությանը և հույս կա, որ կլինի համաձայնություն, իսկ Կողբի խնդրում՝ հույս չկա»¹³³: Անին և Կողբի աղահանքերը Հայաստանին վերադարձնելու կապակցությամբ սեպտեմբերի 29-ին Ա. Մռավյանը հեռագրում էր Ալ. Մյասնիկյանին. «Կոնֆերանսում մենք հարց բարձրացրինք Անիի ավերակները վերադարձնելու և Կողբի աղահանքերը կոնցեսիայով տալու մասին: Հավանաբար թուրքերը կհամաձայնվեն»¹³⁴:

Սահմանագծման աշխատանքները արդյունավետ դարձնելու նպատակով որոշվեց ստեղծել թուրք-անդրկովկասյան սահմանագծման միացյալ հանձնաժողով՝ ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությամբ¹³⁵:

Անդրկովկասյան հանրապետությունների սահմանագծման միացյալ հանձնաժողովի մեջ ընդգրկված էին Բ. Կուզնեցովը (ՌՍՖՍՀ, նախագահ), Ն. Գեդևանովը (Վրաստան), Վլ. Թամրուչին (Հայաստան)¹³⁶, Պ. Ինգորովկան (Ադրբեջան) և թարգմանիչ Ա. Լոկ-թիոնովը: Թուրքիայի սահմանային հանձնաժողովը ներկայացնում

¹³² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 15:

¹³³ Նույն տեղում, թ. 99:

¹³⁴ Նույն տեղում, գ. 23, թ. 54:

¹³⁵ Նույն տեղում, գ. 21, թ. 97:

¹³⁶ Հայաստանը ներկայացնող Վլ. Թամրուչին կարմիր բանակի քարտեզագիր սպա էր, ով մասնակցել է 1921 թ. փետրվարյան ապստամբության ճնշմանը և Ջանգեզուրի հնազանդեցմանը և այդ կռիվների վերաբերյալ հավաքել է նյութեր ու կազմել ճակատային ռազմական գործողությունների քարտեզներ: Այնպես որ նա քարտեզագրման-սահմանագծման մասնագետ էր (տե՛ս Թամրուչի Վլ., Ղամարլուի և Ջանգեզուրի կռիվները, Ե., 1922):

էին մայր Վեյսալ բեյը, Թալեաթ բեյը և թարգմանիչ Ահմեդ բեյը:

Անդրկովկասյան պատվիրակությունների առաջարկով այդ հանձնաժողովը իր հերթին բաժանվեց երկու ենթահանձնաժողովների՝ թուրք-հայկական և թուրք-վրացական սահմանների տեղում ուսումնասիրման ու ճշտման համար: Սահմանվեց հետևյալ աշխատակարգը. Անդրկովկասի յուրաքանչյուր հանրապետության սահմանային խնդիրը Թուրքիայի հետ ճշտելիս պետք է մասնակցի տվյալ հանրապետության ներկայացուցիչը և անպայման ՌՍՖՍՀ ներկայացուցիչը¹³⁷:

Մինչ միացյալ սահմանային հանձնաժողովը կանցներ սահմանագծման մասնագիտական աշխատանքների, ի գիտություն է ընդունվում հետևյալ հայտարարությունը. «անվերապահորեն ընդունել Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածում որոշված սահմանագիծը, որը փոփոխման ենթակա չէ»¹³⁸:

Սահմանային հանձնաժողովի առաջին նիստում (սեպտեմբերի 27) Բ. Կուզնեցովի առաջարկությամբ մշակվում է գործողությունների ծրագիր, ընտրվում են երկու կողմի հանձնաժողովի նախագահներ՝ Բ. Կուզնեցովը և Վեյսալ բեյը: Սահմանային հանձնաժողովի արձանագրությունները տարվում էին ռուսերեն և թուրքերեն, այնուհետև տեքստերը իրար հետ են փոխհամաձայնեցվում:

Որոշվում է հինգ վերստանոց մասշտաբով քարտեզի միջոցով քննության առնել անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև եղած ընդհանուր սահմանը, այնուհետև անցնել սահմանների առանձին հատվածների քննությանը՝ սկսել հեշտ լուծելի հարցերից և ապա անցնել դժվարներին:

Բայց մինչ սահմանային հարցի բուն քննարկմանն անցնելը, Թուրքիայի սահմանային հանձնաժողովի նախագահ Վեյսալ բեյը ցանկություն հայտնեց խորհրդային կողմից իմանալ անդրկովկասյան հանրապետությունների միջև առկա (գոյություն ունեցող) սահմանները, որպեսզի, նրա կարծիքով, հեշտ լինի անցնել բուն սահմանագծման աշխատանքներին: Այստեղ կարելի է կռահել Վեյսալ բեյի հարցապնդման ենթատեքստը: Նա դրանով նախապես ցանկանում էր իմանալ Անդրկովկասի յուրաքանչյուր հանրապետության կոնկրետ սահմանը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հստակ իմանային, թե որ հանրապետությունը ինչ կարող է

¹³⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 97:

¹³⁸ Նույն տեղում, ք. 151:

զիջել և որից ինչ վերցնել: Վեյսալ բեյի արտահայտած ցանկությանը հակառակ՝ Բ. Կուզնեցովը ավելի նպատակահարմար է գտնում քննության առնել Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև միացյալ սահմանը, որին թուրքական կողմը համաձայնվում է¹³⁹:

Այնուհետև Անդրկովկասի միացյալ սահմանային հանձնաժողովի նախագահ Բ. Կուզնեցովը հայտնում է, որ անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակները, քննարկելով սահմանային հարցը, հանգել են հետևյալ եզրակացության. 1.«Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածով որոշված սահմանագիծը անվերապահորեն ընդունվում է որպես հիմք, որից ոչ մի կողմը չի կարող նահանջել: Այդ հոդվածում նշված բոլոր կետերը և սահմանային գծերը մնում են անփոփոխ»¹⁴⁰:

Սակայն Անդրկովկասի միացյալ սահմանային հանձնաժողովի նախագահը վերապահություն է անում Անիի շրջանի՝ իբրև պատմամշակութային հնավայրի և Կողբի՝ իբրև կարևոր տնտեսական նշանակության վերաբերյալ: Այդ մասին ֆիքսվում է արձանագրության մեջ¹⁴¹:

Թուրքական սահմանային հանձնաժողովի նախագահ Վեյսալ բեյը, առարկելով անդրկովկասյան հանձնաժողովի առաջարկին, Կողբի մասին հարցը համարում էր զուտ տնտեսական և գտնում, որ այն ոչ մի կապ չունի սահմանների փոփոխության հետ, և որ այն կքննի տնտեսական հանձնաժողովը: Անդրկովկասյան կողմի առաջարկով որոշվում է սահմանային հարցը քննել Արևելքից Արևմուտք: Մինչդեռ գիտենք, որ Մոսկվայի կոնֆերանսում այն քննվել է ընդհակառակը՝ Արևմուտքից Արևելք:

Այս առնչությամբ առաջին հերթին շոշափվելու էր Նախիջևանի երկրամասի և Հայաստանի միջև ընկած եռանկյունի տեղամասի հարցը: Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով նախատեսվում էր ստեղծել հանձնաժողով երեք՝ Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ներակայացուցիչների մասնակցությամբ: Սակայն մինչև Կարսի կոնֆերանսը դեռևս նման հանձնաժողով չէր ստեղծվել, ուստի այդ խնդիրը ևս պետք է լուծվեր¹⁴²: Եվ պետք է փաստել,

¹³⁹ Նույն տեղում, թ. 25:

¹⁴⁰ Նույն տեղում:

¹⁴¹ Նույն տեղում:

¹⁴² Նույն տեղում, թ. 27:

որ Մոսկվայի պայմանագրի ստորագրումից ի վեր, ըստ էության, սահմանագծման աշխատանքներ չէին տարվել:

Սահմանային քննարկումների ժամանակ Բ. Կուզնեցովը Արևելքից սկսվող սահմանագիծը հատվածաբար ներկայացրել է հետևյալ կերպ: Թուրք-անդրկովկասյան սահմանը սկիզբ է առնում Ն. Ղարասուն Արաքս թափվելու տեղից (գետաբերանից) և այնուհետև Արաքս գետի հունով հասնում մինչև Կարակալայի կամուրջը: Այս հատվածի վերաբերյալ կողմերը առարկություն չեն ունեցել և գալիս են համաձայնության¹⁴³:

Կողքի խնդրի հետ կապված անդրկովկասյան կողմը գտնում է, որ Կարակալայի կամուրջից մինչև Արփաչայ գետի Արաքս թափվելու սահմանային հատվածի հարցը առայժմ պետք է թողնել բաց՝ կապված Կողքի աղահանքերի խնդրի հետ: Այստեղ թուրքական սահմանային հանձնաժողովի նախագահը առարկում է՝ գտնելով, որ կարիք չկա այդ հարցը թողնել բաց, քանի որ Կողքի խնդիրը ոչ թե սահմանային հարց է, այլ տնտեսական: Բ. Կուզնեցովը առաջարկում է հարցը հետաձգել մինչև տնտեսական հանձնաժողովի կողմից հարցերի քննարկումը: Սակայն թուրքական կողմը շարունակում է պնդել, որ անհրաժեշտություն չկա հարցը հետաձգելու:

Այդ հատվածի հարցը թողնելով բաց՝ Բ. Կուզնեցովը ներկայացնում է սահմանի երկրորդ հատվածը՝ Արփաչայ գետը Արաքս թափվելու տեղից մինչև Անի քաղաքի ավերակները:

Հայ-թուրքական սահմանի այս հատվածի ամենավիճահարույց խնդիրը Անիի ավերակների պատկանելիության հարցն էր: Ինչպես արդեն ասվել է, մինչև Կարսի կոնֆերանսը հայկական կողմի կազմած հուշագրում բաղձանք էր արտահայտվում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները Հայաստանին վերադարձնելու մասին: Խորհրդային միացյալ պատվիրակության անունից այդ համեստ պահանջը հնչեցրել էր Յա. Գանեցկին:

Հարկ է նշել, որ Կողքի, Կաղզվանի աղահանքերի, Կարսի արոտավայրերի և տնտեսական բնույթի այլ առաջարկներին թուրքական պատվիրակությունը գործնականում մերժողական պատասխան տվեց և միայն վերապահություն արեց հայոց պատմական Անի մայրաքաղաքի ավերակները Հայաստանին վերադարձնելու խնդրում, սակայն պայմանով, որ իրենք պետք է հարցում անեն

¹⁴³ Նույն տեղում, թ. 28^ա:

Անգորայի կառավարությանը: Եվ սեպտեմբերի 27-ի լիազումար նիստում Անիի շուրջ ծավալվեց բավականին հետաքրքիր և հուսադրող քննարկում, որի մասին վկայում են այդ օրվա արձանագրության նյութերը:

Կարաբեքիրը հայտարարում է, որ իրենք Անգորայի կառավարությունից հրահանգ են ստացել խստորեն հետևել Մոսկվայի պայմանագրի կետերին: «Բացառություն է արվում, – կարդում ենք արձանագրությունում, – միայն Անի քաղաքի համար, որպեսզի հայկական պատվիրակությանը հաճելի լինի: Թուրքական պատվիրակությունը Անի քաղաքի ավերակները թողնում է Հայաստանին՝ հաշվի առնելով այն պատմական նշանակությունը, որ նա ունի Հայաստանի և հայ բնակչության համար»¹⁴⁴: Այդ կապակցությամբ թուրքական պատվիրակության ղեկավարը հեռագիր է ուղարկում Անգորա՝ վերջնական համաձայնություն ստանալու համար:

Անիի խնդրում Ք. Կարաբեքիրի ցուցաբերած սիրալիրության համար Յա. Գանեցկին գոհունակություն է հայտնում: Այդ նույն օրը նա հեռագրում (ռադիոգիր) է Մոսկվա՝ Ռուսաստանի ա. գ. ժողկոմ Գ. Չիչերինին՝ հայտնելով, որ «Անիի խնդրում հարցում է արվել թուրքական կառավարությանը և հույս կա, որ կլինի համաձայնություն»¹⁴⁵:

Այնուհետև բանակցություններում պատվիրակությունները սկսում են քննարկել այն հարցը, թե ինչպես ձևակերպել Անիի վերադարձի խնդիրը, որ չհակասի Մոսկվայի պայմանագրի սահմաններին վերաբերող առաջին հոդվածին¹⁴⁶: Կարաբեքիր փաշան թուրք պատվիրակության անունից հայտնում է, որ Արփաչայ (Ախուրյան) գետը պետք է ընդունել որպես հայ-թուրքական վերջնական սահմանագիծ: «Ինչ վերաբերում է Անի քաղաքի ավերակների զիջմանը, ապա այն կարելի է ընդունել առանձին հոդվածով»: Այնուհետև Կարաբեքիրը ավելացնում է. «Եվ դա արվում է՝ նկատի ունենալով այն համակրանքը, որ Թուրքիան տածում է Հայաստանի հանդեպ»¹⁴⁷: Այստեղ դժվար է բացատրություն տալ Կարաբեքիրի նման կեղծ սիրալիրության ենթատեքստին: Իր ելույթի վերջում թուրք պատվիրակության ղեկավարը եզրահանգում է, որ խոր-

¹⁴⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 131:

¹⁴⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 99:

¹⁴⁶ ДВП СССР, т. 3, М., 1959, с. 597–598.

¹⁴⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 132:

հըրդային կողմի ներկայացրած մնացյալ հարցերը վերանայման ենթակա չեն և կարելի է ընդունել իսկույն ևեթ:

Իր պատասխան ելույթում Յա. Գանեցկին առարկում է Կարաբեքիրի՝ Անիի հարցի շուրջ առանձին հողված ընդունելու առաջարկին՝ պատճառաբանելով, որ դա կարող է հակասել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի սահմանների մասին հողվածներին, որովհետև ըստ Գանեցկու պարզաբանման՝ Մոսկվայի պայմանագրում Անին նշված է թուրքական կողմում, իսկ այստեղ ընդունվելիք նոր հողվածով կնշվի, որ Անի քաղաքն անցնում է Հայաստանին: Դրա փոխարեն Յա. Գանեցկին նպատակահարմար էր գտնում Անիի համար ոչ թե առանձին հողված ընդունել, այլ պարզապես պայմանագրի բուն տեքստում նշել, որ Անի քաղաքն անցնում է Հայաստանին՝ նկատի ունենալով նրա պատմամշակութային նշանակությունը և դրա վերաբերյալ կատարել քաղաքական բնույթի հայտարարություն¹⁴⁸: Հիշեցնենք, որ Անիի շուրջ այս քննարկումները կատարվում էին առանց իմանալու, թե Անգորայից ինչ պատասխան կստացվի:

Թուրքական պատվիրակության ղեկավարը դարձյալ պնդում է իր առաջարկը՝ Անի քաղաքի ավերակների խնդրում իբրև բացառություն ընդունել առանձին հողված և այն մտցնել պայմանագրի մեջ. «Թուրքական պատվիրակությունը գտնում է, որ սահմանները վերջնականորեն ընդունված են Մոսկվայի խորհրդածողովում և անհնար է դրանց փոփոխումը կամ վերանայումը: Եվ միայն Անի քաղաքի ավերակների հարցում առաջարկում է ներառել առանձին հողված»¹⁴⁹: Կարաբեքիրի այս ելույթից հետո Յա. Գանեցկին լրացուցիչ պարզաբանում է տալիս: Նա հայտնում է, որ, իր կարծիքով, ծագած թյուրիմացությունը հարթելու նպատակով «մեր պատվիրակությունը բնավ չի առարկում այն բանին, որ Անի քաղաքն անցնի հայկական կողմին և դրա վերաբերյալ կազմվի առանձին հողված: Մենք չենք առարկում առանձին հողվածին, այլ գտնում ենք, որ Անիի մասին գիջման փաստը արձանագրվի նաև սահմանների մասին հողվածում»¹⁵⁰:

Այստեղ Կարաբեքիր-Գանեցկի բանավեճի դիվանագիտական, իրավաբանական ձևակերպման նրբությունն այն էր, որ Կա-

¹⁴⁸ Նույն տեղում:

¹⁴⁹ Նույն տեղում:

¹⁵⁰ Նույն տեղում, ք. 132–133:

րաբեքիրը չէր ցանկանում պայմանագրի բուն տեքստում, այն էլ սահմանների մասին հողվածում, ուր Մոսկվայի պայմանագրով հայ-թուրքական սահմանը սկզբունքորեն համարվում էր Ախուրյան գետը, նշվեր (ֆիքսվեր), որ Անի քաղաքը հանձնվում է Հայաստանին, այլ դրա վերաբերյալ կազմվեր առանձին հողված, որը պետք է լիներ ոչ թե պայմանագրի բուն տեքստում, այլ II («Բ») հավելվածի մեջ՝ իբրև առանձին կետ: Կողմերը, համաձայնության չգալով, ի վերջո, որոշում են հետաձգել Անիի հարցի քննարկումը, մինչև որ Անգորայից պատասխան կստացվի¹⁵¹:

Կոնֆերանսի սեպտեմբերի 28-ի լիազույմար նիստի արձանագրության մեջ ներառվեց հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի սահմանների մեջ ներսռել Անի քաղաքի ավերակները»¹⁵²: Անդրկովկասում միացյալ պատվիրակության կողմից առաջարկվեց արձանագրության վերոհիշյալ հատվածը մտցնել պայմանագրի նախագծի տեքստում: Թուրք պատվիրակությունը համաձայնվեց պայմանով, որ խնդրի վերջնական լուծումը պետք է տա Թուրքիայի ԱՄԺ կառավարությունը¹⁵³:

Սինչ կոնֆերանսի լիազույմար նիստերում ընթանում էին համանման քննարկումներ, զուգահեռաբար ընթանում էին Միացյալ սահմանային հանձնաժողովի աշխատանքները: Այստեղ էլ Անիի և այլ վիճելի սահմանային հարցերի շուրջ ընթանում էին նույնաբնույթ քննարկումներ: Սկզբում սահմանային հանձնաժողովի թուրք ղեկավարը պնդում էր Անիի ավերակների մասին հարցը հանել պայմանագրի հիմնական տեքստի 1-ին հողվածից և մտցնել պայմանագրի հավելվածում՝ իբրև ծանոթագրություն, այն հատվածում, երբ խոսք կգնա Ախուրյանի սահմանագծի մասին: Թուրք պատվիրակը պատճառաբանում էր, որ Մոսկվայի պայմանագրի տեքստին համապատասխան արդեն կազմվել է քարտեզ, որը փոփոխել այլևս չի կարելի¹⁵⁴: Խորհրդային կողմը (սահմ. հանձն. ղեկավար Բ. Կուզնեցով), պաշտպանելով Յա. Գանեցկու պնդումը, նույնպես գտնում էր, որ Անի քաղաքի ավերակները Հայաստանի տարածքի մեջ ներառելու մասին պետք է ֆիքսել պայմանագրի

¹⁵¹ Հակոբյան Ա., Թե ինչպես Անին չմիացվեց Հայաստանին (ՊԲՀ, 2003, թիվ 2, էջ 78):

¹⁵² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, ք. 273:

¹⁵³ Նույն տեղում, ք. 273-274:

¹⁵⁴ Նույն տեղում, ք. 19:

առաջին հողվածի վերջում (իբրև ծանոթագրություն)¹⁵⁵: Քննարկումների արդյունքում Միացյալ սահմանային հանձնաժողովը հայտարարում է, որ անվերապահորեն ընդունում է Մոսկվայի պայմանագրի 1-ին հողվածում որոշված սահմանագիծը, որը փոփոխման ենթակա չէ: Վերապահություն է արվում միայն Անիի համար՝ սպասելով Անգորայից ստացվելիք վերջնական պատասխանին¹⁵⁶: Հետաքրքրական է, որ ՀԱԱ ՀՍԽՅ ժողկոմխորհի՝ 113-րդ ֆոնդում պահվում է հայ-թուրքական պայմանագրի 14-հողվածանոց մի նախագիծ և սահմանագծի թիվ I հավելված (ըստ ամենայնի կազմված հայ պատվիրակության կողմից), որոնցում նշված է, որ հայ-թուրքական սահմանը գծվում է Ախուրյան գետի հունով՝ Հայաստանի մեջ ներառելով Անի քաղաքի ավերակները, դուրս է գալիս Արաքս գետը, այնտեղից էլ Արաքսի հնահունով մինչև նրա ձախ ափին գտնվող Ուրմիա գյուղը¹⁵⁷:

Տեղադրության առումով Անին ընկած էր Ալեքսանդրապոլի գավառի հարավային կողմում, Ալեքսանդրապոլ(Գյումրի) քաղաքից 50 վերստ հեռու, Ախուրյան գետի աջ ափին եռանկյունաձև սարահարթի (հրվանդանի) վրա՝ 1500 մետր բարձրությամբ: Բուն ավերակների հատակագիծը կազմում է մոտ 86 հեկտար, իսկ շրջակա տարածքով մոտ 150 հեկտար մակերես¹⁵⁸:

Անիի ավերակների շրջակայքում ընկած են մի քանի գյուղեր՝ Անի՝ թրքաբնակ, Ենիքեյոյ (Նոր գյուղ) կամ Խարկով՝ հայաբնակ, Ճալա, Արագի, Ալաջա՝ քրդաբնակ և Բակման՝ եզդիաբնակ: Բացի Ախուրյան գետից՝ Անին եզերվում է Անի գետակով, Իգաձորով և Գայլ կամ Գայլաձորով, իսկ ավերակ-քաղաքի արևմտյան կողմով հյուսիսից հարավ հոսում է Ալաջա գետը:

Հայաստանի պատվիրակության ներկայացրած առաջարկ-պահանջների հուշագրով Անիի ավերակները՝ իր շրջակա մի քանի գյուղերով, ներառվում էին Հայաստանի սահմանի մեջ: Հենց այս սկզբունքով էլ անդրկովկասյան հանրապետությունների սահմանային հանձնաժողովի նախագահ Բ. Կուզնեցովը քարտեզի վրա ներկայացրեց սահմանագծի տարբերակը Անիի հատվածում, որով

¹⁵⁵ Նույն տեղում, թ. 9:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 151:

¹⁵⁷ Նույն տեղում, գ. 23, թ. 35–37:

¹⁵⁸ Պալաքյան Գրիգոր Ծ. վարդապետ, Նկարագրություն Անիի ավերակներուն, Կ. Պոլիս, 1910, էջ 18–19, Մազրյան Զ., Երեք դաշնագրեր, էջ 136, Վարդանյան Ա., Հայոց մայրաքաղաքները, Ե., 1985, էջ 102:

այն ներառվում էր Հայաստանի սահմանի մեջ:

Առաջարկվող սահմանագիծը հետևյալն էր. «Սկիզբ առնելով գետաբերանից, Անիի արձանագրությունից հարավ, որը հոսում է 1953 նշված կետից հյուսիս հոսող գետի երկայնքով մինչև ջրբաժանը, որը տանում է դեպի Անի քաղաքի արևմտյան և հյուսիսարևմտյան կողմերով մինչև Անի գյուղը՝ ներառելով դրանք Հայաստանի մեջ, հետո ուղիղ գծով հասնում էրցե եկեղեցու ավերակները: Այնուհետև էրցեի ավերակներից ձգվում է դեպի ակունքն այն գետակի, որը հոսում է էրցեից հյուսիս և այդ գետակին համընթաց հասնում նրա մինչև Արփաչայ թափվելը»¹⁵⁹:

Անիի վերաբերյալ Բ. Կուզնեցովի ներկայացրած սահմանագիծը անբավականությամբ է ընդունվում թուրք հանձնաժողովականների կողմից: Այդ առնչությամբ նրանք հայտարարում են, որ նախ այդ առաջարկը նկատելի չեղում է Մոսկվայի պայմանագրի համապատասխան հավելվածից և երկրորդ՝ ռազմական տեսակետից այդ հարցը իրենց համար ունի վիթխարի նշանակություն: «Բայց և այնպես, -ասված է հայտարարությունում, - մենք ընդունում ենք, որ Անին Հայաստանի համար ունի պատմամշակութային խոշոր նշանակություն, ուստի ցանկալի է, որ այդ հարցը լուծվի Հայաստանի օգտին»¹⁶⁰: Միացյալ սահմանային հանձնաժողովի նիստը որոշում է հետաձգել նաև այս հարցի հետագա քննարկումը:

Այնուհետև Անիի շրջանից Արփաչայի հունով վեր ձգվող սահմանագծի վրա էր ընկած Վարդանլու գյուղը, որը գտնվում էր գետի երկու ափին, անդրկովկասյան կողմը ցանկալի էր համարում գյուղը ներառել Հայաստանի սահմաններում: Թուրքերը հայտնում են, որ դրա պատասխանը իրենք հետո կտան:

Եվ վերջապես, Հայաստան-Թուրքիա սահմանի վերջին՝ չորրորդ հատվածը սկիզբ էր առնում Բուղայ գետի վտակից՝ անցնելով մի շարք բարձունքներով, Ուչ-Թափալար, Արդահանի օկրուգի վարչական սահմանով, Մեծ Աղբաբա լեռը և այլն¹⁶¹: Անդրկովկասյան կողմի նախնական առաջարկով սահմանագիծը անցնելու էր Իբիշ-գյուղից արևելք (այսինքն՝ գյուղը անցնում էր Թուրքիային), սակայն Նոր Ղըզըլ-դաշ-գյուղը պետք է մնար Հայաստանին, քանի որ այն ընկած էր Արփաչայ գետի հովտում:

¹⁵⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 28^ա:

¹⁶⁰ Նույն տեղում, ք. 29:

¹⁶¹ Նույն տեղում:

Եվ բացի այդ, Նոր Ղրզըլ-դաշից դուրս եկող ամենահարմար ճանապարհը անցնում է Գյուլ-բուլաղ գյուղի միջով և այնտեղից Ալեքսանդրապոլ: Սահմանային վերոհիշյալ՝ Վարդանլու, Իբիշ, Նոր Ղրզըլ-դաշ գյուղերի հետագա ճակատագրի հարցերի լուծումը հետաձգվեց¹⁶²: Ամեն անգամ, երբ սահմանային գյուղերի հարց էր քննարկվում, թուրքերը պահանջում էին, որ սահմանային բոլոր գյուղերը պետք է պատկանեն Թուրքիային¹⁶³:

Սահմանային հանձնաժողովի հաջորդ նիստում Բ. Կուզնեցովը կրկին բարձրացնում է Նոր Ղրզըլ-դաշ և Վարդանլու գյուղերի պատկանելիության հարցը: Թուրքերը առաջարկում են քննության առնել նաև վրացական Սարայ, Սաբաուր գյուղերի սահմանի և Քավթառեթի (քարտեզում նշված է Կակտարեթի- Ա.Յ.) գյուղի վիճահարույց հարցերը:

Կողքի աղահանքի շահագործման հարցը մերժելով՝ փակվում է Կարակալայի հատվածի սահմանային խնդիրը, իսկ ավելի ուշ մերժվում է նաև Անիի խնդիրը և հանվում հետագա քննարկումներից:

Թուրք-անդրկովկասյան միացյալ սահմանային հանձնաժողովում վիճելի ու բաց մնացած հարցերը ենթակա էին լուծման կոնֆերանսի լիակազմ նիստերում:

Հայ-թուրքական և թուրք-վրացական սահմանային հատվածներում ընկած վիճելի վեց գյուղերի պատկանելիության խնդիրը լուծելու համար Բ. Կարաբեքիրը ներկայացնում է սահմանագծման միջազգայնորեն ընդունված հետևյալ կանոնները: Նա գտնում էր, որ գյուղերը կարող են այրվել, ավերվել ու ոչնչանալ, ուստի սահմանագիծ անցկացնելիս ավելի ճիշտ կլինի հիմք ընդունել մշտական բնական կետերն ու գծերը, գետերը, լեռնագագաթները, լեռնաշղթայի ջրբաժանները և այլն: Ամենից առաջ հիմք կարող են լինել գետերը: Ընդ որում, եթե գետով սահմանագիծ է անցկացվում, և գյուղը ընկած է նրա երկու ափին, ապա բոլոր դեպքերում սահմանը պետք է անցնի գետի հունով, և գյուղի մի հատվածը մնում է մեկին, իսկ մյուս մասը՝ մյուսին: Եթե սահմանը անցնում է լեռներով ու բարձունքներով, ապա սովորաբար հիմք է ընդունվում ջրբաժան գիծը: Իսկ եթե սահմանն անցնում է հարթավայրով կամ բլրոտ տեղանքով, ապա սահմանը գծելիս կիրառվում է ուղիղ գիծը

¹⁶² Նույն տեղում:

¹⁶³ Նույն տեղում, թ. 99:

որոշակի կետերի միջև: Ահա, Կարաբեքիրը սահմանագծման այսպիսի դասեր էր տալիս սահմանային հանձնաժողովի անդամներին:

Սահմանային վիճելի հարցերը կարգավորելիս, Յա. Գանեցկու կարծիքով, սահմանային խառը հանձնաժողովը պետք է առաջնորդվեր տվյալ գյուղի տնտեսական դրությամբ կամ էլ այլ դեպքում ազգագրական հատկանիշով այն վայրերում, ուր կա խառը բնակչություն:

Տվյալ դեպքում վիճելի համարվող Վարդանլու գյուղի պարագայում՝ հաշվի առնելով, որ նրա միջով գետ է հոսում, ուստի գետը համարվում է բնական սահման, և գյուղը կիսվում է: Նման սահմանագծման դեպքում, եթե գյուղի մեկ հատվածի բնակիչները տնտեսական, էթնիկ, ազգակցական և այլ առումներով դժգոհություն կհայտնեն, ապա, ըստ Կարաբեքիրի, նրանք կարող են տեղափոխվել մյուս ափը: Իսկ եթե կծագեն այլ բնույթի խնդիրներ, ապա կարելի է ստեղծել խառը հանձնաժողով, որը տեղում կլուծի վիճելի հարցերը:

Խորհրդային կողմը լիովին հավանություն է տալիս Կարաբեքիրի մատնանշած սահմաններ անցկացնելու կանոններին: Եվ հաշվի առնելով, որ վիճելի համարվող Վարդանլու, Ղըզըլ-դաշ և Քավթառեթի գյուղերի միջով գետ է անցնում, ուստի խորհրդային պատվիրակությունը չի առարկում, որ սահմանն անցնի գետով, ինչպես որ նշված է Մոսկվայի պայմանագրի տեքստում¹⁶⁴: Դրանից բացի՝ խորհրդային պատվիրակությունը՝ հանձին Յա. Գանեցկու, վիճելի սահմանների հարցում զիջումներ անելու տեսակետից ավելի է առաջ գնում: Գանեցկին պատրաստակամություն է հայտնում, որ գյուղերի նման մեխանիկական բաժանման դեպքում, եթե տվյալ գյուղերի բնակիչների մեջ դժգոհություն առաջանա, ապա, անկախ այդ բնական սահմաններից, «գյուղերի այն մասը, որոնք պետք է լինեն անդրկովկասյան հանրապետությունների կողմում, դրանք կարող են անցնել մյուս (թուրքական-Ա. Հ.) կողմին»¹⁶⁵: Ասվածից պարզ է դառնում, թե ինչու Մոսկվայի պայմանագրի համեմատ, Կարսի պայմանագրով անցկացված սահմանագծումների ժամանակ սահմանամերձ մի շարք գյուղեր իրենց հողատարածքներով զիջվել են թուրքերին:

¹⁶⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 134:

¹⁶⁵ Նույն տեղում, ք. 135:

Խորհրդային կողմը համառություն դրսևորեց, թերևս, միայն Սարպ գյուղի վերաբերյալ: Մոսկվայի պայմանագրի տեքստում ասված է, որ սահմանը սկսվում է Սարպ գյուղից: Յա. Գանեցկին հիմնավորեց գյուղի տնտեսական կապվածությունը Բաթումի հետ, սահմանագիծ չընդունվեց նրա մոտով հոսող գետը, խնդիրը հանձնվեց սահմանային խառը հանձնաժողովին, և ի վերջո Սարպ գյուղի պատկանելության հարցը լուծվեց Վրաստանի օգտին¹⁶⁶:

Միացյալ սահմանային հանձնաժողովն իր աշխատանքների վերջնամասում մշակեց սահմանային նշանների և դրանց տեղադրման կարգի մասին կանոնները:

Սահմանային նշանը ունենալու էր բրգածև գազաթով տաշված քառանկյունի քարի ձև: Սահմանանշանի բարձրությունը կազմում էր 2,5 արշին (177,5 սմ), որից 2 արշինը՝ (142 սմ) գետնի վրա, իսկ 0,5-ը՝ (35, 5 սմ) գետնի մեջ՝ ամրացված խճով, ցեմենտով, կամ կրաշաղախով: Սահմանաքարի կտրվածքը կազմում էր 1 քառ. արշին: Սահմանաքարի վերնամասում կոտորակի ձևով փորագրվում է սահմանանշանի հերթական համարը արաբական կամ թուրքական թվերով: Եթե սահմանանշանի գիրը ուղղված է թուրքիայի կողմը, ապա համարիչում նշվում են թուրքական թվերը, իսկ հայտարարում՝ արաբականը: Իսկ եթե սահմանանիշը ուղղված է անդրկովկասյան հանրապետությունների կողմը, ապա, ընդհակառակը, համարիչում նշվում է արաբական թիվը, իսկ հայտարարում՝ թուրքականը¹⁶⁷:

Սահմանային խառը հանձնաժողովի աշխատանքներից զատ՝ կոնֆերանսի միջամասում ընթացել են երկկողմ ու բազմակողմ խորհրդակցություններ պայմանագրի երկու կողմի նախագծերի հողվածների համաձայնեցման, Բաթումի, Կողքի, Անիի շուրջ տարածայնությունների հարթման և այլն:

Դժվար չէ նկատել, որ եթե կոնֆերանսի բանակցային գործընթացի հիմքում սկզբունքորեն դրված էր Մոսկվայի պայմանագիրը, հետևապես երկու կողմի մշակած ապագա պայմանագրի նախագծերը, ըստ էության, Մոսկվայի պայմանագրի հողվածներն էին որոշ խմբագրական փոփոխություններով՝ տեղայնացված ու դետալացված թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների պայմաններին: Սակայն եթե թուրքական կողմը պահանջում էր

¹⁶⁶ Նույն տեղում, թ. 135–136:

¹⁶⁷ Նույն տեղում, թ. 154:

հավատարիմ մնալ Մոսկվայի պայմանագրի տառին և ոգուն, ապա անդրկոմկասյան կողմը առաջարկում էր սահմանային աննշան (կոսմետիկ) շտկումներ, ինչին կտրականապես դեմ դուրս եկան թուրքերը: Սա էր պատճառը, որ բանակցությունները ձգձգվում էին:

Վավերագիր նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 9-ը փաստորեն լիագումար նիստեր չեն գումարվել, ինչպես որ Մոսկվայի կոնֆերանսի դեպքում, այլ ընթացել են երկկողմ բուռն խորհրդակցություններ ու քննարկումներ, որի ընթացքում թուրքերը շարունակաբար կոշտացրել են իրենց դիրքերն ու պահանջները:

Հարկ է նշել, որ կոնֆերանսի ընթացքին Մոսկվայից ուշիուշով հետևել է Գ. Չիչերինը, իսկ Երևանից՝ Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանը: Նրանք բանակցությունների ընթացքի և արդյունքների մասին ամեն օր, նույնիսկ օրը մի քանի անգամ հեռագրերով տեղեկություններ ու հաշվետվություններ էին ստանում Յա. Գանեցկուց և Ա. Մռավյանից: Յա. Գանեցկին վկայում է, որ բանակցություններն այնքան էլ հարթ չեն ընթացել. «Ժամանակ առ ժամանակ ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ կարծես չի հաջողվի պայմանագիր կնքել»¹⁶⁸: Հոկտեմբերի 2-ի հեռագրում նա հայտնում է, որ «Կոնֆերանսն ընթանում է դժվարություններով, թուրքերը համառում են, մեր պահանջներին հանդիպակաց պահանջներ են ներկայացնում»¹⁶⁹: Հոկտեմբերի 3-ին Գ. Չիչերինին ուղղված մեկ այլ հեռագրով Յա. Գանեցկին հայտնում էր, որ աշխատանքները արագացնելու նպատակով հաճախացել են պատվիրակությունների մասնավոր խորհրդակցությունները: Հոկտեմբերի 3-ի առավոտյան խորհրդակցությունում քննարկվել է պայմանագրի անդրկոմկասյան նախագիծը: Թուրքերն առաջարկում են, որ ներածական մասում անդրկոմկասյան հանրապետությունների կառավարությունները նշվեն առանձին, ինչին չի համաձայնվում խորհրդային պատվիրակությունը: Այդ առնչությամբ թուրքերը որոշում են հարցում անել Անգորային:

Պայմանագրի նախագծի 1-ին հոդվածում կատարվեց ուղղում այն հաշվով, որ նախկինում կնքված պայմանագրերի չեղյալ համարելը վերաբերում է միայն անդրկոմկասյան հանրապետությունների տարածքներին և ոչ թե թուրքականին: 2-րդ հոդվածում

¹⁶⁸ Նույն տեղում, թ. 83:

¹⁶⁹ Նույն տեղում:

թուրքերն առաջարկեցին մտցնել «Ազգային ուխտի» ճանաչման մասին պահանջը, որն ընդունվում է¹⁷⁰: «Ազգային ուխտի» հետ կապված որոշ փոփոխություն կրեց Մոսկվայի պայմանագրի 2-րդ հոդվածը:

Հոկտեմբերի 3-ի խորհրդակցության ժամանակ տաք վեճեր են ընթանում Նախիջևանի և Բաթումի շուրջ: Թուրքերը պնդում էին Նախիջևանին և Բաթումին վերաբերող յուրաքանչյուր հոդվածում պայմանագրին կցել առանձին հավելված, որոնցում պետք է որոշվեն այդ ինքնավար մարզերի հիմունքները: Սակայն ի վերջո թուրքերը համաձայնվեցին, որ այդ մարզերի կարգավիճակի շուրջ պարզաբանումներ կտան Ադրբեջանի և Վրաստանի պատվիրակները, որոնք և կմտցվեն արձանագրության մեջ: Վրաստանի պատվիրակ Շ. Էլիավան մասնավորապես ցույց տվեց Աջարիայի ինքնավարության մասին ՎՍԽՀ կառավարության դեկրետը¹⁷¹:

Շուրջ չորսժամանոց վեճ է ընթացել Բաթումի նավահանգստի օգտագործման հարցի շուրջ: Թուրքերը մերժում են խորհրդային կողմի ներկայացրած պայմանագրի նախագծի 7, 8, 9–13, 14, 16–17-րդ հոդվածները:

Հարկ է նշել, որ խորհրդային կողմի ներկայացրած պայմանագրի նախագիծը հենց Մոսկվայի պայմանագիրն էր որոշ կառուցվածքային, բովանդակային, խմբագրական բնույթի փոփոխություններով:

Իրենց հերթին պայմանագրի նախագիծ էին կազմել թուրքերը, որում կովկասյան հանրապետություններին ներկայացվում էին տնտեսական, ապրանքների, գույքի հատուցման մեծ պահանջներ: Գ. Չիչերինի՝ Ս. Նացարենուսին հասցեագրված հոկտեմբերի 4-ի նամակից դարձյալ երևում է, որ կոնֆերանսում թուրքերը շատ կոշտ դիրք են գրավել. համառում են և նորանոր պահանջներ են ներկայացնում: Այսպես, օրինակ, թուրքերը պահանջում էին ռուսական հեղափոխություններից ի վեր թուրք քաղաքացիների կորցրած սեփականության և գույքի փոխհատուցում: Բաթումի հարցի շուրջ թուրքերը պահանջում էին իրենց տալ հատուկ արտոնված տարածք ապրանքների համար: Արդյունքում նրանք ստացան անմաքս առևտրի իրավունք¹⁷²:

¹⁷⁰ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 543.

¹⁷¹ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 683:

¹⁷² Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 546.

Թուրքական պատվիրակության կոշտ ու անզիջող դիրքորոշման մասին է փաստում նաև Ա. Մռավյանը՝ Ալ. Մյասնիկյանին ուղղված նամակներում: Թուրքերը առարկություններ են ունեցել նաև Նախիջևանի խնդրում: Մռավյանի վկայությամբ ընդունվել է Նախիջևանի վերաբերյալ հողվածի (5-րդ) խորհրդային կողմի խմբագրած տարբերակը: Ի դեպ, Նախիջևանի հարցի առնչությամբ Կարս էին ժամանել Վեդիբասարի թուրք բանագնացներ՝ պահանջելով Վեդիի շրջանը միացնել Նախիջևանի մարզին: Սակայն խորհրդային պատվիրակությանը հաջողվել է նրանց մի կերպ հանգստացնել¹⁷³: Ա. Մռավյանը թուրքերի դիրքորոշման կոշտացումը բացատրում էր ռուս-լեհական ճգնաժամի սրման հետ¹⁷⁴: Թուրքերի կեցվածքի կոշտացումը հավանաբար կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ Կարսի կոնֆերանսին գրեթե միաժամանակ Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին գործերի սենատական հանձնաժողովի նախագահ Անրի Ֆրանկլեն Բույոնը գաղտնի բանակցություններ էր վարում Անգորայի (Մուստաֆա և Յուսուֆ Քեմալների) հետ, որոնց արդյունքում հոկտեմբերի 20-ին կնքվեց Անգորայի համաձայնագիրը: Այդ նշանակում էր, որ Ֆրանսիան այլևս սպառնալիք չէր Թուրքիայի համար: Բանակցություններն ու մերձեցումը Ֆրանսիայի հետ ուժ էր տալիս թուրքերին Կարսի բանակցություններում «ռուսների» հետ ավելի համարձակ խոսելու: Այժմ թուրքերն այնքան ինքնավստահ էին, որ Մոսկվայում թուրք դեսպան Ալի Ֆուադը հոկտեմբերի 3-ին առաջարկել էր Ի. Ստալինին, որ Թուրքիան լինի միջնորդ Ֆրանսիայի և ՌՍՖՍՀ-ի միջև հօգուտ վերջինիս¹⁷⁵: Հիմքեր կան պնդելու, որ Յու. Քեմալը չցանկացավ անձամբ զլխավորել թուրքական պատվիրակությունը Կարսի կոնֆերանսում, որովհետև հող էր պատրաստվում Անգորայի թուրք-ֆրանսիական բանակցությունների համար:

Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Մռավյանը Ալ. Մյասնիկյանին ուղղված հոկտեմբերի 5-ի հերթական հեռագրում ակնարկում է, որ թուրքերը սակարկում և ձգձգում են բանակցությունները՝ հույսեր կապելով ռուս-լեհական ճգնաժամի խորացման հետ¹⁷⁶:

¹⁷³ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 55:

¹⁷⁴ Նույն տեղում, թ. 56:

¹⁷⁵ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 546.

¹⁷⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 56:

Թուրքերի կողմից բանակցությունների ձգձգման և բանակոչվների գլխավոր առանցքը ոչ թե սահմանային խնդիրներն էին (դրանք սկզբունքորեն արդեն որոշվել էին «Ազգային ուխտով» և Մոսկվայի պայմանագրով), այլ մնացած հողվածների շուրջ առկա տարակարծությունները: Քննարկվող գրեթե բոլոր հողվածների շուրջ թուրքերը ջանում էին կորզել առավելագույն օգուտ և արտոնություններ:

Յա. Գանեցկին հոկտեմբերի 5-ին Կարսից հեռագրում էր Մոսկվա՝ Գ. Չիչերինին. «Այսօրվա խորհրդակցությունը ընթացել է ժամը 2-ից մինչև 8-ը առանց ընդմիջման: Առաջ ենք ընթանում կրիայի քայլերով: Թուրքերի վարքագիծն այնպիսին է, որ ականաքեզ հարց ես տալիս, թե մենք ինչու ենք այսքան զոհողություններ անում: Փորձագետներին հանձնարարվել է գծել քարտեզը և վերջնական խմբագրման ենթարկել հողվածները»¹⁷⁷: Հոկտեմբերի 6-ի հեռագրում Յա. Գանեցկին դարձյալ զեկուցում է, որ այսօրվա խորհրդակցությունում ևս առաջընթաց չեղավ. «Սեզ մոտ այնպիսի տպավորություն է, - կարդում ենք նրա հեռագրում, - որ թուրքերը գիտակցաբար ձգձգում են կոնֆերանսը»¹⁷⁸:

Բանակցություններում առաջընթաց չկար այն իմաստով, որ խորհրդային կողմի ներկայացրած սահմանային մասնակի շտկումների տնտեսական և հումանիտար բնույթի առաջարկությունները, որպես կանոն, մերժվում էին: Հայաստանի համար սկզբունքային օր էր հոկտեմբերի 5-ը, քանզի այդ օրվա ոչ պաշտոնական քննարկումները վերաբերում էին Հայաստանին առնչվող հողվածներին ու մասնավորապես Անիի խնդրին: Իննօրյա սպասումներից հետո թուրքական պատվիրակությունը կտրուկ մերժեց Անիի ավերակները որևէ ձևակերպմամբ Հայաստանին վերադարձնելու պահանջը: Նրանք հայտարարեցին, որ «Անգորան համաձայն չէ Անին զիջել Հայաստանին»¹⁷⁹: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 6-ին, Ա. Մռավյանը Կարսում գտնվող դիվանագիտական առաքելության գնացքից հեռագրում է Երևան՝ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին: Նա հաղորդում է, որ. «Հոկտեմբերի 5-ին Հայաստանին վերաբերող հողվածների քննության ժամանակ թուրքերը ցուցաբերեցին կտրուկ անհաշտվողականություն և հրաժարվեցին վերա-

¹⁷⁷ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 547.

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 549:

¹⁷⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, ք. 58:

դարձնել Անիի ավերակները»¹⁸⁰: Եղան սուր ելույթներ: Խորհրդային կողմից հանես եկավ միայն Յա. Գանեցկին: Նույն օրը երեկոյան վերջինս հեռագրում է Մոսկվա՝ Չիչերինին. «Թուրքերը մերժեցին Անիում գիտական աշխատանքներ կատարելու հարցը՝ պատճառաբանելով, որ դրա համար Թուրքիայում ստեղծված են լայն հնարավորություններ»¹⁸¹: Դրա փոխարեն խորհրդային կողմը բարձրացրեց Կողբի վարձակալության (կոնցեսիայի) խնդիրը, սակայն թուրքերը սա էլ են մերժում՝ պատճառաբանելով, որ դա սոսկ կոմերցիոն (առևտրական) հարց է և չի կարելի կոնֆերանսի քննարկման նյութ դարձնել¹⁸²: Թուրքերը երկար ժամանակ համառում էին նաև հայ-թուրքական պատերազմի մասնակիցների համաներման և փախստականների վերադարձի հարցում¹⁸³: Յուլի 7-ի խորհրդակցության ժամանակ թուրքերը տալիս են համաձայնություն համաներման և փախստականներին վերաբերող հոդվածների ձևակերպումներին: Այդ նույն օրվա երեկոյան նիստում սուր վեճ է բացվում Ալեքսանդրապոլի դեպոյի գույքի վերադարձման շուրջ: Յա. Գանեցկին, ով խորհրդային կողմի գլխավոր դերակատարն էր, պատմում է, որ Ալեքսանդրապոլի դեպոյի գույքի վերադարձման հարցի շուրջ ունեցած մասնավոր զրույցի ժամանակ Կարաբեքիրը «ուղղակի աղերսեց ինձ հրաժարվել Ալեքսանդրապոլի դեպոն վերադարձնելու մտքից, քանի որ նրա նյութատեխնիկական սարքավորումներով են աշխատում Կարսի և Էրզրումի երկաթուղային արհեստանոցները»¹⁸⁴: Որպես հարցի փոխգիշումային լուծում՝ Յա. Գանեցկին առաջարկեց գույքի հատուցումը կատարել գոնե դրամով: Սակայն այս դեպքում էլ թուրք պատվիրակները սկսեցին «լաց լինել» (Գանեցկու խոսքն է՝ Ա.Յ.), թե իրենց տնտեսական դրությունը ծանր է»¹⁸⁵: Ալեքսանդրապոլի դեպոյի գույքի վերադարձման պահանջին թուրքերը դրեցին հանդիպակաց պահանջ, այն է՝ վերադարձնել պատերազմի շրջանում Էրզրումից, Կարսից և Սարիղամիշից դուրս բերված գույքը: Չարմանալ կարելի է թուրքերի այդ անհիմն պահանջի վրա:

¹⁸⁰ Նույն տեղում, էջ 57:

¹⁸¹ Նույն տեղում, գ. 21, թ. 97:

¹⁸² Նույն տեղում, թ. 48:

¹⁸³ Նույն տեղում, թ. 57:

¹⁸⁴ Генцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 544.

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 549:

Աշխարհամարտի շրջանում էրգրումից ոչ միայն գույք չի տարվել, այլև թուրքերին է թողնվել գինամթերքի և սննդի հսկայական ծավալներով պահեստները: Ինչ վերաբերում է Կարսին և Սարիղամիշին, ապա դրանք Հայաստանի Հանրապետության ռազմավարական կենտրոններ են եղել, որոնք բռնազավթվել էին թուրքերի կողմից՝ ուղեկցվելով իրենց իսկ կողմից իրականացված թալանով ու կոտորածներով: Ցավոք, խորհրդային կողմը թուրքերի այդ պահանջներին ոչնչով չի հակադարձել: Ոգևորվելով դրանից՝ թուրքերը պահանջել են առհասարակ վնասների հատուցում¹⁸⁶: Չավեշտալին այն էր, որ հատուցում էր պահանջում մի երկիր, որը 1920թ. Հայաստանի դեմ սանձազերծած պատերազմի արդյունքում՝ Սարիղամիշ-Մերդենեկից մինչև Արագածի փեշերը սփռել էր մահ ու ավեր, կողոպտել և յուրացրել էր հայկական բնակավայրերը, դուրս տարել այն ամենը, ինչ հնարավոր է եղել տեղաշարժել: Տարել էին անգամ պատուհանի շրջանակներ, դռներ, էլեկտրական սյուներ, երկաթուղային ռելսերն ու փայտակոճերը (շալվները)¹⁸⁷:

Թուրք պատվիրակությունը իրեն իրավունք էր վերապահում ի ցույց հայտարարելու, որ «թուրք ժողովուրդն ու բանակը դաշնակների դեմ մղվող պայքարով օգնել են կարմիր բանակին՝ Անդրկովկասում խորհրդային կարգերի հռչակման գործում»¹⁸⁸:

Հոկտեմբերի 8-ին շարունակվել են մասնավոր քննարկումները չլուծված հարցերի շուրջ: Հավանություն է տրվում ներածության խորհրդային կողմի ներկայացրած խմբագրությանը: Ընդունվում է հայտարարություն Բաթումի նավահանգստից օգտվելու մասին: Այդ օրը Ալեքսանդրապոլի դեպոյի գույքի հարցի շուրջ դարձյալ վեճեր բռնկվեցին: Խորհրդային միացյալ պատվիրակությունը առաջարկեց, որ այդ խնդրի շուրջ թուրք պատվիրակությունը հայտարարություն անի, որ պայմանագրի կնքումից հետո թուրքական կառավարությունը կապերի մեջ կմտնի շահագրգիռ կողմի (այսինքն՝ Հայաստանի) հետ հատուցում տալու նպատակով: Այս կապակցությամբ թուրքերը մի նամակի տեքստ ներկայացրին, որում անորոշ խոսվում էր Հայաստանին օգնելու մասին և ամենևին հիշատակություն չկար Ալեքսանդրապոլի դեպոյի վե-

¹⁸⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 83:

¹⁸⁷ Զոհրաբյան է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 240:

¹⁸⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 550.

րաբերյալ: Այդ օգնությունը հավանաբար այն երկու- երեք վազոն աղն էր, 2 վազոն հացամթերքը, 40 գլուխ կովը և 80 գլուխ ոչխարը, որ Հայաստանը նվեր ստացավ Թուրքիայից¹⁸⁹:

Հոկտեմբերի 9-ին գումարվեց կոնֆերանսի «Դ» պլենար (լիագումար) նիստը (մինչ այդ տեղի էր ունեցել ինը ոչ պաշտոնական նիստ-խորհրդակցություն), որում ընդունվեցին նախընթաց օրերին մշակված և համաձայնեցված հոդվածները: Այդ օրվա քննարկման ժամանակ թուրքերը համաձայնվեցին համաներում հայտարարել պատերազմի կովկասյան ճակատի մասնակիցների համար՝ առանց հիշատակելու հայերի անունը: Թուրքերը հրաժարվեցին ճանաչել հայ փախստականների իրավունքը Սուրմալուում և Կարսում, սակայն համաձայնվեցին, որ պայմանագրի ստորագրումից երեք ամիս հետո կնքվի նաև գաղթականների (փախստականների) մասին համաձայնագիր¹⁹⁰:

Հոկտեմբերի 10-ին կոնֆերանսը թևակոխեց եզրափակիչ փուլ: Բացվեց կոնֆերանսի «Ե» լիագումար նիստը, որտեղ ընթերցվեցին պայմանագրի վերջնականորեն համաձայնեցված հոդվածները, եղան առանձին հայտարարություններ վիճելի կետերի շուրջ: Գանեցկին վերջին անգամ հայտարարության կարգով պնդեց Անիի վերաբերյալ: Նրա հայտարարությունը բովանդակում էր հետևյալը. «Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունները ամենախոր ցավով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը, որը ներկայացնում էր հայերի համար ազգային-պայտմական և գեղարվեստական արժեք»¹⁹¹: Սակայն թուրք պատվիրակությունը մերժողական պատասխան տվեց՝ առարկելով, որ Անին գտնվում է Ախուրյանի արևմտյան ափին, ուստի, այն տալով հայերին, խախտվում է Մոսկվայի պայմանագրի սկզբունքը¹⁹²: Միաժամանակ թուրքերը հայտարարեցին, որ իրենք արգելքներ չեն հարուցի նրանց համար, ովքեր կցանկանան այցելել այդ ավերակները¹⁹³: Նույն կերպ թուրքերը մերժեցին նաև Կող-

¹⁸⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 58, «ՀՍԽՀ արտգործոժողկոմատի բյուլետեն», 5 նոյեմբերի 1921 թ., թիվ 7, էջ 20, Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М., 1929, с. 306.

¹⁹⁰ ՀԱԱ ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 59-60:

¹⁹¹ «Խորհրդային Հայաստան», 23 հոկտեմբերի 1921 թ.:

¹⁹² Հակոբյան Ա., Թե ինչպես Անին չմիացվեց Հայաստանին (ՊԲՀ, 2003, թիվ 2, էջ 80-81):

¹⁹³ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 58:

րի աղահանքերը կոնցեսիայով Հայաստանին հանձնելու, էլ չենք խոսում Հայաստանին միացնելու առաջարկը: Հոկտեմբերի 10-ի նիստում թուրքերը համաձայնվեցին ստորագրել միասնական պայմանագիր: Այդ նույն օրը Յա. Գանեցկին Կարսից հեռագրում է Մոսկվա՝ Գ. Չիչերինին. «Հենց նոր ավարտվեց կոնֆերանսի նիստը: Բոլոր հողվածները ընդունվել են: Այս նիստում խորհրդային կողմը հասավ նրան, որ թուրքերը հրաժարվեցին Բաթումի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունից: Դրա դիմաց խորհրդային կողմն էլ հրաժարվեց Ալեքսանդրապոլի դեպոյի հարցը բարձրացնելուց»¹⁹⁴: Սա նշանակում է, որ տեղի է ունեցել ոչ միայն տարածքային փոխանակություն. թուրքական «Ազգային ուխտի» մեջ մտնող Բաթումի մարզը թողնվել է Վրաստանին, դրա դիմաց «Ազգային ուխտի» մեջ չմտնող Սուրմալուի գավառը (հատկանշական է, որ այդ երկու երկրամասը ունեցել են գրեթե նույն տարածքը) հանձնվել է Թուրքիային, խորհրդային պատվիրակությունը հրաժարվել է Ալեքսանդրապոլի դեպոյի հարցը բարձրացնելուց այն բանի դիմաց, որ թուրքական կողմն էլ հրաժարվի Բաթումից ու նավահանգստից օգտվելու լրացուցիչ արտոնություններ ստանալուց:

Հարկ է փաստել, որ կոնֆերանսի ողջ ընթացքում չի արձանագրվել հայկական պատվիրակության որևէ ելույթ, բողոք, անգամ ռեպլիկ: Նա հանդես է բերել քար լռություն: Հայ պատվիրակները այդպես են վարվել հավանաբար նրա համար, որպեսզի չվնասվի հարևան թուրք ժողովրդի հետ «եղբայրական համերաշխությունը»: Ինչ վերաբերում է Ադրբեջանի և վրաց պատվիրակներին, ապա Նախիջևանի և Բաթումի խնդիրների քննարկման ժամանակ պարզաբանիչ ելույթներով, այն էլ մի քանի անգամ, հանդես են եկել Ադրբեջանի պատվիրակ Բ. Շահթախթինսկին և Վրաստանի՝ Շ. Էլիավան¹⁹⁵:

Ավելորդ չենք համարում նաև տեղեկացնել, որ Կարս մեկնող հայ պատվիրակությունն իբրև ընծա թուրք պատվիրակությանն է նվիրաբերել դեղորայք, երկու արկղ կոնյակ, երկու արկղ գինի, երկու արկղ պահածո, 20 ֆունտ շաքար և 3 ֆունտ թեյ¹⁹⁶: Այդ նվի-

¹⁹⁴ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 552.

¹⁹⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 114, 118–119, 127 և այլն:

¹⁹⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 172, թ. 8:

րատվության կապակցությամբ սեպտեմբերի 30-ին Ք. Կարաբեքիրը իր շտաբի պետի միջոցով խորին շնորհակալություն է հայտնել Հայաստանի ա.գ. ժողկոմատի քարտուղար Խոջամիրյանին՝ ստացած դեղորայքի, պահածոների և կոնյակի համար:¹⁹⁷ Ինչպիսի առատածեռնություն այն դեպքում, երբ այդ նույն ժամանակ երկիրն ու ժողովուրդը մատնված էին սովի ու համաճարակի: Դժվար է միանշանակ հասկանալ այդ նվիրատվության իմաստը: Դրա տակ կարելի է հասկանալ և՛ կովկասյան հյուրասիրություն ու առատածեռնություն, և՛ ինտերնացիոնալիստական համերաշխության ժեստ, և՛ սիրաշահում:

Հոկտեմբերի 13-ին (հինգշաբթի օրը)՝ ժամը 12-ին, գումարվեց կոնֆերանսի վերջին՝ վեցերորդ նիստը: Նիստի նպատակը արդեն պատրաստված պայմանագրի ստորագրումն էր: Այն բացեց Յա. Գանեցկին և առաջարկեց ստորագրել «եղբայրության և բարեկամության մասին» պայմանագիրը: Ստորագրության արարողությունը կատարվեց հանդիսավոր պայմաններում: Պատվիրակություններից զատ՝ արարողակարգին ներկա էին քաղաքային և զինվորական իշխանությունների ներկայացուցիչներ, պատանի թուրք սկաուտներ: Խոր լռության պայմաններում ընթերցվեց պայմանագրի ֆրանսերեն բնագիրը, որից հետո ստորագրվեցին նիստերի արձանագրությունները: Ուղիղ կեսօրին կատարվեց պայմանագրի ստորագրությունը: Ստորագրման պահին Կարսի բերդից տրվեց հրանոթային չորս համազարկ, և թուրքական նվագախումբը կատարեց «Ինտերնացիոնալն» ու Թուրքիայի պետական հիմնը¹⁹⁸:

Պայմանագիրը ստորագրեցին այբբենական կարգով՝ Հայաստանի կողմից Ա. Մռավյանը և Պ. Մակինցյանը, Ադրբեջանի՝ Բ. Շահթախթինսկին, Վրաստանի՝ Շ. Էլիավան և Ա. Սվանիձեն, Թուրքիայի՝ Ք. Կարաբեքիր փաշան, Վելի բեյը, Մուխթար բեյը և Մ. Շևքեթ բեյը, իսկ ՌՍՖՍՀ կառավարության կողմից՝ Յա. Գանեցկին: Ստորագրելուց հետո ճառեր արտասանեցին Ք. Կարաբեքիրը և Յա. Գանեցկին: Դրանով փակվեց Կարսի կոնֆերանսը: Փոխադարձ շնորհավորանքներից հետո նույն օրը խորհրդային պատվիրակները գնացքով մեկնեցին Կարսից:

¹⁹⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 271:

¹⁹⁸ «Խորհրդային Հայաստան», 23 հոկտեմբերի 1921 թ., Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 683:

Կարսի պայմանագիրը բաղկացած էր պրեամբուլայից, 20 հոդվածներից և երեք՝ I, II, III հավելվածներից¹⁹⁹: Հավելվածներում որոշված են սահմանագծերը:

Պրեամբուլայում Մոսկվայի պայմանագրից ոչ պակաս ջերմությամբ խոսվում էր խորհրդային և թուրք ժողովուրդների «եղբայրություն, անխախտ ու անկեղծ բարեկամություն» հաստատելու նպատակով բանակցություններ սկսելու և բարեկամական պայմանագիր կնքելու մասին: Պայմանագրի ներածականը ինքնին նախանշում էր կնքվելիք պայմանագրի բնույթն ու բովանդակությունը:

Նկատի առնելով, որ հայերեն ժողովածուներում պայմանագրի 1-ին հոդվածի հայերեն թարգմանությունը, մեր կարծիքով, այնքան էլ հաջող չի տրված (մեկ նախադասության մեջ երեք անգամ նշված է տերիտորիա, պետությունը դարձել է տերություն և այլն), ուստի անհրաժեշտ ենք համարում այդ հոդվածը մեջ բերել ամբողջությամբ, բնագրին ավելի հարազատ տարբերակով. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների կառավարությունները չէղյալ և ուժը կորցրած են ճանաչում բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվել են նախկինում պայմանավորվող կողմերի տարածքների վրա ինքնիշխան իրավունքներ իրականացրած կառավարությունների միջև և վերաբերել են նշված տարածքներին, ինչպես նաև այն պայմանագրերը, որոնք կնքվել են երրորդ պետությունների հետ և վերաբերել են անդրկովկասյան հանրապետություններին:

Ընդունվում է, որ սույն հոդվածի ուժը չի տարածվում 1921 (1337) թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրի վրա»²⁰⁰:

Նախ փաստենք, որ սույն հոդվածը նույնանում և բխում է Մոսկվայի պայմանագրի տրամաբանությունից միայն այն տարբերությամբ, որ չէղյալ և ուժը կորցրած էին համարվում նաև թուրքանդրկովկասյան նախկին ինքնիշխան կառավարությունների

¹⁹⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, ք. 20–24, գ. 56, ք. 68–74, ֆ. 114, ց. 2, գ. 133, ք. 10–19, «Հայաստանը...», էջ 517–527, ДВП СССР, т. 4, М., 1960, с. 420–429.

²⁰⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 69, ֆ. 114, ց. 2, գ. 133, ք. 11:

պայմանագրային հարաբերությունները:

Այսպիսով, Կարսի պայմանագրի 1-ին հոդվածով պայմանավորվող կողմ հանդիսացող պետությունների կառավարությունները չէոյալ և ուժը կորցրած են ճանաչում մինչև իրենց իշխանության գալը նշված պետություններում ինքնիշխան իրավունքներ իրականացրած կառավարությունների՝ ինչպես իրար միջև կնքված և նշված տարածքներին վերաբերող, այնպես էլ այլ պետությունների հետ կնքված և անդրկովկասյան հանրապետություններին վերաբերող պայմանագրերը:

Սա նշանակում է, որ ուժը կորցրած են ճանաչվում և՛ Բրեստ-Լիտովսկի, և՛ Բսթումի, և՛ Սևրի, և՛ Ալեքսանդրապոլի, ինչպես նաև ավելի վաղ կնքված Ադրիանապոլսի, Փարիզի, Սան Ստեֆանոյի, Բեռլինի և այլ պայմանագրերը, որոնք օսմանյան կայսերական կառավարությունը կնքել է երրորդ կողմերի հետ: Նույնը վերաբերում է Զայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի նախկին կառավարությունների իրար միջև, կամ Թուրքիայի, կամ էլ մի այլ երրորդ կողմի հետ կնքված պայմանագրերին:

Ասվածից հետևում է, որ չէոյալ և ուժը կորցրած էին համարվում քենալական Թուրքիայի, մուսավաթական Ադրբեջանի և մենչևիկյան Վրաստանի միջև 1919–1920 թթ. կնքված երկկողմ պայմանագրերը, որոնք, որպես կանոն, իրենց սուր ծայրով ուղղված էին Զայաստանի Զանրապետության դեմ՝ այն խորտակելու և իրար միջև բաժանելու նպատակով: Մասնավորապես, դրանից կարելի է մատնանշել, օրինակ, 1919 թ. օգոստոսի 22-ի Ղարաբաղին վերաբերող համաձայնագիրը, նույն թվականի հոկտեմբերին թուրք-ադրբեջանական գաղտնի դաշինքը, 1920 թ. ապրիլի 15-ին թուրք-ադրբեջանական ռազմական կոնվենցիան, 1920 թ. սեպտեմբերին թուրք-վրացական գաղտնի համաձայնագիրը և այլն²⁰¹:

Եվ, վերջապես, Կարսի պայմանագրի 1-ին հոդվածը վկայում է նաև պայմանավորվող կողմերի միջև նոր պայմանագրային դաշտի ստեղծման պատրաստակամության մասին: Մի կարևոր հանգամանք էս. 1-ին հոդվածի վերջին պարբերությամբ պայմա-

²⁰¹ Գանգրունի Զ., Զայաստան 1918 և հայ քաղաքական միտքը, Պեյրութ, 1984, էջ 117–120, «Զայրենիք», Բոստոն, 1923, թիվ 1, էջ 109, Գալոյան Գ., Զայաստանը և մեծ տերությունները (1917–1923 թթ.), էջ 310, 314–315, Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, էջ 327:

նավորվող կողմերը օրինական և, ըստ էության, գերակա էին ճանաչում միայն ռուս-թուրքական 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը իրենց փոխհարաբերություններում: Մոսկվայի պայմանագրի ճանաչումը անդրկովկասյան հանրապետությունների կողմից նշանակում էր, որ թուրք-անդրկովկասյան տարածքային-սահմանային խնդիրները լուծելիս նրանք առաջնորդվելու էին թուրքական «Ազգային ուխտի» պահանջներով: Մյուս կողմից՝ Կարսի պայմանագիրը բոլոր առումներով վերջ է տալիս բազմաչարչար Ալեքսանդրապոլի պայմանագրի գոյությանը, թեև այն իր ստորագրման իսկ պահից, ինչպես արդեն հիմնավորվել է, չի ունեցել իրավական ուժ:

Եթե Կարսի պայմանագրի 1-ին հոդվածը վերաբերում էր երկու (մի կողմից ԹԱՄԺ, իսկ մյուս կողմից Խորհրդային Չայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի) կառավարությունների՝ իրենց նախկին տարածքներում ինքնիշխան իրավունքներ իրականացրած կառավարությունների կնքած պայմանագրերը չեղյալ և ուժը կորցրած համարելուն, ապա 2-րդ հոդվածում դարձյալ խոսվում էր նույն երկու պայմանավորվող կողմերի սույն պայմանագրով վերցրած փոխադարձ պարտավորության մասին՝ «չճանաչելու ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին ուժով են հարկադրում այն ընդունել»²⁰²: Դա վերաբերում էր ինչպես ներկային, այնպես էլ ապագայում կնքվելիք պայմանագրերին: Պետք է նշել, որ Կարսի պայմանագրի 2-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններն իրենց բովանդակությամբ բառացիորեն կրկնում են Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունը միայն այն տարբերությամբ, որ ՌՍՖՍՀ-ի փոխարեն իբրև կողմ ներկայանում են անդրկովկասյան հանրապետությունները: Իսկ 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը թուրքական «Ազգային ուխտի» ճանաչման մասին տառացիորեն է կրկնում Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունը²⁰³:

Եթե 2-րդ հոդվածը դիտարկվում ենք Չայաստան-Թուրքիա հարաբերության կտրվածքով, ապա այն վերաբերում է ինչպես Սևրի, այնպես էլ չվավերացված Ալեքսանդրապոլի պայմանա-

²⁰² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 69, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 11, «Չայաստանը ...», էջ 519:

²⁰³ Տե՛ս «Չայաստանը ...», էջ 500 և 519:

գրերի չճանաչմանը, որովհետև և՛ Թուրքիայի շահերին առնչվող Սևրի պայմանագիրը չի ճանաչել ԹԱՄԺ կառավարությունը, և՛ նույն կերպ էլ Խորհրդային Չայաստանի կառավարությունը չի ճանաչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Կարսի պայմանագրի 3-րդ հոդվածը, որը նույնանուն է Մոսկվայի պայմանագրի 7-րդ հոդվածին, վերաբերում է կապիտուլյացիաների ռեժիմի վերացմանը²⁰⁴: Հայտնի է, որ նախընթաց դարերում ցարական Ռուսաստանը եվրոպական պետություններից ոչ պակաս իրավունքներով կապիտուլյացիոն (հարկամաքսային և անգամ քաղաքական բնույթի) մի շարք արտոնություններ էր ձեռք բերել Օսմանյան կայսրությունում: Մոսկվայի պայմանագրով (հոդված 7) Ռուսաստանի ունեցած կապիտուլյացիոն բոլոր գործառույթներն ու իրավունքները իրենց ուժը կորցրած և վերացված համարվեցին:

Կարսի պայմանագրով (հոդված 3) համանման համակարգը, եթե գոյություն ունեցել է, վերացված էին համարվում Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև: Խնդիրը մասնավորեցնելով հայ-թուրքական հարաբերություններին՝ պետք է ասել, որ, ըստ էության, անիրավահավասար, կապիտուլյացիոն ռեժիմի բաղադրիչներ էին պարունակում Բաթումի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը: Հենց միայն այն փաստը, որ նշված պայմանագրերով Թուրքիային արտոնություն էր տրվում անհատույց զորք և բեռներ փոխադրել Հայաստանի Հանրապետության տարածքով, ինքնին վկայում է կապիտուլյացիոն ռեժիմի, էլ չենք խոսում այդ պայմանագրերի անիրավահավասար քաղաքական կողմի մասին: Այս իմաստով, ինչ խոսք, Կարսի պայմանագիրը որոշակի տնտեսական և քաղաքական հավասարակշռություն էր ստեղծում հայ-թուրքական միջպետական հարաբերություններում:

Կարսի պայմանագրի 4-րդ հոդվածը, որը նույնանուն է Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի 3-րդ պարբերությանը, ամբողջությամբ վերաբերում է թուրք-անդրկովկասյան սահմանին: Հոդվածում, Մոսկվայի պայմանագրի ոգուն և տառին հավատարիմ, տրված է Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը՝ սկսած Սև ծովի ափամերձ Սարպ գյուղից մինչև Իրանի սահմանը՝ Ներքին Ղարասու գետի Արաքս թափվելու տեղը: Հոդվածում սահմանի ընդհա-

²⁰⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 70, ֆ. 114, ց. 2, գ. 133, ք. 12, «Հայաստանը ...», էջ 519:

նուր պատկերը հետևյալն է. «Սահմանը սկսվում է Սև ծովի ափամերձ Սարպ գյուղից, անցնում է Խեղիս-մտա սարի վրայով, այնուհետև Շավշեթ և Կաննի դաղ լեռների ջրբաժան գծի երկարությամբ, հասնում է Արդահանի և Կարսի օկրուգների (սանջակների) նախկին հյուսիսային վարչական սահմանագծին, այնուհետև Արփաչայ և Արաքս գետերի հնահունով մինչև Ներքին Ղարասուի գետաբերանը»²⁰⁵:

Այս սահմանագծի մանրամասն նկարագրությունը և նրան վերաբերող հարցերը որոշված են I և II հավելվածներում և դրան կից քարտեզում՝ ստորագրված պայմանավորվող երկու կողմերի կողմից: Հավելված III-ը վերաբերում էր Հայաստանի և Նախիջևանի սահմանագծի մանրամասն նկարագրությանը: Ամրագրվում էր նաև, որ պայմանագրի տեքստի և քարտեզի միջև անհամապատասխանություն լինելու դեպքում նախապատվությունը տրվում է տեքստին:

Տեղում պետական սահմանագծի մանրամասն որոշումը և անցկացումը, ինչպես նաև սահմանանշանների տեղադրումը իրականացնելու էր սահմանային խառը հանձնաժողովը՝ կազմված կողմերի հավասար թվով անդամներից՝ ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությամբ: Սահմանագծման աշխատանքների վերաբերյալ կազմվել է հավելված IV քարտեզ, որը, ցավոք, դարձյալ չի հայտնաբերվել: Սահմանագիծը տրված է ռուսական գլխավոր շտաբի քարտեզով՝ մասշտաբը 1/210000 (1 դույմը (մատնաչափը) հավասար է 5 վերստի): Սահմանագծման մասին հանգամանալի անդրադարձ կլինի հաջորդ ենթագլխում:

Սահմանային այս հողվածի վերաբերյալ նշենք իրավապես ոչ հավասարակշռված այն հանգամանքը, որ ինչպես Մոսկվայի (հող. 1-ին), այնպես էլ Կարսի պայմանագրում (հողված 4) խոսք է գնում միայն Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանի մասին, իսկ Անդրկովկասի մասին ոչ մի ակնարկ չկա: Եթե ռուս-թուրքական Մոսկվայի պայմանագրի դեպքում ինչ-որ տեղ կարելի է հասկանալ արված վերապահումը, որպեսզի չընկալվի, թե Ռուսաստանը անդրկովկասյան ինքնիշխան հանրապետությունների համար սահման է գծում, ապա թուրք-անդրկովկասյան Կարսի պայմանագրի

²⁰⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 20, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 12, «Հայաստանը ...», էջ 519, «Ժողովրդի ծայնը», Կ. Պոլիս, 22 հոկտեմբերի 1921 թ.:

պարագայում «Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանի» փոխարեն անպայման պետք է նշվեր «թուրք-անդրկովկասյան սահմանը»: Դրանով ցույց կտրվեր, որ ՌՍՖՍՀ դեռևս հարգում է անդրկովկասյան հանրապետությունների ինքնիշխանությունը:

Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածը, որը համարվում էր Մոսկվայի պայմանագրի փոքր-ինչ խմբագրված տարբերակը, ամբողջապես վերաբերում էր Նախիջևանի մարզին (նաև հավելված III-ը): «Թուրքիայի կառավարությունը և Ադրբեջանի ու Հայաստանի խորհրդային կառավարությունները համաձայն են, որ սույն պայմանագրի III հավելվածում նշված սահմաններում Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»²⁰⁶:

Նկատի առնելով, որ Վրաստանը որևէ առնչություն չունի Նախիջևանի հարցում, ուստի հոդվածում նշված են միայն երեք շահագրգիռ պետությունների՝ Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի անունները:

5-րդ հոդվածում դուրս է հանված Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածի այն արգելանքը, որ «Ադրբեջանը սույն խնամակալությունը չի գիջի մի երրորդ պետության»²⁰⁷: Խմբագրական այդ փոփոխությունը հույս էր ներշնչում հայ հասարակական և ղեկավար շրջաններին, թե հետագայում հնարավոր կլինի Նախիջևանը վերադարձնել Հայաստանին, մանավանդ որ խնդիրը դառնում էր խորհրդային պետության ներքին վարչատարածքային փոփոխության հարց, և Թուրքիան այլևս իրավասու չէր որևէ կերպ միջամտելու Նախիջևանի հետագա ճակատագրի խնդրին: Նախիջևանի կցումը Հայաստանին հնարավոր էր համարվում ամբողջապես կամ ինքնավար կարգավիճակով: Նկատի էր առնվում, որ այդ մարզը տնտեսապես, աշխարհագրական դիրքով ու պայմաններով կապված էր Հայաստանի հետ, իսկ Ադրբեջանը Նախիջևանի հետ անգամ սահմանային որևէ շփում չուներ: Սակայն, ցավոք, հայ շրջանակների այդ հույսը չիրականացավ:

Առաջ անցնելով նշենք, որ ԽՍՀՄ ղեկավարության գիտությանը 1924 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի խորհուրդների Կենտգործկոմը որոշում կայացրեց, որով Նախիջևանի երկրամասը ինք-

²⁰⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 70–71, . ֆ. 114, ց. 2, գ. 133, ք. 12–13, «Հայաստանը ...», էջ 520:

²⁰⁷ «Հայաստանը ...», էջ 501:

նավար հանրապետության (ՆԻՍԽՅ) կարգավիճակով մտցվեց Ադրբեջանի ՍԽՅ կազմում²⁰⁸:

Խորհրդային իշխանության տասնամյակներին ադրբեջանական իշխանությունները վարեցին ժողովրդագրական այնպիսի քաղաքականություն, որ Նախիջևանը աստիճանաբար հայաթափվեց: Եթե 1-ին աշխարհամարտից առաջ էրիվանի (Երևանի) նահանգի մաս կազմող նախիջևանահայության թիվը կազմում էր 53,4 հազար մարդ, ապա 1926 թ. հայերը կազմում էին ընդամենը 11,3 հազար, այսինքն՝ նվազել էր շուրջ 5 անգամ: Հետագայում այդ թիվը ավելի նվազեց, իսկ արցախյան շարժման նոր փուլում Նախիջևանը լիակատար հայաթափվեց:

Նախիջևանի ԻՍԽՅ խնդրում պարադոքսն ու զավեշտալին այն է, որ խորհրդային 70 տարիներին հայության փոխարեն նրա հիմնական էթնիկ տարրը դարձան ադրբեջանցիները: Արդյունքում ստացվեց այնպես, որ Նախիջևանի ադրբեջանցիները ազգային ինքնորոշում ու ինքնավարություն են ստանում Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Մինչդեռ միջազգային իրավունքի տեսանկյունից ճիշտ կլիներ, որ Նախիջևանը ինքնավար կարգավիճակով գտնվեր Հայաստանի վարչատարածքային կազմում՝ որպես ոչ հայ էթնիկ միավոր:

Կարսի պայմանագրի 6-րդ հոդվածն ամբողջությամբ կարգավորում էր Բաթումի խնդիրը: Սույն հոդվածը Մոսկվայի պայմանագրի 2-րդ հոդվածի բառացի կրկնությունն էր:

Նկատի ունենալով, որ Բաթումի մարզը մտնում էր թուրքական «Ազգային ուխտի» տարածքային պահանջի մեջ, ուստի հոդվածն այնպես էր ձևակերպված, որ «Թուրքիան համաձայնվում է Վրաստանին զիջել Բաթում քաղաքի ու նավահանգստի և 4-րդ հոդվածում նշված սահմանագծից դեպի հյուսիս ընկած մարզի տա-

²⁰⁸ 1929 թ. փետրվարի 18-ին Անդրկովկասյան դաշնության կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությունը լսեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանների հողային և անտառային մի քանի վիճելի հարցերի մասին: Դա վերաբերում էր Ղազախի և Դիլիջանի, Մեղրիի և Ջեբրախիլի գավառների սահմանային խնդիրներին: Այն վերաբերում էր նաև Նախիջևանի նախկին գավառի հյուսիս և հարավարևելյան մի շարք գյուղերի Հայաստանին վերադարձման մասին հարցին: Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահությունը որոշեց Կարճևան, Ղուրդղուլաղ, Հորոդիս, Օգբին, Աղչախ, Դագին-Ալմալու, Իթևան և Սուլթանբեկ գյուղերը թողնել ՀՍԽՅ կազմում: Նշված 9 գյուղերը իրենց հողատարածքներով, որոնք կազմել են 479 քառ.կմ, միացվեցին Հայաստանին:

րածքի սուվերենությունը»²⁰⁹: Բացի այդ, Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ Բաթումը գրավված էր թուրքերի կողմից: Թուրքերն այդ տարածքը զիջում էին Վրաստանին պայմանով, որ նշված վայրի բնակչությանը տրվելու էր տեղական լայն ինքնավարություն՝ մշակութային, կրոնական, հողային և այլ իրավունքներով: Այդ տարածքի վրա ձևավորվեց Աջարական Ինքնավար հանրապետությունը:

Նույն՝ 6-րդ հոդվածի մեկ այլ բաղադրիչով Թուրքիային տրվում էր Բաթումի նավահանգստից արտոնյալ պայմաններով՝ ազատ, անմաքս տրանզիտի, ապրանքների անտուրք և այլն, օգտվելու իրավունք, ինչը Թուրքիայի համար, ըստ էության, հավասարազոր էր կապիտուլյացիաներ ձեռք բերելու իրավունքին:

Ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի պայմանագրով Բաթումի նախկին մարզի հարավային հատվածը և Արդվինի գավառը թողնվեց Թուրքիային:

Թուրքիայի սահմաններն անդրկովկասյան հանրապետությունների հետ որոշվում էին Կարսի պայմանագրի 4–6-րդ հոդվածներով ու I, II, III հավելվածներով, որոնք համապատասխանում էին Մոսկվայի պայմանագրի 1–3-րդ հոդվածներին և 1(A), 1(B), 1(C) հավելվածներին:

Կարսի պայմանագրի 7-րդ և 8-րդ հոդվածները վերաբերում էին Վրաստանի և Թուրքիայի սահմանամերձ շրջանների բնակիչների համար հեշտացված պայմաններ ստեղծելուն՝ մարդկանց սահմանի անցման, ամառային և ձմեռային արոտավայրերից օգտվելուն, նախիրների փոխադրմանը և այլն: Դրանց դյուրացված մաքսային, ոստիկանական և սանիտարական կանոնները պետք է սահմաներ խառը հանձնաժողովը²¹⁰:

Այս կապակցությամբ Մոսկվայի պայմանագրի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներում անուղղակի և ընդհանուր ձևով խոսվում են երկու երկրների միջև մարդկանց և ապրանքների ազատ փոխադրումների համար առավելագույն բարենպաստ պայմանների ապահովման մասին: Կարսի և Մոսկվայի պայմանագրերի վերոնշյալ հոդվածների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Կարսի պայմանագրում սահմանային հեշտացված փոխադրումների մասին կանոնները տարածվում էին միայն վրաց-թուրքական

²⁰⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 71, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 13, «Հայաստանը ...», էջ 520:

²¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 71–72, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 13–14, «Հայաստանը...», էջ 520–521:

սահմանային հատվածին: Կարսի պայմանագրի 7–8-րդ և հետագա հոդվածներում հայ-թուրքական սահմանային հատվածում փոխադրումների դյուրություններ ստեղծելու մասին ոչինչ չի ասված²¹¹: Սա նշանակում է, որ պայմանավորվող կողմերը անտեսել կամ, ըստ ամենայնի, թուրքական պատվիրակության կողմից մերժվել է Վրաստանի նման Հայաստանին էլ մարդկանց, ապրանքների, անասունների՝ սահմանի վրայով հեշտացված ազատ տեղափոխումների իրավունքի մասին առաջարկը: Հիշեցնենք, որ Հայաստանի պատվիրակությունը Կարսի կոնֆերանսին ներկայացրած առաջարկությունների հուշագրում մատնանշել էր նաև Կարսի մարզի արոտավայրերից օգտվելու մասին:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է հետևեցնել, որ Հայաստանին վերաբերող հարցում հանդես է բերվել խտրական մոտեցում, ինչը շեղում էր Մոսկվայի պայմանագրի սկզբունքից:

Կարսի պայմանագրի 9-րդ հոդվածը, որը բառացի նույնանում է Մոսկվայի պայմանագրի 5-րդ հոդվածին, վերաբերում էր Սև ծովի և նեղուցների շահագործման միջազգային ստատուտի պայմանների մշակմանը, որը պետք է տեղի ունենար ափամերձ պետությունների ներկայացուցիչների առաջիկա կոնֆերանսում: Սույն հոդվածը տվյալ դեպքում դարձյալ առնչվում էր Թուրքիային և Վրաստանին:

Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածը, կրկնելով Մոսկվայի պայմանագրի այս անգամ 8-րդ հոդվածը, վերաբերում էր երկու կողմերի կառավարությունների անմիջական ենթակայության տակ գտնվող տարածքներում այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացման ու գոյության արգելմանը, որոնք հավակնություն ունեն ստանձնելու մյուս երկրի ամբողջ տարածքի կամ մի մասի կառավարության դեր²¹²:

Նման հոդվածի անհրաժեշտությունը թելադրված էր նրանով, որ և՛ Թուրքիայում, և՛ ՌՍՖՍՀ-ում ու անդրկովկասյան հանրապետություններում այդ ժամանակաշրջանում դեռևս գործում էին քաղաքական զանազան կազմակերպություններ ու զինյալ խմբեր, որոնք փորձում էին դրսից պայքարի տարբեր ձևերով ու միջոցներով վերահաստատել իրենց իշխանությունը:

²¹¹ Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա Թուրքիայի հետ գործնականում սահմանային չփում չունեի:

²¹² «Հայաստանը ...», էջ 520 և 521:

Այդ տեսակետից պայքարի մի խոշոր կենտրոն էր համարվում հատկապես Կ. Պոլիսը, ուր կենտրոնացված էին մեծ թվով ռուս սպիտակ էմիգրանտներ, վրաց մենչևիկներ, Մուսավաթ և Դաշնակցություն կուսակցությունների կառույցներ ու խմբեր: Սակայն պետք է նշել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համապատասխանաբար 8-րդ և 10-րդ հոդվածները Կ. Պոլսի վրա առայժմ չէր տարածվում, քանի որ այդ ժամանակ քաղաքը դեռևս չէր գտնվում ԹԱՄԺ կառավարության զինվորական և քաղաքացիական անմիջական կառավարման ներքո: Բայց փոքր ավելի ուշ, երբ քենալականները տիրացան Կ. Պոլսին, և հոդվածի ուժը տարածվեց քաղաքի վրա, մինչ այդ Անգլիայի հովանավորությանն ապավինած այդ քաղաքական բազմապիսի կազմակերպություններն ու զինյալ խմբերը կամ ջախջախվեցին, կամ էլ հասցրին արտագաղթել ու ցաքուցիր լինել:

Կարսի պայմանագրի 11-րդ և 12-րդ հոդվածները, որոնք ընդհանրական են մոսկվայինի 10-րդ և 11-րդ հոդվածներին, կարգավորում էին մի կողմի քաղաքացիների իրավական դրությունը մյուսի տարածքում՝ նրանց նկատմամբ կիրառելով առավել բարենպաստման սկզբունքը: Տվյալ երկրի քաղաքացին օգտվում է հյուրընկալող երկրի օրենքներից բխող բոլոր իրավունքներից ու պարտականություններից, բացառությամբ ազգային պաշտպանության պարտականությունից: Իսկ երկու կողմի քաղաքացիների ընտանեկան, ժառանգության և գործունակության վերաբերող բոլոր իրավական հարցերը որոշվելու էին հատուկ համաձայնությամբ²¹³:

13-րդ հոդվածը, որը նույնանում է մոսկվայինի 12-րդ հոդվածին, վերաբերում էր Թուրքիայի ինքնիշխանության տակ անցած տարածքների (Կարսի մարզի, Սուրմալուի, Արդվինի գավառների, Բաթումի մարզի հարավային հատվածի), ինչպես նաև Վրաստանի ինքնիշխանության ներքո անցած Բաթումի մարզի հյուսիսային շրջանի քաղաքացիներին, որոնք ցանկության դեպքում կարող են դուրս գալ տվյալ պետության քաղաքացիությունից՝ ազատորեն վաճառելով ու իր հետ վերցնելով սեփական իրերի և գույքի արժեքը²¹⁴:

²¹³ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 72–73, ֆ. 114, ց. 2, գ. 133, ք. 14–15, «Հայաստանը...», էջ 503, 521–522, Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920–1922), Ե., 1967, էջ 328:

²¹⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, ք. 14, գ. 133, ք. 15, «Հայաստանը ...», էջ 503 և 522:

Պետք է նշել, որ Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո, երբ ուժի մեջ մտավ 12-րդ հոդվածը, անցած յոթ ամիսների ընթացքում թուրքական իշխանությունները այնպիսի բռնություններ ու ապօրինություններ էին գործադրել իրենց իշխանության տակ անցած վերոնշյալ տարածքների ռուս, հայ և մյուս քրիստոնյա շատ բնակիչների վրա՝ բռնագրավելով նրանց շարժական և անշարժ գույքը, հարկադրելով գորակոչի և այլն, որ արդեն Կարսի կոնֆերանսում, հաշվի առնելով այդ բնակիչների բողոքները, նոր մշակվելիք պայմանագրում կատարվեց հետևյալ հավելումը, որ վերոհիշյալ տարածքներից հեռանալ ցանկացող այն բնակիչները, ովքեր սահմանված կարգով կհայտարարեն իրենց հեռանալու մասին, այդ դեպքում, սկսած հայտարարման պահից, նրանք կստանան գորակոչից երկամսյա տարկետման իրավունք²¹⁵:

Կարսի պայմանագրի 14-րդ և 16-րդ հոդվածները Մոսկվայի պայմանագրի 13-րդ հոդվածի տրոհված և վերախմբագրված տարբերակն է: Նախ պայմանավորվող կողմերը պարտավորվում են պայմանագրի ստորագրումից հետո 6 ամսվա ընթացքում գաղթականների վերաբերյալ հատուկ համաձայնագիր կնքել, իսկ պայմանագրի ստորագրման օրից, հաշված 2 ամսվա ընթացքում, վերադարձնել երկու կողմերի տարածքներում գտնվող նախկին ռազմագերիներին և քաղաքացիական գերիներին²¹⁶: Այդ նշանակում էր, որ մինչև 1921 թ. վերջը պետք է հայրենիք վերադառնային (եթե, իհարկե, կենդանի մնացել էին) թուրք-հայկական պատերազմի հայ ռազմագերիները և Ալեքսանդրապոլից, Կարսից և այլ վայրերից դեպի երզրում և այլ վայրեր քշված հայ քաղաքացիական անձինք: Վերադարձան ռազմագերիների և բռնի քշված 60 հազար անձերի միայն մի մասը: Մնացած մասը կոտորվել էին ցրտից, քաղցից, բռնություններից ու կոտորածներից:

Կարսի պայմանագրում նորույթ կարելի է համարել այն, որ կոնֆերանսի ժամանակ երկար քննարկումներից հետո հաջողվեց

²¹⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 73, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 15, «Հայաստանը ...», էջ 522 (Պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրած սույն փաստաթղթերի ժողովածուում բաց է թողնված տարկետման երկամսյա ժամկետի մասին պայմանը: Եվ պետք է նշել, որ մեր կարծիքով, բացի նկատվող բացթողումներից ժողովածուի մասնագիտական թարգմանությունը բարձրակ չէ, էլ չենք խոսում փաստաթղթերի ռուսերեն և այլ օտար լեզուներից կատարված լեզվաոճական անհարթությունների մասին):

²¹⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 14, գ. 133, թ. 15–16, «Հայաստանը ...», էջ 503–504, 522–523:

մտցնել առանձին հոդված (թիվ 15), որով կողմերին պարտավորեցվում էր. «սույն պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո հայտարարել մյուս կողմի քաղաքացիների լիակատար ներում այն հանցանքների և զանցանքների համար, որոնք բխել են Կովկասյան ճակատում տեղի ունեցած պատերազմի հետևանքով»²¹⁷: Դժվար չէ կռահել, որ բերված հոդվածը մեծ չափով առնչվում էր հանցանք-զանցանքների մեջ մեղադրված մեծ թվով հայ զինվորական և քաղաքացիական անձանց ներում շնորհելուն: Բայց կարծում ենք, որ այդ համաներումը հավասարապես վերաբերել է նաև թուրքական զինվորական և քաղաքացիական անձանց, ովքեր փաստորեն մասնակից են եղել հայոց ցեղասպանության իրականացմանը: Դժվար է ասել, թե ինչ հետևողականությամբ է այդ հոդվածի պահանջը գործադրվել: Պետք է ասել, որ թուրքական կառավարությունը հայ գերիների և թուրքահպատակների նկատմամբ լիակատար քաղաքական համաներում չիրականացրեց: Նրանցից շատերը կամ կոտորվեցին կամ էլ չվերադարձան հայրենիք:

Եթե շարունակում ենք համեմատել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հոդվածները, ապա տեսնում ենք, որ Կարսի պայմանագրի 17-րդ հոդվածը ամենշան խմբագրական փոփոխությամբ, ըստ էության, նույնական է մոսկվայինի հոդված 9-ին: Հոդվածը սահմանում էր երկու կողմի երկրների միջև հաղորդակցության՝ երկաթուղային, հեռագրական և կապի այլ ձևերի անընդհատությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև մարդկանց և ապրանքների անխափան փոխադրումների համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկման մասին երկկողմ պարտավորություններ:

Իբրև դրա շարունակություն, ի տարբերություն Մոսկվայի պայմանագրի՝ Կարսի վավերագրերում զետեղվել է ևս մի առանձին հավելյալ հոդված (թիվ 18-ը): Ըստ այդ հոդվածի՝ առևտրական հարաբերություններ հաստատելու, տնտեսական, ֆինանսական և անհրաժեշտ մյուս հարցերը կարգավորելու նպատակով շահագրգիռ կողմերը պայմանավորվում էին սույն պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո իրենց երկրների ներկայացուցիչներից թիֆլիսում ստեղծել հանձնաժողով²¹⁸: Այդ հանձնաժողովը կոչված էր գործնական հողի վրա դնել երկկողմ տնտեսական,

²¹⁷ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 15, «Հայաստանը ...», էջ 522–523:

²¹⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 13, գ. 133, թ. 16, «Հայաստանը ...», էջ 502–504, 522–523:

առևտրական և հումանիտար բնույթի հարցերի լուծումը:

Կարսի պայմանագրի 19-րդ հոդվածով (մոսկվայինի 14-րդ) կողմերը պարտավորվում էին երեք ամսվա ընթացքում կնքել հյուպատոսական կոնվենցիաներ: Եվ պետք է ասել, որ ՅՍԽՅ-ն Կարսում արդեն ուներ դիվ. ներկայացուցիչ: Սակայն Չայաստանի ներկայացուցչության գոյությունը թուրքիայում, ինչպես նաև Իրանում և մի քանի այլ երկրներում կարճ տևեց: 1922 թ. կեսերին ԽՍՀՄ կազմավորման գործընթացի նախապատրաստությանը հանընթաց Չայաստանի ներկայացուցչությունները լուծարվեցին:

Կարսի պայմանագրի վերջին՝ 20-րդ հոդվածը արձանագրում էր պայմանագրի ստորագրման և կնքման իրողությունը: Ընդ որում՝ անդրկովկասյան կողմը նշվում էր ոչ թե մեկ հավաքական անունով, այլ երեք՝ Չայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների կառավարությունների լիազոր անձանց անունները, որոնք էլ ստորագրել են պայմանագիրը:

Պայմանագրի վավերացման համար որոշակի ժամկետ չէր սահմանվում, այլ միայն նշվում էր, որ վավերագրերի փոխանակումը տեղի կունենա Երևանում հնարավոր մոտ ապագայում: Պայմանագիրը ուժի մեջ էր մտնում վավերագրերի փոխանակման պահից՝ բացառությամբ հետևյալ՝ 6, 14, 15, 16, 18 և 19 հոդվածների: Դրանց գործադրման ժամկետների մասին հոդվածներում հատուկ նշումներ կան:

Այսպիսով, եթե ամփոփելիս լինենք Կարսի պայմանագիրը, ապա կարելի է եզրակացնել, որ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը կանխորոշեց Կարսի պայմանագրի հոդվածների կառուցվածքը, բնույթն ու բովանդակությունը: Անդրկովկասյան հանրապետությունների կարգավիճակն այնպիսին էր, որ նրանք ի վիճակի չէին Մոսկվայի պայմանագրի սկզբունքներից որևէ շեղում կատարել: Ասվածը լավելի քան վերաբերում էր Խորհրդային Չայաստանի կառավարությանը և նրա պատվիրակությանը: Դա թելադրված էր Չայաստանի ռազմաքաղաքական կացությամբ, ՌՍՖՍՀ-ից կախվածությամբ և Չայաստանի պատվիրակների կուսակցական պարտավորվածությամբ: Կարս մեկնելուց առաջ նրանք կուսակցական հրահանգ էին ստացել, ուստի անտեղի է կշտամբել Չայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Մռավյանին կամ մեկ ուրիշի, որովհետև նրա փոխարեն ով էլ լիներ, միևնույնն է, ոչինչ չէր փոխվելու հոգուտ Չայաստանի:

3. ԹՈՒՐԶ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՆԱՆԻՋԵՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԵՐԸ ԸՍՏ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի կոնֆերանսի ամենաբարդ ու ցավոտ հարցը եղել է թուրք-անդրկովկասյան տարածքային-սահմանային խնդիրը:

Միջազգայնորեն ընդունված տարածքային սահմանազատման գերագույն սկզբունքը, իհարկե, ժողովրդի ինքնորոշման իրավունքն է: Սովորաբար տարածքային վեճերի լուծման հիմնարար սկզբունքներից է էթնիկ (ազգագրական) հատկանիշի հաշվառումը: Տվյալ դեպքում Կարսի մարզի վերաբերյալ նման սկզբունք ընդունելիս պետք է նկատի առնվեր մինչև Առաջին աշխարհամարտը գոյություն ունեցող ազգագրական պատկերը: Եթե հիմք ընդունենք այս սկզբունքը, ապա Կարսի և Կաղզվանի օկրուգները (գավառները) պետք է անցնեին Չայաստանին, քանի որ դրանցում հայերը կազմել են հարաբերական մեծամասնություն: Այսպես, 1914 թ. տվյալներով Կարսի գավառում հայ ազգաբնակչությունը կազմել է 73235 մարդ կամ գավառի բնակչության 41, 54%-ը, այն դեպքում, երբ բազմաէթնիկ մահմեդականները՝ 60956 մարդ կամ 34, 6%, իսկ այդ նույն թվականին Կաղզվանի գավառում հայերը կազմել են 32577 մարդ կամ տոկոսային հարաբերակցությամբ 40,31%, մահմեդականների 26՝46 մարդ կամ 32,32% դիմաց²¹⁹: Սակայն, ցավոք, այս հանգամանքը հաշվի չառնվեց, որովհետև խորհրդային կողմը անվերապահորեն ընդունել էր թուրքական «Ազգային ուխտից» բխող բոլոր պահանջները:

Միջազգային իրավունքում թույլատրելի սկզբունք է նաև երկու կողմից փոխադարձ վերաբնակեցումները այն հաշվով, որ ստեղծվի միատարր էթնիկ տարածք²²⁰: Անտեսվեց նաև այս սկզբունքը: Արդյունքում՝ զծվեց մի սահմանագիծ, որն, ըստ էության, կրկնում էր Մոսկվայի պայմանագրինը:

Ինչպես արդեն ասվել է, Կարսի պայմանագրի 4-րդ հոդվածը, որը նույնանուն էր Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածին, ընդ-

²¹⁹ Իշխանյան Բ., Վիճակագրական ուսումնասիրություն անդրկովկասյան ժողովուրդների, մաս առաջին, Բագու, 1919, էջ 137 և 141:

²²⁰ Եսայան Ա., Չայաստանի միջազգային իրավական դրությունը (1920–1922), Ե., 1967, էջ 268:

հանուր գծերով ներկայացնում էր թուրք-անդրկովկասյան սահմանագիծը, իսկ Կարսի պայմանագրի Հավելված I-ը, որը նույնանուն է մոսկվայինի Հավելված I (A)-ին, մանրամասն նկարագրությամբ տալիս է Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների պետական սահմանագիծը:

Հաշվի առնելով, որ Կարսի պայմանագրի հավելված I-ով ներկայացված թուրք-անդրկովկասյան սահմանագիծը ամբողջական և ավարտուն տարբերակն է, որը ուժի մեջ է մինչ օրս, ուստի նպատակահարմար ենք գտնում այն մեջ բերել ամբողջությամբ՝ ներառելով նաև թուրք-վրացական և թուրք-ադրբեջանական հատվածները: Հավելվածը գետեղելիս համեմատել ենք մեր ձեռքի տակ եղած արխիվային պատճենների, փաստաթղթերի ժողովածուների և սփյուռքի մենագրական ուսումնասիրությունների տարբերակները: Դրանց համեմատությունից պարզվում է, որ դրանք գրեթե նույնական են, կան միայն խմբագրական, ոճական որոշ տարբերություններ, որոնք կապված են բնագրի տարբեր լեզուներից թարգմանության հետ, կամ էլ երբեմն թարգմանությունների ժամանակ տեղանուններն են աղավաղված: Աշխատել ենք հնարավորության սահմաններում շտկել դրանք: Մեր կողմից համեմատված հավելվածների սահմանագծի միակ տարբերությունը թերևս այն է, որ Շահան Նաթալու թուրքերեն տարբերակի թարգմանությունից բերված հավելվածում Հայաստանի սահմանագլխին գտնվող Թայա-կալա և Մեծ Աղբաբա լեռների կատարների արանքում նշվում է Բոլոսարի անունը²²¹:

Ըստ հավելված I-ի՝ թուրք-անդրկովկասյան սահմանագիծը որոշված է հետևյալ կերպ՝ «Սև ծովի ափին Սարպ գյուղը-Ղարա-Շավար սարը (5014), այնուհետև ջրբաժան գծով դեպի Վ. Մարադիդի գյուղի հյուսիսային կողմում գտնվող ավերված եկեղեցին, նույն գյուղից դեպի հյուսիս հատում է ճորոխ գետը և անցնում Սաբաուր գյուղի հյուսիսային կողմով, Խեդիս-մթա լեռը (7052), Քվա-կիբե լեռը, Քավթառեթի գյուղը, Մեղգիբնա լեռների ջրբաժան գիծը, Գերաթ քեսուն լեռը (6468), այնուհետև շարժվելով Քորդա լեռան (7910) ջրբաժան գծով, Շավչեթի լեռնաշղթայի արևմտյան մասի վրայով հասնում է նախկին Արդվինի գավառի վարչական սահմանին, անցնելով Շավչեթի լեռնաշղթայի ջրբաժան գծով՝

²²¹ Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի), «Արարատ» մատենաշար, թիվ 25, էջ 67:

հասնում է Սարի-չայ (Ղարա-իսսալ) լեռին (8478), Քվիրալի լեռնանցքը, իսկ այնտեղից մոտենում է նախկին Արդահանի գավառի վարչական սահմանին՝ Կաննի-դաղ լեռան, այնտեղից, ուղղվելով դեպի հյուսիս, հասնում է Թլիլ (Ղրմանի) (8357) լեռան, շարժվելով Արդահանի գավառի նախկին վարչական սահմանով՝ հասնում է Փոսխովչայ գետը մինչև Բադելա գյուղի հյուսիս-արևելք և հետևելով այդ գետին դեպի հարավ մինչև այն կետը, որը գտնվում է Չանչախ գյուղից հյուսիս, այնտեղից հեռանում է այդ գետից և առաջանալով համանուն գետի ջրբաժան գծով՝ հասնում է Հայրիլյան (Արևելյան)-բաշի լեռը (8512), անցնում է Քելլե-թափա (8463) և Գարման-թափա (9709) լեռների վրայով, հասնում է Քարսիս-սերի լեռանը (9681); այնտեղից Քարգամեթ-չայ գետի հոսանքով հասնում է մինչև Կուր գետը, այնուհետև համանուն գետի հոսանքով հասնում է մինչև այն կետը, որը գտնվում է Քարթանաքեֆ գյուղից դեպի արևելք, որտեղ հեռանում է Կուրից, անցնելով Ղարա-օղլի սարի (7259) ջրբաժան գծով-այնտեղից Խոզափին լիճը բաժանելով երկու մասի՝ հասնում է 7580 (7560) բարձունքին, իսկ այնտեղից՝ Գյոք-դաղ (9152) և Ուչ Թափալար (9783) լեռները, որտեղ ավարտվում է Թուրքիայի սահմանը Վրաստանի հետ, և սկսվում է սահմանը Հայաստանի հետ»:

Ուչ Թափալարը (Եռակատար) փաստորեն հանդիսանում է հայ-թուրք-վրացական սահմանագլուխը: Այն նախկինում հանդիսացել է Թիֆլիսի նահանգի, Արդահանի և Կարսի գավառների սահմանագծերի հատման կետը: Այդպիսով՝ Հայաստանի և Թուրքիայի սահմանը հյուսիսից սկսվում է Ուչ Թափալարի բարձունքից: Այնուհետև հայ-թուրքական սահմանն անցնում է «Թայա-կալայի (9716) գագաթով, 9065 բարձունքով, որտեղ հեռանում է նախկին Արդահանի գավառի վարչական սահմանից և շարունակվում է Բուլասարով (ըստ Շ. Նաթալիի) դեպի Մեծ Աղբաբայի (Մեծ Եղնասար) լեռները (9963 կամ 9973–8828 կամ 8827–7602), որտեղից ուղիղ գծով ընթանում է դեպի 7518 բարձունքը, անցնում է Իբիշ գյուղից դեպի արևելք (գյուղը թողնելով Թուրքիային - Ա. Հ.), այնուհետև մոտենում է Ղըզըլ-դաշ (Կարմրաքար) (7439 կամ 7440 կամ 7490) սարին և համանուն Նոր Ղըզըլ-դաշ գյուղի միջով հոսող գետով (գյուղը թողնելով Հայաստանին - Ա. Հ.) հասնում է նրա ոլորանին, որը գտնվում է Ղարամահմեդից (Մեղրաշատից) դեպի հյուսիս-արևմուտք (գյուղը թողնելով Հայաստանին - Ա. Հ.), այնուհետև

ընթանում է ջրբաժան գծով և հասնում է Ջամուշլու-չայ գետին, որը գտնվում է Դալավեր կամ Դելավեր, Մեծ Դնլու և Թիխնիս (Թղնիս) գյուղերից արևելք (այսինքն՝ այդ գյուղերը թողնվում են Թուրքիային -Ա. Յ.), այնուհետև սահմանագիծն անցնում է Վարդանլու և Բաշ-Շորագյալ (Շիրակավան - Ա. Յ.) գյուղերի միջով (դրանք թողնելով Հայաստանին -Ա. Յ.) և շարժվելով վերոհիշյալ (Ջամուշլու-չայ-Ա. Յ.) գետի հոսանքով՝ Քալալի կամ Ղալալի (Նորաբեր) գյուղից հյուսիս, հասնում է Արփաչայ (Ախուրյան Ա. Յ.) գետին և համանուն գետի հոսանքով՝ Արաքսին և նրա հնահունով մինչև Ուրմիա գյուղը (Արաքսի ծախ ափին - Ա. Յ.): Այստեղ վերջանում է սահմանը Հայաստանի հետ և սկսվում է սահմանն Ադրբեջանի հետ:

Թուրք-ադրբեջանական սահմանն ընթանում է Արաքսի հնահունով՝ Ուրմիա գյուղի ստորին հատվածից մինչև այն կետը, ուր Ներքին Ղարասու գետը թափվում է Արաքս»²²²: Աջ ափից Արաքս թափվող Ներքին Ղարասու գետից արդեն սկսվում է պարսկական սահմանը:

Ինչպես նկատում ենք, Արաքսի ծախ ափին գտնվող Ուրմիա գյուղից մինչև աջ ափից Արաքս թափվող Ներքին Ղարասու գետն ընկած հողաշերտը համարվում էր ընդհանուր սահման Թուրքիայի և Ադրբեջանի միջև, իսկ Արաքսի վրա գտնվող Շահթախթի կամուրջը անմիջական հաղորդակցություն էր ապահովում նրանց միջև²²³:

²²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, ք. 75, գ. 21, ք. 164–165, ֆ. 114, ց. 2, գ. 133, ք. 17, «Հայաստանը ...», էջ 524–525, Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի), «Արարատ» մատենաշար, թիվ 25, էջ 66–67, ДБП СССР. т. 4, М., 1960, с. 427–428.

²²³ Այս առնչությամբ հարկ է հիշեցնել, որ գրականության մեջ և տարբեր մակարդակներով թյուրիմացաբար երբեմն արտահայտվում են մտքեր, թե, իբր, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիան Նախիջևանի (այսինքն՝ Ադրբեջանի) հետ չի ունեցել ընդհանուր սահման, և որ, իբր, ավելի ուշ Իրանը և Թուրքիան տարածքային փոխանակություն են կատարել, և դրա արդյունքում Թուրքիան ձեռք է բերել Նախիջևանի հետ կապող մերձարաքսյան նեղ լեզվակը, փոխարենը Իրանին զիջելով Ուրմիո լճի ավազանի Կոտուր-Չագրոշի լեռնային որոշ հատվածներ: Թուրքիայի և Իրանի միջև 1931–1932 թթ., իրոք, տարածքային փոխանակում տեղի ունեցել է, սակայն դա վերաբերել է ոչ թե Թուրք-ադրբեջանական սահմանային գոտի ստեղծելուն, որը, ինչպես արդեն ասվել է, մինչ այդ էլ գոյություն ուներ, այլ, կապված Արարատ (Մասիս) լեռների շրջանում քրդական ապստամբության հետ, Թուրքիայի խնդրան-



Արդեքանի ԱՆՀ-ի հովանավորության հանձնված Նախիջևանի շրջանը

Ջարտեզում քվերով նշված են.

1. Մեծիրնա լեռան ջրբաժան
2. Քորդա լեռան ջրբաժան
3. Եռաբլուզի լեռան ջրբաժան
4. Թովուզի լեռան ջրբաժան
5. Կարաբազի լեռան ջրբաժան
6. Ղարա-Օղլի լեռան ջրբաժան
7. Ջուրթաղի լեռան ջրբաժան
8. Ղեկար լեռան ջրբաժան
9. Մեծեռնի լեռան ջրբաժան

Ճեք. Թուրքական ամրությունները պետք է զոնվին երկաթուղագծին 4-8 վերստ հեռավորության վրա:

Պայմանագրում հիշատակված լեռնագագաթների և բարձրույունների բարձրությունները տրված են ուսնաչափերով (օրինակ Գյոք-Պաղ 1. և 9152):

8022 (8272) Պայմանագրի մեջ նշված, բայց իրական բարձրությանը չհամապատասխանող բարձրությունները տրված են փակագծերի մեջ:

Մասշտաբ 1:2 000 000



Ջարտեզի հեղինակ՝ Բ. Գ. ԳՐԻԹՅՈՒՆՅԱՆ
Ջարտեզագիր՝ Վ. Գ. ԱՆՆԻՑՈՒՆՅԱՆ

Հարկ է նշել, որ Արաքս գետով անցնող հայ-թուրքական սահմանագծով Թուրքիային էր անցնում ոչ միայն Երևանի նահանգի Սուրմալուի գավառն ամբողջությամբ, այլև Արաքսի աջ ափին գտնվող Երևանի գավառից մի նեղ հողահատված, որը և դարձավ Թուրքիայի և Նախիջևանի միջև կապող օղակ:

Եթե համեմատում ենք Մոսկվայի և Կարսի պայմանագրերի սահմանագիծը նկարագրող հավելվածները, համապատասխանաբար Մոսկվայի պայմանագրի հավելված I (A) –ն Կարսի պայմանագրի հավելված I-ին, ապա դժվար չէ նկատել, որ դրանք սկզբունքորեն նույնական են և միայն առանձին դեպքերում կան խմբագրական-ոճական բնույթի որոշ փոփոխություններ: Սահմանագիծը երկու դեպքում էլ, ըստ էության, նույնն է: Սակայն Կարսի պայմանագրի հավելվածում թուրք-անդրկովկասյան սահմանագիծը, ի տարբերություն մոսկովյանի, տրոհված է ըստ հանրապետությունների, թե որտեղից է սկսվում և որտեղ ավարտվում թուրք-վրացական սահմանագիծը, որտեղից որտեղ է՝ հայ-թուրքականը և վերջապես որ հատվածն է թուրք-ադրբեջանականը: Եվ սա, իրոք, համապատասխանում է սահմանների մասին միջազգային իրավունքի սկզբունքներին: Մինչդեռ Մոսկվայի պայմանագրի համապատասխան հոդվածն ու հավելվածը որոշում էր միայն Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանագիծը՝ սկսած Սև ծովի ափին գտնվող Սարպ գյուղից մինչև Ներքին Ղարասու գետը՝ Արաքս թափվելու տեղը:

Ասվեց, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով գծված հայ-թուրքական պետական սահմանների միջև որևէ էական տարբերություն չկա:

Եթե Մոսկվա-Կարսի պայմանագրերով գծված հայ-թուրքական սահմանագիծը համեմատում ենք Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանագծին, ապա այս կտրվածքով նույնպես սկզբունքային տարբերություն չկա: Կատարվել են միայն խմբագրական-սրբագրական որոշ ուղղումներ: Ընդ որում սահմանա-

քով հրահանգն պատկանող Փոքր Արարատ լեռան մերձակա մի ոչ մեծ տարածք փոխանակվել է թուրք-իրանական սահմանի հարավում գտնվող թուրքական մի հողաշերտի հետ: Դրա նպատակը Փոքր Արարատ լեռան շրջանի քրդերի կողմից զենք-զինամթերքի փոխադրման ճանապարհի փակելն էր և քրդերի ապստամբության ճնշելը (տե՛ս Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, Ե., 2001, էջ, 82–83, 148–149, 165–167):

գծման այդ շտկումները Ալեքսանդրապոլի պայմանագրից մինչև Կարսինը կատարվել են ի վնաս Հայաստանի: Այսպես, օրինակ, եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով հայ-թուրքական սահմանագիծը անցել է Թիխնիս, Մեծ Ղըմլու, և Ղըզըլ-դաշ գյուղերից դեպի արևմուտք՝ հիշյալ բնակավայրերը իրենց շրջակա տարածքներով ներառելով Հայաստանի կազմում, ապա Մոսկվայի և Կարսի պայմանագրերով, ինչպես տեսանք, հայ-թուրքական սահմանը, ընդհակառակը, անցել է Թիխնիս և Մեծ Ղըմլու գյուղերից արևելք՝ դրանք թողնելով Թուրքիայի կազմում: Եվ դա պետք է բացատրել խորհրդային պատվիրակության ու մասնավորապես նրա սահմանային հանձնաժողովի զիջողականությամբ: Եվ ստացվեց այնպես, որ Ախուրյան գետի ուղղությամբ Աղբաբայի մի շարք գյուղեր, որոնք անգամ Ալեքսանդրապոլի պայմանագրով մտնում էին Հայաստանի կազմում, Կարսի պայմանագրով անցան Թուրքիային²²⁴:

Հարկ է նշել, որ Մոսկվայի պայմանագրով գծված սահմանները բավականին ընդհանուր բնույթ էին կրում: Բանն այն է, որ սահմանը գծվել էր ընդամենը քարտեզի վրա առանց տեղում ուսումնասիրելու տեղանքը, սահմանամերձ գյուղերի էթնիկ կազմը, տնտեսական-հաղորդակցության պայմանները, ջրբաժան գծերը և այլն: Կարսի կոնֆերանսում «Սահմանների ուսումնասիրման ժամանակ,- նկատում է Է. Ջոհրաբյանը,- պարզվեց, որ Մոսկվայի կոնֆերանսը հանգամանորեն հաշվի չէր առել սահմանային շերտի բնակավայրերի ազգագրական, աշխարհագրական և տնտեսական կապերը»²²⁵: Դրա հիման վրա խորհրդային պատվիրակությունը սահմանագիծը որոշելու ընթացքում տարածքային որոշ զիջումներ արեց թուրքերին՝ համեմատած Մոսկվայի պայմանագրի անցկացվելիք սահմանագծի: Յա. Գանեցկին դա պատճառաբանում էր հետևյալ հանգամանքներով. «Մենք այստեղ (Կարսում-Ա.Յ.) գտնվողներս չգիտեինք,- գրում էր Յա. Գանեցկին Գ. Զիչերինին ուղղված հեռագրում,- թե ինչով էին ղեկավարվում մերոնք Մոսկվայում սահմանների որոշման ժամանակ, բայց փաստն այն է, որ ընդունված սահմանները մեզ համար, բացի շատ այլ անհարմարություններից, կազմված են այնպես, որ թուրքերը նշված վայրերը (Թուրքիային անցած շրջանները-Ա.Յ.) կարող են հասնել միայն անցնելով մեր

²²⁴ Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 277–280:

²²⁵ Նույն տեղում, էջ 276:

տարածքներով»²²⁶: «Ուսումնասիրելով Մոսկվայի պայմանագրով գծված սահմանները,- շարունակում է Յա. Գանեցկին,- չի կարելի չչեչտել, որ ռազմական փորձագետները թույլ են տվել մի շարք թեթևամիտ սխալներ, որոնք արդեն մենք ուղղել չէինք կարող: Ափսոս, որ չէին կանչվել կովկասյան զինվորական մասնագետներ, որոնք լավ գիտեն տեղական պայմանները»²²⁷:

Չարց է ծագում՝ եթե Մոսկվայի պայմանագրով գծված սահմանը թուրքերի համար անհարմարություն էր ստեղծում հաղորդակցության տեսակետից անցնելու իրենց գյուղերը, ապա ինչու՞ խորհրդային կողմը պետք է զիջեր իր գյուղերը թուրքերին և ոչ հակառակը: Թող թուրքերը հրաժարվեին այդ գյուղերից: Եթե հաշվի առնենք, թե թուրքերը տարածքային ինչպիսի գավթումներ էին կատարել, ապա ամնշան մանրուք էր մի քանի գյուղ զիջելը Չայաստանին: Բայց քանի որ այդ ճշգրտումը վերաբերում էր հայ-թուրքական սահմանագծին, ուստի խորհրդային պատվիրակությունը շատ չպնդեց:

Սահմանների որոշման խնդրում թուրք պատվիրակները կառչում էին Մոսկվայի պայմանագրից՝ պահանջելով հավատարիմ մնալ նրա պայմաններին:

Կարսի պայմանագիրը հիմնականում վերահաստատեց Մոսկվայի պայմանագրի սահմանները: Արդյունքում, հայ-թուրքական սահմանագծին գտնվող սահմանամերձ մի քանի գյուղ իրենց հողատարածքով ներառվեց Թուրքիայի սահմանի մեջ:

1921 թ. դեկտեմբերի 10-ին Թիֆլիսում համապատասխան քարտեզագրմամբ հաստատվեց թուրք-անդրկովկասյան սահմանագիծը, որը տառացիորեն նրկնում էր Մոսկվայի պայմանագրով գծվածը²²⁸:

Կարսի պայմանագրի հավելված II-ը § 1-ի Ա և Բ (Արփաչայի գոտի) և § 2 (Արաքսի գոտի) ենթակետերով, որը նույնական է Մոսկվայի պայմանագրի հավելված I (B)-ի § 1 Ա և Բ (Արփաչայի գոտի) և § 2 (Արաքսի գոտի) կետերին, վերաբերում էր Արփաչայ (Ախուրյան) և Արաքս գետերի սահմանագծի երկարությամբ սահմանված խորությամբ պաշտպանական ամրություններ (блокгазы) կառուցելու ԹԱՄԺ կառավարության պարտավորությանը:

²²⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 74:

²²⁷ Նույն տեղում, ք. 90:

²²⁸ Նույն տեղում, ք. 185-187:

Հաշվի առնելով, որ Ախուրյան և Արաքս գետերի հնահուները հիմնականում հանդիսանում են հայ-թուրքական սահմանագիծը, իսկ Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգիծը ձգվում է այդ գետերի երկարությամբ, ուստի երկաթուղու անվտանգությունը ապահովելու նպատակով ԹԱՄԺ կառավարությունը պարտավորվում էր իր պաշտպանական ամրությունների գիծը հետ տանել Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղուց՝ Ախուրյանի գոտում (շրջանում) 8 վերստ (երկու հրացանազարկ) հեռավորության վրա և Արաքսի գոտում (շրջանում) վերոհիշյալ երկաթուղային գծից 4 վերստ (մեկ հրացանազարկ) հեռավորության վրա, ինչպես որ ամրագրված էր Մոսկվայի պայմանագրում²²⁹:

Այնուհետև նկարագրվում էր հայ-թուրքական սահմանագծին զուգահեռ Թուրքիայի տարածքում գտնվող բնակավայրերի ու տեղանունների այն շարքը՝ համապատասխանաբար 8 և 4 վերստ հեռավորության վրա գտնվող, որոնց առանցքով Թուրքիայի կառավարությունը պարտավորվում էր պաշտպանական ամրություններ չկառուցել և դրանցում կանոնավոր զորքեր չպահել: Սակայն նա պահպանում է հիշյալ գոտիներում այնպիսի զորքեր ունենալու իրավունք, որոնք անհրաժեշտ են կարգը, անվտանգությունը պահպանելու և վարչական կարիքների համար²³⁰:

Եվ, վերջապես, երրորդ հավելվածում՝ Մոսկվայի պայմանագրի հավելված I (C)-ում և Կարսի մի՝ հավելված III-ում, որոնք ամբողջությամբ վերաբերում են Նախիջևանի տարածքին, առկա է որոշակի սահմանային փոփոխություն հոգուտ Հայաստանի: Նախիջևանի մարզի հյուսիսարևմտյան մի հատված (Արագոլայան-Գայլի դրունքը), որը նախկինում գտնվում էր Երևանի գավառի մեջ և ընկել էր թուրքական զորքերի օկուպացիայի տակ, որոշվեց մտցնել ՀՍԽՖ կազմում: Հիշեցնենք, որ այդ մասին համաձայնություն էր կայացվել դեռևս Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի ժամանակ: Ընդ որում Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակներից կազմված հանձնաժողովը պետք է ճշտեր Հայաստանի և Նախիջևանի միջև ընկած եռանկյունի կազմող գոտու պատկանելիության հարցը հոգուտ Հայաստանի: Սակայն Մոսկվայի պայմանագրի հավելված I (C)-ով Հայաստանի և Նախիջևանի սահ-

²²⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 18, ց. 2 ը, գ. 4, թ. 5, գ. 20, թ. 5, «Հայաստանը ...», էջ 526, տե՛ս նաև՝ Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ., էջ 116:

²³⁰ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 18, «Հայաստանը ...», էջ 526-527:

մանագիծը, ինչպես արդեն ասվել է, գծված էր այնպես, որ նախկինում Երևանի գավառի մեջ մտնող եռանկյունի մի հատված ներառվել է Նախիջևանի մարզի մեջ: Ըստ հավելված I (C)-ի՝ Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանագիծը հետևյալն էր. «Արարատ կայարանը, Սարայ-բուլաղ լեռը (8071), Քյոմուրլու-դաղ (6839), (6930), 3080, Սայաթ-դաղ (7868), Ղուրդ-ղուլաղ գյուղը, Կամասար-դաղ (8160)-8022 բարձունքը Կուբի-դաղ (10282) և այնուհետև նախկին Նախիջևանի գավառի արևելյան վարչական սահմանը»²³¹:

Հավելված I (C)-ում սահմանագիծը Արաքսի ափից չի նշված: Սակայն Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածում, որն ամբողջությամբ վերաբերում էր Նախիջևանի մարզին, ամրագրված է, որ Հայաստանի և Նախիջևանի սահմանագիծը Արարատ կայարանից հասնում է Ղարաու (Սև ջուր) գետը՝ Արաքս միախառնվելու տեղը²³²:

Արդեն Կարսի պայմանագրի հավելված III-ում, որն ամբողջությամբ վերաբերում է Հայաստանի և Նախիջևանի սահմանագծին, այն սկիզբ էր առնում Արաքսի ձախ ափին գտնվող Ուրմիա գյուղից և ուղիղ գծով հասնելու էր Արազդայան (Երասխ) կայարանը՝ այսինքն՝ Գայլի դրունքը և այդպիսով՝ Արարատ կայարանից մինչև Երասխ կայարանը և Սարայ-բուլաղից մինչև Դաշբուրուն և Բաղարսիխ լեռները ընկած եռանկյունի հատվածը ներառվում է ՀՍԽՅ սահմանի մեջ²³³:

Ըստ Կարսի պայմանագրի հավելված III-ի՝ Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանագծի նկարագրությունը հետևյալն է. «Ուրմիա գյուղը (Արաքսի ձախ ափին) -այստեղից ուղիղ գծով դեպի Արազդայան կայարանը (ներառելով այն ՀՍԽՅ-ը)-այնուհետև ուղիղ գծով դեպի արևմտյան Դաշբուրուն (3142) և հետո արևելյան Դաշբուրուն (4108) սարերի ջրբաժան գիծը հատում է Ջահնամ դարասի գետը, անցնում է "Родн" (Բուլախ) արծանագրությունից դեպի հարավ, առաջանում է Բաղարսիխ լեռան (6607 կամ 6587) ջրբաժան գծերով և այնուհետև ընթանում է նախկին Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառների վարչական սահմանագծի երկարությամբ՝ 6629 բարձունքի վրայով դեպի Քյոմուրլու-դաղ

²³¹ ՀՍԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, ք. 17, «Հայաստանը ...», էջ 507, ДВП СССР, т. 3, М., 1959, с. 604.

²³² ՀՍԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, ք. 17, «Հայաստանը ...», էջ 507:

²³³ Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ., էջ 116:

(6839 կամ 6930) և այնտեղից դեպի 3080 բարձունքը, Սայաթ-դաղ (7868), Ղուրդ-ղուլաղ գյուղը, Կամասար-դաղը (8160), 8022 բարձունքը, Կուքի-դաղ լեռը (10282) և այնուհետև նախկին Նախիջևանի գավառի արևելյան վարչական սահմանագիծը»²³⁴:

Այսպիսով, Կարսի պայմանագրի և նրա հավելվածների համադրական վերլուծությունը Մոսկվայի և նրա հավելվածների հետ ցույց է տալիս, որ սահմանագծման առումով որևէ էական փոփոխություն չի եղել թուրք-անդրկովկասյան սահմանագծերի միջև: Ինչ վերաբերում է Հայաստանի և Նախիջևանի սահմանագծին, ապա Կարսի պայմանագրով ՀՍԽՅ տարածքի մեջ ներառվեց նախկին Երևանի գավառի հարավ-արևելքում գտնվող եռանկյունի մի հատված՝ շուրջ 150 քառ. կմ, և վերջին սահմանակետը դարձավ Գայլի դրունքը՝ Արագդայան (Երասխ) կայարանը:

²³⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 19, «Հայաստանը ...», էջ 527, ДВП СССР, т. 4, М., 1960, с. 527.

4. ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Կարսի պայմանագրի ստորագրումից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 17-ին, ՌՍՖՆՅ արտգործոժողկոմատի կոլեգիայի անդամ Յա. Գանեցկին Երևանում հանդիպման ժամանակ հայտարարեց, որ «Կոնֆերանսի ընթացքը կանխորոշված էր դեռ Մոսկվայի կոնֆերանսում»²³⁵: Գանեցկու գնահատմամբ Կարսի կոնֆերանսի նշանակությունը այն էր, որ վերջ տրվեց Արևելյան ճակատին. «Թուրքիան այլևս չունի Արևելյան ճակատ»²³⁶: Մոսկվայի, ապա Կարսի պայմանագրերը Թուրքիայի ձեռքերին, իրոք, ազատություն տվեցին Արևմտյան ճակատում գործողություններ ծավալելու և Յունաստանի հետ պատերազմն արագ ավարտելու տեսակետից:

Այդ նույն օրերին թուրքերից ստացած ծանր տպավորությամբ Յա. Գանեցկին հեռագրում էր Գ. Չիչերինին. «Ես հնարավորություն ունեցա ճանաչելու թուրքերին: Մեր կողմից ցուցաբերվող բարյացակամ վերաբերմունքը, զիջումները և օգնությունը նրանք համարում էին մեր պարտականությունը և լկտիորեն պահանջում էին ավելին, իսկ երբ մենք էինք հանդես գալիս ամենահամեստ առաջարկներով, նրանք իսկույն մերժում էին՝ բացատրելով, որ դա Թուրքիայում վատ տպավորություն կթողնի»²³⁷: Թուրք պետական քարոզչական մեքենան բարոյական ճնշման ու շանտաժի էր ենթարկում խորհրդային կողմին, որպեսզի նա գնա զիջումների թուրքերի օգտին, զիջումներ, որոնք կատարվում էին հիմնականում Չայաստանի հաշվին:

Կարսի պայմանագրի ստորագրումից հետո խորհրդային Չայաստանի ղեկավարությունը կամա թե ակամա ընդունեց կատարված փաստը և խորհրդահայ հասարակայնության անունից հավանություն տվեց դրան: Չայաստանում խորհրդային կարգերի հաստատման 1-ին տարեդարձի առթիվ Ս. Կասյանը «Նոյեմբերյան հեղափոխությունը Չայաստանում» հոդվածում գրում էր. «Խորհրդային Ռուսաստանի համար Չայաստանը մի առանձին հետաքրքրություն չի ներկայացնում: Նա հարուստ չէ ոչ արդյունագործությամբ, ոչ էլ հում նյութերով»²³⁸: Դրան կարելի է հավելել նաև

²³⁵ «Խորհրդային Չայաստան», Երևան, 18 հոկտեմբերի 1921 թ.:

²³⁶ Նույն տեղում:

²³⁷ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 560.

²³⁸ «Կարմիր աստղ», 29 նոյեմբերի 1921 թ.:

այն, որ բուլշևիկների դիտակետից Հայաստանը արժեք չէր ներկայացնում Արևելքում համաշխարհային հեղափոխության տարածման տեսակետից: Հայաստանի դերը այդպես էին գնահատում ոչ միայն նախորդ գլխում հիշատակված Ա. Սկաչկոն, այլև հայ բուլշևիկ շատ գործիչներ: Իսկ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Լուկաշինը 1922 թ. հունվարի 26-ին հայկոմկուսի 1-ին համագումարում տրված քաղաքական գեկուցման մեջ Կարսի պայմանագրին տվել է հետևյալ գնահատականը. «Թուրքիայի հետ Կարսի հաշտության պայմանագիրը նույն Ալեքսանդրապոլի պայմանագիրն է, իրավ շատ ծանր պայմանագիր է, սակայն այստեղ մեզ հարկավոր էր գլխավորը՝ Հայաստանի աշխատավորությունը եղբայրական ձեռք է մեկնում Թուրքիայի աշխատավորությանը: Մենք այդ բանակցություններում պետք է փրկեինք Հայաստանի ինտերնացիոնալ դեմքը, և մենք հասանք դրան»²³⁹: «Խորհրդային Հայաստան» թերթի գնահատականով՝ «Կարսի կոնֆերանսի արդյունքում մենք ձեռք բերեցինք մի ընդհանուր թշնամի՝ միջազգային իմպերիալիզմ»²⁴⁰: Չարմանալին ու զավեշտալին այն է, որ 1,5 մլն հայ կոտորած և նրա տարածքների մեծագույն մասը յուրացրած Թուրքիան հայտարարվում էր Հայաստանի «բարեկամ» և հայ ժողովրդի «եղբայր»: Սակայն միանշանակ չէ հայ կոմունիստների գնահատականն այդ պայմանագրին: «Պատմության էջերում,-գրում է բուլշևիկ Բ. Բորյանը,- հազիվ թե գտնվի ավելի ծանր ու ավելի աննպաստ հաշտություն, քան Կարսին է»²⁴¹:

Կարսի պայմանագրին տրված գնահատականով հայ բուլշևիկ ղեկավարներից էապես չէր տարբերվում սփյուռքում լույս տեսնող հնչակյանների օրգան «Երկիր» օրաթերթը: «Էականը՝ նախ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունն է, էականը նոր պատերազմներե, նոր արյուններե ու ավերներե խուսափելու անհրաժեշտությունն է»²⁴²: Այստեղ, ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են:

Ի տարբերություն հայ բուլշևիկների՝ Կարսի պայմանագրի վերաբերյալ բողոք արտահայտեց Հայաստանի նախկին հանրա-

²³⁹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 3:

²⁴⁰ «Խորհրդային Հայաստան», 12 նոյեմբերի 1921 թ.:

²⁴¹ Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М. - Л., 1929, с. 163.

²⁴² «Երկիր», Կ. Պոլիս, 15 նոյեմբերի 1921 թ.:

պետության պատվիրակությունն արտասահմանից: 1921 թ. նոյեմբերի 3-ին Եվրոպայում հայկական պատվիրակության անդամ Վ. Փափազյանը նամակով բողոք հայտնեց Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար Էրիկ Դրամմոնդին՝ բուլշևիկների կողմից Կարսի պայմանագիրը ստորագրելու կապակցությամբ²⁴³: Բացի դրանից՝ Կարսի պայմանագրի դեմ 1922 թ. հունվարի 4-ին Գերագույն խորհրդի նախագահ պրն. Բրիանին բողոք ներկայացրին կովկասյան չորս հանրապետությունների՝ Չայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Չյուսիսային Կովկասի նախկին կառավարությունների ներկայացուցիչները: Չայտնի է, որ հիշյալ վտարանդի կառավարությունների ներկայացուցիչները 1921 թ. հունիսի 10-ին կայացրել էին համաձայնություն իրար միջև: Եվ նրանք համախորհուրդ բողոք արտահայտեցին Կարսի պայմանագրի դեմ՝ այն որակելով չեղյալ և զուրկ օրինական որևէ հիմքից²⁴⁴: Չարց է ծագում. որքանով է Կարսի պայմանագիրը վավերական միջազգային իրավունքի տեսակետից: Վավերական է համարվում միջազգային այն պայմանագիրը, որը կնքվել է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան: Դրա պահանջներից մեկը պայմանագիրը կնքող կողմերի իրավահավասարությունն է: Այս տեսակետից վիճելի է խորհրդայնացած Չայաստանը որպես բանակցային կողմ, սուվերեն պետություն համարելը: Բացի այդ, միջազգային իրավունքի համաձայն՝ պայմանագիրը համարվում է անվավեր, եթե կնքվել է կողմերից մեկի կամ նրա ներկայացուցչի նկատմամբ ուժի կիրառման կամ այն կիրառելու սպառնալիքի միջոցով: Նախ՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերում խորհրդային կառավարության գործողությունները և՛ իրավական, և՛ քաղաքական տեսակետից հակասում էին իր իսկ ՌՍՖՍՀ և ԽՍՀՄ սահմանադրությունների ոգուն ու սկզբունքներին, ազգային հարցում Ռկ(բ)Կ-ՉամԿ(բ)Կ որոշումներին: Այս տեսակետից, օրինակ, ոտնահարվում էին խորհրդային սահմանադրությունների մեջ հռչակվող ազգերի ազատ ինքնորոշման, դաշնային պետության սուբյեկտների ինքնիշխանության, իրավահավասարության, սահմանների անխախտելիության, ժողովուրդների իրավահավասարության և գաղափարախոսական այլ դրույթներ²⁴⁵:

²⁴³ Геноцид армян, (документы и комментарий), т. 1, с. 631.

²⁴⁴ «Ճակատամարտ», Վ. Պոլիս, 21 հունվարի 1922 թ. (թիվ 927):

²⁴⁵ ՌՍՖՍՀ Սահմանադրություն (հիմնական օրենքը), Մոսկվա, 1918, էջ 4, 7, 9, "Первая конституция Союза ССР, сборник документов, М., 1948, с. 147.

Մնում է չպարզված նաև ԽՍՀՄ կազմավորումից հետո ՌՍՖՍՀ և անդրկովկասյան հանրապետությունների մինչ այդ կնքած պայմանագրերի իրավահաջորդության հարցը: ԽՍՀՄ կազմավորումից հետո, եթե ՌՍՖՍՀ կնքած միջազգային պայմանագրերը, այդ թվում՝ Մոսկվայինը, իրավահաջորդության ուժ ունեն ԽՍՀՄ կառավարության համար, ապա անդրկովկասյան երեք հանրապետությունների կնքած Կարսի պայմանագրի ճակատագրի հարցը կարելի է ասել, որ դեռևս մնում է չպարզված: Բանն այն է, որ Կարսի պայմանագրից հետո անդրկովկասյան հանրապետությունները պետաիրավական իրավասությունների փոխանցման երեք փուլ էին անցել՝ 1922 թ. մարտին՝ Անդրֆեդերացիայի, 1922թ. դեկտեմբերի սկզբներին՝ Անդրկովկասյան դաշնային հանրապետության և նույն ամսի 30-ին՝ ԽՍՀՄ անդամագրման: Փաստորեն ԽՍՀՄ կազմավորմամբ Խորհրդային Չայաստանի անկախության լիակատար վերացմամբ (կորստով) դժվար է ասել, թե Կարսի պայմանագիրը պահպանում է իր միջազգային իրավական ուժը: Այս առնչությամբ Գ. Չիչերինը 1923 թ. հունվարի 27-ին Լոզանից արտագործժողկոմի տեղակալ Մ. Լիտվինովին ուղղված նամակում գրում էր. «Բավականին բարդ կլինի Կարսի պայմանագրի հարցը, քանի որ միջազգային բոլոր իրավասությունները անցնում են Միությանը, ուստի Կարսի պայմանագիրը դադարում է գոյություն ունենալուց»²⁴⁶: Եթե խնդիրը դիտարկում ենք այս տեսանկյունից, ապա տեսնում ենք, որ Կարսի պայմանագիրը չունի միջազգային իրավական ուժ:

Իրավական առումով Կարսի պայմանագրի ամենաաղաղակող անարդարությունը, թերևս, Սուրմալուի գավառը և Երևանի գավառի մի մասի՝ Թուրքիային հանձնելն է: Բանն այն է, որ պայմանագրում իրավաբանական ձևակերպման տեսակետից հակասություն կա: Կարսի պայմանագրի հոդված 2-ը, կրկնելով Մոսկվայի պայմանագրի հոդված 1-ում, մասնավորապես ասվում է. «Ներկա պայմանագրով Թուրքիա հասկացության մեջ մտնում են 1920թ. հունվարի 28-ին թուրքական ազգային համաձայնությամբ «Ազգային ուխտ» ընդունված սահմանները»²⁴⁷: Չայտնի է, որ

ЦК РКП(б)-ВКП(б) и национальный вопрос, книга 1. 1918–1933 гг., М., 2005, с. 47–48.

²⁴⁶ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 612.

²⁴⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, ք. 1, գ. 56, ք. 34:

թուրքական «Ազգային ուխտը» Թուրքիայի սահմանների մեջ էր նախատեսում ներառել այն տարածքները, որոնք գտնվում էին Օսմանյան կայսրության կազմում մինչև 1877–1878 թթ ռուս-թուրքական պատերազմը: Այդ նշանակում է, որ Սուրմալուի գավառը, էլ չենք խոսում Նախիջևանի գավառի մասին, դուրս են մնում թուրքական «Ազգային ուխտի» պահանջների շրջանակից: Բանն այն է, որ այդ երկու գավառները՝ շուրջ 10 հազար քառ. կմ ժամանակին Ռուսաստանին էին միացվել Թուրքմենչայի հայտնի պայմանագրով: Դրանք Հայաստանի բաժանումներից ի վեր գտնվել են Պարսկաստանի կազմում և պատմաքաղաքական ու իրավական առումով երբեք Օսմանյան կայսրության մեջ չեն մտել ու չեն պատկանել Թուրքիային:

Վերը ասվածը հիմք է տալիս հետևեցնելու, որ խորհրդային կողմը թե՛ Մոսկվայի և թե՛ Կարսի բանակցություններում առնվազը կարող էր պնդել թուրքերի ներկայացրած «Ազգային ուխտի» պահանջի վրա՝ դուրս թողնելով Սուրմալուի գավառը, որի դեպքում հայ-թուրքական սահմանը կանցներ ոչ թե Ախուրյան-Արաքս գետերի հունով, այլ Ախուրյան գետով, Հայկական պարով և Մեծ ու Փոքր Մասիսների գագաթներով: Բայց այս առնչությամբ մեջտեղ է գալիս ինչպես Ալեքսանդրապոլի պայմանագրի, այնպես էլ Բաթումի խնդիրը: «Ազգային ուխտով» Բաթումի մարզը կազմելու էր Թուրքիայի մաս: Սակայն խորհրդային կողմը կտրականապես պահանջեց, որ Անդրկովկասի գլխավոր ծովային նավահանգիստը (դարպասը) պետք է թողնվի Վրաստանին՝ Բաթում քաղաքը դարձնելով առևտրի համար: Բաց և մարզին տալով ինքնավարության կարգավիճակ: Եվ այդպես լուծվեց Բաթումի վիճահարույց խնդիրը: Արդյունքում՝ Սուրմալուի գավառը, էլ չենք խոսում Երևանի գավառի հողաշերտի մասին, որ չէր մտնում թուրքական «Ազգային ուխտում», անցավ Թուրքիային, իսկ Բաթումն իր շրջակայքով, որ մտնում էր «Ազգային ուխտում», թողնվեց Վրաստանին: Ստացվեց այնպես, որ հայկական հողի հաշվին Վրաստանը փոխհատուցում ստացավ Բաթումը: Ինչպես տեսնում ենք, կողմերի միջև պարզապես տարածքային առևտուր է ընթացել դարձյալ ի վնաս Հայաստանի:

Կարսի պայմանագրի կնքումից և սահմանային խնդիրների կարգավորումից հետո պետք է հաստատվեր և վավերագրերի փոխանակում կատարվեր կողմերի միջև: 1921 թ. դեկտեմբերի

10-ին Թիֆլիսում հաստատվեց թուրք-անդրկովկասյան սահմանագիծը²⁴⁸: 1922 թ. գարնանը նախապատրաստվեց Կարսի պայմանագրի վավերացումը: Խորհրդային կողմը որոշել էր Կարսի պայմանագիրը վավերացնել Անդրկովկասյան դաշնության խորհրդի նիստում: Սակայն թուրքական կողմը, իրազեկվելով այդ մասին, գտավ, որ այդպիսի վավերացումը իրեն չի բավարարում, և որ այն պետք է վավերացվի յուրաքանչյուր հանրապետության կողմից առանձին-առանձին²⁴⁹: Թուրքերին առանձնապես հետաքրքրում էր, որ պայմանագիրը վավերացվի հատկապես Չայաստանի կողմից: Բանն այն է, որ նախապատրաստվում էր Լոզանի կոնֆերանսը: Թուրքերը գիտեին, որ օրակարգ է բարձրացվել Չայկական հարցը: Այդ իսկ պատճառով իրենց ապահովագրելու նպատակով պետք էր ունենալ Չայաստանի կողմից վավերացված պայմանագիր, որպեսզի կոնֆերանսում շահարկումներ չլինեն Կարսի պայմանագրի հարցում, թե Անդրկովկասյան դաշնության խորհրդի հաստատածը հայ ժողովրդի կամքով չի եղել: Այս հարցում ևս կատարվեց Թուրքիայի ցանկություն-պահանջը, և յուրաքանչյուր հանրապետություն առանձին-առանձին վավերացրեց Կարսի պայմանագիրը: 1922 թ. մարտի 20-ին ՉՍԽՉ Կենտգործկոմն, իր արտահերթ նստաշրջանում քննելով Կարսի պայմանագիրը (զեկուցող արտգործժողկոմ Ա. Մռավյան), միաձայն որոշեց. «Ամուր խաղաղություն հաստատելու և բարեկամական փոխհարաբերությունները ամրապնդելու նպատակով ընդունել, հաստատել և վավերացնել սույն պայմանագիրն իր ամբողջ բովանդակությամբ»²⁵⁰: Այս կապակցությամբ ՉՉ նախկին դիվանագետ Ա. Պապյանը խնդրահարույց է համարում Կարսի պայմանագրի օրինապես վավերացած լինելու հարցը: «Մեզ չի հաջողվել,- գրում է հեղինակը,- տպագիր աղբյուրներում գտնել հիշատակում ՉՍՍՉ (պետք է լինի ՉՍԽՉ - Ա. Չ.) որևէ կառույցի կողմից Կարսի պայմանագրին պաշտոնական անդրադարձած, առավել ևս վավերացրած լինելու մասին»²⁵¹: Մեր կողմից բերված վավերագրերը հերքում են վերոնշյալ պնդումը: Կարսի պայմանագրի վավերացված օրինակների փոխանակություն-

²⁴⁸ ՉԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 185-187:

²⁴⁹ Զոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը..., էջ 301-302:

²⁵⁰ ՉԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, մաս 2, թ. 464, ֆ. 4010, ց. 1, գ. 34, թ. 10:

²⁵¹ Պապյան Ա., Չայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու), էջ 27:

նը տեղի ունեցավ 1922 թ. սեպտեմբերի 11-ին Երևանում: Վավերագրերի փոխանակումից հետո 1922 թ. վերջերից սկսվեցին սահմանանշման և սահմանաքարերի անցկացման աշխատանքները²⁵²:

Կարսի պայմանագրի կնքումից ու վավերագրերի փոխանակումից հետո անցած մի քանի տարիների ընթացքում բարդ ռելիեֆային և խիստ կլիմայական պայմաններում հարյուրավոր սահմանապահ սպաների, զինվորների ու երկրաչափ մասնագետների մասնակցությամբ զգալի աշխատանքներ տարվեցին հստակ սահմանազատման և սահմանանշանների տեղադրման ուղղությամբ: Սահմանագծման աշխատանքների ավարտից հետո 1926 թ. հաստատվեց խորհրդա-թուրքական պետական սահմանագծի գլխավոր արձանագրությունը²⁵³: Այդ փաստաթղթի ստորագրումը նշանակում էր վերահաստատել Մոսկվայի և Կարսի պայմանագրերով և նրանց հավելվածներով գծված սահմանները, այսինքն՝ ճանաչել հայկական հողերի բռնազավթումը:

Դրանից հետո՝ տասնամյակներ անց, նկատի առնելով, որ տեղի էին ունեցել սահմանային գետերի և հեղեղատների հունների տեղաշարժեր ու փոփոխություններ, ուստի ԽՍՀՄ և Թուրքիայի կառավարությունները 1967 թ. փետրվարի 28-ին ստորագրեցին համապատասխան արձանագրություն, որով որոշվեց ստեղծել խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողով՝ պետական սահմանների տեխնիկայան հարցերը լուծելու համար: 1969 թ. ստեղծվեց խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողով: Դրանից հետո մինչև 1973 թ. կատարվեցին համատեղ վերասահմանագծման աշխատանքներ ցամաքային ու գետային հատվածներում՝ պետական սահմանները համապատասխանեցնելով 1926թ. հաստատված խորհրդա-թուրքական պետական սահմանագծի գլխավոր արձանագրությանը:

Վերասահմանագծման աշխատանքների ավարտից հետո 1973 թ. դեկտեմբերի 1-ից 29-ը Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում տեղի ունեցավ խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանը: Այնտեղ ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր՝ խորհրդա-թուրքական պետական սահմանագծի նկարագրության արձանագրությունը, դրան կից սահմանային քար-

²⁵² Хармандарян С. В., նշվ. աշխ. (Բանբեր Հայաստանի արխիվների, 1963, թ. 3, էջ 204):

²⁵³ Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2008, թիվ 1, էջ 190:

տեզ-հավելվածը, սահմանային նշանների արձանագրությունը, ինչպես նաև արձանագրություններ սահմանանշանների, դրանց հսկման, պահպանման, նորոգման և վերականգնման վերաբերյալ: Վերջում ընդունվեց համապատասխան կոմյունիկե, որում ամրագրվեց խորհրդա-թուրքական պետական սահմանների ամբողջականության և անխախտելիության մասին դրույթը: Այդ նշանակում էր, որ ԽՍՀՄ-ը մեկ անգամ ևս ընդունում էր խորհրդա-թուրքական սահմանների անփոփոխելիությունը: Դա միաժամանակ նշանակում էր, որ կրկին վերահաստատվում են Մոսկվայի և Կարսի պայմանագրերի օրինականությունը և դրանցով զծված սահմանները:

Այս կապակցությամբ դրվատանքի է արժանի խորհրդա-թուրքական պետական սահմանների վերասահմանագծման համատեղ հանձնաժողովում Հայկ. ԽՍՀ ներկայացուցիչ գնդ. Գուրգեն Նալբանդյանի խիզախ քայլը: 1973 թ. դեկտեմբերի 29-ի եզրափակիչ նիստում ներկայացված փաստաթղթերի ստորագրման ժամանակ գնդապետ Գ. Նալբանդյանը, ընդդիմանալով խորհրդային կողմի միակողմանի զիջողականությանը, իբրև բողոքի նշան, չմասնակցեց այդ փաստաթղթերի ու կոմյունիկեի ստորագրմանը՝ դրանով հասկացնել տալով, որ հայկական հողերի հարցը օրակարգից չի հանված²⁵⁴:

Դրանից մի քանի տարի անց՝ 1978 թ. օգոստոսի 22-ին, Թուրքիայի վարչապետ Բ. Էջլիթը և ԽՍՀՄ վարչապետ Ա. Կոսիգինը Մոսկվայում ստորագրեցին միջպետական պայմանագիր, որով փաստորեն վերահաստատվեց ԽՍՀՄ կառավարության 1953 թ. մայիսի 30-ի չարագուշակ հայտարարությունը՝ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու վերաբերյալ և կողմերը հայտարարեցին փոխադարձ տարածքային հավակնություններ չունենալու մասին²⁵⁵:

Ահա, այսպիսին է Կարսի պայմանագրի և դրան համապատասխան հայ-թուրքական սահմանագծի ու տարածքային խնդիրների վերաբերյալ իրական պատմությունը:

²⁵⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս Арутюнян А., Из истории редемаркации советско-турецкой границы (1973 г.), (Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2008, թիվ 1, էջ 175–196):

²⁵⁵ Захаров В. А., Карс и Карсский договор 1921 года в истории Армении. М., 2010, с. 81.

Ամփոփում

Այսպիսով, 1920–1921 թթ. կնքվեցին երեք (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի) պայմանագրեր, որոնց միջև հատկապես հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդրում կա մեծ նմանություն: Բովանդակության առումով շատ մեծ ընդհանրություն ու գրեթե նույնականություն կա Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջև: Վերջիններս Հայաստանի և հայ ժողովրդի համար ունեցան ճակատագրական նշանակություն և իրենց հետևանքները շարունակում են պահպանել մինչև օրս: Վերը քննարկված պայմանագրերի ծնող պատճառները բազմաթիվ են՝ ներքին և արտաքին բնույթի: Ալեքսանդրապոլի պայմանագիրը հետևանք էր քեմալական Թուրքիայի ազդեցության և Հայաստանի ծանր պարտության: Մոսկվայի պայմանագիրը խորհրդա-թուրքական շահերի մերձեցման արգասիքն էր, իսկ Կարսի պայմանագիրը Կենտրոնի հանձնարարությամբ անդրկովկասյան պատվիրակությունների ձեռքով ստորագրված Մոսկվայի պայմանագրի, ըստ էության, կրկնությունն էր:

Ռազմաքաղաքական և միջազգային դիվանագիտության առումներով 1920–1921 թվականները, հիրավի, ճակատագրական տարիներ եղան Հայաստանի ու հայ ժողովրդի համար: 1920 թ. գարնան-ամռան ամիսների ընթացքում սկսվեց խորհրդա-քեմալական քաղաքական մերձեցման գործընթացը: Խորհրդային Ռուսաստանի լուռ համաձայնությամբ և Արևմուտքի «դաշնակիցների» քար անտարբերության պայմաններում 1920 թ. աշնանը քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Վերջինս ծանր պարտություն կրեց, և նրա տարածքների մի զգալի մասը բռնազավթվեց Թուրքիայի կողմից: Այդ բռնազավթումները թուրքերն անրագրեցին 1920 թ. դեկտեմբերի 2 լույս 3-ի գիշերը կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով, թեև այն իր ստորագրման իսկ պահից անօրինական էր և այդպես էլ չի վավերացվել կողմերի միջև: Քանի որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը բոլոր առումներով անվավեր է, ուստի այն չէր կարող որևէ իրավական պարտավորվածություն առաջացնել ՀՍԽՂ կառավարության առաջ այն գործադրելու ուղղությամբ և, ըստ էության, չի էլ գործադրվել: Փաստենք, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը (Հայ-հեղկոմը) չի կենսագործել այդ պայմանագրով Հայաստանը նվաս-

տացող և ոչ մի կետ (հողված): Ալեքսանդրապոլի պայմանագիրը ընդամենը պատմական փաստաթուղթ է, բայց ոչ երբեք լիիրավ դիվանագիտական, իրավաբանական:

Թուրքական մահաբեր սպառնալիքի պայմաններում ՀՀ կառավարությունը կամավոր հրաժարական տվեց, և կարմիր բանակի մուտքով Հայաստանի մյուս մասը խորհրդայնացվեց: Դրանից մի քանի ամիս անց՝ 1921 թ. մարտի 16-ին, ՌՍՖՍՀ և Թուրքիան առանց Հայաստանի գիտության և մասնակցության Մոսկվայում կնքեցին մի պայմանագիր, որը տարածքային-սահմանային առումով, ըստ էության, կրկնում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում խորհրդային Հայաստանի պատվիրակությանը պարտադրվեց ստորագրելու մի պայմանագիր, որով վավերացվում և օրինականացվում էին Մոսկվայի պայմանագրի սկզբունքները:

Հայաստանի խորհրդայնացումից հետո հույս էր փայփայվում, թե քենալական Թուրքիան Հայաստանի նոր իշխանությունների հետ կկնքի քիչ թե շատ հայանպաստ նոր պայմանագիր: Սակայն նման պայմանագրի կնքումը հետաձգվեց այնքան ժամանակ, մինչև որ ստորագրվեց Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը, որն էլ կանխորոշեց Հայաստանի տարածքային-սահմանային ճակատագիրը Կարսում: Արդյունքում՝ Կարսի պայմանագիրը գործնականում կրկնեց թուրքական «Ազգային ուխտով» նախատեսված Մոսկվայի պայմանագրի սպիանագիծը, իսկ վերջինս էլ Հայաստանին վերաբերող տարածքային-սահմանային մասով, ըստ էության, Ալեքսանդրապոլի պայմանագիրն էր: Այսպիսով, ստացվեց երեք պայմանագրերի փակ շրջանակ, և Հայաստանը հայտնվեց այդ շրջանակում: Այդ երեք պայմանագրերում էլ կարմիր թելի պես անցնում է թուրքական «Ազգային ուխտով» գծված սահմանը:

Ինչպես տեսնում ենք, այդ երեք պայմանագրերի տրամաբանության ու բովանդակության միջև ներքին կապ կա: Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը պարտադրվեց հոգեվարքում գտնվող Առաջին հանրապետության պատվիրակությանը: Մոսկվայի պայմանագրով՝ իբրև Հայաստանի միջնորդ ու խնամակալ, Ռուսաստանը ճանաչեց Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիայի տարածքային ձեռքբերումները առանց արդեն խորհրդայնացած Հայաստանի կարծիքը հաշվի առնելու: Իսկ Կարսի պայմանագրով Հայաստանը հարկադրված ընդունեց Մոսկվայի, ասել

է թե՛ Ալեքսանդրապոլի պայմանագրի սահմանները: Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ որպէս միջազգային իրավական փաստաթուղթ, ի սկզբանէ և ոչ մի հատկանիշով իրավաբանական որևէ ուժ չի ունեցել և, ըստ էության, չի գործադրվել, որովհետև մինչև ստորագրումը Հայաստանում տեղի էր ունեցել իշխանափոխություն: Սակայն այդ պայմանագիրը քաղաքական, քարոզչական և հոգեբանական առումով, անշուշտ, ազդեցություն է ունեցել Մոսկվայի ռուս-թուրքական բանակցությունների գործընթացի ու արդյունքների վրա: Հայաստանի համար անբարենպաստ գլխավոր հանգամանքն այն էր, որ նա պարտվել էր թուրք-հայկական պատերազմում, Թուրքիան բռնի ուժով արդեն զավթել էր այն տարածքները, նույնիսկ ավելին, որոնք մտնում էին թուրքական «Ազգային ուխտի» պահանջների մեջ և մնում էր Մոսկվայի պայմանագրով սոսկ անրագրելի ու վավերացնելի դրանք, ինչպէս որ արվեց: Մոսկվայի և դրան հաջորդած Կարսի պայմանագրերը Հայաստանին վերաբերող մասերով դարձյալ կողոպտիչ, հակաիրավական և անբարոյական են: Դրանք ստորագրվել են ուժի սպառնալիքով, միջազգային իրավունքի կոպիտ խախտմամբ, միջազգային պայմանագրային իրավունքի անտեսմամբ: Ուստի չեն կարող համարվել միջազգային լիարժեք իրավաբանական փաստաթղթեր, հետևաբար դրանցում նշված տարածքային փոփոխությունները, պետական սահմանագծումները վիճարկելի են և անընդունելի:

Քննության առնված այդ երեք պայմանագրերից կենտրոնականը և առանցքայինը, անշուշտ, Մոսկվայինն է, որովհետև Ալեքսանդրապոլիինը մի շարք հատկանիշներով իրավական ուժ չի ունեցել, իսկ Կարսինը կարելի է համարել մոսկովյան պայմանագրի մի յուրատեսակ հավելվածը: Փաստերը համոզում են, որ ՌՍՖՍՀ կառավարությունը Մոսկվայի բանակցությունների արդյունքով ամենևին էլ մտադիր չէր Հայաստանի տարածքային-սահմանային խնդիրներին քիչ թե շատ հայանպաստ լուծում տալ:

Չուտ ձևական, իրավական առումով, եթե երեք պայմանագրերը համեմատում ենք իրար հետ, ապա կարելի է տեսնել, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի 2-րդ և 3-րդ հոդվածները Թուրքիային անցած Կարսի մարզին և Սուրմալուի գավառին երեք տարվա ընթացքում հանրաքվե անցկացնելու թեկուզ տեսական հնարավորություն էր ընձեռում: Մինչդեռ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով դրանք անվերապահորեն անցնում էին Թուրքիային:

Ինչ վերաբերում է Նախիջևանի մարզին, ապա Ալեքսանդրապոլի պայմանագրով այն անցնում էր Թուրքիայի ժամանակավոր հովանավորության ներքո: Սակայն դա հիմք չէր տալիս Թուրքիային լինելու այդ մարզի լիիրավ տերը: Մինչդեռ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով մարզը հանձնվում էր Ադրբեջանին:

1920–1921 թթ. պատմական վավերագրերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզման, որ քաղաքական որոշակի շահերի թելադրանքով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային զիջեց Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, հատկապես վերջինս, որ երբեք չէր գտնվել Օսմանյան կայսրության կազմում և չէր մտնում թուրքական «Ազգային ուխտի» տարածքային պահանջների մեջ:

Միանգամայն իրավացի են նրանք, ովքեր Մոսկվայի պայմանագիրը որակում են որպես գործարք¹: Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրավունքի տեսակետից խախտում էր այն իմաստով, որ ինչպես ամրագրված է Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 34-րդ հոդվածում «պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրային մաս չկազմող երրորդ կողմի համար առանց վերջինիս համաձայնության»²: Այդ իմաստով Մոսկվայի պայմանագիրը ՀՍԽՖՀ-ին վերաբերող մասով կարելի է որակել որպես գործարք: Դա գործարք է համարվում երկու հանգամանքով. մեկ, որ Մոսկվան հայկական հողերի հաշվին տարածքային զիջումներ կատարեց քեմալականներին, որպեսզի կանխեն նրանց հնարավոր անցումը Անտանտի կողմը և երկրորդ՝ Հայաստանի սահմանների հարցը լուծվում էր առանց նրա ներկայացուցիչների մասնակցության: Եվ այդ իմաստով Մոսկվայի պայմանագիրը իբրև նախադեպ նմանություն ու ընդհանրություն ունի 1939 թ. օգոստոս-սեպտեմբերի խորհրդա-գերմանական գաղտնի պայմանագրերի հետ:

Մոսկվայի՝ 1921 թ. խորհրդա-քեմալական պայմանագիրը դարձավ նախատիպ Մոսկվայի՝ 1939 թ. խորհրդա-գերմանական

¹ Ջոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 358, Саркисян Е. К., За кулисами..., с. 82 и др.

² Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու), էջ 20:

(Մոլոտով-Ռիբենտրոպ) հայտնի պակտի՝ սահմանների մասին իր գաղտնի արձանագրություններով: Սակայն եթե 1921 թ. պայմանագրով Ռուսաստանը և Թուրքիան ճշտեցին թուրք-անդրկովկասյան սահմանը, ապա Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը իր գաղտնի արձանագրությամբ իրար միջև ազդեցության ոլորտների բաժանեցին Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ, և միաժամանակ պակտը արձակեց Գերմանիայի ձեռքերն ու կանաչ լույս վառեց Երկրորդ աշխարհամարտի համար: Միաժամանակ չպետք է անտեսել մինչ այդ 1938 թ. սեպտեմբերին Արևմուտքի տերությունների՝ Դիտլերի հետ կայացրած մյուսխենյան գործարքը, որը գործնականում Չեխոսլովակիայի՝ Գերմանիային զոհաբերմամբ նախադուռ հանդիսացավ պատերազմի սանձազերծման համար:

Մոսկվայի և հատկապես նրա քույր Կարսի պայմանագրերի քաղաքական գնահատականներից է այն, որ բուլղարիական Ռուսաստանը, իր քաղաքական շահերի թելադրանքով գործարքի մեջ մտնելով քեմալական Թուրքիայի հետ, գործնականում ձախողեց Զայկական հարցի լուծումը: 1920 թ. դեկտեմբերի 4-ին «Պրավդայում» տպված Ի. Ստալինի հայտնի հոդվածի լպիրշ արտահայտությունը, թե «այսպես կոչված հայկական «հարցը», որի վրա ապարդյուն գլուխ էին կոտրում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, միայն խորհրդային իշխանությունը կարողացավ լուծել»³: Զիրավի, սա դառն հեգնանք է հայոց պատմությանը և նրա ճակատագրին:

Թող զարմանալի չթվա, որ Ի. Ստալինի արտահայտած միտքը քիչ ավելի ուշ՝ 1922 թ. մարտի 1-ին, բառացիորեն կրկնեց Մ. Քեմալը ԹԱՄԺ-ում արտասանած ճառում: Նա, բարձր գնահատական տալով Կարսի պայմանագրին, նշում էր. «Այսպես կոչված «հայկական հարցը», որը ցանկանում էին լուծել ավելի շուտ կապիտալիստական աշխարհի տնտեսական շահերով՝ գտավ իր ամենաճիշտ լուծումը Կարսի պայմանագրում»⁴: Կարելի է ասել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը իրար այնքան մոտ էին ու նման, որքան Ի. Ստալինի և Մ. Քեմալի վերոհիշյալ գնահատականները Զայկական հարցում:

ՌԿ(Բ)Կ ԿԿ-ը և ՌՍՖՍՀ կառավարությունը անթաքույց վարում էին հայ ժողովրդի համար ծայր աստիճան աննպաստ թուրքամետ

³ «Правда», 4 декабря 1920 г.

⁴ ԶԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 162, թ. 20-21:

քաղաքականություն՝ հայկական տարածքների հաշվին համաձայնության գալով «Արևելքի հեղափոխության միջնաբերդ» Թուրքիայի հետ:

Ամենևին էլ երկրորդական նշանակություն չպետք է տալ այն հանգամանքին, որ Խորհրդային Ռուսաստանը տարածքային, էլ չենք խոսում ռազմական և ֆինանսական օգնության մասին, առատ զիջումներ էր անում Թուրքիային ոչ միայն վերջինիս արևմտամետ կողմնորոշումը կանխելու, այլև հույս էր փայփայում խորհրդայնացնել «Արևելքի հեղափոխության միջնաբերդը» համարվող Թուրքիան, և նրա կրակը տարածել մուսուլմանական աշխարհի վրա:

Արդյունքում Առաջին աշխարհամարտում պարտված և այդ ընթացքում ծանրագույն հանցագործություն՝ Չայոց ցեղասպանություն իրականացրած Թուրքիան, փոխանակ միջազգային հանրության կողմից պատասխանատվության կանչվել, ընդհակառակը, օգտագործելով մեծ տերությունների միջև եղած հակասությունները և կեղծ հեղափոխություն ու բարեկամություն խաղալով բուլշևիկյան Ռուսաստանի հետ՝ ոչ միայն պատիժ չկրեց ու չվերադարձրեց Սևրի պայմանագրով նախատեսված արևմտահայ նահանգները, այլև Մոսկվայի պայմանագրով նույնիսկ որպես պարզև ստացավ արևելահայ տարածքների մի զգալի մասը: Ավելին, քեմալականները գերակատարեցին «Ազգային ուխտով» նախատեսված իրենց տարածքային պահանջների պլանը: Նրանք տիրացան նաև Սուրմալուին և Նախիջևանին, երկրամասեր, որոնք թուրքերին չէին պատկանում. Սուրմալուն պահեցին իրենց, իսկ Նախիջևանը նվիրեցին Ադրբեջանին:

Չանրագումարի բերելով Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի արդյունքները՝ կարելի է եզրակացնել հետևյալը: Ալեքսանդրապոլի թեկուզև անվավեր պայմանագրի համար պատասխանատվություն են կրում ամենից առաջ ՉՉ իշխանությունները, իսկ մյուս երկու պայմանագրերի համար՝ առաջին հերթին Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը: Երեք պայմանագրերում իրենց մեղքի ու պատասխանատվության մեծ բաժինն ունեն նաև Անտանտի երկրները, ովքեր անտարբեր գտնվեցին իրենց իսկ կնքած Սևրի պայմանագրի նկատմամբ: Նրանք Չայաստանի ու հայ ժողովրդի համար ծանր պահին իրենց շահերի թելադրանքով թողեցին բախտի քմահաճույքին և աստիճանաբար հաշտ-

վեցին ու բարեկամացան Թուրքիայի հետ: Եվ պատահական չէր, որ Անգլիայի վարչապետ Լյոյդ Ջորջը իր հետագա հուշերում խոստովանում էր, որ «Հայաստանը մեր զոհն է»⁵:

Մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանը նույնպես իր շահերի թելադրանքով և հանուն համաշխարհային սին գաղափարների իրականացման ռազմաֆինանսական ու քաղաքական օգնություն ցույց տվեց Թուրքիային, որպեսզի համատեղ պատռեն Սևրի պայմանագիրը, ծնկի բերեն իմպերիալիզմի «գործիք» հանդիսացող Հայաստանն ու բզկտելով նրա տարածքները՝ բաժանեն իրար միջև: Այս առնչությամբ դիպուկ է նկատել իրավաբան-միջազգայնագետ Յու. Բարսեղովը. «Եթե բուլշևիկները թուրք ազգայնականների հետ գնացին բացահայտ տարածքային զիջման, ապա արևմուտքը նրանց պաշտպանեց քողարկված կերպով: Երկու դեպքում էլ ոտնահարվեցին հայ ժողովրդի օրինական շահերը»⁶:

Ինչ խոսք, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը հեշտացրին Անտանտի տերությունների գործը՝ Սևրի պայմանագիրը վերանայելու ուղղությամբ: Այդ պայմանագրերը ճանապարհի հարթեցին արևմտյան տերությունների համար՝ վերանայելու և լիովին հրաժարվելու Սևրի պայմանագրից: Հայաստանի խորհրդայնացումից հետո Անտանտի երկրները ամենևին շահագրգռություն հանդես չբերեցին Հայկական հարցի լուծման խընդրում: Նրանց դիտակետից ՀՍԽՅ-ի համար տարածքային զիջումներ անելը հավասարազոր էր բուլշևիկյան Ռուսաստանին հզորացնելուն: Անտանտի տերությունները ու առաջին հերթին Անգլիան, եթե Թուրքիայի վրա ճնշում էին գործադրում, ապա նպատակը վերջինիս Ռուսաստանի դեմ ուղղելն էր: Բայց քանի դեռ Թուրքիան չէր լուծել իր ազգային-տարածքային հիմնախնդիրները և այդ դժվարին ճանապարհին զգում էր Ռուսաստանի համակողմանի օգնության կարիքը, ուստի այդ ընթացքում նախապատվությունը տվեց Ռուսաստանին: Բայց հենց որ ռուսական ոսկով ու զենքով լուծեց իր ռազմավարական խնդիրները, նա դեն նետեց բուլշևիկների հետ հաստատած կեղծ բարեկամության քողը, թուլացրեց հետաքրքրությունը խորհրդային երկրի նկատմամբ և անթաքույց քաղաքականապես կողմնորոշվեց դեպի Արևմուտք: Դրա վառ դրսևորումը եղավ Կարսի պայմանագրի ստորագրումից ուղիղ մեկ

⁵ Джордж Л. Д., Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390.

⁶ Геноцид армян (документы и комментарий), т.2, ч. 2. с. 4.

շաբաթ հետո՝ 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական բարեկամության համաձայնագիրը: Կարսում ՅՍԽՅ ներկայացուցիչ Գ. Սարգսյանը Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին ուղղված նոյեմբերի 20-ի գաղտնի զեկուցագրում թուրքերի քաղաքական կողմնորոշման խնդրում հայտնում էր. «Կարսի պայմանագրից հետո էլ թուրքերը հաջող բանակցություններ են վարում Անտանտի հետ: Նրանք գրեթե իրենց վրայից դեն են նետել բուլշևիկյան կողմնորոշման թիկնոցը»⁷:

Մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ քննալականների վարած կեղծ բարեկամության քաղաքականությունը Արևմուտքի տերություններին բերեց այն համոզման, որ պետք է ճանաչել «Նոր թուրքիան» և կարգավորել հարաբերությունները նրա հետ: Այդ բանը տեղի ունեցավ Լոզանի՝ 1922–1923 թթ. խորհրդաժողովում: Հայկական հարցի վերջին արարողակարգը դարձավ Լոզանի կոնֆերանսը: Ռուս-թուրքական միասնական ճակատի ստեղծումը իրականում հաղթանակ ապահովեց թուրքերին Լոզանի կոնֆերանսում: Այդ մասին խոստովանել է թուրքիայի պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան 1923 թ. հունվարին Չիչերինի և Կրասինի հետ ունեցած հանդիպման ժամանակ⁸: Իսկ երբ 1923 թ. հուլիսի 24-ին կնքվեց Լոզանի թուրքանպաստ պայմանագիրը, այդ հաղթանակի կապակցությամբ արտագործժողկոմ Գ. Չիչերինը բարեկամական նոտայով շնորհավորեց ԽՍՀՄ-ում արդեն թուրքիայի դեսպան նշանակված նախկին արտագործկոմիսար Ահմեդ Սուլիսթարին: Միաժամանակ «Անարդարացի Սևրի պայմանագրից վերջնական հրաժարումը» Գ. Չիչերինը համարում էր «խորհրդային դաշնության ժողովուրդների հաղթանակը»⁹: Ստացվում էր, որ ԽՍՀՄ արտագործժողկոմը շնորհավորում էր թուրքերին նաև հայ ժողովրդի անունից: Դրան չի կարելի տալ այլ որակում, քան քաղաքական ցինիզմ:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերը միջազգային առումով, անշուշտ, իրենց բացասական դերը խաղացին Հայկական հարցի հետագա լուծման ճանապարհին, չնայած մեծ տերությունները չեն ճանաչել ո՛չ Մոսկվայի և ո՛չ էլ Կարսի պայմանագրերը: Երբ Լոզանի կոնֆերանսում կամ միջազգային այլ ատյաններում խոսք էր բացվում Հայկական հարցի վերաբերյալ, ապա թուրքական կողմը, մեջ-

⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 146:

⁸ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 1, с. 609.

⁹ ДВП СССР, т. 4, М., 1962, с. 405.

տեղ բերելով Կարսի պայմանագիրը, հայտարարում էր, որ Խորհրդային Չայաստանը և Թուրքիան իրար հետ արդեն կնքել են պայմանագիր և վճռել սահմանային խնդիրները: 1923 թ. հուլիսի 24-ին ութ երկրների մասնակցությամբ կնքված Լոզանի հաշտության պայմանագրում (կազմված 5 մասից, 143 հոդվածներից), արձատապես վերանայվեց Սևրի պայմանագիրը: Լոզանի պայմանագրում «Չայաստան» անվան անգամ հիշատակություն չկար: Մերժվեց հայկական «Ազգային օջախի» գաղափարը, արգելվեց հայ գաղթականության վերադարձը Արևմտյան Չայաստան:

Մյուս կողմից՝ Լոզանի պայմանագրի՝ Թուրքիայի սահմաններին վերաբերող հոդվածներում խոսք չկա Թուրքիայի արևելյան սահմանների մասին, չի նշվում, թե Թուրքիան ինչ սահմանագծով է բաժանվում ԽՍՀՄ-ից: Այդ նշանակում է, որ պայմանագիրը ստորագրած Անտանտի մեծ ու փոքր երկրները չեն ծանաչել Թուրքիայի արևելյան սահմանագծի վերաբերյալ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի դրույթները: Ոչ մի խոսք չկա հայ-թուրքական սահմանագծի մասին: Ոչինչ չի ասված նաև 1920թ. նոյեմբերի 22-ին Վ. Վիլսոնի անցկացրած հայ-թուրքական սահմանագծի մասին: Այդ նշանակում է, որ Լոզանի պայմանագիրը չեղյալ չի համարել Սան Ռեմոյի կոնֆերանսի հանձնարարականով և Սևրի պայմանագրով որոշված արևմտահայ 4 նահանգները ներառող հայ-թուրքական սահմանները: Այդ նշանակում է, որ Լոզանի պայմանագիրը Թուրքիայի և նրա արևելյան հարևանների միջև սահմանների հետագա կարգավորման հնարավորություն էր տալիս:

Նկատենք, որ հայկական «Ազգային օջախի» հարցի քննությունը Լոզանի կոնֆերանսը հանձնել էր Ազգերի լիգայի խորհրդրդին: Խնդրի լուծումը կապվում էր Թուրքիայի՝ Ազգերի լիգայի անդամ դառնալու հետ¹⁰: 1932 թ. Թուրքիայի Չանրապետությունը դարձավ Ազգերի լիգայի անդամ: Սակայն դրանից հետո էլ նախկին Անտանտի տերություններից և ոչ մեկը Թուրքիային չհիշեցրեց հայկական «Ազգային օջախի» ստեղծման մասին:

Պատմադիվանագիտական գրականության մեջ սովորաբար ընդունված է գրել, որ 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնի և ապա 1922–1923 թթ. Լոզանի կոնֆերանսներում Անտանտի

¹⁰ Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, էջ 458–459:

տերությունները «թաղեցին Չայ դատը»: Սակայն ճշմարտությունը միաժամանակ պահանջում է ասել, որ Չայ դատին, ասել է՝ Միացյալ ու Անկախ Հայաստանի գաղափարին, մահացու հարվածներ հասցրին հիմնականում Մոսկվայի և նրա դուստր Կարսի պայմանագրերը:

Բուլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, համատեղ գործակցությամբ հակազդելով ու չեղյալ համարելով Սևրի դաշնագիրը, Հայաստանը բաժանեցին իրար մեջ: Այդ ամենը հիմք է տալիս ասելու, որ Հայաստանը և համայն հայությունը ունեն բոլոր իրավունքները (պատմական, քաղաքական, էթնիկական, իրավաբարոյական և այլն) բողոքի ծայն բարձրացնելու ու պայքարելու Մոսկվայի և Կարսի անարդար պայմանագրերի դեմ, Հայաստանին վերաբերող մասով դրանք չեղյալ համարելու ու պահանջատեր լինելու բռնագավթված հողերին:

Խորհրդային Ռուսաստանի առաջին հարվածը Հայկական հարցին հասցվեց Բրեստ-Լիտովսկում, այն շարունակվեց Մոսկվայում ու Կարսում և եզրափակվեց Լոզանում: Վերջին խորհրդածողովում խորհրդային պատվիրակությունը ամեն կերպ պաշտպանում էր քեմալական Թուրքիային՝ ընդդեմ Հայկական հարցի: Խորհրդային պետությունը նպաստեց, որ «Ազգային օջախի» գաղափարը մերժվի և տարագիր հայերին իբր թույլատրվի բնակություն հաստատել Ռուսաստանի երկրամասերում:

Այսպիսով, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի արդյունքում Հայաստանը կորցրեց արևելահայ իր փաստական տարածքների կեսից ավելին: Հիշյալ պայմանագրերով Թուրքիային անցան Կարսի մարզը 17250 քառ.կմ և Սուրմալուի գավառը՝ 3450 քառ.կմ, ընդամենը 20700 քառ.կմ արևելահայ տարածք: Բացի այդ, Թուրքիայի պահանջով Նախիջևանի մարզը շուրջ 5500 քառ. կմ հանձնվեց Ադրբեջանի հովանավորությանը: Եթե հաշվի առնենք, որ ՌԿ(Բ)Կ ԿԿ Կոմբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը՝ 4160 քառ.կմ, ևս նվիրաբերվեց Ադրբեջանին, ապա դրանց արդյունքում Ադրբեջանին միացվեց շուրջ 10 հազար քառ. կմ հայկական տարածք:

Ամբողջությամբ վերցրած կարելի է եզրակացնել, որ 1920–1921 թթ. ընթացքում Հայաստանից խլվեց նրա ունեցած իրական տարածքի կեսից ավելին՝ $20700 + 9660 = 30360$ քառ.կմ, որն, ինչպես նկատում ենք, ավելի մեծ է, քան Խորհրդային Հայաստանի

ու նրա իրավահաջորդ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը:

Հատկանշական է, որ Թուրքիան սակարկեց և այդպես էլ Հայաստանին չվերադարձրեց ընդամենը 860 հազար մ² կազմող Անիի ավերակները և դրա շրջակայքում գտնվող մի քանի գյուղեր: Ամենուրեք սփռված բազմադարյա քարե վկա-հուշարձանները այդպես էլ բավարար չհամարվեցին լուծելու Անիի իսկական պատկանելիության հարցը: Գուցե քաղաքական անցանկալի նախադեպը կամ հեռանկարը հաշվի առնելով էր, որ թուրքերը մերժեցին հայերի նույնիսկ այդ համեստագույն առաջարկը:

Ահա այսպես «լուծվեց» 20-րդ դարի մեծագույն բռնակալներից մեկի՝ Ի. Ստալինի, հեզմական խոսքերով ասած, «այսպես կոչված հայկական հարցը»:

Սակայն մյուս կողմից էլ քաղաքական առումով անուրանալի է, որ այդ պայմանագրերի արդյունքում շուրջ 30 հազար քառ.կմ-ոց Խորհրդային Հայաստանի ու նրանում ապրող ժողովրդի համար հետագայում ապահովվեց կայուն խաղաղություն, եթե, իհարկե, հաշվի չառնենք ստալինյան բռնաճնշումները և Մեծ հայրենականում հայերի կրած 200 հազար մարդկային զոհերը: ԽՍՀՄ բազմազգ կայսրությունը դարձավ նաև Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգության երաշխավորը:

Եթե խնդիրը դիտարկում ենք միջազգային իրավունքի տեսանկյունից, ապա իրար հետ ներքին կապ և ընդհանրություն ունեցող այդ երեք պայմանագրերը հանդիսանում են կողոպտիչ, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի տեսակետից՝ անօրինական, չունեն պարտադիր բնույթ, ուստի և կարելի է համարել անվավեր: Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի հոդված 52-ը, որը վերաբերում է միջազգային պայմանագրային իրավունքին, նշվում է. «Պայմանագիրը համարվում է առոչինչ, եթե այն կնքվել է ուժի սպառնալիքով կամ ընդունվել է միջազգային իրավունքի սկզբունքների խախտումով»¹¹: Եթե այս հոդվածը տարածենք խնդրո առարկա երեք պայմանագրերի վրա, ապա ստացվում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է բռնի ուժի սպառնալիքով, Մոսկվայինը՝ պայմանագրային իրավունքի սկզբունքի խախտումով, իսկ Կարսինը՝ Հայաստանի վրա քաղաքական ու բարոյական ճնշման ու ներագդման միջոցով:

¹¹ Геноцид армян, (документы и комментарий), т. 2, ч. 2, с. 435.

Կնքվել են պայմանագրեր ուժի պարտադրանքով, միջազգային իրավունքի նորմերի անտեսմամբ, մի ամբողջ ժողովրդի օրինական շահերի ոտնահարմամբ, պայմանագրեր, որոնց հետ հայ հանրույթը չի հաշտվել և չի հաշտվելու, մինչև որ չվերականգնվի արդարությունը: «Մոսկվայի և նրա հետևանք հանդիսացող Կարսի պայմանագրերով,- նշում է իրավագետ-միջազգայնագետ Յու. Բարսեղովը,- հայ ժողովուրդը ոչ միայն զրկվեց իր Չայրենիքի մեծագույն մասից, այլև ցեղասպանություն տեսած հայ զաղթականությունը զրկվեց իր կորցրած հայրենիքը վերադառնալու և ապրելու իրավունքից: Նա դարձավ քշված, աստանդական, առանց հայրենիքի ժողովուրդ»¹²: Չայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը ինքնանպատակ չէ և չի կարող մնալ անհետևանք: Դա իր մեջ ներառում է պահանջատիրություն, տարածքային փոխհատուցում, որպեսզի իր հայրենիքը կորցրած ժողովուրդը զոհե մասամբ վերագտնի այն: Չայաստանի Չանրապետությունն ունի բավարար իրավական, քաղաքական, պատմական հիմքեր՝ վիճարկելու և միջազգային մակարդակով բարձրացնելու այդ հարցը: «Խաղաղություն էր հիմնված անարդարության վրայ,- եզրափակում էր Ջ. Մըսրյանը,- որ մեզի՝ հայերուս անընդունելի է և կմնա, որքան ատեն որ Արարատը, Անին, Կարսը, Կողբը, Սուրմալուն և այլն կմնան թրջական լծի տակ»¹³:

Պայմանագրերը հավերժական չեն: Դրանք ապրում են այնքան ժամանակ, քանի դեռ կենսունակ են դրան ծնունդ տվող պայմանները: Պայմանագրերի արժեքը հետևյալ կերպ է գնահատել Գ. Նժդեհը. «Պետությունները հաշվի են առնում միջազգային իրավունքը և հարգում իրենց ստորագրած պայմանագրերը, քանի դեռ շահում են գոյություն ունեցող դրությունից, սակայն հենց որ մի այլ դրություն, հենց որ մի ուրիշի թղթե բարեկանությունը իրենց ավելի շահավետ թվաց, նրանք թքում են պայմանագրերի վրա, լքում իրենց նախկին զինակիցներին և սպառնում աշխարհի խաղաղությանը»¹⁴: Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի արժեքը մի բան է Ռուսաստանի ու Արևմուտքի տերությունների համար և միանգամայն այլ՝ Չայաստանի ու հայ ժողովրդի համար:

¹² Նույն տեղում, էջ 441.

¹³ Մըսրյան Ջ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը 1920–1921 թթ.), էջ 140:

¹⁴ Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 116:

Մոսկվայի և նրա կրկնօրինակ Կարսի անարդար պայմանագրերի սխալի մասնակի ուղղման փորձ կատարվեց Երկրորդ աշխարհամարտի ավարտին՝ 1945–1946 թթ.:

Երկրորդ աշխարհամարտի ավարտին, երբ կտրուկ փոխվել էին միջազգային դրությունը և աշխարհաքաղաքական ուժերի հարաբերակցությունը, ԽՍՀՄ ղեկավարությունը, հաշվի առնելով պատերազմի տարիներին Թուրքիայի անթաքույց գերմանամետ դիրքորոշումը, 1945 թ. ամռանը Բեռլինի (Պոտսդամի) հաշտության կոնֆերանսում հարց բարձրացրեց մասնավորապես Խորհրդային Չայաստանին հետ վերադարձնել 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով Թուրքիայի կողմից անարդարացի խլված Կարսը, Արդահանը, Սուրմալուն:

Խորհրդային ղեկավարությունը (Ի. Ստալին, Վ. Մոլոտով) այդ տարածքների վերադարձը պայմանավորում էր 1925 թ. դեկտեմբերի 17-ի Փարիզի խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի ժամկետը լրանալու ու դրա դեմոնստրացիայի կապակցությամբ Թուրքիայի հետ նոր պայմանագիր (դաշինք) կնքելու հանգամանքով:

Հարց է ծագում. ինչպե՞ս պատահեց, որ Խորհրդային Ռուսաստանը՝ հանձին Ի. Ստալինի, հետամուտ եղավ նրան, որ «բարեկամության և եղբայրության մասին» 1921 թ. Մոսկվայի խորհրդա-թուրքական պայմանագրով Թուրքիային զիջված Կարսը, Արդահանը, Սուրմալուն 1945 թ. հուլիսին Պոտսդամի կոնֆերանսում Թուրքիայից և Դաշնակից տերություններից պահանջում էր՝ արդարությունը վերապահելու համար խլված այդ տարածքները հետ վերադարձնել և շտկել հայ-թուրքական, նաև թուրք-վրացական սահմանը:

Այս կապակցությամբ դժվար է համաձայնվել այն տեսակետին, թե Ռուսաստանը այդ տարածքները հարկադրված զիջեց Թուրքիային, որովհետև այն ժամանակ նա ռազմաքաղաքականապես թույլ էր: Եթե խնդիրը տվյալ երկրի թուլությամբ բացատրենք, ապա Թուրքիայի ռազմաքաղաքական վիճակը այդ նույն ժամանակ շատ ավելի ծանր էր, որովհետև հունական զորքը շուտով մոտենալու էր Անգորային:

Սեր կարծիքով, Ռուսաստանի և Ստալինի դիրքորոշման կտրուկ փոփոխությունը Թուրքիայի հարցում պետք է բացատրել ոչ այնքան նրանով, թե Ռուսաստանը 1921 թ. դրությամբ թույլ էր,

իսկ 1945 թ.՝ ուժեղ, այլ այն հանգամանքով, որ խորհրդային պետության ղեկավարությունը (Լենինը, Ստալինը և ուրիշներ) 1920-ականի սկզբին ակնկալիք ուներ քեմալականներից, թե նրանք հեղափոխականներ են և թուրքիայում ու մուսուլմանական Արևելքի երկրներում կոմունիզմի գաղափարների տարածող ու արմատավորող: Եվ դրա դիմաց՝ որպես քաղաքական կանխավճար, Լենինը, Ստալինը թեթև ձեռքով թուրքերին զիջեցին հայկական տարածքները:

Բայց երբ հետագայում պարզվեց քեմալական թուրքիայի իսկական դեմքն ու նպատակները, դրան գումարած նաև թուրքիայի անթաքույց հակախորհրդային կեցվածքն ու գերմանամետ դիրքորոշումը աշխարհամարտի տարիներին, ԽՍՀՄ ղեկավարությունը գտավ, որ դրանց դիմաց, իբրև պատժի ձև, թուրքիայից պետք էր պահանջել 1921 թ. Մոսկվայի պայմանագրով զիջված տարածքները: Սակայն, ցավոք, խորհրդային կառավարության այս պահանջին դեմ կանգնեցին ԽՍՀՄ-ի երեկվա դաշնակիցներ Անգլիան և ԱՄՆ-ը: «Կոմունիզմի տարածման սպառնալիքի զսպման» կարգախոսով նրանք թուրքիային առան իրենց պաշտպանության տակ: Այդ տարիներից արդեն գլուխ բարձրացրած «Սառը պառտերազմի» և միջուկային զենքի ամերիկյան մենաշնորհ դիրքի պայմաններում ԽՍՀՄ-ը հարկադրված ընկրկեց և ի վերջո հետ: կանգնեց թուրքիայի նկատմամբ ներկայացրած տարածքային պահանջներից:

Ավելի ուշ՝ Ի. Ստալինի մահից ամիսներ անց՝ 1953 թ. մայիսի 30-ին, խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ հանուն խաղաղության, անվտանգության և բարիդրացիական հարաբերությունների պահպանման ԽՍՀՄ-ը հրաժարվում է թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից¹⁵:

Ահա, այսպես հերթական անգամ միջազգային ամենաբարձր մակարդակով բարձրացվեց ու անարդյունք փակվեց հայկական հողերի հարցը:

Չետագա տասնամյակներում մոռացության մատնվեց հայկական հողերի հիմնախնդիրը: Մոսկվայի ռուս-թուրքական պայ-

¹⁵ «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը, (փաստաթղթերի ժողովածու), Ե., 1989, էջ 591: Այդ նույն միտքը վերհաստատվեց երկու երկրների միջև 1978 թ. կնքված միջպետական պայմանագրով:

մանագրին քաղաքական և իրավական գնահատական տալու մասին հարց բարձրացվեց արդեն «Վերակառուցման» փուլում՝ 1989 թ. ԽՍՀՄ ժողովուրդների առաջին համագումարում, որին, սակայն, ընթացք չտրվեց¹⁶: Հայաստանի անկախության արշավույսին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը փաստաթղթեր պատրաստեց բոլոր հակահայկական պայմանագրերը, այդ թվում՝ Մոսկվայի և Կարսի ապօրինի հայտարարելու մասին, որը, սակայն, հետագա զարգացում չստացավ¹⁷:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը և համայն հայությունը ունեն պատմական, քաղաքական և իրավական բավարար հիմքեր ու փաստարկներ՝ պետական մակարդակով միջազգային դատական ատյաններ բարձրացնելու և քննարկելու Մոսկվայի և նրա հետևանք հանդիսացող Կարսի պայմանագրերի օրինականության հարցը՝ Հայաստանին վերաբերող մասով դրանք անօրինական ու անվավեր ճանաչելու՝ դեմոնստրացիայի ենթարկելու և պահանջատեր լինելու իրենց ունահարված իրավունքներին ու բռնազավթված հողերին: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացների հետ կապված՝ անհրաժեշտ է պետական, գիտական, հասարակական քննարկումների միջոցով նախապատրաստել հայ-թուրքական հարաբերությունները կարգավորող համապարփակ (քաղաքական, տնտեսական, մշակութային, հումանիտար և այլ բնույթի) պայմանագրերի նախագծերի փաթեթ: Մինչ այդ Հայաստանը կարող է պաշտոնապես հայտարարություն անել Թուրքիայի հետ միջպետական պայմանագրային հարաբերությունների չկարգավորված լինելու, փաստորեն կողմերի միջև հաշտության պայմանագրի բացակայության մասին և երկու կողմից բարի կամք ու պատրաստակամություն հանդես բերել արդի գլոբալացվող աշխարհի պայմաններում դրանք կարգավորելու ուղղությամբ:

¹⁶ Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 494:

¹⁷ Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Ե., 1995, էջ 70-71:

СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В МОСКОВСКОМ И КАРСКОМ ДОГОВОРАХ

АРАРАТ МХИТАРОВИЧ АКОПЯН

Резюме

1920-1921 годы стали судьбоносными для Армении и армянского народа. В этот период Республика Армения потерпела тяжелое поражение от кемалистской Турции, потеряла независимость, часть Армении была захвачена Турцией, а другая ее часть была советизирована. Именно в этот период началось рассмотрение армяно-турецких территориально-пограничных вопросов, которые были сформулированы в договорах: Александропольском от 3 декабря 1920 года, Московском от 16 марта 1921 года и Карсском от 13 октября 1921 года. Хотя с точки зрения исследований, три этих договора представляют собой как-бы единое целое, однако в аспекте правопреемственности и содержания очень схожи Московский и Карсский договоры.

Александропольский договор был следствием агрессии кемалистских турок и тяжелого поражения Армении. Московский договор стал результатом сближения советско-кемалистских интересов, а Карсский - это, по сути, повтор Московского договора, подписанный представителями делегаций трех закавказских республик по поручению центральных большевистских властей.

Поскольку Александропольский армяно-турецкий договор с точки зрения международного права не имел юридической силы, следовательно, он и не мог повлечь правовых обязательств для правительства Советской Армении (Армревкома) и, по сути, он так и не был введен в действие, поскольку:

- а) до его подписания в Армении произошла смена власти;
- б) он не был ратифицирован ни Арменией, ни Турцией.

Советская Россия и Турция, без ведома Армении и без ее участия, 16 марта 1921 года заключили в Москве договор, который в территориально-пограничном аспекте практически повторял Александропольский договор. А 13 октября того же года делегация Советской Армении была вынуждена подписать в Карсе договор, по которому ратифицировались и узаконивались принципы Московского договора. Таким образом, Московский и Карсский договоры обеспечили исполнение требования принятого в январе 1920

года турецкого „Национального обета”, предусматривающего захват армянских земель. Более того, Россия уступила Турции Сурмалинский уезд, который никогда не был в составе Османской империи и не входил в территориальные претензии турецкого „Национального обета”.

В результате Московского и Карсского договоров, Армения потеряла более половины своих фактических восточно-армянских территорий. В соответствии с упомянутыми договорами Турции отошли Карская область 17.250 кв. км и Сурмалинский уезд 3.450 кв. км - в общей сложности 20.700 кв. км восточно-армянских территорий. Кроме этого, по требованию Турции под протекторат родственного ей Азербайджана была передана Нахичеванская область - 5,5 тысяч кв. км. Если учесть, что решением Кавбюро ЦК РКП(б) от 5 июля 1921 года Нагорный Карабах, территория которого составляет в 4.160 кв. км, также был преподнесен в подарок Азербайджану, то в результате этих действий к Азербайджану были присоединены почти 10 тысяч кв. км армянских территорий. В целом, можно сделать вывод, что в течение 1920-1921 гг. от Армении были отторгнуты более половины реально имеющихся у нее земель - $20.700 + 9.660 = 30.360$ кв. км, что, как не трудно заметить, больше, чем территория Советской Армении и ее правопреемницы - нынешней Республики Армения.

Основную причину проявления такой уступчивости Советской России в отношениях с Турцией необходимо искать не в слабости советского государства в тот период, а в его восточной политике. Большевицкое правительство считало Турцию восточным центром распространения всемирной революции, поэтому, для претворения в жизнь этой пустой затеи, заинтересовывало и поощряло кемалистов всеми возможными способами: территориальными уступками, золотом, оружием и боеприпасами. К сожалению, территориальные уступки были сделаны Турции в основном за счет жизненных интересов Армении и армянского народа. С другой стороны, Советская Россия заигрывала с Турцией для того, чтобы та не переметнулась в лагерь Антанты. Тем не менее, считаем, что у правительства Советской России не было намерения целеустремленно проводить антиармянскую политику, просто на перекрестке Большой политической игры Армения пыталась сохранить независимость в условиях, в которых для этого не было возможности, поэтому именно ей пришлось принести настолько большие потери.

С другой стороны правы те, кто характеризуют Московский

договор как сделку. С точки зрения международного права, та часть Московского договора, которая касается Армении, является нарушением в том смысле, что во-первых Москва за счет армянских земель сделала территориальные уступки кемалистам для того, чтобы предотвратить их возможный переход на сторону Антанты, и во-вторых вопрос границ Армении разрешался без ведома ее представителей и без их участия.

В результате, потерпевшая поражение в Первой мировой войне и осуществившая тяжелейшее преступление перед человечеством – геноцид армян – Турция, вместо привлечения мировым сообществом к ответственности, используя противоречия между великими державами, и играя в псевдореволюцию и дружбу с большевистской Россией, не только не понесла надлежащего наказания и не вернула Армении предусмотренные Севрским договором западно-армянские провинции, но и, согласно Московскому договору, в качестве награды получила значительную часть восточно-армянских территорий.

В свою очередь, проводимая кемалистами политика ложного братства с Россией привела западные державы к выводу о необходимости признания „Новой Турции” и регулированию отношений с ней. Что и произошло на Лозанской конференции 1922-1923 гг.

Если рассматривать Московский и последовавший за ним Карсский договоры с позиций принципов и норм международного права, то в части Армении это грабительские, незаконные, не носящие обязательного характера договоры, вследствие чего их можно считать недействительными. Территориальные разграничения, сделанные в этих договорах и приложениях к ним, являются спорными и неприемлемыми.

Договоры не вечны. Они существуют до тех пор, пока жизнеспособны породившие их условия.

В настоящее время Республика Армения и весь армянский народ в целом имеют исторические, политические и правовые основания и аргументы для поднятия на государственном уровне и обсуждения в международных судебных инстанциях вопроса законности Московского и явившегося его следствием Карсского договоров, признания их в части Армении незаконными и недействительными, то есть их денонсации и требования восстановления попраных прав и возврата насильственно захваченных территорий.

SOVIET ARMENIA IN THE TREATIES OF KARS AND MOSCOW

ARARAT MKHITAR HAKOBYAN

Summary

The period of 1920-1921 appeared to be fateful for Armenia and the Armenians. During these two years, the Republic of Armenia suffered a defeat from Kemalist Turkey and lost its independence. One part of the republic was occupied by Turkey and the Soviet power was established in another part. It was in this period that the Armenian-Turkish border-territorial issues appeared under consideration and were later stipulated in the Treaty of Alexandropol on December 3, 1920, in the Treaty of Moscow on March 16, 1921, and in the Treaty of Kars on October 13 of the same year. Though the mentioned treaties are viewed as a whole, as far as their legal succession and contents are concerned, the Treaties of Moscow and Kars are quite similar.

The Treaty of Alexandropol appeared to be the outcome of Armenia's severe defeat and the aggression carried out by Kemalist Turks. The Treaty of Moscow was the result of the Soviet-Turkish approachment and the Treaty of Kars actually was the repetition of the Treaty of Moscow, signed by the delegations of three Transcaucasian Republics on the directive issued by the Central Bolshevik authorities.

Since the Armenian-Turkish Treaty of Alexandropol was not legally valid from the stand-point of the international law, it could not impose any legal obligations on the government of Soviet Armenia (Armenian Revolutionary Committee) and was not implemented for the following reasons: 1. At a moment when the treaty was signed, a change of power had taken place in Armenia. 2. The treaty was ratified neither by Armenia, nor by Turkey.

On March 16, 1921, without Armenia's knowledge and involvement, Soviet Russia and Turkey signed a treaty in Moscow which in its territorial-border terms actually repeated the Treaty of Alexandropol. On October 13 of the same year, the Soviet Armenian delegation was compelled to sign a treaty in Kars, which ratified and legalized the terms of the Treaty of Moscow. Thus, the Treaties of Moscow and Kars secured the Turkish claims regarding their intrusion into Armenian territory, as it was claimed by their "National Oath" in January 1920. Furthermore, Russia ceded to Turkey the Surmalu Region, which had never been under the Ottoman

Empire before and had not been claimed by the “National Oath.”

The Treaties of Moscow and Kars led Armenia to lose more than a half of its genuine eastern Armenian territories. In consequence of the mentioned treaties, Turkey incorporated the Kars Province with its 17,250 square kilometers, and the Surmalu Region covering 3,450 sq. km, making 20,700 sq. km. of the Eastern Armenian lands, in total. Besides, Turkey demanded that the region of Nakhichevan covering 5.5 thousand sq. km. should be placed under the protection of its kin Azerbaijan. If we consider, that the Mountainous Karabagh, which covers 4,160 sq. km. also had to be annexed to Azerbaijan on the resolution by the Caucasian Bureau of the Central Committee of Russian Communist (Bolshevik) Party made on July 5, 1921, then almost 10,000 square kilometer-Armenian territories had been granted to Azerbaijan. To sum up, one can conclude that in 1920-1921, Armenia was deprived of more than the half of its actual territory (20,700+9,660=30,360 square kilometers). As we can see, this area is even larger than that of Soviet Armenia and its legal successor Republic of Armenia.

The main clue to the Soviet Russian Government making such allowances for Turkey should not be sought in the susceptibility of the Soviet state of those times, but in the essence of its Eastern policy. As far as the Bolshevik Government considered Turkey to be the centre of world revolution in the East, and tried to implement this futile plan, it urged and encouraged the Kemalists by all possible means, including gold allotments, arms and ammunitions supply, as well as meeting their territorial claims. Unfortunately, the territories had been ceded to Turkey mostly at the expense of Armenia and vital interests of the Armenian people. At the same time, Soviet Russia made advances to Turkey for it not to join the Entente. However, we are of opinion, that Soviet Russia had not nurtured any deliberate anti-Armenian policy. Armenia just appeared to be at the crossroads of Big political game and trying to preserve independence in the environment, where there was no room for independence, it had to suffer huge losses.

On the other hand, the Treaty of Moscow is reasonably marked a **deal**. From the stand-point of the international law, the Treaty of Moscow in its part that concerns Armenia, abuses the law, as Moscow had met the territorial claims of the Kemalists at the expense of the Armenian territories in order to prevent them from joining the Entente. Besides, both parties had resolved the issues of the Armenian borders without the knowledge and participation of the Armenian representatives.

Thus, Turkey that had lost World War I and had committed one of the most severe crimes against humanity - the Armenian Genocide, by taking advantage of the discrepancies among the powerful states and pretending to be both revolutionary and comrade of the Bolshevist Russia, instead of being liable before the International Court, got away with the crime it had committed. Not only did it not return Armenia the western Armenian provinces stipulated by the Treaty of Sèvres but, thanks to the Treaty of Moscow, Turkey also received a significant part of Eastern Armenian territories as a reward.

The policy of false amiability with Russia, conducted by Kemalists, led the Western states consider that they should recognize "New Turkey" and settle their relations with it. That is what actually took place at the Lausanne Conference in 1922-1923.

And as far as the principles and norms of international law are concerned, the Treaty of Moscow and its successor Treaty of Kars, in their parts that concern Armenia are predatory, illegal and not compulsory, and thus they can be regarded as invalid. The boundary delimitations, specified in the mentioned treaties and their appendices are disputable and unacceptable.

The treaties are not eternal. They exist as long as the conditions that bore them do.

At present, the Republic of Armenia and the whole Armenian nation possess sufficient historical, political and legal proofs and arguments to discuss the issue at the state offices, and to take the matter of the legitimacy of the Treaty of Moscow and its successor Treaty of Kars, as far as Armenia is concerned, to the international courts in order to undermine their legitimacy and to denounce them, as well as to restore violated rights and annexed territories.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ3

ԳԼՈՒԽ I - Երևանի համաձայնագիրը և Ալեքսանդրապոլի պայմանագիրը

1. Ալեքսանդրապոլի կոնֆերանսի նախապատրաստումը և ընթացքը.....26
2. Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը և դեկտեմբերի 2(3)-ի հայ-թուրքական պայմանագիրը48
3. Հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդիրները և սահմանագիծը ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի80
4. Ալեքսանդրապոլի պայմանագրի պատմաիրավական գնահատականը95

Գլուխ II – Մոսկվայի պայմանագիրը

1. Մոսկվայի կոնֆերանսի դիվանագիտական նախապատրաստումը 102
2. Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը և 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը145
3. Մոսկվայի պայմանագիրը և տարածքային-սահմանային հիմնախնդիրները179
4. Մոսկվայի պայմանագրի վավերականության հարցը և գնահատականը200

Գլուխ III – Կարսի պայմանագիրը

1. Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի դիվանագիտական նախապատրաստումը	218
2. Կարսի կոնֆերանսը և 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագիրը	256
3. Թուրք-անդրկովկասյան և Հայաստանի ու Նախիջևանի սահմանագծերը ըստ Կարսի պայմանագրի	296
4. Կարսի պայմանագրի գնահատականը	308
Ամփոփում	316
Резюме	331
Summary	334

ԱՐԱՐԱՏ ՄԽԻԹԱՐԻ ՀԱԿՈՒՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ
ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

ԱՐԱՐԱՏ ՄԽԻՏԱՐՈՎԻՉ ԱԿՈՍՅԱՆ

СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В МОСКОВСКОМ И
КАРСКОМ ДОГОВОРАХ

ԱՐԱՐԱՏ ՄԿՈՒՏԱՐ ՈՒԿՈՎՅԱՆ

SOVIET ARMENIA IN THE TREATIES OF
KARS AND MOSKOW

Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան
Համակարգչային շարվածքը՝ Մ. Երանոսյանի

Հրատ. պատվեր N 281

Ստորագրված է տպագրության 01.09.2010 թ.:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Թուղթը N 1: Տառատեսակը «Arial Armenian»:

Օֆսեթ տպագրություն:

21.25 տպագր. մամուլ: Տպաքանակ 500:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 24

3.00077

ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0186414

A II
96530



րի դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՔՅԱՆԸ ծնվել է 1947 թ. փետրվարի 26-ին Էջմիածնի շրջանի Ապագա գյուղում:

Ավարտելով միջնակարգ դպրոցը՝ 1966-1971 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

1971 թ. աշխատանքի է անցել ԳԱ պատմության ինստիտուտում: Ավարտելով ինստիտուտի ասպիրանտուրան՝ 1980 թ. պաշտպանել է Կարսի մարզի պատմությանը նվիրված թեկնածուական ատենախոսությունը:

1982 թ. դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (ներկայումս ՀՊՏՀ) սկզբում՝ ավագ դասախոսի, այնուհետև՝ դոցենտի պաշտոնում: 1998 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.)» թեմայով: Ա. Հակոբյանը իր մասնակցությունն է բերել նաև «Հայոց պատմություն» բազմահատորյակի հեղինակային և խմբագրական աշխատանքներին: Նա հեղինակ է «Հայոց պատմություն» բուհական ուսումնական ձեռնարկի, նաև համահեղինակ՝ դպրոցական դասագրքերի:

Պրոֆեսոր Ա. Հակոբյանը 2005 թվականից վարում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) պատմության և քաղաքագիտության ամբիոնի աշխատանքները:

Նրա գրչին են պատկանում ավելի քան 10 մենագրություն, 70-ից ավելի գիտական հոդված ու գրքույկ, 100-ից ավելի քաղաքական, հրապարակախոսական և այլ բնույթի հրապարակումներ: